ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts and
“Friends of the Matenadaran” Benevolent Fund
express their gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this book

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում
«ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն գրքի հրատարակությանն աջակցելու համար

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ

МАТЕНАДАРАН
НАУЧНО-ИССЛЕДОВАТЕЛЬСКИЙ ИНСТИТУТ
ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

АВЕТИС АВЕТИСЯН

СТРАНИЦЫ ИСТОРИИ АРМЯНСКОГО ИСКУССТВА

СБОРНИК СТАТЕЙ И МАТЕРИАЛОВ

Составил и приготовил к печати:
АРСЕН АРУТЮНЯН

Редактор
КАРЕН МАТЕВОСЯН

ЕРЕВАН 2022

MATENADARAN
RESEARCH INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS
NAMED AFTER MESROP MASHTOTS

AVETIS AVETISYAN

PAGES OF THE HISTORY OF ARMENIAN ART

COLLECTION OF ARTICLES AND MATERIALS

Compiled and prepared for publication by
ARSEN HARUTYUNYAN

Edited by
KAREN MATEVOSYAN

YEREVAN 2022

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ
ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Կազմեց և հրատարակության պատրաստեց՝
ԱՐՍԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Խմբագիր՝
ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ԵՐԵՎԱՆ 2022

ՀՏԴ 7.03
ԳՄԴ 85.03
Ա 791

Հրատարակվում է Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ

Կազմեց և հրատարակության պատրաստեց՝
Արսեն Հարությունյան
Պատմական գիտ. թեկնածու

Խմբագիր՝ ***Կարեն Մաթևոսյան***
Պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՎԵՏԻՍ

Ա 791 Հայ արվեստի պատմության էջեր. հոդվածների և նյութերի ժողովածու / Կազմեց և հրատարակության պատրաստեց՝ Ա. Հարությունյան; Խմբագիր՝ Կ. Մաթևոսյան.- Եր.: Մատենադարան, 2022.- 370 էջ, գունավոր ներդիր՝ 18 էջ:

Ժողովածուում ամփոփված է Արցախյան 44-օրյա պատերազմում անմահացած արվեստաբան Ավետիս Ավետիսյանի (1986-2020 թթ.) անտիպ աշխատությունների ընտրանին, որի բուն ատաղձը հայ արվեստն է՝ իր տարաբնույթ դրսևորումներով՝ որմնանկարչություն, ճարտարապետություն, վիմագրություն, քանդակ, լուսանկարչություն, ձեռագրարվեստ: Մեծապես կարևորվում են հայ ուշմիջնադարյան և նոր ժամանակների որմնանկարչությանը նվիրված հեղինակի մասնագիտական դիտարկումներն ու վերլուծությունները, որոնք նպաստում են հայ արվեստի՝ սակավ ուսումնասիրված բնագավառի մի շարք հարցերի պարզաբանմանը:

Նախատեսված է արվեստաբանների, աղբյուրագետների, Հայ եկեղեցու պատմության հարցերով զբաղվողների և ընթերցող լայն հասարակության համար:

ՀՏԴ 7.03
ԳՄԴ 85.03

ISBN 978-9939-897-11-0
© Մատենադարան, 2022
© Ավետիսյան Ավետիս (իրավահաջորդ), 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ 7
ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ 13

ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ (համառոտ ակնարկ) 17

ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ.
ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ 30

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ 120

ՑՈՒՑԱԿ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿՏԱՎՆԵՐԻ 132

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԸ ԵՎ
ՆԿԱՐԱՉԱՐԴ ԱՄՊՀՈՎԱՆԻՆ 140

ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՄԱՐԻԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ 150

ՀԱՅԿԱՎԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ 154

ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԻ ՊԱՏԿԵՐԱԿԱԼԻ
ՆԿԱՐԱՉԱՐԴՈՒՄՆԵՐԸ 159

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ 162

ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ (պատմական ակնարկ) 203

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ.
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖՈՏՈՇԱՐՔ 235

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՄԵԾ ՁԱՆԳԱԿԱՏԱՆ
ԱՐՁԱՆԱԳԻՐ ՁԱՆԳԵՐԸ 269

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ 274

ՎԻՇԱՊ-ՕՁԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ
ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՐԴԱՐԱՏԱՐՐԵՐՈՒՄ (համառոտ ակնարկ) 306

ՏՐԱՊԻԶՈՆԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ 312

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ
ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐՈՒՄ 320

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ 363

THE SCIENTIFIC HERITAGE OF ART HISTORIAN AVETIS AVETISYAN
Summary 368

ԱՌԱՋԱԲԱՆԻ ՓՈԽԱՐԵՆ

Լինել հայրենի պատմության և նրա մշակութային ժառանգության կրողը, վերծանել հինավուրց վանքերում ծնունդ առած վիմագիր ու ձեռագիր սկզբնաղբյուրներն ու կյանքի կոչել սրբավայրերի որմերին դրոշմված որմնանկարչական հուշարձանները, իսկ թե հայրենիքդ վտանգվի, լինել նրա սահմանները պաշտպանող առաջամարտիկներից մեկը,- սա է երիտասարդ արվեստաբան Ավետիս Ավետիսյան անհատի բուն նկարագիրը, որին նա հավատարիմ մնաց իր ողջ երկրային կյանքում:

Ավետիս Ավետիսյանը ծնվել է 1986 թ. հոկտեմբերի 5-ին Երևանում: 2003-2008 թթ. սովորել է Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի Կառավարման ֆակուլտետի Տեսական տնտեսագիտության բաժնում: Ուսումն ավարտելուց հետո Ա. Ավետիսյանը զորակոչվել է բանակ, ծառայել ԼՂՀ Պաշտպանության բանակի ստորաբաժանումների հրթիռահրետանային զորքերի կազմում (2008-2010 թթ.)՝ արժանանալով հրետանու ավագ սերժանտի զինվորական կոչման և «Պատվո դրոշ» մրցանակի: Տարիներ անց, նա ռուսերենից թարգմանել և լրամշակել է «ՀՀՆ-9Մ հակատանկային նռնականետի ուսումնական ձեռնարկ» (Երևան, 2013 թ.), ապա՝ «Լեռնային պատրաստության հրահանգ - ուսումնական ձեռնարկ» (Երևան, 2014 թ.) խորագրերով աշխատությունները, որոնք հայրենասեր երիտասարդի տքնաջան աշխատանքի առաջին պտուղներն էին:

Ծառայությունից հետո, սակայն, Ավետիսն իր ուսումնառությունը շարունակում է բոլորովին այլ բնագավառում: 2011-2013 թթ. սովորում է ԵՊՀ Պատմության ֆակուլտետի Հայ արվեստի պատմության և տեսության ամբիոնի Արվեստաբանության բաժնում՝ ստանալով արվեստաբանության մագիստրոսի գիտական աստիճան: Այստեղ է,

որ Ավետիսը սկսում է զբաղվել նաև գիտությամբ՝ ուսումնասիրության թեմա դարձնելով հատկապես ուշմիջնադարյան հայ որմնանկարչությունը: 2013 թ. ընդունվելով ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի ասպիրանտուրա՝ Ավետիսը հաստատում է իր ատենախոսության թեման՝ «Ուշ միջնադարի հայ որմնանկարչությունը»՝ արվեստագիտության դոկտոր Իրինա Դրամբյանի ղեկավարությամբ:

Գիտական գործունեությանը զուգահեռ՝ Ա. Ավետիսյանը սկսում է շրջագայել Հայաստանի, Արցախի, նաև հարակից երկրների պատմական վայրերով, տեսնում հայոց հնամենի վանքերն ու բերդերը, հիանում նրանց ճարտարապետությամբ, որմերին ու կոթողներին պահպանված մեսրոպատառ վիմագրերով, բարձրարվեստ պատկերաքանդակներով ու որմնանկարներով, որոնց առաջին տպավորություններն արտացոլված են նրա տպագիր ու անտիպ աշխատությունների էջերում:

2015 թ. Ավետիսն աշխատանքի է ընդունվում Կոմիտասի թանգարան-ինստիտուտում որպես գիտաշխատող: Սա լավ առիթ էր հայ հոգևոր երաժշտության սիրահարին հաղորդակցվելու մեծ հանճարի ստեղծագործություններին, նրա կյանքն ու գործը լուսաբանող արխիվային վավերագրերին ու լուսանկարներին: Մի քանի տարի անց՝ 2018 թ., Ավետիսը որոշում է հիմնովին զբաղվել իր ընտրած մասնագիտությամբ և աշխատանքի է ընդունվում «Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն» ՍՊԸ-ում որպես արվեստաբան: Այս շրջանում են կյանքի կոչվում նրա աշխատություններից շատերը՝ նվիրված Գնդեվազ գյուղի Ս. Աստվածածին եկեղեցու, Մեղրիի Անապաստանաց վանքի, Փոքր թաղի Ս. Հովհաննես եկեղեցու, Ագուլիսի Ս. Թովմա տաճարի, Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարներին, ներկագիր արձանագրություններին ու դրանց վերականգնմանը, նաև՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարի ու զանգակատան մեծ ու փոքր վիմագրերին: Այս հետազոտություններում արդեն դրսևորվեց սկսնակ գիտնականի մեծ նվիրումն ու վերլուծական միտքը:

Ավետիսի կյանքի վերջին «դպրոցը» դարձյալ Հայոց բանակն էր, որի շարքերն այս անգամ համալրեց որպես կամավոր, քանզի վտանգված էր Արցախը: 2020 թ. սեպտեմբերի 27-ին թուրք-ադրբե-

ջանական զորքերի կողմից սանձազերծված 44-օրյա պատերազմը, որն աղետալի հետևանքներով կասեցվեց միայն նոյեմբերի 9-ին, հազարավոր հայորդիների զրկեց երկրային կյանքից: Նրանց կազմում էր նաև հոկտեմբերի 18-ին՝ Մարտակերտում անմահացած մեր շնորհալի ընկերը՝ Ավետիսը*:

Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի հրամանով Ավետիս Ավետիսյանը հետմահու պարգևատրվեց Մարտական ծառայության մեդալով:

* * *

Սույն ժողովածուն, որը վերնագրել ենք «Հայ արվեստի պատմության էջեր» ընդհանուր խորագրով, ամբողջացնում է երիտասարդ գիտնականի մտորումների, մասնագիտական պրպտումների ու հետազոտությունների ողջ նկարագիրը, ուր տեղ է գտել Ավետիս Ավետիսյանի թվային շտեմարանում ամբարված անտիպ աշխատությունների հիմնական մասը: Ընթերցողին են ներկայացվում արվեստագիտության տարբեր հարցերին նվիրված հոդվածներ ու նյութեր (16 միավոր), որոնք պայմանականորեն խմբավորել ենք երկու հիմնական բաժնում՝ «Որմնանկարչություն» և «Պատմամշակութային ժառանգություն»: Անշուշտ, որմնանկարչությունը նույնպես պատմամշակութային ժառանգության անքակտելի մասն է, սակայն այստեղ տարանջատել ենք՝ նկատառելով հեղինակի մասնագիտական բուն ուղղվածությունն ու այդ տեսակ հոդվածների քանակական առավելությունը:

Ժողովածուի առաջին մասում ընդգրկված հոդվածները ներկայացնում են հայ որմնանկարչական հուշարձանների ընդհանուր պատկերն ու հատկանշական ցուցակը՝ Վանի թագավորությունից մինչև մեր օրերը: Ժամանակագրական լայն սահմաններ ընդգրկող հոդվածներից բացի՝ հեղինակը, տարբեր առիթներով, անդրադարձել է նաև առանձին հուշարձանների որմնանկարների ուսումնասիրման

* Ավետիս Ավետիսյանի կենսագրությունը տե՛ս նաև ***Ա. Հարությունյան, Խ. Հարությունյան***, Արվեստագիտության երիտասարդ նվիրյալը (Ավետիս Ավետիսյանի հիշատակին), «Բանբեր Մատենադարանի», հ. 30, Երևան, 2020, էջ 601-604:

խնդրին, դրանց պահպանմանն ու վերականգնմանը: Հատկանշելի են Ս. Էջմիածնի Մայր տաճարի, Աշտարակի Ս. Մարիանե, Հայկավանի Ս. Աստվածածին եկեղեցիների որմնանկարներին, ինչպես նաև Սևանավանքի Ս. Առաքելոց եկեղեցու խորանի պատկերակալի նկարազարդումներին ու դրանց վերականգնման սկզբունքներին նվիրված շահեկան ուսումնասիրությունները:

Անխոս, հայ իրականության մեջ՝ հատկապես ուշմիջնադարյան որմնանկարչությունը մասնագիտական հատուկ ուշադրության երբևէ չի արժանացել: Խորհրդային տարիներին միայն արվեստաբաններ Գարեգին Լևոնյանը, ավելի ուշ՝ Եղիշե Մարտիկյանն ու Մանյա Ղազարյանն են առավել մանրամասնորեն անդրադարձել այս կամ այն նկարչին վերագրվող որմնանկարչական ու գեղանկարչական աշխատանքներին՝ առաջադրելով վարկածներ ու նոր մոտեցումներ, որոնք պիտի կյանքի կոչվեին ապագա հետազոտողների կողմից: Ա. Ավետիսյանն այդ հետազոտողներից մեկը պիտի լիներ և սխալված չենք լինի, եթե ասենք, որ իր ստեղծագործական կարճատև կյանքի ընթացքում նա եղավ նաև այդ ոլորտի «առաջամարտիկը»: Ասվածի առհավատչյան ոչ միայն սույն ժողովածուում ընդգրկված նյութերն են, այլև նրա մեկ տասնյակից ավելի գիտական հոդվածներն ու հրապարակումները, որոնց ամբողջական մատենագիտությունը՝ կից համառոտ բովանդակային բացատրագրերով, ներկայացրել ենք սույն ժողովածուի վերջում (տե՛ս «Ավետիս Ավետիսյանի հրատարակած աշխատությունների մատենագիտություն» բաժինը):

Ինչ վերաբերում է ժողովածուի երկրորդ մասում ընդգրկված նյութերի բովանդակությանը, ապա այստեղ պատկերն առավել բազմաբնույթ է: Հեղինակն իր ուսումնասիրությունների նյութ է դարձրել պատմության, ճարտարապետության, քանդակագործության, ձեռագրական ու լուսանկարչական արվեստին առնչվող խնդիրները, որոնց քննության արգասիքն են Ս. Էջմիածնի Մայր տաճարի կառուցման տարեգրությանն ու ֆոտոարխիվին, զանգակատան արձանագիր զանգերին, Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքի ձեռագրերին, Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի պատմաճարտարապետա-

կան նկարագրին, լուսանկարչական արվեստում տեղ գտած հուշարձաններին և, առհասարակ, հայոց պատմությանն ու մշակույթին նվիրված հետազոտությունները:

Մասնավոր հարցերից մինչև համընդհանուր հնչեղություն ունեցող երևույթներ, ժամանակագրական դասակարգում ու տիպաբանական-բովանդակային վերլուծություն. այս մոտեցմամբ են շարադրվել հայ որմնանկարչական հուշարձանների պատմությանն ու դասակարգմանը, Հովնաթանյանների սերունդներին, ինչպես նաև՝ Վանի թագավորության պատմամշակութային ժառանգությանը նվիրված՝ Ա. Ավետիսյանի ստվարածավալ ուսումնասիրությունները:

Ժողովածուի կազմման գաղափարի ու կատարված աշխատանքի առնչությամբ ասենք, որ ի սկզբանե նախատեսել էինք մեկտեղել և ընդհանուր հատորով կյանքի կոչել Ավետիս Ավետիսյանի՝ 2018-2020 թթ. հրատարակած գիտական աշխատությունները, սակայն ընտանիքի անդամների ու ընկերների գործադրած ջանքերի արդյունքում պարզվեց, որ հեղինակի թվային շտեմարանում պահպանվել է ավարտուն և թերավարտ ստվարածավալ նյութ, որի հրատարակությունն ավելի մեծ նպաստ պիտի բերի հայագիտությանը: Այսպես, կրկնությունից խուսափելու համար, նպատակահարմար գտանք ընտրել անտիպները, որոնք պիտի որոշակիորեն ծանոթագրվեին ու խմբագրվեին: Մենք սիրով ստանձնեցինք այդ գործը և արդյունքում ունեցանք այն, ինչ ունենք*. նախ միօրինականացրինք տողատակային հղումների սկզբունքը, նկարատակերի բացատրագրերը, լրացրինք հղված, սակայն բաց թողնված աղբյուրներն ու գրականությունը, ավելացրինք նորերը: Նմանօրինակ միջամտությունները զանազանելու համար մեր ծանոթագրություններից հետո նշել ենք համառոտագրված՝ Ա. Հ.:

* Մեր խորին երախտագիտությունն ենք հայտնում ժողովածուի խմբագիր, պ.գ.դ., պրոֆեսոր Կ. Մաթևոսյանին, որի մշտական աջակցությամբ կյանքի կոչվեց սույն հատորը: Չմոռանանք նաև մեր սրբագրիչներին՝ Մաշտոցյան Մատենադարանի գիտաշխատողներ Հասմիկ Իրիցյանին և Անի Առաքելյանին, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտաշխատող Աշխեն Ենոքյանին, որոնց բարեխիղճ աշխատանքի արդյունքում սրբագրվեց ողջ շարվածքը:

Հարկ է նշել, որ ժողովածուում չենք ներառել հեղինակի աշխատանքային շարվածքներն ու տարբեր աղբյուրներից քաղված և, ըստ ամենայնի, իր ձեռքի տակ ունենալու նպատակով կազմած նյութերը: Թեպետ ձգտել ենք լրացնել ու ամբողջացնել Ա. Ավետիսյանի օգտագործած գրականությունը, սակայն, չենք բացառում, որ շարադրանքում կարող են լինել առանց հղման այլ մեջբերումներ ևս, որոնց համար հայցում ենք մեր ընթերցողի ներողամտությունը, քանզի հեղինակի որոշ նյութեր դեռևս թերավարտ էին:

Միով բանիվ, ընթերցողի սեղանին է դրվում Արցախյան 44-օրյա հերոսամարտում անմահացած մեր լուսավոր հայորդիներից մեկի՝ արվեստաբան Ավետիս Ավետիսյանի անտիպ աշխատությունների ընտրանին՝ իբրև հարգանքի տուրք հայ արվեստի նվիրյալ զավակի անմահ հիշատակին. «Յիշատակն արդարոյն օրհնո՛ւ-թեամբ եղիցի...»:

Արսեն Հարությունյան

Պատմական գիտ. թեկնածու

15. 09. 2021 թ.

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ԱՆԽՈՆՋ ՆՎԻՐՅԱԼԸ

Ավետիս Ավետիսյանի հետ ծանոթացա «Հայկական որմնանկարչություն» ժողովածուն հրատարակության նախապատրաստելու ժամանակ՝ 2018-ին: Քանի որ որմնանկարչության թեման ուսումնասիրող արվեստաբանները մեզանում փոքրաթիվ են, Ավետիսն ինձ համար իսկական հայտնություն դարձավ, և պատահական չէ, որ այդ ժողովածուում չորս մեծ ու փոքր հոդված լույս տեսավ նրա հեղինակությամբ. առաջինը «Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի հայկական որմնանկարները» արժեքավոր հետազոտությունն էր, հաջորդը՝ «Ցուցակ հայկական որմնանկարչության հուշարձանների (XVII դ. – XX դ. սկիզբ)» տեղեկաշատ նյութը, երրորդը՝ «Նորահայտ ներկագիր արձանագրություններ Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում» և, վերջապես, մի գրախոսություն Նիկոլայ Քոթանջյանի գրքի մասին: Դրանից բացի, Ավետիսը սիրահոժար հանձն առավ ընթերցել ժողովածուում ընդգրկված մի շարք հոդվածներ և խմբագրական ու սրբագրական բծախնդիր աշխատանքով մեծապես նպաստեց գրքի կայացմանը, որը տպագրվեց 2019-ի վերջերին: Այդ համատեղ աշխատանքի ժամանակ մոտիկից ճանաչեցի Ավետիսին, որին մինչ այդ բազմիցս տեսել էի Մատենադարանի ընթերցասրահում:

Խոստովանեմ, որ մեծ հույսեր էի կապում նրա հետ, քանի որ որմնանկարչության ուսումնասիրությունն այն ոչ դյուրին բնագավառն է, որը ոչ միայն մասնագիտական հմտություն, այլև անմնացորդ նվիրյալի աշխատանք է պահանջում: Ավետիսը հենց այդ մարդն էր: Մեծ ցավ եմ ապրում, որ նրա երիտասարդ կյանքն այդքան շուտ ավարտվեց, անկատար մնացին գիտական բազմաթիվ ծրագրերը: Նա կամավորաբար իր կյանքը դրեց հայրենիքի զոհասեղանին: Հայտնի մի երգ կա՝ «Երկիր հայրենի», որի խոսքերի մեջ Ավետիսն ընտրեց՝ «Ես մի զարկն եմ քո բազկի» տողը...

Ավետիս Ավետիսյանի լուսավոր հիշատակը վառ կմնա նրան ճանաչողների մտքում ու սրտում: Բարեբախտաբար, նա հասցրեց գիտական վաստակից բացի (որի առհավատչյան է սույն հարուստ ժողովածուն), այս աշխարհում նաև ժառանգ թողնել, մի փոքրիկ հրեշտակ դստրիկ՝ Նարինե անունով: Երբ նա մեծանա, հպարտ կլինի իր ԳԻՏՆԱԿԱՆ ԵՎ ՀԵՐՈՍ ՀԱՅՐԻԿՈՎ:

Կարեն Մաթևոսյան

Մաշտոցյան Մատենադարանի գիտական գծով փոխտնօրեն,
պատմական գիտ. դոկտոր, պրոֆեսոր

Ավետիս Ավետիսյանը դստեր՝ Նարինեի հետ (2018 թ.)

ՈՐՄՆԱՆԿԱՐԶՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ
(համառոտ ակնարկ)

Հայ որմնանկարչությունն ունի հազարամյակների պատմություն: Արվեստի այդ ինքնատիպ բնագավառի վաղագույն օրինակները ժայռապատկերներն են (պետրոգլիֆ), որոնք մեզ են հասել դեռևս մ.թ.ա. VII-II հազարամյակներից: Արագածում, Գեղամա լեռներում և Սյունիքում (Ուխտասարի լանջեր) պահպանված ժայռապատկերները բովանդակում են մարդկանց, կենդանիների տարատեսակ պատկերներ, ինչպես նաև աշխատանքային, ծիսական, ռազմի, որսի և այլ տեսարաններ, որոնք լավագույնս պարզում են հին հայկական ցեղերի կյանքը, մարդու աշխարհընկալումն ու հավատալիքները[1]:

Որմնանկարչությունը զարգացում է ապրել հատկապես Վանի կամ Արարատյան թագավորության (Ուրարտու) ժամանակաշրջանում: Որմնանկարների առանձին դրվագներ են հայտնաբերվել Ազնավուր-թեփե[2], Էրեբունի (Արին-բերդ)[3], Ալթըն-թեփե[4] և Թեյշեբաինի (Կարմիր բլուր)[5] բերդաքաղաքներում: Նշվածների շարքում բացառիկ են հատկապես Էրեբունիի որմնանկարները: 1950-60-ական թթ. հնագիտական երկարատև պեղումների արդյունքում հողալիցքից բացվել է ամրոցի հատակագիծը, իսկ Խալդի աստծու տաճարում, Արգիշտի արքայի պալատում և արտաքին սյունասրահում հայտնաբերվել են մոտ 2000 մ^2 ընդհանուր

---

[1] Ժայռարվեստի մասին մանրամասն տե՛ս ***Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան,*** Սյունիքի ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները», հ. 4, պրակ I, Երևան, 1970. ***Հ. Մարտիրոսյան, Հ. Իսրայելյան***, Գեղամա լեռների ժայռապատկերները, «Հայաստանի հնագիտական հուշարձանները» հ. 6, պրակ II, Երևան, 1971 – Ա. Հ.:

[2] Ենթադրաբար հիմնվել է Իշպուինի արքայի (մ.թ.ա. 828/825-810 թթ.) կողմից: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Պատնոց (Բաղնոց) գյուղի մոտ (Մանազկերտ քաղաքից մոտ 20 կմ հյուսիս-արևելք, Արածանիի Մանազկերտ վտակի վերին հոսանքի շրջանում, աջ ափին):

[3] Հիմնվել է Արգիշտի Ա արքայի կողմից, մ.թ.ա. 782 թ.: Գտնվում է Երևանի Էրեբունի համայնքում:

[4] Հիմնվել է Արգիշտի Բ-ի օրոք (մ.թ.ա. 714-685/680 թթ.), գտնվում է ներկայիս Երզնկա քաղաքից մոտ 20 կմ դեպի արևելք (Կարինից Սեբաստիա տանող ճանապարհի մոտ):

[5] Հիմնվել է Ռուսա Բ արքայի օրոք (մ.թ.ա. 685/680-640 թթ.), գտնվում է ներկայիս Երևանի Շենգավիթ համայնքում:

մակերեսով բացառիկ որմնանկարներ՝ արտահայտված բուսաերկրաչափական զարդատարրերով, առյուծների, ցլերի պատկերներով, որոնց շարքում է նաև Խալդի աստծու մեծադիր որմնանկարը (տե՛ս ներդիր, նկ. 1, 2):

Որմնանկարչության զարգացումը որոշակիորեն ընդհատվել է անտիկ (հելլենիստական) ժամանակաշրջանում: Այդուհանդերձ, հիշյալ շրջանից պահպանվել է խճանկարչության երկու բացառիկ հուշարձան՝ Արտաշատի և Գառնիի բաղնիքներում: Արտաշատի բաղնիքի V, VIII և IX սենյակների խճանկարները (II-III դարեր) ներկայացնում են երկրաչափական զարդատարրեր՝ համակցված ալիքաձև պատկերներով, որոնք իրենց ընդհանուր հորինվածքով հիշեցնում են գորգապատկեր (տե՛ս ներդիր, նկ. 3): Ինչ վերաբերում է Գառնիի խճանկարին (III դար), ապա այն հիմնականում ներկայացնում է ծովը, ծովային կենդանիներին և առասպելական կերպարներին (տե՛ս ներդիր, նկ. 4):

Հայ որմնանկարչությունը վերածնունդ է ապրել վաղ միջնադարում: Թեև այս շրջանից պահպանված որմնանկարներն այնքան էլ շատ չեն, բայց և այնպես կարելի է փաստել, որ վաղ միջնադարում եկեղեցիների նկարազարդումը սկսել է կրել համատարած բնույթ, իսկ որակական առումով հայ որմնանկարչությունը հասնում է համաշխարհային մակարդակի:

Հայ վաղմիջնադարյան արվեստում գեղարվեստական բացառիկ արժեք են ներկայացնում Ծիծեռնավանքի, Թալինի Կաթողիկեի, Լմբատավանքի Ս. Ստեփանոսի, Աշտարակի Կարմրավորի, Արուճի, Մրենի տաճարների, մասամբ՝ Արթիկի մեծ և փոքր եկեղեցիների, Կոշի Ս. Ստեփանոսի, Մաստարայի Ս. Հովհաննեսի և Տայքի Իշխանի տաճարի որմնանկարները: Նշված հուշարձանները նաև առավել լավ պահպանվածներն են, որոնք ուսումնասիրողներին հնարավորություն են ընձեռում որոշելու դրանց գեղարվեստական որակը, պատկերագրական առանձնահատկությունները, գաղափար կազմելու վաղ շրջանում հայկական եկեղեցիներում ընդունված որմնանկարների ընդհանուր գեղարվեստական հարդարատարրերի մասին:

Համառոտ անդրադառնանք յուրաքանչյուրին.

Ծիծեռնավանքի (IV–V դդ.) ավագ խորանի գմբեթարդին, ըստ ամենայնի, հետիմասիայի (Քրիստոսի Երկրորդ գալստյան համար նախատեսված թափուր գահը, վրան՝ Ս. Գիրքը) տեսքով պատկերվել է

Համբարձման տեսարանը: Եկեղեցու մյուս հատվածներում պատկերված են նաև Խաչի համբարձման տեսարանը և երեք կերպար (ենթադրաբար՝ Ս. Տրդատը, Ս. Գրիգոր Լուսավորիչը և Ս. Հռիփսիմեն):

Թալինի Կաթողիկե եկեղեցու ավագ խորանի գմբեթարդին նույնպես հետիմասիան է ներկայացված (այս դեպքում նաև՝ զույգ քառակերպերով): Պահպանվել են նաև շրջան-մեդալիոնների մեջ պատկերված սրբերի դիմանկարներ, իսկ ավագ խորանի ձախ կողմում՝ «Մուտք Երուսաղեմ» տեսարանը (տե՛ս ներդիր, նկ. 5):

Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու ավագ խորանի գմբեթարդին «Քրիստոսը փառքի մեջ» (գահին նստած) պատկերն է՝ միավորված Եզեկիել և Եսայի մարգարեների տեսիլքների հետ, այն է՝ հրե կրակի լեզուներում զույգ անիվներ, երկու քառակերպեր և երկու սերովբեներ: Արևելյան պատին՝ խորանից աջ և ձախ, պատկերված են Ս. Սարգիս և Ս. Գևորգ զորավարները:

Կոշի Ս. Ստեփանոս եկեղեցու ավագ խորանի գմբեթարդին տեսնում ենք լմբատավանքյան «Համբարձումը»՝ առանց սերովբեների, ստորին հատվածում՝ Հաղորդության և Օրենքի հանձնման միավորված տեսարանն է:

Աշտարակի Կարմրավոր եկեղեցու ավագ խորանի գմբեթարդին դարձյալ «Քրիստոսը փառքի մեջ» (գահին նստած) պատկերն է՝ քառաթև զույգ սերովբեներով, իսկ երկու կողմում՝ Մարիամ Աստվածածինն ու Հովհաննես Մկրտիչը: Ավագ խորանի ստորին հատվածում ներկայացված են եպիսկոպոսական հանդերձանքով հինգ սրբեր, իսկ արևմտյան խորանում՝ Ս. Սարգիսն ու Ս. Գևորգը:

Արուճի Ս. Գրիգոր տաճարի գմբեթարդին մասամբ պահպանվել է Օրենք տվող Քրիստոսի համբարձման տեսարանը, որի ստորին հատվածում առաքյալներն են (տե՛ս ներդիր, նկ. 6):

Մրենի տաճարի և **Արթիկի մեծ՝ Ս. Գևորգ եկեղեցու** ավագ խորաններում, ամենայն հավանականությամբ, նույնպես պատկերված է եղել Արուճում հանդիպող համանուն տեսարանը (Մրենի տաճարում տեսնում ենք նաև շրջան-մեդալիոնների մեջ պատկերված սրբերին, ինչպես նաև՝ ամբողջ հասակով մի սրբապատկեր): **Արթիկի փոքր՝ Ս. Մարիամ Աստվածածին** եկեղեցում ժամանակին, ըստ Յ. Ստրժիգովսկու, պատկերված է եղել «Ողբ առ Քրիստոս» տեսարանը[6]:

[6] ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band II, Wien, 1918, էջ 499-500:

Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցում (V-VI դդ.) պահպանվել են սուրբ ձիավորի և վեց սրբերի որմնանկարներ:

Տայքի Իշխանի տաճարում (VII դ.) պահպանվել է Տրդատի և Աշխենի որմնանկարը՝ հայերեն արձանագրությամբ:

Ժամանակին նկատելի էին նաև **Աշտարակի Ծիրանավոր** եկեղեցու (V-VI դդ.) ավագ խորանի որմնանկարները. նշմարվում էին վեց սրբերի ուրվագծեր:

Հիմնաշերտի, իսկ որոշ դեպքերում նաև ներկի մնացորդներ են պահպանվել (կամ ժամանակին պահպանված են եղել) Դվինի Մայր տաճարում (IV-V դդ.), Եղվարդի բազիլիկում (V դ.), Ձովունիի Ս. Պողոս-Պետրոս (V-VI դդ.), Ս. Սարգիս (V-VI դդ.) եկեղեցիներում, Արևիսի Թանահատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցում (V-VI դդ.), Ջրառատի Ս. Մինաս եկեղեցում (VI դ.), Ավանի տաճարում (591 թ.), Ծռվիզի վանքի Ս. Աստվածածին եկեղեցում (VI-VII դդ.), Լուսագյուղի եկեղեցում (VI-VII դդ.), Շենիկի Ս. Ստեփանոս եկեղեցում (VI-VII դդ.), Բյուրականի Արտավազիկ եկեղեցում (VI-VII դդ.), Բուժականի Ս. Աստվածածին եկեղեցում (VII դ.), Աստվածընկալ վանքի մատուռում (VII դ.), Դվինի արքայական պալատում (VII դ.), Բագարանի Ս. Թեոդորոս տաճարում (624-631 թթ.), Ձվարթնոցի տաճարում (643 թ.), Էջմիածնի Այգեշատ գյուղի Թարգմանչաց վանքում (VII դ.) և Պտղնիի տաճարում (VII դ.): Աղցքի բազիլիկում (IV դ.), Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցում (VI-VII դդ.), Եղվարդի Ս. Թեոդորոս զորավար եկեղեցում (VII դ.) (տե՛ս ներդիր, նկ. 7), Տեկորի (IV-V դդ.) և Երերույքի (V դ.) տաճարներում պահպանվել են բուսական զարդանախշի հատվածներ, Քասախի բազիլիկում (IV-V դդ.)՝ հավասարաթև խաչի և մի արմավիկի պատկեր: Սիսիանի և Օձունի (VI դ.) տաճարներում, զարդանախշերից զատ, պահպանվել են նաև լուսապսակների հատվածներ:

Արաբական արշավանքներն ընդհատում են հայ որմնանկարչության վերելքը. գալիս են համատարած լճացման VIII-IX դարերը, որին հետևում է զարգացման նոր փուլ՝ ընդգրկելով X դարն ու XI դարի առաջին կեսը:

Այս շրջափուլից պահպանված որմնանկարչական հուշարձանները ներկայանալի են հատկապես ներքոնշյալ ինը եկեղեցիների օրինակներով:

Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարը (895-906 թթ.) նկարազարդվել է 930 թ., պատմագիր Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ «ֆռանգ» (եվրոպացի) նկարիչ-պատկերագործների կողմից[7]: Ներկայումս պահպանվել են առանձին հատվածներ արևմտյան պատի «Ահեղ դատաստան», հյուսիսային պատի «Մանկան լոգանքը» (տե՛ս ներդիր, նկ. 8) տեսարաններից և առաքյալների պատկերներ ավագ խորանի ետնապատին: Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է նաև **Գնդեվանքի** ավագ խորանի որմնանկարների մասին (930-ական թթ., գործ՝ Եղիշեի[8]), որտեղ նաև Քրիստոսի մեծածավալ պատկերն է եղել: Որմնանկարից ներկայումս գրեթե ոչինչ չի պահպանվել:

X դարի երկրորդ կեսին են արվել **Հաղբատի Ս. Նշան** եկեղեցու հին շերտի որմնանկարները. ավագ խորանի գմբեթարդին ներկայացված է «Բարեխոսությունը», որից առանձին հատվածներ են պահպանվել:

Աղթամարի Ս. Խաչ եկեղեցին (915-921 թթ.) նկարազարդված է գրեթե ամբողջությամբ: Պատերը հարդարված են մասամբ Հին և հիմնականում Նոր Կտակարանի բազմաթիվ թեմաների եռաշարք որմնապատկերներով:

Որոտնավանքի Ս. Ստեփանոս Նախավկա եկեղեցու (1000 թ.) գրեթե ամբողջ աղոթասրահը նկարազարդված է եղել: Այժմ մնացել է միայն հյուսիսային խորանի հատվածը, որը պատկերում է շրջանի մեջ աստղազարդ կապույտ երկինք, կենտրոնում՝ հրեշտակ:

Անիի Մայր տաճարի (1001 թ.) ավագ խորանի գմբեթարդին պատկերված է եղել Քրիստոսը՝ հրեշտակների և խաչապատկերի հետ: Տեղի **Ս. Փրկիչ** եկեղեցու (1035 թ.) որմնանկարների շարքում առանձնանում է նկարչի՝ Սարգիս Փառշիկի ինքնանկարը (տե՛ս ներդիր, նկ.9):

Տայքի Օշկվանքի որմնանկարներից մեկը պատկերում է Բանակի տաճարում Բագրատ Դ-ի պսակադրությունը բյուզանդական կայսեր ազգականուհու՝ Հելենայի հետ:

---

[7] ***Ստեփանոս Օրբէլեան,*** Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 256-257:

[8] Պատմագրի հաղորդմամբ՝ Սյունյաց Սոփիա տիկինը, գնելով սրբազան համբավ ունեցող Գնդեվան վայրը, որոշել է այստեղ եկեղեցի կառուցել, որի համար. «ետ ածել վաղվաղակի արուեստաւորս ի ճարտար քարատաշաց եւ սկիզբն առնէ շինուածոյն՝ կացուցեալ ի վերայ վանաց երէցն զհայր Սարգիս, եւ գործակալ զԵղիշա երէց եւ նկարիչ» (***Ստեփանոս Օրբէլեան***, էջ 260): Հիշատակությունից դատելով՝ պատմագիրը վկայաբերում է հայր Սարգսի և գործակալ (հոգևոր գործերի վերակացու) Եղիշե երեցի անունները, իսկ նկարչի անունը չի հաղորդում, ուստի քիչ հավանական ենք կարծում գործակալ Եղիշե երեցի՝ նաև նկարիչը լինելու վարկածը – Ա. Հ.: Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցում պահպանված «Հոգեգալուստ» որմնանկարը տե՛ս ներդիր, նկ. 15:

Ռշտունիքի Ս. Հակոբ վանքի (Կապուտկողի կամ Ընձաքարի վանք, այժմ՝ ավերված) որմնանկարներում եղել են ավետարանական նկարաշարի որոշ դրվագներ՝ «Ավետումը», «Մարիամի այցը Եղիսաբեթին», «Փախուստը դեպի Եգիպտոս» և այլ տեսարաններ, նաև Արծրունյաց տոհմից սերող պատվիրատուների դիմանկարներ և սուրբ զորավարների պատկերներ:

XI դ. սելջուկների արշավանքների հետևանքով կրկին ընդհատված հայոց հոգևոր, մշակութային կյանքը նոր վերելք է ապրել Հյուսիսային Հայաստանում Զաքարյանների իշխանապետության հաստատման ժամանակաշրջանում: Ի թիվս այլ բնագավառների՝ մեծ աշխուժություն է նկատվում նաև որմնանկարչության ոլորտում: XIII-XIV դարերը կազմում են զարգացած միջնադարի հայ որմնանկարչության երկրորդ ենթափուլը, որի ընթացքում ստեղծվում են հիրավի բացառիկ որմնանկարչական հուշարձաններ՝ 20-ից ավելի եկեղեցիներում: Այդ ցանկում առանձնանում են հատկապես Անիում Տիգրան Հոնենցի կառուցած Ս. Գրիգոր Լուսավորիչ (1215-1251 թթ.), Աբուղամրենց Ս. Գրիգոր Լուսավորիչ (X դարի II կես) և Դադիվանքի Ս. Աստվածածին Կաթողիկե (1234 թ.) եկեղեցիները: Միևնույն ժամանակ, կապված XIII դարում Հայաստանում իշխած Զաքարյանների՝ հիմնականում քաղկեդոնական դավանանքի հետևորդներ լինելու հետ, որոշ վանքեր փոխանցվում են հայ-քաղկեդոնական հոգևորականությանը: Իբրև կանոն, քաղկեդոնական եկեղեցիները պիտի որմնանկարազարդ լինեին, ուստի վերոնշյալ եկեղեցիները բացառություն չէին:

Այսպես, քաղկեդոնական ավանդույթներով նկարազարդվում են Ախթալայի, Քոբայրի, Խուճապի և Կիրանցի վանքերի եկեղեցիները: Նշվածների մեջ բացառիկ են հատկապես Ախթալայի վանքի Կաթողիկե եկեղեցու որմնանկարները, որոնք հայ-քաղկեդոնական որմնանկարչության թագն ու պսակն են կազմում: Եկեղեցին նկարազարդված է գրեթե ամբողջությամբ. ավագ խորանին պահպանվել են Տիրամայրը Մանկան հետ պատկերը, Հաղորդության տեսարանը և երկու շարքով՝ հոգևոր հայրերը: Գմբեթատակ խաչաթևերին տերունական շարքն է, արևմտյան պատին՝ «Ահեղ դատաստանի» որմնանկարը (տե՛ս ներդիր, նկ. 11, 12):

XV-XVI դարերում, պայմանավորված օտար նվաճողների լծի տակ գտնվելու արդյունքում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով, հայ արվեստը ճգնաժամ է ապրում: Որոշակի վերելք է նկատվում միայն XVII դարի երկրորդ կեսին, որով էլ սկզբնավորվում է որմնանկարչական արվեստի նոր շրջափուլը:

Հայ որմնանկարչության հիշյալ ժամանակաշրջանն ընդգրկում է XVII դարի երկրորդ կեսից մինչև XX դարի սկիզբն ընկած ժամանակահատվածը: Այս շրջանից հայտնի են շուրջ 115 եկեղեցիների, իշխանական առանձնատների և այլ կառույցների որմնանկարներ: Սրանց խիստ բնորոշ են օտար մշակութային ազդեցությունների հետևանքով նկատելի նորամուծությունները, մասնավորապես՝ Արևելյան Հայաստանի որմնանկարներում պարսկական զարդատարրերի լայնորեն կիրառումը: Այդուհանդերձ, նույնիսկ այս պայմաններում քիչ չեն բարձրարվեստ ստեղծագործությունները: Նոր շրջանի հայ որմնանկարչության բարձրակետն են Հովնաթանյան նկարիչների երեք սերունդների՝ Նաղաշ Հովնաթանի, նրա որդիների՝ Հակոբի և Հարությունի, ինչպես նաև թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի ստեղծագործությունները: Նրանց անվան հետ է կապված հայ որմնանկարչության ամենաառանցքային հուշարձաններից մեկի՝ Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդումները (1720-1786 թթ.)[9] (տե՛ս ներդիր, նկ. 13):

Հայ որմնանկարչական հուշարձանները բազմաթիվ են նաև հայկական գաղթօջախներում: Պատմական դառը ժամանակահատվածներում հայ ժողովրդի մի ստվար զանգված ստիպված է եղել դեգերել հայրենիքից հեռու՝ չմոռանալով սակայն իր եկեղեցին և մշակույթը: Գաղթօջախներում կառուցվել են բազմաթիվ հայկական եկեղեցիներ, որոնց մի մասը նաև նկարազարդվել է: Այս կապակցությամբ առաջինը պետք է հիշատակել Նոր Ջուղայի տասնյակից ավելի հայկական եկեղեցիները, որոնց մեծ մասում այժմ էլ հրաշալի պահպանվել են որմնանկարները:

Իրանի կառավարությունն իր հերթին անում է ամեն ինչ՝ հայկական ժառանգությունը լավագույնս պահպանելու և հանրահռչակելու համար: Ցավոք, այս մոտեցումը ոչ բոլոր երկրներում է հանդիպում: Մասնավորապես, խնդիրներ կան հարևան Վրաստանում, որտեղ երբեմնի 20-ից ավելի հայկական եկեղեցիներից մոտ մեկ տասնյակն են այժմ պահպանվել, եղածներից մի քանիսն էլ վրաց պետությունը վրացականացրել է: Խնդիրը, անշուշտ, անհամեմատելի է հարևան Թուրքիայի և Ադրբեջանի

[9] Էջմիածնի Մայր տաճարի՝ XVII-XVIII դդ. նկարազարդման արվեստին ժամանակին հանգամանորեն անդրադարձել է հայագիտության երախտավոր Գարեգին Հովսեփյանը (***Գ. Հովսեփյան***, Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը XVII-XVIII դարերում, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 272-312) – Ա. Հ.:

հետ, որտեղ պետական մակարդակով իսպառ վերացվում է հայկական ցանկացած հետք, սակայն Վրաստանում ևս երբեմն նկատվում է նույն քաղաքականությունը: Վառ օրինակ է Թբիլիսիի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցին, որտեղ տասնամյակներ առաջ դեռևս պահպանվել էին գմբեթի որմնանկարները (տե՛ս ներդիր, նկ. 16ա, բ):

Վերջերս, վրաց կառավարության թույլտվությամբ, հայկական որմնանկարները մաքրվեցին և տեղում նկարվեցին նոր՝ վրացական որմնանկարներ: Կարևոր քայլ էր Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու որմնանկարների՝ 2013-2015 թթ. վերականգնումը (Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոն, վերականգնողական խմբի ղեկավար՝ Արժանիկ Հովհաննիսյան), որի շնորհիվ ոչ միայն փրկվեց բացառիկ այդ հուշարձանը, այլև վրաց իշխանություններին ևս մեկ անգամ հիշեցրեց Թբիլիսիում առկա հայկական հուշարձանների մասին: Ողջունելի է նաև, որ վերականգնումն իրականացվեց վրացական կառավարության աջակցությամբ (տե՛ս ներդիր, նկ. 14):

Հայկական որմնանկարչության գիտական ուսումնասիրությունը տևական պատմություն չունի[10]: Եթե հետադարձ հայացք նետենք հարակից բնագավառների ուսումնասիրման պատմության ընթացքին, ապա կտեսնենք, որ միայն XIX դարի վերջերից գիտնականները սկսել են լրջորեն զբաղվել հայ ճարտարապետության պատմությամբ և տեսությամբ, իսկ XX դարի սկզբից՝ նաև մանրանկարչության պատմությամբ: Որմնանկարչության «բախտը» առավել քիչ նախանձելի էր: Խնդիրը կապված էր մի կողմից որմնանկարչական հուշարձանների՝ բավականին վատ պահպանվածության հետ, մյուս կողմից որոշակիորեն խոչընդոտում էր այն անհիմն համոզմունքը, թե Հայաստանում ընդունված չի եղել որմնանկարչությունը, քանզի հայերը պատկերամարտ էին: Չնայած սրան, հայ և օտարազգի հետազոտողներն առանձին հուշարձաններին նվիրված աշխատություններում որմնանկարների առկայության դեպքում հաճախ նշել են դրանց գոյության մասին (Թ. Թորամանյան, Յ. Ստրժիգովսկի, Ա. Մուրավյով, Հ. Լինչ և այլք):

[10] Խնդրի մասին հանգամանալից տե՛ս ***И. Дрампян,*** К истории изучения средневековой армянской фресковой живописи, Вестник Санкт-Петербургского университета. Искусствоведение, т. 8, вып. 2, 2018, էջ 232-257:

Իբրև այդպիսին, որմնանկարներին առաջինը հատուկ ուշադրություն է դարձրել նշանավոր հայագետ Նիկողայոս Մառը: Անիում՝ իր ղեկավարությամբ ընթացող հնագիտական պեղումների ժամանակ (1892-1917 թթ.) մեծ գիտնականի ուշադրությունից չեն վրիպել նաև հայ արվեստի այդ բացառիկ հուշարձանները[11]: Մառը սկսել է լրջորեն զբաղվել Անիի որմնանկարչության ուսումնասիրությամբ: Իր հոդվածներում նա արդեն որոշակիորեն կասկածով էր վերաբերվում հայերի պատկերամարտ անցյալին, սակայն թույլ էր տալիս նաև այնպիսի սխալներ, որոնք հետագայում կարծրատիպ են դարձել մյուս հետազոտողների համար: Այդպիսի սխալներից էր հատկապես հայկական որմնանկարները հայ-քաղկեդոնական միջավայրի արդյունք համարելը:

Ուսումնասիրությունները խորացնելու նպատակով Մառի հրավերով 1911 թ. Անի է ժամանել որմնանկարների մասնագետ Ն. Սիչովը: Ճիշտ է, առաջին համաշխարհային պատերազմը խափանեց Մառի մտադրությունները, սակայն հրապարակված հոդվածները տվեցին իրենց արդյունքները և որոշակի հիմք դարձան հետագա ուսումնասիրությունների համար:

Հայ որմնանկարչության ուսումնասիրությունը միանգամայն այլ բարձունքի հասավ Խորհրդային շրջանում՝ ի դեմս Լիդիա Դուռնովոյի, Սիրարփի Տեր-Ներսեսյանի, Նիկոլայ Քոթանջյանի և Իրինա Դրամբյանի: Լ. Դուռնովոյի հոդվածն Արուճի որմնանկարի մասին[12], ինչպես նաև նրա երկու մենագրությունները, նոր խոսք էին հայ որմնանկարչության ուսումնասիրության բնագավառում[13]: Հատկապես երկրորդ մենագրության մեջ կարևոր էր Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու որմնանկարների խորազնին ուսումնասիրությունը: Այդուհանդերձ, այս աշխատություններում ևս երբեմն հանդիպում էր այն կարծրատիպը (թերևս Նիկողայոս Մառի վերոնշյալ աշխատությունների ազդեցությամբ), ըստ որի՝ հայ որմնանկարչական հուշարձանների մեծ մասը կապված է քաղկեդոնականության հետ:

---

[11] ***Н. Марр,*** Ани. Книжная история города и раскопки на месте городища, Ереван, 2011, табл. XVI, илл. 48-51, табл. XXXIII, илл. 115, 120, 121, табл. XLIII, илл. 188, табл. XLIV, илл. 189, 190, табл. XLIX, илл. 216 – Ա. Հ.:

[12] ***Л. Дурново,*** Стенная живопись в Аруче (Талиш), Известия АН АрмССР, N 1, 1952, էջ 49-66:

[13] Նույնի՝ Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, նաև՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979:

Հայ որմանկարչության գիտական ուսումնասիրության բնագավառում նշանակալի են անվանի արվեստաբան Սիրարփի Տեր-Ներսեսյանի աշխատությունները: Նախ և առաջ պետք է նշել աղբյուրագիտական բնույթի նրա երկու հոդվածները, որոնք նվիրված էին Վրթանես Քերթողի հայտնի երկին՝ որպես պատկերամարտության դեմ գրված հնագույն աղբյուր[14]: Մյուս կարևոր աշխատանքն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարների մանրազնին ուսումնասիրությունն է, որը մինչ օրս հանդիսանում է որմանկարչական այդ բացառիկ հուշարձանի ամենաամբողջական ուսումնասիրությունը[15]: Որմանկարչական մի քանի այլ հուշարձաններ ներկայացված են (արդեն համառոտ) Տեր-Ներսեսյանի՝ ավելի ուշ հրատարակած աշխատության մեջ[16]: Այստեղ կարևոր է դարձյալ Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի որմնանկարների ոճի քննությունը, նաև այն մատենագրական աղբյուրների ուսումնասիրությունը, որոնցից և ձևավորվել է տվյալ պատկերագրությունը:

Լ. Դուռնովոյից հետո հայ միջնադարյան որմնանկարչության խոշորագույն հետազոտող կարելի է համարել գեղանկարիչ, արվեստաբան Նիկոլայ Քոթանջյանին: 1978 թ. ռուսերենով հրատարակված նրա «Գույնը Հայաստանի վաղմիջնադարյան գեղանկարչությունում» խորագրով աշխատությունը (հեղինակի առաջին մենագրությունն էր) վերաբերում էր հայկական վաղմիջնադարյան որմնանկարչական հուշարձաններին[17]:

---

[14] ***S. Der Nersessian,*** Une Apologie des Images du septieme siecle, Byzantion, vol. 17 (1944-1945), էջ 58-87. Image Worship in Armenia and its opponents, In Etudes Byzantines et Armeniennes, 4 volumes. Louvain: Imprimerie Orientaliste, 1973, vol. 1. էջ 405-415:

[15] ***Ս. Տեր-Ներսեսյան,*** Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 102-116:

[16] ***S. Der Nersessian,*** L'Art armenien, Paris, 1977.

[17] ***Հ. Կոտանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении (Анализ памятников VI-VII вв.), Ереван, 1978.

Հետագա տասնամյակներում հրատարակվում են գիտնականի՝ հայկական որմնանկարչությանը նվիրված մի շարք հոդվածներ՝ «Художественный язык Аручской росписи и раннесредневековые фрески Армении» (II Международный симпозиум по армянскому искусству. сборник докладов, т. III, Ереван, 1978), «Фрески Аруча как отражение античной традиции в раннесредневековой живописи Армении» (Художественное наследие, вып. 6/36, Москва, 1980), «Fresques arméniennes du VIIe siècles d'après les monuments d'Arménie Sovétique» (Atti del Quinto Simposio Internazionale di Arte Armena, Venezia, 1988), «The Frescoes in the Church of St. Gregory the Illuminator founded by Tigran Honents in Ani» (համահեղ.՝ Իրինա Դրամբյան, Armenian Review, v. 43, N 4/172, Watertown, 1990), «Թալինի Մեծ տաճարի գլխավոր աբսիդի որմնանկարի գծային վերակառուցման փորձը» («Հայ արվեստի հարցեր», գիրք 1, Երևան, 2006), «Фрески Татева. Судьба росписи и история ее изучения» (համահեղ.՝ Իրինա Դրամբյան, «Հայ արվեստի հարցեր», գիրք 5, Երևան, 2013) և այլն:

Մասնավորապես, իր իսկ ստեղծած և արվեստաբանության մեջ նորույթ համարված գույնի ուսումնասիրման նոր մեթոդով հեղինակը քննության է առել վաղմիջնադարյան կերպարվեստի կարևորագույն հուշարձանները (Էջմիածնի Ավետարանի VI-VII դդ. մանրանկարներ, Արուճի տաճարի, Թալինի Կաթողիկե եկեղեցու, Լմբատավանքի, Կոշի Ս. Ստեփանոս և Եղվարդի Ս. Զորավար եկեղեցիների որմնանկարներ):

2017 թ. Երևանում հետմահու լույս տեսավ Քոթանջյանի «Հայաստանի վաղմիջնադարյան մոնումենտալ գեղանկարչությունը (Դ-Է դարեր)» մեծարժեք աշխատությունը (ռուսերեն), որը մեծ գիտնականի չորրորդ և վերջին հրատարակված մենագրությունն էր: Այս աշխատությունը հայագիտության մեջ առաջին փորձն է՝ ներկայացնելու վաղմիջնադարյան հայ որմնանկարչության ամբողջական պատկերը:

Հայ որմնանկարչությանը նվիրված արժեքավոր ուսումնասիրությունների հեղինակ է նաև արվեստաբան Իրինա Դրամբյանը: Նշելի է նրա «Фрески Кобайра» (Ереван, 1979) մեծարժեք աշխատությունը, որը մեծ դեր խաղաց հուշարձանի ծագման, այն է՝ հայ-քաղկեդոնական միջավայրին վերագրելու գործում (մինչ այդ գերակշռող էին հուշարձանը վրացական մշակույթի մաս համարողները): Ըստ հեղինակի՝ Քոբայրի պատմությունը վկայում է հայկական միջավայրի հետ նրա մշտական կապվածության մասին, իսկ որմնանկարների ոճական առանձնահատկություններն առավելապես բնորոշ են արևելաքրիստոնեական արվեստին: Այդ են վկայում հարթապատկերային ու գրաֆիկական մշակումները, կերպարների շարժման պայմանականությունը, ոճը, եզրագծերի արտահայտիչ լինելը և այլն:

Անկախության շրջանում ևս շարունակվեց հայ որմնանկարչական հուշարձանների ուսումնասիրությունը: Հատկանշելի են Հրավարդ Հակոբյանի, Սեյրանուշ Մանուկյանի, Զարուհի Հակոբյանի և, հատկապես, ռուս արվեստաբան Ալեքսեյ Լիդովի ուսումնասիրությունները: Վերջինիս՝ Ախթալայի որմնանկարներին նվիրված մենագրությունը վճռորոշ եղավ տասնամյակներ տևող գիտական բանավեճերից հետո, երբ հուշարձանի մանրակրկիտ ուսումնասիրության արդյունքում հեղինակը հաստատեց դրանց՝ հայ-քաղկեդոնական լինելու փաստը (Մոսկվա, 1991):

Վերոշարադրածը պարզում է, որ մեզ հայտնի ուսումնասիրությունների գերակշիռ մասը նվիրված է առանձին հուշարձանների հետազոտությանը: Հայ միջնադարյան որմնանկարչության կամ գոնե նրա առանձին շրջանների ամբողջական ուսումնասիրման առումով այսօր ունենք միայն Նիկոլայ Քոթանջյանի՝ վաղմիջնադարյան հայ որմնանկարչությանը նվիրված վերոնշյալ աշխատությունը և վերջերս լույս տեսած «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածուն (կազմող և խմբագիր՝ Կարեն Մաթևոսյան): Կարծում ենք, որ խնդրո առարկա բնագավառի հետագա ուսումնասիրություններին նոր թափ հաղորդելու համար հարկ է ունենալ թեկուզ և ոչ լիակատար, բայց ընդհանուր, հանրագիտարանային բնույթի մի ուսումնասիրություն, որը ժամանակագրական կարգով և ըստ մարզերի (շրջանների) կընդգրկի հայկական որմնանկարչության բոլոր հուշարձանները: Նկատառելով այդ՝ ի պետս գալիք սերունդների, առաջարկում ենք «Հայկական որմնանկարչության համահավաք» մատենաշար[18] կազմելու հետևյալ սկզբունքները.

Համահավաքը պետք է կազմվի ըստ մարզերի կամ շրջանների: Յուրաքանչյուր հատորում պետք է ներկայացված լինեն տվյալ մարզի կամ շրջանի[19] բոլոր հուշարձանները՝ նյութի ներկայացման հետևյալ կարգով.

ա. Հակիրճ տեղեկություններ կառույցի (եկեղեցի, պալատ և այլն) մասին,

բ. Կառույցում որմնանկարների քարտեզագրում,

գ. Առանձին տեսարանի կամ պատկերի լուսանկար,

դ. Առանձին տեսարանի կամ պատկերի գրչանկար,

ե. Առանձին տեսարանի կամ պատկերի մասին հակիրճ տեղեկություններ.

- պատկերագրական նկարագիր,

- ոճական նկարագիր,

- առկա վիճակ,

[18] Հարկ ենք համարում նշել, որ նման մատենաշար կազմելու գաղափարը ծագեց «Որմնանկարների վերականգնման գիտահետազոտական կենտրոնում», իսկ որպես վերնագիր առաջարկվեց «Հայ որմնանկարչության համահավաք» կամ «Դիվան հայ որմնանկարչության» անվանումները (քննարկելի է):

[19] Կախված հուշարձանների քանակից՝ մեկ հատորում կարող են զետեղված լինել մեկից ավելի մարզեր, կամ կարող է մեկ շրջանը (օր.՝ Անին) բաղկացած լինել մի քանի հատորից:

զ. Հիմնաշերտերի և ներկաշերտերի մասին հակիրճ տեղեկություններ,

է. Մատենագիտություն (որմնանկարչական հուշարձանին նվիրված գրականություն),

ը. Եթե նախկինում տվյալ համալիրում իրականացվել են վերականգնման աշխատանքներ, ապա հակիրճ նաև դրանց բնույթի մասին:

Նշված սկզբունքներով կազմված համահավաք ցուցակն առձեռն հանրագիտարան կդառնա հայ որմնանկարչությամբ զբաղվող հետազոտողների համար: Կընդհանրանա հայ արվեստի տվյալ բնագավառի փաստական նյութը՝ իր հսկայական ծավալով և տեղեկատվական հասանելիությամբ, ինչն էլ հիմք կստեղծի հետագա ուսումնասիրությունների խորացման համար:

ՀԱՅ ՈՐՄՆԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ. ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՄԻՆՉԵՎ ՄԵՐ ՕՐԵՐԸ[1]

ՀԻՆ ՇՐՋԱՆ

1. Էրեբունիի Արգիշտի Ա արքայի պալատ

Կառուցել է Արգիշտի Ա արքան, մ.թ.ա. 780-770-ական թթ.:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Միջնաբերդի կառույցներից ամենամեծն Արգիշտի արքայի պալատն էր, որն ուներ մեկական մեծ և փոքր դահլիճ, սյունազարդ բակ, որոնց շուրջը տեղավորված էին տարբեր նշանակության սենյակներ, իսկ արևմտյան թևում գտնվում էր «Սուսի» պալատական տաճարը: Տաճարի առաջ՝ բակի միջին մասում, զոհատունն էր: Պալատի ամենամեծ դահլիճը (12,0x30,0 մ), որը երկայնական առանցքով ուներ հինգ սյուն, նախատեսված էր ընդունելությունների և հանդիսավոր արարողությունների համար:

Սյունազարդ բակի պատերը ներկված են եղել կարմիր, Սուսի տաճարի պատերը՝ կապույտ գույնով: Պալատի կենտրոնական հատվածի բոլոր պատերն ունեցել են միասնական եզերազարդ՝ կազմված մի քանի

---

[1] Սույն համահավաք ցուցակում հեղինակն ամբողջացնում է հայագիտությանը հայտնի, ինչպես նաև իր կողմից փաստագրված որմնանկարչական մեծ ու փոքր, պահպանված ու կորսված հուշարձանները՝ սկսած Վանի թագավորության ժամանակաշրջանից մինչև մեր օրերը: Ըստ կարի փորձել է ներկայացնել նաև դրանց համառոտ նկարագրությունը, ժամանակն ու նախորդ հրատարակությունների մատենագիտությունը: Ցուցակում չենք ներառել նկարագրությունից զուրկ անվանական միավորները (Ազնավուր-թեփե, Ալթընթեփե հնավայրեր, Թեյշեբաինի բերդաքաղաքի ամրոց, Եկեղյաց գավառի Թիլի եկեղեցի, Խուճապի վանք, Թեժառույքի վանք, Անավարզայի Թորոս իշխանի եկեղեցի, Եգիպտոսի Սպիտակ վանք, Իտալիայի Բալի քաղաքի Ս. Գևորգ, Պերուջա քաղաքի Սան-Մաթեո եկեղեցիներ ևն) – Ա. Հ.:

Ավելի վաղ Ա. Ավետիսյանը հրատարակել է XVII-XX դարասկզբի որմնանկարչության հուշարձանների համահավաք ցուցակը (110 միավոր) - տե՛ս Ցուցակ հայ որմնանկարչության հուշարձանների (XVII դար – XX դարի սկիզբ), կազմեց՝ ***Ա. Ավետիսյան,*** «Հայկական որմնանկարչություն», կազմող և խմբագիր՝ ***Կ. Մաթևոսյան,*** Երևան, 2019, էջ 259-278, նկ.՝ էջ 381-387):

շերտից, ինչպես արտաքին սյունասրահի դեպքում: Սուսի տաճարը, այդ եզերազարդից բացի, ունեցել է նաև այլ որմնանկարներ, որի մասին է վկայում տաճարի առջև հայտնաբերված խոշոր արմավենիկի բեկորը:

Պալատի փոքր դահլիճը (8,0x17 մ) տեղավորված է պալատական համալիրի կենտրոնական մասում՝ սյունազարդ բակից արևելք, որի հետ հաղորդակցվում է նախադահլիճի երկու սենյակով: Դահլիճի արևելյան պատն ունի երկու որմնախորշ, որոնց կավածեփի վրա պահպանվել են որմնանկարների կիսաեղծ, հազիվ նշմարելի հետքեր: Սրանք միակն են իրենց սկզբնական տեղում մնացած որմնանկարներից:

1961 թ. պեղումների ժամանակ արևմտյան պատի մոտ՝ հատակի վրա, գտնվեց պատերի ներքնամասի որմնանկարների լավ պահպանված մի խոշոր բեկոր (1,28x1,53 մ): Այստեղ պատկերված է մի ոտքով ծնրադիր ցուլ՝ ներս ընկած նիստերով խոշոր քառակուսու առջև, որի մեջ ներգծված է վարդյակով և այլ տարրերով զարդարված շրջան:

Փոքր դահլիճի պատերին առկա են զույգ գոտիներ՝ վերին մասում՝ առաստաղին կից և ստորին մասում՝ գետնից մոտ 0,5 մ բարձրությամբ: Վերնամասում ուրարտական, ավանդական շերտավոր զարդագոտին է, որին համանման է նաև ստորին գոտին, սակայն ավելի բարդ ու հետաքրքիր կառուցվածքով.

ա. վերին շերտը ներկայացնում է արմավիկների շարք,

բ. աստիճանավոր աշտարակներ,

գ. աստվածների միջև պատկերված սրբազան ծառերի շարք,

դ. առավել լայն շերտը ներկայացնում է ներս ընկած նիստերով քառակուսուն շրջապատած ծնրադիր ցլերի, որոնց այնուհետև փոխարինում է առյուծներով համակցված միևնույն հորինվածքը,

ե. աստվածների միջև պատկերված սրբազան ծառերի շարք,

զ. նռնախնձորի պտուղների դրասանգ (ներքևից եռատերև ունեցող շրջաններ):

Տվյալ որմնանկարի առանձին լայն հատվածներ անջատված են ավելի նեղ շերտերով՝ նրանց վրա տեղավորված վարդյակներով, որոնք համընկնում են ասորեստանյան հանրահայտ զարդանկարներին, օրինակ, լավ հայտնի են Սալմանասար Գ-ի Բալավատյան դարպասների նկարները:

Այսպիսով, բացի եզերազարդի որմնանկարներից, որոնք համանման են նախորդ սենյակների եզերանախշերին, փոքր դահլիճում ի հայտ է գալիս որմնանկարի հորինվածքային նոր տարբերակ: Հայտնաբերված առանձին բեկորները պարզում են (խոշոր աչք, ձեռք կամ թևերի մասը), որ դահլիճը թեմատիկ առումով ձևավորված է եղել ավելի ճոխ:

Դահլիճի հարդարանքի ճոխությանը համապատասխանել են երկու նախադահլիճային սենյակների ներքնամասերը, որոնց որմնանկարներն անհամեմատ վատ են պահպանվել:

Պալատի արևմտյան մասում տեղավորված մեծ դահլիճը (12,5x49,0 մ) հետագայում կցված կառույց էր (պալատի շինարարական երկրորդ փուլ): Սակայն նոր կառուցապատման մեջ լինելով՝ դահլիճն իր երկու նախադահլիճային սենյակներով մեկուսացվել է մնացած կից կառույցներից և նրա մուտքերը բացվել են միջնաբերդի հրապարակից և Խալդի աստծու տաճարի հակադիր կողմից: Դահլիճի պատերը, հավանաբար, նկարազարդված են եղել 4,5 մ բարձրությամբ: Սակայն իր գոյության վերջին շրջանում դահլիճը ծառայել է իբրև գինու մառան: Նրա հողե հատակի մեջ թաղվել են վիթխարի կարասներ, որոնք հայտնաբերվեցին պեղումների ընթացքում: Երբեմնի ճոխ որմնանկարներից պահպանվել են միայն նրանց մի քանի հոյակապ բեկորները: Հավանական է, որ Աքեմենյան ժամանակաշրջանում, մեզ անհայտ նպատակներով, դահլիճի հյուսիսարևմտյան մասում գտնվող պատերի կավածեփի բեկորներն այդ որմնանկարների մնացորդներով հավաքվել են, տեղադրվել և հարթվել հատակից մոտ 40 սմ բարձրության վրա՝ ծածկված մեծ կարասների խեցեբեկորների շերտով: Հենց այդ տեսքով էլ դրանք (կավե հատակի հաստ շերտով) պահպանվել են մինչև մեր օրերը: Որմնանկարներն ունեն պաշտամունքային և աշխարհիկ բովանդակություն, ու թեև աշխարհիկն ուրարտական արվեստում ի հայտ է գալիս առաջին անգամ, սակայն դատելով պահպանված մնացորդներից՝ ունեցել է իր բազմադարյա ավանդույթները:

Մեծ դահլիճի որմնանկարների ներքևի մասը կրկնում է փոքր դահլիճի համապատասխան վեցաշերտ հորինվածքը, այն տարբերությամբ սակայն, որ մեծ դահլիճում լայն շերտի ներս ընկած կողմերով և ներգծված սկավառակներով քառակուսիների առջև տեղավորված են ոչ միայն մեկ ոտքով ծնրադիր ցլեր և կանգնած առյուծներ, այլև թևավոր առյուծների և մարդկային իրաններով ցլերի կերպարանք ունեցող

առասպելական էակներ, որոնք շատ սովորական են ասորեստանյան արվեստում: Այս որմնանկարների շարունակության վրա, դահլիճի խորության մեջ ներս ընկած քառակուսիների առջև ծնրադիր ցլերի և առյուծների փոխարեն կանգնած են մարդկային կերպարանքներ՝ դեմքով դեպի դիտողը, որոնք առաջին անգամ են հանդիպում տվյալ հորինվածքում:

Մեծ դահլիճի դռնախորշի առաջ գտնվել են աստվածների թափորը պատկերող որմնանկարի բեկորներ, որոնցից համեմատաբար լավ են պահպանվել կերպարներից երկուսի իրանների վերնամասերը, իսկ մյուսները մեզ են հասել խիստ վնասված տեսքով: Աստվածները պատկերված են խույրերով և անմորուք, զարդարված են եղջյուրներով և ժապավեններով, որոնք հասնում են մինչև նրանց մեջքը: Լավ պատկերված աստվածներից առաջինն աջ ձեռքում մի փոքրիկ դույլ է բռնել, իսկ ձախում՝ սրբազան ծառի ճյուղ: Երկրորդը, ընդհակառակը, աջ ձեռքում բռնել է ճյուղը, ձախում՝ դույլը: Այս հորինվածքից ներքև՝ դռան բացվածքից դեպի աջ, պատկերված է զոհի՝ ցլերի բերման տեսարանը, որը, հավանաբար, իր թեմատիկայով առնչվում է աստվածների թափորի տեսարանի հետ: Կենդանիները նկարված են ցայտուն ուրվագծերով, իրանի մակերեսի դրվագազարդ հարդարումով, որ մեզ քաջ հայտնի է ուրարտական բրոնզե վահանների վրայի ցլերի պատկերներից կամ Թոփրակ-կալեի քարե եզերազարդից: Ցլերին կառավարում է մի մարդ, որից պահպանվել է միայն իրանի ներքևի մասը՝ նույնպես շատ ցայտուն ուրվագծերով: Ուշագրավ է, որ մարդը չի քշում կենդանիներին՝ մտրակը ձեռքին գնալով նրանց հետևից, ինչպես սովորական է համանման աշխարհիկ տեսարաններում, այլ քայլում է առջևից, կարծես թե առաջնորդելով նրանց:

2. Էրեբունիի Խալդի աստծու տաճար

Կառուցել է Արգիշտի Ա արքան, մ.թ.ա. 780-770-ական թթ.:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն **-** Խալդի աստծու տաճարը գտնվում էր միջնաբերդի հրապարակում և բաղկացած էր երկշարք դասավորված սյունասրահից, զիկուրատից և ևս երկու սրահից[2]: Արտաքուստ և ներքուստ երբեմնի ճոխ որմնանկարների մասին կարելի է գաղափար կազմել թափ-

[2] Ըստ հին արևելյան ավանդույթի՝ զիկուրատներ են կառուցվել միայն այն տաճարներում, որոնք նվիրված էին երկրի գերագույն աստվածությանը:

ված կավածեփի վրա պահպանված այն պատառիկներով, որոնք հայտնաբերվել են 1950-1955 թթ. հնագիտական պեղումների ժամանակ, ինչպես նաև այն վերակազմություններից, որոնք 1968 թ. կատարվել են մասնակի վերականգնված տաճարի պատերի վրա:

Տաճարի ներքին ու արտաքին որմնանկարներն ունեն համանման հորինվածքներ: Թե՛ ներքնամասի և թե՛ սյունասրահի պատերն ունեցել են եզերազարդի շերտ, որն իր հորինվածքային և գունազարդման առումով նույնական է եղել միջնաբերդի սյունասրահի արտաքին եզերազարդի հետ: Դրանից ներքև ձգվում է նույն լայնության մի շերտ, որի վրա պատկերված է առյուծի վրա կանգնած աստվածը (0,61 մ), նրա աջ ձեռքը բաց ափով բարձրացված է վեր, իսկ ձախը (պահպանվել է մասամբ) պարզել է առաջ և բռնել ինչ-որ ծիսական առարկա: Մորուքավոր գլուխը պսակված է եղջյուրավոր խույրով՝ խիստ համապատասխան ասորեստանյան թագավորների խույրերին: Գլխարկից ժապավեններ են իջնում թիկունքին: Ըստ ուրարտական պատկերագրության՝ գլխավոր աստված Խալդին միշտ պատկերվում էր առյուծի վրա կանգնած, մինչդեռ ամպրոպի աստված Թեյշեբան պատկերվում էր ցլի վրա կանգնած, ձեռքին կայծակ[3]:

Թե՛ սյունասրահում և թե՛ տաճարի ներքնամասում պատերի մակերեսները ծածկված են եղել մուգ կապույտ հիմնապաստառի վրա շախմատային կարգով դասավորված բազմագույն վարդյակներով, այլ խոսքով՝ շրջանի մեջ ներառված աստղերով: Ենթադրելի է, որ ողջ հորինվածքն արտահայտել է երկնակամարը՝ իր լուսատուներով:

Երկնամարի և Խալդի աստծուն պատկերող գոտու միջև կա ևս մի եզրագոտի, որը ներկայացնում է միահյուսված երկկողմանի (վերև և ներքև) կոկոններ: Հետաքրքիր են գունային լուծումները. կոկոնները կարմիր են, ճյուղերը՝ կանաչ, դեղնակարմիր ցայտուն զուգակցումով: Այս դրվագազարդը, ի դեպ, լայն տարածում է ունեցել Վանի թագավորության արվեստում: Այն տեսնում ենք Արգիշտի Ա-ի բրոնզե վահանների վրա (գտնվել են Թեյշեբաինիում, սակայն պատրաստվել են Էրեբունիում), Կարմիր բլուրից պեղված արծաթե անոթի խուփի վրա և այլն:

[3] Կայծակի պատկերումն ամպրոպի աստծու ձեռքին համադրելի է էպոսից ու առասպելաբանությունից հայտնի «Թուր կայծակի (կեծակի)» հետ՝ իբրև ամպրոպային աստծու (հերոսի) կայծակնային զենք (***Ս. Հարությունյան,*** Հայ առասպելաբանություն, Բեյրութ, 2000, էջ 174, 184) – Ա. Հ.:

Տաճարի ներքնամասում ընդարձակ դահլիճն է (7,30x34 մ), որը, ինչպես նշեցինք, զարդարված է սյունասրահի համանման որմնանկարներով: Դահլիճի ներքնամասի եզերազարդի վերին շերտը կազմված է վարդյակներից, որոնց մեջ ներգծված են իրար վրա դրված կարմիր և կապույտ քառակուսիներ, որոնք կազմում են ութ պսակաթերթերով աստղեր: Այդ շերտը վերևից և ներքևից եզերված է շրջանակներ ունեցող ժապավեններով: Այնուհետև հաջորդում է արմավենիկների շարքը, իսկ նրանից ներքև՝ աստիճանավոր զարդանկարը՝ իր գույների հերթագայությամբ: Այս շերտի տակ՝ կապույտ հիմնագույնի վրա, տեղավորված է սպիտակ պատկերների շարքը՝ հորթեր և այծեր, հավանաբար, իբրև սրբազան կենդանիներ: Հաջորդ շարքում տրված են սրբազան ծառերը, որոնք համաչափ հերթագայում են իրենց մոտ կանգնած աստվածների հետ. վերջիններս պսակված են եղջյուրներով զարդարված խույրերով: Զարդանկարի այդ շարքն այնպես է կառուցված, որ աստվածների կերպարները ծառերի մի մասին ուղղված են մեջքով, այլապես կխախտվեր այդ պատկերների դասավորության երկկողմանի սկզբունքը: Աստվածների կարմիր հանդերձանքը ցայտուն ընդգծված է կապույտ հիմնապաստառի վրա, դեմքերը պայծառ են, մանրամասները կատարված են սև ներկով[4]: Հեռվից այդ ոչ մեծ պատկերները (7,5 սմ բարձրությամբ) դիտվում են իբրև զարդանկարի հերթագայվող շարք:

3. Էրեբունիի միջնաբերդի արտաքին սյունասրահ

Կառուցել է Արգիշտի Ա արքան, մ.թ.ա. 780-770-ական թթ.:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Միջնաբերդի արտաքին սյունասրահի որմնանկարներն ի հայտ են եկել 1968 թ.: Դրանց հորինվածքում գերիշխող էին բազմաթիվ աստղերն ու շրջանները: Աստղերից խոշորները տեղավորված էին մեկը մյուսի կողքին՝ ուղղահայաց և հորիզոնական շարքերով, որոնց միջև՝ կապույտ հիմնապաստառի վրա, շախմատային կարգով դասավորված էին համանման, բայց ավելի փոքր չափերի աստղիկներ: Այս որմնանախշից վեր՝ պատի վերնամասում (առաստաղի տակ), ամբողջ երկարությամբ ձգվել է գունագեղ եզերազարդը, որի վերակազմությունն ի հայտ բերեց նրա վեց առանձին շերտերը.

[4] Վանի թագավորության արվեստում սրբազան ծառի և նրա մոտ կանգնած պաշտամունքի սպասավորների պատկերներով բազմաթիվ օրինակներ կան. Արգիշտի Ա-ի, Սարդուրի Բ-ի սաղավարտների ճակատամասը և այլն: Նույն թեման հատուկ է նաև Միջագետքի արվեստին, որն ավելի վաղ է ծագել:

ա. վերին շերտում վարդյակներ են,

բ. արմավիկներ,

գ. արմավիկների և կոկոնների զուգորդում,

դ. աստիճանավոր աշտարակներ,

ե. աստվածների միջև պատկերված սրբազան ծառերի շարք,

զ. նռնախնձորի պտուղների դրասանգ (ներքևից եռատերև ունեցող շրջաններ):

Ամբողջ եզերազարդը նկարված է կարմիր և կապույտ ներկերով՝ բաց գույնի հիմնապաստառի վրա:

ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐ

4. Ս. Էջմիածնի Մայր տաճար

Ըստ ավանդության՝ կառուցվել է 301-303 թթ.:

Որմնանկարները՝ IV-V դդ.:

Նկարագրություն - 1959 թ. Մայր տաճարում շարունակվել են ճարտարապետ Ալ. Սահինյանի՝ դեռևս 1954-1955 թթ. ղեկավարած հնագիտական պեղումները: Արդյունքներն ամփոփող զեկուցագրում Ալ. Սահինյանը հատկանշում է տաճարի ավագ խորանի կենտրոնում հայտնաբերված թոնրաձև, մոխրով լի կրակարանի, ուրարտական շրջանի բազալտե կոթողի, որմնանկարների մնացորդների և այլ ուշագրավ գտածոների մասին[5]: Որմնանկարները, ցավոք, չեն պահպանվել, բայց հավանական է, որ դրանք կարող էին ավելի ուշ արվել[6]:

5. Աղցքի բազիլիկ

Կառուցվել է IV դարում:

Որմնանկարները թվագրելի են նույն ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Խոյակի կամ քիվի մի բեկորի վրա պահպանված է եղել բարակ հիմնաշերտն ու մուգ կարմիր ներկով արված զարդանախշ (կրկնել է խոյակի քանդակը)[7]:

---

[5] [Հաղորդագրություն] Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Ս. Հռիփսիմեի տաճարի պեղումների մասին, «Էջմիածին», 1959, Է, էջ 20 – Ա. Հ.:

[6] ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 39, ծնթ. 40:

[7] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957, էջ 7. նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 139. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, Ереван, 2017, էջ 61:

6. Քասախի բազիլիկ

Կառուցվել է IV-V դդ.:

Որմնանկարները թվագրելի են V դարով:

Նկարագրություն - V դարում կառուցված և հետագայում քանդված հյուսիսային սրահի որմնամույթի խոյակին դեռևս 1950-ականներին պահպանված են եղել բարակ շերտի վրա պատկերված շրջագծված հավասարաթև խաչ և մի արմավիկ (ըստ երևույթին, խաչի մյուս կողմում ևս պատկերված է եղել արմավիկ, որը չի պահպանվել)[8]:

7. Դվինի Կաթողիկե Ս. Գրիգոր եկեղեցի (Դվինի Մայր տաճար)

Կառուցվել է V դարում, գմբեթավոր բազիլիկի է վերածվել VII դարի առաջին կեսին:

Որմնանկարները թվագրելի են VII դարով:

Նկարագրություն - Երկու խորանների ստորին հատվածներում եղել են հիմնաշերտի հատվածներ[9]:

8. Մանազկերտի «երեքխորան» Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է IV-V դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Խորաններից մեկում, ըստ Հենրի Լինչի, պատկերված է եղել Մկրտության տեսարանը. «Յայտնի կերեւար, որ ժամանակաւ պատերը (եկեղեցու – Ա. Հ.) որմնանկարներով ծածկուած էին. այս ձեւով զարդարանքներու հետքեր կը գտնուին խոյակներուն վրա, և մեծադիր նկարներէն մէկ քանին դեռ կը ճանչցուին: Խորանին մէջ նկա-

[8] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 7. նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 139 (ըստ Դուռնովոյի՝ արմավիկը շատ նման է Տեկորի, Քասախի և Երերույքի եկեղեցիներից հայտնի քանդակային ծառերին, որոնք հավանական է՝ բխում են ուրարտական արմավիկներից): Տե՛ս նաև ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 61:

[9] ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band I, Wien, 1918, էջ 298 (Յոզեֆ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» աշխատության առաջին հատորը վերջերս ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի նախաձեռնությամբ հրատարակվեց Երևանում՝ երկու գրքով, ռուսերեն թարգմանությամբ – տե՛ս ***Й. Стржиговский,*** Архитектура армян и Европа, том I, книга первая (пер. ***П. Амбургера***), Ереван, 2011, том I, книга вторая (пер. ***П. Амбургера***), Ереван, 2018 – Ա. Հ.). ***Կ. Ղաֆադարյան,*** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. 1, Երևան, 1952, էջ 39, 91-92, 98, 269. ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 8. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

րուած է Յիսուսը, որ Յովհաննէս Մկրտիչէն կը մկրտուի»[10]: Ճանապարհորդի նկարագրությունից պարզվում է, որ աղոթասրահը հարդարված է եղել նաև «ոչ կրօնական կեանքի նիւթերէ քաղուած պատկերներով», մասնավորապես՝ նկատել է թագավորի թագակիր գլուխը, ձեռքի քանդակազարդ պատյանը, երկրագնդի խորհրդանիշ-պատկերով պսակված արքայական գավազանը, իսկ մյուս կողմում թերևս թագուհու որմնանկարն է եղել, որն աղոտ տեսանելի է: Երկուսն էլ լուսապսակ են կրում և, ըստ Լինչի. «անկասկած, այս դէմքերը եկեղեցւոյ հիմնադիրներուն պատկերներն են»[11]:

9. Տեկորի տաճար

Կառուցվել է IV-V դդ., վերակառուցվել՝ V դարավերջին:

Որմնանկարները՝ VI-VII դդ.:

Նկարագրություն – XX դարասկզբին խորանի պատին, խիստ քայքայված վիճակում, պահպանված է եղել անհասկանալի շինության պատկեր, որը Ն. Մառը մեկնաբանել է իբրև զվարթնոցատիպ եկեղեցու մանրակերտ, իսկ Յ. Ստրժիգովսկին՝ որպես երկշարք (շագանակագույն և սպիտակ) խորանի ներքո պատկերված Ուխտի տապանակ (ուշադրություն է հրավիրել նաև խորանից վեր պատկերված հրեշտակին): Ստրժիգովսկին սա համարել է խորանի խորհրդանշական պատկերման հնագույն օրինակը և Օրլեանի Ժերմինի-դե-Պրե կապելլայի արևելյան խորանի խճանկարի նախօրինակը[12]:

10. Ծիծեռնավանք

Կառուցվել է IV դարում (հնարավոր է ավելի վաղ՝ որպես հեթանոսական տաճար), V դարում վերակառուցվել է:

Որմնանկարները՝ V դարի երկրորդ կես:

---

[10] ***Հ. Ֆ. Պ. Լինչ,*** Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, թարգմ.՝ ***L. Լարենց,*** հ. Բ., Տաճկահայաստան, Կ. Պոլիս, 1914, էջ 304. հմմտ. ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band I, էջ 152. ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 8. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 61:

[11] ***Հ. Ֆ. Պ. Լինչ,*** Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, հ. Բ, էջ 304:

[12] ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band I, էջ 298. հմմտ. ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 8. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 62: Ն. Մառի հիշատակած եկեղեցու մանրակերտի մասին վկայում է Ստրժիգովսկին՝ հղում անելով մի աղբյուրի, որտեղ այդ տեսակ տեղեկություն գտնել չհաջողվեց (***Н. Марр,*** По поводу работы архитектора Т. Тораманяна, “О древнейших формах Эчмиадзинского храма”, Записки восточного отделения русского археологического общества, т. XIX, СПб, 1909, էջ 15) – Ա. Հ.:

Նկարագրություն - Որմնանկարների առաջին և, կարելի է ասել, վերջին հետազոտողը եղել է Նիկոլայ Քոթանջյանը: Նա տեղում ուսումնասիրություններ է արել նախ 1980-ական թթ. առաջին կեսին, այնուհետ՝ 2003 թվականից:

Չնայած պահպանվածության չափազանց վատ վիճակին՝ գլխավոր խորանում կարելի է նշմարել Համբարձման տեսարանի մնացորդները՝ գահի ոտքերի ուրվագծերն ու ծալազարդումը, իսկ ներքևի մասում՝ ութ առաքյալների կերպարները: Գահին կարող էր պատկերված լինել ինչպես նստած Քրիստոսը (ներկայացնելով «Քրիստոսը փառքի մեջ» պատկերը), այնպես էլ Սուրբ Գիրքը, սակայն այս որմնանկարի դեպքում, հաշվի առնելով գմբեթարդի ծավալը, որը նույնիսկ նստած ֆիգուրին դժվար թե տեղավորեր, հավանական է թվում հետիմասիայի տարբերակը: Ամեն դեպքում երկուսն էլ հանգում են միևնույն թեմային՝ Քրիստոսի երկնային փառքին, նրա Համբարձմանը և Երկրորդ գալուստին[13]:

Հարավային ավանդատան թաղակիր կամարի վրա բավական պարզ երևում է թռչող հրեշտակը և նրա պահած մեդալիոնում պատկերված խաչը: Պատկերը ներկայացնում է Խաչի համբարձման տեսարանը (երկրորդ հրեշտակի պատկերը չի պահպանվել)[14]:

Բավական խնդրահարույց է որմնանկարների ճշգրիտ թվագրման հարցը: Խրթին է նաև բուն եկեղեցու կառուցման շրջանը որոշելը, որը տատանվում է III-V դդ. սահմանագծում: Ընդ որում, կառուցումից հետո եկեղեցին քանիցս վերակառուցվել է, որոնք տեղի են ունեցել V դարում, երբ այն ստացել է իր ներկայիս հորինվածքային ձևը, իսկ VI, XI, XVII, XVIII դդ. մասնակի վերանորոգումներ են արվել: Ըստ աղբյուրագետ Ալեքսան Հակոբյանի՝ V դարի վերակառուցումն իրականացվել է մի քանի փուլերով, որոնցից երկրորդ փուլը տեղի է ունեցել V դարի կեսերին, երրորդը՝ V դարի վերջին կամ VI դարի սկզբին[15]: Ըստ Հակոբյանի (որի հետ համաձայն է և Քոթանջյանը)՝ հիմնաշերտը, հետևաբար և որմնանկարներն արվել են երկրորդ և երրորդ փուլերի միջակայքում, այսինքն՝

[13] ***Н. Котанджян,*** Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 73-81:

[14] Հայ արվեստում սակավադեպ այս տեսարանն է նաև Էջմիածնի Ավետարանի փղոսկրե կազմին, ինչպես նաև Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու գմբեթի որմնանկարում և բարձրաքանդակում: Նշենք նաև, որ այս տեսարանը «Համբարձման» տարբերակներից մեկն է համարվում, իսկ մեկ այլ տարբերակում խաչի փոխարեն հրեշտակները պահում են մեդալիոնի մեջ պատկերված Քրիստոսի պատկերը (հայ արվեստում հայտնի է Պտղնիի տաճարի բարձրաքանդակը):

[15] ***Ալ. Յակոբեան,*** Պատմա-աշխարհագրական եւ վիմագրագիտական հետազօտութիւններ (Արցախ եւ Ուտիք), Վիեննա-Երեւան, 2009, էջ 184:

կամ V դարի կեսերին կամ դարավերջին: Այլ է ճարտարապետ Արմեն Ղազարյանի տեսակետը. ըստ նրա՝ եկեղեցու ճարտարապետական-հորինվածքային և քանդակային լուծումները թույլ են տալիս համալիրը թվագրել VII դարի երկրորդ կեսով և VIII դարասկզբով, իսկ որմնանկարները՝ VII դարավերջից մինչև XIII դ., բայց առավել հավանական է՝ X-XI դդ.[16]:

11. Եղվարդի բազիլիկ

Կառուցվել է V դարում:

Որմնանկարները թվագրելի են V-VI դդ.:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[17]:

12. Երերույքի տաճար

Կառուցվել է V-VI դդ.:

Որմնանկարները թվագրելի են VI դարով:

Նկարագրություն - Խորանի գմբեթարդին պահպանվել են հիմնաշերտի որոշ հատվածներ, իսկ պատուհանի գոգավորության վրա՝ զարդանախշի պատառիկ: Ներկի որոշակի հետքեր կան նաև խոյակների և երեք շքամուտքերի քանդակազարդերի վրա[18]:

13. Զովունիի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

Կառուցվել է V-VI դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի և ներկի որոշ հատվածներ[19]:

14. Զովունիի Ս. Սարգիս եկեղեցի

Կառուցվել է V-VI դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[20]:

---

[16] ***Հ. Казарян,*** Церковная архитектура стран Закавказья VII века: формирование и развитие традиции, т. IV, М., 2013, էջ 95:

[17] ***Ն. Կոթանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10:

[18] ***Լ. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 7. ***Ն. Կոթանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 62:

[19] ***Ն. Կոթանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[20] Նույնի՝ Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. ***Կ. Մաթևույան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, Երևան, 1990, էջ 15:

15. Արևիսի Թանահատի վանքի Ս. Ստեփանոս եկեղեցի

Կառուցվել է V-VI դդ.:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Եկեղեցու արևելյան և հարավային պատերին պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ, իսկ նրանց հատման կետում՝ կանաչ, կարմիր, օքրայագույն և սպիտակ ներկի մնացորդներ[21]:

16. Աշտարակի Ծիրանավոր եկեղեցի

Կառուցվել է V դարում:

Որմնանկարները թվագրելի են VI-VII դդ.:

Նկարագրություն - Ավագ խորանում և հյուսիսային պատի արևելյան կողմում պահպանվել են որմնանկարների հիմնաշերտի հատվածներ: 1950-ական թթ. սկզբին դեռևս երևում էին խորանում պատկերված վեց սրբերի լուսապսակներն ու ուսերի հատվածները[22]:

17. Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցի

Կառուցվել է 478 թ. (ըստ հունարեն վիմագրի – Ա. Հ.), վերակառուցվել՝ VII դարում:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Ըստ որմնանկարները վերականգնողների՝ եկեղեցին ի սկզբանե ամբողջովին որմնանկարազարդված է եղել: Ներկայումս պահպանվել է մի ձիավորի պատկեր (առանց գլխի հատվածի), նրանից աջ՝ երկու կերպարի հատվածներ (մեկի մոտ կա արձանագրություն, ենթադրաբար «Ս. Գաբրիել»), մեկ այլ կողմում՝ դարձյալ երկու կերպար, մեկը՝ բոկոտն, մյուսը՝ կոշիկով, որը, ենթադրաբար, բարձրաստիճան եկեղեցականի պատկեր է: Որմնանկարներում սրբերի դեմքերը միտումնավոր խազված են: Դա արվել է մինչև Խորհրդային ժամանակները, անհայտ նպատակներով:

Գմբեթակիր կամարներին նկատելի է նաև կապույտ ներկի շերտ, որը, հավանաբար, ավելի ուշ է արվել: Ըստ Արա Զարյանի՝ կապույտ ներկը ոչ մի առնչություն չունի հայկական քրիստոնեական մշակույթի հետ և

---

[21] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 62-63:

[22] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 8 (Դուռնովոն եկեղեցու անունը սխալմամբ նշում է Սպիտակավոր). նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 144:

առավել բնորոշ է ռուսական ուղղափառ եկեղեցուն: Նա ենթադրում է, որ եկեղեցին կարող էին այդ կերպ վերանորոգել 1800-ականներին, երբ Կովկասը գրավվել է Ռուսական կայսրության կողմից, ու այստեղ է ժամանել Ռուսաստանի փոխարքան:

Խորհրդային տարիներին եկեղեցին օգտագործվել է որպես հացահատիկի պահեստ, այդ ժամանակ էլ պատերը ծածկել են ծեփի շերտով, որպեսզի պահեստը խոնավ չլինի: Խորհրդային միության փլուզումից հետո որոշվել է վերականգնել եկեղեցու նախկին տեսքը, և սվաղը քերելու հետևանքով փչացրել են դրա տակ եղած շերտերը՝ որմնանկարների հետ միասին:

Նշենք, որ եկեղեցու որմնանկարները հայտնաբերվել են 2016 թ.՝ Արա Զարյանի ու Քրիստին Լամուրեի կողմից: Տարբեր հատվածներում մաքրելով պատերն ու պարզելով սանձը բռնած ձեռքի պատկերը՝ ակնհայտ է դարձել որմնանկարների գոյությունը: Ուսումնասիրման աշխատանքները սկսել են 2017 թ.[23]:

18. Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

Կառուցվել է V-VI դդ., վերակառուցվել XVII դարում[24]:

Ստորին շերտ՝ VI-VII դդ., երկրորդ շերտ՝ [ժամանակը չի նշում], երրորդ շերտի որմնանկարները՝ 1680-1690-ական թթ., չորրորդ շերտի որմնանկարները՝ 1890-ական թթ.:

Նկարագրություն - Վաղագույն շերտը, որը ժամանակակից է բուն կառույցին, գտնվել է հետագայում արված երեք շերտերի տակ (չորս շերտերն էլ արվել են առանձին հիմնաշերտերի վրա): Որմնանկարը մեծա-

[23] Որմնանկարներին առնչվող վերջին ուսումնասիրությունների մասին տե՛ս ***Ա. Զարյան, Ք. Լամուրէ,*** Է. դարի որմնանկարներ Մաստարայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում, «Անդին», 2017, թ. 8, էջ 28-33, հմմտ. ***Ա. Մանուչարյան, Լ. Աղաջանյան,*** Մաստարայի Ս. Հովհաննես եկեղեցի, Երևան, 2019, էջ 6-9 (Ա. Հ.):

[24] Վերջին հետազոտությունները պարզում են, որ Երևանի երբեմնի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցին շինարարական երեք հիմնական փուլ է ունեցել. կառուցված լինելով վաղ միջնադարում՝ XIV դարի առաջին քառորդին, ըստ ամենայնի, վարդապետ Շահիկի ձեռամբ եկեղեցին վերակառուցվել է երկհարկ, գմբեթավոր հորինվածքով՝ նման Եղվարդի, Կապուտանի, Նորավանքի և ժամանակամերձ նմանօրինակ այլ կառույցներին: Այն պատկերված է ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենի՝ 1673 թ. փորագրանկարում: Եկեղեցին ավերվել է 1679 թ. Երևանի մեծ երկրաշարժից և դարձյալ բազիլիկ հորինվածքով վերակառուցվել 1690-ականների սկզբին: Վերակառուցումների ժամանակ պահպանվել են ավագ խորանին կից որմնամույթերը, որոնց վրա էլ եղել են որմնանկարների շերտերը: Մանրամասն տե՛ս ***Ա. Հարությունյան,*** Հին Երևանի եպիսկոպոսանիստ եկեղեցին. Երկուերեսնի - Ս. Պողոս-Պետրոս, Ս. Էջմիածին, 2021 – Ա. Հ.:

պես վնասվել է եկեղեցին քանդելու ժամանակ (1931 թ.), երկու անգամ մաքրվել է (1932 թ. Գ. Չիրիկովի և 1938 թ. Պ. Յուկինի կողմից) և այժմ պահվում է ՀԱՊ-ում (մնացած շերտերը գտնվում են ՀՊԹ-ում)[25]: Այս շերտը ներկայացնում է բուսական մոտիվներ՝ ցողունազարդերից ու ծաղիկներից կազմված զարդապատկերներ և արժեքավոր է ոչ միայն իր հնությամբ, այսինքն՝ հայ զարդանկարչական ավանդների ուսումնասիրության առումով, այլև կատարման արվեստով[26]:

19. Արթիկի Ս. Աստվածածին և Ս. Գևորգ եկեղեցիներ

Կառուցվել են V-VI, VII դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Այս որմնանկարների մեկնաբանությունները, նույնիսկ տեղակայման վայրը բավական հակասական են: Առաջին հետազոտող Յ. Ստրժիգովսկու հաղորդմամբ՝ Ս. Աստվածածին եկեղեցու ձախակողմյան խորանում (ենթադրաբար դա հյուսիսային ավանդատունն է) պատկերված է եղել «Ողբ առ Քրիստոս» տեսարանը. սպիտակ ետնախորքի վրա՝ ձախից եղել են վեց կանայք, իսկ աջից՝ պառկած Քրիստոսի գլուխն ու նրա վրա խոնարհված Մարիամը: Վերին հատվածում՝ փառապսակի մեջ, հասակով մեկ կանգնած մարդ է եղել, հավանաբար՝ Քրիստոսը[27]:

Հետագայում որմնանկարներին անդրադարձել է Լ. Դուռնովոն. «Արթիկի Մեծ տաճարը (Ս. Գևորգ եկեղեցին – Ա. Հ.) ևս զարդարված է եղել որմնանկարներով: Ներկայումս երեք զույգ ոտքերի և զգեստի եզրամասերի չնչին մնացորդներ են պահպանվել արևելյան աբսիդի հարավային հատվածում, իսկ երկու զույգ ոտքերի հատվածներ՝ հյուսիսային հատվածում: Քանզի ոտքերը պատկերված են ոտնամաններով և նրանցից վեր էլ քիտոնների և հեմատիումների եզրերն են, անկասկած է, որ այս-

[25] Վաղմիջնադարյան շերտի ծաղկանկարներից մի հատված ցուցադրվում է նաև Երևան քաղաքի պատմության թանգարանում – Ա. Հ.:

[26] ***Л. Дурново,*** Стенная живопись в Аруче (Талиш), Известия Академии наук Арм. ССР, N 1, 1952. նույնի՝ Краткая история древнеармянской живописи, էջ 8. ***Կ. Ղաֆադարյան,*** Երևան. միջնադարյան հուշարձաններն ու վիմական արձանագրությունները, Երևան, 1975, էջ 30-32, նկ. 24-25. ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 139. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63. ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 15-16:

[27] ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band II, էջ 499-500:

տեղ պատկերված են եղել առաքյալները, նույնը կարելի է ենթադրել նաև խորանի գմբեթարդի հորինվածքի առումով, ինչպես Արուճում, այսինքն՝ այստեղ պատկերված է եղել Օրենք տվող Քրիստոսի Համբարձման տեսարանը»[28]:

Նույն ենթադրությունը Դուռնովոն անում է նաև իր մյուս աշխատությունում. «Արթիկի եկեղեցու որմնանկարների մնացորդները թույլ են տալիս ենթադրել, որ նրա հսկայական խորանում եղել են արուճյան տիպի որմնանկարներ»[29]:

Որմնանկարներին ավելի ուշ անդրադարձել է Նիկոլայ Քոթանջյանը. «Արթիկի Մեծ տաճարի (Ս. Գևորգ եկեղեցու – Ա. Հ.) արևելյան խորանում տեսնում ենք ոտնամաններով ոտքերի և զգեստների եզրամասերի հետքեր: Ամենայն հավանականությամբ, այստեղ պատկերված են եղել Օրենք տվող Քրիստոսի Համբարձման տեսարանի առաքյալները, ինչպես Արուճում»[30]:

Իր մյուս մենագրության մեջ Քոթանջյանը նշում է. «Արթիկի Ս. Մարիամ եկեղեցու կողային աբսիդում Յ. Ստրժիգովսկին ժամանակին նկատել է «Ողբ առ Քրիստոս» տեսարանի մնացորդներ. ձախ կողմում եղել է վեց կանացի ֆիգուր՝ սպիտակ ետնախորքի վրա, և պառկած Քրիստոսի երեսին գլուխը խոնարհած Աստվածամայրը: Իսկ վերևում՝ կենտրոնական մասում, նկատվել է փառապսակով շրջափակված մի մարդկային ֆիգուր (հավանաբար՝ Քրիստոսը)»[31]:

Նույն մենագրության մեջ Քոթանջյանը նաև նշում է. «Ոտնամաններով ոտքերի և զգեստների ստորին հատվածի պատկերների հետքեր ենք տեսնում նաև Արթիկի Մեծ տաճարի (VII դարի երկրորդ կես) արևելյան աբսիդում: Ինչպես կարծում էր Լ. Դուռնովոն, այստեղ, անկասկած, ներկայացված են եղել առաքյալները, հնարավոր է՝ Օրենք տվող Քրիստոսի Համբարձման տեսարանից, ինչպես Արուճում»[32]:

Հավելենք, որ Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարները չեն պահպանվել (պահպանված չեն եղել նաև Քոթանջյանի այցելության

---

[28] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 12:

[29] Նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 144:

[30] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 15. Ծանոթագրությունների բաժնում (էջ 70, ծնթ. 74) Քոթանջյանն այս առումով հավելում է, որ Ստրժիգովսկին, այդ պատկերի հիմամբ, տեսել է «Ողբ առ Քրիստոս» տեսարանը:

[31] ***Н. Котанджян,*** Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[32] Նույն տեղում, էջ 67:

ժամանակ՝ 2000-ական թթ. սկզբին, պարզ չէ՝ Դուռնովոն դրանք տեսե՞լ է, թե՞ ոչ, քանի որ նա խոսել է միայն Մեծ տաճարի որմնանկարների մասին), իսկ դրանց մնացորդներն այսօր էլ առկա են[33]:

20. Ջրառատի Ս. Մինաս եկեղեցի (Շիրակ)

Կառուցվել է VI դարի վերջին:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Ըստ ճարտարապետ Վահագն Գրիգորյանի՝ խաչաձև կենտրոնագմբեթ եռախորան փոքր եկեղեցիների շարքին է դասվում՝ նման Թալինի, Լուսագյուղի, Դորբանտավանքի հուշարձաններին[34]: XIX դարում արդեն ավերված է եղել: Նույն դարում վերակառուցվել է որպես բազիլիկ եկեղեցի՝ փայտյա տանիքով: Մեծապես վնասվել է նաև 1988 թ. երկրաշարժից: 2017 թ. վերականգնվել է հին հորինվածքով: Որմերին պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[35]: Այժմ որոշ հետքեր են նկատվում հյուսիսային խորանում:

21. Ավանի Կաթողիկե Ծիրանավոր եկեղեցի (Ավանի տաճար)

Կառուցվել է VI դարի վերջին:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի և ներկի որոշ հատվածներ[36]:

22. Օձունի տաճար

Կառուցվել է VI դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Տաճարի ողջ ներսույթում նկատելի են հիմնաներկի հատվածներ: Խորանի վերին մասում խիստ աղոտ երևում են զարդանախշերի մնացորդներ, մույթերից մեկի վրա՝ լուսապսակի հատված[37]:

---

[33] Որմնանկարի ծեփի վրա կիսով չափ պահպանվել է նաև հետևյալ արձանագրությունը. «Բազմամեղ քահանա եւ անարժան Մէն…» (Դիվան հայ վիմագրության, պրակ X, Շիրակի մարզ, կազմեց՝ ***Ս. Բարխուդարյան,*** Երևան, 2017, էջ 67, արձ. 101) – Ա. Հ.:

[34] ***Վ. Գրիգորյան,*** Հայաստանի վաղմիջնադարյան կենտրոնագմբեթ փոքր հուշարձանները, Երևան, 1982, էջ 25 – Ա. Հ.:

[35] ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 56:

[36] ***Հ. Կոտանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[37] Նույնի նշվ. աշխատությունները, համապատասխանաբար՝ էջ 13, 64:

23. Ծռվիզի վանքի (Մորո-ձորո վանք), Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է VI-VII դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի և ներկի որոշ հատվածներ[38]:

24. Լուսագյուղի եկեղեցի (Թուխ Մանուկ)

Կառուցվել է VI-VII դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[39]:

25. Շենիկի Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Պահպանված են եղել ներկի աննշան հատվածներ[40]:

26. Բյուրականի Արտավազիկ եկեղեցի

Կառուցվել է VI-VII դդ.:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանված են եղել ներկի աննշան հատվածներ[41]:

27. Բուժականի Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[42]:

---

[38] ***Н. Котанджян,*** Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[39] Նույնի՝ Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 15:

[40] ***Կ. Մաթևոսյան,*** նշվ. աշխ., էջ 56-57:

[41] Նույն տեղում, էջ 57:

[42] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10 (հեղինակը նշում է՝ «ранняя церковь монастыря Тгинянц и базилика в Бужакане», չնայած որ Թեղենյաց վանքի եռախորան եկեղեցին գրեթե հիմնավեր է, իսկ Բուժականի եկեղեցին բազիլիկ չէ): Մյուս աշխատության մեջ (Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63) հեղինակն արդեն նշում է՝ «церковь Мариам Аствацацин в Бужакане»:

28. Աստվածընկալ վանքի մատուռ

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ[43]:

29. Տայքի Իշխանի տաճար

Կառուցվել է 630-ական թթ.:

Որմնանկարների հին շերտ (ավագ խորան և հավանաբար գմբեթ)՝ VII դար, նոր շերտ (արևմտյան և հարավային խաչաթևեր)՝ IX դար:

Նկարագրություն - Ավագ խորանի գմբեթարդի ձախակողմյան հատվածում պահպանվել են շրջան-մեդալիոններ, որոնցից մեկում Տրդատ արքայի կնոջ՝ Աշխենի (Աշխավնարի) պատկերն է՝ կից հայերեն գրությամբ: Մեկ ուրիշի վրա, ըստ Ե. Թաղաիշվիլու, պատկերված է Ս. Նունեից առաջինը քրիստոնեություն ընդունած Նանան՝ Միհրան թագավորի կինը՝ կից վրացերեն գրերի մնացորդներով[44]:

Գմբեթին՝ երկնային հենքի վրա, պատկերված է Խաչի համբարձման տեսարանը՝ Արևի (մնացել է միայն սպիտակ շրջանը) և Լուսնի (կիսամերկ կին է՝ ցլի վրա) անձնավորված կերպարներով, ինչպես նաև՝ չորս մարտակառքերը (Զաքարիա մարգարեի տեսիլքից):

Թմբուկին պատկերված են հրեշտակներ և սրբեր: Առավել լավ են պահպանվել լուսամուտների խորշերի սրբապատկերները՝ Ս. Փոկաս, Դիմիտրիոս, Կոնոն, Մինա, Պրոկոպիոս, Թեոդորոս, Սերգիոս, Օրոնտիոս: Հարավային խաչաթևին տերունական շարքից պահպանված միակ տեսարանն է՝ «Յուղաբեր կանայք առաքյալներին ավետում են Տիրոջ հարությունը»: Արևմտյան խաչաթևին Թաղաիշվիլին հայտնաբերել է վրացերեն արձանագրություններ, որոնք, ըստ ամենայնի, ուղեկցել են կտիտորների պատկերներին: Արձանագրություններում վկայված են Ադառնաս Կյուրապաղատի (մահ. 961 թ.) և վերջինիս որդու՝ Բագրատի (մահ. 966 թ.) անունները: Թաղաիշվիլին հիշատակված անձանց համարել է որմնանկարների պատվիրատուներ և ըստ այդմ թվագրել 960-ականներով, որի հետ համամիտ էին Ն. և Մ. Թիերիները, Ե. Պրիվալովան և այլք:

XX դարի երկրորդ կեսին արևմտյան խաչաթևի բոլոր որմնանկարներն ու արձանագրություններն արդեն ոչնչացված էին:

---

[43] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10:

[44] ***Տ. Մարության,*** Խորագույն Հայք, Երևան, 1978, էջ 32-33:

30. Դվինի արքայական պալատ

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի հատվածներ, որոնց վրա, ըստ Կարո Ղաֆադարյանի, պետք է պատկերված լինեին աշխարհիկ պատկերներ[45]:

31. Բագարանի Ս. Թեոդորոս տաճար

Կառուցվել է 624-631 թթ.:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Պահպանված են եղել ներկի աննշան հատվածներ[46]:

32. Զվարթնոցի տաճար

Կառուցվել է VII դարի կեսերին:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանվել են հիմնաշերտի և կանաչ ներկի որոշ հատվածներ, որոնք մարմարի պատկեր ստանալու համար են արվել[47]:

33. Էջմիածնի Թարգմանչաց վանք (Այգեշատ)

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Պահպանված են եղել ներկի աննշան հատվածներ[48]:

34. Պտղնիի տաճար

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

---

[45] ***Կ. Ղաֆադարյան,*** Դվին քաղաքը և նրա պեղումները, հ. I, Երևան, 1952, էջ 298. ***Հ. Կոտանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 13. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[46] ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band I, էջ 32-34, նկ. 28, 87-89. ***Հ. Կոտանջյան,*** Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 64:

[47] ***Լ. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 144. ***Հ. Կոտանջյան,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 15. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 67:

[48] ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 16:

Նկ. 1. Խալդի աստծու պատկերը

Նկ. 2. Որմնանկարի նմուշ՝
Էրեբունի ամրոցից

Նկ. 3. Արտաշատի բաղնիքի
խճանկարը (II-III դդ.)

Նկ. 4. Հատված Գառնիի
տաճարի խճանկարից (III դ.)



Նկ. 5. Թալինի Կաթողիկե եկեղեցու ավագ խորանի որմնանկարը (վերակազմությունը՝ Նիկոլայ Քոթանջյանի)

Նկ. 6. Արուճի տաճարի ավագ խորանի որմնանկարը (վերակազմությունը՝ Նիկոլայ Քոթանջյանի)

Նկ. 7. Որմնանկարների մնացորդներ Եղվարդի Ս. Թեոդորոս զորավար եկեղեցում (լսնկ.՝ հեղինակի, 2019 թ.)

Նկ. 8. «Մանկան լոգանք», Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի, (ընդօրինակությունը՝ Գ. Խանաղյանի և Վ. Բաղդասարյանի, ՀԱՊ)

Նկ. 9. Ղուկաս ավետարանիչ,
գործ՝ Սարգիս Փառշիկի, Անիի Ս. Փրկիչ եկեղեցի

Նկ. 10. Դադիվանքի Ս. Աստվածածին եկեղեցու հարավային պատի
Ս. Նիկողայոս Հրաշագործի եպիսկոպոսության տվչության տեսարանը
(լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2018 թ.)

Նկ. 11, 12. Ախթալայի վանքի
Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի որմնանկարները

Նկ. 13. Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի որմնանկարները

Նկ. 14. Թբիլիսիի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցու գմբեթի որմնանկարները

Նկ. 15. «Հոգեգալուստ», Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցի
(լսնկ.՝ հեղինակի, 2018 թ.)

Նկ. 16ա, բ. Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցու գմբեթի որմնանկարները եկեղեցին վրացականացնելուց առաջ և հետո

Նկարագրություն - Պահպանվել են որմնանկարչական հիմնաշերտի և ներկի որոշ հատվածներ[49]:

35. Սիսիանի Սյունի վանքի Ս. Գրիգոր տաճար

Կառուցվել է 570-580-ական թթ., գմբեթը՝ 670-680-ական թթ.:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Հյուսիսային որմնամույթերից մեկի խոյակի տակ պահպանվել են վառ օքրայագույն լուսապսակի և վառ կանաչ հենքի հատվածներ, արևմտյան մասում՝ զարդանախշեր[50]:

36. Աշտարակի Կարմրավոր Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Որմնանկարների վերականգնման աշխատանքներն իրականացվել են Արա Զարյանի և Քրիստին Լամուրեի կողմից՝ 2016 թ. մայիս-հունիս ամիսներին: Կարմրավոր եկեղեցու ներսում տեսանելի են տասը սրբապատկերներ:

Եկեղեցու արևմտյան թաղակապի հյուսիսային հատվածում՝ խաչթևին պատկերված է հեծյալ Ս. Գևորգը՝ թուրը պատրաստ հարվածին, իսկ արևմտյան թևի հարավային կողմում՝ հեծյալ Ս. Սարգիսը մանուկ Մարտիրոսը գրկին և նետը ձեռքին: Ավագ խորանի որմնանկարների շարքը երկրաչափական է, որը որմնագիր նախշի միջոցով նկարազարդ քիվը բաժանում է երկու մասի: Քիվից ներքև՝ ավագ խորանի լուսամուտի աջ կողմում, հայտնաբերվել է երեք, իսկ ձախ կողմում՝ երկու սրբապատկեր: Գմբեթարդի կենտրոնական հատվածում «Քրիստոսը՝ փառքի մեջ» պատկերն է, որի երկու կողմում ներկայացված են մեկական քառաթև քերովբեներ: Գմբեթարդի հյուսիսային կամարակապին Ս. Մարիամ Աստվածածնի, իսկ հարավային կամարակապին՝ Ս. Հովհաննես Մկրտչի նրբագեղ որմնապատկերներն են: Ծեփի քայքայման և թափման հետևանքով բոլոր որմնապատկերների դեմքերի և ձեռքերի հատվածները ժամանակի ընթացքում կորցրել են նրբերանգները և ներկայումս մեծամասամբ սև ու սպիտակ երանգներով են[51]:

---

[49] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 10. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 63:

[50] ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 142. ***Н. Котанджян,*** Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 67:

[51] ***Л. Дурново,*** նշվ. աշխ., էջ 144. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 15. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 67:

37. Մրենի տաճար

Կառուցվել է VII դարի առաջին կեսին:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Տաճարում պահպանվել են Հայաստանի վաղ-միջնադարյան որմնանկարների ծավալուն հատվածներ, իսկ հաղթակամարին՝ մեսրոպատառ վաղագույն աստվածաշնչյան արձանագրությունը (92/93:5 սաղմոս): Ըստ Յ. Ստրժիգովսկու՝ XX դարի սկզբի դրությամբ արդեն իսկ դժվար էր որոշել պատկերի բովանդակությունը: Ներկայումս որմնանկարի հատվածներ են պահպանվել ավագ խորանի գմբեթարդին, որտեղ պատկերված է եղել պատվանդանի վրա կանգնած Քրիստոսը, իսկ նույն պատվանդանի բարձրությամբ անցնում է խորանը երիզող զարդագոտին (ընդհանուր պատկերը բավական նման է տասնամյակ անց նկարված Արուճի տաճարի որմնանկարին): Ավագ խորանի եզրով պահպանվել են մեդալիոնների մեջ ներառված սրբապատկերներ: Պատուհանների մոտ նկատելի են նաև հասակով մեկ կանգնած սրբերի պատկերներ[52]:

38. Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցի

Կառուցվել է VI-VII դարերում:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Որմնանկարը զբաղեցնում է ավագ խորանի գմբեթարդը և նրան հարող արևելյան պատը: Գմբեթարդին երևում է հրե լեզուների խորքի վրա պատկերված Քրիստոսի մարգարտազարդ գահը, որը դրված է ծիածանակամարի վրա: Այն եզերված է կանաչ, սպիտակ, կարմիր գոտիներով և մի մեծ լուսապսակի մեջ առանձնացնում է գահակալ Քրիստոսի պատկերը, որի միայն ստորին մասն է պահպանվել: Ծիածանակամարից դուրս՝ կենտրոնական պատկերի աջ և ձախ կողմերում, նկարված են երկու քառակերպ (տետրամորֆ)՝ մարդու, եզան, առյուծի և արծվի գլխով, երկու սերովբե և երկու զույգ անիվներ: Հատկապես լավ են պահպանված քառակերպերը, որոնց չորս ճերմակ

[52] ***Н. Марр,*** Поездка в Армению и раскопки в Ани 1892 г. Дневник раскопок (Архив Н. Я. Марра, фонд 800 А-33, էջ 216). ***J. Strzygowski,*** Die Baukunst der Armenier und Europa, Band I, էջ 194-195, ***Թ. Թորամանյան,*** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 1948, էջ 187. ***M. et N. Thierry,*** La cathedrale de Mren et sa decoration, Cahiers archeologiques, XXI (1971), էջ 43-77. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 70. նույնի՝ Монументальная живопись раннесредневековой Армении, էջ 64-66:

թևերը ծածկված են բաց աչքերով, իսկ մարդկային դեմքերն օժտված են խոր արտահայտչականությամբ: Ավագ խորանի կողային պատերին պատկերված են դեպի կենտրոն շարժվող հեծյալներ Ս. Սարգիսը և Ս. Գևորգը: Նրանք ձեռքերին ունեն խաչափայտ, բայց ձիերի սմբակների տակ չկան չար ուժեր մարմնավորող պատկերներ: Վաղքրիստոնեական մոնումենտալ գեղանկարչության հայտնի հուշարձանների շարքում այս որմնանկարն առանձնանում է պատկերագրության ինքնատիպությամբ, որովհետև ստեղծված է գլխավորապես Հին կտակարանի բնագրերի, մասնավորապես՝ Եզեկիել մարգարեի տեսիլքի գրական հիմքի վրա[53]: Միջնադարյան շատ արվեստագետների համար ներշնչման աղբյուր հանդիսացած այդ տեսիլքը Լմբատավանքի վարպետը ներկայացնում է կուռ ու ամբողջական մի հորինվածքի մեջ, բնագրային բոլոր էական մանրամասների վերարտադրությամբ: Ստեղծված է առանձնակի ստեղծագործական լարվածությամբ, կատարման բարձր արվեստով, որի շնորհիվ, անգամ այժմ, գտնվելով մեծ մասամբ քայքայված վիճակում, չի կորցրել իր ներգործման ուժն ու կոթողայնությունը: Նշենք նաև, որ որմնանկարը ոճական ընդհանրություններ ունի ոչ միայն նույն շրջանի այլ որմնանկարների, այլև հայկական մանրանկարչության վաղագույն օրինակների՝ Էջմիածնի Ավետարանի վերջում կցված VI դարի զույգ թերթերի չորս մանրանկարների հետ[54]:

Որմնանկարը կատարված է գծային-գրաֆիկական եղանակով, ունի վառ գունահնչեղություն: Լմբատավանքի որմնանկարները հասուն գեղարվեստական միջավայրի ծնունդ են և սերտ աղերսներ ունեն VII դ. հայկական այլ որմնանկարների (Թալինի Կաթողիկե, Կոշի Ս. Ստեփանոս ևն), ինչպես նաև հայկական մանրանկարչության հայտնի ամենահին օրինակների հետ («Էջմիածնի Ավետարան»):

39. Արուճի Ս. Գրիգոր տաճար

Կառուցվել է VII դարի 60-ականներին:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

---

[53] Քառակերպերն ու անիվները Եզեկիելի (Ա, 5-21), սերովբեները՝ Եսայու գրքերից են (Զ, 2):

[54] ***Լ. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 9-10, ***Ս. Տեր-Ներսեսյան,*** Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 56-57. ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 139-140. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 14. ***Կ. Մաթևոսյան,*** Լմբատավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու որմնանկարը, «Էջմիածին», 1982, Դ, էջ 53-55. նույնի՝ Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 17-18:

Նկարագրություն - Արուճի որմնանկարները ժամանակակից են տաճարի կառուցմանը: Ավագ խորանի գմբեթարդին ներկայացված է պատվանդանին կանգնած Քրիստոսի խոշոր կերպարը (շուրջ 7 մ բարձրություն է ունեցել), որի միայն ստորին մասն է պահպանվել՝ ծնկներից մի փոքր վեր: Քրիստոսի ձախ ձեռքին պատկերված է մագաղաթագալար՝ Հովհաննեսի Ավետարանից վերցված երկաթագիր քաղվածքով (14:21): Քրիստոսի երկու կողմում հավանաբար պատկերված են եղել հրեշտակներ: Փաստորեն, գմբեթարդին ներկայացված է եղել Օրենք տվող Աստծու և Համբարձման պատկերագրությունների համատեղ հորինվածք: Քրիստոսի ոտքերի տակ դրված մարգարտազարդ պատվանդանին զուգահեռ ողջ խորանը երիզող բարձրարվեստ զարդագոտին է՝ կազմված ականթի պարուրվող փարթամ թփերից և մեկընդմեջ երևացող խաղողի, նռան, գավաթի, մրգերով զամբյուղի պատկերներից: Պատվանդանի փոքր ոտքերի միջև գրված է «ՍՏԵՓԱՆՈՍ», որը, հավանորեն, նկարչի անվան հիշատակությունն է: Գմբեթարդից ներքև՝ խորանի պատերին առաքյալների պատկերներն են եղել, որոնցից միայն վեցն են պահպանվել՝ հյուսիսային կողմում: Արուճի որմնանկարն աչքի է ընկնում հանդիսավորությամբ, ընդհանուր շքեղությամբ, կատարման անկաշկանդ, գեղանկարչական եղանակով, տպավորիչ ամբողջականությամբ[55]:

40. Թալինի Կաթողիկե եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Թալինի Կաթողիկե տաճարի ներքին պատերն ամբողջովին նկարազարդ են եղել, սակայն այժմ որմնանկարի մեծ ու փոքր հատվածներ են պահպանվել ավագ խորանում և կից որմերին (ՀԱՊ-ում պահվում են Թալինի որմնանկարի զարդապատկերների փոքրացված ընդօրինակությունները): Գմբեթարդին ներկայացված տեսարանից մնացել է միայն զարդարուն գահի աջ եզրը՝ բարձիկով և վրան դրված գրքով: Փաստորեն, ի տարբերություն Լմբատավանքի որմնա-

[55] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 11-12. նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 142. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 14-15. ***Կ. Մաթևոսյան,*** Արուճ, Երևան, 1987, էջ 44-53. նույնի՝ Արուճի տաճարի 666 թ. որմնանկարը, «Լրաբեր» հաս. գիտ., 1981, թ. 3, էջ 85-92. նույնի՝ Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 67-70. նույնի՝ Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 19:

նկարի, Թալինում Քրիստոսի պատկերի փոխարեն ներկայացված է Աստծու գահը՝ բացված Ավետարանով (Լիդիա Դուռնովոյի կարծիքով, Թալինում նույն կոմպոզիցիան է, ինչ որ Լմբատավանքում, այսինքն՝ Քրիստոսը փառքի մեջ, իսկ ըստ Նիկոլայ Քոթանջյանի՝ պատկերված է եղել գահը, վրան դրված գրքով): Կենտրոնական պատկերը ներառված է կանաչ, սպիտակ, կարմիր երիզներով ծիածանակամարի մեջ: Գահի երկու կողմերում պատկերված են եղել քառակերպերը (պահպանվել է նրանցից մեկի աչքերով թևի մի հատվածը): Գմբեթարդի կամարագոտու վրա՝ տասնմեկ մեդալիոնների մեջ, պատկերված են եղել տասը սրբեր և մեկ խաչապատկեր (պահպանվել են երեք սրբերի դիմանկարներն ու խաչապատկերը): Համանման տասնմեկ մեդալիոն է պատկերված նաև գահից անմիջապես ներքև՝ խորանի շրջագծով: Դրանցից ներքև, լուսամուտների հատվածում, հավանաբար, պատկերված են եղել ամբողջ հասակով տասներկու առաքյալները:

Ավագ խորանից ձախ պահպանվել է «Մուտք Երուսաղեմ» տեսարանի մի հատվածը՝ ավանակի և Քրիստոսի գլուխները: Հարավային խորանի մուտքից վեր եղել են հասակով մեկ կանգնած վեց սրբերի պատկերներ, իսկ արևմտյան մույթերին հազիվ նշմարվում են ձիավորների ուրվագծերը:

Նշենք նաև, որ տաճարի հարավային ավանդատան պատին՝ որմնանկարի վրա, պահպանվել է մի ուշագրավ սևաներկ արձանագրություն, որի բովանդակության համաձայն՝ Կաթողիկեն նկարազարդել է տվել Մովսես եկեղեցապանը[56]:

41. Կոշի Ս. Ստեփանոս եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ VII դար:

Նկարագրություն - Որմնանկարներից հատվածներ են պահպանվել միայն ավագ խորանում, որոնց մասին XIX դարում հիշատակում է դեռևս Հովհաննես եպս. Շահխաթունյանցը. «Նշմարին հետք նկարուց և

[56] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 10-11. նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 140. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 14. ***Կ. Մաթևոսյան,*** Արուճի Ս. Գրիգոր և Թալինի Կաթողիկե տաճարների որմնանկարները, «Էջմիածին», 1982, Ը-Թ, էջ 67-70. նույնի՝ Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 18-19. ***Ն. Քոթանջյան,*** Թալինի մեծ տաճարի գլխավոր աբսիդի որմնանկարների գծային վերակառուցման փորձը, «Հայ արվեստի հարցեր», գիրք 1, Երևան, 2006, էջ 331-337:

տէրունի պատկերաց և սրբոց յորմունս այսր տաճարի ի ներքուստ. որպէս ի կաթուղիկէ եկեղեցին հին Թալնայ և յեկեղեցին Երերվաց դաստակի և յայլս»[57]: Այսպես, գմբեթարդի հատվածում՝ վերին գոտում, ներկայացված է Համբարձման տեսարանը՝ Լմբատավանքի որմնանկարի համանման տարբերակով՝ Քրիստոսը փառքի մեջ, քառակերպերով և հրե անիվներով: Ստորին գոտում՝ լուսամուտի հավասարությամբ, պահպանվել է մի ինքնատիպ հորինվածք. խորանի աջ և ձախ կողմերում պատկերված են դեպի կենտրոն ուղղված առաքյալները: Կենտրոնում՝ լուսամուտի մոտ, երկիցս պատկերված է Քրիստոսը (կառուցվածքը համապատասխանում է «Հաղորդություն» տեսարանին), սակայն վերջինս առաքյալներին է մեկնել ոչ թե գինու գավ կամ նկանակ, այլ մագաղաթագալար: Տեսարանը, կարելի է ասել, «Հաղորդության» և «Օրենքի հանձնման» յուրահատուկ միավորումն է:

Երկու որմնանկարների միջև (գմբեթարդից ներքև) եղել է նաև չորս կարմիր երիզների միջև գրված հայերեն եռատող արձանագրություն, որն այժմ հիմնականում թափված է[58]: Ընթեռնելի են «Սբ խաչ», «Որդի», «Հորէն» և այլ առանձին բառեր[59]:

42. Եղվարդի Ս. Թեոդորոս զորավար եկեղեցի

Կառուցվել է VII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Հավանաբար ունեցել է որմնանկարների երկու շերտ, առաջինը՝ հասակակից կառույցին, երկրորդը՝ XIII-XIV դդ.: Այդ մասին է վկայում որմնանկարի վրա եղած մի արձանագրություն, ինչպես և պահպանված փոքր հատվածների գունային վերլուծությունը: Ս. Զորավարի որմնանկարներում գերակշռող են զարդապատկերները[60]:

---

[57] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրությամբ՝ ***Ա. Տեր-Ստեփանյանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 248 – Ա. Հ.:

[58] ***Л. Дурново,*** Краткая история древнеармянской живописи, էջ 11. նույնի՝ Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 142-143. ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 15, 49-51. ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 19, 21:

[59] ***Ա. Մանուչարյան,*** Կոշավանք, Երևան, 2015, էջ 9 – Ա. Հ.:

[60] ***Н. Котанджян,*** Цвет в раннесредневековой живописи Армении, էջ 15, 51-53. ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 144. ***Կ. Մաթևոսյան,*** Եղվարդի Ս. Զորավար եկեղեցին և մենաստանը, «Էջմիածին», 1983, Է, էջ 49-52. նույնի՝ Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 21:

ՁԱՐԳԱՑԱԾ ՄԻՋՆԱԴԱՐ

43. Աղթամարի Ս. Խաչ եկեղեցի

Կառուցվել է 915-921 թթ.:

Որմնանկարները՝ X դար:

Նկարագրություն - Ս. Խաչը կառուցվել և որմնանկարազարդվել է Վասպուրականի թագավոր Գագիկ Արծրունու նախաձեռնությամբ՝ X դարի սկզբներին: Ներքուստ կառույցի պատերն ամբողջովին ծածկված են մասամբ հին և հիմնականում Նոր կտակարանի բազմաթիվ թեմաների եռաշարք որմնապատկերներով[61]: Եկեղեցու գմբեթին արարչագործության, իսկ թմբուկի վրա՝ Ադամի և Եվայի աստվածաշնչյան պատումը ներկայացնող պատկերներն են: Ավագ խորանում մասամբ պահպանվել են առաքյալների, որմնասյուների վրա՝ եկեղեցու հայրերի մեծադիր պատկերները: Ավետարանական նկարաշարքը սկսվում է հարավային խորանի վերին գոտուց: Ներկայացված են «Ավետում», «Մարիամի այցը Եղիսաբեթին», «Ծնունդ», «Քրիստոսի ընծայումը տաճարին», «Հովսեփի երազը», «Փախուստ դեպի Եգիպտոս», «Մանկանց կոտորած», «Մկրտություն», «Այլակերպություն», «Հարսանիք Կանայում», «Քրիստոսի քարոզը», «Ղազարոսի հարությունը», «Մուտք Երուսաղեմ», «Քրիստոսի օծումը», «Ոտնլվա», «Քրիստոսը Պիղատոսի մոտ», «Խաչելություն», «Ձիթաբեր կանայք գերեզմանի մոտ», «Համբարձում», «Քրիստոսի հայտնությունը Մարիամ Մագթաղենացուն», «Ս. Կույսի նինջը»[62]: Ս. Տեր-Ներսեսյանն Աղթամարին նվիրված մեծարժեք ուսումնասիրության մեջ անդրադառնալով որմնանկարների պատկերագրական, ոճական առանձնահատկություններին՝ գրում է. «Աղթամարի որմնանկարները նոր լույս են սփռում արևելյան քրիստոնեական արվեստի բազմաթիվ յուրահատկությունների վրա: Գմբեթի թմբուկի վրա պատկերված ծննդոց ցիկլը ցույց է տալիս եկեղեցական զարդանախշման մի տիպատեսակ, որը մինչև այժմ իր նմանը չունի վաղ միջնադարյան արվեստում»[63]: Արվեստաբանի կարծիքով՝ «Եզակի երևույթ է վերջին ընթրիքի փոխարինումը Քրիստոսի օծման տեսարանով: Դա ցույց է տալիս, որ տեսարանների սովորական ցիկլը փոփոխվել է, որպեսզի շեշտվի հայկական եկեղեցա-

[61] ***Ս. Տեր-Ներսեսյան,*** Հայ արվեստը միջնադարում, Երևան, 1975, էջ 70-116:

[62] ***Կ. Մաթևոսյան, Լ. Թումանյան, Ա. Ասրյան,*** Աղթամարի պատմամշակութային ժառանգությունը, Ս. Էջմիածին, 2013, էջ 39-41 – Ա. Հ.:

[63] ***Ս. Տեր-Ներսեսյան,*** նշվ. աշխ., էջ 115:

կան ծիսակատարության յուրահատկությունը: Այն կոմպոզիցիան, որտեղ Քրիստոսը երևում է Մարիամ Մագթաղենացուն և որտեղ, եթե իմ մեկնաբանությունը ճիշտ է, ընդգրկված է Գագիկ թագավորը, ցույց է տալիս ավելի հետաքրքիր շեղում սովորական փորձից»[64]:

Այսպիսով, հայ կոթողային արվեստի լավագույն ավանդներով ստեղծված Աղթամարի որմնանկարները, որոնք սերտ ընդհանրություններ ունեն եկեղեցու բարձրաքանդակների հետ, ամփոփ պատկերացում են տալիս X դարի հայ որմնանկարչության բարձր մակարդակի, պատկերագրական և գեղարվեստական սկզբունքների մասին:

Նշենք, որ չնայած որպես որմնանկարների հեղինակ գրեթե մշտապես նշվում է ճարտարապետ Մանուելը, սակայն այստեղ ևս գործ ունենք հետագա հավելումների հետ: Հովսեփ Օրբելին դեռևս 1912 թ. տեղում նկարագրել է որմնանկարներն ըստ տեղաբաշխման և պատկերագրական թեմաների. «Իր հազարամյա պատմության ընթացքում Աղթամարի տաճարը մի շարք անգամներ վերանորոգվել և ներսից երկրորդ անգամ ծեփվել է, տարբեր ժամանակներում նորից հարդարվել որմնանկարներով: Ընդ որում, այդ իրականացվել է ոչ պակաս, քան երկու տարբեր շրջաններում: Օրինակ՝ թագավորական գահավորակի գմբեթարդին ծեփի վերին շերտի անջատման հետևանքով բացվել է ներքևի շերտը, որը նույնպես ծածկված է եղել որմնանկարներով»[65]: Այսպիսով, ակնհայտ է դառնում, որ տաճարի որմնանկարների թվագրման հարցում մեծ դժվարություններ կան և ոչ մի դեպքում չի կարելի նրանց անվերապահորեն համարել X դարի առաջին քառորդի գործեր և դրա հիմամբ կառուցել նրանց պատկերագրական հետազոտությունը[66]:

Հատկանշանական է այն, որ որմնանկարների հաջորդականությունը տարբերվում է բյուզանդականից: Դրանք ոճով մի կողմից առնչվում են վաղմիջնադարյան հայկական որմնանկարչությանը (Արուճ, Լմբատավանք ևն), մյուս կողմից՝ IX-XI դդ. արվեստի բոլոր ճյուղերն ընդգրկած գեղարվեստական նոր ուղղությանը: Որմնանկարները մասամբ եղծված են: Ս. Խաչ եկեղեցու ավագ խորանում պահպանվել է «Բարեխոսություն» տեսարանը, իսկ հաջորդ շարքում պատկերված են առաքյալները:

---

[64] ***Ս. Տեր-Ներսեսյան,*** Նշվ. աշխ., էջ 110:

[65] ***И. Орбели,*** Памятники армянского зодчества на острове Ахтамар, «Избранные труды», М., 1968, էջ 79:

[66] ***Ստ. Մնացականյան,*** Աղթամար, Երևան, 1983, էջ 144-148:

44. Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

Կառուցվել է 895-906 թթ.:

Որմնանկարները՝ 930 թ.:

Նկարագրություն - Եկեղեցին 930 թ. որմնանկարազարդել է տվել Սյունյաց Հակոբ Դվինեցի եպիսկոպոսը: Ստեփանոս Օրբելյանի վկայությամբ՝ այդ գործի համար նա հրավիրել է «ֆռանգ» (հավանաբար նկատի է ունեցել եվրոպացիների) նկարիչներ: Քանի որ եկեղեցու՝ երկրաշարժերի հետևանքով մեծապես վնասված որմնանկարները հատվածաբար են պահպանվել, հետաքրքրական է Ստեփանոս Օրբելյանի (XIII դար)՝ ամբողջական որմնանկարների վերաբերյալ պատկերավոր նկարագրությունը: Պատմագրի հաղորդմամբ՝ «[Հակոբը] տաճարի լուսադեմ հարկերը ամբողջովին, վերևից մինչև ներքև, անսահման ծախսերով նկարազարդել տվեց: Փրկչի պատկերն էլ խիստ ահեղ տեսքով նկարել տվեց աստվածագործ Սեղանի ճիշտ դիմացը, վերևից՝ երկնքի բոլորակը մեծ կամարի վրա, իսկ սրանից ներքև, Սեղանի շուրջ՝ մարգարեների, առաքյալների ու հայրապետների բնականակերպ նկարները՝ շատ խորհրդավոր: Ամբողջը համատարած կերպով զարդարեց այնպես, որ նայելիս տեսնողների աչքերը շլանում էին: Եվ երբեք չէր թվում, թե ներկերով ու երանգներով են ստեղծված, այլ բոլորն էլ կենդանի են և նայողները զարհուրում ու պատկառում էին նրանցից»[67]: Այժմ որմնանկարից հատվածներ են պահպանվել ավագ խորանում՝ հյուսիսային պատի վրա:

Ուշադրության է արժանի ողջ արևմտյան պատը ծածկող Ահեղ դատաստանի ինքնատիպ որմնանկարը, ուր ներկայացվում է Փրկչի երկրորդ հայտնության ժամանակ մեռյալների հարության և վերջին դատաստանի ազդու տեսարանը: Վերջինս առանձնակի արժեք է ներկայացնում թեմայի պատկերագրական ակունքները որոշելու գործում[68]: Տաթևի որմնանկարում կիրառված է հայկական ավանդական զարդանկարչությունը, կան նաև հայերեն գրություններ՝ արված նկարիչների ձեռքով: Այսպիսով, կասկածից վեր է, որ որմնանկարի ստեղծմանը մասնակցել են թե՛ «ֆռանգ», թե՛ տեղացի հայ նկարիչներ[69]:

---

[67] ***Ստեփանոս Օրբելյան,*** Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները՝ ***Ա. Աբրահամյանի,*** Երևան, 1986, էջ 228:

[68] ***Ա. Միրզոյան,*** Հայկական մանրանկարչություն. Գրիգոր Տաթևացի և Անանուն Սյունեցի, Երևան, 1987, էջ 6:

[69] ***Н. Котанджян, И. Дрампян,*** Фрески Татева. Судьба росписи и история ее изучения, «Հայ արվեստի հարցեր» գիտական հոդվածների ժողովածու, գիրք 5, Երևան, 2013, էջ 283-316:

Փաստորեն, Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարն այն ամենավաղ քրիստոնեական կառույցներից է, որտեղ պատկերվել է Ահեղ դատաստանի լայնածավալ հորինվածքը (Աղթամարի վանքի Ս. Խաչ եկեղեցում նույնպես առկա է Երկրորդ գալստյան տեսարանը՝ հարավային պատի դռան վերնամասում, սակայն պակաս զարգացած հորինվածքով): Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու ավագ խորանում պահպանվել է նաև Համբարձման տեսարանը, հաջորդ շարքում՝ առաքյալները:

Տաճարի գլխավոր խորանի գմբեթարդին պատկերված է եղել գահի վրա նստած Քրիստոսը, ավելի ցած՝ առաքյալներ և սրբեր: Արևմտյան պատի վրա, ինչպես նշեցինք, մնացել են Ահեղ դատաստանի մնացորդները, իսկ հյուսիսային պատին՝ Ծննդյան թեմայի հետ առնչվող տեսարաններ: Կարող ենք ասել, որ այստեղ պահպանվել է X դարի որմնանկարչական ամբողջական հարդարանքը, որը պատկերացում է տալիս վաղմիջնադարյան հայ եկեղեցական նկարազարդման համակարգի մասին: Պատկերներն արվել են ֆրեսկո տեխնիկայով, հայկական որմնանկարչությանը հատուկ 3-4 մմ հաստության ծեփի վրա՝ տեղական բնական հանքաներկերով, մասնավորապես՝ լաջվարդով: Առաքյալների շարքում՝ կենտրոնական պատուհանի հյուսիսային և հարավային կողմերից, նկարված են Հովհաննես Մկրտիչը և Աստվածամայրը՝ Քրիստոսի հետ կազմելով Բարեխոսության պատկերագրությունը: Այս հիերարխիկ հորինվածքն արտահայտում է Երկնային և Երկրային եկեղեցիների, Հին և Նոր կտակարանների հաջորդությունը խորհրդանշող գաղափարները և համընկնում վաղմիջնադարյան որմնանկարչական պատկերագրությանը: Խորանի հանդիսավոր հորինվածքին հակադրված է արևմտյան պատի «Ահեղ դատաստանի» խիստ դինամիկ տեսարանը, որից պահպանվել են կենտրոնական և ստորին հատվածները: Որմնանկարն իր ամբողջական մեծ հորինվածքում ներառում է Ահեղ դատաստանը և Փրկչի Երկրորդ գալուստը՝ ըստ Մատթեոսի Ավետարանի (24.30-31) ու Հովհաննեսի Հայտնության գրքի: Վերևում պատկերված է եղել Երկնային դատաստանը: Քրիստոս-Դատավորին երկու կողմից շրջապատել են առաքյալները. Պողոսը՝ Քրիստոսի աջ կողմից, Պետրոսը՝ ձախ, առանձնացած: Գահի տակ երկու բացված գրքեր են, որոնցով, ըստ Հովհաննեսի Հայտնության, պետք է դատվեին մեռյալները (20.12): Հորինվածքի միջնամասում պատկերված են երկու մեծ հրեշտակներ՝ արձանագիր գալարակները ձեռքերին, աջ գալարակի վրա Հայտնության գրքի խոսքերն են՝ «Եկաւ... մեռելների ժամանակը որ դատվեն» (11.18): Աջ կողմում դրախտի

Կենաց ծառն է, ձախ կողմում՝ դժոխքի հրե գետը, որն այստեղ մեծ մասամբ կապույտ է, ինչպես Հայտնության գրքի «կենդանի ջուրը» (22.1): Հորինվածքի ամենաուշագրավ մասը ստորին հատվածն է՝ ծածկված մեռելների հարության տեսարանով: Դեն նետելով դագաղների կափարիչները՝ Փրկչի Երկրորդ գալստյան դատին են ելնում մեռելները. նրանց կենտրոնում են Ադամն ու Եվան: Հյուսիսային պատին պատկերված «Ծննդյան» հորինվածքից պահպանվել են պատուհանների միջանկյալ երկու հատվածները՝ «Մանկան լոգանքը» և «Հովիվների ավետումը»[70]:

45. Ցաքուտի եկեղեցի

Կառուցվել է 932 թ.:

Որմնանկարները՝ թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Ստեփանոս Օրբելյանի հաղորդմամբ՝ Հակոբ Դվինեցի եպիսկոպոսը, Սյունյաց Վասակ իշխանի որդի Փիլիպեից գնում է Զագեձորի Վարարակն կոչված ջուրն ու մեծ դժվարությամբ բերում-հասցնում Ցաքուտ կոչված անջրդի վայրը: Նա այստեղ այգիներ է հիմնում, այնուհետ «տեղում շինեց գմբեթահարկ մի խորան՝ շատ հրաշալի կառուցվածքով. պատերն ու առաստաղը նկարիչներին զարդարել տվեց զանազան երանգներով, նկարել տվեց քրիստոնեական բոլոր պատկերները, առաքյալներին ու հայրապետներին»[71]:

46. Գնդեվանքի գլխավոր եկեղեցի

Կառուցման ավարտը՝ 931 թ.:

Հին շերտի որմնանկարները՝ 931 թ., նոր շերտի որմնանկարները՝ ենթ. XVIII դար:

Նկարագրություն - Ստեփանոս Օրբելյանը հիշատակում է Գնդեվանքի որմնանկարի հեղինակ Եղիշեին[72]: Եկեղեցու ավագ խորանում

---

[70] Առավել մանրամասն տե՛ս արվեստաբան Սեյրանուշ Մանուկյանի մեծարժեք հոդվածը – ***Ս. Մանուկեան,*** Տաթեւի որմնանկարները (930 թ.) եւ արեւմտաքրիստոնէական վաղ միջնադարեան արուեստը, «Բազմավէպ» հայագիտական, բանասիրական, գրական հանդէս, 2006, թ. 1-4, էջ 293-311, տե՛ս նաև նույնի՝ ռուսերենը՝ ***С. Манукян,*** Фрески Татева (930 г.), «Անտառ Ծննդոց» հոդվածների ժողովածու՝ նվիրված Ֆելիքս Տեր-Մարտիրոսովի հիշատակին, պատ. խմբ. և կազմողներ՝ ***Հ. Հակոբյան, Լ. Միքայելյան,*** Երևան, 2015, էջ 296-325 – Ա. Հ.:

[71] ***Ստեփանոս Օրբելյան,*** Սյունիքի պատմություն, էջ 226-227 – Ա. Հ.:

[72] Միանշանակ չէ Եղիշե երեցի՝ որմնանկարների հեղինակը լինելու հանգամանքը, քանզի պատմագիրը նկարչի անունն ուղղակի չի նշում. Սոփիա տիկինը «բերել է տալիս ճարտար քարագործ վարպետներ, սկսում շինարարությունը. վանքի առաջնորդ նշանակելով հայր Սարգսին և գործակալ՝ Եղիշե երեցին և նկարչին և այն հանձնում է Տեր Հակոբին…» (***Ստեփանոս Օրբելյան,*** Սյունիքի պատմություն, էջ 231) – Ա. Հ.:

պահպանված որմանկարի չնչին հատվածներից կարելի է ենթադրել, որ գմբեթարդին՝ խոշոր ծիածանակամարի մեջ, պատկերված է եղել Քրիստոսը: Կառույցի արևելյան զույգ ավանդատների մուտքերից վեր պահպանվել են ուշ միջնադարում ստեղծված պատկերներ, որոնցից մեկը «Տիրամայրը Մանկան հետ» հորինվածքն է:

47. Սանահինի վանքի Ս. Աստվածածին և Ս. Ամենափրկիչ եկեղեցիներ

Կառուցվել են 930-940 թթ., 966 թ.:

Որմնանկարները՝ X դարի երկրորդ կես[73]:

48. Ծառաքարի վանքի վիմափոր գլխավոր եկեղեցի

Կառուցվել է 952 թ.:

Որմնանկարները՝ X դարի երկրորդ կես:

Նկարագրություն - Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ խաչաձև հատակագծով վիմափոր եկեղեցի է՝ արևելյան անկանոն կիսաբոլորակ խորանով, չորս անկյունային դեկորատիվ տրոմպների վրա նստած կեղծ գմբեթով և հարավային մուտքով: Գմբեթի շրջագիծը երիզված է զիգզագաձև կարմիր զարդագոտիով: Նույն գույնով ներկված են նաև գմբեթի կենտրոնի խաչաքանդակն ու տրոմպների եզրագծերը[74]:

49. Ծառաքարի վանքի հարավարևմտյան վիմափոր մատուռ

Կառուցվել է X դարի կեսերին:

Որմնանկարները՝ ենթադրաբար X դարի երկրորդ կես:

Նկարագրություն - Կառույցը հիմնականում կրկնում է գլխավոր եկեղեցու հորինվածքը՝ այն տարբերությամբ, որ խորանը գտնվում է հյուսիսային կողմում, իսկ մուտքը՝ արևելյան: Գմբեթի կենտրոնի խաչաքանդակը ներկված է կարմրավուն ներկով, գմբեթի մնացյալ մակերեսն ու տրոմպների հատվածները՝ կապտամոխրագույնով[75]:

---

[73] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարանում Սանահինի վանքի ինչպես Ս. Աստվածածին, այնպես էլ Ս. Ամենափրկիչ-Կաթողիկե եկեղեցիների որմնանկարների մասին նշվում է, որ դրանց ներսույթը ծածկված է եղել որմնանկարներով, որոնցից, սակայն, աննշան հետքեր են մնացել (տե՛ս ***Կ. Ղաֆադարյան,*** Սանահինի վանք, «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 887-888) – Ա. Հ.:

[74] ***Ս. Կարապետյան,*** Ծառաքարի վանքը, «Վարձք», 2011, թ. 4, էջ 39-41:

[75] Նույն տեղում, էջ 37-39:

50. Մոկքի Ապարանից Ս. Խաչ (Ս. Նշան) վանքի Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է 983 թ.:

Որմնանկարները՝ 980-ական թթ.:

Նկարագրություն - Տեղակայված է վանական համալիրի կենտրոնում՝ Ս. Առաքելոց, Ս. Ստեփանոս եկեղեցիների և արևմտյան գավթի միջև: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ եկեղեցին զույգ որմնամույթերով և ավանդատներով գմբեթավոր դահլիճ է: Որմնանկարները ժամանակակից են կառույցին: Գրիգոր Նարեկացին վանքին նվիրված «Պատմութիւն Ապարանից Ս. Խաչին» երկում նշում է. «Զորմոցն վերադրութիւն՝ վիմախարիսխ արձանակառոյց կերպիւ առկայեաց. եւ իբր յականց վանեաց յեռելոց ճարտարագործ արուեստայարմար բազմատեսակ երփնիւ նորոգեաց: Եւ զԵզեկիէլեան տեսլեանն երեւոյթ անյօդն էութեամբ՝ նոր նմանութեամբ իբր զգայութիւն իրի արծարծեաց», ապա և՝ «Իսկ զգեղանկար ծաղկայօրինուորակ պատկերացն կենդանագիր տեսակի գեղոցն զստուերացեալ հին ամանակացն զաներեւոյթն աչաց ներկայիցս, իբր զերեւոյթ յայտնի տեսակի ունողաց շնչոյ եւ զգայութեանց արգասաւորեաց»[76]: Առաջին հիշատակումը թերևս վերաբերում է խճանկարին, երկրորդը՝ որմնանկարին:

51. Հաղբատի վանքի Ս. Նշան եկեղեցի

Կառուցվել է 976-991 թթ.:

Որմնանկարները՝ առաջին շերտը՝ 990-ական թթ., երկրորդը՝ XIII դարի կեսեր, երրորդը՝ XIV դարի սկիզբ:

Նկարագրություն - Ավագ խորանի գմբեթարդին ներկայացված է Բարեխոսությունը, որից փոքր հատվածներ են պահպանվել: Նոր՝ XIII դարի շերտին պահպանվել են ավետարանական նկարաշարի որոշ նմուշներ՝ «Ավետում», «Ծնունդ», «Տեառընդառաջ», «Մկրտություն», «Հոգեգալուստ», որոնք ուղեկցվում են հայերեն և վրացերեն մակագրություններով: Պատկերները ոճական և պատկերագրական սերտ ընդհանրություններ ունեն նույն շրջանի հայ մանրանկարչության՝ Մեծ Հայքի դպրոցի ստեղծագործությունների հետ: Եկեղեցու հարավային պատի

[76] ***Ս. Գրիգոր Նարեկացի,*** Ապարանքի Ս. Խաչի պատմությունը. Ուսումնասիրություններ, կազմեց՝ ***Ա. Պետրոսյանը,*** Երևան, 2006, էջ 34-37: Տե՛ս նաև ***Ա. Սեդրակեան,*** Հայաստանեայց եկեղեցու պակերայարգութիւնը, հ. Ա, Ս. Պետերբուրգ, 1904, էջ 83:

որմնամույթի վրա պահպանվել է որմնանկարների պատվիրատու Խութլուբուղա Արծրունու (աթաբեկ Սադունի որդու) ամբողջ հասակով պատկերը: Այս բավական լավ պահպանված դիմանկարն ունի ինքնուրույն գեղարվեստական արժեք, ներկայացնում է իրական մարդու պատկերն ըստ նկարչի կատարողական վարպետության և գեղարվեստական մտածելակերպի: Ենթադրվում է, որ Խութլուբուղայի պատկերի մոտ եղել է նաև նրա հոր դիմանկարը, որը չի պահպանվել[77]:

52. Ռշտունիքի Կապուտկողի կամ Ընձաքարի վանքի Ս. Հակոբ եկեղեցի

Կառուցվել է XI դարում, վերանորոգվել XV դարի սկզբին:

Որմնանկարները՝ XI դարի սկիզբ:

Նկարագրություն - Վանքն այժմ հիմնավեր է: Որմնանկարները պատկերագրական և ոճական առումով աղերսներ ունեն Աղթամարի Ս. Խաչ եկեղեցու որմնանկարների հետ: Հատվածաբար պահպանվել են ավետարանական նկարաշարի որոշ դրվագներ՝ «Ավետում», «Մարիամի այցը Եղիսաբեթին», «Ծնունդ», «Հովսեփի երազը», «Փախուստ դեպի Եգիպտոս»: Որմնանկարում եղել են նաև Արծրունյաց տոհմից սերող պատվիրատուների դիմանկարներ, սուրբ զորավարների պատկերներ և այլն[78]: Վանքն իր բարձրարժեք որմնանկարներով 1970 թ. ավերվել է մղանով (կալսած հարդն ու ցորենը կալում հավաքելու գործիք – Ա. Հ.)՝ ճանապարհն ընդարձակելու համար[79]:

---

[77] ***Կ. Ղաֆադարյան,*** Հաղբատ. ճարտարապետական կառուցվածքները և վիմական արձանագրությունները, Երևան, 1963, էջ 19, հմմտ. «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, Երևան, 2002, էջ 530. ***Տ. Հեթում քհն. Թարվերդյան,*** Հաղբատի վանքի որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, կազմող և խմբագիր՝ ***Կ. Մաթևոսյան,*** Երևան, 2019, էջ 98-102, նկ.՝ էջ 345-352: Վերջերս լույս տեսավ որմնանկարչության վերականգնող մասնագետներ Քրիստին Լամուրեի և Արա Զարյանի ստվարածավալ պատկերագիրք-ուսումնասիրությունը՝ նվիրված Հաղբատավանքի Ս. Նշան եկեղեցու որմնանկարների վերականգնմանը – տե՛ս ***Ք. Լամուրե, Ա. Զարյան,*** Հաղբատ. Սբ Նշան եկեղեցու 976-991 թթ. Ժ, Ժ-ԺԳ դդ. որմնանկարների պահպանական վերականգնում, նախաբանը՝ ***Ս. Մանուկյանի***, Երևան, 2020 – Ա. Հ.:

[78] ***Հր. Հակոբյան,*** Ռշտունիքի Ս. Հակոբ վանքի որմնանկարը, «Լրաբեր» հաս. գիտ., 1985, թ. 9, էջ 69-77:

[79] ***Ժ. Մ. Թիերի,*** Հայկական հուշարձանների կրած վնասները Արևելյան Թուրքիայում, «Անի» - Անիի պահպանության և ուսումնասիրման միջազգային գիտական կենտրոնի գիտական-հասարակական եռամսյա հանդես, թ. 1, 1992, էջ 35-36:

53. Որոտնավանքի Ս. Կարապետ եկեղեցի

Կառուցվել է 1006 թ.:

Որմնանկարները՝ XI դարի սկիզբ:

Նկարագրություն - Եկեղեցու գրեթե ողջ աղոթասրահը ծածկված է եղել որմնանկարներով: Ներկայումս մնացել է միայն հյուսիսային խորանի հատվածը, որը պատկերում է շրջանի մեջ աստղազարդ կապույտ երկինք, կենտրոնում՝ հրեշտակ[80]:

Ըստ որմնանկարների վերականգնման մասնագետ Արժանիկ Հովհաննիսյանի՝ որմնանկարի գունապնակը բավականին ինքնատիպ է: Հայաստանում նման սյուժետային պատկերումներ չեն հանդիպել: Հորինվածքը ներկայացված է կլոր շրջանակի մեջ, որտեղ բավական խիտ են թե՛ կենդանակերպերը, թե՛ մարդկային ֆիգուրները, թե՛ հրեշտակները: Հավանաբար սա Հին կտակարանի նկարազարդումներից է: Պատկերագրությունն առայժմ մեզ անհայտ է, քանի որ որմնանկարի վրա կատարվող մաքրման աշխատանքներն ի հայտ են բերում նորանոր հատվածներ[81]: 2011 թ. որմնանկարը վերականգնել է այդ գործի գիտակ Քրիստին Լամուրեն[82]: Նա թորած ջրով նախ մաքրել է որմնանկարը, այնուհետ վերականգնել վնասված հատվածները: Եղել են պատից առանձնացված մասեր, փոքրիկ անցքեր են արվել, իրականացվել սոսնձե սրսկումներ: Վերջում վերականգնվել են գունային պատկերները: Որմնանկարը մաքրելուց հետո պարզվել է, որ կան ջրաներկով արված միջամտություններ: Այդ ամենը հեռացվեց, մաքրվեց և օգտագործվեցին միայն այն պիգմենտները, այն գույները, որոնցով արվել է բնօրինակը:

54. Հոռոմոսի վանքի Ս. Գևորգ եկեղեցի

Կառուցվել է 1010-ական թթ.:

Որմնանկարները՝ 1010-1020-ական թթ:

---

[80] «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան, էջ 838-839:

[81] Որոտնավանք. որմնանկարի վերականգնում, «Լրագիր», երկուշաբթի, 5 սեպտեմբերի, 2011 – Ա. Հ.:

[82] Մինչ այդ, 1974-1975 թթ. որմնանկարի ամրացման և վերականգնման առաջին փորձը կատարել են ռուս մասնագետները, որոնք վերականգնել են գունային որոշ հատվածներ՝ որմնանկարի ամբողջ եզրագիծն ամրացնելով հատուկ նյութով:

Որմնանկարին համառոտ անդրադարձել է նաև Սեյրանուշ Մանուկյանը՝ այն թվագրելով XI կամ XIII դարերով (***Ս. Մանուկյան,*** Միջնադարյան Հայաստանի կոթողային գեղանկարչությունը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 36, ծնթ. 71. հմմտ. ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 94):

Նկարագրություն - Պահպանվել են որմանկարների որոշ հատվածներ: Ըստ Թ. Թորամանյանի՝ «Այս եկեղեցին ի ներքուստ ներկված և նկարազարդված է. խորանի կիսագմբեթի մեջ նկարված է մեծադիր Քրիստոսի պատկեր, ինչպես Անիի մեջ Լուսավորչի (Տիգրան Հոնենցի եկեղեցու – Ա. Հ.) գմբեթը և Փրկչի ու Ապուղամրենց և Ս. Գրիգորի խորաններուն կիսագմբեթները»[83]: Որմանկարին վերջերս անդրադարձել է Կարեն Մաթևոսյանը. ըստ նրա՝ «խորանի գմբեթարդում գահակալ Քրիստոսը պատկերված է փառքի պսակի (մանդոռլայի) մեջ… պատուհանի երկու կողմերում երևում են հասակով մեկ պատկերված կերպարների՝ կարմիրով գծված հագուստների և որոշ մասերում՝ գլխի և լուսապսակի ուրվագծերը»[84]: Պատկերագրական հորինվածքը թույլ է տվել ուսումնասիրողին ենթադրել, որ կերպարները, ըստ ամենայնի, եպիսկոպոսական հանդերձանքով եկեղեցու հայրապետներն են[85]:

55. Անիի «Պալատական» եկեղեցուն կից երկհարկանի մատուռ

Կառուցվել է՝ ենթադրաբար XIII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Ըստ Հովսեփ Օրբելու՝ կառույցի պատերին պահպանվել են ծեփի մնացորդներ՝ որմնանկարների հետքերով[86]:

56. Տայքի Օշկվանք

Կառուցվել է 950-960-ական թթ.:

Որմնանկարները՝ 1020-1030-ական թթ.:

Նկարագրություն - Պատկերում է Տայքի Բանակի տաճարում Բագրատ Դ-ի պսակադրությունը: Ինչպես գիտենք, 1027 թ. Վրաց Բագրատ Դ թագավորը Բանակի տաճարում է թագադրվել և պսակադրվել բյուզան-

---

[83] ***Թ. Թորամանյան,*** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. II, Երևան, 1948, էջ 161:

[84] ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 87:

[85] Նույն տեղում:

[86] ***И. Орбели,*** Краткий путеводитель по городущу Ани, С. Петербург, 1910, էջ 16. հմմտ. ***Կ. Մաթևոսյան***, Անի. եկեղեցական կյանքը և ձեռագրական ժառանգությունը, Ս. Էջմիածին, 1997, էջ 162: Հովսեփ Օրբելին ժամանակին ներկայացրել է Անիի թանգարանում ցուցադրված Միջնաբերդի պալատական դահլիճի որմերի որմնանկարչական մնացորդները (տե՛ս ***И. Орбели,*** Каталог Анийского музея древностей, С. Петербург, 1910, էջ 12-17):

դական կայսեր ազգականուհու՝ Հելենայի հետ, որին Կոստանդնուպոլսից որդու համար կնության էր բերել Բագրատի մայրը՝ Մարիամ Արծրունին[87]:

57. Անիի Տիգրան Հոնենցի դամբարան

Կառուցվել է XII դարի վերջին:

Որմնանկարները՝ 1198-1212 թթ.:

Նկարագրություն - Անիում պահպանվել է մի որմնանկարազարդ քարայր, որի վրա եղած ներկագիր արձանագրությունը վկայում է դրա՝ Տիգրան Հոնենցի ընտանիքին պատկանելու մասին: 1915 թ. Ն. Մառի հանձնարարությամբ Անիի հնագիտական արշավախմբի անդամ Դավիթ Ղիփշիձեն կատարել է քաղաքի հարակից ձորերի քարայրների ուսումնասիրությունը[88]: Ղիփշիձեի նկարագրության համաձայն՝ քարայրի խորքում՝ խորանաձև փորվածքում, Բարեխոսության՝ Քրիստոսը գահի վրա պատկերագրությունն է, երկու կողմերում՝ Աստվածամայրը և Հովհաննես Մկրտիչը, իսկ կամարի վրա, երկու կողմից՝ ամբողջ հասակով, դիմահայաց պատկերված են Միքայել և Գաբրիել հրեշտակապետերը: Ձեռքերին ունեն մեկական գունդ (սֆերա) կամ հայելի[89]:

58. Կիրանց վանքի գլխավոր եկեղեցի

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Որմնանկարները խիստ վնասված են: Ավագ խորանի հարդարանքը հիշեցնում է Ախթալայի և Քոբայրի մեծ եկեղեցիների համապատասխան որմնանկարները: Գմբեթի և թմբուկի վրա պատկերները տեղադրված են հինգ շարքով, կենտրոնում հավասարաթև խաչն է, այնուհետ՝ երկնային հենքի վրա, չորս հրեշտակ, արև և լուսին, երրորդ շարքում՝ Տիրամորը շրջապատող տասներկու առաքյալները,

---

[87] ***N. Thierry,*** Peintures Historiques D'Oshk'i (T'ao), “Revue Des Études Géorgiennes et Caucasiennes”, N 2, 1986, pp. 140-143. ***Skhirtladze Z.,*** The Oldest Murals at Oshki Church: Byzantine Church Decoration and Georgian Art, “Eastern Christian Art”, 2010, vol. 7, pp. 97-134.

[88] 1916-ին քարայրների ուսումնասիրության գործը, ցավոք, ընդհատվել է, բայց արշավախմբի մասնակիցներից Ն. Տոկարսկին, այնուամենայնիվ, որոշ աշխատանքներ կատարել է: Վաղամեռիկ Դ. Ղիփշիձեի և իր ուսումնասիրությունների համադրումով Ն. Տոկարսկին 1972 թ. հրատարակել է «Անիի քարայրները» (ռուսերեն) գիրքը (***Д. Купшидзе,*** Пещеры Ани, Ереван, 1972):

[89] Մանրամասն տե՛ս ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 87-91 – Ա. Հ.:

չորրորդում՝ տասնվեց մարգարեները, իսկ ստորին շարքում՝ դրվագներ մարգարեների կյանքից: Եկեղեցու պատերին և որմնամույթերին հատվածաբար պահպանվել են նաև ավետարանական տեսարանների, ավետարանիչների և եկեղեցու հայրերի պատկերները[90]:

59. Հառիճավանքի Ս. Աստվածածին եկեղեցի

Եկեղեցին կառուցվել է 1201 թ., գավիթը՝ 1210-ական թթ.:

Որմնանկարները՝ 1235 թ.:

Նկարագրություն - Գավթից բացվող եկեղեցու մուտքի վերնամասում ժամանակին եղել է «Աստվածամայրը Մանկան հետ» ճոխ գունապնակով որմնանկար, որից այժմ մի մասն է պահպանվել[91]: Որմնանկարի ծեփի վրա մասամբ պահպանվել է միատող ներկագիր արձանագրությունը, ուր վկայված է նաև թվականը՝ ՈԶԴ (1235)[92]:

60. Կեչառիսի վանքի Ս. Գրիգոր եկեղեցի

Եկեղեցին կառուցվել է 1003 թ., գավիթը՝ 1205-1214 թթ.:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Ս. Գրիգոր եկեղեցու գավթում, գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավորի վրա պատկերված է Բարեխոսության տեսարանը: Ստեղծվել է գավթի շինարարությունից հետո, հավանաբար XIII դարում: Ըստ Կ. Մաթևոսյանի՝ որմնանկարի արձանագրության հնագրությունը XII-XIII դարերի է, իսկ պատկերագրությունն ավելի ուշ շրջան է հիշեցնում[93]:

61. Անիի Մայր տաճար

Կառուցվել է 989-1010 թթ.:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Ն. Մառի գրառումներում առկա է Մայր տաճարի որմնանկարին վերաբերող հետևյալ նկարագրությունը. «[ավագ խորանում], դեկորատիվ զարդագոտիներից բացի, ուշադրության է արժանի լուսամուտից վեր պատկերված հայկական խաչը, որին խունկ են ծխում

---

[90] Фрески монастыря Киранц. материалы из архива ***Л. Дурново,*** подгот. к изд. ***А. Аракелян,*** Ереван, 1990.

[91] ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 91-92:

[92] Դիվան հայ վիմագրության, պրակ X, էջ 55, արձ. 72:

[93] ***Կ. Մաթևոսյան,*** նշվ. աշխ., էջ 92-93:

նրա երկու կողմերում կանգնած հրեշտակները: Ավելի վեր տեղավորված է եղել Փրկչի պատկերը, որից պահպանվել է միայն գահը: Ձախ կողմում պատկերված է արծիվ, աջում՝ թևավոր եզ»[94]: Մայր տաճարի որմնանկարներն ավելի ուշ ծածկվել են ծեփի բարակ շերտով[95]:

62. Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենցի) եկեղեցի

Կառուցվել է 1215 թ.:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Արտաքուստ հարուստ պատկերաքանդակներով ձևավորված այս եկեղեցին ներքուստ ամբողջությամբ նկարազարդ է: Պատկերազարդ է նաև եկեղեցու գավիթը, որը կառուցվել է մի փոքր ուշ՝ 1251 թ.[96]: Եկեղեցու գմբեթին և թմբուկի վրա ներկայացված են Համբարձումը, ավագ խորանում՝ վերից վար, երեք շարքով՝ Բարեխոսությունը, Հաղորդությունն ու սրբապատկերների շարքերը: Մյուս պատերին Հին և Նոր կտակարանների թեմաներով տեսարաններ են[97]: Եկեղեցու արևմտյան պատին՝ երկու շարքով ներկայացված է 16 դրվագ Գրիգոր Լուսավորչի տանջանքների և քարոզչական գործունեության պատկերներով, ինչպես նաև երկու տեսարան՝ Ս. Հռիփսիմեի և նրա ընկերուհիների կյանքից[98]: Որոշ պատկերներում տեղ է գտել նաև հայոց առաջին քրիստոնյա թագավոր Տրդատը: Եկեղեցու հյուսիսային պատին պատկերված է Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքը. այն Հայաստանում քրիստոնեության տարածման առայժմ հայտնի հնագույն գեղանկարչական մեկնաբանությունն է: Որմնանկարի պատվիրատուն և ստեղծողները նպատակ են ունեցել փառաբանել Հայաստանում քրիստոնեության հաստա-

---

[94] ***Ստ. Մնացականյան,*** Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, Երևան, 1969, էջ 150:

[95] ***Թ. Թորամանյան,*** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Ա, Երևան, 1942, էջ 166:

[96] ***Պ. Мурадян,*** Строительство и конфессия церкви Тиграна Оненца по памятникам эпиграфики, «Պատմաբանասիրական հանդես», 1985, թ. 4, էջ 174-190: Ի դեպ, Ա. Կակովինի կարծիքով, գավիթը նկարազարդվել է մինչև մոնղոլական արշավանքը՝ 1236 թ. (տե՛ս ***А. Каковин,*** О датировке росписей часовни, притвора и церкви Св. Григория в Ани, IV Международный симпозиум по армянскому искусству, тезисы докладов, Ереван, 1985, էջ 137-139):

[97] ***А. Каковин,*** Роспись церкви Григория Тиграна Оненца в Ани, «Բանբեր Երևանի համալսարանի», 1983, թ. 2, էջ 107-109:

[98] Երկու հատվածների ընդօրինակություններ ցուցադրվում են ՀԱՊ-ում, ևս երկուսը, այդ թվում՝ «Տրդատի երթը»՝ ՀՊԹ-ում:

տումը և մեր պատմության այդ դրվագը ներկայացնել որպես մի կարևոր իրադարձություն համաքրիստոնեական պատմության մեջ:

Անիի նկարազարդ եկեղեցիներից միայն Ս. Գրիգոր Լուսավորչի որմնանկարներում են պատկերներն ուղեկցվում այլալեզու (վրացերեն և մասամբ հունարեն) բացատրություններով: Հայկական թեմաներով պատկերների մոտ եղած «վրացերեն մակագրությունները կատարված են ըստ Ս. Գրիգորի վարքի հայերեն խմբագրության բնագրական հատվածների ոչ հմուտ վրացերեն թարգմանության»[99]: Պետք է կարծել, որ որմնանկարի ստեղծողները քաղկեդոնական դավանանք ընդունած անեցի հայերն են եղել, ընդ որում՝ այդ դավանանքը նրանց բնավ չի խանգարել, որպեսզի պատկերաշարում շեշտեն հայկական եկեղեցու երկնային ծագումը (Լուսավորչի տեսիլքը), նրա գերակայությունը եկեղեցական պատմության մեջ ընդհանրապես[100]:

63. Անիի Ս. Փրկիչ եկեղեցի

Կառուցվել է 1035 թ.:

Որմնանկարները՝ XII-XIII դարեր:

Նկարագրություն - Ներկայացված են «Փրկիչը հրեշտակների հետ» (ավագ խորան), «Խորհրդավոր ընթրիքը», ավետարանիչների պատկերները և նկարչի՝ Սարգիս Փառշիկի ինքնանկարը: Տեղին է նկատում ակադ. Հ. Օրբելին, երբ նշում է, որ որմնանկարներն առանձնակի արժեք են ստանում նկարչի ինքնանկարի առկայության շնորհիվ[101]: Մատթեոս ավետարանչի պատկերի մոտ նկարված է ծնրադիր արվեստագետը և կից մակագրված է. «Սուրբ աւետարանիչ Քրիստոսի, բարեխաւսեա՛ առ Քրիստոս Սարգիս Փառշկանս»[102]: Վերջինիս անունը վկայված է նաև Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցու մոտ կանգնեցված խաչքարի 1216 թ. նվիրատվական վիմագրում[103]:

---

[99] ***П. Мурадян,*** նշվ. աշխ., էջ 190:

[100] Առավել մանրամասն տե՛ս ***Հ. Հակոբյան,*** Հայ-քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Ս. Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 103-118 – Ա. Հ.:

[101] ***И. Орбели,*** Краткий путеводитель по городищу Ани, էջ 45:

[102] Արձանագրությունն ավելի վաղ հիշատակել են Ն. Մառը, Թ. Թորամանյանը, Հ. Օրբելին, իսկ առավել հանգամանալից՝ բանասեր-վիմագրագետ Սուրեն Ավագյանը (տե՛ս ***Ս. Ավագյան,*** Վիմական արձանագրությունների բառաքննություն, Երևան, 1978, էջ 326):

[103] ***Ս. Ավագյան,*** նշվ. աշխ., էջ 328:

64. Անիի Աբուղամրենց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Կառուցվել է X դարի երկրորդ կեսին:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Ավագ խորանում նշմարվում է հրեշտակներով շրջապատված Քրիստոսի պատկերը:

65. Անիի Խաչուտի կամ Բախտաղեկի Ս. Գրիգոր եկեղեցի

Կառուցվել է XII-XIII դդ.:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Իր շքեղ քանդակազարդմամբ հայտնի այս եկեղեցին հիմնահատակ ավերված է եղել և նրա որմնանկարների հատվածներն ի հայտ են եկել միայն պեղումներից հետո: Գտնվել է Քրիստոսի դիմապատկերը՝ խաչազարդ լուսապսակով, Տիրամոր դիմանկարը (ընդգծված ազգային դիմագծերով), Գրիգոր Լուսավորչի, Գրիգոր Նյուսացու պատկերները, որոնք ուղեկցվում են հայերեն գրություններով[104]: Որմնանկարազարդ բեկորները հավաքված են եղել Անիի թանգարանում, որի նյութերը թուրքերի ներխուժումից հետո (1920 թ.) ցիրուցան են արվել: Որմնանկարի երկու հատված այժմ պահվում է Էրմիտաժում[105]:

66. Անիի Պարոնի պալատ

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ XIII դար:

Նկարագրություն - Հայտնաբերվել են հիմնաներկի մնացորդներ:

67. Սեդվու վանքի աշտարակ

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

Նկարագրություն - Սեդվու վանքը գտնվում է ՀՀ Լոռու մարզի Կաճաճկուտ գյուղից 3 կմ հարավ՝ Սեդվու ձորում: Վանական համալիրից պահպանվել են Ս. Նշան եկեղեցին (XIII դար)՝ կից մատուռով, որոշ օժանդակ շինություններ և պարսպապատերի մնացորդներ: Վանքից մոտ կես կմ հեռավորությամբ գտնվող «Ղուլի Ղաշ» կոչվող վայրում եղել է Սեդվու ամրոցը (Սեդվա ղալա), որից գրեթե ոչինչ չի պահպանվել: Համեմատաբար լավ վիճակում է եռահարկ աշտարակաձև կառույցը,

[104] ***Н. Марр,*** Ани. Книжная история города и раскопки на месте городища, табл. XVI. հմմտ. ***Թ. Թորամանյան,*** նշվ. աշխ., էջ 166:

[105] Путеводитель по залам Государственного Эрмитажа, Л., 1963, էջ 120:

որի երեք հարկերում էլ եղել են քառակուսի հատակագծով սենյակներ, որոնք ունեցել են դրսից բացվող մուտքեր: Հենց այդ աշտարակի ներսում էլ պահպանվել են որմնանկարների որոշ մնացորդներ (երևում է սրբի որմնանկարի վերին մասը), որոնք ոչնչացման եզրին են, ինչպես և ամբողջ աշտարակը:

68. Եղիպատրուշի Կաթողիկե Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է XIII դարի սկզբին:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Եկեղեցու հարավային պատին՝ լուսամուտի վերին մասում երևում են իրար նայող երկու կերպար, որոնցից աջակողմյանը կարծես հրեշտակ է: Կարեն Մաթևոսյանի կարծիքով, «հնարավոր է, որ սա Ծնունդը (կամ Ավետումը) ներկայացնող հորինվածքի հատված է»[106]:

69. Արջոառիճի վանքի Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է XIII դարի սկզբին:

Որմնանկարները թվագրելի են նշված ժամանակաշրջանով:

Նկարագրություն - Վանքի Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարի մասին ուշագրավ է հնագետ Աշխարհբեկ Քալանթարի հաղորդած տեղեկությունը, ըստ որի՝ որմնանկարի մնացորդները պահպանված են եղել արևմտյան պատի հարավային անկյունին կից և պատկերել են «շատ աղոտ՝ երեք մարդու նկար ամբողջ հասակով կանգնած իրար կողքի իշխանական հագուստով. մեկի շորերը հասնում են մինչև ծնկները, երկարավիզ կոշիկներով, իսկ երկուսինը քիչ ավելի երկար են: Դրա ձախ կողմից սրբի նկար է նիմբով (լուսապսակով – Կ. Մ.), նայում է ներս, բայց ավելի ցածրից է նկարված (գոտկատեղի ուղղությամբ): Հետքեր կան նաև նույն անկյունին կպած հարավային պատի վրա, նաև ընկած կտորների վրա՝ ներկերի հետքեր»[107]:

70. Գեղարդավանքի Ս. Աստվածածին ժայռափոր եկեղեցի

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

---

[106] ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 94:

[107] ***Ա. Քալանթար,*** Հայաստան. քարե դարից միջնադար, Երկերի ժողովածու, Երևան, 2007, էջ 140. տե՛ս նաև ***Կ. Մաթևոսյան,*** նշվ. աշխ., էջ 96 – Ա. Հ.:

Նկարագրություն - Գեղարդավանքում (Այրիվանքում) 1258 թ. նորոգված Ս. Աստվածածին ժայռափոր եկեղեցին որմնանկարազարդվել է Պռոշ Պռոշյան իշխանի պատվերով: Հատվածաբար պահպանված այս որմնանկարը մոտ մեկ դար առաջ ուսումնասիրած և լուսանկարած Գարեգին Հովսեփյանը գրում է. «Ափսիդի կեդրոնում տիրամայրն է, Յիսուս գրկին, մեդալիոնի մէջ, երկու կողմից մի մի հրեշտակ, գլուխները խոնարհած…: Իսկ առաստաղի վերայ կայ մի ուրիշ խմբանկար. կանգնած է միրուքաւոր մի մարդ, նորա ձախից կանացի մի ֆիգուր, աջից դարձյալ մի տղամարդ, հանդերձը կարճ՝ մինչ ծնկները, նեղ անդրավարտիկով եւ կօշիկներով…: Իշխանական հագուստներով այս խմբանկարը կարծում ենք Պռոշն է իւր կնոջ եւ աւագ որդու հետ»[108]: Այժմ որմանկարից անանշան հետքեր են մնացել[109]:

71. Բախչիսարայի ժայռափոր մատուռ

Կառուցման ժամանակն անհայտ է:

Որմնանկարները թվագրելի են XIII դարով:

Նկարագրություն - Գտնվում է Ղրիմի թերակղզու Բախչիսարայ քաղաքի մերձակա Էսկի-քերմեն կոչվող վայրում[110]: Ներկայացնում է արևելյան կողմում ավագ խորանով և հյուսիսային ու հարավային խորշերով ժայռափոր շինություն: Հյուսիսային խորշում պատկերված են դեպի աջ շարժվող երեք սուրբ հեծյալներ՝ զինված նիզակներով և վահաններով: Աջակողմյան հեծյալի ետևում տեսնում ենք նաև ավելի փոքրամարմին կերպար, իսկ մեջտեղի հեծյալը նիզակով խոցում է ձիու ոտքերի տակ գալարվող վիշապին: Ենթադրաբար պատկերված են Ս. Սարգիսն ու որդի Մարտիրոսը, Ս. Գևորգը և Ս. Թեոդորոսը: Որմնանկարի ստորին հատվածում հունարեն միատող արձանագրություն է, որից ներքև՝ լայն զիգզագաձև զարդագոտի[111]:

---

[108] ***Գ. Յովսէփեան,*** Խաղբակեանք կամ Պռոշեանք Հայոց պատմութեան մէջ, Անթիլիաս, 1969, էջ 201 (պատկեր 31, էջ 52):

[109] ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 93-94:

[110] Ազգային-դավանաբանական պատկանելության առումով առկա է անորոշություն: Դեռևս հստակ չէ՝ որմնանկարի ստեղծման ժամանակ մատուռը պատկանել է հայ-քաղկեդոնականների՞ն, թե՞ հունական համայնքին:

[111] ***О. Домбровский,*** Фрески средневекового Крыма, Киев, 1966, էջ 34-42. ***Э. Корхмазян,*** Армянская миниатюра Крыма, Ереван, էջ 143-148. ***Տ. Սարգսյան,*** Ղրիմի հայկական որմնանկարչությունը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 177-183:

72. Արցախի Առաջաձոր գյուղի եկեղեցի

Կառուցվել է 1249 թ.:

Որմնանկարները թվագրելի են XIII դարի երկրորդ կեսով:

Նկարագրություն - Եկեղեցու ավագ խորանի հյուսիսային և հարավային պատերին պատկերված են զույգ տաճարներ, մեկը՝ ուղղանկյուն, մյուսը՝ շրջանաձև հատակագծով[112]: Ուշագրավ է, որ Տեկորի որմնանկարում ևս եղել է զվարթնոցատիպ տաճարի պատկեր[113]: Սրբերի և ավետարանական տեսարանների փոխարեն եկեղեցական կառույցների պատկերումը խիստ ինքնատիպ երևույթ է:

73. Ախթալայի վանքի (Պղնձահանքի) Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ 1205-1216 թթ.[114]:

Նկարագրություն - Եկեղեցին ամբողջովին նկարազարդված է լավ պահպանված, երկշերտ որմնանկարներով: Ստորին, վաղ շերտը ոճական աղերսներ ունի XI դարի հայ մանրանկարչության Արշարունիքի դպրոցի ստեղծագործությունների հետ («Մողնու Ավետարան» և այլն): Առանձնապես տպավորիչ է Հաղորդության մեծադիր հորինվածքը: Որմնանկարն աչքի է ընկնում հագեցած կապույտ ֆոնով, կերպարների ու դիմապատկերների կատարման բարձր վարպետությամբ: Երկրորդ, մի փոքր ավելի ուշ ստեղծված որմնանկարչական շերտը կրում է բյուզանդական պատկերագրության որոշ ազդեցություն: Երկշերտ բարձրարվեստ որմնանկարները պատկերում են Հին և Նոր կտակարաններից առանձին դրվագներ, սրբապատկերներ, այդ թվում՝ Գրիգոր Լուսավորչի պատկերը: Խորանի գմբեթարդին Մարիամ Աստվածածինն է՝ գահին նստած, Մանուկ Հիսուսը գրկին (պահպանվել է որմնանկարի միայն մի մասը), նրանից ցած՝ Հաղորդության տեսարանն է: Հիսուս պատկերված է երկիցս՝ մերթ շրջված դեպի աջ և մերթ դեպի ձախ՝ առաքյալների հետ հացը կիսելիս: Պահպանվել են Պետրոս, Հովհաննես, Պողոս առաքյալների, Ղուկաս և Մատթեոս ավետարանիչների պատկերները:

---

[112] ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 153:

[113] ***Ստ. Մնացականյան,*** Նիկողայոս Մառը և հայկական ճարտարապետությունը, էջ 150:

[114] Հայաստանի պատմական հուշարձանները. Ախթալա, տեքստի հեղինակ՝ ***Ա. Թադևոսյան,*** Երևան, 2007, էջ 16 – Ա. Հ.:

Հաջորդ շարքում ողջ հասակով պատկերված են սուրբ հայրերի՝ Հռոմի Սեղբեստրոս պապի, Հակոբ Տյառնեղբոր, Հովհան Ոսկեբերանի, Բարսեղ Մեծի, Գրիգոր Լուսավորչի, Աթանաս Ալեքսանդրացու, Հռոմի Կլեմենտ (Կղեմես) պապի, Գրիգոր Սքանչելագործի, Կյուրեղ Ալեքսանդրացու, Գրիգոր Աստվածաբանի, Կիպրիանոս Կարթագենացու պատկերները: Արևմտյան պատի որմնանկարներում պատկերված է երկնային արքայությունը, իսկ հյուսիսային պատին՝ Հիսուսի չարչարանքները, Կայիափա քահանայապետն ու հռոմեական կառավարիչ Պիղատոս Պոնտացին: Կամարները, միջնապատերն ու սյուները նույնպես պատկերազարդված են սուրբգրային թեմաներով և սրբերի դիմապատկերներով: Որմնանկարների մի մասը վերականգնվել է 1979 թ.: Ներկայացված են ավետարանական նկարաշարի տեսարաններ, եկեղեցու հայրերի (այդ թվում՝ Գրիգոր Լուսավորչի) և այլ սրբերի պատկերներ: «Ծնունդ» ծավալուն հորինվածքում նորածնին երկրպագելու եկած հովիվներն ու նրանց հոտը ներկայացնող հատվածը, իր ազատ ու անկաշկանդ մեկնաբանությամբ, աշխարհիկ տեսարան է հիշեցնում: Նշելի են հատկապես սրինգ նվագող երիտասարդի, կաթ ուտող գառնուկի պատկերները: Կարելի է զուգահեռներ անցկացնել, հավանաբար, Անիի շրջանում ապրած XIII դարի մանրանկարիչ Աբասի «Ծնունդ» մանրանկարի և որմնանկարչական սույն հատվածի միջև[115]:

74. Քոբայրավանքի Կաթողիկե եկեղեցի և հյուսիսային մատուռ

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ 1282 թ.:

Նկարագրություն - Քոբայրավանքի մեծ եկեղեցու որմնանկարները ստեղծվել են Զաքարյանների տոհմից սերող Գեորգիի պատվերով: Ավագ խորանի որմնանկարը եռաշարք է. վերևում Տիրամայրն է Մանկան հետ, միջնամասում՝ Հաղորդությունը, ներքևում՝ սրբապատկերներ: Համեմատաբար լավ է պահպանված զարդագոտիով շրջանակված Հաղորդության կոթողային հորինվածքը: Թերևս փոքր-ինչ ավելի վաղ են ստեղծվել եկեղեցու ավանդատան որմնանկարները (պատվիրատուն,

[115] ***Գ. Հովսեփյան,*** Մի ձեռագիր Ավետարան, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 108-115. տե՛ս նաև ***A. Lidov,*** The mural Paintings of Akhtala, Moscow, 1991:

ենթադրաբար, Գեորգիի հայր Շահնշահն է եղել)[116]: Ավանդատան հյուսիսային և արևմտյան պատերին պահպանվել են պատվիրատուների հատվածական դիմանկարները: Հնարավոր է տարբերակել աշխարհականի հագուստով չորս տղամարդու, մեկ կնոջ և երկու պատանիների պատկերները:

Ինչպես նշում է արվեստաբան Իրինա Դրամբյանը, Քոբայրի որմնանկարն ունի «տեղական մի շարք առանձնահատկություններ, որոնց ակունքները սկիզբ են առնում հայ մոնումենտալ գեղանկարչության առավել վաղ շրջանում, VII դարից սկսած»[117]:

75. Դադիվանքի Ս. Աստվածածին Կաթողիկե եկեղեցի

Կառուցվել է 1214 թ.:

Որմնանկարները՝ 1297 թ.:

Նկարագրություն - Եկեղեցու հյուսիսային պատին պատկերված է Ստեփանոս Նախավկայի քարկոծումը, հարավային կողմում Նիկողայոս Հրաշագործի տվչության պատկերն է՝ Քրիստոսի, Աստվածամոր և Միքայել հրեշտակապետի կերպարներով[118] (տե՛ս ներդիր, նկ. 10):

Կարծիք կա, թե եկեղեցու հարավային պատին Քրիստոսն Ավետարան է մեկնում Դավիթ Սքանչելագործին, իսկ Աստվածածինը՝ խաչազարդ ուրար: Կիրակոս Գանձակեցու հաղորդմամբ՝ Դավիթ Ծարեցին՝ Սքանչելագործը, իր գործունեությունը ծավալել է Հանդաբերդ ամրոցին մերձակա Ծար ավանում. «Գիւղ մի է ի սահմանս Գեղարքունւոյ ծովուն, ի կողմ Խաչենոյ, հուպ ի բերդն Հանդաբերդ, ուր ջերմուկն է՝ Ծար անուն»[119]: Պատմիչը վկայում է, որ Դավիթ Ծարեցին սկսել է քարոզել, քանզի Քրիստոս երևացել է նրան ու ասել. «Դարձո՛ զաշխարհս եւ բժշկութիւնս կատարեա՛»[120]: Սրանից հետո շատերն են նրանից բժշկվել ու կոչել Դավիթ Միայնակյաց և Սքանչելագործ: Արցախի պատմաճարտարապետական հուշարձաններն ուսումնասիրած Շահեն Մկրտչյանի կարծիքով, որմնանկարների գոյությունը վկայում է այն, որ «միջնադարյան Արցախում ստեղծագործել են հրաշալի վարպետներ: Եվ որ

[116] ***И. Драмбян,*** Фрески Кобайра, Ереван, 1979, էջ 12-13, 18:
[117] Նույն տեղում, էջ 19:
[118] ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 154:
[119] ***Կիրակոս Գանձակեցի,*** Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ՝ ***Կ. Մելիք-Օհանջանյանի,*** Երևան, 1961, էջ 322:
[120] Նույն տեղում, էջ 323:

նրանք ոչ միայն գերազանց տիրապետել են պատերը նկարազարդելու տեխնիկային, այլև գունավոր նկարներով ձեռագրեր պատկերազարդելու արվեստին»[121]:

Կիրակոս Գանձակեցին վկայում է, որ եկեղեցու հարավային պատի բարձրարժեք որմնանկարի հեղինակը հենց Արզուխաթունն է, որը «բազում ինչ օժանդակ եղև, արար և վարագոյր գեղեցիկ՝ դստերօք իւրովք՝ ծածկոյթ սուրբ խորանին, զարմանալի տեսողաց, ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս և զանազան, գործ քանդակակերպ և նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք փրկչին և այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողսն»[122]: Մատենագրությունից հայտնի է, որ Արզուխաթունն իր դուստրերի հետ վարագույրներ է գործել Նոր Գետիկի, Հաղբատի, Մակարավանքի, Դադիվանքի եկեղեցիների համար:

76. Վաճառի Ս. Ստեփանոս վանքի գլխավոր եկեղեցի և մատուռ

Կառուցվել է XIII դարի առաջին կես:

Որմնանկարները՝ XIII դարի կեսեր:

Նկարագրություն - Ս. Ստեփանոս եկեղեցու բեմառէջքին և մուտքի բարավորի վրա պահպանվել են բուսաերկրաչափական մոտիվներով որմնանկարների մնացորդներ և արձանագրության հետքեր: 2017 թ. ամռանը վանքում իրականացված հնագիտական պեղումների արդյունքները պարզեցին (ղեկ.՝ Հ. Պետրոսյան), որ համալիրի՝ քառակուսի հատակագծով երկխորան մատուռի հարավային խորանի հատակին դեռևս նշմարվել են կարմրավուն որմնանկարի հետքերով պատի սալերի բեկորներ[123]:

77. Առաքելոց վանք (Տավուշի մարզ)

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ XIII դարի երկրորդ կես - XIV դարի առաջին կես:

Նկարագրություն - Մարդկային երկու խոշոր կերպարների հարևանությամբ պատկերված է գեղեցիկ, ճերմակ նժույգ հեծած Ս. Սարգիսը

---

[121] ***Շ. Մկրտչյան,*** Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985, էջ 42:

[122] ***Կիրակոս Գանձակեցի,*** էջ 215:

[123] ***Հ. Պետրոսյան,*** Վաճառի Ս. Ստեփանոս վանքի հնագիտական հետազոտության հիմնական արդյունքները և նորահայտ արձանագրությունները, «Սեդրակ Բարխուդարյան - 120» գիտական հոդվածների ժողովածու (խմբ.՝ Գ. Սարգսյան, Ա. Հարությունյան), Երևան, 2019, էջ 16, ծնթ. 19:

(ձիու գավակին նրա որդի Մարտիրոսն է): Հեծյալի դիմաց՝ պատկերի ստորին աջ մասում, նկարված է մեկ այլ, համեմատաբար փոքր մարդկային կերպար՝ ձեռքին շղթա: Հավանորեն ներկայացված է մի դրվագ Ս. Սարգսի վարքից: Հատկապես ուշագրավ է հեծյալի պատկերը, որի օղազրահն ամբողջովին կազմված է եղել արծաթե փոքր թերթիկներից:

78. Ֆամագուստայի (Հյուսիսային Կիպրոս) Ս. Աստվածածին եկեղեցի

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ XIV դարի սկիզբ:

Նկարագրություն - Գմբեթարդին պահպանվել է մի կնոջ կերպար, որի բարձրաշխարհիկ հագուստն ու պատկերագրությունը թույլ են տվել արվեստաբան Գ. Գրիգորյանին կարծել, որ նա առնվազն որմնանկարների պատվիրատուներից է: Կինը պատկերված է ծնրադիր՝ մի սրբի առջև. վերջինս, հավանաբար, Տիրամայրն է: Եկեղեցու հյուսիսային պատին պատկերված են Քրիստոսի կյանքին առնչվող տեսարաններ, իսկ նույն պատի կամարակապ որմնախորշը հարդարված է Քրիստոսի մերկ կիսամարմինը ներկայացնող պատկերով: Որմնանկարների շարքում նշելի են նաև հեծյալ Ս. Թեոդորոսի, Ս. Հեղինե թագուհու, Ս. Պարասկևի, Ս. Հովհաննես Մկրտչի որմնանկարները, ինչպես նաև «Տիրամոր նինջը» տեսարանը և երբեմնի գոյություն ունեցած Քրիստոս Ամենակալ պատկերը[124]:

79. Ուշիի Ս. Սարգիս վանքի գլխավոր եկեղեցի

Կառուցվել է XIII դարասկզբին:

Որմնանկարները՝ XIV դարի սկիզբ:

Նկարագրություն - Հնագետ Ֆրինա Բաբայանի կողմից վանական համալիրում՝ 1999-2001 թթ. իրականացված պեղումների արդյունքներն ամփոփող աշխատության մեջ նշվում է, որ գլխավոր եկեղեցու ավագ խորանը որմնանկարազարդ է եղել[125]:

80. Սամսոնավանք (Տավուշի մարզ)

Կառուցվել է XIII դարում:

Որմնանկարները՝ [ժամանակը չի նշում]:

---

[124] ***Գ. Գրիգորյան,*** Ֆամագուստայի հայկական եկեղեցու որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 287-288 – Ա. Հ.:

[125] ***Ֆ. Բաբայան,*** Ուշիի Ս. Սարգիս վանքը, Երևան, 2005, էջ 8 – Ա. Հ.:

Նկարագրություն - Վանքի երկու եկեղեցիներն էլ որմնանկարազարդված են եղել: Մեծ (գմբեթավոր) եկեղեցում այժմ էլ պահպանվել են կրոնական բովանդակությամբ որմնանկարների մնացորդներ: Փոքր եկեղեցին, որի միայն արևելյան հատվածն ու պատերի ստորին շարքերն են պահպանվել, ունեցել է որմնանկարներով զարդարված թաղակապ ծածկ:

81. Կաֆայի Ս. Սարգիս եկեղեցի

Կառուցվել է X-XIV դդ.:

Որմնանկարները՝ ունի ժամանակագրորեն տարբեր 5 շերտ (XI-XIX դդ.):

Նկարագրություն - Եկեղեցին գտնվում է Ղրիմի թերակղզու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հարավային հատվածում՝ «Մորսադ» այգու հարևանությամբ: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ միանավ դահլիճ է՝ արևելյան երեք խորաններով և երկթեք տանիքով:

I շերտի որմնանկարներ՝ ենթադրաբար XI դար. խիստ հարցական, զարդանախշեր (բացվել է 2016-2017 թթ.),

II շերտի որմնանկարներ՝ ենթադրաբար XIV-XV դդ., «Բարեխոսություն» (ավագ խորանի գմբեթարդ, չի պահպանվել), ավետարանիչների չորս պատկերներ՝ վարդյակների մեջ, կենտրոնում՝ Բեթղեհեմի աստղը (ավետարանիչների պատկերները բացվել են 1965-1966 թթ.),

III շերտի որմնանկարներ՝ ենթադրաբար XVI դար, սև, կանաչ, կարմրադեղնավուն զարդանախշեր (ավագ խորանի կամար, թաղակիր կամարներ, պատուհանների շրջագծեր), այս շերտի որոշ մասեր բացվեցին նաև 2016-2017 թթ. ավագ խորանի գմբեթարդի ստորին քիվին և հարավային պատուհաններին կից,

IV շերտի որմնանկարներ՝ ենթադրաբար XVIII դար, ոսկեգույնի և երկնագույնի երանգների բուսական զարդանախշեր (թաղեր և թաղակիր կամարներ),

V շերտի որմնանկարներ՝ 1888 թ., կապտականաչավուն յուղաներկի շերտ, որի վրա փակցված են գիպսե աստղիկներ[126]:

82. Կաֆայի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Կառուցվել է 1348 թ.:

Որմնանկարները՝ XIV դարի երկրորդ կես:

[126] ***Տ. Սարգսյան,*** Ղրիմի հայկական որմնանկարչությունը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 161-166:

Նկարագրություն - Եկեղեցին գտնվում է Ղրիմի թերակղզու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հարավային հատվածում՝ «Կարանտին» կոչվող արգելոցում: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ փոքրիկ գմբեթավոր կառույց է՝ ութանիստ թմբուկով և արևմտյան մուտքով: Ներկայումս օգտագործվում է ռուս-ուղղափառ համայնքի կողմից:

Որմնանկարները հայտնաբերվել են 1930-ական թթ. Իգոր Գրաբարի և Լիդիա Դուռնովոյի կողմից: Դրանք չեն պահպանվել: Նշմարվել են երեք կանգնած կերպարների զգեստների ծալքերը[127]:

ՈՒԾ ՄԻՋՆԱԴԱՐ

83. Կաֆայի Ս. Հրեշտակապետաց եկեղեցի

Կառուցվել է 1408 թ.:

Որմնանկարները՝ XV դարասկիզբ, XVII-XVIII դդ.:

Նկարագրություն - Եկեղեցին գտնվում է Ղրիմի թերակղզու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հարավային հատվածում: Ըստ ճարտարապետական հորինվածքի՝ միանավ բազիլիկ է՝ արևելյան երեք խորաններով, նրանց հարող տրանսեպտով, վերջինիս միջնամասում վեր հառնող փոքրիկ գմբեթով, հարավային պատին կից ավանդատնով և արևմտյան պատի չորս մուտքերով:

Հին շերտի որմնանկարներ. հեղինակն անհայտ: 1970-ական թթ. վերանորոգման ժամանակ ծածկվել են սպիտակ ներկով: Գաբրիել և Միքայել հրեշտակապետերի պատկերներ՝ առնված օվալաձև վարդյակների մեջ (ավագ խորանի ելուստներ):

Նոր շերտի որմնանկարներ. հեղինակն անհայտ: 1970-ական թթ. վերանորոգման ժամանակ ծածկվել են սպիտակ ներկով: Հրեշտակներ և ժապավեններով պարուրված ծաղկաշղթաներ (կողային խորանների գմբեթարդներ)[128]:

84. Ռումինիայի Սուչավա քաղաքի Զամկա հայոց վանքի Ս. Օգսենտ եկեղեցի և զանգակատան երկրորդ հարկ (Ս. Գրիգոր Լուսավորչի մատուռ)

Կառուցվել է՝ XV դար:

Որմնանկարները՝ XV-XVII դարեր:

---

[127] ***Տ. Սարգսյան,*** նշվ. աշխ., էջ 174:

[128] Նույն տեղում, էջ 174, ծնթ. 83:

Նկարագրություն - Ս. Օգսենտ եկեղեցին հարդարված է թեմատիկ տերունական և Աստվածամորը նվիրված պատկերներով, իսկ հեծյալ երեք մոգերին ներկայացնող տեսարանի վերին մասում հայերեն ներկագիր արձանագրություններ կան. «Հրեշտակ», «Մելքոն, Գասպար, Բաղդասար»: Զանգակատան երկրորդ հարկում, որտեղ Ս. Գրիգոր Լուսավորչի անվանակիր մատուռն է, պահպանվել է «Աստվածամոր նինջը» տեսարանը[129]:

85. Կիևի Ս. Սոֆիա տաճար

Կառուցվել է՝ XI դար:

Հայկական որմնանկարները՝ XVI-XVII դդ.:

Նկարագրություն - Կիևի Ս. Սոֆիա տաճարի Ս. Անտոնիոս և Ս. Թեոդոս սրբերի անվանակիր հարավային խորանը տեղի իշխաններն ու մետրոպոլիտը թույլատրել են տրամադրել եկվոր հայերին՝ հայկական ծիսակարգով պատարագ մատուցելու համար: Այս խորանում են եղել Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Հռիփսիմեի որմնանկարները, որոնց տակ փաստագրվել են հայերեն արձանագրություններ[130]:

86. Կաֆայի Ս. Ստեփանոս եկեղեցի

Կառուցվել է XV դարի առաջին կեսին:

Որմնանկարները՝ XVI-XVII դդ.:

Նկարագրություն - Եկեղեցին գտնվում է Ղրիմի թերակղզու Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հարավային հատվածում՝ «Կարանտին» կոչվող արգելոցում: Կառույցը միանավ դահլիճ է՝ արևմտյան մուտքով և երկթեք տանիքով:

Հին շերտի (հայկական շրջան) որմնանկարների հեղինակն անհայտ է[131]: Պատկերված են՝ «Բարեխոսություն» (խորանի գմբեթարդ, կրկնօրի-

[129] ***Տ. Հեթում քհն. Թարվերդյան,*** Ռումինիայի Զամկա և Հաճկատար որմնանկարազարդ հայոց վանքերը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 284 – Ա. Հ.:

[130] Դիվան հայ վիմագրության, պրակ VII, Ուկրաինա, Մոլդովա, կազմեց՝ ***Գր. Գրիգորյան,*** Երևան, 1996, էջ 152:

[131] XVIII դարում եկեղեցին «փոխանցվել» է հունական համայնքին: Ենթադրաբար նույն դարում էլ ստեղծվել են նոր շերտի հունական որմնանկարները՝ «Աստվածամոր Ս. Նշանը» (խորանի լուսամուտի վերին հատված, կից՝ հունարեն գրություն), «Հաղորդությունը» (խորանի ստորին հատված) և մարգարեների եղծված պատկերներ (խորանից աջ և ձախ, ըստ նրանցից մեկի հունարեն կցագրի՝ Ամբակում մարգարեն է): 1998 թ. եկեղեցին հանձնվել է ռուս-ուղղափառ համայնքին:

նակը գտնվում է ՀԱՊ-ում), «Ահեղ դատաստան» (արևմտյան պատ, պահպանվել է Քրիստոսի գահի ստորին մասը, վեցաթև քերովբեի ուրվագծերը և մի քանի կերպարների մնացորդներ)[132]:

87. Կաֆայի Ս. Թորոս եկեղեցի

Կառուցման ժամանակը՝ անհայտ:

Որմնանկարները՝ 1620 թ.:

Նկարագրություն - Որմնանկարները չեն պահպանվել, հեղինակն անհայտ է: Ըստ Խաչատուր Կաֆայեցու՝ ավագ խորանում պատկերված է եղել Տիրամայրը Մանկան հետ հորինվածքը: Եկեղեցում ներկայացված է եղել նաև Ս. Աստվածածնի մեկ այլ պատկեր, ինչպես նաև Ս. Գրիգոր Լուսավորիչը, Ս. Սարգիսն ու որդի Մարտիրոսը, Ս. Մինաս սքանչելագործը[133]:

88. Կաֆայի Ս. Հովհաննես ավետարանչի եկեղեցի

Կառուցվել է՝ [չի նշում]:

Որմնանկարները՝ XVII-XVIII դարեր:

Նկարագրություն - Եկեղեցին գտնվում է Կաֆա (Թեոդոսիա) քաղաքի հարավային հատվածում, «Կարանտին» կոչվող արգելոցում: Քաղաքի 1784 թ. հատակագծում կառույցը ներկայացված է որպես «հայկական եկեղեցի որմնանկարներով»: Հետագայում որմնանկարները ծածկվել են սպիտակ ներկի շերտով. այդպես էլ մնում են մինչ օրս: Բովանդակության, ինչպես նաև ներկի տակ առկա նրանց վիճակի մասին տեղեկություններ չկան[134]:

89. Սուդակի «Տասներկու առաքյալների եկեղեցի»

Կառուցման ժամանակն անհայտ է:

Որմնանկարները՝ XVII-XVIII դարեր:

Նկարագրություն - Գտնվում է Ղրիմի թերակղզու Սուդակ քաղաքի Աստագուերի միջնադարյան աշտարակի մոտ: Որմնանկարները չեն պահպանվել: Պատկերված են եղել Քրիստոսի տասներկու առաքյալները[135]:

---

[132] ***Տ. Սարգսյան,*** Ղրիմի հայկական որմնանկարչությունը, էջ 183-190:

[133] ***Խաչատուր Կաֆայեցու*** տարեգրությունը, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հ. Ա, կազմեց՝ ***Վ. Հակոբյան,*** Երևան, 1951, էջ 209, հմմտ.՝ ***Տ. Սարգսյան,*** նշվ. աշխ., էջ 173-174:

[134] ***Տ. Սարգսյան,*** նշվ. աշխ., էջ 174-175:

[135] Նույն տեղում, էջ 176-177:

90. Լվովի Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցի[136]

Կառուցվել է՝ 1360-ական թթ. (Ա. Հ.):

Որմնանկարները՝ Հին շերտի որմնանկարները՝ ենթադրաբար XVI դ. վերջ - XVII դ. սկիզբ, հեղինակն անհայտ[137]:

Նկարագրություն - Որմնանկարները հայտնաբերվել են 1920-ական թթ. եկեղեցու վերականգնման ժամանակ: Այս շերտից պահպանվել են հյուսիսարևելյան որմնամույթի և հարավային պատուհանի խոռոչում: Պատուհանի խոռոչի որմնանկարները ներկայացնում են «Քրիստոս Ամենակալ» հորինվածքը (մեդալիոնի մեջ), Հակոբոս առաքյալին, Հովհաննես ավետարանչին Պրոխորոնի հետ և մի ծնրադիր աղոթող աշխարհականի, որը կամ որմնանկարների հեղինակն է, կամ՝ կտիտորը:

Նոր շերտի որմնանկարները (մոդեռն ոճով) արվել են 1925-1927 թթ., Յան Հենրիկ Ռոզենի կողմից:

91. Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանք

Կառուցվել է՝ 1420-ական թթ. (Ա. Հ.):

Որմնանկարները՝ 1593-1622 թթ., հեղինակն անհայտ:

---

[136] Այստեղից սկսած հեղինակը ներկայացրել է XVII-XX դդ. 123 միավոր հուշարձանի տվյալների գրանցման միայն կաղապարային մասը: Դա պայմանավորում ենք նրանով, որ հիշյալ շրջանի հուշարձաններից 110-ը Ավետիս Ավետիսյանն ավելի վաղ հրատարակել էր «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածուում (էջ 259-278), ուստի այստեղ չի կրկնել արդեն հրատարակածը, կամ էլ դրանք նշել է հետագայում լրացնելու և ամբողջական հրատարակելու պայմանով: Մենք նպատակահարմար գտանք, նյութը լիարժեք դարձնելու համար, այստեղ վերահրատարակել նշված 110 միավորնկարագրությունը՝ իր կողմից հետագայում հավելված ևս 2 միավորի հետ միասին (ընդհանուրը՝ 112): Նշելի է այն, որ հեղինակն այս շրջափուլի հուշարձանների դեպքում չի հատկանշում դրանց կառուցման ժամանակը: Ասենք նաև, որ բացի հրատարակված միավորներից, հեղինակը ծրագրած է եղել հետագայում ընդգրկել ևս 14 միավոր նյութ՝ Ղրիմի եկեղեցիներից, Սուչավայի վանքից, Սիմֆերոպոլից, Հնչեշտից, նաև՝ Հովհաննավանքից և այլն – Ա. Հ.:

[137] Ջ. Գալստյանը, հղում անելով հայագետ Տադեուշ Մանկովսկու ուսումնասիրություններին, որմնանկարները թվագրում է XVI դ. II քառորդով (***Ջ. Գալստյան,*** Տադեուշ Մանկովսկին միջնադարյան Լեհաստանի հայկական արվեստի հետազոտող, «Լրաբեր» հաս. գիտ., 1966, թ. 3, էջ 78), Մ. Ղազարյանը՝ XVI դ. վերջ կամ XVII դ. սկիզբ (***Մ. Ղազարյան,*** Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 103-104), Յ. Վոլանսկան՝ XV-XVI դդ. (***P. Baranowski, Ż. Komar, J. Purchla, M. Wiśniewski, J. Wolańska,*** Katedra ormiańska we Lwowie i jej twórcy, Kraków, 2015, s. 265): Ըստ Գրիգորի Լոգվինի՝ հարկ է պարզել, թե 1527 թ. հրդեհից հետո որմնանկարները նկարվել, թե վերանկարվել են, քանզի երկրորդ դեպքում գործ ունենք XIV-XV դդ. որմնանկարչական բացառիկ նմուշների հետ (***Г. Логвин,*** Украино-Армянские средневековые художестенные связи, Հայ արվեստին նվիրված միջազգային երկրորդ սիմպոզիում. զեկուցումների ժողովածու, հ. III, Երևան, 1978, էջ 315):

Նկարագրություն - Ներկայումս պահպանվել են միայն գլխավոր եկեղեցու որմնանկարները: Որմնանկարված է եղել նաև գավիթը (այժմ՝ քանդված) և Ս. Հովհաննես մատուռը (որմնանկարներն ամբողջովին ոչնչացված են): Ներկայացնում են հիմնականում նորկտակարանային տեսարաններ, նաև սրբերի դիմանկարներ[138]:

92. Վասպուրականի Վարագավանք

Որմնանկարները՝ XVII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանվել են միայն Ս. Գևորգ ժամատան որմնանկարները, որոնք հիմնականում ներկայացնում են ազգային սրբերի պատկերներ: Որմնանկարված է եղել նաև Ս. Նշան եկեղեցին, որն այժմ ավերված է[139]:

93. Նոր Ջուղայի Ս. Բեթղեհեմ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ XVII դ., հիմնական մասի հեղինակն անհայտ է: Ավագ խորանի «Խաչելություն» տեսարանի հեղինակը նկարիչ Մինասն է:

Նկարագրություն - Ներկայացնում են աստվածաշնչյան թեմաներով տեսարաններ: Առաջին անգամ ականատես ենք լինում պատվիրատուի դիմանկարի պատկերմանն ավանդական նկարներում (խոջա Պետրոսը «Դրախտ» կոչվող տեսարանում)[140]:

Նոր շերտի որմնանկարները՝ XVIII դ., հեղինակն անհայտ:

Ներկայացնում են աստվածաշնչյան թեմաներով տեսարաններ, որոնց մի մասը հին շերտի որմնանկարների վերականգնված օրինակներն են[141]:

94. Նոր Ջուղայի խոջա Սաֆրազի ապարանք

Որմնանկարները՝ XVII դ. կես, չեն պահպանվել, հեղինակ՝ ենթադրաբար Մինաս:

---

[138] ***G. Millet, D. Talbot Rice,*** Byzantine Painting at Trebizond, London, 1936, pp. 138-143. ***Յ. Քիւրտեան,*** Ակնարկ մը Տրապիզոնի հայ արուեստի յիշատակութեանց վրայ, «Հասկ», Անթիլիաս, 1961, թիւ 7-8, էջ 298-302, թիւ 9, էջ 347-350:

[139] ***Հր. Հակոբյան,*** Վարագի Սբ Գևորգ եկեղեցու ժամատան որմնանկարները, «Հուշարձան» տարեգիրք, Բ, Երևան, 1993, էջ 113-120. ***Ա. Աղասյան, Հր. Հակոբյան, Մ. Հասրաթյան, Վ. Ղազարյան*** (այսուհետ՝ Ա. Աղասյան և այլք)***,*** Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009, էջ 238:

[140] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 23-24, 28. ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, Նոր Ջուղա, 1992, էջ 28:

[141] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 23:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել[142]:

95. Նոր Ջուղայի խոջա Պետրոս Վելիջանյանի ապարանքի գավիթ և սրահներ

Հին շերտի որմնանկարները՝ XVII դ. կես, հեղինակ՝ ենթադրաբար Մինաս:

Նկարագրություն - Ներկայացնում են միաֆիգուր պատկերներ (իշխաններ և այլ անձինք), նաև կենցաղային տեսարաններ[143]:

Նոր շերտի որմնանկարները՝ XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Այս շերտին են պատկանում գավթի և սրահների եվրոպական և պարսկական տարազներով միաֆիգուր կերպարները[144]:

96. Նոր Ջուղայի խոջա Սոլթանի (հետագայում՝ խոջա Աղանուր Տեր-Բարսեղյանի) առանձնատուն

Հին շերտի որմնանկարները՝ XVII դ. կեսեր, հեղինակ՝ ենթադրաբար Մինաս:

Նկարագրություն - Որմնանկարները ներկայացնում են դիմանկարների շարք, որոնցից առավել հետաքրքիր են շահ Աբաս II-ի և խոջա Սոլթանի դիմանկարները[145]:

Նոր շերտի որմնանկարները՝ XVIII դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

Այս շերտին են պատկանում Պետրոս I-ի, Իսրայել Օրու (այլ վարկածներով՝ պատկերված է Պֆալցի Կյուրֆուրստ Յոհան Վիլհելմը կամ Պետրոս I-ի մտերիմ Արտեմի Վոլինսկին) դիմանկարներն ու նախաճաշի տեսարանը[146]:

---

[142] ***C. Le Brun,*** Voyages par la Moscovie, en Perse, et aux Indes Orientalles, tom I, Amsterdam, 1718, p. 233 (նույն էջում հեղինակը թռուցիկ հիշատակում է նաև խոջա Հովհաննեսի, խոջա Մուրզայի և մի քանի այլ երևելի հայերի առանձնատների շքեղ ձևավորումների մասին, առանց նշելու դրանց բովանդակությունը). ***Առաքել Դաւրիժեցի,*** Պատմութիւն, Վաղարշապատ, 1896, էջ 410-411. ***Ա. Երեմեան,*** Նորագիւտ էջեր Նոր Ջուղայի որմնանկարչութիւնից, «Անահիտ», Փարիզ, 1939, № 1-2, էջ 24-32. ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», թ. 1, Երևան, 1938, էջ 52. ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն, XVII-XIX դդ., գիրք Ա, Երևան, 1971, էջ 13-14:

[143] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 16-18. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 40-41. ***Ռ. Дрампян,*** «Из истории армянского искусства», Сборник статей, Ереван, 2016, էջ 111-112:

[144] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 40-41:

[145] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 19-22. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 41-43:

[146] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 43-44. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 242:

97. Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան զանգակատուն

Որմնանկարները՝ 1664 թ., հեղինակ՝ ենթադրաբար Զաքարե ոսկերիչ, Ստեփանոս Լեհացի կամ տեր Հոհան[147]:

Նկարագրություն - Զանգակատան առաջին հարկում՝ ամբողջ հասակով պատկերված են Պողոս և Պետրոս առաքյալները, նաև վեցաթև սերովբեներ, ծաղկատերևային և այլ նախշազարդեր: Դրանց մի մասը նկարվել կամ վերանկարվել է XVIII դարում, Հովնաթանյան նկարիչների կողմից:

98. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի Ս. Հովսեփ Արիմաթացի եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ 1660-ական թթ., հեղինակներ՝ Հովհաննես Մրքուզ և ենթադրաբար՝ Մինաս[148]:

Նկարագրություն - Այս շերտի որմնանկարները ներկայացնում են Քրիստոսի և Գրիգոր Լուսավորչի կյանքը պատկերող տեսարանների շարքը, նաև «Չնչջող ակն» կոչվող խիստ հետաքրքիր հորինվածքը՝ Հովհաննես Մրքուզի ինքնանկարով[149]:

1711 թ. շերտի որմնանկարներ, հեղինակն անհայտ:

Այս շերտին է պատկանում հարավային կամարի Հովհաննես Մկրտչի պատկերը և մի քանի այլ որմնանկարներ[150]:

99. Նոր Ջուղայի Ս. Հակոբ Բաղաթայի եկեղեցի

Որմնանկարները՝ 1660-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ Կարապետ:

Նկարագրություն - Որմնանկարները ներկայացնում են տեսարաններ Հին և Նոր կտակարաններից և հիշեցնում են Ս. Ամենափրկիչ վանքի՝ Հովհաննես Մրքուզի որմնանկարները[151]:

---

[147] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 145-147. ***Ա. Գևորգյան,*** Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, «Պատմաբանասիրական հանդես», Երևան, 1982, թ. 2, էջ 78-79:

[148] ***Խաչատուր աբեղայ Ջուղայեցի,*** Պատմութիւն Պարսից, Վաղարշապատ, 1905, էջ 210:

[149] ***Յարութիւն Թ. Տէր-Յովհանեանց,*** Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, հատոր երկրորդ, Նոր Ջուղա, 1881, էջ 10-14. ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները..., թ. 1, էջ 53-54. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 23-29. ***Լ. Մինասեան,*** Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 50-52. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 32-34, 36-37. ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, էջ 29. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 241:

[150] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 45:

[151] Նույն տեղում, էջ 38. տե՛ս նաև ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, էջ 175:

100. Նոր Ջուղայի Ս. Մինաս եկեղեցի

Որմնանկարները՝ XVII դ. երկրորդ կես, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները նորկտակարանային թեմաներով են. առանձնանում է հատկապես «Ահեղ դատաստանը»[152]:

101. Ագուլիսի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Որմնանկարները՝ 1686 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան[153]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

102. Երևանի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

Երրորդ շերտի որմնանկարները՝ ենթադրաբար 1680-1690-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան[154]:

Նկարագրություն - Ամենայն հավանականությամբ այս շերտինն են արևելյան պատին նկարված Պետրոս և Պողոս առաքյալների որմնանկարները[155]:

Չորրորդ (վերին) շերտի որմնանկարները՝ 1890-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[156]:

---

[152] ***Լ. Ավագյան,*** Նոր Ջուղայի հայկական եկեղեցիները, «Էջմիածին», 2000, ԺԱ, էջ 98. ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, էջ 115-116. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 240:

[153] ***Զաքարիա Ագուլեցու*** Որագրությունը, Յերեվան, 1938, էջ 65. ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998, էջ 31:

[154] Գ. Լևոնյանն ու Ե. Մարտիկյանը հակված են որմնանկարները թվագրել 1680-ական թթ. (***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները..., թ. 2, էջ 25, ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 57-58), Մ. Ղազարյանը՝ 1690-ական թթ. (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 151-153): Տե՛ս նաև ***Յ. Քիւրտեան,*** Նորագիւտ հին որմնանկարներ Երեւանի սուրբ Պօղոս-Պետրոս Եկեղեցւոյն, «Անահիտ», Փարիզ, 1932/3, թիւ 3-6, էջ 56-63. ***Մ. Նավասարդյան,*** Երկու ճակատագիր. Սբ Պողոս-Պետրոս և Սբ Աստվածածին-Կաթողիկե եկեղեցիները, «Երևան-3» գիտաժողովի նյութեր, Երևան, 2012, էջ 93-108:

[155] Ըստ Կ. Ղաֆադարյանի, եկեղեցում եղել է որմնանկարների վեց շերտ, որոնցից հնագույնը՝ VI-VII դդ., իսկ ամենավերին շերտը՝ XIX դ. (***Կ. Ղաֆադարյան,*** Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները (այսուհետ՝ Երևան), Երևան, 1975, էջ 30-32): Պետրոս առաքյալի որմնանկարն այժմ վերականգնված վիճակում ցուցադրվում է ԵՊԹ-ում և ներկայացվում որպես XI-XIII դդ. ստեղծագործություն, թերևս Երվանդ Շահազիզի վկայաբերած Շ և Ձ տառերի պատճառով, որոնք նա թվական է համարում (***Ե. Շահազիզ,*** Հին Երևանը, Երևան, 2003, էջ 218-219): Սակայն, ըստ Ղաֆադարյանի, այդ որմնանկարներն արված են եղել յուղաներկով, ինչի կիրառումը բացառվում էր տվյալ դարերում (***Կ. Ղաֆադարյան,*** Երևան, էջ 31):

[156] ***Կ. Ղաֆադարյան,*** Երևան, էջ 30-32. ***Մ. Նավասարդյան,*** Երկու ճակատագիր. Սբ Պողոս-Պետրոս և Սբ Աստվածածին-Կաթողիկե եկեղեցիները, էջ 93-108:

Այս շերտի որմնանկարներն արվել են պաստառի վրա, 1893 թ. վերանորոգումից հետո: Պատկերվել են սյուժետային տեսարաններ («Ս. Երրորդություն», «Բաղարջակերաց գիշերը», «Ս. Ծնունդ», «Ս. Մկրտություն», «Խաչելություն», «Հարություն», «Համբարձում», «Փրկչի գալուստը»), նաև Ս. Մարիամ Աստվածածնի պատկերը:

103. Երևանի Ս. Կաթողիկե եկեղեցի

Որմնանկարները՝ 1690-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան[157]:

Նկարագրություն - Արևմտյան պատի վրա պատկերված են եղել Պողոս և Պետրոս առաքյալների, Ս. Սարգսի, Ս. Գևորգի, ինչպես նաև Հռիփսիմեի և Գայանեի որմնանկարները, որոնցից ոմանք վերանկարվել են 1819 թ.[158]:

104. Երևանի Ս. Զորավոր եկեղեցի

Որմնանկարները՝ 1690-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան[159]:

Նկարագրություն - Արևմտյան շքամուտքի վերնամասում պատկերված է «Քրիստոսի աղոթքը Գեթսեմանիի այգում» տեսարանը, ստորին հատվածում՝ «Տիրամայրը Մանկան հետ» հորինվածքը, իսկ աջ և ձախ կողմերում՝ Ս. Ստեփանոս Նախավկան և, ենթադրաբար՝ Ս. Լավրենտիոսը[160]:

105. Դարաշամբի Ս. Ստեփանոս Նախավկայի վանք (Մաղարդավանք)

Որմնանկարները՝ 1697 թ.[161], վերականգնվել են 1826 թ., հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

---

[157] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 151: Գ. Լևոնյանը որմնանկարները թվագրում է 1680-ական թթ. (***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 2, էջ 24-25), սակայն Կաթողիկե եկեղեցին հիմնովին վերակառուցվել է 1693-1695 թթ. (***Կ. Ղաֆադարյան,*** Երևան, էջ 21, 23):

[158] ***Կ. Ղաֆադարյան,*** Երևան, էջ 156-157. ***Մ. Նավասարդյան,*** նշվ. աշխ.***,*** էջ 93-108:

[159] Գ. Լևոնյանն այս որմնանկարները ևս թվագրում է 1680-ական թթ. (***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 24-25), սակայն Զորավոր եկեղեցին վերակառուցվել է 1693 թ. (***Կ. Ղաֆադարյան,*** Երևան, էջ 36-37): Տե՛ս նաև ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 151:

[160] ***Ա. Ենոքյան,*** Երևանի Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 223-231:

[161] ***Հ. Ղևոնդ Ալիշան,*** Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 515-516:

Նկարագրություն - Ներկայումս պահպանվել են հիմնականում գլխավոր եկեղեցու գմբեթի, առագաստների և ավագ խորանի որմնանկարները, որոնք ներկայացնում են բուսական զարդատարրեր և սերովբեների ու քերովբեների պատկերներ[162]:

106. Դարաշամբի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVII դարի վերջ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ներկայումս պահպանվել է սուրբ ձիավորների երկու որմնանկար:

107. Գնդեվանքի գլխավոր եկեղեցի

Նոր շերտի որմնանկարները՝ ենթադրաբար XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացած, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Հյուսիսային ավանդատան մուտքի վերին մասում պատկերված է եղել «Տիրամայրը Մանկան հետ» հորինվածքը (կրկնօրինակը գտնվում է ՀԱՊ-ում), որը հավանական է՝ եղել է «Մոգերի երկրպագությունը» տեսարանի մի հատվածը: Հարավային ավանդատան վերին մասում կանացի զգեստով և ուրարով մարդկային ֆիգուրի մնացորդներ են եղել, որը, ենթադրաբար, եղել է Սոփի իշխանուհին կամ Ս. Ստեփանոս Նախավկան[163]:

108. Նոր Ջուղայի Ս. Ստեփանոս եկեղեցի

Որմնանկարները՝ XVII դ. երկրորդ կես - XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Եկեղեցու որմնանկարները պատվել են ծեփի շերտով: Հատուկենտ երևացող պատկերները ներկայացնում են հիմնականում նորկտակարանային թեմաներով տեսարաններ[164]:

109. Շատիվանքի Ս. Սիոն եկեղեցի

Կառուցվել է 929 թ., վերակառուցվել 1655 թ.:

Որմնանկարները՝ XVII դ. երկրորդ կես - XVIII դ., հեղինակն անհայտ:

---

[162] ***Լ. Մինասեան,*** Իրանի հայկական վանքերը, Թեհրան, 1971, էջ 29-30. ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 31-33, 35. ***Ա. Հախնազարյան,*** Արտազի երեք վանքերը, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք 15, Երևան, 2012, էջ 221, 261-262, 286:

[163] ***Л. Дурново,*** Очерки изобразительного искусства средневековой Армении, էջ 148-149. ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 21-22. ***Ք. Ավետիսյան,*** Աստվածածնի պատկերագրությունը հայ միջնադարյան արվեստում, Երևան, 2015, էջ 146-147:

[164] ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, էջ 158. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 241:

Նկարագրություն - Ավագ խորանի հարավային հատվածում պահպանվել են «Աստվածամոր նինջը» պատկերը (ստորին մասում կա արձանագրություն՝ «ՎԵՐՆԱՏՈՒՆ»): Հարևանությամբ պահպանվել են ևս երկու տեսարանների արձանագրություններ՝ «ՈՏՆԱԼՈՒԱՅ» և «ՔԱՐԸՆԿԷՑ», իսկ ստորին հատվածում՝ երկթև քերովբեի պատկեր[165]:

110. Սաղմոսավանքի Ս. Աստվածածին եկեղեցի-գրատուն

Որմնանկարները՝ XVII դ. երկրորդ կես - XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Հիմնականում սրբերի (նաև՝ ազգային) պատկերներ են, ավետարանական թեմաներից՝ «Խաչելությունը», «Հարությունը» և, ենթադրաբար, «Ավետումը»[166]:

111. Թեոդոսիայի Ս. Սարգիս եկեղեցի

Վերին շերտի որմնանկարները՝ XVII-XVIII դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ավագ խորանի և թաղակիր կամարի միջև պահպանվել են չորս ավետարանիչների պատկերները և բուսական զարդատարրեր:

112. Ներքին կամ Դաշտ Ագուլիսի Ս. Ստեփանոս կամ Ս. Երրորդություն եկեղեցի

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - 1962 թ. ծեփաշերտի տակից հայտնաբերվել է Աստվածամոր պատկերի մի մասը: Որմնանկարների հատվածներ են հայտնաբերվել նաև հետագա տարիներին[167]:

113. Ներքին կամ Դաշտ Ագուլիսի Ս. Նշան (Ամառային) եկեղեցի

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - XIX դարավերջին դեռ տեսանելի են եղել որմնանկարների որոշ հատվածներ. «կպրե կարասը, դժոխքը, արքայութիւնը և այլն»[168]:

---

[165] Մանրամասն տե՛ս ***Կ. Մաթևոսյան,*** Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների ժողովածու, էջ 95-96:

[166] ***Աշ. Մանուչարյան,*** Սաղմոսավանք, Երևան, 2015, էջ 119-121:

[167] ***Գ. Աբգարյան,*** Ճանապարհներ, խոհեր, «Սովետական արվեստ», Երևան, 1962, թ. 2, էջ 60. ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 30-31:

[168] ***Ա. Արծրունի,*** Նամակ Ներքին-Ագուլիսից, «Մշակ», 1876, թ. 15, էջ 2. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 31:

114. Ագուլիսի Ս. Շմավոն եկեղեցի

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարված է եղել գմբեթը, կամարները, ավագ խորանն ու աղոթասրահը[169]:

115. Շոռոթի Ս. Աստվածածին եկեղեցի (Կուսանաց անապատ)

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար տեր Հոհան կամ Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Հիմնականում պատկերված են եղել ծաղկանկարներ: Խորանի նիստերի վերին մասերում եղել են նաև ինը սրբապատկերներ[170]:

116. Շոռոթի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի և սրահ-գավիթ

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Գավթի կամարներին կից եղել են ծաղկային մոտիվներով որմնանկարներ[171]:

117. Շոռոթի Ս. Հակոբ Հայրապետ եկեղեցի

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Որմնանկարված է եղել գմբեթը (պատկերված են եղել չորս ավետարանիչները) և ավագ խորանը[172]:

118. Աբրակունիսի Ս. Գևորգ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Ավագ խորանում եղել են Աստվածամոր երկու և առաքյալների չորս պատկերներ[173]:

---

[169] ***В. Сысоев,*** Нахичеванский край. отчет о поездке летом 1927 г., ‘‘Известия Азкомстариса’’, вып. 4, тетрадь 2, с. 162. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 31:

[170] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 39-40:

[171] ***Արիստակէս վրդ. Սեդրակեան,*** Հնութիւնք հայրենեաց ի գաւառին Երնջակու, Վաղարշապատ, 1872, էջ 130. ***Հ. Ղեւոնդ Ալիշան,*** Սիսական, էջ 355. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 38-39:

[172] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 39:

[173] Նույն տեղում, էջ 97:

Նոր շերտի որմնանկարները՝ 1875 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ աստապատցի Հակոբ Տեր-Աբրահամյան:

Նկարագրություն - Դահլիճի մույթերի կամարները զարդարված են եղել ծաղկատերևային զարդատարրերով[174]:

119. Ագուլիսի Ս. Թովմա եկեղեցի

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Տաճարի ներսում հիմնականում բուսական և այլ զարդատարրեր են, արևմտյան շքամուտքի բարավորին՝ Մարիամ Աստվածածնի, Մարիամ Մագդաղենացու և Հայր Աստծու պատկերներն են[175]:

120. Ագուլիսի Ս. Քրիստափոր եկեղեցի (Մայր եկեղեցի)

Որմնանկարները՝ XVII-XVIII դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Որմնանկարները նման են եղել Ս. Թովմայի տաճարի որմնանկարներին: Թմբուկի վերնամասի ութ կամարաղեղների մեջ պատկերված են եղել չորս վեցաթև սերովբեներ և չորս հայ սրբերի դիմանկարներ՝ Գրիգոր Լուսավորիչ, Մեսրոպ Մաշտոց, Սահակ Պարթև, Ներսես Ա Կաթողիկոս[176]:

121. Էջմիածնի Ս. Գայանե եկեղեցու սրահ-գավիթ

Որմնանկարները՝ XVII դ. վերջ - XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պատկերված են «Ընծայումն տաճարին», «Խաչելություն» տեսարանները, Պողոս, Պետրոս առաքյալների և կաթողիկոս Եղիազար Այնթապցու պատկերները և Քրիս

122. Մեղրիի Փոքր Թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ 1700 թ., հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Ներկայացնում են տեսարաններ Հին և Նոր կտակարաններից, նաև սրբերի պատկերներ: Համանման զարդատար-

---

[174] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 97:

[175] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 59. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 20-26. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 235-236:

[176] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 60. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 26-27, 30, նույնի՝ Ագուլիս, Երևան, 1986, էջ 36. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 236:

ներ կան նաև Ագուլիսի Ս. Թովմայի տաճարի ներքին հարդարանքում: Դրանք բավականին նման են Ագուլիսի Ս. Թովմայի տաճարի զարդատարրերին: Որմնանկարներից մեկի ստորին մասում պահպանվել է թվականը ներառող արձանագրությունը՝ զ(Ռ)ՃԽԹ (1700):

Նոր շերտի որմնանկարները՝ 1793 թ., հեղինակ՝ աստապատցի Աստվածատուր քահանա:

Այս շերտին են պատկանում խորանի և խորանին կից չորս սրբերի պատկերները:

123. Թիֆլիսի Վախթանգ VI թագավորի պալատ

Որմնանկարները՝ 1710-ական թթ., չեն պահպանվել, հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել[177]:

124. Ս. Էջմիածնի Մայր տաճար

Որմնանկարները՝ 1712-1721 թթ., հեղինակ՝ ենթադրաբար Նաղաշ Հովնաթան:

Նկարագրություն - Ծաղկատերևային զարդատարրերով նկարազարդվել է տաճարի գմբեթը[178]: Պատերին տեղ են գտել նաև Հովնաթանին վերագրվող «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ», «Աղոթող զինվոր» և «Հայկ նահապետ» (կամ՝ Ս. Մինաս) որմնանկարները (վերջին երեքն այժմ գտնվում են ՀԱՊ-ում)[179]: Հովնաթանին են վերագրվում նաև բեմի ճակատամասի մարմարապատ երեսին պատկերված «Տիրամայրը Ման-

---

[177] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 154-155:

[178] ***Գ. Հովսեփյան,*** Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 272-312. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 236:

[179] Ե. Մարտիկյանը Տրդատի ընտանիքի խմբանկարն ու «Հայկ նահապետը» համարում է Աբրահամ Մշեցի կաթողիկոսի (1729-1734 թթ.) շրջանի գործեր և վերագրում Նաղաշի որդուն՝ Հակոբ Հովնաթանյանին (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 82-84. տե՛ս նաև ***Ռ. Դրամպյան,*** «Из истории армянского искусства», էջ 117): Ինչ վերաբերում է բովանդակությանը, «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ» և «Աղոթող զինվոր» պատկերները կազմել են «Հրեշտակի հայտնությունը Գրիգոր Լուսավորչին» տեսարանի առանձին հատվածները (և ոչ թե «Հայաստանում քրիստոնեության ընդունման» տեսարանի, ինչպես համարվում էր մինչ այդ): Դա պարզել է Ռ. Դրամբյանը 1834 թ. Էջմիածնի վանքին նվիրաբերված մի նկարի հետ համեմատության արդյունքում, որը փաստացի որմնանկարի հեռավոր կրկնօրինակն է (Очерки по истории армянского изобразительного искусства, Ереван, 1979, էջ 106-107. ***Ռ. Դրամպյան,*** նշվ. աշխ., էջ 135-136):

կան հետ» (կենտրոնում), Ս. Ստեփանոսի և Ս. Փիլիպպոսի (ձախ և աջ կողմերում, աստիճանների տակ) պատկերները[180]:

1720-ական թվականների որմնանկարներ, հեղինակներ՝ ենթադրաբար Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ:

Ավարտել են բեմի ճակատային մասի ձևավորումը՝ նկարելով տասներկու առաքյալներին[181]:

Հովնաթան Հովնաթանյանի ստեղծած որմնանկարներ՝ 1778-1780, 1785-1786 թթ.:

Վերանկարել է գմբեթը և ավելացրել աղոթասրահի մնացյալ մասի որմնանկարները[182]:

Հովնաթանին է վերագրվում նաև Մայր տաճարի Իշման ս. Սեղանի ամպհովանու նկարազարդումը, որի գմբեթային հատվածում պատկերված են «Տիրամայրը Մանկան հետ» հորինվածքը, չորս ավետարանիչների, ինչպես նաև, Հոր, Որդու և Ս. Հոգու պատկերները[183]: Ամե-

---

[180] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները..., էջ 24-29. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 79-80. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 158-163: Բեմի ճակատային մասի մարմարապատումը կատարվել է Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի օրոք, 1720 թ. (***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն (այսուհետ՝ Ջամբռ), Վաղարշապատ, 1873, էջ 28), այնպես որ, եթե Աստվածածնի պատկերի հեղինակը Հովնաթանն է, այն պետք է արված լինի 1720-1721 թթ., մինչև նկարչի մահը: Ռ. Դրամբյանը, սակայն, Աստվածածնի պատկերը վերագրում է Հովնաթանի որդիներին և թվագրում 1725-1728 թթ.-ով՝ Աստվածատուր կաթողիկոսի մահվան (1725 թ.) և Կարապետ կաթողիկոսի փաստացի գահին նստելու (1728 թ.) տարեթվերի միջանկյալ շրջանով: Ըստ նրա՝ դա է պատճառը, որ դրանք չեն հիշատակվում «Ջամբռ»-ի ոչ մեկ, և ոչ էլ մյուս կաթողիկոսներին նվիրված գլուխներում (Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 108):

[181] Տասներկու առաքյալները, ըստ Սիմեոն Երևանցու, բեմի ճակատամասին նկարել է տվել Կարապետ Ուլնեցի (Զեյթունցի) կաթողիկոսը 1726-1729 թթ. (***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 28): Մ. Ղազարյանի ենթադրությամբ, Հակոբն ու Հարությունը բեմի ճակատամասն ավարտել են ըստ Նաղաշ Հովնաթանի գծագրերի (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 161-163): Ե. Մարտիկյանը, բացի տասներկու առաքյալներից, «Աստվածամոր և մանկան» որմնանկարը ևս վերագրում է Հակոբ Հովնաթանյանին (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 90-93): Տե՛ս նաև ***Ռ. Դրամբյան,*** «Из истории армянского искусства», էջ 120-121:

[182] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 100-103, ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 177-181, 183-186. Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 110-111:

[183] Իշման ս. Սեղանի ամպհովանին կառուցվել է Եղիազար Այնթապցի կաթողիկոսի օրոք (1681-1691 թթ.) և նկարազարդվել (կամ՝ վերանկարազարդվել) Ղուկաս Կարնեցի կաթողիկոսի օրոք (1780-1799 թթ.): 2001 թ. տեղափոխվել է Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի: Տե՛ս ***Ք. Ավետիսյան,*** Իշման Սեղանի նկարազարդումները, «Հայ արվեստ», 2007, թիվ 1, էջ 32-34: Ե. Մարտիկյանն ամպհովանու նկարազարդումները համարում է Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություն (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 65-66):

նայն հավանականությամբ, Հովնաթան Հովնաթանյանը վերանկարել է նաև բեմի մարմարյա ճակատամասի պատկերաշարը[184]:

125. Նոր Ջուղայի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ 1718 թ., հեղինակ՝ Տեր Ստեփանոս[185]:

Նկարագրություն - Որմնանկարները ներկայացնում են հիմնականում նորկտակարանային թեմաներով տեսարաններ:

126. Նոր Ջուղայի Ս. Կատարինե մենաստան (Կուսանաց վանք)

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ներկայացնում են Քրիստոսի, նրա աշակերտների, Աստվածածնի պատկերները և այլք[186]:

127. Նոր Ջուղայի Ս. Նիկողայոս եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները ներկայացնում են հիմնականում ծաղկատերևային զարդատարրեր[187]:

128. Նոր Ջուղայի Ս. Հովհաննես (Շաւէլենց) եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[188]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չունենք:

129. Նոր Ջուղայի Ս. Սարգիս (նախկին Ամենափրկիչ) եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները հետագայում պատվել են ծեփի շերտով: Այժմ բացված են միայն ավագ խորանի Քրիստոսի պատկերը՝ շրջապատված առաքյալներով և հրեշտակներով, և մի քանի որմնանկար աղոթասրահում[189]:

---

[184] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 197. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 103-104:
[185] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 45. ***Լ. Մինասեան,*** նշվ. աշխ., էջ 57:
[186] Նույն տեղերում, համապատասխանաբար՝ էջ 23, 108:
[187] Նույն տեղերում, համապատասխանաբար՝ էջ 23, 144:
[188] Նույն տեղերում, համապատասխանաբար՝ էջ 45, 181:
[189] ***Լ. Մինասեան,*** նշվ. աշխ., էջ 149:

130. Նոր Ջուղայի Ս. Սարգիս (Օհանայ վանք) եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[190]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չունենք:

131. Սալայի Սուրբ Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ավագ խորանի քիվատակին պահպանվել է առաքյալների շարքը, կենտրոնական պատուհանից աջ՝ խաչը պահած երկու վեցաթև սերովբեներ, որոնց ստորին թևերի միջև զետեղված է հայերեն երկտող արձանագրություն:

132. Աշտարակի Ս. Մարիանե եկեղեցու արևմտյան գավիթ-ժողովրդանոց

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պատկերված են եղել սրբերի պատկերներ, ողջ հասակով, իսկ գլխավոր եկեղեցու արևմտյան մուտքի բարավորին՝ «Տասը կույսերի առակը»[191]: Հետագայում ամբողջը պատվել է սպիտակ ծեփով: 2007 թ. բացվել է «Տասը կույսերի առակը» տեսարանի վերին հատվածը (Քրիստոսի և աջակողմյան երեք կույսերի դեմքի հատվածները):

133. Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ 1739 թ., հեղինակն անհայտ:

Պահպանվել են ավագ խորանի, արևելյան և հյուսիսային պատերի, հյուսիսարևելյան և հարավարևելյան մույթերի որոշ որմնանկարներ, որոնք ներկայացնում են սրբերի պատկերներ և մեկ սյուժետային տեսարան՝ «Խաչելությունը»[192]:

Նոր շերտի որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., հեղինակն անհայտ:

---

[190] ***Լ. Մինասեան,*** նշվ. աշխ., էջ 187:

[191] ***Ե. Շահազիզ,*** Աշտարակի պատմությունը, Երևան, 1987, էջ 170. ***Ս. Սաղումյան,*** Աշտարակ, Երևան, 1998, էջ 135:

[192] ***Ա. Եսայան,*** Консервация настенной живописи в церкви Сурб Акоп в Канакере, «Հուշարձան» տարեգիրք, Գ, Երևան, 2005, էջ 64-72:

Նկարագրություն - Ներկայացրել են սրբերի պատկերներ և դեկորատիվ զարդատարրեր՝ մասամբ արված հին շերտի որմնանկարների վրա, որոնցից առանձնացվել և տեղափոխվել են ՀԱՊ:

134. Ձնաբերդի (Նախճավան գավառ) Ս. Գրիգոր եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ ենթադրաբար 1730-40-ական թթ., հեղինակներ՝ ենթադրաբար Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ:

Ըստ Արգամ Այվազյանի՝ այս շերտին են պատկանել Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի, բեմառէջքի տասներկու առաքյալների և մի քանի այլ որմնանկարներ[193]:

Նոր շերտի որմնանկարները՝ 1867 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ներկայացնում է որմնանկարների բավականին մեծ շարք՝ թեմատիկ տեսարաններով, սրբերի դիմապատկերներով և ծաղկատերևային զարդատարրերով: Այս ընթացքում նաև վերանկարվել են նախորդ շերտի մի քանի որմնանկարներ[194]:

135. Էջմիածնի հին վեհարան

Որմնանկարները՝ 1730-ական թթ. վերջ - 1740-ական թթ. սկիզբ, հեղինակներ՝ ենթադրաբար Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ:

Նկարագրություն - Գահակալական դահլիճն («Ծաղկյա սրահ») ու կաթողիկոսական աշխատասենյակը նկարազարդված են ծաղկատերևային զարդագոտիներով և այլ պատկերներով[195]:

136. Երնջակի Ս. Կարապետ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ 1740 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակներ՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ[196]:

Այս շերտին են պատկանել գմբեթի, ավագ խորանի (որմնախորշերում պատկերված են Աստվածամայրն ու Պողոս և Պետրոս առաքյալները), դահլիճի որմնախորշերը գոտևորող որմնանկարները, որոնք նման են

---

[193] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 172-173. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 67, 74, 83-84:

[194] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 67, 74, 83-84:

[195] Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 108. ***Գ. Հովսեփյան,*** Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում, էջ 285-286. ***Բ. Դրամբյան,*** «Из истории армянского искусства», էջ 152:

[196] ***Մեսրոպ արք. Սմբատեանց,*** Նկարագիր սուրբ Կարապետի Վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 6, 15 (էջ 6-ում թվականը սխալմամբ նշված է ՌՃՀԹ, իսկ էջ 15-ում որմնանկարների հեղինակ է անվանվում Նաղաշ Հովնաթանը):

ինչպես Հակոբի և Հարությունի ծաղկած Հայսմավուրքին (ՄՄ ձեռ. 1533), այնպես էլ Զնաբերդի Ս. Գրիգոր եկեղեցու որմնանկարներին[197]:

Նոր շերտի որմնանկարները՝ 1870-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ աստապատցի Հակոբ Տեր-Աբրահամյան:

Որմնանկարվել են դահլիճի հյուսիսային և հարավային որմախորշերն ու նրանց հարակից տարածքը, որոնք ներկայացնում են հիմնականում ծաղկազարդեր և հրեշտակների պատկերներ[198]:

137. Էջմիածնի Ղազարապատ հյուրատուն

Որմնանկարները՝ 1742 թ., հեղինակներ՝ Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ[199]:

Նկարագրություն - Որմնանկարների բովանդակության և վիճակի մասին տեղեկություններ չկան:

138. Մեղրիի Անապաստանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ 1745 թ., հեղինակն անհայտ:

Այս շերտինն են խորանի, հարավարևելյան և հյուսիսարևելյան մույթերի որմնանկարները:

Նոր շերտի որմնանկարները՝ 1793 թ., հեղինակ՝ Աստվածատուր քհն. Աստապատցի: Այս շերտից են խորանի և ավանդատների մուտքերի միջև պատկերված հրեշտակապետերի երկու որմնանկարները:

139. Մեղրիի Մեծ թաղի Ս. Աստվածածին եկեղեցի

Առաջին շերտի որմնանկարները՝ 1745 թ., հեղինակն անհայտ:

Այս շերտին է պատկանում Պողոս առաքյալի որմնանկարը (ավագ խորանի և հարավային ավանդատան մուտքի միջև):

Երկրորդ շերտի որմնանկարները՝ ենթադրաբար 1793 թ., հեղինակ՝ Աստվածատուր քհն. Աստապատցի:

---

[197] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», Երևան, 1938, թ. 4, էջ 51. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 93-94, ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 172-173. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 37-38, 58, 63-65, 67:

[198] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 67:

[199] ՄՄ Կաթողիկոսական դիվան, թղթ. 1, վավ. 13, էջ 4, 50. ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, էջ 52. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 170-172:

Այս շերտին են պատկանում խորանի Միքայել հրեշտակապետի, հյուսիսարևելյան մույթի Ս. Գևորգի և հարավարևելյան մույթի Ս. Մինասի որմնանկարները (վերջին երկուսը վերանկարվել են 1840-ական թթ.):

Երրորդ շերտի որմնանկարները՝ 1844-1848 թթ., հեղինակ՝ Մանուկ Ստեփանոսենց (Ստեփանոսյանց):

Եկեղեցու որմնանկարների մի մասը վերանկարվել է այս ընթացքում, նաև ավելացվել են որոշ սյուժետային տեսարաններ:

140. Ռամիսի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ XVIII դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Լուսանկարում պահպանվել են ավագ խորանի ծաղկատերևային նախշազարդերի որոշ հատվածներ:

Նոր շերտի որմնանկարները՝ XIX դ. II կես, այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ըստ Արգամ Այվազյանի՝ այս շերտին են պատկանել եկեղեցու ավագ խորանի, բեմի ճակատի, մույթերի և արևմտյան պատի որմնանկարները, որոնք ներկայացնում են ծաղկազարդ մոտիվներ և հրեշտակների պատկերներ (դրանց մի մասն արվել է XVIII դ. շերտի վրա)[200]:

141. Սուրխաթի (Ղրիմ) Ս. Խաչ վանք

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ[201]:

Նկարագրություն - Գլխավոր եկեղեցու ավագ խորանի գմբեթարդին պատկերված է եղել «Բարեխոսություն» տեսարանը (չի պահպանվել), հյուսիսային ճակատին՝ «Աստվածամայրը Մանկան հետ» հորինվածքը:

142. Էջմիածնի Ս. Հռիփսիմե տաճար

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակներ՝ ենթադրաբար Հակոբ և Հարություն Հովնաթանյաններ:

Նկարագրություն - Բեմի ճակատային մասում ներկայացված են Տիրամայրը Մանկան հետ և տասներկու առաքյալները, իսկ ծայրերին՝ Ս. Ստեփանոս և Փիլիպոս սարկավագները: Պատկերաշարն իր հաջորդականությամբ և կերպարների պատկերագրությամբ բավականին մոտ է Մայր տաճարի բեմառէջքի պատկերաշարին:

---

[200] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 97-98:

[201] ***О. Домбровский, В. Сидоренко,*** Солхат и Сурб Хач, Симферополь, 1978, էջ 107-108:

143. Քանաքեռի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանվել են ավագ խորանի, հյուսիսարևելյան և հարավարևելյան մույթերի որոշ որմնանկարներ, որոնք ներկայացնում են սրբերի պատկերներ և «Ավետում» տեսարանը (հյուսիսարևելյան մույթին պատկերված է Գաբրիել հրեշտակապետը ծաղկեփնջով, իսկ հարավարևելյան մույթին՝ Աստվածամայրը):

144. Երևանի Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարներ են պահպանվել ավագ խորանում, չորս մույթերի վրա և մկրտության ավազանի վերին մասում: Պատկերված են բուսական զարդատարրեր, սրբերի պատկերներ և մեկ թեմատիկ տեսարան («Ավետում»?):

145. Աստապատի Ս. Վարդան եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Տաճարն ամբողջովին որմնանկարված է եղել: Բովանադակային մասով հայտնի է միայն, որ չորս առագաստներին պատկերված են եղել չորս ավետարանիչները[202]:

146. Ֆանայիի (Խոյ գավառ) Հոգեվանք

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանվել են ավագ խորանի որմնանկարների որոշ հատվածներ, որոնք ներկայացնում են ծաղկային զարդատարրեր[203]:

147. Մահլազանի (Խոյ գավառ) Ս. Խաչ եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանվել են տերունական պատկերաշարից տեսարաններ, սրբապատկերներ և դեկորատիվ զարդատարրերի որոշ հատվածներ:

---

[202] ***Ե. Լալայեան,*** Նախիջեւանի ոստիկանական շրջան կամ Նախճաւան, «Ազգագրական հանդէս», գիրք XV, Տփխիս, 1907, էջ 147. ***Հ. Ոսկեան,*** Վասպուրական-Վանի վանքերը, Բ մաս, Վիեննա, 1942, էջ 504-505. ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 50:

[203] ***A. Alpago-Novello,*** Sorhul /Documents of Armenian architecture, 20/, Milano, 1989, էջ 49. Տե՛ս նաև Խոյի Ֆանայի գիւղի հայոց Հոգեվանքը՝ իր հոգեվարքն է ապրում, «Ալիք», Թեհրան, 21.07.2015, թիւ 147(22245), էջ 4, 8:

148. Խոյ քաղաքի Ս. Սարգիս եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանվել են սերովբեների, սրբերի պատկերներ և դեկորատիվ զարդատարրեր:

149. Ալափարսի Ս. Հովհաննես (Ծիրանավոր) եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Խիստ եղծված վիճակում պահպանվել են Ս. Հակոբ Մծբնեցու ամբողջ հասակով պատկերը, զանգակատան մի որմնանկարը և սաղավարտով գլխի հատվածը[204]:

150. Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ ենթադրաբար XVIII դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Հին շերտի որմնանկարները տեղ են գտել ավագ խորանում, արևելյան պատի աջ հատվածում, և չորս մույթերին: Ներկայացնում են թեմատիկ տեսարաններ («Ավետում», «Մկրտություն», «Խաչելություն», «Հարություն», «Համբարձում», «Հոգեգալուստ» (տե՛ս ներդիր, նկ. 15), «Ս. Ստեփանոսի քարկոծումը»), նաև Ս. Միքայել հրեշտակապետի, Ս. Գևորգի, Ս. Սարգսի և այլ սրբերի պատկերներ[205]: Այս որմնանկարներից որոշներն անհաջող կերպով վերանկարվել են 1906 թ.:

Նոր շերտի որմնանկարները՝ 1906 թ., հեղինակն անհայտ:

Այս շերտին են պատկանում խորանի և հյուսիսային ավանդատան մուտքի միջև գտնվող Տիրամոր որմնանկարը, բեմի ճակատային հատվածի ծաղկային պատկերները և ենթադրաբար, նաև «Ավետում» տեսարանը[206]:

151. Թիֆլիսի Ջիգրաշենի Ավետյաց եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար 1780-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ Հովնաթան Հովնաթանյան[207]:

Նկարագրություն - Որմնանկարների բովանդակության մասին տեղեկություններ չունենք:

---

[204] Նշենք, որ նմանօրինակ որմնանկարներ են պահպանվել նաև ներկայիս Հրազդան համայնքի Կաքավաձոր թաղամասի Ս. Աստվածածին եկեղեցու ավագ խորանի երկու կողմում. հասակով մեկ պատկերված են Ս. Գրիգոր Լուսավորիչն ու Ս. Ստեփանոս Նախավկան՝ սևաներկ մակագրություններով, թվագրելի են XIX-XX դդ. - Ա.Հ.:

[205] ***Ա. Ավետիսյան,*** Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցին, «Լրաբեր» հաս. գիտ., 2018, թ. 3, էջ 267-275:

[206] Նույն տեղում, էջ 275-276:

[207] ***Մ. Ղազարյան***, նշվ. աշխ., էջ 206-207:

152. Թիֆլիսի Հայոց վանք (Հարանց վանք)

Որմնանկարները՝ ենթադրաբար 1780-ական թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ Հովնաթան Հովնաթանյան[208]:

Նկարագրություն - Հին լուսանկարներում երևում են ավետարանիչների (առագաստներին), հրեշտակների պատկերներ, ծաղկային զարդատարրեր (մույթերին) և այլ որմնանկարներ:

153. Երևանի խանի պալատ

Որմնանկարները՝ 1780-1790-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Հովնաթան Հովնաթանյան[209]:

Նկարագրություն - Ներկայացրել են տարբեր գործիչների (այդ թվում՝ Հուսեին խանի) դիմանկարներ և զարդանախշային որմնանկարներ:

154. Սղնախի (Կախեթ) Բադբիի Ս. Նինո վանք

Որմնանկարները՝ 1780-1790-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Հովնաթան Հովնաթանյան[210]:

Նկարագրություն - Որմնանկարների բովանդակության մասին տեղեկություններ չունենք:

155. Թիֆլիսի Նորաշենի Ս. Աստվածածին եկեղեցի

Հին շերտի որմնանկարները՝ ենթադրաբար 1790-ական թթ., հեղինակ՝ Հովնաթան Հովնաթանյան[211]:

Նկարագրություն - Ըստ Մանյա Ղազարյանի՝ այս շերտին են պատկանում «Մոգերի երկրպագությունը», «Հիսուսը և սամարացի կինը», «Ռեբեկան՝ Իսահակի հարսնացուն», «Հուդիթը սպանում է Օլոֆեռնին» և մի քանի այլ տեսարաններ[212]:

Նոր շերտի որմնանկարները՝ 1830-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Մկրտում Հովնաթանյան[213]:

Այս շերտին են պատկանում եկեղեցու թեմատիկ տեսարանների և սրբապատկերների մեծ մասը:

---

[208] ***Մ. Ղազարյան***, նշվ. աշխ., էջ 206-207:
[209] Նույն տեղում, էջ 207-209:
[210] Որմնանկարները Հովնաթանյանին վերագրել է Գրիգոր (Գիգո) Շարբաբչյանը (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 206):
[211] Նույն տեղում, էջ 206-207:
[212] Նույն տեղում, էջ 217:
[213] Նույն տեղում, էջ 217-218:

156. Նոր Ջուղայի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Որմնանկարները՝ 1790 թ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Եկեղեցու պատերը ներսից ամբողջովին եղել են որմնանկարված, և հետագայում պատվել են ծեփով: XX դ. վերջին, նորոգումների ընթացքում բացվել են մի քանի որմնանկարներ, որոնցից են «Ավետումը», «Հաղորդությունը» և այլն[214]:

157. Նոր Ջուղայի Մարգար Լղվորյանի առանձնատուն

Որմնանկարները՝ 1790-ական թթ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները ներկայացնում են պարսից տիրակալների այցելությունները[215]:

158. Ագուլիսի Մեծ Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVII-XVIII դդ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[216]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

159. Փառակայի Ս. Ծմավոն եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII-XIX դդ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[217]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

160. Հին Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանք

Որմնանկարները՝ ենթադրաբար XVIII-XIX դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[218]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

---

[214] ***Լ. Մինասեան,*** Նոր Ջուղայի եկեղեցիները, էջ 101-102:

[215] ***Ա. Երեմեան,*** Էջեր Նոր Ջուղայի մի հին ապարանքի և որմնանկարների պատմութիւնից, «Անահիտ», Փարիզ, 1937, թ. 5-6. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 47-49. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 242:

[216] ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, Երևան, 1986, էջ 30:

[217] Նույն տեղում, էջ 62:

[218] Նույն տեղում, էջ 104:

161. Կարճևանի (Սյունիքի մարզ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ 1793 թ., հեղինակ՝ Աստվածատուր քհն. Աստապատցի:

Նկարագրություն - Պահպանվել են Միքայել հրեշտակապետի, Ս. Գևորգի և Ս. Սարգսի որմնանկարները խորանում և խորանին կից, նաև որոշ նախշազարդեր խորանում և հյուսիսարևելյան մույթին:

162. Հաֆթվանի (Սալմաստ գավառ) Ս. Գևորգ եկեղեցու գավիթ

Որմնանկարները՝ 1819 թ., հեղինակն անհայտ[219]:

Նկարագրություն - Եկեղեցու գավթի մույթերին ու պատերի որոշ հատվածներում պահպանվել են որոշ որմնանկարներ, որոնք ներկայացնում են սրբերի պատկերներ, նախշազարդեր ևն:

163. Մուղնու Ս. Գևորգ եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ. առաջին կես, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ավագ խորանում, արևելյան և հյուսիսային պատերին պատկերված են մի քանի որմնանկարներ, որոնք ներկայացնում են սրբերի պատկերներ և թեմատիկ տեսարաններ («Տրդատի թագադրությունը Գրիգոր Լուսավորչի կողմից», «Գաբրիել հրեշտակապետը սուր է հանձնում Ս. Գևորգին»)[220]:

164. Թիֆլիսի Ս. Գևորգ առաջնորդանիստ եկեղեցի

Երկրորդ շերտի որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ. I կես, հեղինակն անհայտ[221]:

Թեմատիկ տեսարանների մեծ մասն այս շերտից է: 1867 թ. դրանց մի մասը վերանկարվել է:

Երրորդ շերտի որմնանկարները՝ XIX դ. վերջ կամ XX դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

---

[219] ***Ս. Կարապետյան,*** «Հայաստանի պատմություն», հ. Բ, Սալմաստ, Երևան, 2017, էջ 219-222:

[220] ***Ս. Սաղումյան,*** Աշտարակ, էջ 134-135. ***Կ. Մաթևոսյան,*** Մուղնու Սուրբ Գևորգ վանքը, Էջմիածին, 2009, էջ 25-31. ***Ա. Պապոյան,*** Մուղնու Սբ Գևորգ եկեղեցու որմնանկարների վերստեղծման սկզբունքները, «Հուշարձան» տարեգիրք, ԺԱ, Երևան, 2016, էջ 40-46:

[221] Առաջին շերտի որմնանկարները (1780-ական թթ., հեղինակ՝ ենթադրաբար Հովնաթան Հովնաթանյան) չեն պահպանվել (***K. Matevosyan, A. Avetisyan,*** Surb Gevorg Cathedral. The Frescoes, Yerevan, 2015, էջ 30):

Այս շերտինն են թմբուկի տասներկու առաքյալների, առագաստների չորս ավետարանիչների՝ իրենց խորհրդանշաններով, նաև մի քանի այլ, առավել փոքրածավալ որմնանկարներ[222]:

Չորրորդ շերտի որմնանկարները՝ 1922-1923 թթ., հեղինակ՝ Գևորգ Բաշինջաղյան:

Բաշինջաղյանը եկեղեցում ստեղծել է չորս որմնանկար. «Աղոթք Գեթսեմանիում», «Հուդայի զղջումը», «Հիսուսը քայլում է ծովի վրայով» և «Սերմնացանի առակը»:

165. Թիֆլիսի Ս. Նշան (Ս. Նիկողայոս) եկեղեցի

Նոր շերտի որմնանկարները՝ 1830 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ ենթադրաբար Մկրտում Հովնաթանյան[223]:

Նկարագրություն - Եկեղեցու ներսը գրեթե ամբողջովին որմնանկարված է եղել: Որմնանկարների մեծ մասը ոչնչացվել է 2002 թ. հրդեհից: Մնացած հատուկենտ բեկորներն էլ (առագաստների ավետարանիչների պատկերները և այլն) բաժին են դառնում 2012 թ. երկու հրդեհներին[224]:

166. Որդուարի (Օրդուբադ, Գողթն գավառ) Ս. Ստեփանոս եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[225]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

167. Ներքին Հանդամեջի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[226]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

---

[222] ***K. Matevosyan, A. Avetisyan,*** Surb Gevorg Cathedral..., էջ 40-41:

[223] Ըստ Մ. Ղազարյանի՝ հին շերտի որմնանկարները հնարավոր է, որ արված լինեն Նաղաշ Հովնաթանի և Հովնաթան Հովնաթանյանի կողմից (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 218):

[224] ***Ս. Կարապետյան,*** Թբիլիսիի Սբ Նշան, Սբ Նիկողայոսի եկեղեցի, «Վավերագրեր հայ ճարտարապետության», գիրք 1, Երևան, 2012, էջ 12-16:

[225] ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները, էջ 35:

[226] Նույն տեղում, էջ 38:

168. Քաղաքիկի (Գողթն գավառ) անանուն եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[227]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

169. Տրունիսի կամ Դրնիսի (Գողթն գավառ) Ս. Ստեփանոս եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., հեղինակն անհայտ, չեն պահպանվել[228]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

170. Տանակերտի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ[229]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

171. Շահկերտի կամ Ղազանչիի Ս. Ամենափրկիչ վանք

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[230]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

172. Կեսարիայի Թոմարզա գյուղի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ներկայացնում են նախշազարդեր, հրեշտակների, աղավնիների պատկերներ ևն:

173. Կեսարիայի Թոմարզա գյուղի Ս. Աստվածածին վանք

Որմնանկարները՝ XIX դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

---

[227] ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 41:
[228] Նույն տեղում, էջ 42:
[229] Նույն տեղում, էջ 43:
[230] Նույն տեղում, էջ 72-73:

Նկարագրություն - Ըստ պահպանված լուսանկարների՝ դահլիճն ամբողջովին պատված է եղել որմնանկարներով: Երևում են սրբերի պատկերներ, նախշազարդեր ևն[231]:

174. Շուշիի Կուսանաց վանք (Կուսանաց անապատ)

Որմնանկարները՝ XIX դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[232]:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել:

175. Կուտկաշենի[233] Նիժ գյուղի Ներքին թաղի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - 1980-ական թթ. դեռ պահպանվել էին եկեղեցու ներսի երկու որմնանկարները (Հովհաննես ավետարանիչը և «Մկրտություն» տեսարանը):

176. Քարագլուխի (ՀՀ Վայոց ձորի մարզ) անանուն եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Զարդատարրերի հետքեր են մնացել կամարների վրա:

177. Թիֆլիսի Բեթղեհեմի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ ենթադրաբար XIX դ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Գմբեթին եղել է Հայր Աստծու պատկերը[234]:

178. Աստապատի Ս. Ստեփանոս եկեղեցի (Կարմիր վանք)

Որմնանկարները՝ 1859-1860 թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակ՝ աստապատցի Հակոբ Տեր-Աբրահամյան:

Նկարագրություն - Գմբեթին պատկերված են եղել ութ սրբերի պատկերներ, առագաստներին՝ չորս ավետարանիչների պատկերները, խորանում՝ այլ սրբերի պատկերներ, ծաղկային զարդատարրեր և այլն,

---

[231] ***Տրդատ եպս. Պալեան,*** Հայ վանօրայք ի Թուրքիա, Իզմիր, 1914, էջ 89-97:

[232] ***Կ. Մաթևոսյան,*** Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, էջ 51:

[233] Ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գաբալա քաղաքն է:

[234] ***Ս. Կարապետյան,*** Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները, Երևան, 1998, էջ V:

իսկ երկու մույթերին և ընդերկայնական որմերին՝ նաև սյուժետային տեսարաններ, այդ թվում՝ «Ընծայումն տաճարին», «Աբրահամի զոհաբերությունը» ևն[235]:

179. Ճահուկի (համանուն գավառ) Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցի

Որմնանկարները՝ 1860-1880-ական թթ., այժմ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարվել է ավագ խորանը, գմբեթն ու առագաստները: Որմնանկարները ներկայացնում են հիմնականում հրեշտակների պատկերներ և ծաղկատերևային զարդատարրեր[236]:

180. Սղնախի (Կախեթ) Ս. Գևորգ եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմերին նկատվում են հայերեն մակագրություններով կիսաեղծ որմնանկարներ:

181. Դիղոմի (Թբիլիսիի մոտ) Ս. Կիրակի եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Հայերեն արձանագրություններով որմնանկարներ են առկա եկեղեցու հյուսիսային և արևմտյան որմերին: 2010-ական թվականներին եկեղեցու վրացականացման նպատակով որմնանկարների մի մասը քերվել է:

182. Բիստի (Գողթն գավառ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ 1877 թ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Ավագ խորանում եղել են սրբերի և հրեշտակների պատկերներ[237]:

---

[235] ***Մ. Փափազեանց,*** Հնութիւնք վանօրէից. չորրորդ գիրք. Գողթան գաւառ, Վաղարշապատ, 1891, էջ 5. ***Ե. Լալայեան,*** Նախիջեւանի ոստիկանական շրջան կամ Նախճաւան, «Ազգագրական հանդէս», գիրք XV, Տփխիս, 1907, էջ 152-153. Сборник материалов для описания местностей и племень Кавказа, вып. 27, Тифлис, 1900, էջ 57: Ըստ Ա. Այվազյանի՝ Կարմիր վանքի որմնանկարներն ունեցել են նաև հին շերտ, նկարված Հակոբ և Հարություն Հովնաթանյանների կողմից (***Ա. Այվազյան,*** Նախիջևանի որմնանկարչական արվեստը, էջ 42, 48):

[236] Ըստ Ա. Այվազյանի՝ այստեղ առկա է եղել նաև հին շերտ, արված 1680-1760 թթ., սակայն դրանց մասին որևէ տեղեկություն չունենք (***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 89, 94-97):

[237] Նույն տեղում, էջ 67:

183. Գաղի (Երնջակ գավառ) Ս. Գրիգոր եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ. II կես, այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պահպանված լուսանկարներում երևում են ծաղկային զարդատարրերով որմնանկարներ: Արգամ Այվազյանի ենթադրությամբ՝ դրանք Հովնաթանյան վարպետների նկարած գործերի վերանկարումներ են[238]:

184. Երևանի Պատմական հուշարձանների պահպանման հայկական դաշնության գրասենյակի շենք (Պարսկաստանի նախկին հյուպատոսարան)[239]

Որմնանկարները՝ XIX դ. վերջին քառորդ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները շինության ներսում բավականին մեծ ծավալ են զբաղեցնում և ներկայացնում են ինչպես հայկական (գորգերին հատուկ հորինվածք, մանրանկարչության մեջ հանդիպող դրվագներ ևն), այնպես էլ պարսկական զարդատարրեր: Որմնանկարների հետքեր են առկա նաև շինության դրսի կողմից:

185. Սուրամի (Ջավախք) Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Որմնանկարները՝ 1895-1896 թթ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ[240]:

Նկարագրություն - Գմբեթին պատկերված է եղել Հայր Աստված, առագաստներին՝ չորս ավետարանիչներն իրենց խորհրդանիշներով: Աղոթասրահում եղել են նաև «Տրդատի թագադրումը Գրիգոր Լուսավորչի կողմից» տեսարանը և այլ պատկերներ:

186. Կամարիսի (Կոտայքի մարզ) Ս. Հովհաննես եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարներ են պահպանվել ավագ խորանում (խաչապատկեր, բուսական զարդատարրեր և այլն), ավագ խորանի 1880 թ. կառուցված պատկերակալին («Ավետում», հրեշտակներ և այլն), որոշ հետքեր են մնացել նաև մույթերին:

---

238 ***Ա. Այվազյան,*** նշվ. աշխ., էջ 67

239 Գտնվում է Հանրապետության 32 հասցեում:

240 ***Ս. Կարապետյան,*** Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988-1998), ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Երևան, 1998, էջ 62:

187. Չալթիր գյուղի (Դոնի Ռոստով քաղաքի մոտ) Ս. Համբարձում եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Թմբուկին պատկերված են Քրիստոսի տասներկու առաքյալները, առագաստներին՝ չորս ավետարանիչները (պահպանվել են երեքը): Որոշ հետքեր են մնացել նաև հյուսիսային (հավանաբար «Ծնունդ» տեսարանն է) և հարավային պատերին: Որմնանկարները վերականգնվել են 2017 թ.:

188. Նեսվետայ գյուղի (Դոնի Ռոստով քաղաքի մոտ) Ս. Կարապետ եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարների մնացորդներ են պահպանվել ավագ խորանում, առագաստներին (չորս ավետարանիչների պատկերները) և պատերին («Մկրտություն» տեսարանը և այլն)[241]:

189. Մեծ Սալա գյուղի (Դոնի Ռոստով քաղաքի մոտ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարների մնացորդներ են պահպանվել հիմնականում գմբեթի հատվածում (սրբերի պատկերներ, բուսական մոտիվներ և այլն)[242]:

190. Իզմայիլ քաղաքի (Օդեսայի մարզ) Ս. Աստվածածնի Վերափոխման եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., այժմ՝ ոչնչացված, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարների բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել[243]:

191. Կորխի (Ջավախք) Ս. Ստեփանոս եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որոշ հետքեր (հրեշտակների պատկերներ) են պահպանվել ավագ խորանում, եկեղեցու բեմի որմնասյուներին և մկրտության ավազանի մոտ:

---

[241] ***О. Халпахчян,*** Архитектура Нахичевани-на-Дону, Ереван, 1988, էջ 101:

[242] Նույն տեղում, էջ 106:

[243] ***А. Тораманян,*** Из истории строительной деятельности армян в Молдавии, Москва, 1991, էջ 59:

192. Պետերբուրգի Ս. Կատարինե եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Պատկերված են Հայր Աստծու, հրեշտակների պատկերներ, չորս առագաստներին՝ ավետարանիչները:

193. Սարուշենի (Հադրութի շրջան) Ծաղախի վանքի նոր եկեղեցի և հյուրատուն

Որմնանկարները՝ XIX-XX դդ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Մեկ որմնանկար (Ռաֆայելի «Սիքստինյան Տիրամոր» կրկնօրինակն է) պահպանվել է նոր եկեղեցու հյուսիսային որմնամույթին, ներկի որոշ հետքեր էլ պահպանվել են հյուրատան պատերին:

194. Արտիմետի (Արմավիրի մարզ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ XIX-XX դդ. սկիզբ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Զարդանախշային որմնանկարներ են պահպանվել ավագ խորանում[244]:

195. Հայկավանի (Արմավիրի մարզ) Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ. վերջ կամ XX դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Որմնանկարները հատվածաբար պահպանվել են ավագ խորանում և մկրտության որմնախորշում: Ներկայացնում են քառատերևի մեջ պատկերված մարդկային դեմքեր, աղավնի, ծաղկատերևային զարդատարրեր և այլ պատկերներ:

196. Ակունքի (Կոտայքի մարզ) Ս. Կարապետ եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ. վերջ կամ XX դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Արևելյան պատին պահպանվել են սրբերի պատկերներ[245]:

197. Գանձակի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի

Որմնանկարները՝ XIX դ. վերջ կամ XX դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

---

[244] Արտիմետ գյուղի և եկեղեցու պատմության մասին տեղի հոգևոր հովիվ Տ. Ներսես քին. Ռուշանյանի աշխատասիրությամբ վերջերս մի գիրք է հրատարակվել, որտեղ չնայած որմնանկարներին հատուկ անդրադարձ չկա, սակայն եկեղեցու վերանորոգումների ժամանակագրությունը թույլ է տալիս ենթադրել, որ դրանք XX դարի երկրորդ կեսին են արվել, երբ եկեղեցին վերակառուցվել է (տե՛ս ***Տ. Ներսես քին. Ռուշանյան (Ազիխաչոյանց),*** Հին ու նոր Արտիմետ, Երևան, 2019) – Ա. Հ.:

[245] ***Ս. Կարապետյան,*** Ակունք և Կաթնաղբյուր գյուղերի պատմական հուշարձանները, Երևան, 2014, էջ 5:

Նկարագրություն - Բովանդակության մասին տեղեկություններ չեն պահպանվել[246]:

198. Մցգունի (Գողթն գավառ) Ս. Ստեփանոս եկեղեցի

Որմնանկարները՝ 1902 թ., այժմ ոչնչացված, հեղինակ՝ Ցղնեցի Մալաց Ղուկաս:

Նկարագրություն - Պահպանված լուսանկարներում երևում են ծաղկատերևային զարդատարրերով որմնանկարներ[247]:

199. Երևանի Պուշկինի փողոցի թիվ 38 շենք[248]

Որմնանկարները՝ XX դ. սկիզբ, հեղինակն անհայտ:

Նկարագրություն - Առաջին և երկրորդ հարկերի միջանցքների, նաև երկրորդ հարկի երկու սենյակների առաստաղներին պահպանվել են դիմանկարներ, նատյուրմորտներ և դեկորատիվ զարդատարրեր պարունակող որմնանկարներ:

200. Կուտկաշենի Նիժ գյուղի Վերին թաղի Ս. Աստվածածին եկեղեցի

Որմնանկարները՝ 1914 թ., հեղինակն անհայտ:

Նկարագրություն - 1980-ական թթ. հարավային մուտքի արևմտյան կողմում դեռ պահպանվել էր Էջմիածնի Մայր տաճարի պատկերը:

201. Յալթայի Ս. Հռիփսիմե եկեղեցի

Որմնանկարները՝ 1917-1918 թթ., հեղինակ՝ Վարդգես Սուրենյանց[249]:

Նկարագրություն - Որմնանկարները հիմնականում դեկորատիվ բնույթ են կրում՝ բուսական և թռչնային մոտիվներով[250]:

---

[246] Միակ աղբյուրը, որտեղ խոսվում է Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում որմնանկարների առկայության մասին, Լ. Մելիք-Շահնազարյանի «Гандзак. неутраченный мир» գիրքն է (Степанакерт, 1996), որտեղ կարդում ենք. «Изнутри церковь была украшена великолепными образцами армянской настенной живописи на религиозные темы» (էջ 18):

[247] ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի վիմագրական ժառանգությունը, հ. Գ., Գողթն գավառ, Երևան, 2007, էջ 87, լուս. 60: Նույն հեղինակի «Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները» գրքում որմնանկարները թվագրված են XIX դարով:

[248] Շենքը հայտնի է որպես Աֆրիկյանների ընդունելությունների տուն, Առաքել Աֆրիկյանի առանձնատուն, Մովսես Սիլիկյանի տուն և այլ անուններով:

[249] Սուրենյանցի ծանր հիվանդության պատճառով 1918-ից նրա էքիզների հիմամբ գմբեթի նկարազարդումը շարունակել և ավարտել է նկարիչ և արվեստաբան Տարագրոսը: Մնացյալ հատվածների նկարազարդումը մնացել է կիսատ և ավարտվել է միայն 2010-2013 թթ., նկարիչ Աշոտ Ներսիսյանի կողմից:

[250] ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն. XVII-XIX դդ., գիրք Բ, Երևան, 1975, էջ 96-97. ***Ա. Աղասյան և այլք,*** նշվ. աշխ., էջ 310:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՇՐՋԱՆ

202. Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցի

Կառուցվել է 1875-1879 թթ.:

Որմնանկար՝ «Հայոց գրերի ստեղծումը», 1964-1966 թթ., հեղինակներ՝ Հովհաննես Մինասյան, Հենրիկ Մամյան:

203. Ս. Էջմիածնի Գևորգյան հոգևոր ճեմարանի կլոր դահլիճ

Կառուցվել է 1871 թ.:

Որմնանկար՝ «Կոմիտաս», 1969 թ., հեղինակներ՝ Աշոտ Մելքոնյան, Հակոբ Հակոբյան, Հենրիկ Սիրավյան, Ռաֆայել Սարգսյան:

204. Գյումրիի Գալվանամետրերի գործարանի հիմնական մասնաշենք, 2011-ից՝ Ձվարթնոց օդանավակայանի մեկնման սրահ

Որմնանկար՝ «Թել են մանում», 1970 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

205. Ազատան գյուղի մշակույթի տուն

Որմնանկար՝ «Լեռներում», 1970-ական թթ. սկիզբ, հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

206. Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի մասնաշենք, 2011-ից՝ Ձվարթնոց օդանավակայանի նախագահական մասնաշենք

Որմնանկար՝ «Երկանք», 1970-ական թթ. սկիզբ, հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

207. Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի մասնաշենք, 2009-ից՝ ՀԱՊ մասնաճյուղ Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան

Որմնանկար՝ «Թորոս Ռոսլինի ծնունդը», 1972 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

208. Վահրամաբերդի մշակույթի տուն

Որմնանկար՝ «Արմենիա», 1973 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

209. Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի մասնաշենք, 2010-ից՝ ՀՀ կառավարության նիստերի դահլիճ

Որմնանկար՝ «Հանդիպում», 1973 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

210. Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարանի ճաշարանի մասնաշենք, 2010-ից՝ ՀՀ կառավարության նիստերի դահլիճ

Որմնանկար՝ «Խաչքարի մոտ», 1973 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

211. Գյումրիի Գալվանամետրերի գործարան, 2019-ից՝ Երևանի Մեգամոլ-Արմենիա

Որմնանկար՝ «Գիշեր», 1973 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

212. Գյումրիի Գալվանամետրերի գործարան, 2019-ից՝ ՀԱՊ մասնաճյուղ Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան

Որմնանկար՝ «Ցերեկ» (հատված), 1973 թ., հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

213. ՀՀ վերաքննիչ դատարանի շենք

Որմնանկարներ՝ «Թորոս Ռոսլինի ծնունդը», «Լավաշ են թխում», «Հանդիպում գյուղում», հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

214. Գյումրիի Անալիտիկ սարքերի գործարան, 1991-ից՝ Գյումրիի Վ. Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի շենք

Որմնանկար՝ «Աղբյուրի մոտ», հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

215. Գյումրիի Մեքենաշինական գործարան, 2013-ից՝ Գյումրիի քաղաքապետարան

Որմնանկար՝ «Հայկական հովվերգություն», հեղինակ՝ Մինաս Ավետիսյան:

216. Գյումրիի էլեկրատեխնիկական սարքերի գործարան, 2019-ից՝ Գյումրիի Apricot Hotels and Resort

Որմնանկար՝ «Գորգ են գործում», հեղինակ՝ Մինաս Ավետիսյան: Այս և նախորդ երկու որմնանկարները Մ. Ավետիսյանը հեղինակել է 1972-1974 թթ.[251]:

[251] Մեր երախտագիտությունն ենք հայտնում ՀԱՊ մասնաճյուղ Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանի աշխատակիցներին՝ որմնանկարների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ տրամադրելու համար:

217. Գյումրիի «Ստրոմմաշինա» (հետագայում՝ «Քարհատմեքենա») գործարանի ճաշարանի մասնաշենք, 2016-ից՝ Գյումրիի Վ. Աճեմյանի անվան թատրոն

Որմնանկար՝ «Սարերում», 1973 թ., հեղինակ՝ Հակոբ Հակոբյան:

218. Գյումրիի էլեկտրատեխնիկական գործարան, 2015-ից՝ Գյումրիի Երիտասարդական պալատ

Որմնանկար՝ «Ջաղացի ճանապարհին», 1973 թ., հեղինակ՝ Ռաֆայել Աթոյան:

219. Ապագա գյուղի մշակույթի տան նախասրահ

Որմնանկար՝ «Սասունցիներ», 1974 թ., հեղինակ՝ Սարգիս Մուրադյան:

220. Քաղսի գյուղի մշակույթի տուն

Որմնանկար՝ «Որս», 1970 թ., հեղինակ՝ Հենրիկ Սիրավյան:

221. Քաղսի գյուղի մշակույթի տուն

Որմնանկար՝ «Աղբյուրի մոտ», 1970 թ., հեղինակ՝ Հենրիկ Սիրավյան:

222. Հայաստանի գրողների տուն

Որմնանկար՝ «Հայաստան», եռապատկեր, 1973 թ., հեղինակ՝ Հենրիկ Սիրավյան:

223. Բջնի գյուղի մշակույթի տուն

Որմնանկար՝ «Պատմությունը և ներկան», 1975 թ., հեղինակ՝ Հենրիկ Սիրավյան:

224. Հայաստանի երաժշտական ընկերության շենքի ճեմասրահ

Որմնանկար՝ «Հայ ժողովրդական երգի տոն, ծաղկի տոն», 1984-1987 թթ., հեղինակ՝ Հենրիկ Սիրավյան:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ն., Հովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Հովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վիեննա, 1911:

Աղասյան Ա., Հակոբյան Հր., Հասրաթյան Մ., Ղազարյան Վ., Հայ արվեստի պատմություն, Երևան, 2009:

Այվազյան Ա., Ագուլիս. պատմամշակութային հուշարձաններ, Երևան, 1984:

Այվազյան Ա., Նախիջևանի ԻՍՍՀ հայկական հուշարձանները /համահավաք ցուցակ/, Երևան, 1986:

Այվազյան Ա., Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987:

Այվազյան Ա., Նախիջևանի որմնանկարչական արվեստը, Երևան, 1998:

Ասատրյան Գ., Պատմական Քանաքեռը և քանաքեռցիները, Երևան, 1990:

Ասատրյան Ա., Մողնու Սուրբ Գևորգ և Սուրբ Նշան եկեղեցիները (պատմություն և տարեգրություն), Էջմիածին, 2016:

Ավետիսյան Ա., Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցին, «Լրաբեր» հաս. գիտ., 2018, թ. 3, էջ 259-277:

Ավետիսյան Ա., Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում, ՊԲՀ, 2019, թ. 2, էջ 78-92:

Ավետիսյան Ա., Տրապիզոնի հայոց Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 125-151, 361-365:

Ավետիսյան Ա., Մեղրիի Անապատանաց վանքի որմնանկարները, «Լրաբեր» հաս. գիտ., 2019, թ. 3, էջ 219-230:

Ավետիսյան Ա., Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017-2019 թթ. ուսումնասիրման և վերականգնման աշխատանքները, «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2020, էջ 9-29:

Ավետիսյան Ա., Հայ միջնադարյան մեծարժեք որմնանկար Եգիպտոսում (Թեոդորոս Քեսունցու «Քրիստոսը Փառքի մեջ» պատկերը), «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 77-84:

Ավետիսյան Ք., Որմնանկարչությունը Հայաստանի ազգային պատկերասրահում, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 232-243:

Բաբայան Ա., Հայկական որմնանկարչությունը Նոր Ջուղայում, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 192-206:

Բարխուդարյան Ս., Կաթողիկե եկեղեցու արձանագրությունները, ՀՍՍՌ Գիտությունների ակադեմիայի Տեղեկագիր, 1947, թ. 5, էջ 69-78:

Գրիգորյան Գ., Ֆամագուստայի հայկական եկեղեցու որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 286-288:

Գրիգորյան Վ., Էջմիածնի Մայր տաճարը, «Հայ արվեստի հարցեր», Երևան, 2010, էջ 466-481:

Գևորգյան Ա., Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, ՊԲՀ, 1982, թ. 2, էջ 72-80:

Գևորգյան Ա., Մի լրացում Հովնաթանյան տոհմածառին, ՊԲՀ, 1996, թ. 1-2, էջ 377-381:

Եղիազարյան Հ., Ազիզբեկովի շրջանի կուլտուրայի հուշարձանները, Երևան, 1955:

Ենոքյան Ա., Լվովի Ս. Աստվածածնի վերափոխման տաճարի ներքին հարդարանքը և որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 207-214:

Ենոքյան Ա., Երևանի Ջորավոր Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 223-231:

Եսայան Ա., Սբ Հակոբ եկեղեցու որմնանկարների վերականգնումը, «Հուշարձան» տարեգիրք, Երևան, 2005, էջ 64-72:

Երեմեան Ա., Նոր Ջուղայի ԺԷ դարու որմնանկարչական յուշարձանը, Նիւ-Յորք, 1942:

Էջմիածնի գանձերը, խմբ. **Մ. Ղազարյան**, Էջմիածին, 1984:

Տ. Հեթում քհն. Թարվերդյան, Հաղբատի վանքի որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 98-102:

Տ. Հեթում քհն. Թարվերդյան, Ռումինիայի Ջամկա և Հաճկատար որմնանկարազարդ Հայոց վանքերը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 283-285:

Թորամանյան Թ., Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, Երևան, 2013:

Լևոնյան Գ., Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 1, 2, 4:

Կարապետյան Հ., Վայոց ձորն ու նրա հուշարձանները, Մուսալեռ, 2012:

Կարապետյան Ս., Հայկական եկեղեցիները Վրաստանում, Երևան, 1995:

Կարապետյան Ս., Վրաց պետական քաղաքականությունը և հայ մշակույթի հուշարձանները (1988-1998), ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք Բ, Երևան, 1998:

Հախնազարյան Ա., Արտազի երեք վանքերը, ՀՃՈՒ գիտական ուսումնասիրություններ, գիրք ԺԵ, Երևան, 2012:

Հակոբյան Զ., Հայ-քաղկեդոնական ավանդույթների արտացոլումը Անիի Ս. Գրիգոր (Տիգրան Հոնենց) եկեղեցու որմնանկարներում, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 103-124:

Հակոբյան Հր., Հայոց տերունական սրբապատկերները, Երևան, 2003:

Հակոբյան Հր., Վասպուրականի որմնանկարչության երկու հուշարձան, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 63-76:

Հասրաթյան Մ., Սյունիքի XVII-XVIII դդ. ճարտարապետական համալիրները, Երևան, 1973:

Հասրաթյան Մ., Մեղրու շրջանի հուշարձանները, Երևան, 1987:

Հարությունյան Վ., Էջմիածին, Երևան, 1978:

Հարությունյան Վ., Էջմիածին, Երևան, 1985:

Հարությունյան Ա., Երևանը և շրջակայքը, Երևան, 2012:

Հարությունյան Ռ., Հին Երևանի ճարտարապետական առեղծվածների պարզաբանումը, Երևան, 2007:

Հարությունյան Վ., Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992:

Հովհաննիսյան Կ., Էրեբունիի որմնանկարները, Երևան, 1973:

Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974:

Ղազարյան Վ., Հակոբյան Հր., Հայ միջնադարյան կերպարվեստի պատմություն, Երևան, 2012:

Ղաֆադարյան Կ., Երևան. միջնադարյան հուշարձանները և վիմական արձանագրությունները, Երևան, 1975:

Մաթևոսյան Կ., Որմնանկարչությունը Հայաստանի պետական պատկերասրահում, Երևան, 1990:

Մաթևոսյան Կ., Մուղնու Ս. Գևորգ վանքը, Էջմիածին, 2009:

Մաթևոսյան Կ., Միջնադարյան հեղինակների վկայությունները հայկական որմնանկարչության մասին, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 7-18:

Մաթևոսյան Կ., Նյութեր հայկական միջնադարյան որոշ որմնանկարների վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 85-97:

Մանուկյան Ս., Կեսարիայի և շրջակայքի եկեղեցիների հայկական որմնանկարչությունը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 215-222:

Մանուկյան Ս., Տաթեւի որմնանկարները եւ արեւմտաբիստոնէական վաղ միջնադարեան արուեստը, «Բազմավէպ», 2006, թ. 1-4, էջ 294-311:

Մանուկյան Ս., Միջնադարյան Հայաստանի կոթողային գեղանկարչությունը, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 19-56:

Մանուչարյան Ա., Սաղմոսավանք, Երևան, 2015:

Մարանչի Ք., Նոր տվյալներ Մրենի որմնանկարների և խորանի արձանագրության վերաբերյալ, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան,** Երևան, 2019, էջ 57-62:

Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, հատոր Ա, Երևան, 1971:

Մարտիրոսյան Վ., Նորագավիթի Ս. Գևորգ եկեղեցի, Երևան, 2011:

Մինասեան Լ., Իրանի հայկական վանքերը /Ս. Թադէոս, Ս. Ստեփանոս եւ Ս. Ամենափրկիչ/, Թեհրան, 1971:

Մինասյան Լ., Համառօտ ակնարկ Նոր Ջուղայի հին տների վրայ, Հայկազեան հայագիտական հանդէս, հ. ԺԷ, Բէյրութ, 1997, էջ 219-243:

Մկրտչյան Մ., Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957:

Մկրտչյան Շ., Լեռնային Ղարաբաղի պատմաճարտարապետական հուշարձանները, Երևան, 1985:

Մնացականյան Ստ., Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960:

Մնացականյան Ստ., Հայկական որմնանկարչական արվեստի պատմական նախադրյալների հարցի շուրջ, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1963, թ. 7, էջ 49-60:

Մուրադյան Պ., Հին Թիֆլիսի Հայոց եկեղեցիները, Ս. Էջմիածին, 2009:

Նավասարդյան Մ., Երկու ճակատագիր. Սբ Պողոս-Պետրոս և Սբ Աստվածածին-Կաթողիկե եկեղեցիները, «Երևան-3» գիտաժողովի նյութեր, Երևան, 2011, էջ 93-108:

Շահազիզ Ե., Աշտարակի պատմությունը, Երևան, 1987:

Շահազիզ Ե., Հին Երևանը, Երևան, 2003:

Զոպանյան Ա., Նաղաշ Հովնաթան աշուղը և Հովնաթան Հովնաթանյան նկարիչը, Փարիզ, 1910:

Սաղումյան Ս., Աշտարակ, Երևան, 1998:

Սարգսյան Տ., Ղրիմի հայկական որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 152-191:

Սուրբ Էջմիածին. Թանգարան բաց երկնքի տակ, կազմեց՝ **Տ. Արարատ քհն. Պողոսյանը**, Էջմիածին, 2015:

Վարդանյան Ս., XX-XXI դարերի եկեղեցական մի քանի որմնանկար, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ **Կ. Մաթևոսյան**, Երևան, 2019, էջ 244-258:

Քալանթար Ա., Էջմիածնի պեղումները, Երևան, 1934:

Քալանթար Ա., Հայաստան. քարե դարից միջնադար, Երկերի ժողովածու, Երևան, 2007:

Քոթանջյան Ն., Թալինի Մեծ տաճարի գլխավոր աբսիդի որմնանկարի գծային վերակառուցման փորձը, «Հայ արվեստի հարցեր», գիրք 1, Երևան, 2006:

Акопян З., Фрески церкви Тиграна Оненца (св. Григория) (1215) в Ани. Конфессиональный аспект (Актуальные проблемы теории и истории искусства, сб. науч. статей. Вып. 7), СПб, 2017, с. 269-279, 753-754.

Дрампян И., Фрески Кобайра, Ереван, 1979.

Дурново Л., Краткая история древнеармянской живописи, Ереван, 1957.

Дурново Л., Очерки изобразительного искусства средневековой Армении, Москва, 1979.

Каковкин А., О датировке росписей храма Св. Григория (1215 г.) в Ани, его часовни и притвора, Византийский временник, 1987, էջ 108-115.

Каковкин А., Житийный цикл Лусаворича в храме Тиграна Оненца 1215 г. в Ани, ВЕУ, 1989, № 3, с. 107-113.

Котанджян Н., Художественный язык Аручской росписи и раннесредневековые фрески Армении, II Международный симпозиум по армянскому искусству. сборник докладов, т. III, Ереван, 1978.

Котанджян Н., Цвет в раннесредневековой живописи Армении, Ереван, 1978.

Котанджян Н., Фрески Аруча как отражение античной традиции в раннесредневековой живописи Армении, Художественное наследие, вып. 6/36, Москва, 1980.

Котанджян Н., Монументальная живопись раннесредневековой Армении, Ереван, 2017.

Котанджян Н., Дрампян И., Фрески Татева. Судьба росписи и история ее изучения, «Հայ արվեստի հարցեր», գիրք 5, Երևան, 2013, էջ 283-316:

Пуцко В., Иконографические схемы армянских алтарных росписей VII века (Истоки и параллели), ՊԲՀ, 1980, թ. 3, էջ 141-158:

Халпахчян О., Архитектурные ансамбли Армении, Москва, 1980.

Lidov A., The mural paintings of Akhtala, Moscow, 1991.

The Armenian church of Famagusta and the Complexity of Cypriot Heritage, ed. by **Michael J. K. Walsh**, 2017, January.

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

Էջմիածնի Մայր տաճարը վերջին տասնյոթ դարերի ընթացքում վերակառուցվել է ավելին, քան հայկական որևէ այլ եկեղեցի: Ներկա դրությամբ, XVII-XIX դդ. վերակառուցումների արդյունքում, գրեթե ամբողջովին փոխվել է տաճարի նախնական՝ վաղմիջնադարյան տեսքը: Աղոթասրահը ևս անմասն չի մնացել փոփոխություններից. այն պատկերը, որն այժմ տեսնում ենք տաճարի ներսում, ամբողջովին կրում է նոր շրջանի, մասնավորապես՝ XVIII դարի որմնանկարչության շունչը:

Մայր տաճարի միջնադարյան որմնանկարների մասին մատենագրական տեղեկություններ չեն պահպանվել: Կարող ենք փաստել միայն, որ տաճարի ներկայիս՝ 483-484 թթ. կառույցն ամբողջովին նկարազարդված չի եղել, քանի որ 2018 թ. ծեփից ազատված պատերի բոլոր հատվածների հին որմածքն արված է քարերի երեսակներով, ինչը կառուցման գոնե առաջիկա տարիներին տաճարի նկարազարդում չէր ենթադրում: Բացառված չէ, որ ավագ խորանի նկարազարդված շերտերի տակ պահպանված կլինեն նաև վաղմիջնադարյան որմնանկարների հետքեր, որը հաստատելու համար հարկավոր է իրականացնել հետազոտական աշխատանք:

1603 թ. Էջմիածին այցելած գերմանացի ճանապարհորդ **Գեորգ Ֆոն դեր Յաբել Տեկտանդերը** նշում է, որ «տաճարում սրբապատկերներ բոլորովին չկան: Եվ երբ ես հարցրի դրա պատճառը, ապա ինձ պատասխանեցին, որ հիմա թուրքերը թույլ չեն տալիս ունենալ սրբապատկեր և զանգեր, ինչպես նախկինում»[1]:

1627 թ. դեռևս Ս. Էջմիածնի լուսարարի պաշտոնը զբաղեցրած Մովսես եպս. Տաթևացին (Ամենայն Հայոց կաթողիկոս 1629-1633 թթ.) նախաձեռնում է տաճարի վերանորոգումը, որի մասին վկայող հիմնա-

[1] ***Какаш и Тектандер,*** Путешествие в Персию через Московию 1602-1603 гг., Москва, 1896, էջ 37:

կան աղբյուրը նույն ժամանակի պատմագիր Առաքել Դավրիժեցու երկն է: Արվեստաբան Մանյա Ղազարյանը, հղում անելով Դավրիժեցու՝ «իսկ եթե մեկը ցանկանում է իմանալ Սուրբ Էջմիածնի լուսակառույց, քրիստոսանկար աստվածաբնակ տաճարի չափը...» խոսքերին[2], նշում է. «1627 թ. Մովսես վարդապետը ձեռնամուխ է լինում վանքի վերանորոգմանը: Նա շինարարական խոշոր կառույցների և վերանորոգման հետ միասին նկարազարդում է նաև տաճարի ներսը, որի մասին Դավրիժեցին օգտագործում է քրիստոսանկար արտահայտությունը»[3]: Պատմաբան Կարեն Մաթևոսյանը, սակայն, հիմնավորում է, որ «քրիստոսանկար» բառը պարզապես Ս. Էջմիածնի աստվածային ծնունդն ընդգծող փառաբանական արտահայտություն է և չի կարող Մովսես Տաթևացու օրոք տաճարում որմնանկարների փաստն արձանագրել[4]:

Ըստ երևույթին, Մանյա Ղազարյանը սխալվում է նաև մյուս հարցում, երբ վկայակոչում է **Միքայել Չամչյանին**՝ ի հաստատումն այն բանի, որ 1631 թ. Մայր տաճարում եղել են սրբապատկերներ: Չամչյանը նշում է հետևյալը. «Եւ եղև իբրև զերծաւ յայն աւուրս ի բանտէ Նախջուանայ Պօղոս (Ղազարյանը սխալմամբ նշում է «Պետրոս» - Ա. Ա.) Սիդերնացի լատին կրօնաւոր, զոր յիշեցաք ի նախընթաց գլուխդ, խնդրեալ տեղի ապահով՝ եկն անկաւ ի վանս Երևանայ. և անդ հանդիպեալ Փիլիպպոսի կաթուղիկոսի՝ ընկալեալ եղև ի նմե բազում մարդասիրութեամբ, ուր և սփոփեցաւ և հանգեաւ ի տառապանաց իւրոց. ուստի եւ ի փոխարէն այսր մատոյց ընծայ առ կաթուղիկոսն զմեծ պատկեր մի վայելչանկար. և Փիլիպպոս ետ դնել զայն **ընդ այլ պատկերս եկեղեցւոյ** այնր վանից յերևելի տեղւոջ...»[5]: Նկատենք, որ նվիրաբերումը Փիլիպոս Ա Աղբակեցի կաթողիկոսի օրոք է եղել, որը գահակալել է 1633-1655 թթ. և, ինչպես տեսնում ենք, դեպքերը Երևանում են տեղի ունեցել, ամենայն հավանա-

[2] ***Առաքել Դավրիժեցի,*** Պատմություն, թարգմանությունը, առաջաբանը և ծանոթագրությունները՝ ***Վ. Առաքելյանի,*** Երևան, 1988, էջ 243 (քննական բնագրում՝ «Եւ թէ ոք տենչացեալ գիտել կամիցի զչափ լուսակառոյց Քրիստոսանկար աստուածաբնակ տաճարի սուրբ Էջմիածնի» - ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ ***Լ. Խանլարեանի,*** Երեւան, 1990, էջ 253 – Ա. Հ.): Նույն թեզը կրկնվում է 1984 թ. հրատարակված «Էջմիածնի գանձերը» պատկերագրքի առաջաբանում:

[3] ***Մ. Ղազարյան,*** Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 144:

[4] ***Կ. Մաթևոսյան,*** Ինչո՞ւ է Առաքել Դավրիժեցին Էջմիածնի տաճարը «քրիստոսանկար» կոչել, «Գեղարվեստ», 1990, Հ^{մր} 5:

[5] ***Մ. Չամչյանց,*** Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 614:

կանությամբ, Ս. Անանիա առաքյալի անապատում, և «այլ պատկերս» արտահայտությունն էլ, ըստ երևույթին, վերաբերում է հիշյալ անապատի եկեղեցու նկարներին[6]:

Էջմիածնի Մայր տաճարում պատկերներ չեն եղել նաև ֆրանսիացի ճանապարհորդ **Ժան Շարդենի** այցի ժամանակ (1673 թ.): Ճանապարհորդի նկարագրությունը ներկայացնենք թարգմանաբար. «Երևանից երեք մղոն հեռավորության վրա է գտնվում Երեք եկեղեցիների նշանավոր վանքը՝ հայ քրիստոնյաների սրբություն սրբոցը, եթե ես համարձակվեմ այսպես կոչել այն, որին նրանք վերաբերվում են առանձնակի բարեպաշտությամբ: Ես բերում եմ եկեղեցու հատակագիծը և ավելացրել եմ գծագիրը, ինչպես նաև գլխավոր եկեղեցու արտաքին տեսքի փոքրիկ ուրվանկարը, վանքի ավելի հստակ նկարագրությունը՝ ավելի պարզ պատկերացում տալու համար:

Հայերն այն կոչում են Էջմիածին, որը նշանակում է Միածին Որդու էջքը կամ Միածին Որդին վայր իջավ: Նրանք՝ հայերը, ասում են, որ այս անունն է տրվել այդ վայրին, քանի որ այս տաճարի կառուցման վայրում Հիսուս Քրիստոս տեսանելիորեն Իրեն ցույց տվեց Սուրբ Գրիգորին, ով նրանց առաջին պատրիարքն էր: Մահմեդականներն այն կոչում են Ուչ-Քիլիսե կամ Երեք եկեղեցիներ, քանի որ վանքի եկեղեցուց բացի, նրա մոտ ևս երկու ուրիշ եկեղեցիներ կան, որով նրանք դառնում են երեքը:

Առաջին և գլխավոր եկեղեցին՝ Էջմիածին անվանվողը, շատ ամուր և մռայլ կառույց է, ամբողջովին կառուցված մեծ ավազաքարերից [տուֆից]: Քառանկյունի հարթ որմնասյուները, որոնք 72 ոտնաչափ (ֆունտ=39,5սմ) բարձրություն ունեն, քարե մշակված սյուներ են, ինչպիսիք են նաև կաթողիկե գմբեթը և զանգակատները:

Տաճարի ներսում չկան քանդակազարդեր և նկարչական զարդարանք (ընդգծումը մերն է – Ա. Ա.): Խորանները կանգնած են արևելյան կողմում, բացի եկեղեցու վերջում գտնվող երեքից: Դրանցից կենտրոնականը շատ ընդարձակ է, քարե բեմով, շատ լավ զարդարված արևելաքրիստոնեական ոճով: Սակայն նրա կողմնային ավանդատներում բեմի սեղաններ չկան, մեկը ծառայում է որպես ավանդատուն՝ զգեստավորման համար, մյուսը՝ որպես գանձատուն:

[6] Փիլիպոս Ա Աղբակեցի հայրապետի՝ Ս. Անանիա առաքյալի անապատը վերականգնելու և այստեղ մի որոշ ժամանակ կենցաղավարելու մասին տե՛ս ***Ա. Հարությունյան,*** Երևանի Ս. Անանիա առաքյալի անապատը կամ Զորավոր Ս. Աստվածածին եկեղեցին, Երևան, 2020, էջ 74-75 – Ա. Հ.:

Տեղի վանականները ցույց են տալիս այնտեղ պահվող գեղեցիկ և շատ շքեղ եկեղեցական սպասքի տարբեր առարկաներ՝ խաչեր, ոսկե սկիհներ, արծաթե կանթեղներ և մոմի աշտանակներ»[7]:

Ավելի ուշ՝ 1701 թ. Հայաստան այցելած ֆրանսիացի ճանապարհորդ, բուսաբան **Ժոզեֆ Պիթոն դը Տուրնեֆորն** այսպես է նկարագրում Մայր տաճարի ներքին տեսքը. «Առաջնորդանիստ եկեղեցին կառուցված է ընդարձակ բակի կենտրոնում և նվիրված է Ս. Գրիգոր Լուսավորչին, որը եղել է առաջին պատրիարքը Հայոց Տրդատ արքայի և Կոնստանտին Մեծի օրոք: Հայերը կարծում են, որ արքայական պալատը գտնվելիս է եղել վանքի տեղում, և որ Հիսուս Քրիստոսը հայտնվել է Ս. Գրիգորին հենց այն վայրում, որտեղ գտնվում է եկեղեցին…:

Եկեղեցին շատ ամուր շինություն է՝ կառուցված սրբատաշ քարերից. մույթերն ու թաղերը ծավալուն են, սակայն կառույցը մռայլ է և վատ լուսավորված, ներքին տարածքն ամբողջանում է երեք մատուռներով, որոնցից կենտրոնականն ավագ խորանն է, որն ունի ս. Սեղան, իսկ մյուսները ծառայում են որպես ավանդատուն: Այդ երկու սենյակները հագեցած են եկեղեցական սպասքով: Հայերը, որ հպարտանում են եկեղեցու շքեղությամբ, ոչինչ չեն խնայել այն զարդարելու համար: Այնտեղ տեսնում ենք Եվրոպայում պատրաստված թանկարժեք իրեր. սրբազան սպասք, ջահեր, արծաթե, ոսկե կամ մոխրա-շագանակագույն մոմակալներ: Նավի և «պրեսվիտերի», այսինքն՝ խորան տանող ճանապարհը ծածկված են գեղեցիկ գորգերով: Խորանը երեսպատված է «դամասով» կամ թավիշով: Դա զարմանալի չէ, քանզի Եվրոպայում առևտրով զբաղվող և մեծ հաջողությունների հասնող հայ վաճառականները, մեծ նվիրատվություններ են անում եկեղեցուն…:

Այս եկեղեցում են պահվում Ս. Գրիգոր Լուսավորչի աջը, Ս. Պետրոսի մատը, Ս. Հովհաննես Մկրտչի երկու մատներն ու մի մասունք Ս. Հակոբից…»[8]:

---

[7] ***Jean Chardin,*** Journal du Voyage en Perse & aux Indes Orientales, par la Mer Noire & par la Colchide, premiere partie, Londres, 1686, էջ 258: Հայերեն թարգմանությունը տե՛ս Սըր Ժան Շարդենի ճանապարհորդությունները Պարսկաստանով և Արևելյան Հնդկաստանով, անգլերենից թարգմանությունը և ծանոթագրությունները՝ ***Գ. Պողոսյանի,*** «Էջմիածին», 2008, Բ, էջ 108-115 – Ա. Հ.:

[8] ***M. Pitton de Tournefort,*** Relation d'un Voyage du Levant, tome second, Amsterdam, 1718, էջ 139. հմմտ. ***Г. Карагезян,*** Армянский мир в «Путешествии в Левант» Турнефора, Ереван, 2017, էջ 93-95 – Ա. Հ.:

Չնայած Տուրնեֆորը չի հերքում եկեղեցում որմնանկարների կամ պատկերների առկայության փաստը, սակայն չի էլ նշում դրանց մասին: Ուստի, ի մի բերելով վերոնշյալ աղբյուրների տեղեկությունները, կարող ենք մեծ հավանականությամբ նշել, որ մինչև Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի գահակալությունը (1715-1725 թթ.), Մայր տաճարի աղոթասրահում որմնանկարներ չեն եղել:

Որոշակի տեղեկություններ են պահպանվել 1654-1658 թթ. կառուցված արևմտյան զանգակատան նկարազարդման վերաբերյալ: Այդ է վկայում տաճարի արևմտյան մուտքի վերնամասի երկտող վիմագիրը, ըստ որի՝ Փիլիպոս Աղբակեցի և Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսների օրոք «հրաշակերտեցաւ զանկակատունս եւ ծաղկեցաւ ի թվ(ա)կ(ա)նիս ՌՃԺԳ. (1664)»[9]:

Միևնույն զանգակատան միջնահարկի արևելահայաց ճակտոնի վիմագրերից մեկում, ի թիվս կառուցող վարպետների, հիշատակված է նաև Զաքարե «նկարողի» անունը. «Սբ խ(ա)չս յ(ի)շ(ա)տ(ա)կ է ոսկերիճ Զ(ա)ք(ա)րէ(ին), որ նկարեց զանկ(ա)կատունս»[10]:

Զանգակատան նկարազարդման մասին որոշակի տեղեկություններ է հաղորդում նաև **Առաքել Դավրիժեցին**՝ վկայաբերելով Կ. Պոլսում Անտոն Չելեպիի՝ Փիլիպոս Աղբակեցի կաթողիկոսին ուղղված խոսքերը. «Օգնութեամբն Աստուծոյ ի ժամանելն քո ի սուրբ Էջմիածինն, որքան բաւ է և ախորժ է յօժարութիւն մտաց քոց, լայն և ընդարձակ, հաստահեղոյս և բարձրաշէն, **գեղեցկազան նկարակերտութեամբ** ձեռնարկեալ շինեսցես, և ամենայն ծախս գանձուց, որ անդ լինի, ես լիով և յօժարութեամբ նաև աւելեաւ հատուցանեմ» (ընդգծումը մերն է – Ա. Ա.)[11]: Ապա, խոսելով արդեն զանգակատան շինարարության ընթացքի մասին, գրում է. «այնուհետև սկսան շինել մինչև ցկատարումն զարմանալի արուեստիւ, **յոքնազան նկարակերտութեամբ քանդակեալ ի վէմսն յամենայն**

[9] ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 54-55, արձ. 10:

[10] ***Ս. Սաղումյան,*** Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, «Էջմիածին», 1976, Ե, էջ 32. ***Ա. Հարությունյան,*** նշվ. աշխ., էջ 56, արձ. 13: Մյուս վիմագրերում վկայված են տեր Հովհաննեսի (ենթադրաբար եղել է զանգակատան կառուցման վերակացուն) և վարպետներ (ուստա) Սահակ Հիզանցու և Մովսեսի անունները (***Ս. Սաղումյան,*** նշվ. աշխ., էջ 30-32. ***Ա. Հարությունյան,*** նշվ. աշխ., էջ 55-56, արձ. 11, 12, 14:

[11] ***Առաքել Դաւրիժեցի,*** էջ 276:

պատշաճաւոր տեղիս տեսակս զանազան կենդանեաց, գազանաց՝ անասնոց, թռչնոց, բուսոց և տնկոց…» (ընդգծումը մերն է – Ա. Ա.)[12]:

Առաջին հիշատակությունը լիովին կարող էր վերաբերել քանդակազարդմանը, իսկ երկրորդում, ինչպես տեսնում ենք, վկայված է միայն քանդակազարդումը:

Այսպիսով, զանգակատան «ծաղկողը» կամ «նկարողը» Զաքարե ոսկերիչն է եղել, սակայն անորոշ է՝ արդյո՞ք միևնույն Զաքարեն է նաև քանդակազարդման հեղինակը: Հաշվի առնելով այն, որ զանգակատան հարդարանքում գերակշռող են քանդակները, և վերոնշյալ արձանագրության մեջ զանգակատունը կառուցողների շարքում նշվում է նաև Զաքարեն, կարող ենք մեծ հավանականությամբ ասել, որ հենց նա է եղել քանդակազարդողը: Ինչ վերաբերում է որմնանկարներին, ապա զանգակատան առաջին հարկում, բացառությամբ Ս. Պողոս և Ս. Պետրոս առաքյալների պատկերների, պահպանվել են միայն Հովնաթանյանների՝ XVIII դարում վրձնած որմնանկարները:

XVII դարի նկարազարդումներին է մասամբ վերաբերում նաև **Հովհաննես եպս. Շահխաթունյանցի** աշխատության հետևյալ հատվածը, որն ավելորդ չենք համարում մեջբերել առանց կրճատումների. «Գտանին յայսմ փառացի տաճարիս քաջարուեստ պատկերք տէրունականք եւ ականաւոր սրբոց, որպիսի են քաջահմուտ նկարք՝ պատկերքն աւետման շրջանակաւ ամրացեալ ի բարձրութեան անդ արեւմտակողման երկուց սեանցն արեւելեան. հրեշտակին՝ ի սիւն հիւսիսային. կուսին սրբոյ՝ ի հարաւայինն: Եւ պատկերքն երկոտասան առաքելոց, յորում է շօշափումն Թովմայի, դասաւորեալք ի կիսաշրջանակի անդ կամարայարկին արեւմտեան մեծի դրանն ի ներքին կողմանէ. եւ պատկերքն երկոքին՝ աղօթելոյն Տեառն ի պարտիզին, որ կայ եդեալ ի ներքուստ ի հարաւային կողմանէ սեղանոյ սրբուհւոյ օրհնաբանեալ կուսին. եւ յարութեանն Ղազարու, որ եդեալ է յորմն հիւսիսային մերձ ի սեղան որդւոցն Որոտման: Եւ այլ պատկերք տէրունականք առ պատշգամբաւ մեծի կաթուղիկէին եւ զանազան սրբոց հայրապետաց եւ վարդապետաց ի սիւնս եւ յորմունս տաճարիս այսորիկ: Ի կիսաշրջանակի կամարայարկին սեղանոյ սրբոյն Ստեփաննոսի նկարեալ կան հայրապետական զգեստուք ի կանգուն պատկերք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, որդւոց եւ թո-

[12] ***Առաքել Դաւրիժեցի,*** էջ 277:

ռանց նորա: Նոյնպէս ի կամարայարկին սեղանոյ Յովհաննու Կարապետի պատկերքն սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ սրբոց հայրապետաց: Ի սոսա քաջարուեստ են պատկերք երկուց առաքելոցն:

Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց **մեծանուն վարդապետին Ստեփաննոսի Լեհացւոյ եւ քաջ նկարչին հօր Յովնաթանու**»[13]:

Հիմք ընդունելով Շահխաթունյանցի վերոհիշյալ վկայությունը՝ Գարեգին Հովսեփյանը թեև կասկածելով, բայց Ստեփանոս Լեհացուն է վերագրում արևմտյան խորանի տասներկու առաքյալների պատկերները[14]: Նույն կարծիքին է նաև Մ. Ղազարյանը: Ավելին, վկայաբերելով զանգակատան երկու որմնանկարների նմանությունը Լեհացուն վերագրվող տասներկու առաքյալների պատկերներին՝ նշում է, որ դրանք ևս, ըստ ամենայնի, Լեհացու գործերն են[15]:

Արվեստաբան Աստղիկ Գևորգյանը ենթադրում է, որ զանգակատան որմնանկարների հեղինակը Նաղաշի հայր տեր Հոհանն է: Դարձյալ վկայակոչելով Շահխաթունյանցի հաղորդումը, թե իբր Մայր տաճարի և զանգակատան որմնանկարները «փայլին շնորհօք ձեռաց մեծանուն վարդապետին Լեհացւոյ և քաջ նկարչին հօր Յովնաթանու»[16]՝ Ա. Գևորգյանը նշում է, որ մասնագիտական գրականության մեջ կարծիք է ստեղծվել է, թե խոսքը Նաղաշ Հովնաթանի մասին է[17]: Գ. Լևոնյանն այդ հայտարարությունը համարել է թյուրիմացություն, որովհետև Լեհացին ու Նաղաշը միաժամանակ չեն աշխատել ու ստեղծագործել[18]: Սակայն Շահխաթունյանցը հազիվ թե «հայր Յովնաթանու» փոխարեն գրեր «հօր Յովնաթանու»: Ե. Մարտիկյանը, Շահխաթունյանցի հիշյալ նախադասությունը մեջբերելիս, «հօր Յովնաթանու» բառակապակցության

---

[13] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ (այսուհետ՝ Ստորագրութիւն), աշխատասիրութեամբ՝ ***Ա. Տէր-Ստեփանեանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 35-36:

[14] ***Գ. Հովսեփյան,*** Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը XVII-XVIII դարերում, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 277:

[15] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 146-147:

[16] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 36:

[17] ***Ա. Գևորգյան,*** Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, «Պատմաբանասիրական հանդես», 1982, թ. 2, էջ 79:

[18] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 4, էջ 54:

փոխարեն գրում է միայն «Յովնաթանու»՝ «հօր» բառը համարելով ավելորդ[19], իսկ Մ. Ղազարյանն աշխատում է «հօր Յովնաթանու» արտահայտության ենթատեքստում տեսնել Նաղաշ Հովնաթանին[20]: Ոչ ոք չի մտածել այդ կարևոր տվյալը վերագրել Նաղաշ Հովնաթանի հորը:

Այս ամենից հետո Ա. Գևորգյանն արձանագրում է հետևյալը. «Այժմ, երբ մեզ հայտնի է, որ Հովնաթանի հայրը եղել է նկարիչ և ժամանակակից Ստեփանոս Լեհացուն, ինչո՞ւ չմտածել, թե Շահխաթունյանը «հօր Յովնաթանու» ասելով, նկատի է ունեցել Հովնաթանի հորը՝ տեր Հոհանին: Եվ քանի որ Շահխաթունյանի ժամանակի համար ճանաչված ու նշանավոր նկարիչ էր Նաղաշ Հովնաթանը, ուստի տեր Հոհանին նա ներկայացնում է Հովնաթանի անունով՝ «հօր Յովնաթանու»… Կարելի է ենթադրել, որ տասնութամյա պատանին Երևան էր հրավիրվել հոր որմնանկարները վերանորոգելու համար (դրանք Ս. Պողոս-Պետրոս, Կաթողիկե, Ս. Անանիա առաքյալի (Զորավոր)) եկեղեցիներում էին – Ա. Ա.): Անհավանական չէր լինի կարծել, որ Ագուլիսի, Շոռոթի եկեղեցիների որմնանկարները կատարած լինեն տեր Հոհանը և նրա որդիները: Այսպիսով հիմք կա պնդելու, որ ճանաչում գտած տեր Հոհանը ժամանակին հրավիրվել է Էջմիածին և մասնակցել զանգակատան նկարազարդմանը…»[21]:

Հաշվի առնելով այն, որ Շահխաթունյանցի աշխատության մեջ հիշատակվում է միայն Հովնաթան Հովնաթանյանը, չի բացառվում, որ նա «հօր Յովնաթանու» ասելով նկատի է ունեցել ոչ թե Նաղաշ Հովնաթանի, այլ Հովնաթան Հովնաթանյանի հորը՝ Հակոբին, որն իր եղբոր՝ Հարությունի հետ 1720-30-ական թթ. նկարազարդումներ է արել Մայր տաճարում և ենթադրաբար նկարազարդել է նաև զանգակատունը:

Մայր տաճարի որմնանկարազարդման վերաբերյալ մեզ հայտնի մատենագրական տեղեկությունները սկսում են Հովնաթանյան վարպետների գործունեության շրջանից: Մասնավորապես, Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսի օրոք՝ XVIII դարի սկզբին, սկսվում են Մայր տաճարի նկարազարդման աշխատանքները, որի մասին հետագայում Սիմեոն Երևանցին գրում է. «Սա զարդարեաց զմէջն մեծի տաճարիս. զի շինեաց և զսուրբ Իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից մար-

[19] ***Ե. Մարտիկյան***, Հայկական կերպարվեստի պատմություն, հ. Ա, Երևան, 1971, էջ 30:
[20] ***Մ. Ղազարյան,*** Ստեփանոս Լեհացի, «Էջմիածին», 1978, Զ, էջ 52:
[21] ***Ա. Գևորգյան,*** Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, էջ 79:

մարեայ սեանց, և ծաղկեցոյց ոսկու և պէս պէս երանգօք, և արար զարմանալիս տեսողաց: Նմանապէս և զճակատ մեծի սեղանոյն արար մարմարիոնեայ. Սպիտակացոյց բռամբ և ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ: Եւ զեկեղեցւոյ առաջնոյ Աւագ դասի մին սիւնն (եւ ըստ ոմանց զչորեսին սիւնսն ևս) ի հիմանէ նորոգեաց: Նորոգեաց սալիւ և զյատակս մեծի տաճարիս...»[22]:

Մայր տաճարի նորոգման, բարեկարգման ու ծաղկման մասին է վկայում տաճարի գմբեթատակ ներքին բոլորակին՝ Աստվածատուր կաթողիկոսի անունից կազմված միատող սևաներկ արձանագրությունը, ըստ որի՝ հիշյալ կաթողիկոսը 1720 թ. «ետու նորոգել զչորեսին խախտեալ սիւնք սբ եկեղեցւոյս եւ զբոլոր եկեղեցիս նորոգել եւ ծաղկել հանդերձ մարմարոնեայ շինուածովք…»[23]:

Ինչպես տեսնում ենք, աղբյուրներում նշված չէ որմնանկարների հեղինակի անունը: Սակայն, քանի որ այդ ժամանակաշրջանը համընկնում է Նաղաշ Հովնաթանի ստեղծագործական շրջանի հետ, ենթադրվում է, որ նա է 1712-21 թթ. տաճարը նկարազարդել: Նաղաշ Հովնաթանին՝ իբրև Մայր տաճարի նկարազարդող, առաջին անգամ վկայաբերում է Ղուկաս Ինճիճյանը. «Պատկերք ամենայն խորանացս են գործ նկարչին, որ մականուանեալ կոչի Նաղաշ Յովնաթան յազգէս հայոց, ճարտար նկարիչ, և յաջող բանաստեղծ ի ռամկաց լեզու ի ժամանակս Դահմաս գուլի (Թահմազ Ղուլի – Ա. Հ.) խանին»[24]:

Ավանդաբար Նաղաշին են վերագրվում տաճարի գմբեթի և ավագ խորանի ծաղկազարդերը, բեմի մարմարյա ճակատամասի Տիրամոր և Մանկան, Ս. Ստեփանոսի, Ս. Փիլիպոսի պատկերները[25], ինչպես նաև

---

[22] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 28:

[23] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 26. ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 64, արձ. 34 – Ա. Հ.:

[24] ***Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեան,*** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի Ասիոյ, Եւրոպիոյ, Ափրիկոյ եւ Ամէրիկոյ, մասն առաջին, հ. Ա, Վենետիկ, 1806, էջ 262:

[25] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, էջ 24-29. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 79-80. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 158-163: Ռուբեն Դրամբյանը, սակայն, Աստվածածնի պատկերը վերագրում է Հովնաթանի որդիներին և թվագրում 1725-1728 թթ.՝ Աստվածատուր կաթողիկոսի մահվան (1725 թ.) և Կարապետ կաթողիկոսի փաստացի գահին նստելու (1728 թ.) տարեթվերի միջանկյալ շրջանով: Ըստ նրա՝ այդ է պատճառը, որ դրանք չեն հիշատակվում «Ջամբռ»-ի ոչ մեկ, և ոչ էլ մյուս կաթողիկոսներին նվիրված գլուխներում (Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 108):

ժամանակին տաճարի պատերին տեղ գտած և ներկայում ՀԱՊ-ում ցուցադրվող «Տրդատ, Աշխեն և Խոսրովդուխտ», «Հայկ նահապետ» և «Աղոթող զինվոր» որմնանկարները[26]:

1720-ական թթ. երկրորդ կեսին՝ Կարապետ Բ Ուլնեցի Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք (1726-1729 թթ.), տաճարում նկարազարդման աշխատանքներ են կատարում Հովնաթանի որդիները՝ Հակոբն ու Հարությունը, մասնավորապես՝ նրանց անվան հետ են կապված բեմառէջքի տասներկու առաքյալների պատկերները[27]:

Վերջապես 1770-ական թթ. վերջերին, Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը (1763-1780 թթ.) տաճարի նկարազարդումն ավարտելու համար Էջմիածին է հրավիրում անվանի գեղանկարիչ Հովնաթան Հովնաթանյանին, որն աշխատանքներն ավարտում է արդեն Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսի օրոք (1780-1799 թթ.)՝ 1786 թ.[28]: Վերջինիս նկարազարդումները գլխավորապես զարդանախշային են, բացառությամբ արևմտյան սրահի Քրիստոս-Ամենակալ հորինվածքի և արևելյան սրահի ինքնախոցող «հաւալասան» (հավալուսն, հավալուսան) թռչնի և ձագերի պատկերի:

---

[26] Եղիշե Մարտիկյանը Տրդատի ընտանիքի խմբանկարն ու «Հայկ նահապետը» համարում է Աբրահամ Բ Մշեցի (Խոշաբեցի) կաթողիկոսի (1729-1734 թթ.) գահակալման ժամանակաշրջանի գործեր և վերագրում Նաղաշի որդուն՝ Հակոբ Հովնաթանյանին (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 82-84, տե՛ս նաև ***Ռ. Դրամպյան,*** «Из истории армянского искусства», էջ 117): Ինչ վերաբերում է բովանդակությանը, ապա «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ» և «Աղոթող զինվոր» պատկերները կազմել են «Հրեշտակի հայտնությունը Գրիգոր Լուսավորչին» տեսարանի առանձին հատվածները (և ոչ թե «Հայաստանում քրիստոնեության ընդունման» տեսարանի, ինչպես համարվում էր մինչ այդ): Դա պարզել է Ռուբեն Դրամբյանը, 1834 թ. Էջմիածնի վանքին նվիրաբերված մի նկարի հետ համեմատության արդյունքում, որը փաստացի հանդիսանում է որմնանկարի «հեռավոր կրկնօրինակը» (Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 106-107. ***Ռ. Դրամպյան,*** «Из истории армянского искусства», էջ 135-136):

[27] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 28: Մ. Ղազարյանի ենթադրությամբ՝ Հակոբն ու Հարությունը բեմի ճակատամասն ավարտել են ըստ Նաղաշ Հովնաթանի գծագրերի (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 161-163): Ե. Մարտիկյանը, բացի առաքյալներից, «Աստվածամոր և Մանկան» որմնանկարը ևս վերագրում է Հակոբին (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 90-93. տե՛ս նաև ***Ռ. Դրամպյան,*** նշվ. աշխ., էջ 120-121:

[28] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 100-103. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 177-181, 183-186. Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 110-111:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ակինեան Ներսէս վրդ., Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1911, թիւ 4-5, էջ 211-231, թիւ 6-8, էջ 390-410:

Աստուածատրեան Սահակ վրդ., Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից, պրակ Ա., Վաղարշապատ, 1910:

Գևորգյան Ա., Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, «Պատմաբանասիրական հանդես», 1982, թիվ 2, էջ 72-80:

Էփրիկեան Ս., Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա., Վենետիկ, 1902:

Էփրիկեան Ս., Ս. Էջմիածին. 303-1903. պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ, 1903:

Ինճիճեան Ղուկաս վրդ., Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, Վենետիկ, 1806:

Լևոնյան Գ., Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», Երևան, 1938, թիվ 4, էջ 51-55:

Հովսեփյան Գ., Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը XVII-XVIII դարերում, «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 272-312:

Ղազարյան Մ., Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974:

Ղազարյան Մ., Ստեփանոս Լեհացի, «Էջմիածին», 1978, Զ, էջ 47-56:

Մարտիկյան Ե., Հայկական կերպարվեստի պատմություն, հ. Ա., Երևան, 1971:

Շահխաթունեանց Յովհաննէս եպս., Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի եւ հինգ գաւառացն Արարատայ, աշխատասիրութեամբ՝ **Ա. Տէր-Ստեփանեանի,** Ս. Էջմիածին, 2014 (1842 թ. տպագրության վերահրատարակություն):

Զոպանեան Ա., Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910:

Սիմէոն կթղ. Երեւանցի, Ջամբռ գիրք, որ կոչի յիշատակարան արձանացուցիչ, հայելի և պարունակող բնաւից որպիսութեանց Սրբոյ Աթոռոյս և իւրոյ շրջակայից վանօրէիցն, Վաղարշապատ, 1873:

Дрампян Р., «Из истории армянского искусства», Сборник статей, Ереван, 2016.

Какаш и Тектандер, Путешествие в Персию через Московию 1602-1603 гг., Москва, 1896.

Очерки по истории армянского изобразительного искусства, отв. редакторы: **М. Айвазян, К. Глонти, Н. Степанян,** Ереван, 1979.

Хакстхаузен Август фон, Закавказский край, С. Петербург, 1857.

Jean Chardin, Journal du Voyage en Perse & aux Indes Orientales, par la Mer Noire & par la Colchide, premiere partie, Londres, 1686.

Pitton de Tournefort M., Relation d'un Voyage du Levant, tome second, Amsterdam, 1718.

ՑՈՒՑԱԿ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿՏԱՎՆԵՐԻ

Սույն համահավաք ցուցակը կազմել ենք՝ հիմք ընդունելով Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի՝ «Դաւթար» անունով հայտնի գույքացուցակը, ինչպես նաև արվեստաբաններ Մանյա Ղազարյանի և Եղիշե Մարտիկյանի համապատասխան ուսումնասիրությունները: Սիմեոն կաթողիկոսի «Դաւթար»-ից քաղված «Պատկերք մեծք, որք ի յորմոց կախին ի մէջ Մեծի խորանին Սուրբ Աստուածածնի, են այսք» խորագրով հատվածը Էջմիածնի Մայր տաճարի՝ XVII-XVIII դարերի նկարազարդման աշխատանքներին նվիրված ուսումնասիրության վերջում, իբրև հավելված, ներկայացրել է Գարեգին Հովսեփյանը՝ ծանոթագրելով հետևյալը. «Կրճատումները բացել ենք՝ դյուրացնելու համար ընթերցումը: Տողատումը պահել ենք ուղղահայաց գծիկներով»[1]:

Ս. Աստվածածնի ավագ խորան

Ս. Աստվածածին, վերնամասում՝ Ս. Երրորդությունը,

Քրիստոսի աղոթքը Գեթսեմանիի այգում (ավագ խորանի աջ կողմում, խաչկալի մեջ),

Իջեցումն խաչից (ավագ խորանի ձախ կողմում, խաչկալի մեջ),

Ներսես Մեծ (ծառայում է որպես մեծ խաչկալի ներքին դուռ),

Նիկողայոս հայրապետ (ծառայում է որպես մեծ խաչկալի ներքին դուռ),

Հրեշտակը՝ Ավետման տեսարանից (ծառայում է որպես մեծ խաչկալի վերին դուռ),

Մարիամը՝ Ավետման տեսարանից (ծառայում է որպես մեծ խաչկալի վերին դուռ):

---

[1] ***Գ. Հովսեփյան,*** Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում. Հավելված Ա (Սիմեոն կաթուղիկոսի «Դավթար»-ից), «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ., Երևան, 1987, էջ 289-292, ծնթ. 1 – Ա. Հ.:

Նկատառելով Ս. Էջմիածնի Մայր տաճարին նվիրված նախորդ հոդվածի բովանդակային հենքը՝ նպատակահարմար գտանք, իբրև տրամաբանական շարունակություն՝ ընդգրկել նաև սույն «Ցուցակ»-ը՝ հեղինակի որոշ ծանոթագրություններով – Ա. Հ.:

Ս. Հակոբ Տեառնեղբայր առաքյալի խորան և հարակից հատվածներ

Հրեշտակը Ս. Հակոբ առաքյալի գլուխը բերել է Աստվածածնին և առաքյալներին, վերնամասում՝ Ս. Երրորդությունը (խորանի մեջ),

Աստվածածնի վերափոխումը[2],

Աստվածածնի վերափոխումը (մեծադիր),

Աստվածածնի յոթ վերքը (գրկում՝ մեռյալ Քրիստոսը),

Քրիստոսի թաղումը,

Մատթեոս ավետարանիչ,

Ս. Հովհաննես Մկրտիչ՝ եզրագծված շրջան-մեդալիոններում ներառված տեսարաններով, որոնք ներկայացնում են նրա կյանքի դրվագները՝ ծննդից մինչև մահն ու մասունքները Հայաստան բերելը (մեծադիր):

Ս. Գրիգոր Լուսավորչի խորան և հարակից հատվածներ

Քրիստոսը քառակերպին, ներքևում՝ Ս. Գրիգորն ու Հովհաննես Մկրտիչը (խորանի մեջ),

Ս. Գրիգոր Լուսավորիչը բժշկում է Տրդատին (մեծադիր),

Ս. Գրիգոր Լուսավորիչը բժշկում է Տրդատին (մեծադիր),

Ս. Գրիգոր Լուսավորիչ (մեծադիր),

Ս. Հռիփսիմեն խաչափայտով, ոտքերի մոտ՝ Տրդատ արքան:

Ս. Ստեփանոս Նախավկայի խորան (հյուսիսային խաչաթև)

Ծնունդ (խորանի մեջ),

Խորհրդավոր ընթրիք,

Ս. Ստեփանոսի քարկոծումը (փոքրադիր):

Ս. Հովհաննես Մկրտչի խորան (հարավային խաչաթև)

Տիրամայրը Մանկան հետ, առընթեր՝ Հովհաննես Մկրտիչն ու Հովսեփը (խորանի մեջ),

Հրեշտակը Ս. Հակոբ առաքյալի գլուխը բերել է Աստվածածնին և առաքյալներին:

Առաջին դասի սյուներին

Ավետում,

Ավետում,

Ս. Տրդատ,

Ս. Կոնստանդին:

---

[2] Այժմ՝ ՀԱՊ-ում: Պատվիրել է Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսը՝ 1769-1771 թթ., հեղինակ՝ ենթադրաբար Հովնաթան Հովնաթանյան:

Հետին դաս

Տասներկու առաքյալների պատկերները (գլխավոր մուտքի վերնամասում),

Թովմասի անհավատությունը (գլխավոր մուտքի վերնամասում),

Ադամի ստեղծումը, խաբվելն ու դրախտից վտարումը (առաքյալների նկարաշարից վեր, «ռաւթի» վրա),

Մեծ ջրհեղեղն ու Նոյի՝ տապան մտնելը (առաքյալների շարքից վեր, «ռաւթի» վրա),

Իսահակի զոհաբերությունը և ծառից կախված խոյը (առաքյալների շարքից վեր, «ռաւթի» վրա),

Հրեաների ելքը Եգիպտոսից (առաքյալների նկարաշարից վեր, «ռաւթի» վրա),

Մովսեսն ու անապատի օձը (առաքյալների նկարաշարից վեր, «ռաւթի» վրա),

Հիսուսի ծնունդն ու մարգարեները՝ Կտակարանի տախտակները ձեռքներին,

Հիսուսի փախուստը Եգիպտոս,

Ղազարոսի հարությունը (կախված է զանգակատան վերին դռան մոտ),

Մոլորյալ ոչխարին գտնելը,

Քրիստոսը Պետրոսի ձկնորսական նավակում,

Քրիստոսի կողմից վաճառականների վտարումը տաճարից,

Մեռյալների հարությունը (Ահեղ դատաստանից):

Հյուսիսային դռան մոտ

Քրիստոսն ու քահանայապետը,

Փարիսեցու և մաքսավորի աղոթքը տաճարում,

Բարի սամարացու առակը,

Ս. Ալեքսիանոսի ծնողների մահը,

Փիլիպպոս կաթողիկոս:

Հարավային դռան մոտ

Տիրոջ ըմբռնումը,

Հակոբի տեսիլքը (սանդուղք երկնքից երկիր),

Տասը կույսերի առակը,

Աղքատ Ղազարոսի առակը,

Անիրավ տնտեսի առակը,

Քրիստոսի համբարձումը (խորանաձև պատկեր է, որից աջ և ձախ՝ Պետրոս և Պողոս առաքյալների պատկերներն են, կից՝ Պետրոսի խաչելությունը և Պողոսի գլխատումը):

Մեծ Կաթողիկեի թմբուկին

Ավետում,
Ծնունդ,
Տեառնընդառաջ,
Մանկանց կոտորածը Բեթղեհեմում,
Մկրտություն,
Պայծառակերպություն,
Ղազարոսի հարությունը,
Մուտք Երուսաղեմ,
Ոտնլվա,
Խորհրդավոր ընթրիք,
Աղոթք Գեթսեմանիում,
Քրիստոսին սյանը կապելն ու ձաղկելը,
Քրիստոսի գլխին փշե պսակ դնելը,
Խաչի կրումը,
Խաչելություն,
Խաչից իջեցումը,
Քրիստոսը նստած գերեզմանին, շուրջը՝ չարչարանքների գործիքները,
Դժոխքի ավերումը,
Հարություն,
Համբարձում,
Հոգեգալուստ,
Ահեղ դատաստան,
Տիրամոր վերափոխումը:

Գլխավոր մուտքի վերին մասում՝ արտաքուստ

Քրիստոսի էջքը, վերևում՝ Հայր Աստվածն ու Ս. Հոգին, ներքևում՝ Տրդատը, Աշխենն ու Խոսրովիդուխտը, խորհրդածու հրեշտակը և այլք (խորանաձև մեծադիր նկար է):

ՀՈՎՆԱԹԱՆ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆԻ (ԿԱՄ ՆՐԱՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ)՝ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՄԱՐ ԱՐՎԱԾ ԿՏԱՎՆԵՐԻ ՑԱՆԿ[3]

Թեմատիկ տեսարաններ

Նոյի զոհաբերությունը, կտավ, յուղ., 2,54x1,00 մ, այժմ՝ «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատուն (այսուհետ՝ ԱՄՄԳ),

Աբրահամի զոհաբերությունը, կտավ, յուղ., 2,53x0,97 մ, այժմ՝ ԱՄՄԳ,

Հովհաննես Մկրտիչն աղոթելիս[4], կտավ, յուղ., 1,47x1,02 մ, Մայր տաճարի Ս. Հովհաննես Մկրտչի (Ս. Կարապետի) խորան,

Մոգերի երկրպագությունը, կտավ, յուղ., 2,07x1,00 մ, հյուսիսարևելյան մույթի հարավային նիստին, ստորին գոտի, այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Մկրտություն, կտավ, յուղ., 2,32x1,22 մ, հարավարևելյան մույթի արևմտյան նիստին, ստորին գոտի, Վեհարան,

Պայծառակերպություն, կտավ, յուղ., այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Մուտք Երուսաղեմ, կտավ, յուղ., 2,11x1,00 մ, այժմ՝ ԱՄՄԳ,

Խորհրդավոր ընթրիք, կտավ, յուղ., 2,31x1,14 մ, հյուսիսարևմտյան մույթի հարավային նիստին, ստորին գոտի, այժմ՝ ԱՄՄԳ,

Ոտնլվա, կտավ, յուղ., 2,24x1,11 մ, հարավարևմտյան մույթի հյուսիսային նիստին, ստորին գոտի, այժմ՝ ԱՄՄԳ,

Ոտնլվա, կտավ, յուղ., 1,35x1,26 մ, Մայր տաճար,

Քրիստոսի աղոթքը Գեթսեմանիի այգում[5], կտավ, յուղ., 2,53x1,55 մ, Վեհարան,

Խաչելություն, կտավ, յուղ., 2,24x1,11 մ, այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Հարություն, կտավ, յուղ., 2,55x0,99 մ, հարավարևմտյան մույթի արևմտյան նիստին, ստորին գոտի, XX դարի սկզբին օգտագործվել է որպես խաչկալի պատկեր, այժմ՝ ՀԱՊ,

Համբարձում, կտավ, յուղ., 2,54x0,99 մ, այժմ՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի դահլիճ,

Դժոխքի ավերումը, կտավ, յուղ., 1,10x0,90 մ, ՀԱՊ,

---

[3] Ամբողջական ցուցակը տե՛ս ***Մ. Ղազարյան,*** Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 260-263:

[4] Մ. Ղազարյանի ցուցակում դասված է անհայտ նկարիչների շարքին (տե՛ս նշվ. աշխ., էջ 263):

[5] Ե. Մարտիկյանը վերագրում է Ստեփանոս Լեհացուն (տե՛ս ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Երևան, 1971, էջ 35-37):

Հոգեգալուստ, կտավ, յուղ., 2,53x0,95 մ, այժմ՝ Գևորգյան հոգևոր ճեմարանի դահլիճ,

Աստվածամոր նինջը, կտավ, յուղ., 2,10x1,04 մ, այժմ՝ ՀԱՊ, 46 սրահ,

Աստվածամոր փառքը, կտավ, յուղ., 2,51x1,33 մ, այժմ՝ ՀԱՊ, 46 սրահ,

Աստվածամոր թագադրումը, կտավ, յուղ., 1950-ական թթ. օգտագործվել է որպես խաչկալի պատկեր, այժմ՝ ԱՄՄԳ,

Աստվածամայրը գահին, Ս. Կարապետի և Ս. Հակոբոսի հետ (կամ՝ Ս. Գրիգոր Լուսավորչի և Ս. Ստեփանոսի հետ), կտավ, յուղ., 2,51x1,93 մ, այժմ՝ ՀԱՊ, 46 սրահ,

Հովիվները նկատում են Ս. Գրիգոր Լուսավորչին ծառի փչակում, կտավ, յուղ., 2,19x1,67 մ, ՀԱՊ,

Հովիվները տանում են Ս. Գրիգոր Լուսավորչի մարմինը, կտավ, յուղ., 2,53x1,50 մ, այժմ՝ ԱՄՄԳ,

Ստեփանոս Նախավկան՝ աղոթելիս, կտավ, յուղ., 2,14x1,01 մ, Վեհարան[6]:

Համաքրիստոնեական սրբեր

Միքիա մարգարե, կտավ, յուղ., 2,21x0,96 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Նավում մարգարե, կտավ, յուղ., 2,20x0,97 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Մովսես մարգարե, կտավ, յուղ., 2,20x0,97 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Անդիա մարգարե, կտավ, յուղ., 2,16x0,96 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Սոփոնիա մարգարե, կտավ, յուղ., 2,19x0,93 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Հովել մարգարե, կտավ, յուղ., 2,20x0,99 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Ամոս մարգարե, կտավ, յուղ., 2,20x0,97 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Ամբակում մարգարե, կտավ, յուղ., այժմ՝ ՀԱՊ պահոց,

Եզեկիել մարգարե, կտավ, յուղ., այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Հովնան մարգարե, կտավ, յուղ., այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Եսայի մարգարե, կտավ, յուղ., 2,18x0,93 մ, այժմ՝ ՀԱՊ պահոց,

Եղիա մարգարե, կտավ, յուղ., 2,18x0,97, այժմ՝ ՀԱՊ, 46 սրահ,

Մակար ճգնավոր, կտավ, յուղ., այժմ՝ ԱՄՄԳ,

Սրապիոն ճգնավոր, կտավ, յուղ., այժմ՝ ԱՄՄԳ,

Հովհաննես Մկրտիչ, կտավ, յուղ., այժմ՝ ԱՄՄԳ,

[6] Մայր Աթոռի «Ալեք և Մարի Մանուկյան» գանձատանը պահվում է մեկ այլ աղոթող Ս. Ստեփանոս, 1,69x0,99 մ:

Թադեոս առաքյալ, կտավ, յուղ., 2,10x0,97 մ, նախկինում՝ Մայր տաճարի խաչկալի դռնակ, այժմ՝ նոր Վեհարանի գահասրահ,

Բարդուղիմեոս առաքյալ, կտավ, յուղ., 2,10x0,97 մ, նախկինում՝ Մայր տաճարի խաչկալի դռնակ, այժմ՝ նոր Վեհարանի գահասրահ,

Կոստանդին կայսր, կտավ, յուղ., 2,08x0,91 մ, Վեհարան, այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ,

Հովհան Ոսկեբերան, կտավ, յուղ., 2,40x0,88 մ, այժմ՝ ՀԱՊ, 46 սրահ,

Գրիգոր Աստվածաբան, կտավ, յուղ., 2,28x0,93 մ, Վեհարան, այժմ՝ ՀԱՊ, 47 սրահ:

Հայ սրբեր

Հռիփսիմե, կտավ, յուղ., 2,16x1,29 մ, ՀԱՊ,

Գայանե, կտավ, յուղ., 2,10x1,29 մ, ՀԱՊ,

Հակոբ հայրապետ, կտավ, յուղ., 2,36x1,10 մ, Վեհարան (այժմ՝ ՀԱՊ 46 սրահ),

Տրդատ Մեծ, կտավ, յուղ., 2,20x0,91 մ, այժմ՝ նոր վեհարանի գահասրահ,

Գրիգոր Լուսավորիչ, կտավ, յուղ., 2,22x0,99 մ, այժմ՝ ՀԱՊ,

Գրիգոր Լուսավորիչ, կտավ, յուղ., 2,16x1,04 մ, ՀԱՊ,

Արիստակես հայրապետ, կտավ, յուղ., 2,13x1,08 մ, Վեհարան,

Հուսիկ հայրապետ, կտավ, յուղ., 2,31x0,94 մ, ՀԱՊ,

Գրիգորիս հայրապետ, կտավ, յուղ., 2,16x1,04 մ, ՀԱՊ,

Վրթանես հայրապետ, կտավ, յուղ., 2,36x1,03 մ, ՀԱՊ,

Ներսես Մեծ, կտավ, յուղ., 2,17x1,06 մ, Վեհարան,

Իսահակ հայրապետ, կտավ, յուղ., 2,23x1,16 մ, Վեհարան,

Մեսրոպ Մաշտոց, կտավ, յուղ., 2,27x0,94 մ, Վեհարան,

Սահակ Պարթև, կտավ, յուղ., 2,27x1,29 մ, Վեհարան,

Մովսես Խորենացի, կտավ, յուղ., 2,28x0,86,5 մ, Վեհարան,

Դավիթ Անհաղթ, կտավ, յուղ., 2,22x0,89 մ, Վեհարան,

Հովհան Օձնեցի, կտավ, յուղ., 2,31x0,94 մ, Վեհարան,

Ներսես Շնորհալի, կտավ, յուղ., 2,04x0,91 մ, Վեհարան,

Հովհան Որոտնեցի, կտավ, յուղ., 2,05x0,90 մ, Վեհարան,

Գրիգոր Տաթևացի, կտավ, յուղ., 2,07x0,91 մ, Վեհարան:

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑՈՒՆ ՎԵՐԱԳՐՎՈՂ ԿՏԱՎՆԵՐ

Գաբրիել հրեշտակապետ (ներքևի զույգ կերպարներով)[7], կտավ, յուղ., 2,64x1,05 մ, այժմ՝ ԱՄՄԳ,

Ավետընկալ Մարիամ (ներքևի զույգ կերպարներով)[8], կտավ, յուղ., 2,52x0,59 մ, այժմ՝ ԱՄՄԳ:

Կիսանդրի-դիմանկարներ[9]

Թադեոս առաքյալ, կտավ, յուղ., Մայր Աթոռի դիվանատուն,
Շմավոն (Սիմոն) առաքյալ, կտավ, յուղ., Մայր Աթոռի դիվանատուն,
Հակոբոս առաքյալ, կտավ, յուղ., Մայր տաճարի թանգարան,
Պողոս առաքյալ, կտավ, յուղ., Մայր տաճարի թանգարան,
Պետրոս առաքյալ, կտավ, յուղ.,
Անհայտ առաքյալ, կտավ, յուղ.:

Առաքյալների այլ շարք

Պողոս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, Վեհարան,
Պետրոս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, Վեհարան,
Թադեոս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, Վեհարան,
Բարդուղիմեոս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, ՀԱՊ,
Մատթեոս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, ՀԱՊ,
Հակոբ առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, Վեհարան,
Սիմեոն առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, Վեհարան,
Անդրեաս առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, ՀԱՊ,
Հովհաննես առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, ՀԱՊ,
Անհայտ առաքյալ, կտավ, յուղ., 2,03x0,87 մ, ՀԱՊ,
Թովմայի անհավատությունը, կտավ, յուղ., 1,10x0,84 մ, այժմ՝ ԱՄՄԳ[10]:

---

[7] Մ. Ղազարյանը վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 260):
[8] Մ. Ղազարյանը վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին (տե՛ս նույն տեղում):
[9] Այս շարքը Լեհացուն է վերագրել Եղիշե Մարտիկյանը (տե՛ս ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 40-42): Դրանք պետք է որ տեղադրված լինեն արևմտյան խորանում, որի շրջանակների չափսերը՝ 1,22x0,83 մ, մոտավորապես համապատասխանում են կտավներին:
[10] Մ. Ղազարյանն իր ցուցակում Ստեփանոս Լեհացուն է վերագրում մեկ այլ «Թովմայի անհավատություն», 2,03x0,87 մ, Վեհարան (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 259):

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԻՋՄԱՆ Ս. ՍԵՂԱՆԸ ԵՎ ՆԿԱՐԱԶԱՐԴ ԱՄՊՀՈՎԱՆԻՆ

Ս. Էջմիածնի Մայր տաճարի գմբեթի ներքո՝ չորս գմբեթակիր մույթերի միջև է գտնվում Հայ առաքելական սուրբ եկեղեցու մեծագույն սրբություններից մեկը՝ Իջման ս. Սեղանը: Այն խորհրդանշում է Հայ եկեղեցու պատմության թերևս ամենակարևոր դրվագը՝ Մայր եկեղեցու հիմնադրումը: Ընդունված է ասել, որ Ս. Գրիգոր Լուսավորչի տեսիլքում հենց այստեղ է Տերը ոսկե կռանով հարվածել գետնին՝ նախանշելով տաճարի կառուցման վայրը. «Եւ մի ահաւոր տեսիլ մարդոյ բարձր եւ ահեղ, որ զառաջն ունէր եւ զէջսն ի վերուստ մինչեւ ի խոնարհ առաջապահ յառաջեալ, եւ ի ձեռինն իւրում ուռն մի մեծ ոսկի. եւ այն ամենայն զհետ խաղացեալ գայր: Եւ ինքն սլացեալ խոյացեալ գայր՝ ըստ նմանութեան արագաթեւ արծուոյ. եւ եկն էջ եհաս մինչեւ մօտ ի յատակս երկրիս, ի շինամէջ քաղաքին, եւ բաղխեաց զթանձրութիւն լայնատարած գետնոյն, եւ մեծ եւ անչափ դրնդիւնքն հնչեցին սանդարամետս անդնդոց. եւ ամենայն երկիր յերեւելիս, յական տեսանելեաց բաւելոյ, հարթ հաւասար դաշտաձեւ յատակեցաւ»[1]:

Թե ինչպիսի տեսք կամ կահավորանք է ունեցել Մայր տաճարի Իջման տեղը վաղ և զարգացած միջնադարում՝ դժվար է ասել: Սակայն կասկածից վեր է, որ այս հատվածը չէր կարող հատուկ ուշադրության չարժանանալ, քանզի հենց Իջման տեղով է պայմանավորված հայ եկեղեցու, մասնավորապես՝ Մայր տաճարի բացառիկությունը: Ավելորդ է ասել, որ Ս. Աստվածածնին նվիրված տաճարի[2] միջնադարյան երեք՝

---

[1] ***Ագաթանգեղոս,*** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ ***Գ. Տէր-Մկրտչեանի*** եւ ***Ս. Կանայեանցի,*** Երեւան, 1983, էջ 414-417:

[2] Լուսավորչի տեսիլքի հաջորդ օրը՝ օգոստոսի 15-ը, Ս. Աստվածածնի Վերափոխման տոնն էր, ինչի կապակցությամբ էլ Մայր տաճարի ավագ խորանն անվանակոչվում է Ս. Աստվածածին: Հետաքրքիր զուգադիպությամբ 303 թ. Վերափոխման տոնին էլ տեղի է ունենում տաճարի օծումը (Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, աշխատ.՝ ***Հակոբ Քյոսեյանի*** և ***Վարդան Դևրիկյանի,*** Ս. Էջմիածին, 2003, էջ 22, 30):

առավել տարածված անվանումները (Վաղարշապատի Կաթողիկե, Ս. Էջմիածին, Ս. Շողակաթ կամ Շողակաթ Ս. Աստվածածին) անմիջականորեն կապված են Իջման իրադարձության հետ[3]:

Իջման տեղի կահավորման վերաբերյալ մեզ մասնակի տեղեկություններ են հասել սկսած XVII դարից: Ինչպես հայտնի է, 1604–1605 թթ. մեծ բռնագաղթից մեկ տասնամյակ անց, պարսից շահ Աբաս Ա-ը, ցանկանալով հայ գաղթականներին ետ պահել Հայաստան վերադառնալու մտքից, որոշում է հայերի համար Նոր Ջուղայում կառուցել նոր Մայր տաճար: Այս նպատակով Էջմիածնից Նոր Ջուղա են տեղափոխվում Լուսավորչի Աջն ու Մայր տաճարի կարևորագույն տասնհինգ քարերը, այդ թվում՝ Իջման քարը. «Իսկ Թահմազղուլի խանն՝ յետ Լուսաւորչի Աջին առաքելոյ, բազում ջանիւ հոգայր զքարինսն առաքել, վասն որոյ ինքն յոլով զօրականօք գնաց ի Սուրբ Էջմիածին, և զնշանաւոր քարինսն Էջմիածնի քակեալ հանին ի տեղւոյն, որք են այսոքիկ. սուրբ սեղանն, յորոյ վերայ պատարագն սուրբ մատչէր, և այս սեղանոյս սիւնն. **Քրիստոսի Իջման տեղեաց քարն** (ընդգծումը մերն է – Ա. Ա.), աւազանն, մէկ քար ի հարաւային կողման աստիճանէ բեմին. և մէկ քար ի հիւսիսային կողման աստիճանէ բեմին, վասն զի աւագ բեմի աստիճանքն յերկուց կողմանց են՝ ի հիւսիսոյ եւ ի հարաւոյ. չորս քար ի չորից

[3] Մայր տաճարի հնագույն՝ «Կաթողիկե» անվանումը (դեռևս V դարում այսպես է կոչում Ղազար Փարպեցին. «զիրեշտակացոյց հիմնարկութիւնն սրբոյ տանն Աստուծոյ, մեծի եկեղեցւոյն Կաթողիկեի...» - ***Ղազար Փարպեցի,*** Պատմութիւն Հայոց. թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ ***Գ. Տէր-Մկրտչեանի*** եւ ***Ստ. Մալխասեանցի,*** Երեւան, 1982, էջ 24-27) կիրառվել է եկեղեցաբանական և ճարտարապետական իմաստներով: Առաջին դեպքում գործ ունենք Կաթողիկե (ընդհանրական, տիեզերական) եկեղեցու առաջին և մայր տաճարի հետ՝ նախագծված (ըստ Ագաթանգեղոսի) հենց Քրիստոսի Իջմամբ: Նույն Իջմամբ է պայմանավորված եղել նաև տաճարի ճարտարապետական ձևը՝ սյուներով, կամարներով և գմբեթով, իսկ միջնադարում ճարտարապետական իմաստով «կաթողիկե» նշանակում էր գմբեթ (որպես կանոն՝ բարձրադիր) կամ գմբեթավոր եկեղեցի (տե՛ս Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, էջ 17-19): Տաճարն «Էջմիածին» անվանելը, որն արդեն անմիջականորեն նույնականացվում է Իջման խորհրդին, կապվում է Ստեփանոս Օրբելյանի մի հիշատակության հետ. «Այս ե՛ս, այս ե՛ս, Էջք Միածնին...» (***Ստեփանոս Օրպէլեան,*** Ողբ ի Ս. Կաթուղիկէն, բնագիրը յառաջաբանով եւ ծանօթութիւններով հրատարակեց ***Կ. Կոստանեանց,*** Թիֆլիս, 1885, էջ 27, տե՛ս նաև ***Հ. Ղեւոնդ Ալիշան,*** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, 1890, էջ 209-210): Վերջապես, Մայր տաճարն ամենաուշը XI դարից (Ստեփանոս Տարոնացի) մինչև XVII դ. վերջերը (երբ 1694 թ. Էջմիածնում կառուցվեց Ս. Շողակաթ եկեղեցին) անվանվել է նաև Ս. Շողակաթ կամ Շողակաթ Ս. Աստվածածին՝ «ի պատիվ այն լուսյի, որի՝ երկնքից կաթմամբ Լուսավորչի տեսիլքում գծագրվեց Մայր տաճարը» (տե՛ս Սուրբ Էջմիածինը հայ մատենագրությունում, էջ 30):

անկեանց եկեղեցւոյն՝ ի դրուց կողմանէ. երկու քարէ մոմդան որ մեծ իւղաբերից մոմ դնեն ի մէջն և վառեն. երեք այլ որիշ քարինք ի սալայարկ քարանց բեմին. ընդ ամեն տասն և հինգ քար: Ձայս քարինքս քակեցին, և հանին յԷջմիածնէ և եդին ի մէջ կաշւոյ եւ կարեցին... Ձայս քարինքս յորժամ հանեալ յԷջմիածնէ ուղևորեցին գնալ ի Սպահան՝ թուականն մեր ՌԿԳ (1614 թ. – Ա. Ա.) էր, և յորժամ եհաս ի Սպահան փոխեալ էր տարին և մտեալ էր ի ՌԿԴ (1615 թ. – Ա. Ա.)»[4]:

Այսպիսով, Առաքել պատմագիրը վերոհիշյալ տասնհինգ քարերից միայն մեկն է բնորոշում որպես Իջման քար: Ներկայումս այդ քարերը (կամ՝ ինչ մնացել է այդ քարերից) պահվում են Նոր Ջուղայի Ս. Գևորգ եկեղեցում[5]: Դրանց շարքում առանձնանում են միմյանց կից երկու բազալտե սրբատաշ քարերը, որոնցից առաջինը (նկ. 1, Ա քար) հարթ ուղղանկյունաձև է, կենտրոնում՝ փոքր փոսորակով, իսկ մյուսը (նկ. 1, Բ քար) չափերով ավելի փոքր և բարձր է, հիշեցնում է կարճ սյուն, որի վերին նիստի կենտրոնում առկա է կիսագնդաձև ելուստ, որը, ըստ ամենայնի, նախատեսված է եղել առաջին քարի փոսիկին ագուցելու համար (չափերը լիովին համապատասխանում են):

Նշված քարերի չափերն ու ձևը հաշվի առնելով՝ կարող ենք նշել դրանց գործառութային հնարավոր երկու տարբերակ: Ա քարը կամ եղել է ավագ խորանի ս. Սեղանի քար (այս դեպքում Բ քարը որպես պատվանդան է ծառայել նրան) կամ, որ առավել հավանական է, Ա քարը եղել է Իջման քարի պատվանդան (քանի որ ավագ խորանի համար այնքան էլ բարետես չէ), որի կենտրոնում հարմարեցված է եղել Բ քարը, որպես բուն Իջման քար: Այլ խոսքով՝ Բ քարը մատնանշել է բուն Իջման տեղը. հավատացյալներն այս քարին են հպվել՝ որպես Իջման խորհրդանիշ, և Դավրիժեցին, նշելով միայն այս քարի մասին, պարզապես չի հիշատակել պատվանդանի գոյությունը (որոշ այլ քարերի վերաբերյալ ևս չի նշում):

Իջման տեղի և սուրբ քարի մասին ուշագրավ է XVII դարի ֆրանսիացի ճանապարհորդ Ժան Շարդենի նկարագրությունը, որը ներկայացվում է ֆրանսերենից թարգմանաբար. «Եկեղեցու կենտրոնում գտնվում է մի մեծ քառակուսի քար՝ երեք ոտնաչափ անկյունագծով և հինգ ոտնաչափ հաստությամբ: Հայերը հաստատուն հավատն ունեն, որ այս այն

[4] ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, աշխատ.՝ ***Լ. Խանլարյանի,*** Երևան, 1990, էջ 190-191:

[5] Ավազանի քարի դիմային հատվածում ընթեռնելի է հետևյալ երկտող վիմագիրը. «Յ(ի)շ(ա)տ(ա)կ է Թալէ որդի / Ղէոնդ» - Ա. Հ.:



Նկ. 1. Ս. Էջմիածնի Մայր տաճարից տեղափոխված քարերը Նոր Ջուղայի Ս. Գևորգ եկեղեցում (լսնկ.՝ հեղինակի, 2019 թ.)

տեղն է, ուր իրենց առաքյալ Ս. Գրիգորը մի կիրակի երեկոյան տեսավ Հիսուս Քրիստոսին, երբ ինքն աղոթում էր և որտեղ Նա խոսեց նրա [Սուրբ Գրիգորի] հետ: Վանականներն այնուհետև համոզում էին մեզ, որ Հիսուս Քրիստոս այդ սրբի առջև լույսի ճառագայթներով գծագրեց Էջմիածնի եկեղեցու պատկերը և պատվիրեց նրան կառուցել համաձայն այն գծագրի, որ նա պատկերեց տեսիլքում: Նրանք նաև ավելացնում են, որ այն տեղում, ուր այժմ հիշյալ քարն է դրված, նույն այդ ժամանակ երկիրը բացվեց և Քրիստոս այդ բացվածքի միջով ձևավորված խորխորատը նետեց Հայաստանի տաճարներում եղած բոլոր դևերին, որոնք կեղծ պատգամախոսներ էին, և Ս. Գրիգորին պատվիրեց սանդարամետը ծածկել մարմարով: Ասվածին ավելացրին, որ Աբաս Մեծը տարավ մարմարե սալը և այն զետեղեց Պարսկաստանի արքունական թանգարանում, իսկ այդ սալի տեղը դրեց այն քարը, որի մասին ես ասացի»[6]:

[6] Voyages du Chevalier ***Chardin*** en Perse et autres lieux de l'Orient, tome deuxième, Paris, 1811, էջ 175 – Ա. Հ.:

Եղիազար Ա Այնթապցի (Հռոմկլայեցի) կաթողիկոսի օրոք (1681-1691 թթ.) Իշման տեղում հիմնվում է պատարագի ս. Սեղան, որի վրա կառուցվում է ամպիովանի-կաթողիկե: Այս մասին առաջին վկայությունը հաղորդում է Զաքարիա Քանաքեռցին. «Այլև կանգնեաց քարեայ կաթուղիկէ ի վերայ Իշման տեղին և հաստատեաց սեղան՝ առնել պատարագ...»[7]: Ավելի ուշ, Սիմեոն Երևանցի կաթողիկոսը գրում է. «Ի սուրբ Աթոռոջ, զԿաթողիկէ ի վերայ սրբոյ Իշման տեղւոյն կանգնեաց չորիւք սեամբք խամ քարիւք, և հաստատեաց սեղան՝ զի Պատարագ մատչիցի»[8]: Մոտավորապես նույն տեղեկությունն են հաղորդում նաև Ս. Էջմիածնի միաբաններ Հովհաննես եպս. Շահխաթունյանցն ու Աբել արք. Մխիթարյանցը. «Կանգնեաց սա եւ զփոքրիկ կաթուղիկէ ի վերայ չորից սեանց նոյնպէս ի հասարակ քարանց ի միջին տեղւոջ յատակի սրբոյ տաճարիս, որ անկանի ուղղակի ի ներքոյ մեծի Կաթուղիկէին. յորում տեղւոջ այրն ահաւոր եհար զոսկեուռն ըստ տեսլեան սրբոյն Գրիգորի Լուսաւորչին»[9], իսկ ըստ Աբել Մխիթարյանցի՝ Եղիազար կաթողիկոսը «տաճարի մէջ Իշման տեղւոյ վրայ կանգնեց Կաթուղիկէ՝ հասարակ քարից, չորս սիւնով, և հաստատեց սեղան պատարագի, որ յառաջագոյն քարորմով պատած էր, ուր և «Այրն ահաւոր» երևցած...»[10]:

---

[7] ***Զաքարիա Քանաքեռցի,*** Պատմութիւն. Կոնդակ Սուրբ Ուխտին Յոհաննու վանից, աշխատ.՝ **Ա. Վիրաբյանի,** Երևան, 2015, էջ 151: Զաքարիա Քանաքեռցու «Պատմագրության» բնագրային հիմք հանդիսացող ՄՄ Հմր 1662 և 3024 ձեռագրերում կաթողիկեն բնորոշված է իբրև «քարեայ», մինչդեռ երկի առաջին տպագրության տողերում՝ «կճեայ» (***Զաքարեայ Սարկաւագ,*** Պատմագրութիւն, հատոր երկրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 107), այսինքն՝ մարմարյա:

[8] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 25-26: Եղիազար կաթողիկոսի օրոք Մայր տաճարի հյուսիսային և հարավային խորաններում հիմնվում են երկու այլ ս. սեղաններ՝ նվիրված համապատասխանաբար Ս. Ստեփանոս Նախավկային և Ս. Հովհաննես Մկրտչին (տե՛ս նշվ. աշխ., էջ 26):

Սրանք իրենց պատակից ամպիովանիներով պահպանվել են մինչ օրս: Հյուսիսային խորանի քարե ամպիովանու ճակատային մասում պահպանվել է նաև Եղիազար կաթողիկոսի անվանակիր՝ 1683 թ. արձանագրությունը, որտեղ պատարագի ս. Սեղանը հիշված է «պրօպիտ» (նախաշեմ, խոնարհման վայր) անվամբ (***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 61, արձ. 31) – Ա. Հ.:

[9] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** (այսուհետ՝ Ստորագրութիւն), աշխատ.՝ ***Ա. Տէր-Ստեփանեանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 25 (վերահրատարակություն):

[10] ***Աբէլ արք. Մխիթարեանց,*** Եկեղեցիք Վաղարշապատ քաղաքի, «Արարատ»-ի ժառանգությունը, Երկերի ժողովածու, հրատ. պատրաստեց՝ ***Եզնիկ արք. Պետրոսյանը,*** Ս. Էջմիածին, 2009, էջ 118:

Վերը նշվածն ամբողջացնելով՝ կարող ենք եզրակացնել, որ Եղիազար կաթողիկոսի կառուցած ամպհովանին «սովորական» (այսինքն՝ ոչ թանկարժեք) և «խամ» (այսինքն՝ անմշակ, անտաշ) քարերով կառուցված չորս սյուներից և դրանք պսակող փոքրածավալ գմբեթաձև ծածկից՝ կաթողիկեից բաղկացած մի շինվածք էր, որի ներքո գտնվում էր հնագույն քարաշարով պատված պատարագի ս. Սեղանը:

Մոտ չորս տասնամյակ անց, Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսը (1715-1725 թթ.) Մայր տաճարի ներսում բարեկարգություններ անելիս՝ փոփոխում է նաև Իջման հատվածը: Ըստ Սիմեոն Երևանցու՝ «Սա (Աստվածատուր Համադանցին – Ա. Ա.) զարդարեաց զմէջն մեծի տաճարիս. զի շինեաց և զսուրբ Իջման տեղն մարմարեայ քարիւ ի վերայ չորից մարմարեայ սեանց, և ծաղկեցոյց ոսկւով և պէս պէս երանգօք, և արար զարմանալիս տեսողաց»[11]: Այս առումով հետաքրքիր է Հովհաննես եպս. Շահխաթունյանցի հիշատակությունը. «Զայս յիշատակեալդ կաթուղիկէ ի վերայ Իջման տեղւոյն հանդերձ սեամբքն եւ ինչ ինչ քարամբք յատակին՝ Աստուածատուր կաթուղիկոս Համատանցի նոր ի նորոյ ետ կառուցանել ի սպիտակ մարմարոնեայ քարանց կարի վայելչաձև»[12]: Աբել Մխիթարյանցը ևս հիշատակում է այս փոփոխության մասին. «Եղիազարու հասարակ քարով շինածը ի վերայ Իջման տեղւոյն, Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսը փոխեց և նոր ի նորոյ կառոյց վայելչաձև մարմարոնեայ գեղեցիկ կաթուղիկէիւ չորս սեան վրայ. նոյնպէս աւագ սեղանոյ բեմի ճակատը ծայրէ ի ծայր մարմարոնեայ քարով շինելով, խորանաձև զարդարեց, ոսկով ու գոյնզգոյն նկարներով Իջման տեղւոյ Կաթուղիկէին և աւագ սեղանոյ բեմը ի միասին ծաղկազարդեց»[13]:

Փաստորեն, Աստվածատուր կաթողիկոսի օրոք քանդվել է Եղիազար կաթողիկոսի կառուցած ամպհովանին և տեղում կառուցվել արդեն մեր օրերը հասած սպիտակ մարմարե ամպհովանին, որը նույն Աստվածատուր կաթողիկոսի օրոք նաև նկարազարդվել է[14]:

---

[11] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Զամբռ, էջ 28:

[12] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 26:

[13] ***Աբէլ արք. Մխիթարեանց,*** Եկեղեցիք Վաղարշապատ քաղաքի, էջ 118-119:

[14] Նկարազարդումներն ուշմիջնադարյան, առավելապես՝ Հովնաթանյանների դպրոցին բնորոշ բուսական զարդատարրեր են, իսկ ամպհովանու՝ այսպես կոչված թմբուկի նիստերին՝ բուսազարդ խորաններում, պատկերված են ավետարանիչներն իրենց խորհրդանիշներով, աղավնակերպ Սուրբ Հոգին, Տիրամայրը և այլ սրբեր – Ա. Հ.:

Իջման ս. Սեղանի ամպհովանու՝ մեզ հասած ամենահին պատկերն անվանի հայագետ Մարի Բրոսսեի գծային մոտավոր վերարտադրությունն է իր հանրահայտ «Ատլասում» (նկ. 2), որտեղ այն կոչվում է «Իջման տեղի ամպհովանի» (Baldaquin, sur le Lieu de la Descente)[15]:



Նկ. 2. Իջման ս. Սեղանի ամպհովանու՝ Մարի Բրոսսեի գծանկարը

[15] ***M. Brosset,*** Atlas du voyage archéologique dans la Transcaucasie, Saint-Pétersbourg, 1950, planche XVIII.

Նկ. 3. Երևանի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում՝ Ս. Լուսավորչի մասունքների վրա կանգնեցված Էջմիածնի Իջման ս. Սեղանի ամպհովանին (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

2001 թ., երբ Երևանում ավարտվեցին Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր եկեղեցու շինարարական աշխատանքները, Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի տնօրինությամբ այստեղ տեղափոխվեցին նաև Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները և Իջման ս. Սեղանի ամպհովանին, որը տեղադրվեց եկեղեցու նախասրահում՝ արևմտյան մուտքի առջև (նկ. 3):

Նորակառույց եկեղեցու նշված տեղում հիմնված մարմարյա պատվանդանի քանդակազարդ պահատուփում են ամփոփված Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները, իսկ պատվանդանը պսակում է չորս սյուների վրա հանգչող Էջմիածնի նկարազարդ ամպհովանին: Վերջինիս գմբեթից ներկայումս կախված է Հայաստանում քրիստոնեության հաստատման 1700-ամյակի առթիվ Մոսկվայի և համայն Ռուսիո պատրիարք Ալեքսեյ Երկրորդի նվիրաբերած բուրվառը[16]:

Պատվանդանի արևելյան կողմում մասունքների և ամպհովանու տեղափոխման մասին վկայող հետևյալ արձանագրությունն է, 14 տող.



Նկ. 4. Ամպհովանու կառուցման և մասունքների պահպանման մասին վկայող վիմագիրը (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

[16] Բուրվառի կենտրոնական մասը գոտևորում է հետևյալ արձանագրությունը. «Дар Армянской Апостольской церкви к память празднования 1700-летии Христианства в Армении. Алексий II Патриарх Московский и Всея Руси» - Ա. Հ.:

ՄԱՐՄԱՐԱԿԵՐՏ ՉՈՐԵՔԻՆ ՍԻՒՆՔՍ ԵՒ ԳՄԲԵԹՍ ԱՅՍ
ԿԱՌՈՒՑԵԱԼ Ի ՎԵՐԱՅ ՍՐԲՈՅ ՄԻԱԾՆԱԷՋ ՍԵՂԱՆՈՅ ՄԱՅՐ
ՏԱՃԱՐԻ Ի ԿԱԹՈՂԻԿՈՍԷՆ ԵՂԻԱԶԱՐՈՒ ԱՅՆԹԱՓՑԻՈՅ (1681-1691)
ՀՐԱՄԱՆԱՒ ԵՐԱՆԱԾՆՈՐՀ Տ. ՎԱՋԳԵՆԻ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ
ՓՈԽԱԴՐԵՑԱՆ Ի ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ի ՎԱՆՍ ՍՐԲՈՅ ԳԱՅԻԱՆԵԱՅ
ԵՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑԱՆ ԻԲՐԵՒ ԶՄԱՍՈՒՆՍ ՍՐԲՈՅ ԽՈՐԱՆԻՆ
ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 2001, ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՄԲ Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԱՐԴԵԱՄԲՔ ԵՒ ԾԱԽԻՒՔ
ԼՈՒԻԶ ՄԱՆՈՒԿԵԱՆ ՍԻՄՕՆԻ: ՄԱՐՄԱՐԱԿԵՐՏ ՍԻՒՆՔՆ ԵՒ
ԳՄԲԵԹՆ ՏԵՂԱԴՐԵՑԱՆ Ի ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ԵՐԵՒԱՆԱՅ ԵՒ ՆԵԽԱՐՔՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ
ԼՈՒՍԱՒՈՐՉԻ ԶԵՏԵՂԵՑԱՆ ՁԵՌԱՄԲ ՍՐԲԱԶԱՆ
ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՄԵՐՈՅ ԸՆԴ ԳՄԲԵԹՍ, ՈՐՆ ԵՒ ՍԵԱՄԲՔՆ
ԻՒՐՈՎՔ ԱՄՊՀՈՎԱՆԻ ԵՂԻՑԻՆ ՍՐԲԱԶԱՆ ՆԵԽԱՐԱՅՆ. ԱՄԷՆ:

ԱՇՏԱՐԱԿԻ Ս. ՄԱՐԻԱՆԵ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

1281 թ. կառուցված Ս. Մարիանե գմբեթավոր եկեղեցին[1] գտնվում է Աշտարակ քաղաքի հյուսիսարևելյան հատվածում: Ըստ Երվանդ Շահազիզի՝ ծխական եկեղեցու կարգավիճակ ստանալու հետ պայմանավորված՝ եկեղեցու արևմտյան պատին կից, հայտնի չէ, թե երբ, կառուցվել է ժողովրդանոց, որը հետագայում ավերվել, իսկ 1839 թ. վերանորոգվել է[2]: Ժողովրդանոցն ունեցել է որմնանկարներ, որոնք պատկերված են եղել Ս. Մարիանե եկեղեցու արևմտյան շքամուտքին կից հատվածներում[3] և, ամենայն հավանականությամբ, ստեղծվել են XVII-XVIII դդ.: 1905 թ. աշտարակցիները որոշում են ժողովրդանոցի տեղում նոր, մեծ եկեղեցի կառուցել, որի համար նախկին ժողովրդանոցը քանդում են (ստորև բերված արխիվային լուսանկարն արվել է հենց քանդման ժամանակ, նկ. 1): Ինչ-ինչ պատճառներով նոր եկեղեցու շինարարությունը կիսատ է մնում, իսկ Խորհրդային տարիներին նորակառույցի արևելյան նկարազարդ պատը ծածկվում է կրաշաղախի ծեփով՝ ծածկելով որմնանկարները:

Գարեգին Հովսեփյանի լուսանկարում եկեղեցու մուտքի բարավորին նկատելի է «Քրիստոսն ու տասը կույսերը» տեսարանը, իսկ շքամուտքը պարփակող արտաքին եզերակալի վերին անկյուններին կից՝ կանացի

---

[1] Եկեղեցու որմերին պահպանված մեկ տասնյակից ավելի վիմագրերը կառուցման վերաբերյալ ստույգ տեղեկություններ չեն հաղորդում: Այդ բացը մասամբ լրացնում է հարավային ավանդատան մուտքի վերնամասում պահպանված Հայոց ՉԼ (1281) թվակիր նվիրատվական արձանագրությունը, ըստ որի՝ «ի շինութեան սուրբ եկեղեցոյս» Սահակ երիցի դուստր Թագուհին վանքին է նվիրաբերել իր հայրենի (սեփական) տունն ու «Քարհանուց» (քարհանողների) այգին, որի դիմաց պատարագների է արժանացել: Այս արձանագրության հիմամբ՝ վիմագրագետ Սուրեն Սաղումյանը հավանական է համարում, որ եկեղեցին կառուցվել է առնվազն 1270-ականներին (տե՛ս **Ս. Սաղումյան,** Աշտարակ. պատմական անցքեր, հուշարձաններ, վիմագիր արձանագրություններ, Երևան, 1998, էջ 209, արձ. 120) – Ա. Հ.:

[2] **Եր. Շահազիզ,** Աշտարակի պատմություն, Երևան, 1987, էջ 168:

[3] Նույն տեղում, էջ 170:

երկու կերպարներ են, եզերակալից աջ և ձախ՝ չորս սրբեր: Ներկայումս տեսանելի են միայն «Քրիստոսն ու տասը կույսերը» որմնանկարի՝ Քրիստոսի և մի քանի կույսերի գլուխների հատվածները (նկ. 2-4), իսկ մնացած մասերը դեռևս մնում են կրաշերտի տակ:

Նկ. 1. Ս. Մարիանե եկեղեցու արևմտյան պատի որմնանկարները, (լսնկ.՝ Գարեգին Հովսեփյանի, XX դարասկիզբ)

Որմնանկարների վերականգնման նախատեսվող աշխատանքներից առաջ անհրաժեշտ է հետևյալ միջոցառումների իրականացումը.

1. Քիմիական-լաբորատոր հետազոտություններ՝ որմնանկարչական հիմնաշերտի բաղադրությունը (կիր-ավազային, գիպսա-կավային և այլն) պարզելու համար,

2. քիմիական-լաբորատոր հետազոտություններ՝ որմնանկարչական ներկաշերտի բաղադրությունը (յուղային, սոսնձային և այլն) պարզելու համար,



Նկ. 2-4. Եկեղեցու արևմտյան պատի որմնանկարները (լսնկ.՝ հեղինակի, 2018 թ.)

3. քիմիական-լաբորատոր հետազոտություններ՝ կրաշաղախի ծեփի բաղադրությունը պարզելու համար: Խիստ կարևոր է իմանալը՝ արդյո՞ք միայն կրային շերտի հետ գործ ունենք, թե՞ առկա են նաև սոսնձա-խեժային հավելումներ, բացի դրանից՝ արդյո՞ք որմնանկարները ծածկելիս այն ակտիվ վիճակում է քսվել, թե՞ ոչ,

4. անհրաժեշտ է կրաշաղախի ողջ մակերեսով կատարել մոտ 40 փորձնական բացվածք (յուրաքանչյուրը մինչև 2-3 սմ չափերով)՝ պահպանված որմնանկարի մակերեսը պարզելու նպատակով,

5. կատարել մեխանիկական և լուծույթային փորձնական մաքրումներ՝ ծեփի հեռացման ճիշտ եղանակը պարզելու նպատակով: Հնարավոր է, որ կիրը վերածվի գիպսային շերտի, ապա նոր իրականացվի վերջնական հեռացումը: Ամենայն հավանականությամբ, կիրառելի կլինեն 30%-ից ավելի ջրային մաս չպարունակող լուծույթներ, բացառված չէ, սակայն, որ անհրաժեշտության դեպքում կիրառվեն նաև ջրային բարդ լուծույթներ:

6. Որմնանկարների որոշ հատվածներ, հնարավոր է, որ փոշիացված կամ թեփուկավորված վիճակում կպած լինեն կրածեփին: Նման դեպքերում անհրաժեշտ է գտնել ճիշտ եղանակը՝ ներկաշերտն ամրացնելու և կրածեփից հեռացնելու համար,

7. Լաբորատոր ուսումնասիրություններից զատ՝ անհրաժեշտ է կիրառել խոնավաչափ՝ որմնանկարների խոնավության աստիճանը պարզելու համար, ինչպես նաև սպեկտրիալ հետազոտական սարքավորումներ, մասնավորապես՝ ուլտրամանուշակագույն և ուլտրակարմիր ճառագայթներ, որոնք ցույց կտան բնօրինակ ներկաշերտի վրա հետագայում արված հավելումները:

ՀԱՅԿԱՎԱՆԻ Ս. ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄՆԱՆԿԱՐՆԵՐԸ

ՀՀ Արմավիրի մարզի Հայկական գյուղի Ս. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1870-ական թթ.[1]: Այն երեք զույգ փայտե մույթերով եռանավ թաղածածկ (բազիլիկ) կառույց է, ունի երկու մուտք՝ արևմուտքից և հարավից: Ներկայումս կիսավեր եկեղեցու ավագ խորանին պահպանվել է քարե պատկերակալը, որի տարբեր հատվածներում, ինչպես նաև խորանի կիսաբոլորակ պատերին և մկրտության ավազանի խորշում նկատելի են որմնանկարների մնացորդներ: Վերջիններս թվագրելի են առնվազն XIX դարի վերջին քառորդով: Հավանաբար 1920-30-ական թթ. եկեղեցին վերածվել է պահեստի, պատերը ներքուստ պատվել են կրաշերտով, ինչի արդյունքում մեծապես տուժել են որմնանկարները: 1990-ական թթ. սկզբներին արդեն եկեղեցու տանիքը փլուզված է եղել, ինչը, բնականաբար, նպաստել է որմնանկարների քայքայմանը: Այդուհանդերձ, դրանց մի մասը դեռևս գտնվում է կրաշերտի տակ:

Եկեղեցին, ըստ ամենայնի, ներքուստ ամբողջովին որմնանկարազարդված է եղել, ընդ որում՝ բավականին արհեստավարժ նկարիչների ձեռքով: 2017 թ. դրությամբ պահպանված էին ավագ խորանի անկյունային երկու քիվերից վեր գտնվող հրեշտակների դիմանկարները (նկ. 2, 3), գմբեթարդի որոշ պատկերազարդ հատվածներ, ավագ խորանի պատկերակալի ճակատային (երկու կամարակապ մուտքերից վեր) և միջին հատվածի դիմանկարները, խաչապատկերներն ու զարդատարրերը, մկրտության ավազանի որմնախորշի աղավնակերպ Ս. Հոգու պատկերը, ինչպես նաև որմնանկարների որոշ հատվածներ՝ արևմտյան և հարավային պատերի լուսամուտներին կից (այս հատվածներում որմնանկարների զգալի մասը կրաշաղախի շերտի տակ են):

---

[1] Ըստ եկեղեցու հարավային մուտքի վերնամասում՝ արտաքուստ պահպանված խաչաքանդակին կից արձանագրության՝ կառուցվել է 1875 թ., համայնքի միջոցներով - Ա. Հ.:

Նկ. 1. Ս. Աստվածածին եկեղեցու աղոթասրահը
(լսնկ.՝ հեղինակի, 2017 թ.)

Որմնանկարներն արված են գիպսա-կավային հիմնաշերտի վրա: Ինչպես ցույց են տալիս քիմիական լաբորատոր ուսումնասիրությունների արդյունքները՝ նշված հիմնաշերտի մեջ կավային մասն իր տեսակարար կշռով բավականին քիչ է, ինչը հուշում է, որ գիպսային ապարի թրծման ջերմաստիճանը եղել է բավականին բարձր, ինչն էլ իր հերթին թույլ է տվել ստանալ որակյալ որմնանկարչական հիմք: Չնայած դրան՝ որմնանկարչական նմանատիպ հիմքը բավականին զգայուն է խոնավության նկատմամբ և, թերևս, դա է եղել հիմնական պատճառը, որ կարճ ժամանակահատվածում որմնանկարների մեծ մասը քայքայվել և մինչ օրս շարունակում է ոչնչանալ: Բացի դրանից՝ խոնավության ազդեցությունից որմնանկարչական նմանօրինակ հիմքը հեշտությամբ ենթարկվում է մեխանիկական փոփոխությունների (դեֆորմացիա), ինչի արդյունքում առանձնանում է պատից: Վերոնշյալ բոլոր երևույթներն առկա են Ս. Աստվածածին եկեղեցու որմնանկարների դեպքում:

Նկ. 2, 3. Ավագ խորանի հյուսիսային և հարավային քիվերից վեր պահպանված որմնանկարները (լսնկ.՝ հեղինակի, 2017 թ.)

Որմնանկարների ներկաշերտը, չնայած հիմքին բավականին լավ կապակցվածությանը, բավականին թույլ է: Ըստ նախնական դիտարկումների՝ ներկաշերտն արված է սոսնձա-խեժային տեխնիկայով, որը, ի տարբերություն տեմպերային գեղանկարչությանը, բավականին զգայուն է խոնավության ազդեցությանը, ինչը մեծապես դրսևորվել է նաև տվյալ դեպքում:

Նկ. 4. Կրաշերտի տակից նկատելի որմնանկարազարդ (լսնկ.՝ հեղինակի, 2017 թ.)

Եկեղեցու որմնանկարների վերականգնման շրջանակներում նախնական դիտարկումներով նախատեսված են որմնանկարչական հիմնաշերտերի և ներկաշերտերի մաքրում և ամրակայում, ընդ որում՝ հիմնաշերտերի ամրակայումը պետք է իրականացնել զգալի ներարկումներով, իսկ առանձին փոքրածավալ և առավել վթարային հատվածների դեպքում՝ հանմամբ, ձևափոխությունների (դեֆորմացիա) ուղղմամբ և վերատեղադրմամբ:

Նկ. 5. Ավագ խորանի պատկերակալը
(լսնկ.՝ հեղինակի, 2017 թ.)

ՍԵՎԱՆԱՎԱՆՔԻ Ս. ԱՌԱՔԵԼՈՑ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՈՐԱՆԻ ՊԱՏԿԵՐԱԿԱԼԻ ՆԿԱՐԱԶԱՐԴՈՒՄՆԵՐԸ

Սևանավանքում 874 թ. կառուցված Ս. Առաքելոց եկեղեցու (մեծ եկեղեցի)[1] ավագ խորանը զարդարում է XIX դարով թվագրվող փայտե պատկերակալ-իկոնոստասը (տե՛ս ներդիր, նկ. 3), որի՝ եկեղեցում գոյություն ունենալու վերաբերյալ տեղեկություններն առայժմ բացակայում են[2]: Պատկերակալի վրա առկա են բավականին ուշագրավ պատկերներ, որոնք ևս կարելի է թվագրել XIX դարով: Նշված պատկերների վերականգնման նպատակով 2020 թ. մարտ ամսին մասնագետների խումբը տեղում կատարեց նախնական հետազոտություններ, որի արդյունքները ներկայացնում ենք ստորև:

Պատկերների ներկաշերտը տեմպերային է՝ արված բավականին բարակ հիմնաշերտի վրա: Առկա են նաև վերանկարման հետքեր, որոնք անզեն աչքով երևում են մինչև 2,5 մ բարձրության վրա, ինչը, թերևս, կարելի է բացատրել հաստ ներկաշերտի առկայությամբ (իրականում ներկաշերտի ամբողջ մակերեսին առկա են վերանկարման հետքեր):

---

[1] Սևանավանքի Ս. Կարապետ եկեղեցու թմբուկի հյուսիսային նիստին է պահպանվել Երևանի հիշատակմամբ մեզ հայտնի վաղագույն մեսրոպատառ վիմագիրը (874 թ.), ուր վկայված է Սյունյաց Մարիամ իշխանուհու նախաձեռնությամբ վանքի Ս. Առաքելոց և Ս. Աստվածածին եկեղեցիների կառուցման, ինչպես նաև Գառնիում ու Երևանում գտնվող այգիներ նվիրաբերելու մասին (տե՛ս ներդիր, նկ. 1, 2): Վիմագիրը քանիցս հրատարակվել է (Լ. Մելիքսեթ-Բեկ, Կ. Ղաֆադարյան, Թ. Հակոբյան, Ա. Ղազարոսյան), վերջին հրատարակությունը տե՛ս ***Ա. Հարությունյան,*** Միջնադարյան Երևանը վիմական արձանագրություններում, «Վէմ» համահայկական հանդես, 2020, Հ^{մր} 3, էջ 248-249 – Ա. Հ.:

[2] Հայտնի է նկարիչ Գրիգոր (Գիգո) Շարբաբչյանի ջրանկարը՝ արված 1910-ական թթ. (այժմ՝ ՀԱՊ), երբ պատկերակալն արդեն Սևանավանքում էր (տե՛ս ներդիր, նկ. 4): Հայաստանի ազգային պատկերասրահի գույքամատյանում նկարը սխալմամբ նշված է «Ագուլիսի եկեղեցու ներքին տեսքը» վերնագրով:

* Մաշտոցյան Մատենադարանի ավագ գիտաշխատող, պ.գ.թ. Արփենիկ Ղազարոսյանը տարիներ առաջ հատուկ անդրադարձել է Սևանավանքի եկեղեցիների պատմաճարտարապետական նկարագրին ու անվանաբանության խնդրին, սակայն պատկերակալի վերաբերյալ որևէ տեղեկություն չի հաղորդում (տե՛ս ***Ա. Ղազարոսյան,*** Սևանա կղզու եկեղեցիները, «Լրաբեր» հաս. գիտ., 1990, Հ^{մր} 1, էջ 49-57) – Ա. Հ.:

Նախնական հետազոտությունների ընթացքում արվեց նաև սպեկտրալ ուսումնասիրություն (տե՛ս ներդիր, նկ. 5ա-զ): Ուլտրամանուշակագույն ճառագայթները վեր հանեցին տեմպերայի վրա արված օլիֆի բավականին հաստ շերտ: Կատարվեցին տեղային մաքրման աշխատանքներ, ինչից պարզվեց, որ ներկի վերին շերտն ավելի մգացած է, քան բնօրինակը, ինչը վկայում է երկու ներկաշերտի որակական տարբերությունների մասին:

Նկարազարդումները հարում են XIX դարի առաջին կեսի «արհեստագործական ոճի» սրբանկարներին: Այդուհանդերձ, դրանք արված են բավականին ինքնատիպ ձեռագիր ունեցող նկարչի կողմից: Պատկերագրորեն ներկայացնում են սրբերի, սերովբեների, ինչպես նաև բուսական զարդագոտիներ: Ստորին շարքում պատկերված են հայրապետական հանդերձանքով և կարմրաներկ արձանագրություններով չորս կերպարներ: Զախակողմյան պատկերի արձանագրությունը չհաջողվեց ընթերցել[3], իսկ մյուս երեքն են՝ Անտոն, Պարսամ, Մակար ճգնակյաց սրբերը (տե՛ս ներդիր, նկ. 6ա-դ):

Վերին շարքի չորս սրբերը, որոնք պատկերված են գրելիս, ըստ երևույթին, չորս ավետարանիչներն են (Մատթեոս, Մարկոս, Ղուկաս, Հովհաննես – Ա. Հ.): Պատկերակալի կամարակապ դռների վերևում նախապես պատկերված են եղել կենաց ծառեր, որոնց վրա հետագայում վերանկարել են երկթև սերովբեներ (տեղ-տեղ վերին ներկաշերտի տակից թափանցում են ծառերի ճյուղերի ուրվագծերը):

Սրբապատկերների և բուսական զարդագոտիների վրա նույնպես նկատելի են վերանկարման հետքեր (տե՛ս ներդիր, նկ. 7ա, բ): Ակնհայտ է, որ հին շերտի ձեռագիրն ավելի պլաստիկ է, քան հետագայում արվածը, ինչը երևում է հատկապես զարդանախշերի վստահ վրձնահարվածներից: Հաստատվեց նաև, որ սրբապատկերների վերանկարումները կրկնում են բնօրինակ պատկերներին, սակայն ավելի անվարժ ձեռքով:

Ինչ վերաբերում է բուն պատկերակալին, ապա այն փայտարվեստի բավականին բարձրարվեստ գործ է, որը նաև ներդաշնակորեն լրացնում է եկեղեցու աղոթասրահի ներքին հարդարանքը: Ցավոք, խնդիրներ կան նաև պատկերակալի փայտե կոնստրուկցիաների (համակառուցվածք) հետ կապված: Որոշ դեպքերում, փայտե դետալները սխալ կերպով են

[3] Կարծում ենք՝ Աբբա Մարկոսն է – Ա. Հ.:

Նկ. 1. Սևանի թերակղզին և համանուն վանքը հարավից (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2018 թ.)

Նկ. 2. Երևան տեղանվան հիշատակմամբ վաղագույն՝ 874 թ. արձանագրությունը Սևանավանքի Ս. Կարապետ եկեղեցու թմբուկի հյուսիսային նիստին (լսնկ.՝ Գ. Սարգսյանի, 2010 թ.)

Նկ. 3. Սևանավանքի Ս. Առաքելոց եկեղեցու ավագ խորանն ու պատկերակալը (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)



Նկ. 4. Գրիգոր (Գիգո) Շարբաբչյան.
Սևանավանքի գլխավոր եկեղեցու ավագ խորանը,1910-ական թթ. սկիզբ
(ՀԱՊ, թուղթ, ջրաներկ, 29x23 սմ)

ա



բ



գ

դ

ե

զ

Նկ. 5ա-զ. Սպեկտրալ ուսումնասիրությունների նմուշներ (լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)

ա

բ

գ

դ

Նկ. 6ա-դ. Ճգնակյաց սուրբ հայրերի պատկերները
(լսնկ.՝ Ա. Հովհաննիսյանի, 2021 թ.)

Նկ. 7ա, բ. Պատկերակալի վնասված հատվածների օրինակներ
(լսնկ.՝ հեղինակի, 2020 թ.)

Նկ. 8. Պատկերակալի վերակազմությունը՝ առաջարկվող հեռացվելիք հատվածներով (ըստ հեղինակի, 2020 թ.)

միմյանց միակցված, ինչը, ի թիվս այլ խնդիրների, ստեղծում է անհարթ մակերեսներ, որի հետևանքով որոշ պատկերներ դիտողին աղավաղված են երևում: Պատկերակալն ունի ընդհանուր ամրակայման կարիք՝ առանձին դետալների վերստին ամրացմամբ: Բացի դրանից՝ վերջին տարիներին խաչկալի պատկերը տեղավորելու նպատակով պատկերակալի կողային հատվածները ծածկվել են լրացուցիչ լամինատե շերտով, ինչը խաթարում է բուն պատկերակալի ամբողջականությունը: Կողային մուտքերի վերնամասում ևս ավելացվել են պատկերակալի ընդհանուր հորինվածքին խիստ աններդաշնակ տախտակներ: Վերականգնման նախագծով առաջարկվում է նաև հեռացնել նշված ավելացված հատվածները (տե՛ս ներդիր, նկ. 8): Պատկերակալի նկարազարդ ընդհանուր մակերեսը 5,5 մ^2 է:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ

Հայ և հարևան ժողովուրդների մշակութային կյանքում նշանակալի դեր ստանձնած Հովնաթանյանների սերունդները գործել և առավել աչքի են ընկել XVII-XIX դդ.՝ նոր աստիճանի բարձրացնելով հատկապես հայ կերպարվեստը: Խարսխված լինելով հայկական միջնադարյան արվեստի վրա, ինչպես նաև յուրացնելով հարևան ժողովուրդների մշակութային հոգեհարազատ տարրերն ու դրանք զուգակցելով նոր ժամանակների հայ արվեստի պահանջներին՝ Հովնաթանյանները կարողացել են սկզբնավորել հայկական գեղանկարչության մի շարք ժանրեր, ստեղծել արտահայտչականության գաղափարա-գեղարվեստական որոշակի կանոններ, որոնք օրինակելի են դարձել ժամանակի կովկասյան գեղանկարչության համար:

Նկարիչների այս գերդաստանի առաջին սերնդի ներկայացուցիչը Գրիգորի և Զորիկի որդի տեր Հոհանն է (Յոհան, Հովհաննես, կինը՝ Սողովմե), որը, իբրև հոգևորական, սպասավորել է Շոռոթի եկեղեցիներում, գրչագրել և ծաղկել ձեռագրեր (մեզ են հասել երեքը) և, ենթադրաբար, եղել է նաև որմնանկարիչ:

ՏԵՐ ՀՈՀԱՆ (ՅՈՀԱՆ)

Տեր Հոհանի՝ Շոռոթի եկեղեցիներում ու վանքերում գրչագրած ու նկարազարդած ձեռագրերից երեքը պահվում են Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում (ՄՄ 2494, 7363, 9242): Այս գործչի ինքնությունը պարզել է արվեստաբան Աստղիկ Գևորգյանը 1982 թ. հրատարակած իր «Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ»[1] հոդվա-

[1] Մինչ այդ Ներսես Ակինյանը, հիմք ընդունելով Նաղաշ Հովնաթանի՝ 1682 թ. Հովսեփոս Փլավիոսի «Վասն հրեական պատերազմին» երկի բնագրի իր ընդօրինակության հիշատակարանում արված «Գրեցաւ զսա ձեռամբ Յովնաթան դպրի ի գէողէն Շոռոթոյ եւ հայրն իմ ըզտէր Յոհանն՝ հանգուցեալն ի Քրիստոս...» գրությունը, նրան նույնացնում էր Շոռոթում XVII դարում ապրած Հովհաննես վարդապետի հետ, որը 1631 թ. Շոռոթում ընդօրինակել է «Լուծմունք Դաւիթ Անյաղթի և Յովի. Որոտնեցւոյ եւ Գր. Տաթեւացւոյ» մատյանը: Երկար ժամանակ շրջանառվում էր հենց այս սխալ տեսակետը (***Մ. Մկրտչյան,*** Նաղաշ Հովնաթան, Երևան, 1957թ., էջ 28. ***Մ. Ղազարյան,*** Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 147): Չնայած նրան, որ Շուշանիկ Նազարյանն ու Աստուր Մնացականյանը հերքել են այդ վարկածը՝ հարցը, այնուամենայնիվ, մնում էր բաց:

ծում՝ առաջին անգամ շրջանառության մեջ դնելով նշված ձեռագրերի հիշատակարանները. «Աւարտ եղև սուրբ Աւետարանս ձեռամբ սուղ և նուաստ սուտանուն կոչեցեալ **սարկաւագ Յոհանին,** որ և աշակերտ եղէ **Մովսէս ռաբունապետի,** որ և կոչի անյաղթ փիլիսոփա, քանզի բազում աշխատութիւն արար ի վերա իմ: Թէ գրի և եթէ ծաղկի վարձս ի Տիրոջէ առցէ: Դարձեալ միւս վարդապետն իմ, որ կոչի **Առաքել:** Նայ այլևս բազում աշխատեցաւ, որ դասատու եղև ինձ»,- կարդում ենք 1653 թ. գրչագրված ՄՄ 2494 Ավետարանի հիշատակարանում[2]:

Ժամանակամերձ ՄՄ 9242 Ավետարանի հիշատակարանում վկայված են նաև գրչի ծնողների, զավակների ու հարազատների անունները. «Բազմաբիծ և դատապարտ ոգւոյ գրողիս՝ **Յոհան** և եթ անուամբ քահանայի, գրեցաւ թվին ՌՃԺԲ (1663), ընտիր յօրինակէ ի գեօղաքաղաքս Շօռոթ... Փա՛ռք... ետ կարողութիւն անպիտան Յոհան և եթ անուամբ քահանայիս, հասուցանել աւարտ զՍուրբ Աւետարանս՝ գիրն, ծաղիկն, կազմն: Գրեցի զսա յընտիր օրինակէ, որ ո՛չ գտանի և կամ երեւի այսպիսի օրինակ, զոր շնորեցաւ ինձ ի ձեռանէ **Յովհաննէս վարդապետին:** ...յիշեսջի՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զգրիչ տէր Յոհանես և զծնօղսն իմ՝ **զԳրիգորն և զՁօրիկն,** և զկողակիցն իմ՝ **զՍօղովմեն,** և զորդիսն իմ՝ **զՄարգարէն և Յովնաթանն,** և զդստերսն իմ՝ **Ձառնիշանն և զՍամիրսն,** և զեղբարսն իմ՝ **Թադէոսն և Հայկազն,** և զքորսն իմ՝ **զԱննախաթունն, զՉինին և զՄարիամն,** և դուք յիշեալ լիջիք»[3]:

Համանման է նաև 1662-1663 թթ. ընդօրինակված ՄՄ 7363 Հայսմավուրքի հիշատակարանը, որտեղ Հոհանը դարձյալ տեղեկացնում է իր ծաղկող լինելու մասին և հիշատակում միևնույն հարազատների անունները:

Ենթադրվում է, որ Հոհանը զբաղվել է նաև որմնանկարչությամբ: Այս վարկածը վերոնշյալ հոդվածում առաջ է քաշել Ա. Գևորգյանը՝ հիմք ընդունելով Հովհաննես եպս. Շահխաթունյանցի՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատան նկարազարդման հեղինակների մասին հաղորդած հետևյալ տեղեկությունը. «Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհօք ձեռաց մեծանուն վարդապետին Լեհացւոյ և քաջ նկարչին հօր

[2] ***Ա. Գևորգյան,*** Հովնաթանյան տոհմի նորահայտ մանրանկարիչներ, «Պատմաբանասիրական հանդես», 1982, թ. 2, էջ 74: Ըստ Գևորգյանի՝ Մովսես ռաբունապետն ապագա կաթողիկոս Մովսես Տաթևացին է (1629-1633 թթ.), Առաքել վարդապետը՝ XVII դարի պատմագիր Առաքել Դավրիժեցին:

[3] Նույն տեղում, էջ 72-73:

Յովնաթանու»[4]: Հղում անելով նախորդ հետազոտողներին՝ Ա. Գևորգյանը գրում է. «Կարծվել է, թե խոսքը Նաղաշ Հովնաթանի մասին է: Գ. Լևոնյանն էլ այդ հայտարարությունը համարել է թյուրիմացություն, որովհետև Լեհացին ու Նաղաշը միաժամանակ չեն աշխատել ու ստեղծագործել: Սակայն Շահխաթունյանցը հազիվ թե «հայր Յովնաթանու» փոխարեն գրեր «հօր Յովնաթանու»: Ե. Մարտիկյանը, Շահխաթունյանցի հիշյալ նախադասությունը մեջբերելիս, «հօր Յովնաթանու» բառակապակցության փոխարեն գրում է միայն «Յովնաթանու»՝ «հօր» բառը հավանաբար ավելորդ համարելով: Մ. Ղազարյանն աշխատում է «հօր Յովնաթանու» տվյալի տակ տեսնել Նաղաշ Հովնաթանին: Ոչ ոք չի մտածել այդ կարևոր տվյալը վերագրել Նաղաշ Հովնաթանի հորը»[5]:

Շարունակելով իր միտքը՝ Ա. Գևորգյանն ավելացնում է. «այժմ, երբ մեզ հայտնի է, որ Հովնաթանի հայրը եղել է նկարիչ և ժամանակակից Ստեփանոս Լեհացուն, ինչո՞ւ չմտածել, թե Շահխաթունյանցը «հօր Յովնաթանու» ասելով նկատի է ունեցել Հովնաթանի հորը՝ տեր Հոհանին: Եվ քանի որ Շահխաթունյանցի ժամանակի համար ճանաչված ու նշանավոր նկարիչ էր Նաղաշ Հովնաթանը, ուստի տեր Հոհանին նա ներկայացնում է Հովնաթանի անունով՝ «հօր Յովնաթանու»: Բացի այդ, Նաղաշ Հովնաթանը հոր մահից հետո Երևան էր եկել վերանորոգելու 1679 թ. երկրաշարժից տուժած Պողոս-Պետրոս, Ս. Անանիա (Զորավոր) և Կաթողիկե եկեղեցիների որմնանկարները, որոնք Գ. Լևոնյանի կարծիքով «գրեթե միևնույն ոճի ու բնույթի որմնանկար, զարդարանքներ ու պատկերներ ունեին»: Կարելի է ենթադրել, որ տասնութամյա պատանին Երևան էր հրավիրվել հոր որմնանկարները վերանորոգելու համար: Անհավանական չէր լինի կարծել, որ Ագուլիսի, Շոռոթի եկեղեցիների որմնանկարները կատարած լինեն տեր Հոհանը և նրա որդիները: Այսպիսով, հիմք կա պնդելու, որ ճանաչում գտած տեր Հոհանը ժամանակին հրավիրվել է Էջմիածին և մասնակցել զանգակատան նկարազարդմանը…»[6]:

---

[4] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** (այսուհետ՝ Ստորագրութիւն), աշխատասիրությամբ՝ ***Ա. Տեր-Ստեփանյանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 36:

[5] ***Ա. Գևորգյան,*** նշվ. աշխ., էջ 79:

[6] Նույն տեղում:

ԹԱԴԵՈՍ ԳՐԻՉ

Թադեոսը տեր Հոհանի եղբայրն էր, որի մասին վերջինս հիշատակում է իր՝ 1663 թ. Ավետարանի հիշատակարանում: Որպես գրիչ և ծաղկող՝ նրան «հայտնաբերել» է Աստղիկ Գևորգյանը: Թադեոսի ծաղկած մատյաններից մեկը՝ 1667-1668 թթ. Աստվածաշունչը, պահվում է Մաշտոցյան Մատենադարանում (ՄՄ 3545): Այն պատվիրել է վերը հիշատակված Հովհաննես վարդապետը. «Եւ ողորմութեանց և յիշմանց կարօտ **Յովաննէս վարդապէտս** ցանկացայ այսմ Կտակարանացս և յաւաքեալ ետու ծրել զայսոսիկ Թադէոս դպրի ի գեւղաքաղաքն Շոռոթ...»[7]: Ըստ Ա. Գևորգյանի՝ Թադեոսն ընդօրինակել է ձեռագրի մինչև 127բ էջը, որից հետո շարունակել է գրիչ Ալեքսանը, իսկ Թադեոսը հավանաբար զբաղվել է ձեռագրի նկարազարդմամբ[8]:

ՄԱՐԳԱՐ

Մարգարը տեր Հոհանի ավագ որդին էր, որի մասին դարձյալ հիշատակում է Աստղիկ Գևորգյանը՝ 1663 թ. Ավետարանի հիշատակարանի հիմամբ: Մաշտոցյան Մատենադարանի հավաքածուում է պահվում 1679 թ. Շոռոթում՝ Մարգարի ընդօրինակած մի Ժողովածու (ՄՄ 4418), որի հիշատակարանից տեղեկանում ենք. «Գրեցաւ թվականիս ՌՃԻԸ (1679) ի գեօղաքաղաքն Շոռոթ, ձեռամբ անարհեստ և մատնագէտ միայն անւամբ դպիր Մարգարիս...: Արդ, աղաչեմ հանդիպողաց սուրբ գրոցս, միով հայր մեղայիւ յիշել զհանգուցեալ հայրն իմ՝ զտէր Յոհանն և Աստուած զյիշողքդ յիշէ...»[9]: Հիշատակարանը պարզում է, որ Հոհանը մահացել է ոչ թե 1682 թ., այլ 1679 թ.[10]:

ՆԱՂԱՇ ՀՈՎՆԱԹԱՆ

Տեր Հոհանի կրտսեր որդին Նաղաշ Հովնաթանն էր՝ նոր շրջանի հայ մշակույթի ամենաերևելի դեմքերից մեկը[11]: Նրա արվեստը լայն շրջանակ է ընդգրկում՝ գրչություն, մանրանկարչություն, հաստոցային նկարչություն, որմնանկարչություն, պոեզիա, երգարվեստ և նվագերգություն:

---

[7] ***Ա. Գևորգյան,*** նշվ. աշխ., էջ 77:
[8] Նույն տեղում, էջ 77-78:
[9] Նույն տեղում, էջ 76:
[10] Նույն տեղում:
[11] «Նաղաշ» բառն արաբերեն նշանակում է զարդանկարիչ: Միջնադարի արևելյան երկրներում, այդ թվում նաև Հայաստանում, այդպես էին անվանում նկարիչներին:

Աներկբա համարվում է XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի խոշորագույն հայ բանաստեղծը, և եթե հիմնավոր են նրան վերագրվող նկարչական գործերի գոնե մի մասը, ապա նաև նշված ժամանակաշրջանի խոշորագույն հայ նկարիչն է:

Նաղաշ Հովնաթանի կենսագրության մասին տվյալները չափազանց սուղ են: Որոշ տեղեկություններ են հաղորդում իր իսկ ընդօրինակած ձեռագրերն ու հեղինակած բանաստեղծությունները: Լրացուցիչ աղբյուր են նաև նրա որդու՝ Հակոբի «Ողբերգութիւն յաղագս մահուան գեղեցկարուեստ վարպետ Յովնաթանի Նաղաշ» բանաստեղծությունը և մատենագրական սակավաթիվ տեղեկությունները:

Նաղաշ Հովնաթանի մասին մեզ հայտնի վաղագույն տեղեկությունները կապված են 1682 թ. ընդօրինակած նրա երկու ձեռագրերի հետ. դրանք են՝ Վենետիկի հավաքածուում գտնվող Հովսեփոս Փլավիոսի «Վասն հրեական պատերազմին» երկի ընդօրինակությունը՝ գրված Ագուլիսի Ս. Թովմա վանքում (Վնտկ 1407/1626), ինչպես նաև Տաղարանը (ՄՄ 3628): Սրանցից առաջինի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ զսա ձեռամբ Յովնաթան դպրի ի գէողէն Շոռոթոյ եւ հայրն իմ ըզտէր Յոհանն՝ հանգուցեալն ի Քրիստոս...»[12], որից իմանում ենք, որ 21 տարեկանում Հովնաթանն արդեն կորցրել էր հորը, ինքն էլ Ագուլիսում դպիր էր և ձեռագրեր էր ընդօրինակում: Երկրորդ ձեռագիրը բովանդակում է Ներսես Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի, Կարապետ վարդապետի, Առաքել Բաղիշեցու, Ներսես Լամբրոնացու չափածո ծավալուն գործերը, իսկ հիշատակարանում կարդում ենք. «Յիշեցէ՛ք զգրիչ Յովնաթանս և դուք յիշեալ լիջի՛ք, թվին ՌԺԼԱ (1682)»[13]:

Նաղաշի բանաստեղծություններից մեզ են հասել շուրջ 90-ը՝ զետեղված ավելի քան 60 ձեռագրերում (դրանցից 50-ից ավելին գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում): Առավել ամբողջական ձեռագրերն են՝ ՄՄ 3263 (1738 թ., գրիչ՝ Պողոս), ՄՄ 4426 (1765 թ., գրիչ՝ Մարգարի որդի Հայրապետ Ագուլեցի), Վիեն. 537, 647:

Նաղաշի կենսագրության մասին ուշագրավ տեղեկություններ են հաղորդում նաև նրա տաղերը, որոնք ներկայացնում ենք քաղվածաբար.

---

[12] Հիշատակարանն առաջին անգամ հրապարակել է Ալիշանն իր «Սիսականում» (տե՛ս ***Հ. Ղեւոնդ Ալիշան,*** Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893, էջ 331):
[13] ՄՄ 3628, 545բ:

2. ՏԱՂ ՍԻՐՈՅ, ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ. «ՅԱՅՏՆԵՑԱԻ ԳԱՐՈՒՆ»-ի ՁԱՅՆՆ Է

. . . .

Ասել ես, թէ՝ «Նա որ Նաղաշ է,
Գիտէ՝ ունքերս ղարաղաշ է,
Ասե՛ք՝ սուրաթիս նման քաշէ».
Քաշե՛լ եմ, զալո՛ւմ, զալո՛ւմ,
Մաշվել եմ, զալո՛ւմ, զալո՛ւմ:

. . . .

Գիր էի գրում քո անուանն,
Միտք է անում քո սիրոյ բանն,
Ետնէս ուղարկեց Վախտանգ Խանն.
Քիզ ո՞նց մոռանամ, զալու՛մ,
Ես ո՞նց հեռանամ, զալում:

. . . .

Խապար ես ղրկել քո բերանէն.
«Ասէք, շատ մի՛ հեռանալ տանէն,
Մէկ օր գալոյ եմ քո քերխանէն».
Մէլով եմ, զալո՛ւմ, զալո՛ւմ,
Սիրոյդ գինով եմ, զալո՛ւմ[14]:

3. ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԳՈՒՐՋՍՏԱՆԱՅ ԳՕՁԱԼՆԵՐԻՆ Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ

Գովեմ սրտիւ ուրախական
Թիֆլիզ քաղաքն պատուական.
Խիստ գեղեցիկ են սիրական՝
Վրաստանայ գօզալներն,
Վրաստանայ գյոզալներն,
Գուրջստանայ խաթուններն[15]:

[14] ***Նաղաշ Հովնաթան,*** Տաղեր, աշխատասիրությամբ՝ ***Ա. Մնացականյանի,*** Երևան, 1983, էջ 17-18: Պահպանել ենք տաղերի համարակալման բնագրային կարգը – Ա. Ա.:
[15] Նույն տեղում, էջ 19:

4. ՏԱՂ ՍԻՐՈՅ ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ. «ՔՈՒՍԱՐ ՔԱՔՈՒՐ ՔՈՒՍԱՐ»-Ի ՁԱՅՆՆ Է

. . . .

Ասել ես. «Ինձնէ քեզ շատ բարև լինի,- Է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Սեղանն զարդարել արծաթ և չինի,- Է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Գա՛մ, քեզի մօտ նստիմ, տո՛ւր սիրոյ գինի,- Է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Իմ գեղեցիկ պատկերիս նման շինի»,- Է՞ր ես ինձնէ հեռանալիս[16]:

11. ՏԱՂ ՍԻՐՈՅ ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ. «ՅՈՒՍ ԷՆԻ»-Ի ՁԱՅՆՆ Է

. . . .

Գերի Նաղաշ եմ, պատկերիդ նման կու քաշեմ, կարմիր վարդի թէր,
Ինձ շատ մի՛ թողիլ, որ քո դարդէն հալիմ, մաշեմ, կարմիր վարդի թէր,
Սիրուդ երվում եմ, ասել ես խիստ դալամդաշ եմ, կարմիր վարդի թէր,
Մէկ գիշէր ինձ տար ծոցդ պահէ, քեզ սռդաշ եմ, կարմիր վարդի թէր[17]:

28. ՏԱՂ ՍԻՐՈՅ. Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ ՎԱՍՆ ՈՒՐԱԽՈՒԹԵԱՆ

. . . .

Քո ծոցն՝ ծաղկանց բուրաստան,
Շէն քաղաք է Ֆռանգստան, զալում եա՛ր, Է՛յ:
Ի՞նչ անեմ, չունիս դատաստան,
Նազլու եար, ինսաֆ արա, ամա՛ն, ամա՛ն[18]:

31. ՏԱՂ ՍԻՐՈՅ Ի ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ

. . . .

Գուրջստան դարիպ մնացի,
Քո կարօտուդ խիստ շատ լացի,
Քեզ որ տեսայ՝ աչքս բացի,
Խիստ խնդացի:
Բանաւշայ, սմբուլ,
Ղըրմզի գուլ,
Է՛յ, քաղցր բլբուլ:

---

[16] ***Նաղաշ Յովնաթան,*** նշվ. աշխ., էջ 24:
[17] Նույն տեղում, էջ 35:
[18] Նույն տեղում, էջ 60:

Մեր մէջն չլնէր թշնամի,
Ամէն օր քո լեզուդ ծամի,
Ես՝ նաւավար, դուն՝ մէկ գեամի,
Ա՜խ, լաւ քամի.
Դաստուր տար Խանն,
Նստեմք ձիանն,
Դէպ՝ մեր վաթանն[19]:

33. ՏԱՂ ՍԻՐՈ

. . . .

Գին չէ մին մատիդ քո, Թինա՛, թամամ Հնդէստան, է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Թարիֆըդ քո հասաւ ի Ֆռանկէստան, է՞ր ես ինձնէ հեռանալիս,
Կարօտ են քո տեսուդ չուր Հապաշեստան, է՞ր ես ինձնէ հեռանալիս[20]:

49. ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԵՐԵՒԱՆԱՅ ՔԱՂԱՔԻՆ

. . . .

Ես էլ Երևան շատ կացայ,
Նոցա հասիաթն իմացայ,
Հազար բան պասպարես նոցա,
Կասես՝ Ո՞ւր է: Թէ՝ Մոռացայ:

. . . .

Նաղաշն Երևան շատ կացաւ,
Ձիկարն այրեց, հիւանդացաւ,
Սպիտակ սառուցին զարմացաւ,
Խմեց՝ սրտիկն զովացաւ[21]:

51. ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ԿԱՆԱՆՑ, ՁՈՐ ՆԵՂՈՒԹԻՒՆ ԿՐԵՆ Ի ՁԵՌԱՑ ՄԵԾ ՊԱՍԻՆ ԵՒ ՁԱՀՐԱՅԻՆ, ՅՈՎՆԱԹԱՆԷ ԱՍԱՑԵԱԼ

. . . .

Կանանց դարդէն Յովնաթանն
Գնաց դէպ Թիֆլիզու Խանն,
Կամի այնտեղ դնել վաթանն.
Թող ազատվի կանանց բերնէն,
Նոցա տնազ ու սուտ բանէն[22]:

---

[19] ***Նաղաշ Յովնաթան,*** նշվ. աշխ., էջ 68:
[20] Նույն տեղում, էջ 72:
[21] Նույն տեղում, էջ 101:
[22] Նույն տեղում, էջ 110:

70. ՎԱՍՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՐՈՒԵՍՏԱՒՈՐԱՑ, ՈՐ Ո՛Չ ՃԱՆԱՉՕՂ ԿԱՅ ԵՒ Ո՛Չ ՊԱՏԻՒ ԴՆՕՂ

. . . .

Իմ քաշած պատկերն, որ լաւ ըռանկ է,
Բանն բարակ է, դեղն ֆռանկ է.
Հենց պատկեր կառնեն, որ քօռ ու լանկ է,
Կասեն. «Աժան է, քոնն՝ խիստ թանկ է»[23]:

84. ՏԱՂ ԵՒ ԳՈՎԱՍԱՆՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՆ ՇՈՌՈԹ ԳԵՂՋԻՆ ԵՒ ԲԱՐՁՐԱԲԵՐՁ ԿԱԹՈՒՂԻԿԷԻՆ, ՈՐ ԿԱՌՈՒՑԵԱԼ Է Ի ՎԵՐԱՅ ՆՈՐԱ

. . . .

Կաթուղիկե՛, խիստ հրաշազան
Ծաղկազարդեալ է զանազան,
Տաճար մաքուր և սրբազան,
Ցուպ զօրութեան և գաւազան[24]:

Այսպիսով, Նաղաշի տաղերը պարզում են, որ նա եղել է դիմանկարիչ, նկարել է նրբաոճ, եվրոպական ներկերով, որոշ ժամանակ ապրել է Երևանում, այնտեղ հիվանդացել է, ապա Վախթանգ VI-ի կողմից հրավիրվել է Թիֆլիս, երկար ժամանակ ապրել է այնտեղ, այդ ընթացքում թույլտվություն է ստացել այցելելու հայրենիք, ճանապարհորդել է տարբեր երկրներում, այդ թվում՝ Ֆռանգստան-Եվրոպայում, կապված է եղել Շոռոթի Ս. Հակոբ եկեղեցու հետ (թերևս ինքն էլ որմնանկարազարդել է):

Բավականին կարևոր տեղեկություններ է հաղորդում նաև Հակոբի ողբերգը. այստեղ իմանում ենք, որ հայրը մահացել է 1722 թ. հոկտեմբերի 28-ին (ՌՃՀԱ թուոջ, ամսեանն հոկտեմբերի ԻԸ)[25], վաթսունմեկ տարեկան հասակում (վաթսուն եւ մէկ ամ յորժամ վճարեաց, եկն Գաբրիէլ, հոգին հրաւիրեաց)[26]: Որդին նրան բնորոշում է «շնորհալից վարպետն

[23] ***Նաղաշ Հովնաթան,*** նշվ. աշխ., էջ 167-168:

[24] Նույն տեղում, էջ 204:

[25] Հիմնվելով այս տողերի վրա՝ մինչ այժմ բազմաթիվ աղբյուրներում, որպես Նաղաշ Հովնաթանի մահվան տարեթիվ, նշված է 1722 թ.: Սակայն Մանյա Ղազարյանը նշում է, որ ՌՃՀԱ Նավասարդի 1-ը 1721 թ. սեպտեմբերի 22-ն է, հետևաբար հոկտեմբերի 28-ը կընկնի 1721 թվականի մեջ (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 148):

[26] Նաղաշի շիրմաքարը, շոռոթեցի տարեցների պատմելով, 1920-ական թթ. դեռ պահպանված է եղել: 1961 թ. հոկտեմբերին, երբ Նաղաշի ծննդյան 300-ամյակի առթիվ Մաշտոցյան Մատենադարանի մի խումբ աշխատակիցներ այցելում են դեռևս չհայաթափված Շոռոթ, տապանաքարն արդեն չկար:

իմաստուն, որ միշտ զարդարէր բազում սրբոց տուն, մէջ Հայաստանեաց՝ ծաղիկ, ոսկի սիւն», «շնորհալից ձեռն նկարող սրբոց…, քարտուղար տառից հնոց և նորոց», «բազում վանորայք և շատ միաբան, գիտուն կարդացողք և աստուածաբան, դիմէին առ քեզ, հարցանէին բան, տայիր պատասխան», «խոհեմ սարկավագ», «երկիր շատ շրջեաց տար յաշխարհ օտար, ամէն սիրելեաց օգնական, սատար», «ծանօթ համայր մեծաց իշխանաց, բարի հաւատով փոխեալ ի կենաց», «անուամբ հռչակեալ, նաև բանիբուն, յոյժ ուսումնասէր, աննինջ և անքուն» և այլ տողերով, ինչից երևում է, որ Նաղաշը եկեղեցիներ է «զարդարել» սրբերի և ծաղիկների պատկերներով, գրչության մեծ գիտակ է եղել, շատ իմաստուն և ուսյալ, եղել է սարկավագ, ճանապարհորդել է օտար երկրներում, ծանոթ է եղել բարձրաստիճան անձանց հետ և ինքն էլ մեծահամբավ է եղել:

Ամբողջ XVIII դարի ընթացքում մատենագրական և այլ աղբյուրներում Նաղաշի անունն այլևս չի հիշատակվում: Սիմեոն Երևանցին «Ջամբռ»-ում խոսում է Աստվածատուր Համադանցու ձեռնարկած Ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդման աշխատանքների մասին, սակայն չի նշվում հեղինակի անունը: Նույնը վերաբերում է նաև Համադանցու թողած սևաներկ արձանագրությանը՝ տաճարի թմբուկի բոլորակին: Ղուկաս Կարնեցու «Գավազանագրքում», որը Գարեգին Հովսեփյանը հրապարակել է «Արարատ» ամսագրում (1901, Գ, էջ 183-190, Ե-Զ, էջ 326-330), խոսվում է միայն Հովնաթան Հովնաթանյանի մասին:

XIX դարում առաջին անգամ Նաղաշի մասին գրում է Հակոբ Ինճիճյանը՝ խոսելով Ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդումների մասին. «Պատկերք ամենայն խորանացս են գործ նկարչին, որ մականուանեալ կոչի Նաղաշ Յովնաթան յազգէս հայոց, ճարտար նկարիչ, և յաջող բանաստեղծ ՛ի ռամկաց լեզու ՛ի ժամանակս Դահմաս գուլի (Թահմազ Ղուլի – Ա. Հ.) խանին»[27]:

Նաղաշին է վերագրվում նաև Հովհաննես եպս. Շահխաթունյանցի աշխատության հետևյալ հատվածը.

«Գտանին յայսմ փառացի տաճարիս քաջարուեստ պատկերք տէրունականք եւ ականաւոր սրբոց, որպիսի են քաջահմուտ նկարք՝ պատ-

[27] ***Հ. Ղուկաս Ինճիճեան,*** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն առաջին, Վենետիկ, 1806, էջ 262: Բացառված չէ իհարկե, որ Նաղաշին շփոթում է թոռան՝ Հովնաթան Հովնաթանյանի հետ:

կերքն աւետման շրջանա-կաւ ամրացեալ ի բարձրութեան անդ արեւ-մտակողման երկուց սեանցն արեւելեան. հրեշտակին՝ ի սիւն հիւսիսային. կուսին սրբոյ՝ ի հարաւայինն: Եւ պատկերքն երկոտասան առաքելոց, յորում է շօշափումն Թովմայի, դասաւորեալք ի կիսաշրջանակի անդ կա-մարայարկին արեւմտեան մեծի դրանն ի ներքին կողմանէ. եւ պատկերքն երկոքին՝ աղօթելոյն Տեառն ի պարտիզին, որ կայ եդեալ ի ներքուստ ի հարաւային կողմանէ սեղանոյ սրբուհւոյ օրինաբանեալ Կուսին. եւ յարու-թեանն Ղազարու, որ եդեալ է յորմն հիւսիսային մերձ ի սեղան Որդւոցն Որոտման: Եւ այլ պատկերք տէրունականք առ պատշգամբաւ մեծի կա-թուղիկէին եւ զանազան սրբոց հայրապետաց եւ վարդապետաց ի սիւնս եւ յորմունս տաճարիս այսորիկ: Ի կիսաշրջանակի կամարայարկին սեղանոյ Սրբոյն Ստեփաննոսի նկարեալ կան հայրապետական զգես-տուք ի կանգուն պատկերք սուրբ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի, որդւոց եւ թոռանց նորա: Նոյնպէս ի կամարայարկին սեղանոյ Յովհաննու Կա-րապետի պատկերքն սրբոց առաքելոց Պետրոսի եւ Պօղոսի եւ այլ սրբոց հայրապետաց: Ի սոսա քաջարուեստ են պատկերք երկուց առաքելոցն:

Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վար-դապետին Ստեփաննոսի Լեհացւոյ եւ քաջ նկարչին հօր Յովնաթանու»[28]:

Վերջին նախադասությունը տարբեր կերպ է մեկնաբանվել: Գարե-գին Լևոնյանն այն համարել է թյուրիմացություն, որովհետև Լեհացին ու Նաղաշը միաժամանակ չեն աշխատել ու ստեղծագործել[29]: Եղիշե Մար-տիկյանը, Շահխաթունյանցի հիշյալ նախադասությունը մեջբերելիս, «հօր Յովնաթանու» բառակապակցության փոխարեն գրում է միայն «Յովնաթանու»՝ «հօր» բառը հավանաբար ավելորդ համարելով[30]: Ման-յա Ղազարյանը «հօր Յովնաթանու» տվյալի տակ տեսնում է Նաղաշ Հովնաթանին[31], իսկ Աստղիկ Գևորգյանը «հօր Յովնաթանու» արտա-հայտությունը վերագրում է Նաղաշի հորը՝ տեր Հոհանին: Մենք, ինչպես վերը նշել ենք, հակված ենք այդ արտահայտության տակ տեսնել Հով-նաթան Հովնաթանյանի հորը՝ Հակոբին:

---

[28] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 35-36:

[29] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդա-յին արվեստ», 1938, թ. 4, էջ 54:

[30] ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Երևան, 1971, էջ 30:

[31] ***Մ. Ղազարյան,*** Ստեփանոս Լեհացի, «Էջմիածին», 1978, Զ, էջ 52:

1885 թ. «Մասիս» շաբաթաթերթի էջերում հրատարակվում են «Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ», «Այսօր ցնծամք պարելով», «Եկայք այսօր ժողովեցէք, ընկերք միաբան» և «Ի միասին ամենեքեան» բանաստեղծությունները՝ հեղինակին ներկայացնելով որպես XVI դարի երգիչ. «Նաղաշ Յովնաթան 16րդ դարուն մէջ ապրող հայ երգիչ մ'է արեւելեան Հայոց աշխարհներուն մէջ»[32]: Տարիներ անց՝ 1892 թ., Գարեգին Լևոնյանն իր «Հայ աշուղներ» գրքում հրապարակում է Նաղաշի «Ուսկի՞ց կուգաս, քաղցր բլբուլ» տաղը՝ նշելով, որ հեղինակի մասին ոչինչ հայտնի չէ[33], իսկ «Յորժամ եղև գարուն, արև ծագեցաւ» երգը, որը ևս Նաղաշինն է, վերագրում է Ադամ-Նաղաշովին[34]:

Նույն 1892 թ. Ալեքսանդր Երիցյանը «Արծագանք» շաբաթաթերթի էջերում մի քանի տող նվիրում է Նաղաշի կենսագրությանը. «Նա (Վախթանգ Զ-ն – Ա. Ա.) երևի այնքան հմուտ էր հայերէնին, որ Թիֆլիզ եկած պանդուխտ Շոռոթեցի նաղաշ Յովնաթանին անդադար հրաւիրած է եղել իւր մօտ սորա հայերէն երգերը լսելու: Նաղաշ Յովնաթանը, որ թէ նկարիչ է եղել և թէ բանաստեղծ, իւր մէկ երգի մէջ դէպի իւր սիրեկանը՝ գանգատվում է, որբ այդ սիրեկանից ստացած նամակին պատասխանն էր գրում, յանկարծ կանչել է նորան Վախթանգ թագաւորը և գրութիւնը մնացել է կիսատ: Յառաջ ենք բերում Նաղաշ Յովնաթանի երգից այդ կտորը, որ ուղղած է բանաստեղծը իւր սիրեկանին...»[35]: Այնուհետև մեջբերում է երեք հնգատող տարբեր բանաստեղծություններից և շարունակում. «Նաղաշ Յովնաթանի երգերից երևում է, որ նա տեղեակ է եղել նաև թուրքերէնին, բայց վրաց լեզու գիտենալը ոչ մի բանից չէ երևում և հաւանականաբար՝ իւր հայերէն երգերից զուարճացող արքայն և սորա արքունիքը հասկանում են եղել (թերևս՝ հասկացել են – Ա. Հ.) հայերէն»[36]:

1893 թ. Հ. Ղևոնդ Ալիշանը, Ագուլիսի Ս. Թովմա վանքի մասին խոսելիս, նշում է. «Ի թաղի եկեղեցւոյս յամի 1682 Յովնաթան Շոռոթեցի, որպէս թուի՝ երգիչն, ընդօրինակեալ է զգիրս Յովսեպոսի պատմութեան

[32] ***Յ. Յարութիւնեան,*** Գաւառական երգեր (Գիներգութիւնք Նաղաշ Յովնաթանի), «Մասիս», 1885, թ. 3755, էջ 657-658:

[33] ***Գ. Լեւոնեան,*** Հայ աշուղներ, Ալէքսանդրապոլ, 1892, էջ 79-80:

[34] Նույն տեղում, էջ 67-68: Նույն սխալը կրկնված է նաև «Քնար հայկական» և «Սոխակ Հայաստանի» ժողովածուներում:

[35] ***Ա. Երիցեանց,*** Մի վրացի՝ հայ աշուղ դարձած, «Արծագանք», 1892, թ. 63, էջ 1:

[36] Նույն տեղում:

պատերազմաց Հրէից զոր յայտ առնէ իսկատիպ գրուածն»[37] (նկ. 1): Ապա հրապարակում է այդ ձեռագրի վերոնշյալ հիշատակարանը[38]:

1896 թ. նշանավոր հայագետ, ձեռագրագետ Հ. Հակոբոս Տաշյանը Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանի ձեռագրացուցակում նկարագրել է տեղի հավաքածուի Հմր 537 ձեռագիրը, որը, ինչպես նշել ենք, Նաղաշի տաղերի ամենաամբողջական օրինակներից մեկն է (պարունակում է նաև Հակոբի ողբերգը) և հայտնում է համառոտ տեղեկություններ Նաղաշի մահվան թվականի, որդիների մասին և այլն[39]:



Նկ. 1. Նաղաշ Հովնաթանի 1682 թ. ձեռագրի հիշատակարանը (արտատպված Հ. Ղևոնդ Ալիշանի «Սիսական» աշխատությունից, էջ 331, նկ. 97)

[37] ***Ղ. Ալիշան,*** Սիսական, էջ 329:

[38] Նույն տեղում, էջ 331: Ալիշանը «Սիսական»-ում մեկ անգամ էլ է անդրադառնում Նաղաշ Հովնաթանին. «Իսկ ի բնիկն ի Շոռոթ՝ յայս ժամանակս և յետոյ եւս ծանօթ են ինձ գրոց աշակերտք, Յովնաթան դպիր որդի Յովհաննու երիցու, որոյ ձեռագիր մատեանք գտանին յամին 1682» (նույն տեղում, էջ 357):

[39] ***Հ. Յակովբոս Վ. Տաշեան,*** Ցուցակ հայերէն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 1006-1009:

1899 թ. «Լումայ» ամսագրի Ա գրքի խմբագրական բաժնում (էջ 276-282) տպագրվում են Նաղաշի «Վասն Վարդան ժամահարին» (Գրեմ քարտէս յոյժ ողբալի) և «Տաղ ի վերայ Գուրջստանայ գօզալներին» (Գովեմ սրտիւ ուրախական) բանաստեղծությունները՝ ըստ Հովհաննես Մկրյանի մոտ եղած մի գրչագրի: Այդ գրչագրում «Վասն Վարդան ժամահարին» բանաստեղծությունն ունեցել է թվական՝ ՌՃԿԲ (1713):

XX դարասկզբի աղբյուրներից հարկ է նշել մի քանի համառոտ ակնարկ.

Առաջինը Հ. Սուքիաս Էփրիկյանի կոթողային «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» աշխատության «Էջմիածին» հոդվածում է, որտեղ կարդում ենք. «Տաճարի բոլոր ներքին որմերը և առաստաղը ներկուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686-ին (պետք է լինի 1786-ին – Ա. Ա.), Յովնաթան ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արաբական զարդեր, ծաղիկներ, թռչուններ ևն: Կան նաեւ կտաւի վրայ նկարուած բաւական թուով որբոց պատկերներ, շատերը Ստեփանոս Լեհացիէն և նաղաշ Յովնաթանէն նկարուած. հատ մ՚ալ ղրկած է Քէր Փորթըր Անգլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Եփրեմ կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Յիսուս մանուկները օրհնելով»[40]:

Ինչպես տեսնում ենք, հատվածն ակնհայտորեն հիմնված է Շահխաթունյանցի տողերի վրա և չի կարող համարվել նորություն: Նույն տողերը գրեթե նույնությամբ (միայն Կարնեցու սևաներկ արձանագրության հավելմամբ) կրկնված են մեկ տարի անց՝ 1903 թ. Մայր տաճարի հիմնադրման 1600-ամյակի առթիվ լույս տեսած Էփրիկյանի «Էջմիածին. պատկերազարդ նկարագրութիւն» գրքում. «Տաճարի բոլոր ներքին որմերը և առաստաղը ներկուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686-ին (պետք է լինի 1786-ին – Ա. Ա.), Յովնաթան ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արաբական զարդեր, ծաղիկներ, թռչուններ ևն. այս նորոգութեանց յիշատակարանը դրոշմուած է մեծ կաթողիկէի ստորին շրջապատի խարսխին վրա»[41]:

Բերում է սևաներկ արձանագրությունը, ապա՝ շարունակում. «Կան նաեւ կտաւի վրայ նկարուած բաւական թուով որբոց պատկերներ, շատերը Ստեփանոս Լեհացիէն և նաղաշ Յովնաթանէն նկարուած. հատ

[40] ***Հ. Սուքիաս Էփրիկեան,*** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, Վենետիկ, 1902, էջ 787:

[41] Նույնի՝ Ս. Էջմիածին. 303-1903. պատկերազարդ նկարագրութիւն, Վենետիկ, 1903, էջ 28-29:

մ՛ալ ղրկած է Քէր Փորթըր Անգլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Եփրեմ կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Յիսուս մանուկները օրհնելով»[42]:

Երկրորդը Գարեգին Լևոնյանի փոքրիկ, բայց կարևոր անդրադարձն է Նաղաշ Հովնաթան աշուղին: Ներկայացնելով հայ աշուղական արվեստի զարգացման ուղին՝ Լևոնյանը կարծում է, որ արվեստի այս տեսակը սկիզբ է առել տաղասացներից՝ հասնելով մինչև Նահապետ Քուչակ, Նաղաշ Հովնաթան և վերջինից հետո, արդեն աշխարհիկ բնույթ ստացած, երկու ճյուղի կամ դպրոցի բաժանված, բայց խոշորագույն ներկայացուցիչներ Շիրինն ու Սայաթ-Նովան[43]:

Երրորդը Մեսրոպ արք. Սմբատյանցի համառոտ ակնարկն է՝ Երնջակի Ս. Կարապետ վանքին նվիրված իր գրքում: Նկարագրելով եկեղեցին՝ Սմբատյանցը հրապարակում է նկարազարդման արձանագրությունը (հարավային ավանդատան երկրորդ հարկի արևմտյան որմ). «ՌՃՀԹ թվին (1740) սուրբ Սեղանն ծաղկեցավ ձեռամբ Յովնաթանի որդւոցն՝ Յակոբին և Յարութիւնին, ուրեմն յիշեսջի՛ք ի բարին, և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ»[44]: Այնուհետ ծանոթագրում է. «Նաղաշ Յովնաթանը ՇՀոթեցի էր, և յայտնի նկարիչ էր և երգիչ, և երգասաց. որոյ ձեռագիր երգարանը մնայ նորա թոռանց մօտ ՛ի Տփխիս»[45]: Նորից դառնալով տաճարի նկարազարդմանը՝ գրում է. «Տաճարի սեղանը ծաղկեցրած է 1740 թւին ՇՀոթեցի Նաղաշ Յովնաթանը (շփոթմունք է թերևս – Ա. Ա.), որոյ յիշատակագիրը գրուած է ձախակողմեան խորանի վրայի պահարանի մէջ, ինչպէս գրուած է վերևը: Նաղաշ Յովնաթանի և նրա որդւոց նկարած ծաղկենկարները այսօր իսկ տեղ տեղ երևում են սեղանոյ կամարների վրայ, նոյնպէս և Պօղոս-Պետրոս առաքելոց պատկերներն, ուստի և կարևոր է ամբողջացնել ծաղիկները, կամ բոլորը սպիտակացնել...»[46]: Այնուհետ ծանոթագրում է. «Նաղաշ Յովնաթանի թոռունքը այսօր իսկ կան Տփխիսում, որոց մին աստիճանաւոր տէրութեան Առաքելն Յովնաթանեանց (1862 թւէն մեր սանն է). ուսեալն ՛ի Լազարեանց Ճեմարանին:

---

[42] ***Հ. Սուքիաս Էփրիկեան,*** Ս. Էջմիածին. 303-1903. պատկերազարդ նկարագրութիւն, էջ 28-29:

[43] ***Գ. Լեւոնեան.*** Աշուղների մասին պատմական-քննական հայեացք, «Ազգագրական հանդէս», գիրք X, Թիֆլիս, 1903, էջ 67, 69:

[44] ***Մեսրովբ արք. Սմբատեանց,*** Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 6: ՌՃՀԹ-ն ստացվում է 1730, ինչը սխալ է, պետք է լինի ՌՃՁԹ:

[45] Նույն տեղում, էջ 6, ծնթ. 2:

[46] Նույն տեղում, էջ 15:

Բնաշխարհիկ բառարանի հեղինակը (յերես 787) կասէ Ղուկաս կաթողիկոսի ժամանակ – 1686 (պետք է 1786 լինի, որովհետև 1686 թւին Եղիազար կաթուղիկոսն է) Էջմիածնայ տաճարի միջի պատկերները և ծաղկանկարները նկարւած են Նաղաշ Յովնաթանի ձեռքով»[47]:

Սմբատյանցը հրապարակում է նաև Ս. Կարապետ վանքի վերանորոգման և նկարազարդման դրամահավաքի՝ Մկրտիչ Ջահկեցի եպիսկոպոսի (կաթողիկոս Ղազար Ջահկեցու եղբայրն է) օրհնության գիրը՝ գրված 1740 թ. մարտի երեքին. «....ընդ օրհնութեան գրոյս ծանուցանեմ սիրելեացդ մերոց, զի վանքն սբ Կարապետի շինեալ յերջանիկ ճգնաւորեն Մաղաքիայ վարդապետէ, և նորոգեալ յերիցս երանեալ յԵսայի վարդապետէ՝ պէտս ունի պայծառութեան, այն է պէտք են նկարուք և պատկերօք ծաղկեցուցանել զսեղանն և զաւազանն և զկամարսն Կաթուղիկէին, որոյ աղագաւ և օժանդակութիւն սիրելի ժողովրդոցդ հարկաւոր է մեզ, որովհետև նկարիչն և ծաղկեցուցիչն պատրաստ են, որք են Շոռոթեցի երգասաց դպիր Յովնաթանն (հավանաբար կամ Մկրտիչ եպիսկոպոսն է սխալ գրել, կամ Սմբատյանցն է սխալ արտագրել – Ա. Ա.) և նորա օրհնեալ որդիքն՝ Յարութիւնն եւ Յակոբն, որք ՛ի ժամանակիս յայտնի և պայծառ նկարիչքն են...»[48]:

Հիշատակության է արժանի նաև Ս. Էջմիածնի միաբան, լուսարար Սահակ վրդ. Աստվածատրյանի «Պատկերացոյց»-ը, որտեղ հեղինակը, հրապարակելով Նաղաշ Հովնաթանին վերագրվող «Տրդատ, Աշխէն եւ Խոսրովիդուխտ» նկարը, գրում է. «Նկարս առնուած է Մայր Տաճարի կրածեփ որմից փրթած մի բեկորի վերայից, որ այժմ գտնուում է Հայրիկեան թանգարանում: Կը թուի՝ թէ ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչներից առաջ արդէն նկարուած էր»[49]:

Սակայն «նաղաշագիտության»՝ որպես այդպիսինի հիմնադիր՝ աներկբայորեն պետք է համարել ականավոր գրող, քննադատ, բանասեր, արվեստաբան և հասարակական գործիչ Արշակ Չոպանյանին (1872-

[47] ***Մեսրովբ արք. Սմբատեանց,*** Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, էջ 15, ծնթ. 1:

[48] Նույն տեղում, էջ 465:

[49] ***Սահակ վրդ. Աստուածատրեան,*** Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից, պրակ Ա, Վաղարշապատ, 1910, էջ 11: Հեղինակը Ստեփանոսին և Հովնաթանին համարում է Ղուկաս Կարնեցու ժամանակ գործած նկարիչներ (տե՛ս նույն տեղում, էջ 10): Նրանց վերագրված նկարների ցանկը կհիշատակենք Հովնաթան Հովնաթանյանին անդրադառնալիս:

1954 թթ.): «Նաղաշագիտությանը» նվիրված անդրանիկ աշխատությունն էլ հանդիսացավ 1910 թ. Փարիզում լույս տեսած նրա «Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գիրքը: Աշխատությունը բաղկացած է ներածությունից, երկու մեծ գլուխներից՝ «Նաղաշ Յովնաթան բանաստեղծը» և «Յովնաթան Յովնաթանեան նկարիչը», «Նաղաշ Յովնաթանի տաղերը» բաժնից և բառարանից: Ներածության մեջ Չոպանյանը գրում է, որ Նաղաշի տաղերին ծանոթացել է 1898 թ.՝ Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում: Հետագայում, նրա մասին տեղեկություններ հավաքելիս, Վարդգես Սուրենյանցից ու Փանոս Թերլեմեզյանից իմանում է, որ Ս. Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների հեղինակը ևս Նաղաշ Հովնաթանն է: Ուսումնասիրությունների արդյունքում Չոպանյանը գալիս է այն մտքին, որ «Յովնաթան աշուղը, թէպէտ և ինքն ևս նկարիչ, Էջմիածնայ տաճարին որմնանկարիչը չէ, այլ այս վերջինը՝ թոռն է առաջնոյն»[50]:

Այս եզրակացության գալու պատճառն այն է, որ Չոպանյանն օգտվել էր միայն Շահխաթունյանցի աշխատությունից ու Ղուկաս Կարնեցու «Գավազանագրքից». նա, ըստ էության, ծանոթ չի եղել Աստվածատուր Համադանցու սևաներկ արձանագրությանն ու «Ձամբռ»-ին, որտեղ խոսվում է տաճարի նկարազարդման մասին և արդյունքում տաճարի բոլոր որմնանկարները վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին:

Այդուհանդերձ, չնայած նշված վիճելի դիտարկմանը, Չոպանյանի աշխատությունը կարևոր էր «նաղաշագիտության» անիվը շարժման մեջ գցելու համար: Ա գլխում նա հրապարակում է Նաղաշ Հովնաթանի՝ թվով 46 բանաստեղծություն, որոնց մեծ մասը՝ առաջին անգամ: Հովնաթան Հովնաթանյանին նվիրված Բ գլխի բովանդակության մասին դեռ կխոսենք, այստեղ միայն նշենք, որ հեղինակը խիստ ուշագրավ մանրամասներ է հայտնում Խրիմյան Հայրիկի կողմից որմնանկարների ոչնչացման մասին: Բացի դրանից՝ աշխատության վերջում, մեջբերելով Շահխաթունյանցի հայտնի նախադասությունը, անդրադառնում է նաև Ստեփանոս Լեհացուն («հօր Յովնաթանու» արտահայտությունը վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին): Հավանական է համարում, որ միգուցե նա հայ-լատիներեն առաջին բառարանի հեղինակ Ստեփանոս Ռոշքան

[50] ***Ա. Չոպանեան,*** Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը, Փարիզ, 1910, էջ 9:

է, որին էլ վերագրում է Մայր տաճարի իտալական ոճի նկարները՝ Գաբրիելն ու Մարիամը, Գաբրիել և Միքայել հրեշտակապետերը և տասներկու առաքյալները[51]:

Չոպանյանի աշխատությանը հետևում են մի քանի գրախոսականներ, որոնցից ուշագրավը Հովհաննես Թումանյանի «Նաղաշ Հովնաթանը և նրա, Քուչակ Նահապետի ու Սայաթ-Նովայի սերը» խորագրով հոդվածն է[52]: Բարձր գնահատելով Չոպանյանի աշխատությունը՝ Թումանյանն անդրադառնում է նախ Խրիմյան Հայրիկի «վանդալիզմին»՝ գրելով, որ «ինչքան էլ մեծ լինի մարդու հարգանքը դեպի Խրիմյանի հիշատակը, չի կարող չսիրել Չոպանյանի՝ գեղարվեստագետի էս ազնիվ զայրույթը, որով զայրանում է նրա արարքի դեմ՝ խստությամբ դատապարտելով քանդողական մոլեգնությունն ու քանդիչ ձեռքը»[53]: Թումանյանը կարևոր տեղեկություններ է հայտնում նաև Հովնաթան Հովնաթանյանի մասին, մասնավորապես՝ նա է առաջինը հրապարակում Հովնաթանին ուղղված Ղուկաս Կարնեցու նամակը: Այս և այլ հարցերին կանդրադառնանք Հովնաթան Հովնաթանյանին նվիրված հատվածում, իսկ մինչ այդ մեջբերում ենք Թումանյանի հոդվածի՝ Նաղաշ Հովնաթանին վերաբերող առավել կարևոր հատվածները. «Նաղաշ Հովնաթանը ծնվել է աշուղների հայրենիքում՝ Զանգեզուրի (Սիսական) Շոռոթ ավանում 1661 թվին, մեռել է 1722-ին: Շատ աշխարհ տեսած, գիր ու գիտություն սովորած, ազնիվ ու քեֆ սիրող մի անձնավորություն է եղած և շատ սիրված իր ժամանակին»[54]:

Թումանյանը հանգամանորեն մեկնաբանում է Նաղաշի սիրային բանաստեղծությունները՝ համեմատելով դրանք Նահապետ Քուչակի և Սայաթ-Նովայի տաղերի հետ և վերջում եզրակացնում, որ «սրանց նման չի Նաղաշ Հովնաթանը: Նա չունի սրանց ուժը, դրա հետ և չունի սրանց հանդգնությունը: Իր բանաստեղծությունները հաճախ մասնա-

[51] ***Ա. Չոպանեան,*** նշվ. աշխ., էջ 30:

[52] Հոդվածաշարի տեսքով այն նախ տպագրվել է «Հորիզոն» օրաթերթի 1911 թ. 30 ապրիլի Հմր 90, 1 մայիսի Հմր 91, 3 մայիսի Հմր 92, 11 մայիսի Հմր 99, այնուհետ հրատարակվել է առանձին գրքույկով՝ Թիֆլիս, 1916 թ., որտեղից էլ արտատպվել է երկերի լիակատար ժողովածուի տասնհատորյակում (տե՛ս ***Հովհ. Թումանյան***, Երկերի լիակատար ժողովածու, հ. վեցերորդ, Քննադատություն և հրապարակախոսություն 1887-1912, բնագրերը պատրաստեցին և ծանոթագրեցին՝ ***Խ. Գյուլնազարյանը*** և ***Ջ. Ավետյանը,*** խմբ.՝ ***Ս. Սարինյան,*** Երևան, 1994, էջ 311-332, 622) – Ա. Հ.:

[53] ***Հովհ. Թումանյան***, Երկերի լիակատար ժողովածու, հ. վեցերորդ, էջ 312:

[54] Նույն տեղում, էջ 313:

վոր սիրային նամակագրության բնավորություն ունեն, և եթե երգում է, նպատակն էն չի, որ ձենը հասնի հեռու դարերին, այլ իր «այվանեն» մինչև սիրածի վարդափթիթ պարտեզը: Դրանից է, ի միջի այլոց, որ նա էնքան մանրամասնություններ է պատմում, որոնք մի ինքնուրույն կենդանություն ու թարմություն են տալիս նրա երգերից մի քանիսին»[55]:

Ամենայն հայոց բանաստեղծը վերջում անդրադառնում է նաև Չոպանյանի բառային վրիպակներին և ավարտում հոդվածը[56]:

Հաջորդ գրախոսականը Մկրտիչ Պոտուրյանի «Յովնաթան Նաղաշ ՇՀոռօթեցի» համառոտ անդրադարձն է «Բազմավէպ»-ում[57]: Հեղինակը նշում է, որ Նաղաշից ոչ մի նկարչական գործ մեզ չի հասել և ափոսանք է հայտնում, որ գոնե 1682 թ. Հովսեփոսի պատմության ձեռագրում մի նկարչական նշույլ թողած լիներ (ի դեպ, այստեղ ենք իմանում, որ այդ ձեռագիրը գտնվում է Ս. Ղազարում): Չոպանյանի հրապարակած 26 նկարների առնչությամբ նշում է, որ դրանցից ոչ բոլորն են միևնույն հեղինակի գործը, իսկ Ստեփանոս Լեհացու մասին ասում է, որ նրան պետք չէ Ստեփանոս Ռոշքայի հետ շփոթել, չնայած երկուսն էլ ժամանակակից են և լեհահայ: Ստեփանոս Լեհացին, ըստ Պոտուրյանի, 1657-ից արդեն Էջմիածնում էր, պատրաստել է արծաթյա պահարան Լուսավորչի աջի համար, 1661-ին էլ Ավետարան է ընդօրինակել, որի հիշատակարանում նշել է ծնողների՝ Վարդանի և Կատարինեի անունները: Ավելացնում է նաև, որ հենց Լեհացին է թարգմանել Հովսեփոսի պատմությունը և հենց նրա թարգմանությունն է 1682 թ. ընդօրինակել Նաղաշը (ենթադրում է, որ նրանք եղել են բարեկամներ):

Վերջում ափսոսանք է հայտնում, որ Չոպանյանի հրատարակած ժողովածուում տեղ չեն գտել Հովհաննես ավ. քհն. Մկրյանի Տաղարանի (ընդօրինակված է 1754 թ. Պետրոս դպիրի ձեռքով) ութ բանաստեղծություն, որոնցից միայն առաջին տողն է հայտնի.

ա. Այսօր հնչեաց աւետեաց ձայն,

բ. Աստուած անհաս և անքնին,

գ. Յորդորմամբ արտասուալից,

դ. Եկայք զիս լսեցէք ազգ արամազին,

---

[55] ***Հովհ. Թումանյան***, նշվ. աշխ., էջ 328-329:

[56] Նույն տեղում, էջ 329-332:

[57] ***Հ. Մկրտիչ Պոտուրեան,*** Յովնաթան Նաղաշ ՇՀոռօթեցի, «Բազմավէպ», Վենետիկ, 1911, թ. 4, էջ 173-174:

ե. Գրեմ քարտէս յոյժ ողբալի,
զ. Ես մեղաւորս առոխջ կենօք,
է. Եւ որք տենչան կրթից մասին,
ը. Յամենայն ժամ տացուք փառս:

Նշվածներից «Գրեմ քարտէս յոյժ ողբալի» (Վասն Վարդան ժամահարին) բանաստեղծությունը, ինչպես նաև «Տաղ ի վերայ Գուրջստանայ գօզալներին» (Գովեմ սրտիւ ուրախական) տաղը, ինչպես նշել ենք, տպագրվում են 1899 թ. «Լումայ» ամսագրի Ա գրքի խմբագրական բաժնում (էջ 276-282), դարձյալ ըստ Հովհաննես Մկրյանի նշված գրչագրից:

Հաջորդը Գարեգին Լևոնյանի «Աշուղը» հոդվածն է[58], որի սկզբում հեղինակն անդրադառնում է իր «Հայ աշուղներ» ժողովածուին՝ ի պատասխան Չոպանյանի այն դիտողությանը, թե ոչինչ այնտեղ տրված չի Նաղաշի կենսագրության մասին[59]: Այնուհետև պատմում է, որ դրանից 2-3 տարի անց Ալեքսանդրապոլում իրեն են բերել Նաղաշի ձեռագիր մի տետրակ՝ «Շարադրեալ Նաղաշ Յովնաթանէ»: Բերում է այդ տետրակի հիշատակարանը.

«Ես տրուպ Նաղաշ Յովնաթան
Գծագրեցի զայս տաղարան,
Խաղ և տաղեր ազնուական,
Խրատք և խօսք ծիծաղական,
Եւ ծաղկեցաւ նման գարնան
Ձեռամբ որդւոյ իմ Յակոբեան,
Պատկերներով տնօրինական
Ծաղկօք և թռչնոք զանազան
Ի վայելումն Յարութեան
Փոքր որդւոյն իմ սիրական»[60]:

Այս հիշատակարանից երևում է, որ Հակոբը՝ Նաղաշի ավագ որդին, ևս նկարիչ է եղել, նկարազարդել է հոր Տաղարանը՝ նվիրելով փոքր եղբորը՝ Հարությունին:

---

[58] ***Գ. Լեւոնեան,*** Աշուղը, «Ազգագրական հանդէս», գիրք XXI, Թիֆլիս, 1911, էջ 226-235:

[59] Հեղինակը տողատակում ավելացնում է, որ Ակինյանի աշխատությունից արդեն հայտնի է, որ Նաղաշի մասին գրություններ են եղել 1860 թ. «Ճռաքաղ» ամսագրում և 1882 թ. «Արձագանք» շաբաթաթերթում, իսկ 1885 թ. «Մասիս» լրագրում Ե. Հարությունյանը հրապարակել է «Գաւառական երգեր (Գիներգութիւնք Նաղաշ Յովնաթանի)» խորագրով հոդվածը (տե՛ս նույն տեղում, էջ 229, ծնթ.*):

[60] Նույն տեղում, էջ 229:

Այնուհետև Լևոնյանը հիշեցնում է «Ազգագրական հանդէս»-ի տասներորդ հատորում (Թիֆլիս, 1903 թ.) կատարած իր անդրադարձի մասին և սկսում բուն գրախոսությունը: «Նաղաշ Յովնաթան բանաստեղծը» բաժնում իր ձեռքի տակ եղած Տաղարանից Լևոնյանն ավելացնում է 10 խրատական, 2 սիրո և խնջույքի երգեր (դրանցից մեկը երկլեզու կազմությամբ է, ինչը բացառիկ է), որոնք չեն մտել Չոպանյանի գրքի մեջ: Ավելացնում է նաև մի քանի երգիծական երգեր, որոնք Չոպանյանը հատուկ չէր դրել՝ իրենց կոպիտ և գռեհիկ լեզվի պատճառով:

«Նաղաշ Յովնաթան երաժիշտ-նուագածու» բաժնում Լևոնյանը պատմում է, թե ինչպես մի օր հայտնի արևելագետ-կովկասագետ Ալեքսանդր Երիցյանն իրեն ցույց տվեց մի հետաքրքիր պատկեր, որտեղ վրաց արքունիքում ծալապատիկ նստած էին Նաղաշ Հովնաթանն ու իր երաժիշտների խումբը, պատերի մոտ՝ նրանց ունկնդրող գեղեցկուհիները: Վերջում Լևոնյանը նշում է, որ հաջորդ գլուխը «Նաղաշ Յովնաթան նկարիչ» խորագիրն է կրելու, ընդ որում՝ Հովնաթանյան ընտանիքի գեղարվեստական գործերի բավականին նորություններով (այն, հավանաբար, թերավարտ է մնացել):

Վերջապես անդրադառնանք Արտաշես Հարությունյանի գրախոսական հոդվածին «Ազատամարտ» շաբաթաթերթում[61]: Այստեղ առանձնապես նորություն չկա. հիմնականում գովեստի խոսքեր են Չոպանյանի և նրա գրքի մասին՝ որպես Նաղաշին և նրա թոռանը բացահայտողի և այլն:

Նաղաշ Հովնաթանի կյանքին ու գործունեությանն անդրադարձել է նաև անվանի հայագետ, Վիեննայի Մխիթարյան միաբանության անդամ Հ. Ներսես Ակինյանը (1883-1963 թթ.): Չոպանյանի աշխատությունից մեկ տարի անց հրատարակվում է Ակինյանի «Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք» աշխատությունը[62], ապա և նույն տարում՝ առանձին գրքով[63], որից էլ օգտվել ենք:

---

[61] ***Ա. Յարութիւնեան,*** Գրքեր ու դէմքեր, Բ. Նաղաշ Յովնաթան աշուղը եւ Յովնաթան Յովնաթանեան նկարիչը. Փարիզ, 1910, «Ազատամարտ», 1911, թ. 42, էջ 647-649:

[62] ***Հ. Ներսէս Ակինեան,*** Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1911, թ. 4-5, էջ 211-231, թ. 6-8, էջ 390-410:

[63] Նույնի՝ Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, Վիեննա, 1911, էջ 51-117:

Ակինյանը մի փոքր ավելի մանրամասն է ներկայացրել Նաղաշ Հովնաթանի կյանքը, մասնավորապես՝ խոսում է Նաղաշ Հովնաթանի և նրա մոռացված լինելու մասին, համառոտ ներկայացնում է Նաղաշի մասին անցյալում հրապարակված տեղեկությունները՝ կարևորելով Չոպանյանի աշխատությունը: Վերջինիս օգտագործած հիմնական երկու աղբյուրներին՝ Շահխաթունյանցի աշխատությանն ու Ղուկաս Կարնեցու «Գավազանագրքին» ավելացնում է նաև 1682 թ. վերոնշյալ ձեռագրի հիշատակարանը, որը հրապարակել էր Ալիշանը: Միևնույն ժամանակ, սխալմամբ Նաղաշի հայր տեր Հոհանին շփոթում է Շոռոթեցի Հովհաննես վարդապետի հետ, ինչպես արդեն նշել ենք վերևում:

Այնուհետ վկայաբերում է զանազան կենսագրական մանրամասներ՝ ըստ Նաղաշի և Հակոբի բանաստեղծությունների: Նշվածներից զատ՝ Ակինյանը հիշատակում է որոշ մանրամասներ, որոնց մասին որևէ աղբյուր չկա, մասնավորապես. «Ծանօթ և սիրելի եղած է մանաւանդ Տփղիսի արքունիքը»[64], «Ասոր (նկատի ունի՝ Վախթանգ Զ-ին – Ա. Ա.) եւ Յովնաթանի յարաբերութիւնները բարեկամական եղած են»[65]:

Այնուհետև Ակինյանը ներկայացնում է Նաղաշի գործունեության երկու բնագավառները՝ «Յովնաթան իբրեւ բանաստեղծ» և «Յովնաթան իբրեւ նկարիչ»: Ի դեպ, բանաստեղծական հատվածում հեղինակն ուրվագծում է Նաղաշ-բանաստեղծի ընդհանուր բնութագիրը (սիրո և խրախճանքի երգեր, կրոնական և խրատական տաղեր և երգիծական քերթվածքներ) և բերում նրա բանաստեղծությունների ցանկն իրենց աղբյուրներով՝ 66 միավոր:

Խոսելով Նաղաշ-նկարչի մասին՝ Ակինյանն ուշադրություն է դարձնում նրա և որդու բանաստեղծությունների որոշ տողերի վրա՝ մատնանշելով Նաղաշի դիմանկարիչ, սրբանկարիչ լինելն ու եկեղեցիներ նկարազարդելու փաստը և, ըստ էության, ոչինչ չավելացնելով հայտնի փաստերին: Նշում է, սակայն, որ նրա նկարազարդած եկեղեցիները պետք է փնտրել Շոռոթում, Երևանում, Տփղիսում, հնարավոր է նաև՝ Էջմիածնում:

Ակինյանը դառնում է Նաղաշի որդիների՝ Հակոբի և Հարությունի գործունեությանը հատուկ անդրադարձած առաջին հետազոտողը: Նշելով, որ Հարությունի մասին ոչինչ հայտնի չէ՝ հեղինակն անցնում է

[64] ***Հ. Ներսէս Ակինեան,*** նշվ. աշխ., էջ 62:
[65] Նույն տեղում, էջ 63:

Հակոբի բանաստեղծական և նկարչական ժառանգությանը, վկայաբերում նրա հեղինակած 19 բանաստեղծությունների ցանկը, խոսում եղբայրների նկարչական գործերից: Մեջբերելով Ալիշանի՝ Շոռոթի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու ներսում դեռևս նշմարելի որմնանկարների մասին տեղեկությունը՝ Ակինյանը «վայրկեան մ՛ իսկ չի տարակուսիր, թէ անոնք արդիւնք են Յովնաթանի եւ իւր որդւոց ճարտար վրձիններուն»[66]:

Այնուհետ ներկայացնում է Ղուկաս Կարնեցու «Գավազանագիրքն» ու համառոտ անդրադառնում Հովնաթան Հովնաթանյանին՝ ներկայացնելով նրան կա՛մ Հակոբի, կա՛մ Հարությունի որդի: Վկայաբերում է նաև Հովնաթանին ուղղված Ղուկաս Կարնեցու նամակը՝ գրված 1784 թ. սեպտեմբերին[67]: Ի տարբերություն Չոպանյանի՝ Ակինյանը Նաղաշին չի առանձնացնում Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդումներից, նույնպես և Հակոբին ու Հարությունին: Նա նախ հիշատակում է Մայր Աթոռում՝ XVII-XVIII դդ. գահակալած շինարար հայրապետների ուշագրավ գործերը.

ա. Մովսես Գ Տաթևացու վերանորոգումներ (1629-1633 թթ.),

բ. Փիլիպոս Ա Աղբակեցի (1633-1655 թթ.) և Հակոբ Ջուղայեցի (1655-1680 թթ.) - արևմտյան զանգակատան կառուցում,

գ. Եղիազար Ա Այնթապցի (1681-1691 թթ.) - կանգնեցրեց Իջման ս. Սեղանի ամպհովանին, կառուցեց երեք փոքր զանգակատները, հիմնեց Ս. Հովհաննես Մկրտչի և Ս. Ստեփանոս Նախավկայի խորանները հարավային և հյուսիսային խորաններում,

դ. Նահապետ Ա Եդեսացի (1691-1705 թթ.) - առանձնապես կարևոր շինարարական գործեր չեն հիշատակվում,

ե. Աղեքսանդր Ա Ջուղայեցի (1706-1714 թթ.) - կառուցել է Մայրավանքի ձմեռային սեղանատունը:

Նշված կաթողիկոսների օրոք նկարազարդման աշխատանքներ չեն հիշատակվում: Վաղագույն տեղեկություններն Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի գահակալման ժամանակաշրջանից են (1715-1725 թթ.): Ակինյանը մեջբերում է Ղուկաս Կարնեցու «Գավազանագրքի» մի հատվածը, որտեղ նշվում է Համադանցու ձեռնարկած նկարազարդումների մասին, որոնք, սակայն, Կարնեցու օրոք մաշվել ու քայքայվել էին:

[66] ***Հ. Ներսէս Ակինեան,*** նշվ. աշխ., էջ 91, ծնթ. 1:

[67] Այն առաջին անգամ հրապարակել է Հովհաննես Թումանյանը «Հորիզոն» օրաթերթի 1911 թ. 30 ապրիլի թ. 90 համարում (էջ 2, ծնթ.*):

Մեջբերում է նաև Համադանցու օրոք կազմված սևաներկ արձանագրությունը[68]: Ցավ է հայտնում, որ պարզ չէ Համադանցու օրոք եղած նկարների թիվը, այլ հստակ է միայն 1778 թ. դրությամբ եղած նկարների ցուցակը՝ 88 միավոր (ըստ Սիմեոն Երևանցու «Դավթարի»)[69]: Ենթադրում է, որ այդ 88-ից առնվազն 50-ը Համադանցու օրոք է ստեղծվել: Այդտեղ էլ հարց է տալիս. «Ի՞նչ արուեստաւորներ գործածեց Աստուածատուր իւր ծրագրին յաջողութեան համար»[70]:

Ըստ Ակինյանի՝ «...առանց տարակուսի զինքը (Նաղաշին – Ա. Հ.) հրաւիրած ըլլալու է Աստուածատուր»[71] և իբրև հիմնավորում՝ վկայաբերում է Հ. Ղուկաս Ինճիճյանի հիշատակությունը՝ վերջում ասելով, որ «Ինճիճեան Հոր խօսքերը մեկնութեան պէտք չունին կարծեմ»[72]: Այնուհետև դառնում է Շահխաթունյանցի խնդրահարույց նախադասությանը՝ «հօր Յովնաթանու»-ն վերագրելով Նաղաշին («այստեղ հօր բառն կ'ակնարկէ բացարձակապէս բանաստեղծ Յովնաթանը»[73]): Տարակուսում է, սակայն, Շահխաթունյանցի՝ Հովնաթանի մասին մյուս հիշատակմամբ, սակայն անկասկած է համարում Համադանցու օրոք Նաղաշի՝ Էջմիածնում աշխատած լինելը: Այնուհետև գալիս է Կարնեցու գահակալման շրջան, երբ կտավների թիվը հասնում է 120-ի (ըստ «Գավազանագրքի»), որոնց մի մասն էլ նորոգված հին նկարներ էին, որոնք ևս համարում է Նաղաշինը[74]:

Ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարների դեպքում Ակինյանը տարբերակում է երեք խումբ. պարսկական-արևելյան, իտալական, խառը (իտալական և արևելյան)[75]: Թե նշվածներից ո՞ր խմբի մեջ կարող էին լինել Նաղաշի նկարները, հեղինակը դժվարանում է ասել, սակայն հակված է դրանք տեսնել «իտալականի» և մասամբ՝ «խառը» խմբի մեջ:

---

[68] ***Հ. Ներսէս Ակինեան,*** Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, էջ 100-101: Արձանագրության վերջին հրատարակությունը տե՛ս ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, Ս. Էջմիածին, 2016, էջ 64, արձ. 34 – Ա. Հ.:

[69] Ակինյանի հավաստմամբ՝ Սիմեոն կաթողիկոսի հրամանով կազմված այս ցուցակն առաջինը հրապարակեց Գարեգին Հովսեփյանը «Անահիտ» հանդեսում (նույն տեղում, էջ 101):

[70] Նույն տեղում, էջ 101:

[71] Նույն տեղում, էջ 102:

[72] Նույն տեղում, էջ 103:

[73] Նույն տեղում:

[74] Նույն տեղում, էջ 104:

[75] Նույն տեղում, էջ 107:

Շատ հավանական է համարում իտալական արվեստի՝ Նաղաշին ծանոթ լինելը, քանզի շոռոթեցի և ագուլեցի վաճառականները նշված ժամանակաշրջանում հաճախակի էին գնում եվրոպական քաղաքներ, նրանց հետ հավանաբար ճանապարհորդել է նաև Նաղաշը[76]:

Մեջբերելով Հովհաննես Թումանյանի հիշատակությունը, թե Հովնաթան Հովնաթանյանը Պարսկաստան ուղևորվելիս կանգ է առել Ներքին Ագուլիսում և նկարազարդել եկեղեցին[77], Ակինյանը նշում է, որ այդ տեղեկությունը կարող է վերաբերել Նաղաշ Հովնաթանին, քանզի շատերն էին շփոթում նրանց երկուսին[78]: Նաև ցանկություն է հայտնում, որ Թիֆլիսի Հայկական ազգագրական ընկերությունն ուսումնասիրի Թիֆլիսում Հովնաթանյանների թողած նկարչական պատառիկները՝ հարստացնելով այդ գերդաստանի՝ անհայտ մնացած արվեստի էջերը[79]:

Հովնաթանյաններին նվիրված արժեքավոր ուսումնասիրություններից է Գարեգին Լևոնյանի «Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ» խորագրով հոդվածաշարը՝ բաղկացած 3 մասից.

ա. Նախընթացը («Խորհրդային արվեստ», 1938, թ. 1, էջ 50-55),

բ. Նաղաշ Հովնաթան («Խորհրդային արվեստ», 1938, թ. 2, էջ 24-29),

գ. Նաղաշ Հովնաթանի դպրոցը («Խորհրդային արվեստ», 1938, թ. 4, էջ 51-55):

Առաջին մասում հեղինակը քննում է նախահովնաթանյան շրջանի նկարիչներին ու նրանց ստեղծագործությունները, մասնավորապես՝ Գրիգոր Աղթամարցու, Զաքարիա Խժժեցու (Գնունյան), Հովասափ Սեբաստացու, Հակոբ Ջուղայեցու, Մինասի, Հովհաննես Մրքուզի, Բոգդան Սալթանովի գործերը՝ փորձելով տեսնել նրանց կապը պարսկահայ կերպարվեստի և Նաղաշ Հովնաթանի ստեղծագործությունների միջև: Այդուհանդերձ, Գ. Լևոնյանը չի շտապում հստակ եզրակացություններ անել, քանզի իր աչքով չի տեսել ոչ Մինասի, և ոչ Հովհաննես Մրքուզի գործերը:

Երկրորդ մասում ներկայացնելով Նաղաշ Հովնաթանին՝ նրան համարում է անցման շրջանի բանաստեղծ, երբ ավարտվում էր տաղերգուների դարաշրջանը և սկսվում էր աշուղներինը, մյուս կողմից անցման

[76] ***Հ. Ներսէս Ակինեան,*** նշվ. աշխ., էջ 111-112:

[77] ***Հովհ. Թումանյան,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. վեցերորդ, էջ 313, ծնթ.*:

[78] ***Հ. Ներսէս Ակինեան,*** Յովնաթան Նաղաշ եւ Նաղաշ Յովնաթանեանք եւ իրենց բանաստեղծական եւ նկարչական աշխատութիւնք, էջ 113, ծնթ. 1:

[79] Նույն տեղում, էջ 113-114:

շրջանի նկարիչ նաև այն առումով, երբ ավարտվում էր միջնադարյան մանրանկարչությունը և սկսվում էր աշխարհիկ հաստոցային նկարչությունը: Այս տեսանկյունից Հովնաթանը մի կողմից հանդիսանում է միաժամանակ վերջին տաղերգուներից և առաջին աշուղներից մեկը, մյուս կողմից՝ արևելահայ պատմական կերպարվեստի վերջին մոհիկանը և նոր, ժանրային և պորտրետային նկարչության հիմնադիրը:

Այնուհետև Գ. Լևոնյանը համառոտ խոսում է Նաղաշի սիրո, խրատական, երգիծական բանաստեղծությունների և լեզվի մասին, համեմատում Սայաթ-Նովայի հետ, խոսում է նաև վերջինիս վրա ունեցած Նաղաշի ազդեցության մասին:

Աշխատության վերջում հեղինակը վկայաբերում է Նաղաշի բանաստեղծությունների ձեռագրերը (Վիեն. 537, 1748 թ., Վիեն. 647, XVIII դ. վերջ, ՄՄ 4426, 1765 թ.): Վերջինը, ինչպես նշել ենք, ընդօրինակվել է Մարգարի որդի տիրացու Հայրապետի կողմից, ունի մանրանկարներ, որոնց հեղինակը հայտնի չէ, սակայն ըստ Գ. Լևոնյանի՝ դրանք ընդօրինակվել են Նաղաշի մանրանկարներից: Գ. Լևոնյանի կարծիքով, այդ բնօրինակն է գտնվել Շոռոթում, որը հետագայում Նաղաշի թոռները տեղափոխել են Թիֆլիս[80]:

Երրորդ մասում (Նաղաշ Հովնաթանի դպրոցը) Գ. Լևոնյանը ներկայացնում է Նաղաշի որդիներին, թոռանը և Ս. Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդումը:

Չափազանց հետաքրքիր ու մնայուն գործ է Գարեգին Հովսեփյանի «Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում» հոդվածը[81]՝ կազմված առաջաբանից և 9 գլուխներից: Առաջաբանում հեղինակը ներկայացնում է Մայր տաճարի նորոգությունները՝ սկսած Գևորգ Դ-ից մինչև Գևորգ Զ:

Ուսումնասիրության առաջին գլխում ներկայացվում է Խրիմյանի «վանդալիզմն» ու այն աղբյուրները, որոնցից օգտվել է հեղինակը հոդ-

---

[80] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 2, էջ 28:

[81] ***Գարեգին Ա. կաթողիկոս,*** Էջմիածնի տաճարի նկարազարդումն ու ծաղկազարդումը ԺԷ-ԺԸ դարերում, «Հասկ» հայագիտական տարեգիրք, Բ, Անթիլիաս, 1949/1950, էջ 310-346: Նույն հոդվածը (առաջաբանով) արտատպվել է հեղինակի «Նիւթեր եւ ուսումնասիրութիւններ հայ արուեստի եւ մշակոյթի պատմութեան» ժողովածուի Ե պրակում, Անթիլիաս, 1951, էջ 3-43: Վերջին հրատարակությունը տե՛ս երկհատորյակում՝ «Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի պատմության», հ. Բ, Երևան, 1987, էջ 272-312:

վածը շարադրելիս (Սիմեոն Երևանցու «Ջամբռ»-ը, 1765 թ., «Դավթարը», 1768 թ., Ղուկաս Կարնեցու «Գավազանագիրքը», 1780-ական թթ., Շահխաթունյանցի տեղագրական աշխատությունը)։ Երկրորդ գլխում ներկայացվում է Ստեփանոս Լեհացու գործունեությունը, այնուհետ՝ XVII դարի հայ կերպարվեստի ազդեցությունները, մասնավորապես՝ եվրոպական կերպարվեստից, Աստվածատուր Համադանցի, Կարապետ Ուլնեցի, Աբրահամ Մշեցի կաթողիկոսների օրոք Մայր տաճարում իրականացված բարենորոգչական աշխատանքները, տաճարի Ս. Ստեփանոս Նախավկա և Ս. Հովհաննես Մկրտիչ խորանների, նաև արևմտյան խորանի և հարավային դռան կտավները, Ղազար Ջահկեցու կառուցած Վեհարանի ծաղկյա դահլիճի և կաթողիկոսական աշխատասենյակի նկարազարդումները, Ղուկաս Կարնեցու ձեռնարկած նկարազարդումները։

ՀԱԿՈԲ ԵՎ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ՅՈՎՆԱԹԱՆՅԱՆՆԵՐ

Վերն արդեն նշվեց, որ Նաղաշ Հովնաթանը երկու որդի է ունեցել՝ Հակոբն ու Հարությունը։ Հակոբն առաջինը հիշատակվում է Նաղաշ Հովնաթանի «Վարք Շոռոթոյ տիրացու տխմար տղայոց վերի դասին» բանաստեղծության մեջ, որպես աշակերտ.

Մեր Յակոբ չկարաց տեղի դադարի,
Չի թողիլ մնայ քար վերայ քարի։

Հակոբի կենսագրության համար, ինչպես և հոր դեպքում, որոշակի աղբյուր են ծառայում իր ծաղկած ձեռագրերն ու շուրջ երկու տասնյակ բանաստեղծությունները, որոնցից ամենահայտնին հոր մահվանը նվիրված հայտնի ողբերգն է։ Նրա բանաստեղծություններում ևս երևում է իր մասնագիտությունը.

Մէկ օր ինձ մօտ արի, պատկերիդ նման քաշեմ...
Նման ես ծաղկին սմբուլ ռէհանին,
Խելքն տարար Յակոբ պատկերահանին...
Նաղաշ Յակոբին դարդերն իմացիր... և այլն։

Ողբերգում առաջին անգամ հիշատակվում է նաև Հակոբի փոքր եղբայրը՝ Հարությունը.

Կարօտ մնացաք շնորհացդ և բանիդ
Ես և Յարութիւն փոքրիկ պատանիդ,
Մենք միշտ լալով գամք վերայ տապանիդ,
Ասեմք. ո՞ւր ես, հայր, վարպետ Յովնաթան։

Հակոբի և Հարությունի համատեղ ծաղկած ձեռագրերից մեզ են հասել երկուսը. Ավետարան, 1720 թ. (ՄՄ 8645) և Հայսմավուրք, 1729-1730 թթ. (ՄՄ 1533): 1731 թ. Հարությունը միայնակ մի ձեռագիր է նկարազարդել Էջմիածնում: Միայնակ գրչագրել է նաև Կ. Պոլսում՝ 1737 թ. լույս տեսած Ղազար Ջահկեցու Երգարանը: Երկուսի մասին էլ առաջին անգամ խոսել է Գարեգին Լևոնյանը:

ՀՈՎՆԱԹԱՆ ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ

Հովնաթան Հովնաթանյանը (1730-1801 թթ.), Հակոբ Հովնաթանյանի որդին էր, որին աներկբա կարելի է համարել նոր շրջանի հայ մեծագույն նկարիչներից մեկը:

Հովնաթանյանի անունը «Ջամբռ»-ում չի հիշատակվում, փոխարենը վկայված է Ղուկաս Կարնեցու՝ Հովնաթանին ուղղված նամակում և «Գավազանագրքում»: «Առ Յովնաթան Շնորհալի Պատկերահանն, որ ի Թիֆլիս...» նամակ-կոնդակը՝ գրված 1784 թ. սեպտեմբերին, ինչպես վերը նշեցինք, առաջին անգամ հրապարակել է Հովհաննես Թումանյանը, որին էլ տրամադրել էր Գյուտ ավ. քհն. Աղանյանցը[82]:

«Գավազանագրքում» կարդում ենք. «Եւ ապա ամենայն գովութեանց արժանի և յոյժ անուանի Շոռոթեցի գեղեցկանկար և քաջավարժ Յովնաթանեան Յովնաթան շնորհալի պատկերահան և ծաղկարար վարպետն, որ ի Թիֆլիզ բնակէր, ի մեծազօր արքայէն Վրաց խնդրեալ՝ բերել ետ ի սուրբ Աթոռս աշակերտօքն հանդերձ, զորս հայրական սիրով և պատուով մեծավ ընկալեալ, և զոռճիկս առատս լիաձեռնութեամբ շնորհեալ, և զպատշաճավոր յարկս զարդարեալս ի բնակութիւն նոցա տուեալ՝ հրամայեաց զզանազան և զխորհրդաւոր օրինակս պէսպէսս և գեղեցկատեսիլս ծաղկանց նախանկարել ի տեսութիւն և ի հավանումն ինքեան, առ ի ծաղկազարդել զբոլոր Աստուածակառոյց և երկնանման տաճարն հրաշալի»[83]:

«Գավազանագրքի» հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ Ղուկաս Կարնեցու գահակալման օրոք՝ 1780-ական թթ., վրաց Հերակլ Բ արքայի արքունիքում էր աշխատում ծագումով շոռոթեցի

[82] «Հորիզոն» օրաթերթ, 1911 թ. 30 ապրիլի, Հմր 90, էջ 2, ծնթ.*:

[83] Մայր Աթոռի Դիւանից. Յաղագս ծաղկեցուցմանց եւ հիահրաշ շքեղազարդութեանց եւ նկարակերտութեանց եւ զանազան պատկերագրութեանց Քրիստոսահիմն Մեծի տաճարին Սրբոյ Էջմիածնի ի նոյնոյ Վեհապետէն, «Արարատ», 1901, Ե-Զ, էջ 329:

նկարիչ Հովնաթան Հովնաթանյանը, որն այդ ժամանակ արդեն բավական հայտնի էր, ուներ աշակերտներ, և որին կաթողիկոսը հրավիրում է Մայր տաճարը նկարազարդելու (նամակի բովանդակությունը պարզում է, որ Հովնաթանյանը նախկինում էլ է աշխատել Էջմիածնում և գործը կիսատ է թողել, իսկ Թիֆլիսում ունի «բարեբողբոջ որդիք»): Էջմիածնում նրան տրամադրվում է աշխատանքի և կեցության համար բոլոր անհրաժեշտ պայմանները, այդ թվում՝ բարձր աշխատավարձ: Թմբուկի սևաներկ արձանագրության համաձայն՝ աշխատանքներն ավարտվել են 1786-ին[84]:

XIX դարի տեղագրական-նկարագրական աշխատություններից հիշատակելի է նաև Հ. Ղուկաս Ինճիճյանի ուսումնասիրությունը, որտեղ հեղինակը կարծես թե շփոթում է Նաղաշին և Հովնաթան Հովնաթանյանին. «Պատկերք ամենայն խորանացս են գործ նկարչին, որ մականուանեալ կոչի Նաղաշ Յովնաթան յազգէս հայոց, ճարտար նկարիչ, և յաջող բանաստեղծ ’ի ռամկաց լեզու ’ի ժամանակս Դահմաս գուլի խանին»[85]:

Ժամանակագրորեն հաջորդ հիշատակությունը Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցինն է, ըստ որի՝ «Նորոգել ետ ըստ բոլորին եւ զմէջ սրբոյ տաճարիս զորմունս եւ զառաստաղն բազմատեսակ գեղեցիկ նկարուք եւ խորհրդաւոր պատկերօք՝ ի ձեռն հանճարաւոր արհեստագէտ նկարչին Յովնաթանու, որոյ յիշատակարան արձանագրութեանն դնի ի շրջապատ հիման մեծի կաթուղիկէին ի ներքոյ արձանագրութեանն Համատանցի Աստուածատուր կաթուղիկոսի...»[86]:

Այնուհետ վերոնշյալ խնդրահարույց հատվածն է. «Գտանին յայսմ փառացի տաճարիս քաջարուեստ պատկերք տէրունականք եւ ականաւոր սրբոց... Յամենեսին ի սոսա քաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփաննոսի Լեհացւոյ եւ քաջ նկարչին հօր Յովնաթանու»[87]:

---

[84] ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները, էջ 76, արձ. 56 – Ա. Հ.:

[85] ***Հ. Ղուկաս Ինճիճեան,*** Աշխարհագրութիւն չորից մասանց աշխարհի, մասն Ա, Վենետիկ, 1806, էջ 262:

[86] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 29-30:

[87] Նույն տեղում, էջ 35-36:

XX դարի աղբյուրներում առաջին հիշատակումը Սուքիաս Էփրիկյանի կոթողային «Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան» աշխատության «Էջմիածին» հոդվածում է՝ ակնհայտորեն հիմնված Շահխաթունյանցի տողերի վրա, որի մասին արդեն գրել ենք. «Տաճարի բոլոր ներքին որմերը և առաստաղը ներկուած են Ղուկաս կաթողիկոսի ժամանակ, 1686ին (պետք է լինի 1786ին – Ա. Ա.), Յովնաթան ճարտարին ձեռքով. նկարներն են սրբոց պատկերներ, զանազան արաբական զարդեր, ծաղիկներ, թռչուններ ևն: Կան նաեւ կտաւի վրայ նկարուած բաւական թուով սրբոց պատկերներ, շատերը Ստեփանոս Լեհացիէն և նաղաշ Յովնաթանէն նկարուած. հատ մ'ալ ղրկած է Քէր Փորթըր Անգլիացի ուղեւորը, որ հիւրասիրուած էր Եփրեմ կաթողիկոսէն, և կը ներկայացնէ Յիսուս մանուկները օրհնելով»[88]:

Նույն տողերը գրեթե նույնությամբ (ներառյալ Կարնեցու սևաներկ արձանագրությունը) կրկնված են մեկ տարի անց՝ 1903 թ. Մայր տաճարի հիմնադրման 1600-ամյակին լույս տեսած «Էջմիածին. պատկերազարդ նկարագրութիւն» գրքում[89]:

Դառնալով Սահակ վրդ. Աստվածատրյանի վերոհիշյալ «Պատկերացոյց»-ին՝ հարկ է արձանագրել, որ հեղինակը, ինչպես իր նախորդը, Հովհաննես եպս. Շահխաթունյանցի հիշատակած «հօր Յովնաթանու»-ն վերագրում է Հովնաթան Հովնաթանյանին և ներկայացնում Մայր տաճարի մի քանի կտավների և որմնանկարների լուսանկարները՝ համառոտ բնութագրականներով.

«**Ս. Լուսաւորչի Խոր Վիրապը մտնելն ու այնտեղից ելնելը. Հ^մր^ 13.**

Իւղաներկ նկարս Ստեփաննոս և Յովնաթան նկարիչների գործերիցն է, որոնց մասին ևս յիշած է Շահխաթունյանցը իւր գործին մէջ, Ղուկաս կաթողիկոսի ժամանակ նկարուած են:

Տրդատ, Աշխէն եւ Խոսրովիդուխտ. Հ^մր^ 16.

Նկարս առնուած է Մայր տաճարի կրածեփ որմից փրթած մի բեկորի վերայից, որ այժմ գտնուում է Հայրիկեան թանգարանում: Կը թուի՝ թէ ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչներից առաջ արդէն նկարուած էր:

[88] ***Հ. Սուքիաս Էփրիկեան,*** Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. Ա, էջ 787:
[89] Նույնի՝ Ս. Էջմիածին. 303-1903. պատկերազարդ նկարագրութիւն, էջ 28-29:

Տրդատը մկրտւում է Ս. Գրիգոր Լուսաւորչից. Հմր 19.

Իւղաներկ նկարս ի վեր անդ յիշուած Ստեփաննոս և Յովնաթան նկարիչների գործերիցն է:

Ս. Հռիփսիմէ կոյս. Հմր 23.

Նոյն Ստեփաննոս և Յովնաթան նկարիչների գործերից:

Ս. Գայիանէ կոյս. Հմր 25.

Գործ նոյն նկարիչների:

Ս. Յակոբ Մծբնայ հայրապետ. Հմր 27.

Գործ նոյն նկարիչների:

Ս. Գրիգոր Լուսաւորչի ճգնութիւնը Սեպուհ լերան վերայ. Հմր 30.

Գործ նոյն վերոյիշեալ նկարիչների:

Ս. Լուսաւորչի մահից յետոյ՝ հովիւները նրան ճգնարանից դուրս բերելը. Հմր 31.

Այս պատկերի ստորին ծայրը կայ հետևեալ արձանագրութիւնը: Սրբասնեալ մարմին հովուին հսկողի ի հովուաց բարձեալ ամփոփիլ տանի: Սոյն նկարն ևս նոյն նկարիչների գործն է:

Ս. Արիստակէս հայրապետ. Հմր 33.

Գործ նոյն նկարիչների:

Ս. Սահակ Պարթեւ հայրապետ. Հմր 34.

Գործ նոյն նկարիչների:

Մովսէս Խորենացի, հայր Հայոց պատմագիրների. Հմր 36.

Ս. Օհան Օձնեցի հայրապետ. Հմր 38.

Վերոյիշեալ նկարիչների գործերից:

Ս. Գրիգոր Նարեկացի. Հմր 39.

Գործ նոյն նկարիչների:

Ս. Ներսէս Շնորհալի հայրապետ. Հմր 40.

Գործ յիշեալ նկարիչների»[90]:

Այնուհետև Արշակ Չոպանյանի՝ 1910 թ. Փարիզում լույս տեսած «Նաղաշ Յովնաթան աշուղը և Յովնաթան Յովնաթանեան նկարիչը» գիրքն է, որի մասին վերն արդեն խոսել ենք: Այստեղ նշենք, որ Չոպանյանն առաջինն էր, որը Հովնաթանին համարում է Հակոբի որդի, և ոչ Հարությունի. «Էջմիածնայ տաճարը փառազարդող Յովնաթանը, որ կը

[90] ***Սահակ վրդ. Աստուածատրեան,*** Պատկերացոյց հաւաքածոյ մասնաւոր հնութեանց Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի եւ շրջակայից, էջ 10-15:

կոչուի Յովնաթանեան՝ իր նշանաւոր մեծ հօր անունով, թոռն է նկարիչ-տաղերգու Յովնաթանին, որդին Յակոբի՝ որ աշուղ է և նաղաշ»[91]:

Չոպանյանի աշխատության Բ գլուխը՝ «Յովնաթան Յովնաթանեան նկարիչը», սկսվում է Շահխաթունյանցի աշխատության և Կարնեցու «Գավազանագրքի»՝ Մայր տաճարի նկարազարդմանը նվիրված հատվածների մեջբերմամբ: Այնուհետև, հաշվի առնելով, որ մինչև Էջմիածին տեղափոխվելը Հովնաթանյանը պետք է որ բավական գործեր արած լիներ, հարց է տալիս, թե վրաց արքունիքում Հովնաթանյանի գործերից արդյոք չե՞ն մնացել: Բացի դրանից՝ քանի որ Հովնաթանյանը եկել է աշակերտների հետ, բնականաբար ոչ բոլոր նկարազարդումներն է նա արել (առհասարակ, հնարավոր չէր մեկ մարդու կողմից նման մեծածավալ գործն անելը), ուստի ո՞ր մասն է արվել նրա ձեռքով և ո՞րը՝ աշակերտների[92]:

Այնուհետ Ա. Չոպանյանն անդրադառնում է Խրիմյանի իրականացրած «վանդալիզմին»: Վկայաբերում է բավական հետաքրքիր մանրամասներ, մասնավորապես՝ թաքստոցում պահված բեկորները ոչնչացնելու դրվագը, ինչից, թերևս, կարելի է եզրակացնել, որ «վանդալիզմի» նպատակը ոչ թե նոր նկարազարդումն էր, այլ հովնաթանյանական հետքից տաճարն ազատելը: Հայտնի է դառնում, որ կորստից փրկվել են միայն գմբեթի և վերնամասի մի քանի նկարազարդ հատվածներ, այն էլ Պետերբուրգի Հնագիտական ընկերության միջամտությունից հետո, բեկորների տեսքով՝ երեք զարդատարրերի հատվածներ, Ս. Մինասի պատկերն ու «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ» խմբանկարը, որոնք գտնվում են թանգարանում: Ասում են, որ Խրիմյանը ցանկացել է Իջման ս. Սեղանն էլ քանդել, այդտեղ էլ Միաբանությունն է ընդդիմացել և այլն[93]: 120 կտավներից մնացել են 20-30-ը. մնացածները Խրիմյանը կամ ջնջել է տվել, կամ ուղարկել հեռավոր գյուղեր[94]:

Արշակ Չոպանյանը հրապարակել է փրկված պատկերների ցանկը.

1. գմբեթի և որմերի մի մասի նկարազարդումներ և մի քանի դիմանկարներ թանգարանում,

2. Իջման ս. Սեղանի ներքին և արտաքին զարդանկարները,

3. մուտքի դռան «առաստաղի» խորհրդավոր պատկերները,

[91] ***Ա. Չոպանեան,*** նշվ. աշխ., էջ 9:
[92] Նույն տեղում, էջ 25:
[93] Նույն տեղում, էջ 27, ծնթ. 1:
[94] Նույն տեղում, էջ 26-27:

4. բեմառէջքի Աստվածածնի և սրբերի շարքը,

5. խաչվառներ,

6. յուղաներկ նկարներ («Տասներկու առաքյալներ», «Թադեոս առաքյալ», «Բարդուղիմեոս առաքյալ», «Ս. Հռիփսիմե», «Տիրամայրը Մանկան հետ», «Տիրամայրը Մանկան հետ և երկու սուրբ», «Գաբրիել հրեշտակապետ», «Միքայել հրեշտակապետ», «Ավետաբեր Գաբրիել հրեշտակապետ», «Ավետընկալ Մարիամ», «Ավետում» (կամ՝ «Մարիամը Եղիսաբեթի մոտ»), «Մկրտություն», «Տեառնընդառաջ» կամ «Մոգերի երկրպագությունը», «Խորհրդավոր ընթրիք», «Ոտնլվա», «Հարություն», «Տիրամոր նինջը»)[95]:

Չոպանյանը միաժամանակ նշում է, որ, հաշվի առնելով նշված գործերի ոճական, գծագրական և վրձնի տարբերությունները, դժվար թե բոլորը Հովնաթանյանի կամ նրանց դպրոցի ստեղծածը լինեն: Ըստ նրա՝ նշվածներից անկասկած Հովնաթանյանինն են որմնանկարները՝ դիմանկարներով հանդերձ, իսկ կտավներից միայն նրանք կարելի է համարել Հովնաթանյանինը, որոնք հարում են այդ որմնանկարներին[96]:

Հովնաթանյանի ստեղծագործություններում առկա է ինչպես պարսկական, այնպես էլ իտալական արվեստի ազդեցությունը: Եվ դա բնական է: Պետք է հաշվի առնել, որ տաղանդը միշտ էլ կերպարանափոխում ու անհատականացնում է ցանկացած օտար ազդեցություն: Որմնազարդերի դեպքում առկա է պարսկական ազդեցությունը, սակայն, ըստ Չոպանյանի՝ դրանք «տաղանդաւոր մը հայու ստեղծագործութիւն է՝ պարսիկ տարազի մէջ»[97]: Իսկ դիմանկարները, մասնավորապես «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ», «Ս. Մինաս» պատկերները, որևէ պարսկական ազդեցություն չունեն: Դրանք մի կողմից եվրոպական արվեստի ազդեցության, մյուս կողմից հայկական մանրանկարչությունից ներշնչված լինելու մասին են վկայում: Նույն շարքին պետք է դասել նաև բեմառէջքի կերպարների շարքը (մատնանշում է հատկապես Ս. Ստեփանոսին և Ս. Փիլիպոսին, որոնք «զմայլելի» են), Իջման ս. Սեղանի նկարները, Թադեոս և Բարդուղիմեոս առաքյալները, Տիրամայրը Մանկան հետ (կողքը սրբերով), Ս. Հռիփսիմե, «Խորհրդավոր ընթրիք», «Ոտնլվա», «Հարություն», «Տիրամոր նինջը» կտավները, ինչպես նաև ճաճանչավոր շրջանակով Աստվածածնի պատկերը, որոնք, չնայած եվրոպական արվեստի

[95] ***Ա. Չոպանեան,*** նշվ. աշխ.,էջ 27:
[96] Նույն տեղում, էջ 28:
[97] Նույն տեղում:

ազդեցությանը, այդուհանդերձ արևելյան-հայկական են: Մյուսներն ավելի կանոնավոր են, և, անկասկած, այլ նկարիչների ձեռքի գործ, օրինակ՝ Ավետաբեր Գաբրիելն ու Ավետընկալ Մարիամը, երկու հրեշտակապետերը, «Մկրտությունը» («իտալական գործի մը ընդօրինակութիւնը կը թուի»), առաքելոց գլուխները, նույնպես և «Մոգերի երկրպագությունը», «Ավետումն» ու որոշ խաչվառների վրա գտնվող նկարները: Դժվար թե այս երկու խմբի նկարները նույն հեղինակինը լինեն: Չոպանյանը հավանական չի համարում նաև այս երկրորդ խմբի նկարների՝ աշակերտների (միգուցե Եվրոպայում ուսանած) գործ համարելը, որոնց դերը հավանաբար զարդանկարների հարցում ուսուցչին օգնելն էր[98]:

Չոպանյանի աշխատությանը, ինչպես վերը նշեցինք, հետևում է Հովհաննես Թումանյանի գրախոսականը «Հորիզոն» օրաթերթում. «Նկարիչ Հովնաթանը վրաց Հերակլ II թագավորի պալատական նկարիչն է եղած էն ժամանակ, երբ նույն թագավորի պալատական երգիչն էր մեր հոյակապ Սայաթ-Նովան: Եվ վրաց թագավորիցն է, որ Ղուկաս կաթողիկոսը խնդրում է՝ թույլ տալ Հովնաթանին գնալու Էջմիածինը շքեղազարդելու իր նկարներով: Նկարիչ Հովնաթանի և իր աշակերտների նկարները Էջմիածնում 120-ից ավելի են եղած, իսկ այժմ հազիվ 20-30 հատ են մնացել, ինչպես գրքի հառաջաբանում գանգատվում է Չոպանյանը»[99]: Այնուհետ ծանոթագրում է այն, ինչն Ակինյանը հիշատակել էր. «Պատմում են, որ նկարիչ Հովնաթանն անցել է և Պարսկաստան՝ շահի պալատը նկարազարդելու, և ճանապարհին ներքին Ագուլիսի եկեղեցու պատի վրա նկար է թողել հիշատակ: Ասում են Թիֆլիսում էլ կան նրա նկարներից»[100]:

---

[98] ***Ա. Չոպանեան,*** նշվ. աշխ., էջ 29: Ա. Չոպանյանի աշխատության մեջ զետեղվել են նաև մի քանի արժեքավոր լուսանկարներ՝ արված հենց հեղինակի կողմից: Դրանցից են. 1. Որմնազարդ (գմբեթի կենտրոնում), 2. Ս. Աստվածածին (Իջման Սեղանի գմբեթին՝ մարմարի վրա), 3. Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ (որմնանկար, թանգարանում), 4. Ս. Ստեփաննոս (ավագ Սեղանի ճակատին՝ մարմարի վրա), 5. Առաքյալ (նկար), 6. Ավետաբեր հրեշտակը (նկար), 7. Հարություն Քրիստոսի (նկար), 8. Ս. Հռիփսիմե (նկար), 9. Ս. Ընթրիք (նկար), 10. Թագակիր Ս. Աստվածածին (նկար), 11. Ոտնլվա (նկար), 12. Ավետընկալ Ս. Մարիամ (նկար), 13. Ս. Աստվածածին (ավագ Սեղանի ճակատին՝ մարմարի վրա), 14. Ս. Թադեոս առաքեալ (նկար), 15. Ս. Աստվածածնի նինջը (նկար), 16. Առաքյալ (նկար), 17. Հայկ Նահապետ (ըստ ոմանց՝ Ս. Մինաս, որմնանկար, թանգարանում), 18. Մկրտություն Քրիստոսի (նկար), 19. Միքայել հրեշտակապետ (նկար), 20. Ս. Աստվածածին (նկար, արծաթե ճաճանչավոր շրջանակի մեջ), 21. Ս. Պողոս առաքյալ (նկար), 22. Ս. Փիլիպպոս (ավագ Սեղանի ճակատին՝ մարմարի վրա), 23. Գաբրիել հրեշտակապետ (նկար), 24. Առաքյալ (նկար), 25. Որմնազարդեր (թանգարանում), 26. Ս. Բարդուղիմեոս առաքյալ (նկար):

[99] ***Հովհ. Թումանյան,*** Երկերի լիակատար ժողովածու, հ. վեցերորդ, էջ 312-313:

[100] Նույն տեղում, էջ 313, ծնթ. *:

Հաջորդը Մկրտիչ Պոտուրյանի համառոտ անդրադարձն է «Բազմավէպ»-ում[101]: Այնուհետ Գարեգին Լևոնյանի և Արտաշես Հարությունյանի հոդվածներն են, որոնք Հովնաթան Հովնաթանյանի մասին որևէ նոր բան չեն հայտնում:

Հովնաթան Հովնաթանյանին իր հայտնի հոդվածաշարում անդրադարձել է նաև Գարեգին Լևոնյանը[102]: Հեղինակը նախ փորձում է ամբողջացնել նրա կենսագրությունը: Ենթադրում է, որ պետք է ծնված լինի 1730-ական թթ., երիտասարդ տարիներին տեղափոխված լինի Վրաստան, 1780-ական թթ. սկզբին այնտեղ արդեն ընտանիք կազմած՝ «բարեբողբոջ որդիներով» (ըստ Կարնեցու նամակի): Ժամանակակից լինելով Սայաթ-Նովային՝ «անկասկած եղել է նրա բարեկամը», քանի որ ինքն էլ ապրել է Հերակլ II թագավորի պալատում՝ որպես պալատական նկարիչ: Թե ինչ գործեր է արել վրաց արքունիքում, հայտնի չէ, Հայաստանում կատարված աշխատանքներն էլ բացառապես վերաբերում են Էջմիածնի Մայր տաճարի նկարազարդմանը:

Լևոնյանն այստեղ համառոտ անդրադառնում է Մայր տաճարի նկարազարդման պատմությանը: Ըստ նրա՝ մինչև 1715 թ. տաճարում ոչ մի պատկեր չի եղել (հիմնավորում է եվրոպացի ճանապարհորդների ուղեգրություններով):

Աստվածատուր Համադանցին (1715-1725 թթ.) «զարդարեաց զմէջն մեծի տաճարիս. զի շինեաց և զսուրբ Իջման տեղն մարմարեայ քարիվ ի վերայ չորից մարմարեայ սեանց, և ծաղկեցուց ոսկով և պէս-պէս երանգօք, և արար զարմանալիս տեսողաց: Նմանապէս և զճակատ մեծի սեղանոյն արար մարմարիոնեայ. սպիտակացոյց բռամբ և ծաղկեաց զբոլոր տաճարս ի միջոյ կողմանէ»[103]: Ժամանակակից նկարիչն է Նաղաշ Հովնաթանը:

Կարապետ Բ Ուլնեցին (1726-1730 թթ.) «ետ նկարել զպատկերս երկոտասան Առաքելոցն ի ճակատ Աւագ խորանին և ետ ծաղկել ոսկեզօծ և գեղեցիկ գունօք»[104]: Ժամանակակից նկարիչներն են Հակոբն ու Հարությունը:

---

[101] ***Հ. Մկրտիչ Պոտուրեան,*** Յովնաթան Նաղաշ Շօռօթեցի, «Բազմավէպ», Վենետիկ, 1911, թ. 4, էջ 173-174:

[102] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 4, էջ 52-53:

[103] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 28:

[104] Նույն տեղում:

Աբրահամ Մշեցին (1731-1734 թթ.) «ի մէջ մեծի Տաճարիս զառաջնոյ դասի երկուս սեղանսն կառոյց և անուանեաց սուրբ Յակոբ և սուրբ Լուսավորիչ: Զորս և զարդարեաց ծաղկօք և մարգարեական պատկերովք: Եւ զամենայն պատկերսն՝ որք գոն ի յորմունսն և ի սիւնսն տաճարին՝ սա ետ նկարել»: Ժամանակակից նկարիչներն են Հակոբն ու Հարությունը:

Հաջորդ չորս կաթողիկոսները նկարազարդման գործեր չեն ձեռնարկում: Այս առումով աշխատանքները վերսկսվում են միայն Սիմեոն Երևանցու օրոք՝ 1778 թ.: Ըստ Լևոնյանի՝ կաթողիկոսական արխիվի մի վավերագրում (ՌՄԻՁ (1777), ապրիլի 18) գրված է, որ Սիմեոն Երևանցին 1777 թ. Վանից հրավիրում է «Ավետիս ծաղկարարին»: Վերջինս Մայր տաճարում կամարների համար վեց գազ կտավ է ծաղկել՝ յուրաքանչյուր գազի համար ստանալով մեկ ղուռուշ: Ավետիսը, ըստ երևույթին, Էջմիածնում երկար չի մնացել: Ստանալով 2,5 ոսկի «բախշիշ», 13 ղուրուշ էլ ճանապարհածախս՝ նա վերադառնում է Վան:

1778 թ. Սիմեոն Երևանցին Էջմիածին է հրավիրում Հովնաթան Հովնաթանյանին, որն աշխատելով մինչև նոյեմբերի 20-ը՝ վերադառնում է Թիֆլիս: Լևոնյանը վկայաբերում է անչափ կարևոր մի ձեռագիր հիշատակություն, ըստ որի՝ «Ծաղկարար Հովնաթան մինչ... զերկոսին սիւնսն ի ներքուստ մինչև ցվերին կամարացոտն ծաղկյաց եւ դառնայր ի Թիֆլիզ վարձ եւ բաշխիշ ետուք նմա նաղդ քսանվեց թուման. ՌՄԻԵ (1776), ի նոյեմբեր ԻԱ (21)»[105]:

1780 թ. Սիմեոն Երևանցին վախճանվում է, իսկ կաթողիկոսական գահը ստանձնում է Ղուկաս Կարնեցին (1780-1799 թթ.), որը դարձյալ զբաղվում է տաճարի նկարազարդման գործով: 1784 թ. նամակի մասին վերն արդեն նշել ենք: Լևոնյանն այն ևս հատվածաբար հրապարակում է, սակայն, ըստ նրա՝ 1778-1784 թթ. ընթացքում Հովնաթանյանը մեկ անգամ էլ է գալիս Էջմիածին, ենթադրաբար 1782 թ., և գործը կիսատ թողնելով՝ վերադառնում Թիֆլիս[106]:

[105] ***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 53: Եթե Լևոնյանը ճիշտ է ընդօրինակել՝ ՌՄԻԵ-ն 1776-ն է, ստացվում է՝ այդ թվականին է Հովնաթանյանը եկել Էջմիածին:
[106] Նույն տեղում:

Լևոնյանն այնուհետ մեջբերում է Կարնեցու «Գավազանագրքի» այն տվյալները, ըստ որի՝ նկարազարդումից հետո տաճարում 120-ից ավելի պատկերներ կային, և բոլորն էլ վերագրում է Հովնաթանյանին[107]:

Հովնաթանյանի՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարում արված նկարների շարքում Լևոնյանն առանձնացնում է որմնանկարներ և մույթերին ու կամարներին փակցված կտավներ: Նա քննարկում է նաև այն հարցը, ըստ որի՝ Մայր տաճարի որմնանկարների շարքում կան ոճով բավականին տարբեր նկարներ. արդյո՞ք դրանք այլ վայրերից են բերվել, դիցուք՝ Եվրոպայից, թե՞ կրկնօրինակվել են եվրոպական փորագրանկարներից: Ուսումնասիրման հարցը դժվարանում է հատկապես նորոգված կտավների դեպքում[108]:

Ինչ վերաբերում է Շահխաթունյանցի օգտագործած խնդրահարույց նախադասությանը՝ Ստեփանոս Լեհացու և Հովնաթանի հոր մասին, ապա Լևոնյանը վերջինիս ընդունում է որպես Նաղաշ Հովնաթան և նախադասությունն էլ համարում շփոթմունք, քանզի նշված անձինք տարբեր ժամանակներում են ապրել: Ավելին, նա երկմտում է նաև գիտնական վարդապետ Ստեփանոս Լեհացու՝ նկարիչ լինելու հարցում[109]:

Անշուշտ, Լևոնյանն անդրադառնում է նաև Խրիմյան Հայրիկի՝ այսպես կոչված «վանդալիզմին», որ իբր նա քանդել է տվել պատերի ծեփերը

---

[107] ***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 54: «Գավազանագրքում» կարդում ենք. **«**Այլ և ի ճակատս չորից լուսակառոյց սեանց ի ներքոյ վերնախարսխաց բարձրադիտակաց և միջնախարսխաց սալաթոռ կոչեցելոց իւրաքանչիւր սեանց քառանկիւնից չորից ճակատուց զոյգ զոյգ - «*ի վեր*» - և միակ միակ զիրաշագեղ պատկերս Տէրունականս և տնօրինականս՝ զսերոբէից, զքերոբէից և զառաքելոց և զայլ սրբոց, ոսկեզարդս և գեղաղէշս խորհրդաբար և վայելչապէս նկարագրել և շքեղազարդել ետ ի վերայ կտաւոց, և ի ճակատս սեանց և - «*որմոց*» - սեղանոց, խորանաց և շրջաբոլոր որմոց և առաստաղաց զետեղել ետ և զոմանս ի վերայ որմոց պատկերագրեցոյց, զարմանակերտ և հրաշատեսիլ յօրինմամբ և ոսկեզօծ փայլմամբ, ըստ ընդունելութեան և ըստ աւանդութեան, ըստ ծիսի և ըստ վայելչութեան Հայաստանեայցս ուղղափառ եկեղեցւոյ, որք լինին ընդ ամէնն թուով իբրև 120 և այլ աւելիք, որք էին պատկերք Տէրունականաց, տնօրինականաց, հրեշտակաց, առաքելոց երկոտասանից, մարգարէից, հայրապետաց, վարդապետաց, ճգնաւորաց, կուսանաց, թագաւորաց, զինուորաց և գերահռչակ մարտիրոսաց հայկասեռից. զորս ըստ մեծի մասին նոր ի նորոյ ըստ ըղձալի և սիրավառ տենչանացն և ըստ Աստուածազդեցիկ և նրբանկատ հանճարոյն պատկերագրել և յօրինել ետ, և զոմանս, որք հնացեալք և անգեղացեալք էին, նորոգեալ պայծառացոյց (տե՛ս «Արարատ», 1901, Ե-Զ, էջ 330): Ամենայն հավանականությամբ, 120-ը բոլոր պատկերներն են, այդ թվում՝ Նաղաշ Հովնաթանի և որդիների՝ Հակոբի և Հարությունի կտավները:

[108] ***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 54:

[109] Նույն տեղում:

և նորից սպիտակեցրել: Ըստ նրա՝ պատկերամարտությունը սկսվել է դեռևս 1880-ական թթ., հնարավոր է՝ ավելի վաղ[110]: Այստեղ նա հիշատակում է դերասան Միսաք Արամյանցի հիշողությունները, ուր նկարագրված է Մայր տաճարի ներսույթը 1886 թ. դրությամբ. «Այժմ եկեղեցու արևելյան կեսի պատկերները և նկարները թողած, արևմտյան կեսի բոլոր որմերը սպիտակեցրել էին, որով տաճարի ներքին տեսարանն այնպես տգեղացել է, որ տեսնողի սիրտը մորմոքում է. կամ բոլորը պետք է ճերմակացնեին, կամ պետք է թողնեին իր հնության մեջ՝ մինչև արմատական վերաշինությունը»[111]:

Վերջում հեղինակը գոհունակություն է հայտնում առ այն, որ նկարիչ Վարդգես Սուրենյանցը 1893-1895 թթ. իր՝ Էջմիածնում եղած ժամանակ, մի ալբոմի մեջ խնամքով կրկնօրինակումներ է արել տաճարի որմնանկարներից, սակայն թե ո՞րտեղ է այդ ալբոմը՝ հայտնի չէ[112]:

[110] ***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 54-55:

[111] ***Մ. Արամեանց***, Սալիանից Էջմիածին. Նկարագիր ուխտաւոր ուղեւորութեան, Թիֆլիս, 1887, էջ 50:

[112] ***Գ. Լևոնյան,*** նշվ. աշխ., էջ 55: Մկրտում Հովնաթանյանի և նրա որդիների՝ Հակոբ և Աղաթոն Հովնաթանյանների մասին տեղեկությունները բառացի վերցված էին համացանցից, ուստի դրանք շարվածքից դուրս ենք հանել – Ա. Հ.:

ՀՈՎՆԱԹԱՆՅԱՆ ԳԵՐԴԱՍՏԱՆԻ ՏՈՀՄԱԾԱՌԸ



ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
(պատմական ակնարկ)

Հայկական լեռնաշխարհում հայերը պետական կազմավորումներ են ունեցել դեռևս մ.թ.ա. III հազարամյակից[1]: Ցավոք, հայկական աղբյուրներում համապատասխան հիշատակությունների բացակայությունը մեզ թույլ չի տալիս ուրվագծել մ.թ.ա. III-II հազարամյակներում գոյություն ունեցած պետական կազմավորումների լիարժեք պատկերը, ինչը հաճախ լրացնում են օտար աղբյուրները: Այդուհանդերձ, այսօր սեղանին դրված սահմանափակ տեղեկություններից կարելի է որոշակի պատկերացում կազմել այդ շրջանի հայկական պետական կազմավորումների մասին.

Արատտա (ըստ շումերական աղբյուրների) – մ.թ.ա. XXVIII-XXVII դդ.,

Արմանում (ըստ աքքադական և էբլայական աղբյուրների) – մ.թ.ա. XXIV-XXIII դդ.,

Հայասա (ըստ խեթական աղբյուրների) – մ.թ.ա. XV-XIII դդ.,

Նաիրի (ըստ ասսուրական աղբյուրների) – մ.թ.ա. XIII-XI դդ.:

Մ.թ.ա. I հազարամյակում Հայկական լեռնաշխարհում ձևավորված առաջին պետությունը, որն ընդգրկում էր գրեթե ողջ լեռնաշխարհը, Վանի կամ Արարատյան թագավորությունն է: Ասսուրական աղբյուրներում այն կոչվում է Ուրարտու, ըստ տեղացիների՝ Բիայնիլի կամ Բիայնա, իսկ հին հայկական աղբյուրներում՝ «Արարատու երկիր», «Արարադայ երկիր», Աստվածաշնչում՝ «Արարատեան թագաւորութիւն»:

Վանի թագավորության արձանագրություններում գործածվում էր երկու լեզու՝ բիայներեն (ուրարտերեն) և երբեմն էլ՝ ասսուրերեն: Գլխավոր լեզուն բիայներենն էր, որն ավանդված է մոտ 600 սեպագրերով և, ըստ որոշ հետազոտողների, խուռիերենի մերձավոր ազգակիցը: Բիայներենը բոլոր կենդանի լեզուներից ամենից շատ բառային ընդհանրություններ ունի հայերենի հետ: Ըստ Գ. Ջահուկյանի հավանական ենթա-

[1] Գիտահանրամատչելի բնույթի սույն համահավաք շարադրանքը վերանայել-խմբագրել է ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի Հին դարերի պատմության բաժնի գիտաշխատող Վահե Սարգսյանը, որի համար խորին երախտագիտություն ենք հայտնում մեր գործընկերոջը – Ա. Հ.:

դրության՝ բիայներենն ու խուռիերենը պատկանում են լեզուների նոստրատիկ գերընտանիքին, որի մեջ մտնում են նաև հնդեվրոպական, սեմական, ուրալյան, ալթայան, կովկասյան և դրավիդյան լեզվաընտանիքները: Գրի է առնված ասորեստանյան սեպագրի պարզեցված տարբերակով. սեպագրերի վանկային ընթերցումը հնարավորություն չի տալիս պարզելու բառերի ճիշտ արտասանությունը, ուստի և հնչյունական համակարգը որոշված է մասամբ:

Ըստ եղած տվյալների՝ ձայնավորները չորսն են՝ *a*, *e*, *i*, *u*, հավանական է նաև հինգերորդի՝ o-ի առկայությունը, ունի 16 բաղաձայն: Վերջիններիս մի մասի արտասանությունը ճշտված չէ: Հայտնի են 350-400 բառեր, որոնց մի մասի իմաստը պարզված չէ: Բառապաշարում կան նկատելի քանակով հայերենից անցած բառեր, դիցանուններ, անձնանուններ, տեղանուններ, օրինակ՝ *arşibini* (արծիվ), *şari* (ծառ), *aštiuzi* (աստված), *pili* [պեղ(ել)], *šuri* (սուր), *abili* (ավելի) և այլն: Գործածված տեղանուններում զգալի են Մեծ Հայքի շատ անվանումներ՝ *Şupani* (Ծոփք), *Erebuni* (Երևան), *Ţuspa* (Տոսպ), *Alzi*(*ni*) (Աղձնիք), *Giarniani* (Գառնի) և այլն: Հայերենից կատարված մեծաթիվ փոխառությունները կարելի է բացատրել այն հանգամանքով, որ բիայներենը խոսվել է հայերենի լայն գործածության միջավայրում: Գոյականներն ու ածականները վերջանում են *-i*, երբեմն էլ՝ *-e*, *-a*, *-u* ձայնավորներով: Բառակազմության մեջ կարևոր է ածանցների դերը. առավել գործածականներից են *-še* (*ulguše* - կյանք), *-uĥi* (*taršuatuĥi* - արիություն) վերջածանցները: Հոլովումը կցական բնույթի է, տարբերում են 7 կամ 8 հոլով[2]:

Վանի թագավորությունն ունեցել է հարուստ դիցարան: Գերագույն աստվածը Խալդին էր (ռազմի, արարչագործության, երկնքի աստվածը): Նրա կինն էր Արուբանի-Բագմաշտու դիցուհին: Աստիճանականության կարգով նրանց հետևում են Թեյշեբան (հողմի և անձրևի աստվածը), Շիվինին (արևի աստվածը), այնուհետև՝ Խուտուինին, Տուրանին, Ուան, Նալաինին, Շեբիթուն, Արսիմելան, Ուանապշան և այլք:

Վանի թագավորության՝ պատմությանը հայտնի առաջին արքան **Արամեն** է, որն իշխել է մ.թ.ա. մոտ 858-844 թթ.: Արամեի օրոք Վանի թագավորության տարածքը, սկսած XIX դ. առաջին կեսից, ուրարտագի-

[2] ***Ռ. Իշխանյան,*** Ուրարտերեն, Հայկական սովետական հանրագիտարան (այսուհետ՝ ՀՍՀ), հ. 12, Երևան, 1986, էջ 275:

տության մեջ սովորաբար համարվում է ներկայիս Վան քաղաքի շրջակայքը: Այդ պատճառով որոշ արևելագետներ (Մ. Բրոսսե, Ա. Սեյս, Բ. Պիոտրովսկի և ուրիշներ) Արարատյան թագավորությունն անվանում են նաև Վանի թագավորություն, որն ընդունելի է դառնում հայագիտության մեջ[3]: «Ուրարտու երկիրը», որն առաջին անգամ հանդիպում է Ասորեստանի Աշշուրնաճիրապալ II (մ.թ.ա. 884/883-859 թթ.) թագավորի արձանագրություններից մեկում, մատնանշվում է Սուբնատ գետի (Արևմտյան Տիգրիսի վերին հոսանքներից մեկը) ակունքների շրջանից, այսինքն՝ Հայկական Տավրոս լեռնաշղթայից զգալիորեն հյուսիս:

Վանի թագավորության սկզբնատարածքի մասին որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Սալմանասար III (մ.թ.ա. 858-824 թթ.) թագավորը, որը հինգ անգամ ռազմական արշավանքներ է ձեռնարկել այդ երկրի դեմ՝ կանխելու նրա հզորացումը: Ըստ Սալմանասար III-ի արձանագրությունների՝ Արամե թագավորի գահակալման տարիներին Ուրարտուն հյուսիս-արևմուտքում սահմանակից էր Դայաեանի «երկրին» (հին հայկական Տայք «աշխարհին») և Եփրատի ակունքների շրջանին, իսկ նրա հարավային սահմանները տարածվում էին «Նաիրի երկրների ծովից» (Վանա կամ Ուրմիա լիճ) նկատելիորեն հարավ:

Արամեի եռանդուն քաղաքականության շնորհիվ հզոր պետականության հիմքերի վրա դրվեց Հայկական լեռնաշխարհի ցեղերի ժամանակավոր, անկայուն դաշնությունը: Իր վարած լեռնային ճակատամարտերով նա Սալմանասար III-ին զրկեց վճռական հաջողություններից, ետ մղեց նրա բոլոր արշավանքները, պահպանեց երկրի ռազմական, քաղաքական հզորությունը, ընդարձակեց պետությունը: Արամ նահապետի մասին դյուցազնապատումը հյուսված է հենց Արամե թագավորի փառքի հիման վրա: Ըստ Մովսես Խորենացու վկայաբերած մի հնավանդ պատմազրույցի՝ Հայկյան Արամի (Արամեի) գահանիստը համարվում է Այրարատ «աշխարհի» Արմավիր քաղաքը: Հակահարված տալով իր «արյունակիցներին» ասպատակող ասորեստանցի և այլ «օտարածին» թշնամիներին՝ նա ազատագրել է երկիրը, հիմնել միասնական թագավորություն[4]:

Արամեին, ըստ ամենայնի, հաջորդել է **Լութիպրի** արքան, որի գահակալության շրջանի մասին տեղեկություններ մեզ չեն հասել:

[3] ***Մ. Կատվալյան,*** Ուրարտու, ՀՍՀ, հ. 12, էջ 276:
[4] Նույն տեղում, էջ 278:

Մ.թ.ա. 832 թ., երբ Սալմանասար III-ի զորաբանակը ներխուժել է Ուրարտու, հանդիպել է նոր գահակալ **Սարդուրի Ա**-ի (մ.թ.ա. մոտ 835-825 թթ.) դիմադրությանը և նահանջել: Դատելով արշավանքի երթուղու նկարագրությունից՝ Ուրարտուի հարավարևմտյան սահմաններն այն ժամանակ արդեն հասել են Արածանի գետին:

Արդեն Սարդուրի Ա-ի իշխանության տարիներին Տուշպան (ներկայիս Վանը) դառնում է տարածաշրջանի կարևոր քաղաքական կենտրոններից մեկը: Բազմաթիվ ուրարտագետներ հենց Սարդուրի Ա-ին են համարում Տուշպայի հիմնադիր: Վանա ժայռի արևմտյան ստորոտին՝ Տուշպայի միջնաբերդի մոտ, պահպանվել են պարսպի կառուցման մասին վկայող նրա վեց արձանագրությունները՝ գրված ասսուրերեն լեզվով:

Իշպուինի թագավորի (մ.թ.ա. 825-810 թթ.) և, հատկապես, նրա գահակից որդու՝ տաղանդավոր ռազմական և պետական գործիչ **Մենուայի** միանձնյա գահակալման տարիները (մ.թ.ա. մոտ 810-786 թթ.) հատկանշվել են Վանի թագավորության՝ որպես Մերձավոր Արևելքի հզոր տերության ձևավորմամբ, կենտրոնական իշխանության ամրապնդմամբ, երկրի արտադրողական ուժերի վերելքով և շինարարական աշխատանքների ծավալմամբ: Արքունիքը, սկսած Իշպուինի թագավորից, հրաժարվել է իր պաշտոնական արձանագրություններն ասսուրերենով կազմելու նախորդ ավանդույթից:

Իշպուինին ժամանակակից է Ասորեստանի Շամշի-Ադադ V (մ.թ.ա. 823-811 թթ.) թագավորին և հիշատակվում է նրա արձանագրության մեջ (Ուշպինա անունով)՝ մ.թ.ա. 821 թ.: Նա հաջորդել է հորը՝ Սարդուրի Ա թագավորին: Սկզբում իշխել է միահեծան, այնուհետև որդու՝ Մենուայի գահակցությամբ: Գահակալել է նաև տարեց հասակում, չնայած նրան, որ ուներ երիտասարդ որդի և թոռ: Իշպուինիի անունով պահպանված սեպագրերը վկայում են նրա հաղթական արշավանքների, թագավորության սահմանների ընդարձակման ու ամրապնդման մասին: Իշպուինիի, ինչպես և Մենուայի հետ համատեղ թողած որոշ արձանագրություններ վերաբերում են մայրաքաղաք Տուշպայում և Վանա լճի հարակից շրջաններում իրականացված շինարարական աշխատանքներին:

Իշպուինին պատմության մեջ մնաց որպես կրոնական խոշոր բարեփոխիչ: Մայրաքաղաքից ոչ հեռու՝ հյուսիս-արևելքում՝ «Միերի դուռ» կոչվող ժայռին (մոտ 2 մ լայնություն և 4,5 մ բարձրություն), Իշպուինիի և Մենուայի անունից կազմված սեպագրում հիշատակված են մ.թ.ա. IX դ.

վերջին թագավորության դիցարանի աստվածները և աստվածուհիները: Նախքան Վանի թագավորության անկումը՝ հուշարձանը դարձավ գլխավոր աստված Խալդիի պաշտամունքի վայրը, իսկ անկումից հետո սկսեց կապվել Միհրի պաշտամունքի հետ: Այն ընկալվել է նաև որպես «Խալդիի դարպաս»: Ըստ պատկերացումների՝ Խալդին եղել է նաև ժայռում ապրող աստված և հենց նման դռների միջով է դուրս եկել ժայռից: Խալդիի պաշտամունքն այնքան առաջնային է եղել Ուրարտուում, որ Գ. Ղափանցյանն այն անվանել է «խալդամոլություն»[5]:

Ուշագրավ է, որ «Միհրի դուռը» հիշատակվում է նաև «Սասնա ծռեր» էպոսում: Ըստ էպոսի՝ Փոքր Միհրն իր ձիով փակվել է այդ ժայռքարանձավում՝ **Ագռավաքարում**, և պետք է մնա այնքան ժամանակ, մինչև որ աշխարհում թագավորի արդարությունը: Մի անգամ ինչ-որ հովիվ տեսնում է, որ ժայռը բացվել է, բայց Միհրը դուրս չի գալիս: Նա հարց է տալիս, թե ե՞րբ պետք է դուրս գա: Միհրը պատասխանում է, որ դուրս կգա այն ժամանակ, երբ ցորենի հատիկն ավելի խոշոր կլինի, քան ընկույզը, և երբ գարին ավելի խոշոր կլինի, քան մասուրը[6]:

Մինչև XX դ. «Միհրի դռան» վերաբերյալ հյուսվել են տարատեսակ առասպելներ, որոնք գրառել են Վան այցելած հետազոտողները: Ֆ. Շուլցի գրի առած առասպելում պատմվում է, որ այդ դռան հետևում կան անհաշիվ դահլիճներ, որոնցում դևեր են ապրում: Մեկ այլ առասպելում նշվում է, որ «Միհրի դուռ»-ն անվանում են նաև «Երկաթե դուռ» (բացվում է տարին մեկ անգամ՝ Ս. Հովհաննես Մկրտչի օրը): Նշանավոր արևելագետ Ա. Լեյարդը պատմում է մեկ այլ առասպել, ըստ որի՝ մի հովիվ քնել է այդ դռան մոտ և երազում լսել դուռը բացելու մոգական խոսքը: Արթնանալով՝ բացել է դուռը, վերցրել պարկով լի ոսկին, բայց ներսում մոռացել գավազանը: Նորից մտնելով ներս՝ այս անգամ նա մոռանում է մոգական խոսքը և չի կարողանում դուրս գալ: Բ. Պիոտրովսկին այս պատմությունը կապում է Սասնա ծռերի վերջին ներկայացուցիչ Փոքր Միհրի առասպելի հետ[7]:

---

[5] ***Գ. Ղափանցյան,*** Ուրարտուի պատմություն, Երևան, 1940, էջ 114:

[6] ***Ա. Ղանալանյան,*** Ավանդապատում, Երևան, 1969, էջ 39, ՀՄՊ 98/Բ: Ա. Ղանալանյանը «Միհրի դուռ կամ Ագռավու քար» խորագրով վկայակոչում է ավանդության ևս վեց պատում (նույն տեղում, էջ 39-42, ՀՄՊ 98Ա, Գ-Է) – Ա. Հ.:

[7] ***Ավետիսյան Հ., Բոբոխյան Ա,*** Ուրարտուի հնագիտություն (ամրոց-բնակավայրեր և դամբանային համալիրներ), Երևան, 2009, էջ 31-32:

Իշպուինի արքայի օրոք Տուշպան (տարբեր ժամանակներում կոչվել է նաև Տոսպ, Տոսպավան, Վանտոսպ) վերջնականապես ձևավորվում է որպես Վանի թագավորության մայրաքաղաք: Սկսած Իշպուինիից՝ ուրարտական արքաներն իրենց տիտղոսներում անվանվում են նաև «Տուշպա քաղաքի տեր»: Սկսվում է քաղաքի ակտիվ վերակառուցումը, որը շարունակվում է նաև Իշպուինիի որդու՝ Մենուայի օրոք: Նշելի է միջնաբերդի կառուցումը՝ Վան քաղաքի բարձրադիր ժայռին, որն ունի հսկա աշտարակներ ու պարիսպներ: Ամրոց կարելի է բարձրանալ թեք արահետով:

Տուշպայի ճարտարապետության գլխավոր տարրը Վանա ժայռն էր, որի ներսում փորվում են տարածքներ, որոնք, հավանաբար, օգտագործվել են որպես արքայական պալատներ: Կառուցվել են ժայռի տարբեր հատվածներն իրար կապող աստիճաններ: Ժայռի այն մասերը, որտեղ կարելի է բարձրանալ, կառուցվել են բարձր պարիսպներ: Մենուայի, նրա հաջորդներ Արգիշտի Ա-ի ու Սարդուրի Բ-ի ժամանակներին է վերաբերում Մովսես Խորենացու այն վկայությունը, ըստ որի՝ Տոսպում կառուցվել են երկհարկ և եռահարկ, գույնզգույն քարերով հարդարված բազմաթիվ ապարանքներ, գեղեցկագույն ու ընդարձակ փողոցներ, բաղնիքներ և այլ շինություններ:

Մայրաքաղաք դառնալով՝ Տուշպան դարձավ նաև Վանի թագավորության մշակութային կենտրոնն ու ռազմական գլխավոր հենակայանը՝ ընդդեմ Ասորեստանի: Նորակերտ բերդաքաղաքը կոչվել է արեգակի և արդարության աստված Շիվինիի կնոջ՝ Տուշպուեա դիցուհու անունով:

Կարելի է ասել, որ Տուշպան սկսեց գրավել եվրոպացի գիտնականների ուշադրությունը, երբ Մովսես Խորենացու Պատմագիրքը թարգմանվեց եվրոպական լեզուներով: Վան քաղաքը նկարագրելիս՝ պատմահայրը հիշատակում է Ասորեստանի թագուհի Շամիրամի կողմից կառուցված շինություններն ու արձանագրությունները: Այս տեղեկությունները ճշտելու համար 1827 թ. Փարիզի Ասիական ընկերությունը Վան է գործուղում երիտասարդ գիտնական Ֆ. Շուլցին, որը կարճ ժամանակում հայտնաբերում և պատճենում է անծանոթ լեզվով գրված արձանագրությունները: Սակայն 1829 թ. Ֆ. Շուլցը սպանվում է քրդերի ձեռքով: Նրա հավաքած նյութերը, նաև՝ 42 արձանագրությունները հետագայում հրատարակվում են ֆրանսիական «Journal Asiatique» հանդեսում (Փարիզ, 1840 թ.):

Նկ. 1. Տուշպա. ամրոցի պատը՝ ուրարտական շրջանի մնացորդներով

Նկ. 2. Տուշպայի տեղակայման ներկայիս տարածքը

Հնագետների հավաստմամբ՝ «Ֆ. Շուլցի աշխատանքներից հետո մինչ օրս գիտնականների կողմից ուսումնասիրություններ են կատարվել Վանում և շրջակայքում: Պեղված հսկայական նյութը դեռևս գրեթե ամբողջացված չէ: Առաջին՝ համեմատաբար համահավաք աշխատանքն իրականացվել է Բ. Պիոտրովսկու կողմից[8]:

1916 թ. ռուսական հնագիտական ընկերության կողմից տեղում առավել մանրամասն ուսումնասիրություններ են կատարվել: Ամրոցի պատերը, որոնք պահպանվել էին ստորին մասում, որոշ հատվածներում ունեն մինչև 20 մ բարձրություն: Հատկապես հետաքրքիր էին հարավային մասում գտնվող ժայռային կացարանները, տարբեր չափերի խորշերն ու սեպագրերը: Ականավոր հայագետ-արևելագետ Հ. Օրբելին պեղել է արևմտյան խորշերից մեկը, որտեղ հայտնաբերել է 2,27 մ բարձրության քարե կոթող, որի վրա պահպանվել էր Սարդուրի Բ-ի սեպագիր տարեգրությունը: Գիտնականը պեղել է նաև մի քանի համալիրներ, երկու խորշ՝ սեպագրերով, ինչպես նաև՝ ժայռերի վրա պահպանված հարթակներ: Տուշպան դժվարամատչելի էր թշնամու համար և պաշտպանված էր բնական ամրություններով, հսկայական պարիսպներով»[9]:

Իշպուինի արքայի անվան հետ է կապված **Ազնավուր-թեփե** կոչվող հնավայրը, որը գտնվում է Արևմտյան Հայաստանի Պատնոց կամ Բադնոց գյուղի մոտ (Մանազկերտ քաղաքից մոտ 20 կմ հյուսիս-արևելք՝ Արածանիի Մանազկերտ վտակի վերին հոսանքի շրջանում՝ աջ ափին): Այստեղ պահպանվել են ուրարտական ամրոցի մնացորդներ (որմնանկարների հետքերով) և Իշպուինիի ու Մենուայի թողած արձանագրությունները:

Ինչպես նշել ենք, Իշպուինի արքան կյանքի վերջին շրջանում երկիրը կառավարում էր որդու՝ Մենուայի գահակցությամբ: Այդ տարիներին բավականին ընդլայնվում են պետության սահմանները՝ հարավ-արևելքում հասնելով մինչև Մանա և Բարշուա երկրները՝ մոտենալով Ասորեստանի արևելյան սահմաններին: Իշպուինիի և Մենուայի գահակալման տարիների հետ է կապված նաև Մուծածիր քաղաքի կառուցումը, որտեղ գտնվում էր Խալդի աստծու գլխավոր տաճարը: Մուծածիրը (աքքադ. *Muşaşir*, ուրարտ. *Ardini*) առաջին անգամ հիշատակված է Ասորեստանի Աշուրնաձիրապալ II թագավորի արձանագրություններից մեկում (մ.թ.ա. 879 թ.), ապա նաև՝ Քելիշինի երկլեզվյան արձանագրությունում: Արձա-

[8] ***Б. Пиотровский,*** Ванское царство (Урарту), Москва, 1959.
[9] ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան,*** նշվ. աշխ., էջ 31-32:

նագրությունը գրված է ուրարտական և ասսուրական լեզուներով. բովանդակում է Իշպուինի և Մենուա արքաների համատեղ գահակալության տարիներին՝ դեպի Մուծածիրի Խալդիի տաճարը կատարած պաշտամունքային մի երթի մասին: Հիմնվելով ինչպես այս, այնպես էլ Ռուսա Ա-ի (մ.թ.ա. մոտ 735-714 թթ.)՝ դեպի Մուծածիր կատարած երթի մասին պատմող ուրարտերեն-ասսուրերեն երկլեզվյան մեկ այլ՝ Թոփուզավայի արձանագրության տեղադրության ու տվյալների, ինչպես նաև տեղագրական ու հնագիտական հետազոտությունների վրա՝ ուսումնասիրողները Մուծածիր երկիրը տեղադրում են այժմյան իրաքյան Քրդստանի տարածքում, իսկ քաղաքը՝ Մուջաջիր գյուղի շրջակայքում: Սակայն Մուծածիրի տեղադրության հարցը վերջնականապես լուծված չի կարելի համարել[10]:

Հոր մահից հետո Մենուան արդեն միանձնյա շարունակեց հզորացնել իր երկիրը:

Մենուայի թագավորության օրոք (մ.թ.ա. 810-786 թթ.) Ուրարտուն ապրել է ռազմաքաղաքական վերելք: Երկրամասը հյուսիսում հասել է Կարսի շրջան, Ճորոխի ավազան և Արարատի հյուսիսային ստորոտ: Դիաուխի (հայկական Տայք), Էթիունի, Էրիկուախի և այլ երկրների դեմ տարած հաղթանակները զգալիորեն ամրապնդել են Ուրարտուի դիրքերը հյուսիսում: Այնուհետև Մենուան ռազմական գործողություններ է ծավալել արևմուտքում և հարավ-արևմուտքում՝ Ծուփանի-Ծոփքում, Ալզի-Աղձնիքում, անդրեփրատյան Մելիտեա-Մալաթիայում:

Վիթխարի է Մենուայի շինարարական գործունեությունը: Ծայրամասային և կենտրոնական մարզերում՝ Վանա լճի շրջակայքում, Արածանիի և Արաքսի վերին հոսանքներում, Կարինի (Էրզրումի) դաշտում նա կառուցել է ամրոցներ, ինչպես նաև՝ տաճարներ: Դա հնարավորություն է տվել ապահովելու պետության անվտանգությունը, հաստատվելու նվաճված երկրներում և հետագա արշավանքներով գրավելու նոր շրջաններ: Արաքս գետի աջ ափին՝ Մասիսի հյուսիսային փեշերին (այժմյան Թուրքիայի Դաշբուռուն գյուղի տարածքում), Մենուան կառուցում է մի բերդաքաղաք, հավանաբար իբրև ռազմական հենակետ՝ գալիք արշավանքների համար, և այն իր անունով կոչում Մենուախինիլի: Բերդաքաղաքը հետագա տարիներին դարձավ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային շրջանները Վանի թագավորության մեջ միավորելու հենակետ: Դաշբուռուն գյուղի շրջակայքից գտնված արձանագրությունը-

[10] ***Ս. Համայակյան, Լ. Բիյագով,*** Մուսասիր, ՀՍՀ, հ. 8, Երևան, 1982, էջ 87-88:

ները պատմում են Էրիկուախի երկրի գրավման, Մենուախինիլիի հիմնադրման ու Խալդիի տաճարի կառուցման մասին:

Համանուն մեկ այլ քաղաք Մենուան կառուցել է Վանա լճի հարավային ափին, որը հիշատակված է Աղթամարից գտնված, ջրանցքի շինարարության մասին պատմող արձանագրության մեջ:

Մենուան ստեղծել է նաև ոռոգման լայն ցանց: Ջրամատակարարումն ու ոռոգումը նրա օրոք հանդիսացել են Վանի թագավորության տնտեսական քաղաքականության գլխավոր ուղղություններից մեկը: Թագավորության բոլոր տնտեսությունները տեղաբաշխվում էին գործարկված ոռոգման ջրանցքների շուրջը: Առկա ռեսուրսների և բնակչության ներգրավումը, որը սկսվել էր դեռևս Սարդուրի Ա-ի և Իշպուինիի օրոք, ոռոգման խոշոր ջրանցքների կառուցման գործում նպաստեցին պետականության առաջադիմությանն ու ծաղկմանը, ինչն իր գագաթնակետին հասավ հատկապես Մենուայի կառավարման տարիներին: Շնորհիվ ոռոգման համակարգի ստեղծման վրա ծախսած ջանքերի՝ ուրարտացիները բավականաչափ հացահատիկային մշակաբույսեր աճեցնելու հնարավորություն ստացան, որպեսզի կախված չլինեին հարևան երկրներից, ինչպես նաև բազմապատկեցին խաղողի այգիները և դարձան Հին աշխարհի խոշորագույն գինի արտադրողն ու արտահանողը: Բացի այդ, նորաստեղծ քաղաքներն ու ամրոցները պահանջում էին ջրամատակարարման անհրաժեշտ համակարգի կառուցում: Այդպիսի համակարգերն անհրաժեշտ էին ոչ միայն տնտեսական, այլև ռազմական նպատակներով, հատկապես քաղաքների շրջափակման ժամանակ: Ուրարտացիները մեծ հաջողությունների հասան ջրամատակարարման և ոռոգման համակարգերի կառուցման գործում: Նրանց ջրանցքաշինության գլուխգործոցը եղավ Մենուայի ջրանցքը, որը պատմության մեջ մտավ որպես շինարարական ֆենոմեն:

Մենուայի ջրանցքն Ուրարտուի հիդրոտեխնիկական խոշորագույն համալիրն է: Կառուցել է Մենուա թագավորը, հավանաբար մ.թ.ա. IX դ. վերջին կամ VIII դ. սկզբին՝ Տուշպա մայրաքաղաքին խմելու և ոռոգելու ջուր մատակարարելու նպատակով[11]: Ջրանցքի երկարությունը մոտ

[11] Ըստ ավանդության (պահպանվել է Մովսես Խորենացու «Պատմություն Հայոց» երկում և ժողովրդական բանահյուսության մեջ)՝ Մենուայի ջրանցքի կառուցումը վերագրվել է Ասորեստանի Շամիրամ թագուհուն և անվանվել է նաև վերջինիս անունով: Այս առասպելն առաջացել է նրանից, որ Շամիրամը կառավարել է Մենուայի հետ նույն ժամանակաշրջանում և իր համբավի շնորհիվ «Մենուայի ջրանցքը» անվանափոխվեց «Շամիրամի ժամանակների ջրանցք», իսկ հետո՝ ուղղակի «Շամիրամի ջրանցք», թեև ջրանցքի իրական կառուցողը Մենուան է եղել:

54 կմ է, լայնությունը՝ 4,5 մ, խորությունը՝ 1,5 մ, ջրի հոսանքի արագությունը՝ 3 մ/վրկ: Սկիզբ է առել Հայոց ձոր գավառի հարավային կողմում՝ Վերին Մժնկերտ գյուղի մոտ, ժայռերի տակից բխող բազմաթիվ ջրառատ աղբյուրներից: Այստեղ, մինչև XX դարի սկիզբը, նրա ջրերով աշխատում էր 40 ջրաղաց[12]: Խոշաբ գետի վրայով ջրանցքն անցնում էր հատուկ կամրջով, իսկ որոշ տեղերում՝ մինչև 15-17 մ բարձրություն ունեցող հենապատերի վրայով: Ջրանցքից ճյուղավորվում են բազմաթիվ մանր ջրանցքներ և առուներ, որոնք ոռոգում են ընդարձակ տարածություններ Վանա լճի արևելյան ափին:

Մենուայի հրամանով Ներքին Մժնկերտ գյուղի մոտ՝ ժայռի վրա, թողել են ջրանցքի կառուցման վերաբերյալ առաջին արձանագրությունը՝ 14 տողից բաղկացած. «Խալդյան զորությամբ, Մենուա Իշպուինորդին այս ջրանցքն անցկացրեց, «Մենուայի ջրանցք» (է) անունը: Խալդյան մեծությամբ, Մենուան արքա է հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի: Մենուան ասում է. «ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի դա անել, ով ասի. «ես եմ այս ջրանցքն անցկացրել», թող Խալդին, Թեյշիբան, Շիվինին, (բոլոր) աստվածները, ոչնչացնեն նրան արևի տակից»[13]:

Ջրանցքն ունեցել է խիստ կարևոր տնտեսական նշանակություն և, պատահական չէ, որ նրա պահպանման համար կառուցվել են ամրոցներ: Այն իր չափերով ու նշանակությամբ խոշորագույններից է ոչ միայն Ուրարտուի, այլև Հին Արևելքի ոռոգման համակարգում: Ջրանցքն այժմ էլ գործում է՝ ոռոգելով 25 գյուղերի ցանքատարածքներ ու այգիներ[14]:

Մենուայի որդու և հաջորդի՝ **Արգիշտի Ա**-ի գահակալման տարիներին (մ.թ.ա. 786-764 թթ.) Վանի թագավորությունը հասել է իր ռազմաքաղաքական հզորության բարձրակետին: Արգիշտին աներկբա համարվում է Վանի թագավորության պատմության հզորագույն արքան: Իր գլխավոր հակառակորդի՝ Ասորեստանի դեմ վճռական ռազմական գոր-

[12] Սրանք կոչվել են նաև «Շամիրամի» ջրաղացներ և մինչև Մեծ եղեռնը, դրացից 17-ը դեռ գործում էին (***Ս. Կարապետյան,*** Հայաստանի պատմություն, հ. Ա, Հայոց ձոր, Երևան, 2015, էջ 173) – Ա. Հ.:

[13] ***Н. Арутюнян,*** Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001, էջ 92-93, Հմր 62 - Ա. Հ.:

[14] Ջրանցքի վերաբերյալ հիմնական գրականությունը՝ ***Ս. Տեր-Ավետիսյան,*** Ուրարտական թագավոր Մենուա Առաջինի կառուցած Շամիրամի ջրանցքը, «Տեղեկագիր ՍՍՌՄ ԳԱ հայկական ֆիլիալի», 1941, Հմր 3-4. ***Б. Пиотровский,*** Ванское царство (Урарту), էջ 138-139. ***Н. Арутюнян,*** Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 16-22:

ծողություններ ձեռնարկելուց առաջ, Արգիշտի Ա-ն նախ մի քանի պատժիչ արշավանքներով ընկճել է Դիաուեխի (Տայք), Զաբախա (Ջավախք), Էրիախի (Շիրակ), Կատարզա (Կղարջք), Էթիունի (Սարիղամիշից մինչև Սևանա լիճ), Աբունի (Հավնունիք) և այլ երկրները, ամրապնդել կենտրոնական իշխանության ազդեցությունը տերության հյուսիսային շրջաններում: Այնուհետև, զենքն ուղղելով Ասորեստանի դեմ՝ Արգիշտի Ա-ն նրան դուրս է մղել Հյուսիսային Միջագետքից, Կոմմագենեից և Հյուսիսային Ասորիքից, տիրել Միջերկրածովքի արևելյան և Փոքր Ասիայի հարավարևելյան շրջաններով անցնող առևտրային մայրուղիները: Ըստ Խորխորյան տարեգրության՝ Արգիշտի Ա-ն Ասորեստանի դեմ կռիվներ է մղել (մ.թ.ա. 781-780 և 778 թթ.): Բացի այդ, Ուրմիայից հարավ գտնվող Մանա, Բուշտու, Պարսուա երկրների հետ բախումները հիմնականում պիտի դիտարկել Ուրարտուի և Ասորեստանի միջև արևելյան շրջաններում մղվող պայքար[15]:

Առաջավոր Ասիայում առաջնությունը զիջելով Ուրարտուին՝ Ասորեստանը նրա դեմ մղել է սոսկ պաշտպանողական մարտեր: Ուրարտուի ռազմաքաղաքական հզորացումը սերտորեն պայմանավորվել է հասարակական-տնտեսական կյանքի նոր վերելքով: Գրեթե Հայկական ամբողջ լեռնաշխարհը միավորելով մեկ պետության մեջ՝ Արգիշտին հետևողականորեն վարել է անհնազանդ ցեղային միությունների կենտրոնախույս ձգտումները ճնշելու քաղաքականություն, թուլացրել նրանց ուժերը, հարկերի ու պարտավորությունների ենթարկել, նրանց տիրույթներում ռազմական հենակետեր ստեղծել, վերաբնակեցրել իր տիրապետության տակ եղած այլ վայրերում (ըստ Խորխորյան տարեգրության՝ ավելի քան 200.000 մարդու):

Արգիշտի Ա-ի կառավարման տարիների մասին է պատմում Վանա ժայռի հարավարևմտյան հատվածում պահպանված Խորխորյան տարեգրությունը: Արգիշտին հիշատակվում է նաև Ասորեստանի թագավոր Սալմանասար IV-ի (մ.թ.ա. 781-772 թթ.) զորահրամանատար Շամշիլուի մի արձանագրության մեջ՝ «Արգիշտի ուրարտացու անունը սարսափելի է որպես ծանր հողմ»[16]:

[15] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, Հայաստանը նախնադարյան-համայնական և ստրկատիրական կարգերի ժամանակաշրջանում, Երևան, 1971, էջ 304:
[16] Նույն տեղում, էջ 307:

Վճռական հարված հասցնելով Ասորեստանին՝ նա տիրել է Հյուսիսային Ասորիքով և Ուրմիա լճի ավազանով անցնող առևտրական մայրուղիները: Ասորեստանն իր առաջնակարգ դիրքը Առաջավոր Ասիայում հարկադրաբար զիջել է Ուրարտուին, որը հասել է հզորության բարձրակետին:



Նկ. 3. Վանի թագավորությունը մ.թ.ա. VIII դարում

Բացառիկ է նաև Արգիշտի Ա-ի շինարարական և տնտեսական գործունեությունը: Նրա օրոք հիմնվել են Էրեբունի (Երևան) և Արգիշտիխինիլի (Արմավիր) բերդաքաղաքները, կառուցվել են մի շարք ջրանցքներ, տաճարներ, պալատներ, շտեմարաններ և այլն: Այս ամենի մասին ևս հարուստ տեղեկություններ կան ինչպես Խորխորյան, այնպես էլ Արգիշտի Ա-ի թողած այլ արձանագրություններում:

Արգիշտի Ա-ն Էրեբունին հիմնադրել է գահակալման 5-րդ տարում՝ մ.թ.ա. 782 թ., ներկայիս Երևանի հարավարևելյան մասի՝ Նոր Արեշ և Վարդաշեն թաղամասերի միջև վեր խոյացող Արին-բերդ բլրի շուրջը, որի գագաթին պահպանվել են միջնաբերդի մնացորդները:

Արին-բերդ բլուր-հնավայրը հնուց ի վեր գրավել է գիտնականների ուշադրությունը: 1879 թ. բլրի ստորոտին հայտնաբերվեց Արին-բերդի

ուրարտական առաջին սեպագիրը՝ Արգիշտի Ա-ի կողմից միջնաբերդում հացահատիկի շտեմարան կառուցելու մասին: Արին-բերդը 1894 թ. ուսումնասիրել է ռուս հնագետ Ա. Իվանովսկին[17]: 1950 թ. հայտնաբերվեց Արգիշտի Ա-ի՝ քաղաքի հիմնադրման մասին փաստող սեպագիրը. «Խալդյան մեծությամբ, Մենուայի որդին Արգիշտին այս հոյակապ բերդը կառուցեց, կոչեց քաղաք Իրբունի անվամբ՝ ի փառս Բիայնա երկրների և ի սարսափ թշնամի երկրների: Արգիշտին ասում է՝ հողն ամայի էր, ես այստեղ հիշարժան գործեր կատարեցի: Խալդյան մեծությամբ, Մենուայի որդին Արգիշտին՝ թագավոր հրաշագործ, թագավոր Բիայնայի, տերը Տուշպա քաղաքի»[18]: Ուշագրավ է, որ Էրեբունի ամրոցի կառուցումը վկայված է նաև Խորխորյան տարեգրությունում, որից պարզվում է, որ Արգիշտի արքան Խաթե և Ծուփանի երկրներից Էրեբունիում վերաբնակեցրել է 6600 գերի զինվոր[19]:

Հնավայրի պարբերական պեղումները սկսվել են 1952 թ.՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի, Մոսկվայի Պուշկինի անվան թանգարանի և ճարտարապետական հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության համատեղ արշավախմբի կողմից (ղեկ.՝ Կ. Հովհաննիսյան, գիտ. խորհրդատու՝ Բ. Պիոտրովսկի): Այստեղ գտնվել են Արգիշտի Ա-ի, Սարդուրի Բ-ի և Էրիմենայի որդի Ռուսայի 23 սեպագրերը, ինչպես և՝ խեցեղեն, կնիքներ (գլանաձև, կշռաքարերի նման), ճարմանդներ, ապարանջաններ, ուլունքներ (ագաթե, սերդոլիկե և ապակե), նետերի բրոնզե ծայրակալներ, Ք.ա. IV դ. Միլեթ քաղաքի արծաթե դրամներ, Աքեմենյան ժամանակաշրջանի արծաթե ռիտոններ, երկաթե սանձ և այլն: Արին-բերդի հնագիտական նյութերի թվին են դասվում նաև այն առարկաները, որոնք գտնվել են Կարմիր-բլուրի պեղումների ժամանակ, բայց պատրաստված են եղել Արին-բերդում (բրոնզե վահաններ, սաղավարտներ, կապարճներ, թասեր, ձիասարքի մասեր և այլն): 1950-1968 թթ. պեղումների ընթացքում Արին-բերդի միջնաբերդում բացվել են շուրջ 100 սենյակ, դահլիճ, բակ, միջանցք, որոնք շրջապատված են եղել հզոր բերդապարսպով[20]:

---

[17] ***Կ. Հովհաննիսյան,*** Արին-բերդ, ՀՍՀ, հ. 2, Երևան, 1976, էջ 60:

[18] ***Н. Арутюнян,*** Корпус урартских клинообразных надписей, էջ 212, Հմր 197-198 - Ա. Հ.:

[19] Նույն տեղում, Հմր 173, II/32:

[20] ***Կ. Հովհաննիսյան,*** Արին-բերդ, էջ 60:

Էրեբունին ուրարտական խոշոր ռազմաստրատեգիական հենակետ էր և իր հզոր զինվորական կայազորով կոչված էր ամրապնդելու երկրի դիրքերը հյուսիսային սահմանների հատվածում՝ Սևանի ավազանի արևմտյան և հարավային հատվածում գտնվող Ուդուրի-էթիունի ցեղային միության ներխուժման վտանգը կանխելու համար[21]: Էրեբունին դեպի հյուսիս կատարվող արշավանքների ժամանակ ծառայում էր իբրև արքայական նստավայր, որին ուրարտական թագավորները շատ մեծ նշանակություն էին տալիս: Մյուս կողմից՝ Արարատյան դաշտն Էրեբունիի հետ մեկտեղ, Վանի շրջանից հետո ուրարտական պետության երկրորդ խոշոր տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոնն էր:

Քաղաքաշինական առումով Էրեբունին, ինչպես և ուրարտական քաղաքների մեծ մասը, ունի պարզորոշ կառուցվածք: Որպես կանոն, դրանք տարածվում էին բարձրադիր, անառիկ բլուրների շուրջը, որոնց գագաթին վեր էր խոյանում հզոր միջնաբերդը: Քաղաքի կառույցները, որոնք փռված են բլրի շուրջը, պեղված են մասնակի, իսկ միջնաբերդը՝ ամբողջությամբ: Էրեբունիի եռանկյունաձև հատակագծով միջնաբերդը (1,5 հա) կառուցվել է Արին-բերդ բլրի գագաթին, ունեցել է հարմար ստրատեգիական դիրք և պաշտպանվել հզոր բերդապարիսպներով[22]:

Միջնաբերդն ունեցել է որոշակիորեն արտահայտված երեք հիմնական մաս՝ պալատական, պաշտամունքային և տնտեսական, որոնց միջև գտնվել է հրապարակը[23]: Պաշտամունքային մասն իր օժանդակ կառույցներով գրավում է միջնաբերդի ամբողջ հարավարևմտյան հատվածը: Պալատը, գրավելով միջնաբերդի հյուսիսարևմտյան հատվածը, ուղղված էր դեպի Արարատ և Արագած լեռները: Հրապարակի առանցքով վեր էր խոյանում Խալդի աստծու տաճարը՝ կազմված աշտարակից և 12 փայտյա սյուներից բաղկացած շքամուտքից[24]: Միջնաբերդը, որտեղ զինվորական կայազորն էր, հարմարեցված էր երկարատև և հուսալի պաշտպանության: Այդ են վկայում նաև այստեղ հայտնաբերված հացահատիկի մեծ տարողության շտեմարանները:

---

[21] Էրեբունի ուրարտական քաղաքը, «Մշակութային աշխարհ» հայ-ամերիկյան ամսաթերթ, ապրիլ, 2016, Հմր 15, էջ 1-2:

[22] Նույն տեղում:

[23] ***Կ. Հովհաննիսյան,*** Հայկական ճարտարապետության պատմություն, հ. I, Երևան, 1996, էջ 144:

[24] Նույն տեղում:

Պալատի կենտրոնական հատվածը կազմում էր 17x14 մ տարածություն զբաղեցնող սյունազարդ բակը, իսկ պալատական դահլիճն ունեցել է 17x7,5 մ չափեր[25]: Պալատի արևմտյան կողմում պեղվել է արձանագրություններում «Սուսի» անվանվող տաճարը՝ նվիրված Իվարշա աստծուն[26]: Դրանք ճոխ հարդարանք են ունեցել. զարդարված էին աշխարհիկ ու պաշտամունքային բնույթի գույնզգույն որմնանկարներով: Հետագայում՝ հավանաբար Աքեմենյան Իրանի տիրապետության ժամանակաշրջանում, ուրարտական շենքերը վերակառուցվեցին՝ համապատասխան նոր պահանջներին, որի հետևանքով ստեղծվեցին ապադանան (դահլիճը) և կրակի տաճարը[27]: Բակի արևելյան կողմում՝ Խալդի աստծու տաճարի դիմաց, Արգիշտի Ա-ն կառուցել է վիթխարի դահլիճ-մառան՝ 500 մ^2 տարածքով: Դահլիճի պատերը հարդարվել են ճոխ որմնանկարներով, որոնք պատկերում են աշխարհիկ (որսի տեսարաններ, հողի մշակում, խաշնարածություն) և պաշտամունքային թեմաներ: Որսի տեսարանում պատկերված կենդանիների սրընթաց վազքի և մյուս նկարները պատկերացում են տալիս արվեստի ռեալիստական բնույթի մասին[28]:

Իր կառավարման 11-րդ տարում (մ.թ.ա. 776 թ.) Արարատյան դաշտի (ուրարտական Ազա երկրի) կենտրոնական մասում՝ Արաքս գետի միջին հոսանքի նախկին հունի ձախ ափին (ներկայիս Արմավիր քաղաքից 15 կմ դեպի հարավ-արևմուտք՝ Նոր Արմավիր և Արմավիր գյուղերի միջև), Արգիշտին կառուցել է վարչատնտեսական կարևոր նշանակություն ունեցող մեկ ուրիշ քաղաք՝ Արգիշտիխինիլին:

Առաջին հնագիտական ուսումնասիրություններն այստեղ կատարել են Ա. Երիցյանը և Ա. Ուվարովը՝ 1880 թ., իսկ պարբերական պեղումներ են իրականացվել սկսած 1962-ից՝ ՀՍՍՀ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի արշավախմբի կողմից: Քաղաքի հիմնադրման, ինչպես նաև այնտեղ պաշտպանական, պալատական, պաշտամունքային և տնտեսական կառույցների մասին տվյալներ կան Արգիշտի Ա-ի և

[25] Մանրամասն տե՛ս ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան,*** նշվ. աշխ., էջ 66-67:

[26] Մ. Իսրայելյանի բնորոշմամբ՝ «Susi-ները զգալի կերպով տարբերվել են մասսայական բնույթի աղոթավայրերից, որի տիպական օրինակը, ըստ երևույթին, պետք է համարել նույն Արին-բերդի պեղումներով բացված հսկայական մեծությամբ սյունազարդ տաճարը՝ իր զոհասեղանով, երկու մուտքերով ու պատերի տակ եղած նստարաններով» (***Մ. Իսրայելյան,*** Արինբերդի susi տաճարը և նրա արձանագրությունները, «Տեղեկագիր» հաս. գիտ., 1957, Հ^{մր} 9, էջ 97-99) – Ա. Հ.:

[27] ***Կ. Հովհաննիսյան,*** Արին-բերդ, էջ 60:

[28] Էրեբունի ուրարտական քաղաքը, էջ 1-2:

նրա հետնորդներ Սարդուրի Բ-ի, Ռուսա Ա-ի և Ռուսա Էրիմենայորդու 17 սեպագրերում: Պեղածո նյութերից և արձանագրություններից երևում է, որ մ.թ.ա. VIII դ. կեսերին Արգիշտիխինիլին դարձել է ուրարտական թագավորության մշակութային-տնտեսական ու պաշտամունքային խոշոր կենտրոն: Քաղաքի կառուցապատված մասը գրավել է շուրջ 1000 հա տարածություն, որտեղ եղել են այգիներ, բանջարանոցներ, ցանքսեր:



Նկ. 4. Երեբունի բերդաքաղաքի միջնաբերդի հատակագիծը

Արգիշտիխինիլիի քաղաքաշինական սխեման կազմվել է տեղանքին համապատասխան: Քաղաքն իր արևելյան և արևմտյան կողմերում ունեցել է երկու հսկայական միջնաբերդ, որտեղ եղել են թագավորական պալատներ, տաճարային շինություններ, արհեստանոցներ, հացահատիկի պահեստներ, գինու մառաններ: Պալատական, տաճարային շինությունները տեղավորված էին արևմտյան կողմում, բլրաշարքի ամենաբարձր մասում՝ շրջափակված եռաշարք հզոր պաշտպանական պարիսպներով,



Նկ. 5. Երեբունի բերդաքաղաքի միջնաբերդի մանրակերտն արևելքից



Նկ. 6. Երեբունի բերդաքաղաքի միջնաբերդի մանրակերտն արևմուտքից

աշտարակներով: Պալատներից մեկի պեղումներից երևում է, որ այն բաղկացած է եղել սյունազարդ երկու դահլիճներից, բնակելի և տնտեսական ընդարձակ շենքերից: Քաղաքի արևմտյան մասում է գտնվում Արմավիր բլուրը (բարձ.՝ մոտ 80 մ), որից 1 կմ հեռավորությամբ շղթայաձև ձգվում է Դավթի բլրաշարքը՝ մոտ 2,5 կմ երկարությամբ: Այս բլրաշարքի արևմտյան՝ բարձրադիր հատվածում տեղադրված է եղել արևմտյան ամրոցը: Բնակելի թաղամասերը զբաղեցրել են բլրաշարքը, նրա լանջերն ու ստորոտի հարթավայրը:



Նկ. 7. Արգիշտիխինիլիի միջնաբերդի հյուսիսային կենտրոնական հատվածը (վերակազմություն)

Առանձին հետաքրքրություն են ներկայացնում քաղաքի պաշտպանական կառույցները: Արևմտյան ամրոցը շրջապատված է եղել 3,5 մ հաստության եռաշարք պարիսպներով, որոնք կառուցվել են տարբեր ժամանակաշրջաններում՝ միջնաբերդի տարածությունն ընդարձակելու նպատակով: Ամրոցի մուտքերը գտնվել են հյուսիսային և արևելյան պարսպամասերում: Բլրաշարքի կենտրոնում (կենտրոնական մեծ սենյակի շուրջը) բացվել են 6-10 սենյակներով միահարկ բնակելի առանձնատներ: Երվանդունիների թագավորության առաջին շրջանում Արգիշտիխինիլիի մեծ մասն ավերակ էր: Կյանքն այստեղ վերսկսվեց միայն նրա արևելյան մասում, երբ հիմնադրվեց Երվանդունիների գահանիստ Արմավիրը: Արևմտյան հատվածը շրջապատված է եղել բերդապարսպով, որի մնացորդները 1,5-2 կմ երկարությամբ մասամբ պահպանվել

են[29]: Արգիշտիխինիլիի պեղումների ժամանակ գտնվել է հսկայական հնագիտական նյութ. ուշագրավ են քուրմ բժշկի տունը, դարբնի արհեստանոցը, բրուտի տունը, շքասեղները, օձագլուխ ապարանջանները, կարասները, կաթնամթերք պատրաստելու և պահելու համար նախատեսված տաշտեր, չաներ, միականթ սափորներ և այլն[30]:

Վանի թագավորության վերելքը շարունակվել է նաև Արգիշտի Ա-ի որդու և հաջորդի՝ **Սարդուրի Բ**-ի գահակալման տարիներին (մ.թ.ա. 764-735 թթ.): Հզորացնելով զինված ուժերը (մասնավորապես՝ արքունի զորագունդը)՝ Սարդուրի Բ-ն արտաքին քաղաքականության մեջ հասել է նոր հաջողությունների, շուրջ 20 տարի պահպանել իր տերության առաջնությունը Հին Մերձավոր Արևելքում: Մ.թ.ա. 754 թ. Սարդուրի Բ-ն վճռական հաղթանակ է տանում Ասորեստանի թագավոր Աշուրնիրարի V-ի (մ.թ.ա. 754-745 թթ.) նկատմամբ: Այնուհետև Վանի թագավորության բանակը հասնում է Ուրմիա լճի հարավային ափերից մինչև Դիալա գետի միջին հոսանք՝ նվաճելով Մանա, Բարուատա, Բաբիլու երկրները: Ուշագրավ էին նաև Սարդուրի Բ-ի հաջողությունները հյուսիսային շրջաններում. արշավանքներից մեկի ժամանակ նրան հաջողվեց անգամ հասնել Սև ծովի հարավարևելյան ափեր՝ Կուլխա (Կոլխիդա)[31]:

Ասորեստանում մ.թ.ա. 744 թ. գահ է բարձրանում Թիգլաթպալասար III (մ.թ.ա. 744-727 թթ.) արքան: Նրա անվան հետ է կապվում Ասորեստանի նոր և աննախադեպ վերելքը: Թիգլաթպալասար III թագավորին հաջողվում է Արպադ քաղաքի մոտ (Հյուսիսային Ասորիքում) տեղի ունեցած ճակատամարտում (մ.թ.ա. 743 թ.) պարտության մատնել Ուրարտուի և նրա դաշնակիցների միացյալ զորքերին, վերականգնել իր քաղաքական ազդեցությունը Հյուսիսային Ասորիքում, իսկ մ.թ.ա. 735 թ. ներխուժել է Ուրարտու և պաշարել Տուշպան, բայց, չկարողանալով գրավել այն, նահանջել է՝ ավերելով ու կողոպտելով շրջակա անպաշտպան բնակավայրերը[32]:

Սարդուրի Բ-ի որդին՝ **Ռուսա Ա**-ն (մ.թ.ա. մոտ 735-713 թթ.), իր գահակալության սկզբնական շրջանում խուսափելով Ասորեստանի հետ առճակատումից, նվաճողական գործողություններ էր ձեռնարկում հյու-

---

[29] ***Հ. Մարտիրոսյան,*** Արգիշտիխինիլի, ՀՍՀ, հ. 2, էջ 5-6. նույնի՝ Аргиштихинили, Археологические памятники Армении, т. 8, Урартские памятники, в. 1, Ереван, 1974:

[30] ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան***, նշվ. աշխ., էջ 92-95:

[31] Հայ Ժողովրդի պատմություն, հ. I, էջ 311-318:

[32] ***Մ. Կատվալյան,*** Ուրարտու, էջ 278:

սիսում: Նրա թագավորության սկզբին են կառուցվել «Խալդի աստծու քաղաք» (Գավառի) և «Թեյշեբա աստծու քաղաք» (Օձաբերդի) ամրոցները՝ Սևանա լճի արևմտյան և հարավային շրջաններում:

Ռուսա Ա-ն, Ուրարտուի գլխավորությամբ ստեղծված նոր ռազմական խմբավորման մեջ ներգրավելով Մուշքինիի (Փռյուգիայում), Թաբալի կամ Թոբելի (Կապադովկիայում), Խիլակկուի (Կիլիկիայում), Խատտեի (Մելիտինեի շրջանում) և Մանայի թագավորությունները, ինչպես նաև՝ Մանային դրացի մի շարք իշխանություններ (Զիկիրտու, Կարալլու, Ալաբրիա, Անդիա, Ուիշդիշ), համառ պայքար է մղել Ասորեստանի դեմ: Ուրմիա լճի արևմտյան շրջաններում, հատկապես Արմարիլի և Սանգիբուտուի Բարի մարզում նա ավարտել է դեռևս իր նախորդների օրոք հիմնված և արքունի տան կրտսեր զարմերին պատկանող խոշոր տնտեսական համալիրը (բերդեր, տաճարներ, պալատներ, այգիներ, պարտեզներ, ջրամբարներ, ոռոգիչ առուներ, շտեմարաններ, ձիաբուծարաններ, փարախներ և այլն)[33]: Հավանաբար մ.թ.ա. 715 թ. Ուրարտուն ասպատակել են հյուսիսից ներխուժած վաչկատուն կիմերները: Ռուսա Ա-ի զորաբանակը ծանր պարտություն է կրել[34]: Հետագայում Ռուսա Ա-ին հաջողվում է ճնշել նաև ծագած հակաարքունի խռովությունը, ձերբակալել և մահապատժի են դատապարտել խռովության պարագլուխներին:

Ասորեստանի Սարգոն II (մ.թ.ա. 721-705 թթ.) թագավորը, որն իր լրտեսների միջոցով հետևել է մրցակից երկրում տիրող կացությանը, մ.թ.ա. 714 թ. ամռանը խոշոր ուժերով արշավել է Ուրարտուի ու նրա դաշնակիցների դեմ: Մանայի թագավորությանը և նրա դրացի իշխանություններին ընկճելուց հետո, Սարգոն II-ի բանակը Ուաուշ լեռան կիրճերում ծանր պարտության է մատնել Ռուսա Ա-ին, այնուհետև ներխուժել Ուրարտու, ավերել ու կողոպտել Ուրմիա լճի շուրջն ընկած երկրները (ըստ Սարգոն II-ի արձանագրությունների՝ 7 գավառ՝ 430 բնակավայրերով): Ուրարտուի համար ամենածանր հարվածը եղել է Մուծածիր սրբավայրի ավերումն ու բնակչության գերեվարումը (ավելի քան 6000 մարդ), տեղի տաճարի կործանումը, աստվածների ու թագավորների անդրիների, այնտեղ պահվող վիթխարի հարստությունների, հազարավոր զենք ու զրահի ավարառությունը: Մուծածիրի աղետը Ռուսա Ա-ին

[33] ***Մ. Կատվալյան,*** նշվ. աշխ.:
[34] Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 2007, էջ 128-129:

մղել է անձնասպանության[35]: Արշավանքի առանձին դրվագներ պատկերված են եղել Սարգոն II-ի Դուր Շարուկինի պալատի բարձրաքանդակներին: Այստեղ պատկերված Խալդիի տաճարը (մ.թ.ա. IX դ. վերջ կամ VIII դ. սկիզբ) ամբողջովին տարբերվում է Ասորեստանի ու Բաբելոնի համանման շինություններից: Այն կառուցված է եղել հիմնականում քարից՝ հարթակի վրա: Բարձրաքանդակին պատկերված տաճարը սյունազարդ է, ունի նիզակով (կամ նիզակաձև կենաց ծառով) ավարտվող, բարձր ճակտոնով երկթեք տանիք: Տաճարի ճակատը զարդարել են վեց սյուներ կամ որմնասյուներ: Մուծածիրի տաճարը ճակտոն և սյունաշար ունեցող կառույցներից հնագույնն է, հորինվածք, որն ընկած է անտիկ ճարտարապետության հիմքում: Հավանաբար այստեղ են թագադրվել Ուրարտուի արքաները, և տաճարում դրվել են աստվածացված ուրարտական արքաների արձանները[36]:

Ռուսա Ա-ին հաջորդում է **Արգիշտի Բ**-ն (մ.թ.ա. 713-685 թթ.), որին հաջողվում է խափանել Ասորեստանի զավթողական ծրագրերն ու կարճ ժամանակաշրջանում վերացնել Սարգոն II-ի ավերիչ արշավանքի հետևանքները: Ասորեստանն իր հերթին ևս ապահովված չէր համարում իր դիրքերը Ուրարտուին սահմանամերձ շրջաններում: Մ.թ.ա. 712 թ. Սարգոն II-ը թեև ընկճել է Ուրարտուի անդրեփրատյան դաշնակից երկրներին, սակայն շուտով նա արձանագրում է, որ Կոմմագենե երկրի թագավորն Արգիշտի Բ-ի օգնությամբ դադարեցրել է հարկերի ու տուրքերի վճարումն Ասորեստանին: Արգիշտի Բ-ին հաջողվում է հասնել մինչև Կասպից ծովի արևմտյան ափերին հարող շրջաններ, քանի որ Ասորեստանի արքա Սինախերիբը (մ.թ.ա. 704-681 թթ.) պատերազմներ էր մղում այլ ուղղություններով: Ուշագրավ է, որ Արճեշ քաղաքի մոտ հայտնաբերված Արգիշտի Բ-ի արձանագրության մեջ հիշատակված է քաղաքի և ջրանցքի կառուցման մասին[37]:

Արգիշտի Բ-ի անվան հետ կապված գլխավոր շինարարական ձեռնարկը Երզնկա քաղաքից մոտ 20 կմ դեպի արևելք գտնվող (Կարինից Սեբաստիա՝ Սվազ տանող ճանապարհի մոտ) Ալթըն-թեփե հզոր բերդաքաղաքն է, որը եղել է Ուրարտուի ռազմական հենակայանը արևմուտքում:

[35] ***Մ. Կատվալյան,*** նշվ. աշխ., էջ 278 :
[36] ***Ս. Հմայակյան, Լ. Բիյագով,*** նշվ. աշխ., էջ 87-88:
[37] ***Մ. Կատվալյան,*** նշվ. աշխ., էջ 278. Հայ Ժողովրդի պատմություն, հ. I, էջ 330:

Ալթըն-թեփե (թրքականացված անվանումն է, որը նշանակում է «ոսկե բլուր») ամրոցը կառուցված է 60 մ բարձրության զառիթափ բլրի գագաթին՝ շրջապատված արտաքին զույգ պատերով, որոնցից յուրաքանչյուրի հաստությունը 12 մ է: Դրանք շարված են 35-40 տ կշռող տաշված քարերով: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև տաճարային համալիր, մթերանոցներ, դամբարաններ, բացօթյա սրբավայր և ընդունարան: Գտնվել են նաև Խալդի աստծուն նվիրված նիզակների բրոնզե և երկաթե սայրեր, խորհրդանիշներ, գավազաններ, գայիսոններ, սկահակներ և փորագրված փայտե առարկաներ:



Նկ. 8. Ալթըն-Թեփեի տաճարը

Ալթըն-թեփեում ուրարտական արձանագրություններ առայժմ չեն հայտնաբերվել: Մասնագետները (Բ. Պիոտրովսկի, Մ. Իսրայելյան, Կ. Հովհաննիսյան) կարծում են, որ Ալթըն-թեփեն իր կառույցների ճարտարապետական ոճով (պալատական շենքը), որմնանկարների զարդանախշերով, դրանց հերթականությամբ, գույներով նման է հատկապես Էրեբունուն[38]: Ուշագրավ է նաև քառակուսի հատակագծով (13,9x13,9 մ) պեղված տաճարը, որը գտնվում էր բակի խորքում: Բակը բոլոր կողմերից օղակված է եղել 2,5 մ հաստությամբ պատերով: Տաճարի անկյունները

[38] [Խմբագրական], Ալթըն-Թեփե, ՀՍՀ, հ. 1, էջ 162-163:

եզրագծված են որմնահեցերով, իսկ պատերն ունեն 4,35 մ հաստություն, որի հետևանքով դահլիճը (ցելա) ավելի փոքր է: Վերջինիս խորքում գտնվում է քարե պատվանդանը, որը, ըստ ամենայնի, նախատեսված է եղել գերագույն աստծու արձանի համար: Տաճարը չորս կողմից շրջապատված է եղել սյունաշարով, որից պահպանվել են 0,2 մ բարձրությամբ և 0,7 մ տրամագծով քարե սրբատաշ սյունախարիսխները[39]:

Արգիշտի Բ-ին հաջորդում է որդին՝ **Ռուսա Բ**-ն (իշխել է մ.թ.ա. 685/80-640 թթ.), որին կարելի է համարել Ուրարտուի վերջին հզոր տիրակալը: Նրա օրոք բարիդրացիական հարաբերություններ են հաստատվել Ասորեստանի հետ: Դրա վկայությունն է Ասորեստանի արքա Ասարհադդոնի (մ.թ.ա. 681-669 թթ.) 673/2 թ. Շուպրիա կատարած արշավանքից հետո՝ դժգոհ «ուրարտացի փախստականներին Ռուսա Բ-ին վերադարձնելը»: Ուրարտուի հզորության մասին են վկայում Խաթե, Խալիտու և Մուշկինի երկրների դեմ Ռուսա Բ-ի ձեռնարկած արշավանքները: Այս հաջողությունները որոշ առումով պայմանավորված էին նաև Ասորեստանի հետ հաստատած փոխհարաբերություններով: Երկու երկրների հարաբերությունների բնույթը որոշակիորեն փոխվում է Ասորեստանի նոր արքայի՝ Աշշուրբանապալի (մ.թ.ա. մոտ 669-627 թթ.) օրոք, որին ուրարտացիները արձանագրություններից մեկում հիշատակում են որպես հակառակորդ: Լարված հարաբերությունները թերևս հաջողվել է կարգավորել խաղաղ ճանապարհով. դրա մասին է վկայում հատուկ դեսպանության միջոցով Ռուսա Բ-ի հղած շնորհավորանքն Աշշուրբանապալին՝ Էլամի դեմ մ.թ.ա. 653/2 թ. տարած հաղթանակի առթիվ[40]:

Հատկանշելի է Ռուսա Բ-ի քաղաքաշինական գործունեությունը: Հայտնի է, որ նրա օրոք հիմնադրվել են մի շարք խոշոր վարչական կենտրոններ՝ ներկայիս Մակուի շրջանում «Ռուսայի փոքր քաղաքը» (Բաստամ), Արարատյան դաշտում՝ Ազա երկրում՝ Թեյշեբաինին (Կարմիր բլուրը), Վան քաղաքից հյուսիս՝ Այանիսի ամրոցը և Վանա լճի հյուսիսարևմտյան ափին՝ Ձիուկունի երկրում, Խալդի աստծու անունը կրող քաղաքը (միջնադարյան Արծկե քաղաքի տեղում): Այստեղ գտնվել է նաև Ռուսա Բ թագավորի շինարարական աշխատանքների մասին վկայող սեպագրերից մեկը: Անչափ ուշագրավ է նաև ցլի վրա կանգնած Թեյշեբա աստծու բարձրաքանդակը:

---

[39] ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան,*** նշվ. աշխ., էջ 58:

[40] Հայ Ժողովրդի պատմություն, հ. I, էջ 334-335. ***Մ. Կատվալյան,*** նշվ. աշխ.,էջ 279:

Ուրարտագիտության մեջ եղած որոշ կարծքիների համաձայն՝ նա թագավորության մայրաքաղաքը տեղափոխում է Տուշպայի մոտակայքում գտնվող Ռուսախինիլի նորակառույց ամրոց[41], մինչդեռ որոշ հետազոտողներ կարծում են, որ այն արդեն հիմնադրվել էր Ռուսա Բ-ի նախորդ արքաներից մեկի օրոք և վերջինս այստեղ շարունակել է միայն կառուցումներ իրականացրել: Սույն հնավայրը (Թոփրաք-քալե) գտնվում է Վան քաղաքի հյուսիս-արևելքում՝ Ձըմ-Ձըմ լեռան վրա: 1879 թ. այստեղ պեղումներ են իրականացրել ամերիկացի միսիոներ Ա. Ռայնոլդը և բրիտանական հյուպատոս Ա. Կլեյտոնը, իսկ հաջորդ տարում նրանց է միացել Հ. Ռասսամը: Հիմնական ուշադրությունը կենտրոնացվել է այն ժամանակ դեռևս լավ պահպանված տաճարի վրա: Նրանց հաջողվել է բացել տաճարի մի մասը և պարսիպները, սակայն նրանց կատարած աշխատանքները միայն խիստ վնասակար եղան՝ նպաստելով գանձախույզների կողմից հնավայրի ավերմանը և թալանին: 1898-1899 թթ. Թոփրաք-քալեում պեղումներ սկսեց Կ. Ֆ. Լեման Հաուպտի և Վ. Բելքի գերմանական արշավախումբը: Նրանք պեղեցին տաճարի տարածքը, ամրոցի որոշ հատվածներ, կացարաններ և ստորգետնյա սենյակի մնացորդներ: Պեղումների արդյունքում պարզվեց, որ տաճարն ունեցել է քառակուսի հատակագիծ (13,8x13,8 մ), հատակը զարդարված է եղել խճանկարով: Հիմնապատերը (4 մ բարձրությամբ) կառուցված են եղել շախմատաձև դասավորված սև և սպիտակ սրբատաշ քարերով: Տաճարի մուտքի մոտ գտնվել է մարմարից զոհասեղան: Տաճարի մոտ՝ բլրի հարավարևմտյան լանջին փորված 56 աստիճանները տանում են դեպի մի ժայռափոր սրահ. այն կարող էր լինել դամբարան կամ լոգարան:

Ուշագրավ է, որ բնակավայրի կացարաններից մեկում գտնվեցին 25 կարասներ՝ 500-600 լիտր տարողությամբ: Որոշ կարասների ներսում գտնվել են զենքեր, ոսկե և արծաթե իրեր: Թոփրաք-քալեից պեղումների ժամանակ հայտնաբերվել են նաև տարաբնույթ արժեքավոր իրեր՝ մետաքսի գործվածք, լաջվարդի բեկորներ, եռաժանիներ, խոշոր գամեր, դանակներ: Այնուհետև՝ 1911-1912 թթ. և 1916 թ. Հ. Օրբելին և Ն. Մառը նույնպես պեղումներ կատարեցին Թոփրաք-քալեում[42]:

---

[41] Տևական ժամանակ գիտնականները կարծում էին, որ Ռուսա Ա արքան է մայրաքաղաքը Տուշպայից տեղափոխել Ռուսախինիլի, որը, ինչպես ենթադրվում էր, պայմանավորված է եղել մ.թ.ա. 735 թ. Սարդուրի Բ-ի դեմ Թիգլաթպալասար III-ի արշավանքի ժամանակ Ասորեստանի բանակի կողմից մայրաքաղաքի ավերումով:

[42] ***Б. Пиотровский,*** Урарту, Ереван, 1944, էջ 148-156. ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան,*** նշվ. աշխ., էջ 37-41:

Ռուսա Բ արքան մ.թ.ա. VII դ. առաջին քառորդում Էրեբունիից ոչ հեռու գտնվող բլրի գագաթին հիմնադրում է Թեյշեբաինի քաղաքը՝ նվիրված տարերքի (ամպրոպի և անձրևի) աստված Թեյշեբային: Այն գտնվում է ներկայիս Երևանի հարավարևմտյան ծայրամասում՝ Հրազդան գետի ձախ ափին: Բլրի արևելյան և հյուսիսային լանջերը գրեթե ուղղաձիգ իջնում են դեպի Հրազդան գետը:

1936 թ. երկրաբան Ա. Դեմյոխինը բլրի հարավարևելյան լանջին պատահաբար գտավ սեպագրի մի հատված: Նա այդ գտածոն հանձնեց Հայաստանի պատմության պետական թանգարանին: Արձանագրության վերծանությունից պարզ դարձավ, որ այն հիշատակում է Վանի թագավորության արքա Ռուսա Բ-ի անունը: Այնուհետև կատարվեցին հետախուզական բնույթի աշխատանքներ և պարզվեց, որ բլուրը ծածկված է հնագույն շինությունների փլուզված պատերի և կարմիր հողի մնացորդներով: Այն առաջացել է պատերի հում աղյուսի այրվելու և փլուզվելու հետևանքով, ինչից բլուրը գունավորվել է կարմիր գույնով և առաջացել է «Կարմիր բլուր» անվանումը: 1939 թ. երեք արշավախումբ համատեղ սկսեցին Կարմիր բլուրի կանոնավոր պեղումները՝ Պետական Էրմիտաժի (արշավախմբի ղեկ. Բ. Պիոտրովսկի), Պատմական հուշարձանների կոմիտեի և ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի արշավախումբը (արշավախմբի ղեկ. Կ. Ղաֆադարյան՝ 1939 թ., Ս. Տեր-Ավետիսյան՝ 1940-1941 թթ.): Հայրենական մեծ պատերազմի տարիներին պեղումներն ընդհատվեցին և վերսկսվեցին 1945 թ. Բ. Պիոտրովսկու ղեկավարությամբ[43]:

Բլրի գագաթին գտնվող ամրոցը գրավում է շուրջ 4 հա տարածություն: Նրանից դեպի հարավ և արևմուտք ընկած էր ուրարտական բուն քաղաքը՝ զբաղեցնելով շուրջ 100 հա տարածություն: Ամրոցը եղել է երկհարկանի մի վիթխարի կառույց, որի պեղված նկուղային հարկերը կազմված են 150 սենյակներից: Ամրոցի հյուսիսային և արևելյան ճակատներն ամրացված են եղել ոչ մեծ որմնահեցերով, անկյունները՝ աշտարակներով: Դեպի բակ նայող արևմտյան ճակատը պաշտպանվել է պարիսպների կրկնակի շերտով: Բակ կարելի էր մուտք գործել հարավային՝ հսկայական աշտարակներով պաշտպանված մուտքով և հյուսիսային փոքր մուտքով՝ նախատեսված հեծյալների և մարտակառքերի համար: Ուրարտական ամրոցների ճարտարապետության համաձայն՝

[43] ***Ս. Եսայան,*** Կարմիր բլուր, Երևան, 1982, էջ 12-12:

պարիսպների հիմքը քարից է, որի վրա կառուցել են կավակերտ պատերը[44]: Բնակելի սենյակներն ու հանդիսավոր դահլիճները եղել են երկրորդ հարկում:

Կանոնավոր հատակագծված քաղաքը բաղկացած էր սոցիալական տարբեր խավերի մարդկանց բնակարաններից: Բնակելի թաղամասերը կազմված են եղել առանձին տների խմբավորումից: Բլրի մակերևույթին համապատասխան՝ կառույցները դասավորված են աստիճանաձև և ունեցել են ելուստավոր աշտարակի տեսք: Ի տարբերություն Էրեբունիի՝ միջնաբերդը գրեթե աննկատելի է միանում բլրի ստորոտին փռված քաղաքին: Քաղաքի հարավարևմտյան մասում պեղված (բազմաբնույթ) չորս միատիպ, կցաշար բնակարանների (յուրաքանչյուրում 10-11 սենյակ) ուղղանկյուն, ընդհանուր պարսպի ողջ պարագծով կան որմնահեցեր (չորս անկյուններում՝ ավելի զանգվածեղ): Բնակարանների շարքում կան նաև մեգարոնային և մենատնային տիպի կառույցներ: Նույնատիպ բնակելի տների գոյությունից կարելի է եզրակացնել, որ այստեղ իշխել է «տիպային» կառուցապատման սկզբունքը, քաղաքը կառուցվել է ըստ նախօրոք մտածված հատակագծի և բնակեցվել է միայն կառուցումից հետո[45]:

Թեյշեբաինիի միջնաբերդի հյուսիսային, հյուսիսարևմտյան մասում էր ապրում նահանգապետն իր պաշտոնյաների, գրագիրների և քրմական դասի ներկայացուցիչների հետ: Ուշագրավ են Կարմիր բլուրից գտնված սեպագիր կավե սալիկները (արխիվը), որոնք առավելապես բովանդակում են տնտեսական փաստաթղթեր և Թեյշեբաինիի նահանգապետին ուղղված գրություններ ու արքայական հրամաններ: Միջնաբերդի հարավային ու հարավարևմտյան հատվածը, հավանաբար, զբաղեցրել են տաճարային շինությունները: Կարմիր բլուրից գտնված արձանագրված բրոնզե առարկաների մեջ առանձին կարևորություն ունի դռան՝ բրոնզե օղակաձև փականը, որի վրա եղած արձանագրությունից պարզվում է, որ քաղաքը կոչվել է տարերքի աստված Թեյշեբայի (Թեյշեբաինի) անունով: Սպառազինման առարկաների վրայի՝ Խալդի աստծուն նվիրված մ.թ.ա. VIII դ. արձանագրություններից պարզ է դառնում, որ առարկաներն այստեղ են բերվել թագավորության այլ կենտրոններից:

[44] ***Հ. Ավետիսյան, Ա. Բոբոխյան,*** նշվ. աշխ., էջ, 72-74:
[45] ***Մ. Իսրայելյան,*** Կարմիր բլուր, ՀՍՀ, հ. 5, Երևան, 1979, էջ 331-332:

Թեյշեբաինին ոչ միայն խոշոր տնտեսական, այլև վարչական կենտրոն էր: Այստեղ էր կուտակվում ենթակա շրջաններից ստացված հարկը: Քաղաքի բնակելի տարածքի պեղումներով հայտնաբերվեցին ոչ միայն ուրարտական, այլև՝ նախաուրարտական և վաղ հայկական մշակույթի հնագիտական շերտեր[46]: Քաղաքային մասում հայտնաբերված վաղ հայկական հնագիտական նյութերը և հելլենիստական շրջանի դամբարանները վկայում են, որ կյանքը քաղաքում գոյատևել է ավելի երկար, քան՝ միջնաբերդում: Միջնաբերդում պեղված հացահատիկի պահեստները, մառանները, բրոնզե, երկաթե զենքերը (վահաններ, կապարճներ, սաղավարտներ, նետասլաքներ, տեգեր և այլն) ու գյուղատնտեսական գործիքները (եղան, եռաժանի, խոփ, բահ, քարե աղորիքներ, սանդեր և այլն), դրվագված ու սեպագիր բրոնզե իրերը, փորագրված փայտե, քարե, բրոնզե, ոսկրե, արծաթե, կավե ուլունքները, կնիքները, թասերը, արձանիկները, գործվածքի մնացորդները և շատ այլ պեղածոներ վկայում են Կարմիր բլուրում ու ողջ Ուրարտուում բարձր վարպետության հասած արհեստների ու արվեստների, զարգացած գյուղատնտեսության ու անասնապահության մասին: Հայտնաբերվել են նաև գարու, վարսակի մնացորդներով և ծղոտե զտիչներով սիգարաձև անոթներ (օգտագործվել են գարեջուր պատրաստելու համար), ցորենի ամբարներ, որոնցում պահվել է շուրջ 750 տոննա հացահատիկ և անգամ հաց, քունջութ և վերջինիցս ստացվող ձեթի արտադրամաս: Ելնելով այստեղ գտնված կարասների մնացորդներից՝ ըստ մոտավոր հաշվարկների, Կարմիր բլուրի միջնաբերդում պահվել է շուրջ 400.000 լիտր գինի:

Նշելի են նաև կանացի պերճանքի առարկաները, ի մասնավորի՝ ոսկորից սանր, հերակալ, անուշահոտ յուղերի սրվակներ և այլն: Փոքրասիական ու անդրկովկասյան արտադրանքի նմուշները և սկյութական առարկաները (զենքեր, ձիասարք, զարդեր) վկայում են ուրարտական կենտրոնների կապը ոչ միայն շրջակա երկրների բնակիչների, այլև մերձդնեպրյան սկյութների հետ[47]:

Ռուսա Բ-ին հաջորդում է որդին՝ **Սարդուրի Գ**-ն (իշխել է մ.թ.ա. 645-635 թթ.), որի կառավարման շրջանով սկսվում է Վանի թագավորության աստիճանական անկումը: Սարդուրի Գ արքայի օրոք շարունակվել են բարիդրացիական հարաբերություններն Ասորեստանի հետ: Արձանա-

[46] Մանրամասն տե՛ս ***Ս. Եսայան***, նշվ. աշխ., էջ 38, 56-66:
[47] ***Մ. Իսրայելյան,*** նշվ. աշխ., էջ 332:

գրություններից մեկում Աշուրբանապալը Սարդուրի Գ-ի պալատին և երկրին խաղաղություն է մաղթում, մեկ այլ արձանագրությունում նշվում է նրանց հարաբերությունների մասին՝ որպես հոր և որդու, ինչպես նաև նշվում է, որ Սարդուրի Գ-ն Ասորեստանի արքային անվանում է «տեր»[48]: Ելնելով այս հանգամանքից՝ ենթադրելի է, որ Վանի թագավորությունն այդ շրջանում նկատելիորեն թուլացել էր և իր նախկին ախոյանի հետ այժմ ձգտում էր բարիդրացիական հարաբերություններ պահպանել: Թերևս հենց նրա անունն է հիշատակվում Կարմիր բլուրից գտնված երկու կավե սալիկների վրա:

Կարմիր բլուրի պեղումներից հայտնաբերված բրոնզե վահաններից մեկի և կավե սալիկի վրա առկա արձանագրություններից ելնելով՝ որոշ հետազոտողներ Սարդուրի Գ-ի հաջորդ են համարում նրա որդուն՝ Սարդուրի Դ-ին: Նրա անձի, ինչպես նաև գործունեության մասին հստակ տեղեկություններ չկան: Հայտնի արևելագետ Ի. Դյակոնովը կարծում էր, որ Սարդուրի Դ-ն, լինելով Սարդուրի Գ-ի որդին, հոր մահվան ժամանակ դեռևս հասած չի եղել չափահասության տարիքի, և գահը ժառանգել է նրա հորեղբայրը՝ **Էրիմենան**: Որոշ հետազոտողներ, սակայն, ընդհանրապես վիճարկում են Էրիմենայի՝ արքա լինելու հանքամանքը:

Նկ. 9. Էրիմենայի անվամբ վահանը

[48] Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ, 334:

Ի. Դյակոնովը Էրիմենային էր վերագրում Կարմիր բլուրում՝ 1957 թ. հայտնաբերած սալիկներից մեկը: Ինչ վերաբերում է Էրիմենայի որդուն՝ սեպագրերից հայտնի **Ռուսա Գ**-ին, ապա նրա գահակալության տարիների վերաբերյալ ներկայումս առկա են տարբեր տեսակետներ: Որոշ հետազոտողներ նրա գահակալումը տեղադրում են Ռուսա Բ-ից առաջ կամ հետո: Ռուս հայտնի լեզվաբան և հնագետ Ի. Մեշչանինովը ենթադրել է, որ Էրիմենան պետք է հասկանալ ոչ թե որպես հայրանուն, այլ երկրանուն՝ Արմենիա[49]: Գ. Ղափանցյանը ենթադրել է, որ այդ անվանումը կարող է նշանակել «Էրմինյան», «արմենական-հայկական»[50]: Այս հարցի շուրջ, սակայն, դեռևս միակարծություն չկա:

Ռուսա Գ-ի անունը հիշատակված է նաև Թոփրաք-քալեի պեղումներից հայտնաբերված վահանների վրա: Ռուսան շինարարական աշխատանքներ է ծավալել Էրեբունիում և Արգիշտիխինիլիում, որտեղ գտնվել են շտեմարաններ կառուցելու վերաբերյալ նրա արձանագրությունները: 1968 թ. Արին-բերդում հայտնաբերված այդպիսի մի արձանագրության վրա կարդում ենք. «Ռուսան՝ Էրիմենայի որդին, այս ցորենի ամբարը լցրեց: 6848 կապի (կա) այստեղ»[51]:



Նկ. 10. 1968 թ. հայտնաբերված Ռուսա Գ-ի արձանագրությունը Արին-բերդում («Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանում)

[49] ***И. Мещанинов,*** К анализу имени Эримена, Язык и мышление, т. I, Ленинград, 1933, էջ 37:
[50] ***Գ. Ղափանցյան,*** նշվ. աշխ., էջ 221:
[51] ***Н. Арутюнян,*** Корпус урартских клинообразных надписей, էջ 373-374, ՀՄՊ 444:

Կարմիր բլուրի պեղումներից հայտնի Ռուսայի որդի Ռուսան՝ վկայված կավե սալիկի և բուլլայի արձանագրություններում, համարվում էր Վանի թագավորության վերջին արքան՝ հաջորդած Ռուսա Գ-ին: Ենթադրվում էր, որ հենց նրա օրոք՝ մ.թ.ա. 590 թ., մարական արշավանքի պատճառով ընկավ Ուրարտուն, նվաճվեցին և հրդեհվեցին նրա ամրոցները: Ներկայումս, սակայն, պայմանավորված Էրիմենայի որդի Ռուսայի գահակալության ժամանակաշրջանի վերանայմամբ և այլ փաստերով՝ հետազոտողներն առաջարկել են ինչպես թագավորության՝ VII դ. երկրորդ կեսին անկման վարկածը, այնպես էլ մարերից զատ այլ ուժերի կողմից նվաճման տարբերակներ ու անկման վարկածներ: Դիպուկ է նկատում վաստակաշատ պատմաբան Ն. Ադոնցը, «Այսպես մարեց քաղաքակրթության մի օրրան, որը երեք դար շարունակ՝ 900-600 թթ., փայլատակել էր Հայաստանի բարձունքում: Նա առաջինը միավորեց երկիրը՝ բազմաթիվ ցիրուցան ցեղեր համախմբեց մի քաղաքական ու մշակութային կյանքի շրջանակներում»[52]:

Այսպիսով, եթե փորձենք թվարկել Վանի թագավորության խոշորագույն պատմաճարտարապետական հուշարձանները, կունենանք հետևյալ ցանկը.

ՏՈՒՇՊԱ – ամրոց՝ Վանա լճի ափին, ներկայիս Վան քաղաքի տարածքում, ենթադրաբար հիմնադրված Սարդուրի Ա-ի օրոք:

ԱՉՆԱՎՈՒՐ-ԹԵՓԵ – ուրարտական ամրոց՝ ենթադրաբար հիմնադրված Իշպուինի արքայի օրոք: Գտնվում է Արևմտյան Հայաստանի Պատնոց կամ Բադնոց գյուղի մոտ (Մանազկերտ քաղաքից մոտ 20 կմ հյուսիս-արևելք, Արածանիի Մանազկերտ վտակի վերին հոսանքի շրջանում՝ աջ ափին):

ՄՈՒՇԱՇԻՐ (ԱՐԴԻՆԻ) – քաղաք՝ կառուցված Իշպուինիի օրոք, որտեղ գտնվում էր Խալդի աստծու գլխավոր տաճարը:

ՄԵՆՈՒԱԽԻՆԻԼԻ – ամրոց՝ ներկայիս Իգդիր քաղաքի մոտ՝ Դաշբուռուն գյուղի տարածքում, հիմնված Մենուայի օրոք:

ՄԵՆՈՒԱԽԻՆԻԼԻ –ամրոց՝ Վանա լճի հարավային ափին, հիմնված Մենուայի օրոք:

[52] ***Ն. Ադոնց,*** Քննական պատմություն Հայոց, հ. Դ, Երևան, 2009, էջ 317-318:

ՄԵՆՈՒԱՅԻ ՋՐԱՆՑՔ – ջրանցք՝ կառուցված Մենուայի օրոք՝ Տուշպայի և շրջակայքի ջրամատակարարման համար:

ԷՐԵԲՈՒՆԻ (ԱՐԻՆ-ԲԵՐԴ) – ամրոց՝ ներկայիս Երևանի տարածքում, հիմնված Արգիշտի Ա-ի կողմից:

ԱՐԳԻՇՏԻԽԻՆԻԼԻ – բերդաքաղաք՝ ներկայիս Արմավիրի մոտակայքում, հիմնված Արգիշտի Ա-ի կողմից:

ԱԼԹԸՆ-ԹԵՓԵ – բերդաքաղաք՝ հիմնված Արգիշտի Բ-ի օրոք (մ.թ.ա. 714-685/80 թթ.), գտնվում է ներկայիս Երզնկա քաղաքից մոտ 20 կմ դեպի արևելք (Կարինից Սեբաստիա տանող ճանապարհի մոտ):

ԹԵՅՇԵԲԱԻՆԻ (ԿԱՐՄԻՐ ԲԼՈՒՐ) – բերդաքաղաք՝ հիմնված Ռուսա Բ-ի օրոք, գտնվում է ներկայիս Երևանի Շենգավիթ համայնքում:

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ. ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖՈՏՈՇԱՐՔ

301-303 թթ. - Ագաթանգեղոսի հաղորդմամբ՝ քրիստոնեության քարոզների 66-րդ օրվա գիշերը Գրիգոր Լուսավորիչը տեսիլք է ունենում, որի համաձայն՝ արքունի ապարանքների մոտ կառուցվում է քրիստոնեական անդրանիկ տաճարը՝ Ս. Էջմիածինը[1]:

360-ական թթ. - Վաղարշապատի եկեղեցիները մեծապես վնասվում են Պարսից Շապուհ II թագավորի հասցրած ավերածություններից[2]:

369 թ. - Ներսես Ա Մեծ կաթողիկոսը «զբնաւ կարգ եկեղեցւոյ բարւոք եւ վայելչապէս նորոգէր»[3]:

V դ. - Ղազար Փարպեցու վանահայրության օրոք տաճարի փայտե ծածկը հրդեհվել է, այսինքն՝ այն սկզբնապես փայտածածկ է եղել:

483-484 թթ. - Վահան Մամիկոնյանն ի հիմանց նորոգում է Գրիգորաշեն կառույցը՝ նրան տալով քառախորան կենտրոնագմբեթ հորինվածք: Ըստ Ղազար Փարպեցու՝ V դարավերջին, երբ երկրում կրկին ծավալվել են շինարարական աշխատանքներ, Էջմիածնի Մայր տաճարը «...հիմնարկեալ նորոգեաց մեծապայծառ շքեղութեամբ զինացեալ գործ նախնեացն իւրոց, քաջ զօրավարն Հայոց Մամիկոնեանն Վահան»[4]:

---

[1] ***Ագաթանգեղոս,*** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը՝ ***Գ. Տեր-Մկրտչյանի*** և ***Ս. Կանայանցի,*** Երևան, 1983, էջ 416-420: Ըստ Ս. Էջմիածնի միաբան Հովհաննես եպս. Շահխաթունյանցի՝ տաճարի կառուցումը սկսվել է Տրդատ արքայի գահակալության 15-րդ և ավարտվել 17-րդ տարում՝ 301-303 թթ. (***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն Կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ (այսուհետ՝ Ստորագրութիւն), աշխատասիրութեամբ՝ ***Ա. Տեր-Ստեփանյանի,*** Ս. Էջմիածին, 2014, էջ 16):

[2] ***Փաւստոս Բիւզանդ,*** Պատմութիւն Հայոց, բնագիրը՝ ***Ք. Պատկանյանի,*** Երևան, 1987, էջ 266:

[3] ***Սամուէլ Անեցի եւ շարունակողներ,*** Ժամանակագրութիւն. Ադամից մինչեւ 1776 թ., աշխատասիրությամբ՝ ***Կ. Մաթևոսյանի,*** Երևան, 2014, էջ 132:

[4] ***Ղազար Փարպեցի,*** Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, քննական բնագիրը՝ ***Գ. Տեր-Մկրտչյանի*** և ***Ստ. Մալխասյանցի,*** Երևան, 1982, էջ 380:





Նկ. 1ա, բ. Ս. Էջմիածնի Մայրավանքն ըստ Ժան-Բատիստ Տավերնիեի, 1630-ական թթ. սկիզբ





Նկ. 2ա, բ. Ս. Էջմիածնի Մայրավանքն ըստ Ժան Շարդենի, 1670-ական թթ. սկիզբ



Նկ. 3ա, բ. Ս. Էջմիածնի Մայր տաճարն ըստ Ժան Շարդենի, 1670-ական թթ. սկիզբ

615-628 թթ. - Կոմիտաս Ա Աղցեցին փայտաշեն գմբեթը փոխարինում է քարաշենով[5]:

641-661 թթ. - տաճարը նորոգում է Ներսես Գ Տայեցի կաթողիկոսը[6]:

VII-XIV դդ. - տաճարը զգալի վնասվել է արաբների, սելջուկների, թաթար-մոնղոլների արշավանքներից[7]:

1441-1443 թթ. - կաթողիկոսական աթոռը Վաղարշապատում վերահաստատելուց անմիջապես հետո՝ նորընտիր կաթողիկոս Կիրակոս Ա Վիրապեցու օրոք, Մայր տաճարը նորոգվում է[8]: Այնուհետ, մինչև Մովսես Տաթևացու ժամանակները, տաճարում կատարված նորոգման որևէ աշխատանք չի հիշատակվում[9]:

---

[5] Պատմութիւն ***Սեբէոսի,*** աշխատասիրությամբ՝ ***Գ. Աբգարյանի,*** Երևան, 1979, էջ 121. ***Յովհաննէս Դրասխանակերտցի,*** Պատմութիւն Հայոց, քննական բնագիրը եւ առաջաբանը ՝ ***Գ. Տէր-Վարդանեանի,*** «Մատենագիրք Հայոց», ԺԱ հատոր, Ժ դար, Անթիլիաս-Լիբանան, 2010, էջ 403:

[6] ***Դավիթ Բաղիշեցու*** ժամանակագրությունը, «Մանր ժամանակագրություններ. XIII-XVIII դդ.», հ. Բ., կազմեց՝ ***Վ. Հակոբյան,*** Երևան, 1956, էջ 330:

[7] Հայրապետական աթոռի՝ դեռևս V դարում Վաղարշապատից Դվին, իսկ հետագայում այլ վայրեր փոխադրման արդյունքում հոգևոր կենտրոնը կորցնում է իր երբեմնի փառքը – Ա. Հ.:

[8] ***Մ. Չամչյանց,*** Հայոց պատմություն, հ. Գ, Երևան, 1984, էջ 488-489:

[9] ***Սիմէոն կթդ. Երեւանցի,*** Ձամբռ, էջ 19:

XVII դ. սկիզբ - Շահ Աբասը, հայերին Պարսկաստան գաղթեցնելուց հետո, ցանկացել է Էջմիածնի Մայր տաճարն ամբողջովին քանդել, նրա քարերը տեղափոխել Պարսկաստան և այնտեղ կառուցել նոր տաճար՝ մտածելով այդ կերպ հայերին կապել նոր բնակավայրի հետ: Սակայն հետագայում որոշվում է տանել միայն «նշանավոր» քարերը (4 անկյուններից, պատարագի ս. Սեղանը, Իջման տեղի քարը, մկրտության ավազանը, բեմի քարերից, քարե աշտանակներ ևն, նաև Լուսավորչի Աջը), որոնք և քանդվեցին ու տեղափոխվեցին Ջուղա: Այս ամենն ավելի է քայքայում խարխլված տաճարը:

1629-1633 թթ. - Մովսես Տաթևացի կաթողիկոսի օրոք վերանորոգվում են գմբեթը, առաստաղը, ծածկը, հիմքերը, սալահատակը, կառուցվում են արտաքին նոր պարսպապատեր, հյուրանոց, միաբանական խցեր, սեղանատուն և այլ շենք-շինություններ[10]:

The monastery of Holy Etchmiadzin, French color engraving , "Vue des trois Eglises ã Ecsmiazin".

Նկ. 4. Ս. Էջմիածնի Մայրավանքը
Ֆրանսիացի անհայտ նկարչի կտավում, XVII դար

[10] ***Առաքել Դաւրիժեցի,*** Գիրք պատմութեանց, աշխատասիրութեամբ՝ ***Լ. Խանլարեանի,*** Երևան, 1990, էջ 238. Դավիթ Բաղիշեցու ժամանակագրությունը, էջ 358:

1654 թ. - Փիլիպպոս Աղբակեցի կաթողիկոսի օրոք պոլսահայ Անտոն չելեպիի մեկենասությամբ և Սահակ Հիզանցի ճարտարապետի ձեռամբ սկսվում է տաճարի արևմտյան մեծ զանգակատան շինարարությունը, որն ավարտվում է Հակոբ Ջուղայեցի կաթողիկոսի օրոք՝ 1658 թ.:

1664 թ. - Ձաքարե «ոսկերիչը» նկարազարդում է զանգակատունը[11]:

1682 թ. - Եղիազար Այնթապցի կաթողիկոսի օրոք տաճարի արևելյան, հյուսիսային և հարավային խորաններին կառուցվում են փոքր զանգակատուն-գմբեթներ՝ տաճարը դարձնելով հնգագմբեթ[12]:

1683-1684 թթ. - Եղիազար Այնթապցին տաճարի կենտրոնում տեղադրված Իջման ս. Սեղանի վրա կառուցում է քառամույթ ամպիոնանի, որը հետագայում նկարազարդվում է: Ավագ խորանի բեմապատը երեսպատվում է մարմարե սալերով, նորոգվում են մույթերը, սալարկվում աղոթասրահը, հարավային խորանում հիմնվում Ս. Հովհաննես Կարապետի, հյուսիսային խորանում՝ Ս. Ստեփանոսի Նախավկայի անվանակիր սեղանները[13]:

1697 թ. - տաճարին է փոխանցվում Հռոմի պապի նվիրաբերած կաթողիկոսական գահը:



Նկ. 5. Ս. Էջմիածնի Մայրավանքը
անհայտ նկարչի փորագրանկարում, XVII դար

[11] Այդ մասին վկայող արձանագրությունը՝ զանգակատան միջնահարկի արևելյան ճակտոնին (տե՛ս ***Ս. Սաղումյան,*** Երբ և ովքեր են կառուցել Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը, «Էջմիածին», 1976, Ե., էջ 32. ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ. վանքերը և վիմական արձանագրությունները (այսուհետ՝ Վաղարշապատ), Ս. Էջմիածին, 2016, էջ 56, արձ. 13):

[12] ***Ձաքարիա Քանաքեռցի,*** Պատմութիւն. Կոնդակ Սուրբ ուխտին Յոհաննու վանից, աշխատասիրությամբ՝ ***Ա. Վիրաբյանի,*** Երևան, 2015, էջ 151:

[13] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ջամբռ, էջ 26:

Նկ. 6. Ս. Էջմիածնի Մայրավանքը
անհայտ նկարչի փորագրանկարում, XVII դար

1712-1721 թթ. - Ալեքսանդր Ա Ջուղայեցի և Աստվածատուր Ա Համադանցի կաթողիկոսների օրոք տաճարում որմնանկարչական աշխատանքներ է կատարում Նաղաշ Հովնաթանը: Վերջինիս են վերագրվում գմբեթի վերնամասի նկարազարդումները, պատերին տեղ գտած «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ», «Աղոթող զինվոր» և «Հայկ նահապետ» (կամ՝ «Ս. Մինաս») որմնանկարները (վերջին երեքն այժմ գտնվում են ՀԱՊ-ում)[14], նաև բեմի ճակատամասի մարմարապատ երեսին պատկեր-

[14] Ըստ Եղիշե Մարտիկյանի՝ Տրդատ արքայի ընտանիքի խմբանկարն ու «Հայկ նահապետը» Աբրահամ Մշեցի կաթողիկոսի (1729-1734 թթ.) գահակալման ժամանակաշրջանի գործեր են, որոնք վերագրելի են Նաղաշի որդուն՝ Հակոբ Հովնաթանյանին (***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա (XVII-XIX դդ.), Երևան, 1971, էջ 82-84, տե՛ս նաև ***Ռ. Դրամպյան,*** «Из истории армянского искусства», էջ 117): Ինչ վերաբերում է կտավների բովանդակությանը, ապա «Տրդատ, Աշխեն և Խոսրովիդուխտ» և «Աղոթող զինվոր» պատկերները կազմել են «Հրեշտակի հայտնությունը Գրիգոր Լուսավորչին» տեսարանի առանձին հատվածները (այլ ոչ թե «Հայաստանում քրիստոնեության ընդունման» տեսարանի, ինչպես համարվում էր մինչ այդ): Դա պարզել է Ռուբեն Դրամբյանը՝ 1834 թ. Էջմիածնի վանքին նվիրաբերված մի նկարի հետ համեմատության արդյունքում, որը փաստացի որմնանկարի «հեռավոր կրկնօրինակն» է (Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 106-107. ***Ռ. Դրամպյան,*** նշվ. աշխ., էջ 135-136):

ված «Տիրամայրը Մանկան հետ» (կենտրոնում), Ս. Ստեփանոսի և Ս. Փիլիպպոսի (ձախ և աջ կողմերում, աստիճանների տակ) պատկերները[15]:

1715-1721 թթ. - Աստվածատուր Համադանցի կաթողիկոսը մարմարապատել է Իջման ս. Սեղանը, ավագ խորանի ճակատային մասը, սալարկել է հատակը, նորոգել է չորս մեծ սյուները[16]: Այս մասին գմբեթատակ բոլորակին պահպանվել է սևաներկ արձանագրություն:

1721 թ. - Մադրասի հայերը տաճարին են փոխանցում կաթողիկոսական նոր գահը, որը հետագայում նկարազարդվում է (ենթադրաբար Հակոբ և Հարություն Հովնաթանյանների կողմից): Երկու ավանդատներում տեղադրվում են ընդելուզված գաղտակուրով (սադաֆապատ) դռներ (այժմ պահվում են ՀՊԹ-ում):



Նկ. 7. Դրվագ՝ Երեմիա չելեպի Քյոմուրճյանի՝ «Հայոց սրբավայրերը» քարտեզից, 1691 թ.

[15] ***Գ. Լևոնյան,*** Հովնաթանյան Նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», 1938, թ. 2, էջ 24-29. ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Ա, Երևան, 1971, էջ 79-80. ***Մ. Ղազարյան,*** Հայ կերպարվեստը XVII-XVIII դարերում, Երևան, 1974, էջ 158-163: Բեմառէջքի մարմարապատումն արվել է Աստվածատուր Համադանցի կաթողիկոսի օրոք, 1720 թ. (***Սիմէոն կթղ. Երեւանցի,*** Ձամբռ, էջ 28), այնպես, որ եթե Ս. Աստվածածնի պատկերի հեղինակը Հովնաթանն է, այն պետք է արված լինի 1720-1721 թթ.՝ մինչև նկարչի մահը:

[16] ***Սիմէոն կթղ. Երեւանցի,*** Ձամբռ, էջ 28:

1726-1729 թթ. - ըստ Սիմեոն Երևանցու՝ Կարապետ Ուլնեցի կաթողիկոսի օրոք Հակոբ և Հարություն Հովնաթանյաններն ավարտել են բեմառէջքի ձևավորումը՝ շարքում պատկերելով նաև տասներկու առաքյալներին[17]:

1732 թ. - Աբրահամ Բ Խոշաբեցի կաթողիկոսի հոգածությամբ Իջման ս. Սեղանը շրջապատվում է պղնձյա ճաղավանդակով, որն ուներ երկու դուռ՝ հարավային և արևմտյան:

1733 թ. - Աբրահամ Խոշաբեցին ավագ խորանի երկու կողմում՝ հատակից ավելի քան մեկ կանգուն բարձրությամբ սեղաններ է հիմնում, աջինը՝ նվիրված Սրբոց Հակոբյանց առաքյալներին, ձախինը՝ Ս. Գրիգոր Լուսավորչին[18]: Նկարազարդել է տվել նաև պատերը և մույթերը[19]:

Նկ. 8. Վաղարշապատի վանքերը Տուրնեֆորի փորագրանկարում, 1700-1702 թթ.

[17] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** նշվ. աշխ., էջ 28: Մ. Ղազարյանի ենթադրությամբ՝ Հակոբն ու Հարությունը բեմառէջքի նկարազարդումն ավարտել են ըստ Նաղաշ Հովնաթանի գծագրերի (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ.,էջ 161-163): Մարտիկյանը, բացի առաքյալներից, «Աստվածամոր և մանկան» որմնանկարը ևս վերագրում է Հակոբին (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 90-93, տե՛ս նաև ***Р. Дрампян,*** «Из истории армянского искусства», էջ 120-121):

[18] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 27: Խորանները հանվել են Խրիմյան Հայրիկի օրոք (***Ս. Ծոցիկեան,*** Արարատ-Կովկաս, հ. Ա, Ֆրեզնո, 1917, էջ 14):

[19] ***Սիմէօն կթղ. Երեւանցի,*** Ձամբռ, էջ 30: Մ. Ղազարյանի ենթադրությամբ՝ այդ նկարազարդումների հեղինակը Հակոբ Հովնաթանյանն է (***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 173):

1769-1771 թթ. - Սիմեոն Երևանցի կաթողիկոսի օրոք Գասպար վարպետի գլխավորությամբ վերանորոգվում են տաճարի տանիքը, երկու խորանները և հարավային զույգ մույթերը (վերջիններից մեկի արևելյան, մյուսի արևմտյան ճակատներին եղել են նորոգության մասին վկայող սևաներկ արձանագրություններ)[20]:

1778-1780, 1785-1786 թթ. - Հովնաթան Հովնաթանյանը նկարազարդում է տաճարը: Վերանկարվում է գմբեթը, և ավելացվում են աղոթասրահի մնացած մասի որմնանկարները[21]: Հովնաթանին են վերագրվում նաև Իջման ս. Սեղանի ամպհովանու նկարազարդումն[22] ու բեմառէջքի վերանկարումը[23]:



Նկ. 9. Ս. Էջմիածինը XVIII դարավերջին
(Պատկերազարդ ուղեցույց, 1796 թ.)

[20] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 28. ***Ալիշան,*** Այրարատ, էջ 220. Դիւան հայոց պատմութեան, գիրք Գ, Թիֆլիս, 1894, էջ ՂԱ-ՂԲ. ***Կ. Կոստանեանց,*** Վիմական տարեգիր, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 213. ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ, էջ 72-73, արձ. 49, 50:

[21] ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 100-103. ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 177-181, 183-186. Очерки по истории армянского изобразительного искусства, էջ 110-111:

[22] ***Ք. Ավետիսյան,*** Իջման Սեղանի նկարազարդումները, «Հայ արվեստ», 2007, թ. 1, էջ 32-34: Եղիշե Մարտիկյանն այն համարում է Նաղաշ Հովնաթանի ստեղծագործություններից (***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 65-66):

[23] ***Մ. Ղազարյան,*** նշվ. աշխ., էջ 197. ***Ե. Մարտիկյան,*** նշվ. աշխ., էջ 103-104:



Նկ. 10. Ս. Էջմիածինը գերմանացի նկարչի պատկերմամբ, 1804 թ.

784 թ. - Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսը փոխում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի արտաքին պատերի ստորին չորս շարքի և որմնախարսխի վնասված քարերը[24], այնուհետ՝ սալարկում բակը[25]:

1783-1786 թթ. - Ղուկաս կաթողիկոսը մեծ նորոգումներ է իրականացնում տաճարի աղոթասրահում[26]: Այս մասին գմբեթատակ ներքին բոլորակին կա սևաներկ արձանագրություն: Արժանահիշատակ է հատկապես հյուսիսային երկու մույթերի նորոգումը, որոնց վրա ևս եղել են սևաներկ արձանագրություններ[27]:

[24] Այդ մասին է վկայում ներկայումս գանձատան մոտ գտնվող արձանագիր քարը (***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ, էջ 76-77, արձ. 53):
[25] Այդ է վկայում զանգակատան ներքնահարկի հյուսիսային որմի արձանագրությունը (***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ, էջ 77-78, արձ. 55):
[26] ***Մաղաքիա արք. Օրմանյան,*** Ազգապատում, հ. Բ, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1015:
[27] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 30:

Նկ. 11. Մայրավանքը հյուսիս-արևմուտքից, տպ. Ս. Պետերբուրգ, 1805 թ., Հայաստանի ազգային գրադարանի արխիվ

Նկ. 12. Մայր տաճարը Վ. Սովմենչենսկու նկարում, 1805 թ., Հայաստանի ազգային գրադարանի արխիվ

1804-1813 թթ. - ռուս-պարսկական պատերազմի ընթացքում ռուսական կողմը տաճարը որպես բերդ է օգտագործել, որի համար խորանների զանգակատների շուրջը պատնեշներ են կառուցվել: Ռուս զինվորները տաճարի տանիքին շուրջօրյա պահակության ընթացքում կրակ են վառել, որի հետևանքով տանիքի սալերը ճաքճքել են, և անձրևաջրերը ներս են թափանցել՝ մեծ վնաս պատճառելով որմնանկարներին:

Նկ. 13. Մայրավանքը հյուսիս-արևմուտքից, անհայտ նկարիչ, XIX դար

1816 թ. - Եփրեմ Ա Զորագեղցի կաթողիկոսը նորոգում է Մայր տաճարի տանիքը, որի ենթագմբեթային ծածկասալերին այդ մասին վկայող արձանագրություններ կան[28]:

1837 թ. - Ռուսաց Նիկոլայ I կայսեր՝ Հայաստան այցելելու նախօրյակին նորոգվել և բարեկարգվել են տաճարը և շրջակայքը:

1840-ական թթ. վերջ - Արևելյան Հայաստանով շրջագայող ռուս զինվորական և նկարիչ Գրիգորի Գագարինը նկարում է Մայր տաճարի աղոթասրահն ու մեծ զանգակատունը: Մեկ տարի անց՝ 1847-1848 թթ., աղոթասրահը նկարում է նաև գերմանացի գեղանկարիչ Վիլհելմ Կիսվետտերը[29]:

1866 թ. - Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ հանգանակություն է կազմակերպվել Ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնիվեր նորոգման համար: Հանգանակությունը շարունակվում է շուրջ երկու տասնամյակ, որի ընթացքում հավաքվում է 15.500 ռուբլի[30]:

---

[28] ***Յովհաննէս եպս. Շահխաթունեանց,*** Ստորագրութիւն, էջ 31. ***Ա. Հարությունյան,*** Վաղարշապատ, էջ 85, արձ. 66, 67:

[29] ***M. Pehlivanian,*** Armeni syn die menschen genant. Eine Begegnung mit dem historischen Armenien, Berlin, 2000, էջ 149:

[30] ***Վ. Յարութիւնեան,*** Եկայք շինեսցուք, Ս. Էջմիածին, 1988, էջ 13:



Նկ. 14. Ս. Էջմիածինը Ռոբերտ Կեր Պորտերի նկարում, 1817-1820 թթ.



Նկ. 15. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1832 թ., ըստ Դյուբուա դը Մոնպերեի, Ատլաս, III մաս, պլ. 6

1868 թ. - Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի նախաձեռնությամբ մեկնարկում են Մայր տաճարին արևելքից կից եռադահլիճ «Ավանդատուն» թանգարանի շենքի շինարարական աշխատանքները, որոնք ավարտվում են 1869 թ.[31]:

1888 թ. ապրիլ - ճարտարապետ Միքայել Սալամբեկյանի ղեկավարությամբ սկսվել են Էջմիածնի Մայր տաճարի նորոգման աշխատանքները: Տաճարի պատերի քայքայված եռաստիճան հիմնախարիսխը փոխարինվել է նորով: Մայրավանքի ընդարձակ բակը, որը զգալիորեն բարձր էր տաճարի հատակից, հողահեռացմամբ ցածրացվել է, և այնտեղից հոսող ջուրը շենք այլևս չի ներթափանցել:

1889 թ. - ինժեներ Նիկոլայ Գրիգորյանի նախագծով Մայր տաճարի երեք մուտքերի դռները փոխարինվում են կաղնեփայտե դռներով[32]: Փոխվում են նաև զանգակատան մույթերի վնասված քարերը:

1890-1891 թթ. - նկարիչ Վարդգես Սուրենյանցը Գևորգյան հոգևոր ճեմարանում դասավանդելու տարիներին Մայր տաճարի որմնանկարների բազմաթիվ հատվածներ է կրկնօրինակում: Ըստ նկարչի քրոջ հաղորդման՝ այդ արտանկարներով կազմվել է 130 թերթից բաղկացած շատ արժեքավոր պատկերագիրք, որը, դժբախտաբար, անհետացել է[33]:

1890-ական թթ. – Պետրոս Սրապյանը (1833-1898 թթ.) նկարազարդում է Մայր տաճարի թանգարանը: Ըստ որոշ տվյալների՝ «1893-1896 թթ. Խրիմյան կաթողիկոսի հրավերով ձևավորել է Էջմիածնի վանքի ժողովարանը և Վեհարանի թանգարանը»[34], ըստ այլ տվյալների՝ «նկարիչը հրավիրվել էր կաթողիկոսի վեհարանը և կաթողիկոսարանի թանգարանը պատկերազարդելու նպատակով»[35]:

1890-ական թթ. վերջ - 1900-ական թթ. սկիզբ - Խրիմյան Հայրիկ կաթողիկոսը նոր նկարազարդման համար նախաձեռնում է տաճարի պատերը ներքուստ ծեփապատելու աշխատանքները:

---

[31] Գաղափարը կաթողիկոսը հղացել էր 1867 թ., երբ շրջագայում էր Ռուսաստանի հայոց թեմերով, և դա կապված էր երկու ավանդատների խիստ փոքր չափերի հետ, որոնցում հնարավոր չէր տեղավորել եկեղեցական սպասքն ու թանգարանային արժեք ունեցող իրերը (***Վ. Յարութիւնեան,*** Եկայք շինեսցուք, էջ 14):

[32] Նույն տեղում, էջ 13:

[33] ***Ե. Մարտիկյան,*** Հայկական կերպարվեստի պատմություն. XVII-XIX դդ., գիրք Բ, Երևան, 1975, էջ 54:

[34] ***Ա. Առաքելյան,*** Պետրոս Սրապյան, ՀՍՀ, հ. 11, Երևան, 1985, էջ 164:

[35] ***Ա. Աղասյան,*** Հայ կերպարվեստի զարգացման ուղիները XIX-XX դարերում, Երևան, 2009, էջ 33:

1890-ական թթ. վերջ - 1900-ական թթ. սկիզբ - Խրիմյան Հայրիկը տաճարի նորոգումը ղեկավարելու համար հրավիրում է նկարիչ Վարդգես Սուրենյանցին:

1909 թ. - «Մուրճ» ամսագրում հրատարակվում է Վարդգես Սուրենյանցի «Դարձեալ Էջմիածնի տաճարի նորոգման մասին» հոդվածը, որտեղ հեղինակը ներկայացնում է տաճարի վերականգնման իր մշակած գիտամեթոդական սկզբունքները:



Նկ. 16. Ս. Էջմիածնի մայրավանքը, 1830-ական թթ., ըստ Ֆ. Պարրոտի

Նկ. 17. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1843 թ., ըստ Graeb-ի (Հաքստհաուզենի գրքից)



Նկ. 18. Գրիգորի Գագարին,
Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1847թ.

1909-1910 թթ. - Մայր տաճարը մանրամասնորեն չափագրվում է: 1910 թ. մայիսի 15-ին Գևորգ արք. Սուրենյանցի նախագահությամբ և Կոմիտաս վարդապետի քարտուղարությամբ կայացած խորհրդակցությունում որոշվել են վերանորոգման աշխատանքների մեթոդներն ու հերթականությունը:

1914 թ. - Ալեքսանդր Մանթաշյանի մեկենասությամբ՝ տաճարը մասնակի նորոգվում է:

Նկ. 19. Դ. Ֆրեշֆիլդ, Ս. Էջմիածնի Մայր տաճարը, XIX դ. կեսեր

Նկ. 20. Ս. Էջմիածնի Մայր տաճարը
անհայտ նկարչի փորագրանկարում, XIX դարի կեսեր
(John M. Neale-ի “A history of the Holy Eastern Church” գրքից, 1850 թ.)



Նկ. 21. Ժակոտե, վիմագրություն, Փարիզ, 1850 թ.



Նկ. 22. Փորագրանկար Albert Lenoir-ի
“Architecture monastique. Partie 1” աշխատությունից, 1852 թ.

1921 թ. մարտի 21 (27) - փլվում են Մայր տաճարի հարավային խորանի գմբեթարդը և տանիքի զանգակատունը:

1923 թ. - Ալեքսանդր Թամանյանի և Թորոս Թորամանյանի ղեկավարությամբ հարավային խորանը վերականգնվել է (առանց զանգակատան), հանվել են թանգարանի տանիքի կիսագնդաձև զույգ գմբեթները՝ տաճարի համապատկերին անհարիր լինելու պատճառով[36]:

1945 թ. - Գևորգ Զ Չորեքչյան կաթողիկոսն իր ընտրության առթիվ գումարված ազգային-եկեղեցական մեծ ժողովի ժամանակ կոչ արեց ազգովի հանձն առնելու Մայր տաճարի վերանորոգման գործը: Ընդառաջելով կոչին՝ Հայաստանի կառավարությունը նույն թվականին որոշում ընդունեց Մայր տաճարի նորոգման գործը կազմակերպելու և ծախսերը հոգալու վերաբերյալ[37]: Գործնական քայլերը սակայն սկսեցին որոշումից մոտ մեկ տասնամյակ անց:

Նկ. 23. Փորագրանկար Floriant Gille-ի
“Lettres sur le Caucase et la Crimée” աշխատությունից, 1859 թ.

[36] ***Թ. Թորամանյան,*** Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. Բ, Երևան, 1948, էջ 64:
[37] ***Վ. Յարութիւնեան,*** Եկայք շինեսցուք, էջ 17:

Նկ. 24. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1860-ական թթ.

Նկ. 25. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1860-ական թթ.



Նկ. 26. Ս. Էջմիածնի Մայր տաճարի զանգակատունը մինչև 1870-ական թթ.

Նկ. 27. Ս. Էջմիածնի Մայր տաճարը
եվրոպացի անհայտ նկարչի նկարում, 1870-ական թթ.



Նկ. 28. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1870-ական թթ.



Նկ. 29, 30. Ս. Էջմիածնի Մայր տաճարը 1870-ականներին

Նկ. 31. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1883 թ. (լսնկ.՝ Մ. Սումբատյանցի)





Նկ. 32, 33, 34.
Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1892 թ.
(լսնկ.՝ Մ. Փափազյանի)



FIG. 49. EDCMIATSIN: THE GREAT COURT AND THE CATHEDRAL.

FIG. 53. EDCMIATSIN: CEREMONY OF THE CONSECRATION OF THE KATHOLIKOS—ANOINTING WITH OIL FROM THE BEAK OF A GOLDEN DOVE.

Նկ. 35, 36. Ս. Էջմիածնի Մայր տաճարը և կաթողիկոսի օծման տեսարանը, 1893 թ. (լսնկ.՝ Հ. Լինչի)



Նկ. 37, 38. Ս. Էջմիածնի Մայր տաճարը XIX դ. վերջին





Նկ. 39, 40. Մայրավանքը XIX դ. վերջին

1954-1955 թթ. - Հայաստանի կառավարության որոշմամբ և հատկացրած միջոցներով ՀՍՍՀ մինիստրների խորհրդին առընթեր ճարտարապետական գործերի վարչությունն իրականացնում է Մայր տաճարի հիմնովին վերանորոգումը[38]: Կազմվում է Մայր տաճարի վերանորոգման հանձնաժողով, որի անդամներն էին Ավետիք Իսահակյանը, Դերենիկ Դեմիրճյանը, Ստեփան Զորյանը, Մարտիրոս Սարյանը, Գաբրիել Գյուրջյանը, Կարո Ղաֆադարյանը, Սամվել Սաֆարյանը, Ռաֆայել Իսրայելյանը, Մարկ Գրիգորյանը, Հովհաննես Մարգարյանը, Կոնստանտին Հովհաննիսյանը, Լիպարիտ Սադոյանը, Վարազդատ Հարությունյանը և այլք:

[38] ***Վ. Յարութիւնեան,*** Եկայք շինեսցուք, էջ 18-21:

Նկ. 41, 42. Ս. Էջմիածնի Մայր տաճարը հյուսիսարևմտյան կողմից, XX դարասկիզբ (՞)

Նկ. 43, 44. Ս. Էջմիածնի Մայր տաճարը XX դարասկզբին (՞)

Նկ. 45. Ս. Էջմիածնի Մայր տաճարը XX դարասկզբին

Աշխատանքները կազմակերպվում են մի քանի ուղղություններով.

1. հնագիտական պեղումներ (1954 թ., ղեկավար՝ Ալ. Սահինյան)[39].

2. տաճարի վերականգնողական աշխատանքներ[40] (1955 թ. հունվար-սեպտեմբեր, ճարտ.՝ Ռ. Իսրայելյան, ինժ.՝ Կ. Ալթունյան, Բ. Դանոյան), կրող մեխանիզմների ամրացում (նախագիծը՝ ինժ. Կ. Ալթունյան, Ժ. Պեյլերյան), տանիքի վերանորոգում (նախագիծը՝ ինժ. Բ. Դանոյան, Ի. Դալլաքյան).

3. որմնանկարների մաքրում, ամրացում և լրացում (1955 թ. հունվար-սեպտեմբեր, ղեկավար՝ Լ. Դուռնովո)[41].

4. վանքատարածության հյուսիսային և արևելյան պարսպապատի վերակառուցում (ճարտ.՝ Ս. Սաֆարյան, Ռ. Իսրայելյան, Ս. Գուրզադյան, Լ. Սադոյան):

---

[39] Հնագիտական պեղումները շարունակվել են նաև 1956 և 1959 թվականներին:

[40] ***Վ. Հարությունյան,*** Էջմիածնի Մայր տաճարի հիմնական վերանորոգումը (1954-1955 թթ.), «Լրաբեր» հասարակական գիտությունների, 1984, թ. 10, էջ 56-67:

[41] Տաճարի որմնանկարների ընդհանուր մակերեսը կազմել է 2500 մ^2, որից այդ պահին պահպանված է եղել մոտ 1000 մ^2, մնացած մասը լրացվել է ըստ պահպանված հատվածների: Աշխատանքները կատարվել են 20 նկարիչների կողմից, իսկ վերահսկողությունն իրականացրել է Մարտիրոս Սարյանի գլխավորած հանձնաժողովը (***Վ. Յարութիւնեան,*** Եկայք շինեսցուք, էջ 21):

Հնագիտական պեղումների շնորհիվ ծեփից ազատված հյուսիսային պատին ներքուստ բացվեց փայտե գերաններով պատրաստված երկրաշարժային գոտի (ինչպիսիք կային Տեկորի տաճարի ներքին պատերում): Ավագ խորանի տակ բացվեցին նաև ավելի հին պատեր, որմնանկարի ու խճանկարի բեկորներ, որմնամույթերի տակ՝ IV-V դդ. հուշարձաններում հանդիպող տրամատված գետնախարիսխներ[42]:

1954-1955 թթ. աշխատանքների համար ներդրվեց շուրջ 4 մլն ռուբլի (հին արժեչափով), որից որմնանկարներին՝ 1,7 մլն: 1955 թ. հոկտեմբերի սկզբի դրությամբ բոլոր աշխատանքներն ավարտվել էին: Սեպտեմբերի 30-ին Վազգեն Ա-ն ընտրվում է Ամենայն Հայոց կաթողիկոս, օծվում է հոկտեմբերի 2-ին:

Նկ. 46. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1903 թ. (լսնկ.՝ Արամ Վրույրի)

[42] ***Վ. Հարությունյան,*** Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1992, էջ 133:



Նկ. 47. Համազասպի գնդի զորահանդեսը Մայր տաճարի մոտ, 1914 թ. աշուն

Նկ. 48. Ս. Էջմիածնի Մայր տաճարը բացիկի վրա, 1917 թ.

1956-1959 թթ. - տաճարի դրսում և ներսում խոշոր շինարարական աշխատանքներ են ծավալվում Վազգեն Ա կաթողիկոսի նախաձեռնությամբ (գմբեթակիր մույթերի, կամարների, արևելյան խորանի և տանիքի հիմնական վերակառուցում, հարավային գմբեթի կառուցում, սալահատակում ևն): Աշխատանքները կատարվել են վերոնշյալ հանձնաժողովի հսկողությամբ: Երկաթբետոնով ամրացվել են կրող մեխանիզմները՝ մույթերը և կամարները, նորոգվել են ծածկի խաչվող թաղերը:

1959 թ. - ճարտարապետ Հարություն Գասպարյանի նախագծով Մայր տաճարի հյուսիսային փոքր զանգակատան նմանօրինակն է կառուցվում նաև հարավային խորանի վրա, որը տարիներ առաջ քանդվել էր:



Նկ. 49. Ս. Էջմիածնի Մայր տաճարը, 1920-ական թթ.



Նկ. 50, 51. Ս. Էջմիածնի Մայր տաճարը 1925 թ.,
Ֆրիտյոֆ Նանսենի՝ 1927 թ. լույս տեսած «Խաբված ժողովուրդ» գրքից

Նկ. 52. Ս. Էջմիածնի Մայր տաճարը 1920-1940-ական թթ.

Նկ. 53. Ս. Էջմիածնի Մայր տաճարը 1945 թ.
կաթողիկոսի ընտրության ժամանակ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՄԵԾ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ԱՐՁԱՆԱԳԻՐ ԶԱՆԳԵՐԸ

Ս. Էջմիածնի Մայր տաճարի՝ 1654-1658 թթ. կառուցված արևմտյան կամ մեծ զանգակատունը հիրավի համարվում է ուշմիջնադարյան հայ ճարտարապետության ու քանդակագործական արվեստի մեծագույն նվաճումներից մեկը: Եռահարկ այս շինության արտաքին քանդակային հարդարանքում առանձնակի ուշադրություն են գրավում վիշապ-օձերի և նրանց «պահպանած» այգու հորինվածքային լուծումները[1]: Սրանք, թերևս, զանգակատան գեղարվեստական հարդարանքում ամենահետաքրքրականն են՝ կապված առաջին հերթին «կորուսյալ դրախտի» հետ, որին առնչվող ավանդույթները գալիս են դարերի խորքից: Ավելի վաղ խնդիրն ուսումնասիրել է հնագետ, մշակութաբան Համլետ Պետրոսյանը, որը փորձել է հիմնավորել «կորուսյալ դրախտի» պատկերումն իբրև հայ ինքնության կարևոր բաղկացուցիչ: Հեղինակի դիպուկ բնորոշմամբ՝ «օձերով եզերվող հորինվածքի հիմնարար գաղափարը ծագում է մերձավորարևելյան շատ հին պատկերացումից: Համաձայն դրանց՝ այգին նախ և առաջ կարիք ունի պաշտպանության…»[2]: Որպես օրինակ Հ. Պետրոսյանը վկայակոչում է հայ միջնադարյան քանդակային արվեստում հայտնի համանման պատկերագրական նմուշները, որպիսիք պահպանված են թե՛ զարգացած միջնադարի (Անի, Տաթև, Վանստան, Եղեգիս) և թե՛ ուշ շրջանի, մասնավորապես՝ XVII դարի եկեղեցական կառույցների (Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատուն, Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցի) գեղարվեստական հարդարանքում[3]:

Հայագիտությանը վաղուց ի վեր հայտնի է Ս. Էջմիածնի զանգակատան՝ ներկայումս անհետացած համարվող տիբեթերեն արձանագրությամբ զանգը, որն առաջինն ընդօրինակել է ֆրանսիացի ճանապար-

---

[1] Այս մասին տե՛ս նաև հեղինակի՝ սույն ժողովածուում ընդգրկված «Վիշապ-օձի պատկերագրությունը միջնադարյան եկեղեցիների հարդարատարրերում» խորագրով ակնարկը – Ա. Հ.:

[2] ***Հ. Պետրոսյան.*** «Հայաստան - դրախտ կորուսյալ». հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները, «Ինքնության հարցեր», Երևան, 2002, էջ 161:

[3] Նույն տեղում:

հորդ Դյուբուան 1831 թ.՝ նշելով, որ Էջմիածնի վանականները չգիտեն՝ երբ և ինչ ճանապարհով է այս զանգը հայտնվել իրենց վանքում: Որևէ կասկած չի կարող լինել, որ այն ծագում է մոնղոլական շրջանից[4]:

Ըստ Կյորյոշի Չոմայի[5] «Տիբեթյան քերականության»՝ Էջմիածնի զանգի արձանագրության ձայնարկությունների միջև տեսնում ենք երեք միստիկական սիմվոլ, որոնք բացատրվում են այսպես.

- Բուդդայի կամ առհասարակ աստվածության սուբստանցիայի (էության) խորհրդանիշը:


- Բուդդա բառի խորհրդանիշն է:

- նրա գթասրտության և ողորմածության խորհրդանիշն է:

Երեք խորհրդանիշները միասին ձևավորում են բուդդայական երրորդության գաղափարը կամ միտքը, որը հաճախ կոչում են երեք մեծ արժեքներ և որի ներկայացուցիչներն են Բուդդան կամ նրա կերպարը, սուրբ գրքերը և հոգևոր դասը:

Ֆրեդերիկ Դյուբուա դե Մոնպերեն, որը 1831-1834 թթ. ուղևորության ընթացքում այցելել է նաև Հայաստան, իր «Ճանապարհորդություն Կովկասի շուրջ՝ չերքեզների ու աբխազների մոտ, Կողքիսում, Վրաստանում, Հայաստանում և Ղրիմում» աշխատության երրորդ հատորում անդրադառնում է տիբեթյան զանգին: Աշխատության այդ հատվածը ներկայացնում ենք թարգմանաբար.

---

[4] ***Frédéric Dubois de Montpéreux,*** Voyage autour du Caucase, chez les Tscherkesses et les Abkhases, en Colchide, en Géorgie, en Arménie et en Crimée, tome III, Paris, 1839, էջ 375-376:

[5] Շանդոր Կյորյոշի Չոմա (հունգ. Kőrösi Csoma Sándor). հունգարացի լեզվաբան-արևելագետ (1784-1842), առաջին տիբեթերեն-անգլերեն բառարանի և քերականության հեղինակը: Հաճախ անվանվում է տիբեթագիտության հիմնադիր (Ա. Ա.):

«Եկեղեցու գմբեթներում և զանգակատներում ներկայացված բազմաթիվ զանգերի շարքում մեկն ինձ հետաքրքրեց և ես կրկնօրինակեցի դրա արձանագրությունը, որը, ինչպես վանականն ասաց, խալդերեն է (ուրարտերեն - Ա. Ա.): Միայն Փարիզում ես հասկացա, որ դա տիբեթյան հայտնի բանաձև է՝ **օմ, օմ, հրում (oh, oh, ամեն)՝** գրված տիբեթերենով: Ինչո՞ւ է մեկուկես ոտնաչափ բարձրություն ունեցող այս զանգը Տիբեթից եկել Էջմիածին: Մեկնաբանությունը պետք է թողնենք մեզնից ավելին իմացող մարդկանց: Վանականներն իրենք իրենցով չգիտեին զանգի ծագման մասին»[6]:

Մոնպերեն իր աշխատությանը կից «Ատլասի» (լույս է տեսել 1843 թ.) երկրորդ հատորի երրորդ մասում հրատարակել է տիբեթյան արձանագրությունը (տախտակ 7, պատկեր 6), որը հետագայում կրկնօրինակել են Հ. Ղևոնդ Ալիշանը[7], ավելի ուշ՝ Մեսրոպ արք. Աշճյանը[8]: Վերջինիս հաղորդմամբ՝ 1970-ական թթ., երբ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսը Մայր տաճարում տեղադրեց Ֆրանսիայում պատրաստված (Ջրբաշյան ընտանիքի առատաձեռն հանգանակությամբ) նոր զանգերը, հին զանգերը նա տվեց Հայաստանի որոշ եկեղեցիների: Ո՛վ գիտի, միգուցե մի օր ինչ-որ մեկը կհայտնաբերի այս զանգի գտնվելու վայրը: Բայց ո՞ւմ կողմից և ինչո՞ւ է այս զանգը տրամադրվել Էջմիածնին, հայտնի չէ: Ասում են, որ Տիբեթում եղել են հայ վաճառականներ, ուստի հնարավոր է, որ նրանցից մեկը գներ զանգը և նվիրաբերեր Մայր Աթոռին:

Հարկ է ի հավելումն նշել “Journal Asiatique” (Փարիզ, 1831 թ.) ամսագրի մասին, որտեղ մի հոդված կա՝ վերնագրված “Memoire sur la formule Ottomani padme om”, որի հեղինակը մեկնաբանում է տիբեթյան բանաձևի նշանակությունը, այն է՝ “Aum orom”-ը ձևավորվում է երեք բառերից.

ա - ամեն ինչի առաջնային սկզբնապատճառը կամ հիմքը՝ Բրահմա արարիչը,

ու - բարեփոխիչ Վիշնուն,

մ - կործանիչը, որն ամեն ինչի վերջն է դնում՝ Շիվան:

---

[6] ***Frédéric Dubois de Montpéreux,*** նշվ. աշխ., էջ 375:

[7] ***Հ. Ղևոնդ Ալիշան,*** Այրարատ. բնաշխարհ Հայաստանեայց, Վենետիկ, Ս. Ղազար, էջ 221, գրչ. 88:

[8] The Etchmiadzin chronicles, compiled by ***Archbishop Mesrob Ashjian,*** Yerevan, 2003, էջ 88-89:

Ս. Էջմիածնի Մայր տաճարի և զանգակատան՝ վերջին տարիներին իրականացվող վերանորոգման և որմնանկարների ուսումնասիրման աշխատանքների ընթացքում ժամանակավորապես տաճարի գմբեթի ներքին բոլորաձև պատշգամբում են տեղադրվել զանգակատան զանգերից երկուսը՝ սլավոներեն և հայերեն արձանագրություններով:

Նկ. 1, 2. Ս. Էջմիածնի մեծ զանգակատան արձանագիր զույգ զանգերը, 1675, 1679 թթ.
(լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

Սլավոներեն ելնդատառ արձանագրությունները գործարանային են[9], բովանդակում են կերտման տարին ու ամսաթիվը.

Року⸗АХЛЕ (=1635) м[ѣся]ца августа К (=20) дня

[9] Սլավոներեն արձանագրությունների վերծանության համար շնորհակալություն ենք հայտնում աստվածաբան Գևորգ Ղազարյանին:

Արձանագրության հայերեն՝ նվիրատվական բնույթի հատվածն առանձին է, զբաղեցնում է զանգակի իրանը, դարձյալ ելնդագիր է (նկ. 1).

ՅԻՇԱՏԱԿ Է ԶԱՆԿԱԿՍ ՓԱՆՈՍԻՆ, ՈՐԴԻ ԽԱՉԱՏՈՒՐԻՆ, ՄԱՅՐ ՎԱՐԴԻԿԻՆ, Ի ԴՈՒՌՆ ՍԲ ԱՄԵՆԱՅՓՐԿՉԻՆ, ԹՎ[ԻՆ] ՌՃԻԴ. (1675):

Զանգերից մյուսին դարձյալ պահպանվել է գործարանային ելնդատառ սլավոներեն արձանագրություն.

Року ⁜АХКS (=1626) м[ѣся]ца октоврїя дня 3 (=7)

Հայերեն նվիրատվական գիրը գոտևորում է զանգակի շուրթը, փորագիր է (նկ. 2).

Ի ՀԱՅՈՑ ՌՃԻԸ. (1679) ԹՈՒԻՍ, ԱՅՍ ԶԱՆԿԱԿ ՅԻՇԱՏԱԿ ԸՆԾԱՅԵԱՑ ԹՈՂԱԹԵՑԻ ՂԱԲԼԱՆԻ ՈՐԴԻ ՄԱՀԴԵՍԻ ՈՎԱՆԷՍՆ,
Ի ՁԵՌՆ ԲԱՐՍԵՂ Վ[Ա]ՐԴ[Ա]ՊԵՏԻՆ, ՅԱՂԱՔՍ ԻՒՐՈՅ ԱՆԱՊԱՏԻՆ,
ՅԻՇԵՍՁԻՔ ԶՆԱ Ի ԲԱՐԻՆ:

ԱԳՈՒԼԻՍԻ Ս. ԹՈՎՄԱ ԱՌԱՔՅԱԼԻ ՎԱՆՔԸ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ

Պատմական Հայաստանի Գողթն գավառում է գտնվում ավանդաբար Ս. Բարդուղիմեոս առաքյալի հիմնադրած Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի հռչակավոր վանքը, որի պատմության համակողմանի ուսումնասիրման համար բացառիկ սկզբնաղբյուրներ են տեղի գրչության դպրոցից մեզ հասած և ցավալիորեն նաև կորսված (համաձայն հայերեն ձեռագրացուցակների) ձեռագիր մատյանների հաղորդած տեղեկությունները[1]: Վանքը ժամանակի առավել կամ պակաս նշանավոր մյուս հոգևոր-մշակութային կենտրոնների պես ունեցել է բավական մեծ և արժեքավոր մատենադարան: Ձեռագրերը պահվել են տաճարի հյուսիսային ավանդատանը, որտեղ նաև զգեստապահոցն է եղել:

Հայտնի է, որ XIX դարավերջին Ս. Թովմա առաքյալի վանքի գրատանը կար մոտ 100 միավոր ձեռագիր մատյան, որոնց համարակալումը վանահայր Գրիգոր վարդապետ Տեր-Ստեփանյանի հանձնարարությամբ 1898 թ. իրականացրել է նրա եղբորորդի Գևորգ Կոստանյան Տեր-Ստեփանոսյանցը:

1901 թ. **Ա. Թումանովը** վանքից 70 ձեռագիր է հիշատակում, որոնցից 18-ը՝ Ավետարան, 4-ը՝ Բառգիրք, 1-ը՝ Քերականություն և տրամաբանություն, իսկ մյուսները կրոնական-ծիսական բովանդակության տարբեր նյութեր են[2]: Տարիներ անց ազգագրագետ **Երվանդ Լալայանը**

---

[1] Հոդվածի վերաբերյալ արված շահեկան նկատառումների համար շնորհակալություն ենք հայտնում Մաշտոցյան Մատենադարանի գլխավոր ավանդապահ, պ.գ.դ. Գևորգ Տեր-Վարդանյանին – Ա. Հ.:

Հեղինակն այլ առիթով անդրադարձել է նաև Ագուլիսի Ս. Թովմա տաճարի ճարտարապետությանը, քանդակային արվեստին ու որմնանկարչությանը (տե՛ս ***Ա. Ավետիսյան,*** Ագուլիսի Ս. Թովմա տաճարը. ճարտարապետությունը, հարթաքանդակները և որմնանկարները, «Պատմաբանասիրական հանդես», 2020, թ. 3, էջ 162-195): Համալիրի պատմաճարտարապետական նկարագրին ավելի վաղ անդրադարձել է նախիջևանագետ Արգամ Այվազյանը (տե՛ս ***Ա. Այվազեան,*** Նախիջեւանի վիմագրական ժառանգութիւնը, հ. Բ, Ագուլիս, Անթիլիաս-Լիբանան, 2005, էջ 22-27, նկ. 29-55) – Ա. Հ.:

[2] ***А. Туманов,*** Армянские древние рукописи монастыря Св. Фомы, Сборник материалов для описания местностей и племён Кавказа, вып. XXIX, отдел I (ч. II), Тифлис, 1901, էջ 2:

հրատարակում է Գողթն գավառի ձեռագրացուցակը, որտեղ Ս. Թովմա առաքյալի վանքից նշում է 50, շրջակայքից՝ 18 ձեռագիր[3], իսկ 1906-1907 թթ. վանքի վանահայր **Մեսրոպ վրդ. Մաքսուդյանը** հավաքում-ամբողջացնում է Ս. Թովմա առաքյալի վանքի, Գողթն գավառի մյուս եկեղեցիների և մասնավոր անձանց մոտ պահվող հայերեն ձեռագրերի հիշատակարանները և «Արարատ» ամսագրի 1911 և 1914-1915 թթ. համարներում հոդվածաշարով հրատարակում է դրանց նկարագրությունները[4]: Վերջինիս հաղորդմամբ՝ իր օրոք ձեռագրերի թիվը 58 է եղել, մինչդեռ պետք է լիներ ամենաքիչը 90 (Գևորգ Տեր-Ստեփանոսյանցի ցուցակում կային 89, 90 համարակիր ձեռագրեր), այսինքն՝ ութ տարվա ընթացքում առնվազն 32 ձեռագիր է կորսվել[5]:

Վերջում Ա. Թումանովը ներկայացնում է ինժեներ-տեխնոլոգ Մխիթար Տեր-Անդրեասյանի կողմից իրեն ուղարկված ձեռագրերից մեկի՝ Հայոց Ներսես կաթողիկոսի շրջաբերականի (1640 թ., Կամենեց-Պոդոլսկ) վերջում տեղ գտած հիշատակարանը՝ գրված 11-ամյա դպիր Սահակի կողմից: Չնայած այս հիշատակարանը կարծես այնքան էլ կապ չունի Ս. Թովմա վանքի հետ, սակայն Թումանովի խոսքով՝ այն կարևոր է նրանով, որ Գալիցիայի հայերը, որոնք աստիճանաբար ձուլվել են կաթոլիկ եկեղեցուն, XVII դարի կեսերին դեռևս հայերեն էին խոսում (տե՛ս նույն տեղում, էջ 17):

[3] ***Եր. Լալայեան,*** Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն. Ձեռագիրներ, «Ազգագրական հանդէս», գիրք XII, Թիֆլիս, 1904, էջ 155-174:

[4] ***Մեսրոպ վրդ. Մաքսուդեանց,*** «Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց. եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց», «Արարատ», 1911, էջ 117-27, 218-24, 314-8, 384-8, 460-5, 562-8, 759-66, 846-54, 1003-12. նույնի՝ «Վերին Ագուլիսի և շրջակայքի հայերէն ձեռագրերը», «Արարատ», 1914, էջ 1032-6, 1114-8, 1915, էջ 69-78, 381-3:

Վերջերս Մայր Աթոռ Ս. Էջմիածնում հրատարակվեց «Արարատ» ամսագրի բնագրերն ամբողջացնող երկհատորյակը, որտեղ Մեսրոպ վրդ. Մաքսուդյանի հիշյալ հոդվածաշարը չի ընդգրկվել: Երկհատորյակի հեղինակ-կազմողներից Գևորգ Տեր-Վարդանյանն առաջաբանում նշում է, որ դրանք ժողովածուում չեն ներառվել՝ առանձին և այլ նյութերի հետ համեմատությամբ հրատարակելու նպատակով, որի «ծաւալը «Արարատ»ում տպագրուածի (29 ձեռագրի նկարագրութիւն-յիշատակարանք) եռապատիկից աւելին է» (տե՛ս ***Գ. Տէր-Վարդանեան,*** «Արարատի» բնագրական նկարագիրը, - «Արարատ»ի ժառանգութիւնը. Թ. «Արարատ»ի բնագիրները, հ. Ա., հրատ. պատրաստեց՝ ***Ս. Նահապետեան,*** դասակարգումը, խմբագրումը եւ առաջաբանը՝ ***Գ. Տէր-Վարդանեանի,*** Ս. Էջմիածին, 2017, էջ 14, ծնթ. 2) – Ա. Հ.:

[5] ***Մեսրոպ վ. Մաքսուտեանց,*** Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց, եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց, «Արարատ», 1911, Բ, էջ 117 – Ա. Հ.:

Անշուշտ, Մեսրոպ վարդապետ Մաքսուդյանը ծանոթ է եղել Երվանդ Լալայանի կազմած-հրատարակած՝ Գողթն գավառի ընդհանուր ձեռագրացուցակին, սակայն, ինչպես ինքն է ծանոթագրում, «ներկայ հրատարակութիւնը Արարատում կատարւում է ձեռագրերի նկարագրութեան եւ յիշատակարանների ամբողջական լինելու պատճառով» («Արարատ», 1911, Դ, էջ 314, ծնթ.*) – Ա. Հ.:

Վանքի և մասնավորապես ձեռագրերի համար ճակատագրական է եղել 1919 թ. դեկտեմբերի 24-25-ի՝ Ագուլիսի հայության կոտորածը, որի հետևանքով վանքի ձեռագրերը, ըստ ամենայնի, ցիրուցան են եղել և ոչնչացվել:

Ներկա հրապարակմամբ փորձ է արվում ժամանակագրորեն ներկայացնելու Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանքի և նրա առաջնորդների մասին վկայող ձեռագրական հիշատակությունների մի ստվար մասը՝ քաղված ձեռագիր և տպագիր աղբյուրներից: Հիշատակարանների նախորդ հրատարակությունների մատենագիտությունը տրվում է յուրաքանչյուր միավորից հետո՝ հետևյալ համառոտագրություններով.

Ալիշան – Հ. Ղեւոնդ Ալիշան, Սիսական. տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի, Վենետիկ, 1893:

Ակինեան - Ներսէս վրդ. Ակինեան, Մովսէս Գ. Տաթեւացի հայոց կաթողիկոսն եւ իր ժամանակը, Վիեննա, 1936:

Աճառեան - Ցուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, կազմեց՝ Հր. Աճառեան, Վիեննա, 1910:

Լալայեան - Երուանդ Լալայեան, Օրդուբադի կամ Վերին Ագուլիսի ոստիկանական շրջան եւ կամ Գողթն, «Ազգագրական հանդէս», գիրք XII, Թիֆլիս, 1904:

Մաքսուդեան/1911 - Մեսրոպ վրդ. Մաքսուդեան, Նկարագրութիւն եւ յիշատակարանք ձեռագրաց Ս. Թովմայ առաքելոց վանուց եւ եկեղեցեացն Վերին Ագուլեաց. եկեղեցւոյն Տանակերտ գեղջ եւ անձանց մասնաւորաց, «Արարատ», 1911, էջ 117-27, 218-24, 314-8, 384-8, 460-5, 562-8, 759-66, 846-54, 1003-12:

Մաքսուդեան/1914 - Մեսրոպ վրդ. Մաքսուդեան, Վերին Ագուլիսի և շրջակայքի հայերէն ձեռագրերը», «Արարատ», 1914, էջ 1032-6, 1114-8:

Մաքսուդեան/1915 - Մեսրոպ վրդ. Մաքսուդեան, Վերին Ագուլիսի և շրջակայքի հայերէն ձեռագրերը», «Արարատ», 1915, էջ 69-78, 381-3:

Ոսկեան - Հ. Համազասպ Ոսկեան, Վասպուրական-Վանի վանքերը, Բ մասն, Վիեննա, 1944:

Սմբատեանց - Մեսրովբ արք. Սմբատեանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ եւ շրջակայից նորա, Տփխիս, 1904:

Քյուրտյան - Հարություն Քյուրտյան. Համառոտ ցուցակ հայերեն գրչագիրներու Քյուրտյան հավաքածոյի ի Ուիչիդա, Կանզաս, ԱՄՆ, «Բանբեր Մատենադարանի», 1973, հ. 11, էջ 399-422:

ԺԳ դ. հիշ. - ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Ա. Մաթևոսյան, Երևան, 1984:

ԺԴ դ. հիշ. - ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1950:

ԺԵ դ. հիշ., Ա - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1955:

ԺԵ դ. հիշ., Բ - ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Լ. Խաչիկյան, Երևան, 1958:

ԺԷ դ. հիշ., Բ - ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեցին՝ Վ. Հակոբյան, Ա. Հովհաննիսյան, Երևան, 1978:

ԺԷ դ. հիշ., Գ - ԺԷ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, կազմեց՝ Վ. Հակոբյան, Երևան, 1984:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Ա - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ձէյթունեան, Փ. Անթաբեան, Երևան, 1984:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Բ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Ձէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քեօշկերեան, Երեւան, 2004:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Գ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2007:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, կազմեցին՝ Ա. Քեօշկերեան, Կ. Սուքիասեան, Յ. Քեոսէեան, Երեւան, 2008:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ե, կազմեց՝ Օ. Եգանեան, Երեւան, 2009:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Զ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Զ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Է - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Է, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2012:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Ը - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ը, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2013:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Թ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Թ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2017:

Մայր ցուցակ ՄՄ, հ. Ժ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հ. Ժ, խմբագրութեամբ՝ Գ. Տէր-Վարդանեանի, Երեւան, 2019:

Մայր ցուցակ Երսղմ, հ. Ա - Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա, կազմեց՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղէմ, 1966:

Մայր ցուցակ Երսղմ, հ. Ը - Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ը, կազմեց՝ Նորայր արք. Պողարեան, Երուսաղէմ, 1977:

Մայր ցուցակ Վնտկ, հ. Դ - Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ, հ. Դ, յօրինեց՝ Հ. Սահակ վրդ. Ճեմճեմեան, Վենետիկ, 1993:

Ցուցակ Ղալաթիոյ - Բաբգէն աթոռակից կաթողիկոս, Ցուցակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային մատենադարանի հայոց, Անթիլիաս, 1961:

Sanjian - A Catalogue of Medieval Armenian manuscripts in the United States by Avedis K. Sanjian, Barkeley, Los Angeles, London, 1976.

1. Նարեկ, ՊԻԴ (1375), ի վանսն յԱգուլիս (ՄՄ 1571). *«Գրեցաւ տառս աստուածային ընդ հովանեաւ Սուրբ Թումաիս, որ է ի վանսն ի յԱգուլիս, ընդ իշխանութեան տէր Զաքարիային, որ հայրապետ է Գողթան գաւառին, ի Հայոց թուականին ՊԻԴ (1375): (Կա)տարեցաւ սուրբ տառս ՊԻԴ (1375)»*:

Հրատ. ***Ալիշան,*** էջ 326. ***Սմբատեանց,*** էջ 179. ***ԺԴ դ. հիշ.,*** էջ 516-517. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե,*** սյուն 515:

2. Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացւոյ, 1424 թ., Ագուլիս (ներկա վայրն անհայտ է). *«….Իսկ գրողն է Մատթէոս վարդապետ՝ եղբայր Խաչատրոյ քահանայի, որ և յիշէ զկարեւոր քաղաքական անցս ինչ ժամանակին, զմահ (Գարա)-Եուսուֆ բռնաւորի, և զթագաւորել որդւոյ նորին Սկանդարի, որ զի յոյժ ողորմած էր ազգիս հայոց, եւս առաւել մեր գեղիս Ագուլեաց, իւր խաս արար, և մէկ տարի թարխան արար….: Յայսմ ամի որ թիւն Հայոց ՊԻԴ. (1425) էր զմեր աշակերտի եղբայրն գետ տարաւ և անյայտ արար, և անմխիթար սուգ եղև ծնողաց իւրոց և մեզ՝ յոյժ դառնու-*

թիւն, որ չէ եղել հայոց դառն կսկիծ՝ որ եղև յանկարծակի, որ տղային անունն Յետղմուրշայ էր, զոր Տէր Աստուած իւր տեսուն և երկնից արքայութեանն արժանի արասցէ, ամէն»:

Հրատ. ***Ալիշան,*** էջ 326. ***Ոսկեան,*** էջ 690-691***. ԺԵ դ. հիշ., Ա,*** էջ 337:

3. Պատմութիւնք Միքայէլի Ասորւոյ, Վարդանայ եւ Կիրակոսի, 1432 թ., Ագուլեաց վանք (Տյուբինգենի համալսարանի ձեռ. Հ^{մր} 70). *«Գծագրեցաւ պատմագիրս այս... ի թուիս ՊՁԱ. (1432), ձեռամբ մեղսաներկ և անարհեստ գրչի Թումայի՝ սիրողի գրոցս, և ծնողացն իմոց Սիմէոն քահանայի, և մօրն իմոյ Սայինին: Արդ, գրեցաւ սա ի վանքս Ագուլեաց, առ դրան սուրբ Առաքելոյս Թումայի, որ է աթոռ Գողթեան գաւառիս, ի թագաւորութեան պիղծ ու անօրէն և այլազգի Սքանտարիս, և ի կաթողիկոսութեան տեառն Կոստանդեա, և ի վերադիտողութեան սուրբ հայրապետիս մերո տէր Տէրունականայ»:*

Հրատ. ***Ոսկեան,*** էջ 691. ***ԺԵ դ. հիշ., Ա,*** էջ 423:

4. Ժողովածոյ, ԺԷ դար (ՄՄ 1693), պատառիկ-պահպանակ, որում 1434 թ. մի հիշատակարան կա. *«Արդ, ես՝ Ստեփանոս հայրապետս, վերջինս ի վերջին դարուս, վերջինս ի ծնունդս եկեղեցւոյ, ընծայեցի զՍուրբ Աւետարանս Սուրբ առաքելոյն Թումայի, յիշատակ հոգւոյ իմոյ, եւ ծնաւղաց իմոց, հաւրն իմ՝ Աղպուղին, եւ մաւրն՝ Խուանդին, եւ քուերցն, եւ աւրիորդ մանկանն՝ ըստ հոգւոյ արբանեկին Աբրահամ դպրին…»*:

Հրատ. ***Ոսկեան,*** էջ 691. ***ԺԵ դ. հիշ., Ա, էջ 440. Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե,*** էջ 910:

5. Պատմութիւն Թէոդորոսի զաւրավարի, 1436 թ., Ագուլեաց վանք (ձեռագրի ներկայիս տեղն անհայտ է). *«Գրեցաւ պատմութիւնս ի թուականութեանս Հայոց ՊՁԵ (1436), ի թագաւորութեանս Թորգոմա Ասկանտարի՝ որդի Ուսեփին, եւ ի հայրապետութեանս տեառն Կոստանդեա, ի վանքս Ագուլեաց, ընդ հովանեաւ սուրբ Թումայիս, ձեռամբ բազմամեղ գրչի Յովհաննէս վարդապետի»*:

Հրատ. ***Ալիշան,*** էջ 326. ***Ոսկեան,*** էջ 691-692. ***ԺԵ դ. հիշ., Ա,*** էջ 466:

6. Տօնական, 1447 թ., Ագուլիս (Թավրիզ, Հմայակ քհն. Ներսիսյանի հավաքածու, 1910-ական թթ.). *«Գրեցաւ սուրբ Տօնականս այս ի գեղաքաղաքս Ագուլիս՝ գովելի Գողթան վիճակիս, ի նոյն իւրոյ աթոռիս, ընդ հովանեաւ առաքելայարկ խորանիս, աստուածաբնակ տաճարիս Քրիստա-*

փորի մեծ նահատակիս եւ Թումայի առաքելոյ սքանչելագործ հրաշալի աջիս, առ ոտս երջանիկ նոյն վերասացեալ տէր Ստեփաննոսիս, ի թուականութեանս Հայոց ՊՂԶ (1447), և ի հայրապետութեան մեծի աթոռոյ աստուածայարկ Սուրբ Էջմիածնին՝ երիցս երանեալ տեառն Գրիգորի խարազն ճգնաւորի, նաև երկրորդ Լուսաւորչի, զոր Տէր Աստուած անսասան պահեսցէ և անգըթելի ի յայսմ աշխարհի...»:

Հրատ. ***Աճառեան,*** էջ 120-123. ***Ոսկեան,*** էջ 692. ***ԺԵ դ. հիշ., Ա,*** էջ 604-606:

7. Մաշտոց, ՊՂԲ (1443), Սուխարայ վանք (Տարբերունիք), կազմված՝ ՁԽԲ (1493), Ագուլիսի վանք (ՄՄ 6450). *«Կազմեցաւ Մաշտոցս ի թվ. ՁԽԲ (1493), ի վանքս Ագուլեաց, ի հայրապետութեան տէր Ազարիին, ձեռամբ Յովսէփ մեղսասէր աբեղայիս, յիշե՛լ աղաչեմք, Աստուած զձեզ յիշէ. ամէն»:*

Հրատ. ***Լալայեան,*** էջ 166. ***Ոսկեան,*** էջ 694. ***ԺԵ դ. հիշ., Բ,*** էջ 194:

8. Ժողովածոյ, ԺԶ դար (ՄՄ 1693). *«Անպիտան եւ անարժան նուաստ ծառայս՝ Յոհանէս աբեղայս եկի ի Սուրբ ուխտս Թումայի, յիշեալ ի Տէր, անմեղադիր լերուք, կարս մեր այս էր, ի Մեծ թիվս Հայոց ՌԺԳ (1564)»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե,*** սյուն 910:

9. Աւետարան, ՊԷ (1358), ստացող՝ ուստա Շեխին, ՌԽԲ (1593). *«Արդ, զվերջին ստացող Սուրբ Աւետարանիս ուստայ Շեխին, որ հալալ ընչիցն իւրոյ յիշատակ իւրն և իւր ծնաւղացն. հաւրն իւրոյ՝ Դաւթին և մաւրն՝ Զաւհրային, և կողակցին իւրոյ՝ Սօլթանին և որդոյն՝ Ովանիսին և ամենայն յարեան մերձաւորացն. նորոգեցաւ սայ ի դուռն սուրբ Սիոնին և սուրբ Յակոբին ի թուագրութեան սօլթան Մուրատ խանին, ի հայրապետութեան տեառն Էջմիածնայ տեր Մելիքսէթ կաթուղիկոսին, ի առաջնորդութեան Սուրբ Թումայի առաքելոյ աթոռոյն տեր Աւետիսին, ի քահանայ սուրբ Սիոնի և սուրբ Յակոբի մէջի փողոյ տեր Մեսրոբին Ըղըհեցի. և մեղաւոր անարժան Ոհան կազմողի: Ո՛վ սուրբ մանկունք եկեղէցոյ, որք հանդիպիք սմայ կարդալով կամ օրինակելով, յիշեցէ՛ք ուստայ Շեխին՝ հանդերձ ծնողքն. ամէն: Թվին ՌԽԲ. (1593) նորոգեցաւ»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 562-563:

10. Տօմարագիտութիւն, ՌՁԲ (1633). *«Փա՛ռք անբաժանելի երրեակ անձնաւորութեան եւ միակ բնութեան՝ Հօր եւ Որդւոյ եւ Հոգոյն Սրբոյ յաւիտեանս յաւիտենից. ամէն: Արդ, ով բաբունի եւ աստուածային իմաստու-*

թեան ցանկացող հոգեւոր հայր իմ եւ եղբայր բաղձալի՝ Խաչատուր վարդապետ, առաջնորդ աստուածաբնակ քրովբեագումար հռչակաւոր Սուրբ ուխտի Թումայի վանք անուանելոյ...»:

Հրատ. ***Աճառեան,*** էջ 95:

11. Մաշտոց, ՌՁԳ (1634), Ցղնա (ՄՄ 4175). *«Փա՛ռք..., որ ետ կարողութիւն բազմամեղ և տկար ոգոյ Մարութայ անարհեստ գրչի, որ անուամբս միայն եմ քահանայ, բայց գործովս զառածեալ ի մէջ մեղաց և թափօր ի բարի գործոց, ի թվականիս Հայկազեան ՌՁԳ (1634), ի հայրապետութիւն Էջմիածնեայ տեառն Փիլիպոս կաթողիկոսի, ի յառաջնորդութիւն Թումայի առաքելոյն տէր Խաչատուր քաջ և արի ռաբունապետի…»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 550:

12. Աւետարան (Թեհրան, «ՀԱ», 1953 թ., Ստամպօլ, 1634 թ.). *«Արդ՝ աղաչեմ զամենեսեան, որք աւկտիք ի սմանէ և կամ ընդաւրինակէք, յիշեցէ՛ք զմահդասի Մելքուն, որ է սա ի գաւառէն Գողթան, ի գիւղէն որ կոչի Ագուլից Դաշտ, որ ստացաւ ոսկեզաւծ Աւետարանս և ետ յիշատակ իւր հոգւոյն ի դուռն Թումայի սբ առաքելոյն, որ այժմ կոչի Երեքխորան, յիշատակ իւրն և ծնաւղաց իւրոց…»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 582:

13. Շարակնոց, ՌՁԵ (1636), Ս. Թովմայի վանք (բնագիրն անհայտ է, բերվում է ՄՄ 4535 ձեռագրից՝ Շահիխաթունյանցի ինքնագրից). *«Արդ՝ կազմեցաւ Շարակնոցս ՚ի թուականիս Հայոց ՌՁԵ (1636), ի կաթուղիկոսութեան Էջմիածնայ խարազնազգեաց ճգնաւոր վարդապետի (Փիլիպոս Աղբակեցու – Ա. Ա.), ի առաջնորդութեան Գողթան գաւառի սուրբ ուխտիս Թումայի ՚ի նոյն վերասացեալ տէր Խաչատուր վարդապետաց վարդապետի, որ յայսմ ամի շինեաց և նորոգեաց ի հիմանց զսբ ուխտս Թումայի բարձրաբերձ կամարակապ և գմբէթաձև զսբ եկեղեցին, և բարձր պարսպով և չորեք անկիւնի խուցերով և մուդբախերով զարդարեաց...»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 860:

14. Կանոնագիրք, Դատաստանագիրք, ՌՁՁ (1637), Ագուլիս (ՄՄ 6496). *«…եղև ի թուականութեանս Հայոց ՌՁՁ (1637), ի թագաւորութիւնն Պարսից շահ Սաֆուն…, ի հայրապետութիւն տեառն ճգնազգեստ Փիլիպպոս կաթողիկոսին, և ի դիտապետութիւն տեառն Խաչատուրին տանս Գողթան և ի գեաւղաքաղաքս Ագուլիս, ընդ հովանեաւ Ս. Յովհան-*

նէս Մկրտչին, ի թաղս Խոզաձրոյ, ձեռամբ սուտանուն և մեղաւք զառաջեալ, և մոլորեալ հոգով և մարմնով, անարժան դպիր Գրիգոր գրչիս…: Ձստացող Բ (2) տառիս Խաչատուր վարդապետն, որ յոյժ փափա(գ)անօք զպակասութիւնս իմ լցոյց և ես գրեցի անյապաղ: Աստուած վայելումն տացէ իւրն, որ նորոգեաց զվանքն, և կարգեաց քա-հանայս, և հաստատեաց զժամակարգութիւնս եկեղեցւոյ, և լուսաւորեաց զվիճակն Թումայի, քաջ վարդապետութեամբն իւրով»:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 683-684:

15. Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացւոյ, ՌՁՁ-ՌՁԷ (1637-1638), Փառակա (ՄՄ 8205). *«Ձստացող սբ մատենիս զպետն Հայաստանեայց, զռաբին վարդապետաց, զջահն սբ եկեղեցւոյ.... զտէր Խաչատուր վարդապետն, աթոռակալ Ս. Թումայի և քարոզող ամենայնի»*:

«Եւս առաւել զստացող սբ տառիս ըզրաբունապետն մեր՝ զտէր Խաչատուրն, որ այսմ ժամանակիս վերըստին նորոգեաց ի վանքն Ս. Թումայի գեղեցիկ կումբեթով և ղուբայով՝ առանց փայտի, և այլ ամենայն շինութեանն կրկին նորոգեաց դարպասներովն: Այլ և վարդապետութեամբն իւրով լուսաւորեաց զվիճակն իւր, այսինքն՝ Գողթան երկիրն, Աստուած իւր հոգին լուսաւորէ, և զգծող հանդերձ ծնողօք սոցա յիշեսցէ բարեգործն Աստուած…: Ի թվիս Հայոց Ռ և ՁՁ (1637)»:

«Ընդ որս և բիւրապատիկ քան զառաջինն գտեալ ընդելութիւն, և ըստ յառաջնոյն ընդառաջ եղեն սմա և բերեալ յայսմ մենաստան, զոր կայր ի սմայ աջ սբ առաքելոյն Թումայի մխեցելոյ ի կողն Յիսուսի կենարարին և սրբոյ Յակոբայ սբ նշանն, փայտեայ շնորհեցեալ ի հրեշտակէ անդի, ի փայտէ Նոյեան տապանէն, յորմէ արարեալ նշան փոքրագոյն, ողորմութեամբն Աստուծոյ այստ գտեալ լինէր, ընդ որս և Վարդանայ սպարապետի Հայոց սբ նշանն ունելով ինքեան ի խաչափայտէն Քրիստոսի, և Հռ(ի)փսիմեանց սբ նշանն և այլ սրբոց նշանք, որք աստ կային…: Եւս զմենարանս ասեմ, յորս շինեալ կայր ի սբ առաքելոյն Բարդուղիմէոսէ փոքրիկ խրճիթ անուանակոչութեամբ սբ առաքելոյն Թումայի»:

Հրատ. ***Ոսկեան,*** էջ 696-706. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 736-743:

16. Ժողովածու, ՌՁԷ (1638), Ագուլիս (ձեռագիրը պահվել է մի եղեգնաձորցու տանը). *«Սոյնպէս և ես՝ տկարացեալս մեղօք և պակասեալ հոգոյս աչատեսութեան. և յիմարեալ մտաւք գրեցо(=աւ) ձեռամբ զանարժան Մարգարիս, ի թվականիս Հայոց ՌՁԷ (1638), ուր գրեցաւ ի յերկիրն*

Գողթան, ի գեաւղաքաղաքն Այգուլիս, ընդ հովան(ե)աւ Սբ ուխտիս ըստ Թումայի առաքելոյն և Ս. Շմաւոնի, ի յառաջնորդութեան Խաչատուր քաջ վարդապետի և այլ միաբանիցն»:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 744:

17. Քարոզգիրք Գրիգորի Տաթեւացւոյ, ՌՁԸ (1639), Ագուլիս (ՄՄ 7087). *«Արդ՝ գրեցօ սբ գիրքս ի երկիրն Գողթեան, ի գեաւղաքաղաքն Ագուլիս, ընդ հովանեօ(=աւ) Ս. Թումայի առաքելոյն, ի դուռն սբ եկեղեցոյս և Ս. Յակոբին և Սիմէոնին, ի թագաւորութիւն շահ Սաֆուն, ի կաթողիկոսութիւն տեառն Փիլիպպոսին, ի յառաջնորդութիւն Ս. Թումայի Խաչատուր վարդապետին»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 769:

18. Խորհրդատետր, ՌՁԸ (1639), Ս. Աստվածածին վանք (ՄՄ 7792). *«Փա՛ռք...: Շնորհաւքն Աստուծոյ և ողորմութեամբ Նորին գրեցաւ Պատարագամատոյցս ի լաւ և յընտիր աւրինակէ, ի թվականիս Հայոց ՌՁԸ-ին (1639), առաջնորդութեանն տէր Խաչատուր արքեպիսկոպոսին, ձեռամբ մեղսասէր և անարժան, նորաջան գրչի Յուսիկ դպրի: Զոր մեծաւ փափագմամբ ետ գրել զսա տէր Զաքարիան և եդ ի Ս. Աստուածածին վանքն յիշատակ հոգւոյ իւրոյ և իւր ծնողացն և ամենայն զարմիցն, այժմու կենդանեացն և կանխօ(=աւ) ննջեցելոցն, որոց թողցէ Տէր Աստուած զյանցանս նոցա և տացէ զհանգիստն յաւիտենից. ամէն»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 741:

19. Թուղթք Պօղոսի առաքելոյ, ՉԿԷ (1318), կազմված՝ ՌՁԹ (1640), Ս. Շմավոն եկեղեցի, Ագուլիս. *«Փա՛ռք...: Դարձեալ յիշեցէ՛ք զվերջին նորոգող սբ գրոյս զտէր Նիկողայոսն, որ ետ կազմել զսբ տառս յիշատակ հոգւոյ իւրոյ և ամենայն արեան մերձօ(=աւ)որացն, հայրն իւր՝ Ադրղուլի, և մայրն՝ Աջաբխանն, որ հանգուցեալ են առ Տէր....: Կազմեցաւ սբ գիրքս Պաւղոսի և Եսայի, ձեռամբ սուտանուն Մարգարայ իրիցի, ի գեղաքաղաքն Ագուլ(ե)աց, ի դուռն Ս. Շմաւոնի եկեղեցւոյ, ի թվաբերութիւն Հայկազան տոմարի Ռ և ՁԹ (1640), ի կաթողիկոսութիւն Հայոց տեառն Փիլիպպոսի, և առաջնոր-դութիւն մերոյ վանից Խաչատուր վարդապետին. Աստուած զինքն յերկար ամաւք արասցէ. ամէն»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1915,*** էջ 383-388. ***ԺԷ դ. հիշ., Բ,*** էջ 826:

20. Աւետարան, ՉՁ (1331), Աղէթ, Բզնունիք, նորոգում և կազմում՝ ՌՂ (1641), Ագուլիս (ՄՄ 4217). *«Ի հազարերորդում և ինսներորդում (1641) ամի թուահաշուութեան Հա(յ)կազեան տօմարի, ես՝ նուաստ Խաչատուր վարդապետս, ետու նորոգ կազմել զՍբ Աւետարանս ի սփոփանս բազմամեղ անձին իմ և եդի ի Սբ աթոռ Թումայի առաքելոյ՝ ի վանս Ագուլեաց, որում և էրն յառաջագոյն: Իսկ արդ, որք հանդիպիք, աղաչեմ զի յիշեսջի՛ք զիս հանդերձ ծնողօք իմովք և դուք յիշեալ լիջի՛ք առաջի Աստուծոյ. ամէն»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 21:

21. Ժողովածոյ, ՌՂԲ (1643), Շոռոթ (ՄՄ 779). *«Փա՛ռք..., որ ետ կարողութիւն և աւարտ զբաւական գրչութեան յայսմ կոչեցեալ անուն Կոչումն ընծայութեան գրոցս ի թուականութեանն Հայկազեան տումարի երկինգեակ հարիւրոց և մու միակ հազարի, քառից քսանից և տասանց ութից, երկինգեակ թուոց, մուից տասան և երկուց թուոց (1643)*[6]*... ի հռչակաւոր գեղս Շոռոթ, ընդ հովանեաւ Ս. Յակոբիս, Ս. Աստուածածնիս և Ս. Լուսաւորչիս, ձեռամբ ամենամեղ և թարմատար գրչի Յովանէս սպասաւորի, ի խնդրոյ սրբասէր տէր Հայրապետ կրօնաւորի, որ է ի սոյն գեղջէ, և որ է հրաժարեալ ի բազմաց ի գիւղէս և ի տանէ իւրեանց և ամենայն ընտանեաց, նաև ամենայն կենցաղական հոգւոց. և այժմ կա ի գիւղաքաղաքն Ագուլիս, ի հռչակաւոր մենարանն և կուսարանն Ս. Թումայի, առ ոտս Խաչատուր ռաբունապետի և բանիբունոյ, յոր և երկրորդ նորին գոլ վարկեալ է նկատելով գործառնութիւնն քաջապէս առ հոգևորս և մարմնաւորս»*:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 103-104:

22. Մատենագրութիւն Փիլոն Եբրայեցւոյ, ՌՂԵ (1646), Երևան (ՄՄ 2056). *«Գրեցաւ գիրքս այս ի քաղաքին յԷրևանայ, ընդ հովանեաւ Ս. Կաթուղիկէին, ի հայրապետութեան տեառն Փիլիպոսի, ձեռամբ Մկրտիչ իրիցոյ, ի վայելս Պետրոս սարկաւագի, եղբօր որդւոյ Խաչատուր վարդա-*

[6] Հաշիվը տրված է կրկնակի ձևով, այսպես. «երկինգեակ հարիւրոց և մու միակ հազարի»: Այստեղ 1000-ը կրկնված է՝ մեկ՝ 2x5x100, մեկ էլ՝ 1000, ապա «քառից քսանից և տասանց ութից» (4x20 և 10x8): Եվ ապա՝ «երկինգեակ թուոց, մուից տասան» (2x5, 1x10): Այս երկու շարքից պետք է վերցնել մեկը՝ (2x5x100) + (4x20) + (2x5) կամ 1000 + (10x8) + (1x10): Սրանցից որևէ մեկին ավելացնել հիշված 2-ը՝ կստանանք 1092 (ՌՂԲ), սրան էլ ավելացնել 551:

պետի՝ իշխողին Գողթնեաց, ի թվականիս Հայոց ի հազար և ի Ղ և Ե-երրորդումն (1646) ամի. յիշեցէ՛ք, որ հանդիպիքդ»:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 212:

23. Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ, յաղագս առաքինութեանց հոգւոյ, յաղագս հրեշտակաց, ՌՂԶ (1647), Երևան (ՄՄ 7119). *«[Փ]ա՛ռք…: Եւ արդ, ո՛վ սբ հանդիպողք սմին, որք օգտիքդ ի սմանէ, յիշեսջի՛ք յերկնագնաց յաղօթս ձեր զրաբունին Խաչատուր զարհին Գողթնեաց՝ զա-(ռա)ջ(ն)որդն Թումայի Ս. առաքելոյն, որ ստացաւ զսա ի վայելս Պետրոսի՝ եղբօր որդւոյ իւրում բանի սպա(սաւ)որի, որ եռատենչ սիրով ցանկացայ սմա, թեպետ հեռու մնաց ի գիտութեանցն, որ ի սմա, սակայն փափագ սրտի միոյ կամեցայ լնուլ, զի յիշատակ առ ձեզ մնասցէ և ինձ մասն յաղօթից ձերոց եղիցի…»:*

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 260:

24. Աւետարան, ՉԼԹ (1290), Դրազարկ, կազմված՝ ՌՂԹ (1650) (Էրմիտաժ, V 3-835). *«Ի հազարերորդում և ինսներորդում և յիններորդում ամի (1650) թուահաշու(ու)թեան Հայկազեան տօմարի, ես՝ նուաստ Խաչատուր վարդապետս, ետու նորոգ կազմել զՍուրբ զԱւետարանս, ի սփոփանքս բազմամեղ անձիս իմ և եդի ի Սուրբ Աթոռ Թումայի առաքելոյ ի վանս Ագուլեաց, որում և էրն յառաջագոյն: Իսկ արդ, որք հանդիպիք աղաչեմ, զի յիշեսջի՛ք զիս հանդերձ ծնողօք իմովք, և դուք յիշեալ լիջի՛ք առաջի Աստուծոյ. ամէն»:*

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 224. ***ԺԳ դ. հիշ.,*** էջ 658:

25. Աստուածաշունչ, ՉԽԱ (1292), Կիլիկիա, կազմված՝ ՌՂԹ (1650), Ագուլեաց վանք (ՄՄ 179). *«Ի կամս Աստուծոյ և շնորհօք նորին ես՝ Խաչատուր վարդապետս, աշակերտ երանեալ հօրն Մօսէսի կաթողիկոսի Հայոց, որոյ հրամանաւ և եղև մեզ ժառանգել զաթոռ Գողթան զսբ վանս, որ յանուն Սրբոյ առաքելոյս Թումայի հաստատեալ է, վերստին ետու կազմել զսբ մատեանս, որ է ըշտեմարան ամենայն Կտակարանաց՝ Հնոց և Նորոց, անպակաս, որ և անուանեալ կոչի Աստուածաշունչ: Էր սա ի նախնեաց անտի յիշատակ սբ աթոռոյս, անջինջ, բայց ի վատթար պահողաց յոյժ քայքայեալ էր, վասն որոյ ոչ անտես արարաք զհնութիւն սորա: Այլ վերստին նորոգեցաք զսա ի թուաբերութեան Արամեանս ազին ի Ռ-երորդի ինսներորդի և յիններորդում (1650) ամի, ի հայրապետութեան հրեշտա-*

կաբնակ Սբ Աթոռոյս Էջմիածնի տեառն Փիլիպպոսի և ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին Փոքու: Եւ եդաք զսա ի սոյն վանս յորում և գոյրն յառաջագոյն…»:

Հրատ. ***Ակինեան,*** էջ 217. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 382:

26. Աւետարան, ՉՁ-1331 թ., կազմված՝ ՌՂԹ (1650), Ագուլեաց վանք (ՄՄ 4217)[7]. *«Ի հազարերորդում և ինսներորդում և յիններորդում (1650) ամի թուահաշու(ու)թեան Հայկազեան տօմարի, ես՝ նուաստ Խաչատուր վարդապետս ետու նորոգ կազմել զսբ Աւետարանս, ի սփոփանս բազմամեղ անձին իմ և եդի սբ աթոռ Թումայի առաքելոյ ի վանս Ագուլեաց, որում և էրն յառաջագոյն: Իսկ արդ, որք հանդիպիք, աղաչեմ, զի յիշեսջի՛ք զիս հանդերձ ծնողօք իմովք և դուք յիշեալ լիջի՛ք առաջի Աստուծոյ. ամէն»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 224. ***Աճառեան,*** էջ 2բ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 394:

27. Յայսմաւուրք, (տեղն անհայտ է), ստացող՝ Խաչատուր վրդ. (1640-50-ական թթ.). *«…Իսկ մակագրեալ սրբազան րաբունին Խաչատուր, հրամանաւ Մովսիսին մեծի (Տաթևացու – Ա. Հ.), եդեալ եղև յաթոռ Սրբոյն Թումայ, որ յերկրին Գողթնեաց, ի հռչակաւոր գեւղաքաղաքն Ագուլիս, և սա եկեալ գտաւ, զի բնաւ ոչ գոյր ըստ պատշաճի իմն շինութիւն, այլ թէ օրինակ և նշան աւերման, վասն որոյ յոգնակի իմն ջան դրեալ և յոլովս աշխատեալ վերստին նորոգեաց զԹումա առաքեալ անուանեալ աթոռս, զոր և մակերևոյթն իսկ ցուցանէ, քանզի բնաւն նորա ի ձեռն սորա նորոգեալ շինեցաւ, եթէ եկեղեցին և թէ պարիսպն, և եթէ ի միջի լեալ շինութիւնսն, և զանօթն և զարդն եկեղեցւոյն բնաւն իւրաստաց արար, բայց ոչ որպէս զառաջին կամ կրկնապատիկ, այլ սակաւ ինչ նշոյլ գրոց երևի մնացեալ ի նախնեաց, իսկ զայլ անթուելի անօթս՝ սա ստացաւ յիշատակ յիւրում անձին…»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 853-854:

28. Շարակնոց, ՌՃ (1651), Ագուլիս (Վաշինգտոնի Ֆրիր պատկերասրահ, ձեռ. 3719). *«Յամի հազարերորդի վեցհարիւրորդի յիսներորդի երկրորդի թուահաշուութեան ըստ մեզ մարմնացելոյ Բանին Աստուծոյ, և ի*

[7] ԺԷ դարի հիշատակարանների ժողովածուի համապատասխան հատորում, ամենայն հավանականությամբ, ինչ-որ շփոթմունք կա, քանի որ այս հիշատակարանը նույնությամբ համընկնում է Դրազարկում՝ 1290 թ. գրված Ավետարանի (Էրմիտաժ) 1650 թ. հիշատակարանին:

հազարերորդի հարիւրերորդի (1651) թուականութեան Արամեանս ազին ըստ Արեկագանն բերմանց, և ի հայրապետութեան Հայկական զարմից տեառն Փիլիպպոսի երիցս երանեալ և խստաճգուն կաթողիկոսին, նստողին յամենագով և երկնանման յաթոռ Լուսաւորչի զբնաւս Էջմիածնի, որ յԱրարատեան նահանգին, և ի թագաւորութեանն Պարսից շահ Ապասին Երկրորդի, նաև յառաջնորդութեան տանս Գողթան երջանկացելոյն ի համայնս տեառն Խաչատրոյ յաջորդութիւն Սբ առաքելոյն Թումայի, որ յաստուածապահ գիւղաքաղաքն յԱգուլիս»:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 449. հմմտ. ***Sanjian,*** էջ 747:

29. Աստուածաշունչ, ՌՁԷ (1638), Ագուլիս, նվիրաբերվել է ՌՃԲ (1653). *«… Դարձեալ մեք՝ Թանգրի Վէրմիշի որդիք՝ Վարդան և Պօղոս, հանդերձ ամենայն զարմօք մերովք շնորհօքն Աստուծոյ ստացաք զսուրբ մատեանս, որ ասի Աստուածաշունչ, և ընծայեցաք Սուրբ առաքելոյն Թումային, որ է աթոռս Գողթն գաւառի»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 384-385:

30. Աւետարան, ՊԷ (1358), ստացող՝ Հերիքնազ, ՌՃԲ (1653). *«Նորոգեցաւ Սուրբ Աւետարանս ի թագավորութեանն Պարսից Փոքու շահ Ապազին, ի կաթողիկոսութեան Էջմիածնա տեառն Փիլիպպոսի, ի յառաջնորդութեան Թումայի սուրբ ուխտին զԽաչատուր ահրիեպիսկոպոսին: Նորոգեցաւ թվին ՌՃ եւ երկու (1653) ձեռամբ յոգնամեղ Սիմոն իրիցոյ, և զիս՝ զբազմամեղս յիշել աղաչեմ, և դուք յիշեալ լիջի՛ք ի Քրիստոսէ. ամէն»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 562-563:

31. Աստուածաշունչ, ՌՁԷ (1638), տեղն անհայտ է, (Քյուրտյան հավաքածու, Հմր 37), նվիրված Ս. Թովմա առաքյալի վանքին՝ ՌՃԳ (1654). *«…Դարձեալ մեք՝ Թանղրի Վէրմիշի որդիք Վարդան և Պօղոս, հանդերձ ամենայն զարմօք մերովք շնորհօքն Աստուծոյ ստացաք զսբ մատեանս, որ ասի Աստուածաշունչ, և ընծայեցաք Ս. առաքելոյն Թումային, որ է աթոռ Գողթն գաւառի: Մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի վանաց անտի, թէ՛ ի մերոց և թէ՛ յօտարաց, զի բազում սիրով և մեծ յօժարութեամբ ըստացեալ ընծայեցաք Սրբոյ Թումայի: Եւ զերեսս ի գետին եղեալ աղաչեմք զհանդիպօղսդ, յիշել զմեզ առաջի զենման Գառինն Աստուծոյ, և դուք յիշեալ լիջի՛ք յարքայութեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որում փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

Հրատ. ***Քիւրտեան,*** էջ 415. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 630-632:

32. Աւետարան («Ազգագրական հանդէս», 1905, գիրք XII), նվիրաբերում՝ ՌՃԴ (1655). *«[Ես՝ մղդսի Էվազս, ստացա Սբ Գիրքս և ետու] Ս. Աստուածածին եկեղեցուն ի ձորն Ագուլեաց, ի ժամանակս թագաւորութեան Պարսից Փոքր շահ Աբազին, ի կաթողիկոսութեան Էջմիածնայ տեառն Յակոբին, ի յառաջնորդութեան Թումայի սբ ուխտին զտէր Պետրոս արհի եպիսկոպոսին և Մովսէս վարդապետին: Գեղիս առաջնորդն Մանվելն: Թվին ՌՃ և չորորդումն (1655)»:*

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 687:

33. Շարակնոց, ՌՃԸ (1659), Ագուլիս (Ցուցակ հայերեն ձեռագրաց Վրացական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ձեռագրերի ինստիտուտի, Հ^{մր} 184). *«Փա՛ռք...: Արդ, եղև աւարտ գրչութեան այսմ մեծահանդէս և հոգելից տառիս ի շրջագայութեան Հայկազեան տաւմարի Ռ և ՃԸ (1659) թվականի, ի հայրապետութեանն տեառն տէր Յակոբ կաթողիկոսի, ի յաթոռ Սբ Էջմիածնի, և մերոյ նահանգի առաջնորդութեանն Սբ Թումայի առաքելոյն Խաչատուր ահրի և պանծալի եպիսկոպոսապետին և եղբօրորդին՝ զՊետրոս քաջ ռաբունին: Գրեալ և ծաղկեալ ձեռամբ յոգնամեղ և անարհեստ, մեղաւոր և փղծուն գրչի Ալէքսանոս քահանայի, որ զանունս միայն ունիմ քահանայի և ոչ զգործս ի բարի. ա՛խ, վայ է ինձ Ռ (1000) բերան. ի լաւ և ի յընտիր աւրինակէ Սրսոյ առաջին վարդապետացն մերոց. ի յերկիրս Գողթան և ի գեղաքաղաքս Ագուլիս գովելի և աւրինեալ, և ընտիր ազգ քրիստոնէից, որ աստ կան սիրով և միաժողով: Եւ ի դրան սբ և աստուածանկար, և առաքելայարկ խորանիս, և քրիստոսաբնակ սբ տաճարիս, որք կան ի սմա սպասաւորք սբ եկեղեցոյս սրբասնունդ քահանայք՝ զտէր Գրիգորն, զտէր Ալէքսանոսնն...»:*

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 888:

34. Մաշտոց, ՌՃԹ (1660), Գողթն գավառ (ՄՄ 5152). *«Արդ՝ ես յետնեալս ի ծառայիցն Աստուծոյ նուաստացեալ և ապիրատ Խաչատուր ևեթ վարդապետս և կամօքն Աստուծոյ իշխող Գողթն գաւառի, շնորհօք Հօր և Որդոյ և Հոգոյն Սրբոյ ստացայ զգիրս Մաշտոցի, յորում գանձեալ կան ամենայն պաշտամունք կարգաց քրիստոնէութեան, զոր պաշտի ի մերս եկեղեցի, որպէս յայտ է ի մատենէս յայսմանէ, որում և ի բազում ամաց փափակէի ըղձմամբ սրտիս, ի յիշատակ հոգւոյ իմոյ և ծնօղաց իմոց Կարապետին և Սառային, և ամենայն տոհ[մ]ից, և ազանց նոցին, և ի վայելս հիգոյս անձին, և ամենայն մանկանց Սիօնի: Էր կատարումն գրոցս ի թա-*

գաւորութեանն Պարսից յաւուրս Երկրորդ շահ Ապասին, և ի հայրապետութեան Սբ աթոռոյն Էջմիածնի տեառն Յակօբայ սրբազան կաթողիկոսի, և ի թուականութեան ազինս Արամեան Ռ, ի հարիւրերորդի և յիններորդի (1660):

Արդ՝ աղաչեմ զհանդիպօղսդ սբ գրոցս, յիշել զանարժանս յիշման ի սբ աղօթս ձեր՝ ի քաւութիւն մեղաց և ի հաղորդութիւն հանդերձելոյն բարեաց, որում և դուք արժանասջիք շնորհօք տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, որում և փառք յաւիտեանս. ամէն: Եւ ի կատար այսր խորհրդածութեանս մեծի, յիշեսջի՛ք զարհին Գողթեաց զքաջ ռաբունին՝ զԽաչատուր և հարազատ որդին իւր՝ զՊետրոս վարդապետն հանդերձ ամենայն ազամբք իւրովք ի Տէր»:

Հրատ. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 938:

35. Աստուածաշունչ, ՌՃԹ (1660), Ասպահան, ստացող՝ Զաքարիա վրդ. Վաղարշապատցի (ՄՄ 201). *«Եւ մեք՝ նուաստացեալքս այսոքիկ, աշակերտք գոլով նորին (Մովսես Տաթևացու – Ա. Հ.) …Խաչատուր վարդապետն Երնջակեցի, ի գեղջէն Հուղսա, առաջնորդն Ագուլեաց և աթոռակալ Սրբոյն Թումայի առաքելոյն, որ և սա նոր նորոգեալ պայծառացոյց զաթոռն զայն շքեղապանծ վայելչութեամբ՝ ի հիացումն կարգեալ տեսողաց՝ իբրև զդրախտ Աստուծոյ զարդարեալ ազգի ազգի ճոխութեամբ հոգևորօք և մարմնաւորօք»*:

Հրատ. ***Ալիշան,*** էջ 327. ***Ակինեան,*** էջ 213. ***ԺԷ դ. հիշ., Գ,*** էջ 920-921. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ա,*** սյուն 876:

36. Աւետարան, ՌՃԺ (1661), (Ս. Հովհաննեսի ճեմարան, Կամարիլլո, ԱՄՆ, ձեռ. Հ^{մր} 367), ստացող՝ Խաչատուր վրդ. *«զԽաչատուր վարդապետ, զառաջնորդ Գողթն գաւառի, զհաջորդ եւ զսպասաւոր Սուրբ առաքելոյն Թումայի, զստացող Սուրբ Աւետարանիս՝ հանդերձ ամենայն զարմօք՝ յիշեցէ՛ք ի Քրիստոս, որ մեծաւ սիրով ստացաւ զսա, ի վայելս սրբասնունդ մանկանց Սիօնի եւ ի թողութիւն մեղաց իւրոց, ի թվին ՌՃԺ (1661)»*:

Հրատ. ***Sanjian,*** էջ 60:

37. Ճաշոց, ՌՃԺԱ (1662), Լոր գյուղ (յերկիրս Որոտան). *«Ուստի և քաջ հռետորն և ամենագովն անուամբ արքեպիսկոպոսն, և քահանայապետն Գողթն գաւառի, և բարի հովիւ և տեսուչն հօտին Քրիստոսի՝ Խաչա-*

տուր ռաբունապետն, խորհուրդ բարի եղեալ ի մտի ստանալ զանձ պատուական և անդրժելի յանառիկն Սիոն, ուր ոչ գող և ոչ ցեց մերձենալ կարեն…:

Յիշեսջի՛ք աստ տէր զվերոգրեալ ռաբունին Խաչատուր, և զծնօղսն իւր՝ զԿարապետն և զՍառայն, և եղբարս՝ զԱղաճանն և զՎարդանն, և զքոյրն իւր՝ զԳօհարն, զհանգուցեալսն ի Քրիստոս հանդերձ ամենայն տոհմիւք և զարմիւք: Զի յոյժ փափագմամբ և սիրով ստացաւ զսա յիշատակ իւր և ծնողաց իւրոց, ի վայելս մանկանց եկեղեցւոյ: Եւ եդ զսա ի վանս Ագուլեաց, որ է աթոռ Գողթնեաց, որ յանուն Սուրբ Թումայի առաքելոյն կառուցեալ է»:

Հրատ. ***Մաքսուդեան/1915,*** էջ 76-78:

38. Գիրք հարցմանց Գրիգորի Տաթեւացւոյ, ՌՃԺԵ (1666). *«Նաեւ վերադիտողի մերում նահանկի, տէր Թումայի առաքելոյ Աթոռոյն, տեառն Խաչատրոյ սրբազան արքեպիսկոպոսի, վերոգրելոյ առ Քրիստոս և ի նորին աջորդ եղբաւրորդին իւր Տեառն Պետրոսի քաջ վարժապետի: Այլ եւ բնակչաց սբ ուխտին Մովսէս վարդապետին, եւ կուսակրօն տէր Սարգսին, տէր Հայրապետին, տէր Խաչատրին եւ տէր Մանուէլին…:*

Եւ յետ անցից ժամանակաց սուղ ինչ ածին զիս ի հարկէ յԱթոռ Սրբոյն Թովմայի, ուր վարժարան էր իմ առաջին, եւ անդ ետ ինձ աստիճան աւագ սարկաւագութեան արհիեպիսկոպոսն տէր Խաչատուրն, վասն որոյ յորջորջեցա Շմաւոն, քանզի նախկի անուն իմ կոչիւր Շահնազար»:

Հրատ. ***Մայր ցուցակ Երսղմ, հ. Ա,*** էջ 578:

39. Առաքել Դաւրիժեցի, Պատմութիւն, ՌՃԺԵ (1666), Երևան (ՄՄ 1772). *«Թվին ՌՃԺԷ (1668), նոյեմբերի մէկն, Երեւան: Ես՝ Արգուլեցի Քուրդունց մղդսի Աղամիրի որդի Զաքարիայ այս Պատմագիրքս բերի Ագուլիս վասն օրինակելոյ: Զայս փոքր բանս գրեալ եղեւ յԱգուլիս եւ ի վանս Սուրբ առաքելոյն Թումայի, ի թվին ՌՃԺԸ-երորդումն (1669) եւ ի ԻԴ-ն (24) ապրիլի»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե,*** սյուն 1158:

40. Մատեան ողբերգութեան Գրիգորի Նարեկայ վանից վանականի, ՊԿԶ (1417), Քեմճակի Ս. Աստվածածնի վանք (Ղրիմ), ստացող՝ խոջա Փիրում, ՌՃԻ (1671). *«Արդ, ես՝ խօջայ Փիրումս, ստացայ զՍուրբ Գիրքս, որ կոչի Նարեկ ի հալալ արդեանց իմոց առ ի վայելումն որդւոյն իմոյ տէր Յոհանին, և յիշատակ ի դուռն Թումայի սուրբ առաքելոյն: Մի՛ ոք իշխեսցէ հանել և կամ վաճառել զսա ի դրանէ սորին: Եւ որք յանդգնին, զբաժակն Յուդայի արբցեն:*

Յիշատակ է Նարեկս Մեղրեցի Յոհաննէս վարդապետին, որ ետ ի դուռն սուրբ վանացն Թումայի առաքելոյն, ով ոք որ ընթեռնու միոյ բերանիւ ողորմի ասէ, եւ դուք յիշեալ լիջի՛ք առաջի Քրիստոսի Աստուծոյ մերոյ…»:

Հրատ. ***Մաքսուդեան/1914,*** էջ 1034-1036:

41. Աւետարան, ստացող՝ մղդսի Էվազ, ՌՃԻ (1671), Ագուլիսի ձորի Ս. Աստվածածին եկեղեցի. *«Եղև այս ի ժամանակս թագաւորութեան Պարսից Փոքր շահ Ապազին, ի կաթողիկոսութեան Էջմիածնայ տեառն Յակոբին, ի յառաջնորդութեան Թումայի սուրբ ուխտին զտէր Պետրոս արհեպիսկոպոսին և Մօսէս վարդապետին»:*

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 314:

42. Ժողովածոյ, ՌՃԻ (1671), Թովմայ առաքեալի վանք, Ագուլիս, ստացող՝ Թովմաս աբղ, Խաչատուր վրդ., Գալուստ վրդ., կազմող՝ Գալուստ (ՄՄ 497). *«Բայց գրեցաւ գիրքս այս ի Սուրբ ուխտս Ագուլեաց, ի վանս Սուրբ Թովմա առաքելոյն, ի դրան Սուրբ Քրիստափորի, ի կաթողիկէ եկեղեցւոյ, որ յայսմ ամի յաղագս նորոգման սկիզբն եղև եկեղեցւոյն և վանքին շինութեան…»:*

«…Բայց գրեցաւ սա ի սուրբ ուխտս Ագուլեաց Սրբոյ Քրիստափորի, ի վերին եկեղեցւոյ, ընդ հովանեաւ Սրբոյ առաքելոյ Թումայի, ձեռամբ Ղազար անարհեստ և տկար քարտուղարի, ի խնդրոյ ումեմն Գրիգոր ևեթ աբեղայի, որ զետեղեալ հանգչի այժմս ի վանս մեր Սուրբ առաքելոյս Թումայի, ի թուաբերութեան նարդեան ամանակի ՌՃ և ի Ի-երորդի (1671) և յառաջնորդութեան տեառն Պետրոսի քաջ հռետորի, գեղեցկաբան և հանճարեղ ռաբունապիտի…»:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Բ,*** այուն 999, 1001:

43. Երեմիա վրդ. Մեղրեցի, Բառգիրք, ՌՃԻԴ (1675), Ագուլիսի Ս. Թովմա վանք. *«Այլ և գրեցաւ գիրքս ի տանս Գողթնեաց, ի գիւղաքաղաքն, որ կոչի յԱգուլիս, ընդ հովան(ե)աւ Սբ առաքելոյն Թումայի»:*

Հրատ. ***Մայր ցուցակ Երսղմ, հ. Ը,*** էջ 313-314:

44. Նարեկ, ՌՃԻԵ (1676), Ագուլիսի Ս. Թովմա առաքյալի վանք (Ղալաթիա, ձեռ. Հ^{մր} 124). *«Աւարտեցաւ գիրգս ձեռամբ վերոյ գրեալ անիմաստ Բարսղի, ի գաւառն Գողթնեաց, ի վանգն Ագուլեաց, ընդ հովանեաւ Սո(ւ)րբ առաքելոյն Թումայի, յիշատակ ինձ եւ ծնողացն իմոց՝ տէր Միքայէլին եւ Պայծառին, եւ նորաբոյս եղբարցս՝ Յովանիսին եւ Յարութիւնին»:*

Հրատ. ***Ցուցակ Ղալաթիոյ,*** էջ 786:

45. Ժողովածոյ, ՌՃԺԷ (1668), Ս. Թովմա առաքյալի վանք, Ագուլիս (ՄՄ 705), հետագայի հիշատակարան. *«Սուրբ Թումայի վանս: Ի հազար ՃԻ եւ Ը (1679) թվին տնկեցաք ըզչինարիքն եւ ավլանդիքն ի մէջ պարըսպիս»:*

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Գ.,*** սյուն 406:

46. Յայսմաւուրք, ՌՃԻԹ (1680), Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի մոտակա գյուղ (հավանաբար՝ Դարաշամբ - Ա. Ա.), ստացող՝ Մարտիրոս Դաշտեցի, ՌՃԼԴ (1685). *«Վասն որոյ և անջինջ և երկնուստ պարգև, որ կոչի Յայսմաւուրք. յիշատակ Դաշտեցի[8] Գրիգորի որդի Մարտիրոսին, եղբարցն՝ Բունեաթին, Մկրտչին, Յովանիսին, և հանգուցեալ ծնողացն նոյն վերոգրեալ հօրն՝ Գրիգորին և մօրն՝ Զիլֆուն, և կենակցաց՝ Առցին, Մարթապին, Խուպանին, Եազտուն, Փարուն և որդոցն՝ Օհանջանին, Մալխասին և Աւդուլի և դստերացն սոցա՝ Մախմուրն, Հռիփսիմէն, Մարեանն, Ոսկին, Զիլֆին, որք կամակիցք եղեն և յօժարեցան՝ յորդորելով զմիմեանս, հալալ ընչիւք իւրեանց ըստացան զսա, յիշատակ իւրեանց և ծնողաց իւրեանց, և ետուն ի վանս սրբոյն Թումայի առաքելոյն մխեցելոյն ի կողն Յիսուսի…»:*

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 1007-1012:

47. Յայսմաւուրք, ՌՃԼԶ-ՌՃԼԸ (1687-1689), Էջմիածին-Նորագավիթ (ՄՄ 1512). *«Եւ զայս տեսեալ Արեւելեան վարդապետացն, որ ոչ գտան ոք եթէ նստցի աթոռ կաթողիկոսութեան, ժողովեցան ի մի վայր ամենայն սեւաթուրք, ընտրեցին զՊետրոս քաջ րաբունին զեպիսկոպոսն ի տան Գողթեան եւ առաջնորդ առաքելոյն Թումայի, առաքեցին հրովարտակաւ եւ աղաչանք առ լուսանկար եւ արդիւնարար սրբազան կաթողիկոսն Եղիազար հրաւիրակս՝ բերել եւ նստուցանել առաքելաշնորհ աթոռն Լուսաւորչի, որ եւ եկն իսկ…»:*

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ե,*** սյուն 158:

48. Պատմութիւն Մովսէս Խորենացւոյ (ժամանակն ու տեղը՝ անհայտ), վերջին ստացող՝ Մեսրոբ, ՌՃԽԳ (1694). *«Զվերջին ստացող սորին պաշտիկի վերոյ գրելոց տեառն Մովսիսի, լոկ անուն Մեսրոբս յիշել մաղթեմ ի մաքրափայլ յաղօթս ընթերցողաց սուրբ և երջանիկ եղբարցդ, որ և զկնի մահուան սորին ստացողի առաջնոյ, բազում փափագանօք*

[8] Նախկինում Դաշտ գյուղը գտնվում էր Ագուլիսից հարավ, հետագայում ընդգրկվեց նրա կազմի մեջ (Ագուլիսը կոչվեց Վերին Ագուլիս, Դաշտը՝ Ներքին կամ Ստորին Ագուլիս):

ստացայ զսա ի հալալ արդեանց իմոց, և յետ սուղ ինչ ժամանակաց ետու կամօք և յօժարութեամբ սրտիս, յիշատակ հոգւոյ իմոյ, ի դուռն Սրբոյ Առաքելոյն Թումայի, և ի ձեռն տեառն բազմաշխատ և քրտնաջան Յովհաննու քաջահանճար ռաբունեաց պիտի, զոր և յայսպիսում վշտաշատ ժամանակի շինեաց զեկեղեցիս զանգակատնովն հանդերձ, որում և յամենայն տեղեաց ամենայն ոք ընծայաբերք լինէին նորաշէն եկեղեցեացս, որ և ես՝ նուաստ և պիտակ անուն Մեսրոբ յետնեալ ամենից, աշակերտ տեառն Յովհաննու հանճարազգօն ռաբունւոյ, ըստ կարի իմում իբրու երկուս լոմայս այրւոյն՝ արկի զսա ի դրան Սրբոյ առաքելոյս Թումայի, նզովս ի Տիառնէ ընկալցին և անիծիւք դատապարտեսցին. ամէն: Եւ այս եղև ի թուականութեանս Հայոց ՌՃԽԳ (1694)»:

Հրատ. ***Սմբատեանց,*** էջ 206-207:

49. Մեկնութիւն Մատթէի, Դաւիթ Անյաղթ եւ Տօմար. ՌԶ (1631), Բերիա, հետագայի հիշատակարան. *«Դարձեալ ի թվին ՌՃԽԳ (1694) շինեցաւ Սուրբ Թումայի առաքելոյն եկեղեցին Ագուլեաց վանաց, որ է աթոռն մեր: Ի սոյն ամի շահ Սուլեմանն եւ թագաւորեց սուլթան Հուսէինն»*:

Հրատ. ***Աճառեան,*** էջ 115բ:

50. Բառարան, ՌՃԾԵ (1706). *«Եւ արդ, զընծագրեցի զսայ, ընդ հովանեաւ հոյակապ և մեծավայելուչ աթոռոյս Սրբոյն Թովմայի առաքելոյն, ի ժամանակս թագաւորութեան Պարսից շահ սուլթան Հուսէինին և յառաջնորդութեան նահանգիս Գողթան գաւառիս տեառն Յոհաննու բազմաշխատ վարդապետի, որ նորոգեաց զՍուրբ Աթոռոյս եկեղեցին, հանդերձ զանկակատնօք և այլ կիսակատարն պարսպիս, զորոյ զվարձքն Տեարն Տեարնց հատուսցէ»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1915,*** էջ 381-382:

51. Աւետարան, ՌՃԾԷ (1708), Գողթն (ՄՄ 2590). *«Փա՛ռք…: Եւ էր ի ժամանակս հայրապետութեան տեառն Աղէքսանդրի սրբազան կաթողիկոսի եւ առաջնորդութեան Սրբոյ աթոռոյն Թումայի առաքելոյն տեառն Յոհաննու եւ այցելուի երկրիս Գողթնեաց: Դարձեալ աղաչեմ զմանկունսդ նորոյ Սիօնի՝ որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով, յիշեցէ՛ք ի մաքրափայլ յաղօթս ձեր զստացող սորին՝ զտէր Յովաննէսն եւ զգծող սորին՝ զԵփրեմ մեղսամած քահանայս, որ Բ. գլուխ Սուրբ Աւետարանիս գծագրեցինք հանդերձ ծաղկով եւ երկաթագրով եւ համարագրով, յիշեցէ՛ք*

եւ Աստուած ողորմի ասացէ՛ք: Եղեւ զրաւ գրչութեան սորա ի թվին Հայոց ՌՃԾԷ (1708) եւ յամսեանն Սեպտեմբերի ԺԵ. (15)»:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ը,*** սյուն 618-620:

52. Ժողովածոյ (ՄՄ 1157), կազմված է 4 ձեռագրից.

Ձեռագիր Ա. Գրիգորի Նարեկացւոյ Մեկնութիւն Երգոց երգոյն, ՌՃԾԸ (1709), Ագուլիս. *«Աւարտեցաւ Մեկնութիւնս ձեռամբ Յովաննիսի իբրու քահանայի, ի յանարժանի տխմարի քարտուղարի, ի հոյակապ յԱթոռ Սրբոյն Թումայի, որ ի յԱգուլիս, ի թուին Հայոց ՌՃԾ եւ Ը (1709), Յունիսի ամսոյ ԻԳ, ի վայելումն Բարսղի աստուածաբան վարդապետի, եւ Քրիստոսի փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն»:*

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ,*** սյուն 481:

Ձեռագիր Դ, XVII դար, հետագայի հիշատակարան. *«Զայս երկու գիրքս ի միասին կազմեալ, որ ասի՝ Մեկնիչ Երգ երգոց եւ Պրօկղի: Ես՝ տէր Բարսեղ վարդապետս, ըստացա իմ հալալ ընչիւքս, ի ՌՃԿԷ (1718) թուոջն, ետու զսա ի դուռն Սուրբ առաքելոյն Թովմայի անջնջելի յիշատակ ինձ եւ ծնօղաց իմոց»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ,*** սյուն 484:

53. Ժամագիրք, XVI դար, ստացող՝ Բարսեղ վարդապետ, ՌՃԿԷ (1718). *«Ես՝ տէր Բարսեղ վարդապետ, ի ՌՃԿԷ (1718) թվին, զայս Ժամագիրքս ետու յիշատակ ինձ եւ իմ ծնողացն ի դուռն սրբազան առաքելոյն Թումայի, որ ասրի Ագուլեաց վանք»*:

Հրատ. ***Մայր ցուցակ Վնտկ, հ. Դ,*** էջ 914:

54. Ժողովածոյ, ՌՃԼ (1681), Զմիւռնիա, ՌՃՀ (1721), Ս. Թովմայ առաքեալի վանք, Ագուլիս, ստացող՝ Բարսեղ (ՄՄ 1243). *«…աղաչեմ զձեզ յիշիլ զմեղսամած զՍտեփաննոս փանաքի անուամբ վարդապետս, որ բազում աշխատութեամբ գծագրեցի զայս Եզեկիէլի Մեկնութեան գիրքս, հրամանաւ հաւոյն մերոյ, մեծ ռաբունապետին՝ Բարսղի արքեպիսկոպոսի, առաջնորդ Սուրբ Թումայի առաքելոյ վանուցն, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի եւ աղօթիւք նորին, Տէր մեզ ողորմեսցի. ամէն: Գրեցաւ ՌՃ. եօթանասուն (1721) թուականիս Հայոց»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ,*** սյուն 725-726:

55. Վարդան Արեւելցի. Մեկնութիւն Հնգամատենին, ՌՃՀԹ (1730), Կաֆայի Ս. Սարգիս եկեղեցի, ստացող՝ Միքայել վրդ. (ՄՄ 1050). *«Իսկ ի խնդրոյ ումեմն Միքայիլի, խոհեմազարդ եւ հոգեկիր վարդապետի, որ էր նա յԱրեւելեան երկրէն, յԵրեւանու նահանգէն, ի Նախջեւանու գաւառին, ի Գողթան տանէն, եւ ի Փառակայ գաղջէն, գոլով նա հարազատ միաբան եւ քրտնաջան սպասաւոր ի հոյակապ, բազմահռչակ եւ ամենագով՝ Գողթնեայ աթոռոյն, ի Սրբոյն Թովմայի առաքելոյ վանիցն, որ ի յԱգուլիս, զոր հիմնարկեալ եւ կերտեցեալ է ի Սրբոյ առաքելոյն Բարդուղիմէոսէ ի սկիզբն քարոզութեան իւրոյ… Եւ Քրիստոս Աստուծոյ մերոյ սոսկալի եւ անապական արեամբ մածեալ տիգահանգոյն աջն Թովմայի առաքելոյն անտանօր է, այլ եւ գոն անդ բազում սքանչելագործ սրբոց մասունք եւ նշխարք, զորս առնեն մեծամեծ սքանչելիս, որք են պարծանք եւ փառք յերկրին յԱրեւելեան եւ Հայկայ լուսաւորչաւանդ զարմիցս յաւէտ եւս Գողթնեաց ժողովրդականացն… յիշեսջի՛ք յերկնաթռիչ աղօթս ձեր, զստացող սորին՝ զտէր Միքայէլ վարդապետն հանդերձ համայնիւք ազգայնօքն. ամէն: Ընդ որս եւ զՍրբոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ՝ Ճահկեցի զտէր Ղազար հրաձորան վարդապետն, հանդերձ ծնողիւք եւ համայնիւք զարմօք իւրովք. ամէն: Նախ մայրաքաղաքս առաջնորդ, ի վերոյ գրեցեալ՝ զտէր Ստեփաննոս հանճարաշատ վարդապետն, հանդերձ բոլոր ազգայնովքն իւրովք, որ զսոցին օրինակսն նա շնորհեաց մեզ: Այլ եւ զՍրբոյն Թովմայի առաքելոյ վանից առաջնորդ՝ զտէր Բարսեղ արհիականաւ ճոխացեալ վարդապետն Ագուլեցի…»*:

Հրատ. ***Լալայեան,*** էջ 173. ***Ոսկեան,*** էջ 713-715. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ,*** սյուն 183-185:

56. Գրիգոր Տաթեւացի, Քարոզգիրք, ԺԵ դար (ՄՄ 2068), հետագայի հիշատակարան. *«Աբրահամ վարդապետս Կրիտացի ընթերձա զգիրքս Սուրբ Թումայի վանիցն Գողթան գաւառի ի Քիլի, ՌՃՁ. (1731) թվին Հայոց, Մարտի ամսոյն աղուհացից»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ձ,*** սյուն 1328:

57. Աւետարան, ՌԾԴ (1605), Սեպ գիւղ յերկրին Մայեկաց ի Վասպուրական, վերջին ստացող՝ պարոն Թումաս Ագուլեցի. *«Դարձեալ կրկին անգամ յիշեսջի՛ք զվերջին ըստացող Սուրբ Աւետարանիս և ոսկեզօծ բուրաստանիս Ագուլեցի պարոն Թումասն, որ ի դառնալն յերկրէն Հընտկաց ի Թէոդուպօլիս, հանդիպեալ էր անտանօր Սրբոյ Աւետարանիս,*

զոր ուխտիւ ըստացաւ զսա ի հալալ ընչից իւրոց՝ առ ի ընծայելոց ի դուռն Սուրբ Թովմայի առաքելոյ վանիցն, որ զկնի գալոյն իւրոյ յԱգուլիս եբեր և ընծայեաց ի դուռն Սրբոյ առաքելոյս Թովմայի և ետ յիշատակ իւրն և ծնողացն իւրոց...: Ըստացուած սորա եղև ի հազարերորդի, հարիւրերորդի, ութսուն և մի յարաբերորդի (1732), յամսեանն Սեպտեմբերի յեօթներորդի»:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 316-317:

58. Աղօթք Եփրեմի Խուրին Ասորւոյ եւ այլոց, XVIII դար (Ղալաթիա, ձեռ. Հ^{մր} 99), հետագայի հիշատակարան. *«Դարձեալ գոհութիւն ամենասուրբ Երրորդութեանն, որ զիս յոչընչէ գոյացոյց իւր պատկեր աստուածութեանն, դարձեալ գոհանամ մարդասիրին Տեառն Յիսուսի Քրիստոսի Աստուծոյ մերոյ, որ և զիս հանդերձ հարբ ծնողօք, որդովք, դստերօք իմովք իւր լոյս աստուածային հաւատուն լուսաւորչածին Հայոց ուղղափառ դաւանութեան ի վերա(յ) վիմին Սրբոյն Պետրոսի սրբազան առաքելոյն հաստատեաց: Որ և կոչեաց շնորհօք Սո(ւ)րբ Հոգւոյն ի կարգս սուրբ քահանայութեան ամին ՌՃԽ և Բ-երորդի (1693), Սո(ւ)րբ վանքն Ագուլեաց սրբազան առաքելոյն Թումայի ձեռամբ լուսաւոր հոգի մեծ Ոհան վարդապետին ամին ՌՃԿ և Թ-երորդի (1720)...»*:

Հրատ. ***Ցուցակ Ղալաթիոյ,*** էջ 621-622:

59. Ժողովածոյ, ՌՃՁԹ (1740), Եւդոկիա, Բիւզանդիա, ստացող՝ Հովհաննես արք. (ՄՄ 101). *«Ես՝ ...տէր Յոհաննէս արքեպիսկոպոս ի յԱրևելից կուսէ, ի Գողթան գաւառէ, անարդիւն յաջորդ ի սուրբ բարդուղիմահիմն վանից՝ հոյակապ և սքանչելագործ Սրբոյն Թումայի առաքելոյ, ուր կայ աջն նորին անդ, մխեալն ի կողն Յիսուսի և ներկեալն սարսափելի արեամբն Քրիստոսի... և ետու գաղափարել զսա ի պտղոյ արդեանց գաւազանի քարոզութեան իմոյ, ի թուոյ կենարարին մերոյ հազարերորդի եօթնհարիւրերորդի և քառասուն, որ ի վերայ բարդի, և ըստ էասական թվոյն Հայոց հազարերորդի հարիւրերորդի ութսուն և իններորդի (1740), ըստ յունարէն ամսոյ Յունվարի մուտն և ի հայոց ամսոյ Տրէի տասն և եօթն, և բերեալ եդի ի վանս Սրբոյն Թումայի առաքելոյ՝ յիշատակ անջինջ ինձ և բարեմիտ ծնողաց իմոց: Եւ մի՛ ոք իշխեսցէ հանել զսա ի Սուրբ վանուցն Թումայի առաքելոյ...»*:

Հիշատակարան հետագայի – ՌՄԼԸ (1789). *«Յիշատակ է սուրբ գիրքս, որ կոչի Քարոզգիրքս, ուստա Մեսրոբին և իւր ծնօղացն՝ հանգուցեալ Ներսեսին և իւր կողա(կ)ցուն՝ Պաղդայգուլի, և իւր եօթն մասն ննջե-*

ցելոցն, ի դուռն Սուրբ Թումայի առաքելոյն. յիշատակն արդարոցն օրհնութեամբ եղիցի. Տէր Աստուածն անճնճելի յիշատակ արասցէ. ամէն: Գրեցաւ թվին ՌՄԼԸ (1789), Նոյեմբերի ԺԷ: Ես՝ մեղաւոր և անարժան Եսայի սևաւորս, գրեցի»:

Հրատ. ***Ոսկեան,*** էջ 716-717. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ա,*** սյուն 428, 430:

60. Դիոնէսիոս Արիսպագացի, ՌՃՁԹ (1740) (Ղալաթիա, ձեռ. Հմր 23), ստացող՝ Հովհաննես արք[9]. *«Ես՝ …տէր Յոհաննէս արքեպիսկոպոս ի յԱրևելից կուսէ ի Գողդան գաւառէ, անարդիւն յաջորդ ի սուրբ բարդուղիմահիմն վանից, հոյակապ և սքանչելագործ, Սրբոյն Թովմայի առաքելոյն, ուր կայ աջն նորին անդ, մխեալն ի կողն Յիսուսի և ներկեալն սարսափելի արեամբն Քրիստոսի… և եդի յիշատակ անջնջելի ի սուրբ վանս Սրբոյն Թովմայի առաքելոյ…»*:

Հրատ. ***Ցուցակ Ղալաթիոյ,*** էջ 779-780:

61. Ժողովածոյ, ՌՃՂԱ (1742), Կ. Պոլիս, մեկենաս՝ Յովհաննէս արք. Գողթնեացի (ՄՄ 3324). *«Ես՝ պիտակ անուամբ եւ ոչ արդեամբ կոչեցեալս, հնազանդ անարժանս յարժանաւորաց, մեղապարտս յանմեղաց, իբր ահրեպիսկոպոս յերկրէն յԱրեւելից, ի գաւառէն Գողթնեաց, ի բարդուղիմահիմն վանաց Սրբազան առաքելոյն Թումայի, ուրանօր կայ սարսափելի արեամբն Քրիստոսի, յորոյ նուիրեցայ ես՝ ստրուկ ծառայ ի ծնողաց իմոց զամս քառասուն եւ չորս, եւ եղէ նոյն սուրբ վանացն յաջորդ անարդիւն: Եւ զայս գիրքս գրել ետու իմ ձեռօքս եւ եդի ի նոյն Սուրբ վանքն Թումայի, որ յԱգուլիս գիւղաքաղաքի, իբր անջինջ յիշատակ ինձ եւ բարեմիտ ծնողաց իմոց՝ Առաքելոյն եւ Նիկարին, եւ այլ ընտանեաց իմոց, որք են ի Տանակերտ գիւղի, ի վայելումն ինձ՝ անարժանիս եւ յետ իմոյ գացօղ եղբարց եւ միաբանաց: Եւ որք վայելէք ընթերցմամբ եւ շահեցմամբ հոգւոյ, յիշեսջի՛ք զիս՝ անարժանս աներեկ ի Քրիստոսէ Աստուծոյ մերմէ. ամէն: Դարձեալ, եթէ ոք յանդգնեսցի գողանալ եւ հանել ի Սուրբ վանացն Թովմայի առագելոյն, պարտական լիցի սարսափելի արեանն Քրիստոսի, որ եւ ասասցեն հրեշտակք եւ մարդիկք. եղիցի, եղիցի»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Ժ,*** սյուն 1376-1377:

62. Պատմութիւն քառից ժողովոցն, որք ի Նիկիայ, ի Սարդիկիայ, ի Կոստանդնուպոլիս եւ յԵփեսոս, ՌՃՂ (1743) (ՄՄ 1905). *«Կարողութեամբն*

[9] Գրեթե տառացի կրկնում է նախորդին:

Աստուծոյ, յանգ եղեալ աւարտեցաւ սուրբ գիրքս երից սրբազան ժողովոց՝ ձեռամբ տէր Պետանի որդի, անուամբ եւեթ դպիր Պօղոս եւ տիրացու Ստեփան նօտարացս, ի վայելումն տեառն տեառն Յօհաննու արհիապատիւ եպիսկոպոսի եւ դիտի վանից Սրբոյն Թումայի առաքելոյն, ի փառս Աստուծոյ եւ ի յօգուտ Հայկազունէից, թուին ՌՃՂԲ-ն (1743), ամսեանն Մարտի ԻԶ-ին (26)»:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Զ,*** սյուն 484:

63. Լուդովիկոս Փարիզեցի. Ուղ եւ ծուծ աստուածաբանութեան, ՌՃՂԷ (1748), Պրուսակերտ (ՄՄ 1457). *«Յիշատակ է Ուղ եւ ծուծ աստուածաբանութեան գիրքս Նուսնիացի Յարութիւնի որդի տէր Ոհանեսիս, որ յիշատակ ղրկեցի Գողտնեաց գաւառըն ի Սուրբ Թումայու առաքելու վանքն, յիշատակ իմ ծնողաց, եւ որ ոք ը[նթեռ]նու, ասէ մեկ Հայր մեղայն եւ իւրեանք յիշեալ լինին ի Տեառնէ. ամէն:*

Աւարտեցաւ Ուղ եւ ծուծ աստուածաբանութեան գիրքս, ձեռամբ Ոհանէս իրիցուէ անվարժ, որ է երկրէն Արեւելեան, ի գաւառէն Գողտնեաց, ի թեմէն Սրբոյն Թումայու առաքելոյն, ի գեղջն, որ կոչի Նուսնիս, Յարութիւնի որդի կոչեցեալ: Եւ դուք ընթերցողք հայրք եւ եղբայրք եւ որ ի ձեռս առեալ ի ժամ ընթերցման արժան առնէք զտէրունականն լիով սրտիւ զԱստուած ողորմին ասել. նա եւս Աստուած ողորմեսցի ձեզ, ի միւս անգամ գալստեանն իւրում. ամէն: Ի թուականիս Հայոց ՌՃՂԷ-ին (1748), ի փետրվարի տասն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին, որ ի Պրուսկերտի»:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Դ,*** սյուն 1310:

64. Օրինակք թղթոց Յակովբայ Ե Շամախեցւոյ եւ Սիմէոնի Ա Երեւանցւոյ կաթողիկոսաց Հայոց, ՌՄԺԱ-ՌՄԻԹ (1762-1780), Էջմիածին, (ՄՄ 2912). *«Արդ, ի բազմաց վանորէից մի է հռչակաւոր հիահրաշ եւ գերահզօր ուխտն Սրբոյն Թումայի առաքելոյ...»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Թ,*** սյուն 1290:

65. Օրինակք գրութեանց Ղուկասու Կարնեցւոյ, ՌՄԼ-ՌՄԼԵ (1781-1786), Էջմիածին (ՄՄ ձեռ. թիվ 2803). *«Թուղթ յորդորանաց ի Դաշտ գիւղն, որ է վիճակ Սրբոյն Թումայի առաքելոյ վանիցն, զի զարդիւնս տացեն նոյնոյ վանիցն իւրեանց, վասն զի յերկար միջոցս ոչ տային զհասս*

եւ զիրաւունս եւ խղճալի առաջնորդն վասն պակասութեանցն բողոքէր… գրեցաւ ի ՌՄԼԴ. (1785) եւ ի յունվարի (օրը՝ չգրված)»:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Թ,*** սյուն 684:

66. Աւետարան, ՊԷ (1358), գնորդ՝ ուստա Աւաք, ՌՄԼԸ (1789). *«Թվ. ՌՄԼԸ (1789) դեկտեմբեր Բ, որ ես՝ առդպեցի (՞) ուստայ Աւաք, այս Աւետարանս առի ի ձեռաց անօրինաց հալալ արդեանց իմոց և ետու յիշատակ ինձ և իմ ծնօղաց իմոց՝ Յակոբի, Ապսակ, եղպարց իմոց՝ Շիրվանին և Հարապետին, որդոցն՝ Յակոբին, Շիրվանին, Հարապետին, կողացուն՝ Համասփուռին, դստերացն՝ Ապսակին և Նանագուլին, և հանգուցեալ Նախշունին և իւր Է մասն ննջեցելոցն, որ ետու յիշատակ ի դուռն Սուրբ Թոմայի առաքելուն յիշատ(ա)կ արդարոցն օրհնութեամբ եղիցի, ով որ ընդերցեն մէկ բերան, Հայր մեղայիւ յիշեսցեն ինձ և իմ ծնօղացն. ամէն, Հայր մեր. ամէն»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 562-563:

67. Յայսմաւուրք, ՌՃԽԹ (1700), Կաֆայի Ս. Օգսենտ եկեղեցի. *«Յամի ներմարմնութեան Տեառն 1789 և ի թուականութեան Հայոց ՌՄԼԸ, մեծահռչակ և գերահրաշ վանքն սրբազնասուրբ առաքելոյն Թոմայի, որ է կառուցեալ ի յերկրին Նախիջևանու, յայսմ ամի ասպատակեցաւ ի չար և անօրէն տաճկացն զօրաց, և զամենայն զինչս սրբոյ վանիցն աւար առեալ և տարեալ ի յերկիրն Երևանու, վաճառեալ էին անդ զամենայն եկեղեցական զսպաս, և կամ զայլ ինչս սրբոյ վանիցն:*

Իսկ սրբոց լուեալ զայս համբաւ բօթալի, կարի յոյժ ցաւեցեալ էին, վասն զի է տուն հոգոց պայծառ իշխանազուն իշխան նախնեաց իւրեանց, որք իշխեալ էին երկրիս յայսմիկ, իշխան գոլով ժամանակաւ և կացեալք են ընդ հովանեաւ սրբոյ վանիցս, զսրբոյ մեծաւ փափագմամբ, որոնեալք էին յուզելով, թէ գուցէ գտանիցեն զսպաս սրբոյ հրաշակերտի վանիցս և առեալ զայն վերադարձուսցեն ի սուրբ վանս. բայց՝ ոչ են գտեալ զինչ ի սպասու սրբոյ վանիցս, բացի յայս Յայսմաւուր գրքէս, որ զայս ևս զոմն Թիֆլիզեցի առեալ և տարեալ է ի Թիֆլիզ. որ նոցա (՞) զայս տեսեալ հալալ արդեանց իւրեանց գնեալ, վերըստին նորոգեցուցեալ ետուն յիշատակ սրբոյ վանիցս՝ Թոմայի սրբազնասուրբ առաքելոյն…»:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 1003-1007:

68. Աւետարան, տեղն ու ժամանակը՝ անհայտ, հետագայի հիշատակարան. *«Յիշատակ է Սուրբ Աւետարանս սիրունցի յիշեցէք …ին …ան (՞), հայր Իսախանըս և մայր իմ Ոսկի, և եղբարքն՝ Մաժուլում Միրզայ, Բայդալ Ամարեանը, Էվազ նորաբողբոջ որդիքն իմ և մեր իշխանացն ահուն ետու ի դուռն Սուրբ Թումայի առաքելուն յիշատակ թվին ՌՄԼԹ-ին:*

Պարոն Մաժլում ետու Գ հատ էլ դռան երկաթի փակ ետու ի դուռն Սուրբ Թումայի առաքելուն»:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 318:

69. Վարք հարանց, ՌՃԲ (1653), Շոռոթ, (Թավրիզի առաջնորդարան, ձեռ. 1). *«Եւ ես՝ Ագուլեաց Սբ Թումայի առաքելոյն նորին առաջնորդ Թովմաս ա(ստուա)ծայինամ վարդապետի շաթիր Ըռսդամս, գրեցի ՌՄԽԲ (1793) թվոջս Մախսուտ խանին օրդու արու փախջին խոյ այս է»*:

Հրատ. ***Աճառեան,*** էջ 44բ:

70. Աւետարան, ՌՃԺ (1661), Տփխիս, հետագայի հիշատակարաններ՝ 1728 թ., 1796 թ. *«Եւ առ բերեալ եդի և ընծայեցի ի դուռն Սուրբ աթոռոյս Գողթնեաց սրբազան առաքելոյն Թովմայի, առ ի լինել անջնջելի յիշատակ ինձ և իմայնոց ամենեցունց…:*

Որ եղև այս ի թուականիս մեր ՌՄԽԵ (1796) ամին, ի հայրապետութեան Սրբոյ Էջմիածնի տեառն Ղուկասու սրբազան կաթուղիկոսին: Եւ յառաջնորդութեան Սրբոյ վանացս Թումայի՝ տեառն Թումասու արքեպիսկոպոսին և բազմաշխատ վարդապետին:

Եւ զսոյն զայս արարի հրամանաւ գերապատիւ հօր մերոյ և առաքելաշաւիղ առաջնորդին Գողթան գաւառիս՝ տեառն Թումայի խոհեմազարդ վարդապետին Դաստակեցւոյ: Որ է վեցերորդ եպիսկոպոս ի շինութենէն այսմ առաքելական Աթոռոյս…:

Արդ՝ առաջադրութեանս մերում նպատակ՝ է սոյն այս, զի աստուածախօս գեղեցկագիր Սուրբ Աւետարանս՝ մի է ի գերելոց անտի պատուական գրեանցն Թիֆլիզու, զոր գնեաց ի գերողացն նախագրեալ Յարութիւնին որդի՝ քաղցրապտուղ ծառն՝ շառաւիղ-ղեալն ի բարի արմատոյ՝ բարեպաշտօն վաճառական Մարտիրոս՝ իբրև զգեղեցիկ և զմեծագին մարգարիտ: Եւ ընծայեաց մեծաւ սիրով ի ձեռս վերոյ գրեալ երջանիկ առաջնորդին՝ առ ի լինել հոգևոր յիշատակ իւրն և իւրայնոցն ամենեցուն ի Սուրբ աթոռս Թումայի սրբազան առաքելոյն…:

Գրեցաւ յիշատակաց բանս ի թուականիս մերում ՌՄԽԵ, յամսեանս յունվարի ԺԲ ի յառաքելական հրաշազարդ Սուրբ աթոռս Թովմայի՝ որ ի գիւղաքաղաքս Ագուլիս»:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 118-127:

71. Ժողովածոյ, ՌՃԱ-1652 (ՄՄ 2303), հետագայի հիշատակարան (XVIII դար). *«Յիշատակ է զայս Պրոկղի եւ Քերականութեան գիրքս Ագուլեցի Թովմայ վարդապետին, որ ետու յիշատակ ինձ եւ ծնողաց իմոց ի վանս Սրբոյն Թովմայի առաքելոյն: Ով ոք հանդիպիցի ընթերցմամբ, յիշեսցէ՛ զմիով Հայր մեղայիւ զվերոյգրեալ զանուանսն»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Է,*** սյուն 845:

72. Յայսմաւուրք, ՌՃԻԹ (1680), Ս. Ստեփանոս Նախավկայի վանքի մոտակա գյուղ (հավանաբար Դարաշամբ - Ա. Ա.), հետագայի հիշատակարան, 1812 թ. *«Ես՝ Վաղարշափաթու Էջմիածնէցի տիրացու Յակոբս, իմ յօժար կամովս եկի հրաշափառ վանս Սրբոյն Թովմայի յաղակս կրօնաւորութեան, Աստուած իւր ամենակարող զորութեամբ խոնարհութիւն եւ համբերութիւն տացէ: Ով ոք, որ այս գիրս ընթեռնուք կամ արծարծէք, ունիք պարտականութիւն լիաբերան ասել՝ Աստուած ի կարգ քահանայութեան արժանի արասցէ իւր քաղցրութեամբն: Յամի Տեառն 1812 և յամսեանն Դեկտեմբերի ԺԵ-ին և այսմ Գողթան գաւառիս իշխօղն միրզայ Ահմատն էր և աթոռոյս վէքիլդարն ջուղայեցի Դալլաքեան Պօղոս վարդապետն էր, բայց սղալանացս ներել մաղթիմ ընթերցօղացդ»*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 1007-1012:

73. Օրինակք գրութեանց Եփրեմի կաթողիկոսի, ՌՄԿԴ-ՌՄԿՁ (1815-1817), էջմիածին, (ՄՄ 2916). *«Առ պարոն Մատթէոսն Մէլիք-Ղամջանեան եւ պարոն Սաֆռասն Սահակեան... առ Թովմայ առաքելոյ վանից, Երնջակու Սուրբ Կարապետու եւ Կարմիր վանից բոլոր ժողովուրդսն...»*:

Հրատ. ***Մայր ցուցակ ՄՄ, հ. Թ,*** սյուն 1360:

74. Աւետարան, տեղն ու ժամանակը՝ անհայտ. *«Յիշատակ է Սուրբ Աւետարանս Ագուլեաց Սուրբ Թովմայի վանիցն» (երկիցս)*:

Հրատ. ***Մաքսուդեան/1911,*** էջ 318:

75. Աւետարան, 1193 թ., Պաւղոսական անապատ, մերձ առ ամուր դղիկիս Կատինոյ (The Walters Art Gallery, Բալթիմոր, ԱՄՆ, ձեռ. Հմր 2), հետագայի հիշատակարան (XVIII դար). *«Յիշատակ է Աւետարանս խաւճայ Յովանիսին, եղբաւրն՝ Յուղությունի, հաւրն՝ Ինապին, մաւրն՝ Չատային, ի դուռն Սուրբ Թումայ առաքելին վանքն, յիշաւղն ողորմի ասացէք. ամէն»:*

Հրատ. ***Sanjian,*** էջ 273:

* * *

Կարևոր ենք համարում հիշատակել նաև Նաղաշ Հովնաթանի՝ 1682 թ. ընդօրինակած զույգ ձեռագրերը, որոնցից մեկը բովանդակում է Հովսեփոս Փլավիոսի «Վասն հրեական պատերազմին» երկը, որի հիշատակարանում կարդում ենք. *«Գրեցաւ զսա ձեռամբ Յովնաթան դպրի ի գէողէն Շոռոթոյ եւ հայրն իմ ըզտէր Յոհանն՝ հանգուցեալն ի Քրիստոս...»*[10]: Հիշատակարանից պարզվում է, որ 21 տարեկանում Հովնաթանն արդեն կորցրել էր հորը, ինքն էլ Ագուլիսում դպիր էր և ձեռագրեր էր ընդօրինակում: Մյուս ձեռագիրը տաղարան է (ՄՄ 3628) և բովանդակում է Ներսես Շնորհալու, Ստեփանոս Օրբելյանի, Կարապետ վարդապետի, Առաքել Բաղիշեցու, Ներսես Լամբրոնացու չափածո ծավալուն գործերը: Ուսումնասիրողների կարծիքով՝ այս ձեռագիրը ևս ընդօրինակվել է Ագուլիսում. *«Յիշեցէ՛ք զգրիչ Յովնաթանս, և դուք յիշեալ լիջի՛ք, թվ. ՌՃԼԱ (1682)»* (545բ):

Տեղին է վկայակոչել նաև Նաղաշ Հովնաթանի հեղինակած տաղերից երկուսը: Դրանցից մեկը գրված է Գողթնի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսի մահվան, երկրորդը՝ Ս. Թովմա առաքյալի վանքի զանգակատան կառուցման առիթով.

[10] Ձեռագրի մասին ակնարկել և հիշատակարանն առաջին անգամ հրատարակել է Հ. Ղևոնդ Ալիշանը (Սիսական, էջ 329, 331, նկ. 97): Ներկայումս Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարանի հավաքածուում է՝ Վնտկ ձեռ. Հմր 1407/1626. ձեռագրացուցակի հ. Ը., էջ 499-504:

ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆ ՅԱՂԱԳՍ ՄԱՀՈՒԱՆ ՏԵԱՌՆ ՅՈՀԱՆՆՈՒ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ՝ ԱՌԱՋՆՈՐԴԻՆ ԳՈՂԹՆԵԱՑ ՆԱՀԱՆԳԻՆ՝ Ի ՆԱՂԱԾ ՅՈՎՆԱԹԱՆԷ ՇԱՐԱԴՐԵԱԼ

Յորդորմամբ արտասուալից
Սիրտք մեր զարհուրեալ սասանին,
Զի այսօր լուաք ըզմահ
Յովհաննու Աստուածաբանին,

Որ էր նստեալ տեղապահ
Գողթնեաց հոգևոր իշխանին,
Այսօր խոտընն ցամաքեաց,
Թօթափեաց ծաղիկ շուշանին:

Վարդապետ և քաջ հովիւ,
Մտեր ի հող գերեզմանին.
Այսօր ցրուեցան ոչխարքն՝
Ըստ մարգարէական ձայնին:

Նման անուամբ և բանիւ
Յովհաննու Ոսկեբերանին,
Սիրող Փրկչին Յիսուսի
Եւ պահող սուրբ պատուիրանին:

Աղբիւր անըսպառ էիր,
Քարոզող դու կենաց բանին,
Բացատրող խորին գրոց
Եւ սրբոյ Աւետարանին:

Թովմայի անուամբ տաճար,
Խորհրդով Նոյան տապանին,
Կազմեցեր բարձր և պայծառ,
Նման լուսեղէն խորանին:

Աւա՜ղ և եղուկ ասեմ՝
Զքո աշակերտացն երամին.
Եւ ժողովրդեան գնդին,
Որք ի սուրբ հօրէդ բաժանին:

Նաղաշըն հոգւով ցանկայ
Տեսանել զՅովնան ռաբունին,
Երեսն արտասուօք դընել
Ի վերայ սրբոյ տապանին:

Ելից երկիրս ամենայն
Ըզհամբաւ քաջութեան քոյին,
Ո՛վ հայր, խնդրեա ի Տեառնէ,
Պահել զաթոռ զվիճակ նորին[11]:

ՏԱՂ Ի ՎԵՐԱՅ ՁԱՆԳԱԿԱՏԱՆ ՎԱՆԻՑ
ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ ԹՈՎՄԱՅԻ, ՈՐ Ի ՅԱԳՈՒԼԻՍ

Յէից լուսոյն ծագեաց մեզ լոյս,
Իմաստութիւնըն Հօր Յիսուս.
Ձմեղս մեր խաչիւն բառնայ ի յուս,
Մեզ հաստատէ հաւատ և յոյս:

Որ զնոյն սիրովն ճշմարտական
Վառեալ այժմոյս տէրըն Յոհան,
Կանգնեաց տաճարըն հրաշազան՝
Թովմայ առաքելոյ անուան:

Երկուց ամաց ետ կատարման,
Արկեալ զձեռն զանգակատան,
Ձոր շնորհիւ Սուրբ Հոգւոյն փչման,
Ձնոյն ևս հասոյց փոյթ ի վախճան:

Կարգն առաջին գաւիթս տան Տեառն,
Հաստակառոյց իբրև ըզլեռան,
Գոյնզգոյն ծաղկեալ ոսկէխառն,
Իբրեւ զուարճ գարուն, ամառն:

Կարգըն երկրորդ կանգնեալ սեղան,
Տաճար Աստուածածնի անուան,
Քրիստոնէիցըս պահապան,
Ընդդեմ դիւաց զէն և վահան:

[11] ***Նաղաշ Հովնաթան,*** Տաղեր, աշխատասիրությամբ՝ ***Ա. Մնացականյանի,*** Երևան, 1983, էջ 193-194:

Ի սմա մատչի միշտ պատարագ,
Նովաւ լինի հոգւոց ճարակ.
Սա է պարիսպ, բարձր աշտարակ,
Յուսացելոց օգնէ արագ:

Կարգըն երրորդ հնչէ ըզձայն,
Գաբրիէլեան փողոյն նման.
Ձարթուցանէ զամենեսեան՝
Փառըս տալ սուրբ Երրորդութեանն:

Հայցեա, սուրբ կոյս, դու առ Հօր բան՝
Պահել զտաճարս այս անսասան,
Եւ ռաբունիս մեր տէր Յոհան՝
Հանդերձ մանկամբք միանգամայն[12]:

[12] ***Նաղաշ Հովնաթան,*** նշվ. աշխ., էջ 208-209:

ՎԻՇԱՊ-ՕՁԻ ՊԱՏԿԵՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՐԴԱՐԱՏԱՐՐԵՐՈՒՄ

(համառոտ ակնարկ)

Հայ միջնադարյան եկեղեցական ճարտարապետությունը, իր հորինվածքային լուծումներից զատ, ներկայանալի է նաև որմերի քանդակային-գեղարվեստական տարատեսակ հարդարատարրերով, որոնց շարքում իրենց անզուգական տեղն ունեն վիշապ-օձերի պատկերաքանդակները[1]: Թեմային նվիրված սույն համառոտ ակնարկն առավելապես նվիրված է հիշյալ պատկերագրության քանդակային վկայություններին, որոնք հեղինակը փորձել է համադրել ինչպես միջնադարյան (Առինջ, Անի, Եղեգիս և այլն), այնպես էլ ավելի ուշ շրջանից հայտնի (Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցի, Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատուն և այլն) հուշարձանների նմանօրինակ պատկերաքանդակներին (Ա. Հ.):

Օձամարմին վիշապներով համակցված հորինվածքները հայտնի են դեռևս ուրարտական մշակույթից (մ.թ.ա. IX-VI դդ.), որտեղ, ի տարբերություն քրիստոնեության մեջ վկայված օրինակների, օձերի գլուխներն ուղղված են դեպի կենտրոն, դեպի իրենց կողմից պահպանվող «կենաց ծառը»: Ըստ հնագետ, մշակութաբան Համլետ Պետրոսյանի՝ այս (երկրորդ) հորինվածքն իր ակունքներով կապված է հայոց մեջ հնուց հայտնի «կենսատարածքի և կենսընթացի այգային ընկալման» (որը քրիստոնեական շրջանում վերաձևակերպվեց որպես «կորուսյալ դրախտ») և նրա պահպանման խորհրդի հետ: Քննելով այս հորինվածքի պատկերագրական ակունքները՝ Հ. Պետրոսյանը հատկանշում է երկու կողմից

[1] Վերջերս վիշապ-օձի պատկերագրական և խորհրդաբանական առանձնահատկությունները քրիստոնեական քանդակային արվեստում հատուկ ուսումնասիրել է արվեստաբան Լիլիթ Միքայելյանը (տե՛ս ***Լ. Միքայելյան,*** Վիշապ-օձի կերպարը Հայաստանի X-XIV դդ. քանդակում. պատկերագրությունը և խորհրդաբանական եզրերը քրիստոնեական մշակույթի համատեքստում, «Վիշապը հեքիաթի և իրականության սահմանին», խմբ.՝ ***Ա. Բոբոխյան*** և այլք, Երևան, 2019, էջ 398-413) – Ա. Հ:

վիշապ-օձերով պաշտպանվող ծառային հորինվածքի պատկերագրությամբ որոշ առարկաներ (Արևմտյան Հայաստանում գտնված ձիու ճակատազարդը՝ մ.թ.ա. VIII-VII դդ., Սարդուրի Բ-ի սաղավարտը՝ մ.թ.ա. 760-730-ական թթ., քրիստոնեական դարաշրջանին վերաբերող վիշապագորգեր, խաչքարերի օձակերպ արմավազարդեր ևն), որոնց թեմատիկ (պահպանման) առումով հարում է բացառապես երկու վիշապ-օձ պատկերող առարկաների մեկ այլ խումբ (մ.թ.ա. VI դարից հայտնի ապարանջաններ, քրիստոնեական շրջանում տարածում գտած վարդապետական և եպիսկոպոսական գավազանների օձակերպ գլխամասեր ևն)[2]: Նշված բոլոր հուշարձաններում վիշապ-օձերը, անկախ նրանց միջև պատկերված առարկայի բնույթից (որը կարող էր և, առհասարակ, պատկերված չլինել), հանդես են գալիս որպես պահապան ուժեր:

Վիշապ-օձերի պատկերաքանդակներ են պահպանվել նաև միջնադարյան եկեղեցական և աշխարհիկ կառույցների որմերին: Այսպես. Առնջավանքի շրջապարսպի մուտքի բարավորի (XII-XIII դդ., նկ. 1)[3], Անիի հյուրանոցի հարավային շքամուտքի վերնամասի (XII-XIII դդ.) և Տիգրան Հոնենցի կառուցած եկեղեցու որմնախորշի (1215 թ., նկ. 2) հարդարանքում տեղ են գտել միմյանց նայող վիշապ-օձերի պատկերաքանդակներ, կամ Անի քաղաքի Շանուշի և Մամախաթունի աշտարակներին (երկուսն էլ վերակառուցված 1210-ական թթ.) տեսնում ենք երկու օձերի միջև քանդակված ցլեր[4], իսկ Եղեգիսի Ս. Նշան եկեղեցու (XIII դ., նկ. 3) հարավային լուսամուտը «գրկել» են միահյուսված և գլուխները միմյանց հակառակ ուղղած վիշապ-օձեր:

---

[2] ***Հ. Պետրոսյան,*** «Հայաստան - դրախտ կորուսյալ». հայ ինքնության մի հարացույցի ձևավորման ակունքները, «Ինքնության հարցեր», Երևան, 2002, էջ 160-162:

[3] Վերջերս Առնջավանքի օձամարմին վիշապներով բարավորին և նրա թվագրությանն անդրադարձել է լուսահոգի Սամվել Կարապետյանը (***Ս. Կարապետյան,*** Առինջ գյուղի պատմական հուշարձանները, Երևան, 2015, էջ 29-30) – Ա. Հ.:

[4] Այս հորինվածքը պատկերագրական առումով հիշեցնում է Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս եկեղեցու (895-906 թթ.) խորշերի և լուսամուտների արտաքին կամարակապ քիվերի քանդակները, որտեղ ցլերին փոխարինում են դիմաքանդակները: Դրանք, ըստ Ստ. Մնացականյանի, խորհրդանշում են եկեղեցու շինարարությանը նպաստած մեկենասներին՝ Սյունյաց Աշոտ գահերեց իշխանին, Շուշան իշխանուհուն, Գրիգոր Սուփանին և Բաղքի Զագիկ իշխանին (տե՛ս ***Ստ. Մնացականյան,*** Հայկական ճարտարապետության Սյունիքի դպրոցը, Երևան, 1960, էջ 206-208) – Ա. Հ.:

Տաթևի վանքից հայտնի դարձած Եղիա վարդապետի (ճարտարապետ, քարգործ) անվանակիր նորահայտ կոթողի առնչությամբ վերջերս այս խնդրին մենք ևս անդրադարձել ենք (տե՛ս ***Ա. Հարությունյան,*** Տաթևի վանքի Ս. Պողոս-Պետրոս տաճարի պատկերաքանդակները և դրանց հավանական վարպետը, «Պատմաբանասիրական հանդես», 2021, թ. 1, էջ 145-158):

Նկ. 1. Առնջավանքի շրջապարսպի մուտքի բարավորի վիշապ-օձերը, XII-XIII դդ. (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

Նկ. 2. Վիշապ-օձեր. Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ (Տիգրան Հոնենց) եկեղեցի, 1215 թ. (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2019 թ.)

Չկորցնելով իր խորհուրդը՝ խնդրո առարկա հորինվածքը զարգացում է ապրում նաև ուշ միջնադարում, մասնավորապես՝ XVII դարում, որպիսիք հայտնի են Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու, Ս. Էջմիածնի Մայր տաճարի արևմտյան կամ մեծ զանգակատան (1654-1658 թթ.), Քանաքեռի Ս. Հակոբ եկեղեցու (արևելյան ճակատի վերնամասում քանդակված է օձերով պաշտպանվող դրախտային այգին, 1695 թ.)

Նկ. 3. Վիշապ-օձեր. Եղեգիսի Ս. Նշան եկեղեցի, XIII դար (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2021 թ.)

որմնաքանդակներից: Մաղարդավանքի համալիրի գլխավոր՝ Ս. Ստեփանոս գմբեթավոր եկեղեցու թմբուկի նիստերը բաժանող գալարաձև տասնվեց սյուները պսակվում են օձամարմին վիշապների՝ հակադիր զույգ գլուխներով (նկ. 4), իսկ Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան հարդարատարրերն ուղղակի «հեղեղված» են վիշապաքանդակների տարբեր հորինվածքներով (նկ. 5). այստեղ՝ Սրբոց Հրեշտակապետաց խորանի հյուսիսային և հարավային լուսամուտներին, ներկայացված են երկու կողմից խաչը պահած, զանգակատան երկրորդ հարկի մույթերին՝ դրախտային պարտեզը պահպանող վիշապ-օձերը, իսկ առաջին հարկի մույթերի անկյունային հատվածների պարուրաձև սյուները պսակված են առյուծների, ցլերի, արծիվների և օձերի գլուխներով: Նշվածներից երեքի ներկայությունը կարծես հուշում է Մարկոս, Ղուկաս և Հովհաննես ավետարանիչների խորհրդանիշների մասին, սակայն օձերի

Նկ. 4. Մաղարդավանքի Ս. Ստեփանոս եկեղեցու թմբուկի հարդարատարրերը, XVII դար (լսնկ.՝ Ա. Ղույյանի)

առկայությունը (հրեշտակի փոխարեն) իսկույն հերքում է այդ վարկածը հօգուտ ներկայացվածների՝ պահպանիչ լինելու տարբերակի, առավել ևս, որ թե՛ առյուծին, թե՛ ցլին և թե՛ արծվին բնորոշ է պահապանի գործառույթը:

Ի դեպ, Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան նշված կենդանաքանդակները հայ արվեստում պահապան կենդանիների՝ կառույցի պատերի անկյունային հատվածներում հստակ թվագրությամբ քանդակված վաղագույն նմուշներն են: Միևնույն չորս կենդանիներին տեսնում ենք նաև Ցղնայի Ս. Աստվածածին եկեղեցու պատերի անկյունային հատվածների քանդակներում[5]: Ս. Աստվածածին եկեղեցու կառուցման տարեթիվը թեև հստակ չէ, բայց և այնպես այն XVII դարի երկրորդ կեսի կառույց է և, հաշվի առնելով վերջինիս և Ս. Թովմա առաքյալի վանքի՝ ժամանակով և տեղագրորեն բավական մերձ լինելը, ուսումնասիրողները հավանական են համարում, որ Ս. Թովմա առաքյալի տաճարի անկյու-

[5] ***Ա. Այվազյան,*** Նախիջևանի կոթողային հուշարձաններն ու պատկերաքանդակները, Երևան, 1987, էջ 38. ***Լ. Կարապետյան,*** Ցղնայի Սբ Աստվածածին եկեղեցու քանդակային հարդարանքը, «Պատմա-բանասիրական հանդես», 2019, թ. 3, էջ 108-110:

նային կենդանաքանդակների համար նախադեպ են ծառայել հենց Ցղնայի Ս. Աստվածածին եկեղեցու համանման օրինակները: Այստեղից հետևություն, որ Ս. Թովմա առաքյալի տաճարի մյուս երեք անկյուններին ևս քանդակված են եղել առյուծներ, արծիվներ ու ցլեր:



Նկ. 5. Մայր տաճարի զանգակատան միջնահարկի հարդարատարրերից, XVII դար (լսնկ.՝ Ա. Հարությունյանի, 2016 թ.)

Այսպիսով՝ վիշապ-օձերի պատկերաքանդակները հայ միջնադարյան արվեստում (Մաղարդավանք, Ցղնա, Ս. Թովմա առաքյալ, Ս. Էջմիածնի Մայր տաճար, Քանաքեռի Ս. Հակոբ և այլն) իմաստաբանորեն խորհրդանշում են վաղուց ի վեր հայոց մեջ արմատացած սրբազան տարածքի (տվյալ դեպքում՝ եկեղեցու) պահապաններին՝ օձակերպ վիշապներին, իսկ պատկերագրական առումով դրանք վիշապային սիմետրիկ հորինվածքի «կենտրոնախույս» տարբերակն են, երբ վիշապ-օձերը նայում են ոչ թե կենտրոնական հատվածի կենաց ծառին, խաչին (պայմանականորեն կարելի է անվանել «կենտրոնամետ տարբերակ») կամ միմյանց, այլ հակառակ ուղղություններով:

ՏՐԱՊԻԶՈՆԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ՎԱՆՔԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Տրապիզոնի հայկական հուշարձանները[1]

Տրապիզոնի հայկական հուշարձաններին առաջինն անդրադարձել է պատմաբան, բանասեր, երաժշտագետ, բնիկ տրապիզոնցի Մինաս Բժշկյանցը (1777-1851 թթ.): Պոնտոսի պատմությանը նվիրված իր աշխատության մեջ նա նշում է, որ բուն քաղաքի սահմաններում եղել է հայկական չորս եկեղեցի՝ Ս. Աստվածամայր, Չարխափան կամ Ս. Ստեփանոս, Ս. Օգսենտ, Ս. Հովհաննես, իսկ քաղաքից ոչ հեռու՝ Ս. Ամենափրկիչ վանքն ու Ս. Մամաս եկեղեցին[2]:

Տրապիզոնի հայոց հոգևոր կենտրոնը Ս. Ամենափրկիչ վանքն էր՝ կառուցված քաղաքի հարավարևելյան սահմանին՝ Մինթրիոն լեռան բլուրներից մեկի վրա (նկ. 1): Վանական համալիրը ներառել է Ս. Ամենափրկիչ գլխավոր եկեղեցին, գավիթը, զանգակատունը, երեք մատուռները, հարակից վանական ու տնտեսական կառույցները (առաջնորդարանի շենք, միաբանների և ուխտավորների սենյակներ և այլ շինություններ) և պարիսպները: Երբեմնի ծաղկուն վանքից ու գրչության կենտրոնից այսօր, ցավոք, քիչ բան է մնացել, սակայն պահպանված գլխավոր եկեղեցու, գավթի և Ս. Հովհաննես մատուռի որմնանկարները փաստում են, որ գործ ունենք XVI դարի երկրորդ և XVII դարի առաջին կեսերի հայ որմնանկարչության եզակի նմուշների հետ:

---

[1] Հոդվածի ընդարձակ տարբերակը Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարների ուսումնասիրության առիթով հեղինակը հրատարակել է ավելի վաղ (տե՛ս ***Ա. Ավետիսյան,*** Տրապիզոնի Հայոց Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարները, «Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ ***Կ. Մաթևոսյան,*** Երևան, 2019, էջ 125-151, նկ.՝ 361-365) – Ա. Հ.:

[2] ***Մինաս վրդ. Բժշկեանց,*** Պատմութիւն Պոնտոսի, որ է Սեաւ ծով, Վենետիկ, 1819, էջ 79-85:

Պատմությունը

Վանքում պահպանված շինություններից հնագույնները՝ գլխավոր եկեղեցին և Ս. Հովհաննես մատուռը, կառուցվել են խոջա Ստեփանոսի[3] նախաձեռնությամբ, համապատասխանաբար՝ 1422 և 1424 թթ.[4]: Խոջա Ստեփանոսը նաև հսկայական տարածքներ է գնել և նվիրաբերել նույն վանքին:

Նկ. 1. Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից, XIX դարի վերջ (լսնկ.՝ անհայտ)

Կա տեսակետ, թե հայերն այստեղ, նախքան Ս. Ստեփանոս եկեղեցու կառուցումը, ունեցել են մենաստան: Այս առումով նախ պետք է նշել իսպանացի դիվանագետ և ճանապարհորդ Ռույ Գոնսալես դե Կլավիխոյի

[3] Ստեփանոսի մականվամբ վանքը կոչել են նաև «Շեմսեդլի» կամ «Շամշադինի վանք» (տե՛ս ***Մինաս վրդ. Բժշկեանց,*** նշվ. աշխ., էջ 82), իսկ օտար աղբյուրներում այն առավել հայտնի է «Քայմաքլի» (թրք. «Kaymakli»՝ սերուցքի կամ սերուցքային) անունով, որը կապված է այնտեղ պատրաստվող կաթնամթերքի հետ (***Th. Deyrolle,*** Voyage dans le Lazistan et l'Arménie, «Le Tour du Monde», Paris, 1875, premier semestre, էջ 24:

[4] Ս. Հովհաննես մատուռի կառուցման արձանագրությունը՝ փորագրված մուտքի վերնամասում, ամբողջովին պահպանվում է: Գլխավոր եկեղեցու կառուցման ընդարձակ արձանագրության (առաջին անգամ հրատարակվել է Բժշկյանցի վերոնշյալ աշխատության մեջ, էջ 83) քարի երկու բեկորներն այժմ պահվում են Տրապիզոնի՝ մզկիթի վերածված Ս. Սոֆիա հունական տաճարի թանգարանում:

(ծ. թ. անհայտ – 1412 թ.) մասին, որը Սամարղանդ կատարած ուղևորության ընթացքում (1403-1406 թթ.) եղել է նաև Հայաստանում[5]: 1404 թ. Տրապիզոն այցելած Կլավիխոն իր հուշերում գրում է, որ հայերն այնտեղ «ունեն մի յեպիսկոպոս և մի յեկեղեցի իրենց սեփական լեզվով»[6], այսինքն՝ վանքն իր հոգևոր առաջնորդն է ունեցել:

Ավելի ուշ Տրապիզոնի հայկական հուշարձաններին առավել հանգամանալից անդրադարձել է Ս. Էջմիածնի միաբան Աբել արք. Մխիթարյանցը, որը վկայաբերում է Ս. Ամենափրկիչ վանքում պահված և հետագայում Վենետիկի Մխիթարյան միաբանության մատենադարան փոխադրված մի ձեռագրի հիշատակարան (առանց մեջբերելու բովանդակությունը)՝ նշելով, որ դա փաստացի վկայությունն է այն մենաստանի երբեմնի գոյության, որին խոջա Ստեփանոսը նվիրաբերել է վանքն իր հարակից տարածքներով հանդերձ[7]: Ըստ Աբել արք. Մխիթարյանցի՝ Մինաս Բժշկյանցը Ս. Ամենափրկչի պատմությունը շարադրելիս մեծապես օգտվել է այդ ձեռագրի հիշատակարաններից, և հենց ինքն էլ ձեռագիրը տեղափոխել է Ս. Ղազար: Հակառակ սրան, ինչպես Ղևոնդ վրդ. Փիրղալեմյանը, այնպես էլ Մաղաքիա արք. Օրմանյանը կարծում են, որ վանքը հիմնել է Պետրոս Գետադարձ կաթողիկոսը[8], իսկ Կոմիտաս Հեքիմյանը, ավելի հեռուն գնալով, նշում է, որ վանքը եղել է նախքան Պետրոս Գետադարձը և վերջինս իբր իջևանել է այնտեղ[9]:

---

[5] Vida y Hasanas de Grand Tamerlan... escrita por ***Ruy Gonzalez de Clavijo***… con un itinerario de la succedito en la embajada. Sevilla, 1582. Այս աշխատությունը 1782 թ. վերահրատարակվել է, որից և թարգմանվել է ռուսերեն (***Рюи Гонзалес до Клавихо,*** Дневник путешествия ко двору Тимура в Самарканд..., подлинный текст с переводом и примечаниями. Сборник отделения русского яз. и словесности АН, т. XXVIII, N 1, СПб., 1871): Կա նաև անգլերեն թարգմանությունը. ***Clements Markhan,*** Narrative of embassy of... Ciavijo to the court of Timour, London, 1859. Hakluyt series, t. XXVI. Guy de Strange - Clavijo embassy to Tamerlan, London, 1928:

[6] ***Հ. Հակոբյան,*** Ուղեգրություններ, հ. Ա, ԺԳ-ԺԶ. դար (1253-1582), Յերևան, 1932, էջ 77:

[7] ***Աբէլ վրդ. Մխիթարեանց,*** Վէպ գաղթականութեան հայոց Տրապիզոնու, Կ. Պոլիս, 1857, էջ 32-33:

[8] ***Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան,*** Չորս ընկերք, որ է ճանապարհորդութիւն Վանայ մինչեւ Կոստանդնուպօլիս, Թիֆլիս, 1882, էջ 108. **Մաղաքիա արք. Օրմանեան,** Ազգապատում, հ. Ա, Ս. Էջմիածին, 2001, սյուն 1407:

[9] ***Կ. Հէքիմեան,*** Տեղեկութիւն ի վերայ Ամենափրկիչ սուրբ վանուցս - ի Տրապիզոն, «Բազմավէպ», 1901, թ. 6, էջ 273:

Հետագա տարիներին գլխավոր եկեղեցու հյուսիսարևմտյան կողմում կառուցվում են եռահարկ զանգակատունն ու Ս. Աստվածածին և Ս. Երրորդություն մատուռները, իսկ վանքի շուրջը վանական և տնտեսական շինություններն են[10]:

Վանքի հիմնադրման սկզբնական շրջանից սկսած՝ այստեղ ծաղկում է ապրել նաև գրչարվեստը[11]: Ցավոք, 1461 թ. սուլթան Մեհմեդ II-ի կողմից Տրապիզոնը գրավվելուց հետո խաթարվում է վանքի, նաև գրչության կենտրոնի գործունեությունը: Թե ինչ վնասներ է կրել վանքը 1460-ական թթ., ստույգ տեղեկություններ չկան, սակայն հայտնի է, որ ավերածություններ եղել են նաև Մեհմեդի թոռան՝ սուլթան Սելիմ I-ի օրոք (1512-1520 թթ.)[12]:

Խոջա Ղարայի մեկենասությամբ հավանաբար XVI դարում գլխավոր եկեղեցու արևմտյան պատին կից կառուցվում է գավիթը, որին էլ ավելի ուշ կցվում է փոքր նախասրահը (արևմուտքից): 1593 թ. Հակոբ եպիսկոպոսի պատվերով վանքում որմնանկարչական աշխատանքներ են իրականացվում, ինչը շարունակվում է նաև Հակոբին հաջորդած Ավետիս եպիսկոպոսի օրոք՝ 1622 թ.:

1609 թ. վանք է այցելում Տրապիզոնի առաջին քարտեզի հեղինակ Ժյուլիեն Բորդիեն, որն այդ ժամանակ Կոստանդնուպոլսում Ֆրանսիայի դեսպանի օգնականն էր: Նա գրում է. «Միջին չափսերի եկեղեցին ներսից պատված է չարչարանքների տեսարանների, նաև առաքյալների, սրբերի և հին շրջանի անձանց զանազան նկարներով»[13]:

Հետագա դարերի կառուցումները վերաբերում են առավելապես հարակից վանական և տնտեսական շինություններին և որոշ մասով նաև հոգևոր կառույցների վերանորոգումներին: Այսպես, ըստ պահպանված որոշ տեղեկությունների՝ խոջա Ղարայի դուստրը՝ Սուրաթ խա-

---

[10] Գլխավոր եկեղեցու կառուցման արձանագրության մեջ հիշատակվում է նաև Ս. Կարապետ մատուռի մասին, որը, ըստ ամենայնի, նույն Ս. Հովհաննեսն է: Աբել արք. Մխիթարյանցը, սխալ կարդալով Ս. Հովհաննես մատուռի կառուցման արձանագրությունը, մատուռը կոչում է Ս. Հարություն, իսկ Ս. Կարապետն էլ համարում է կա՛մ չորրորդ մատուռ, որը հետագայում քանդվել է, կա՛մ զանգակատան երկրորդ հարկի մատուռը, որը, ըստ Բժշկյանցի, նվիրված էր Ս. Երրորդությանը (***Ա. Մխիթարեանց,*** նշվ. աշխ., էջ 36, 122-123):

[11] **Հ. Ոսկեան,** Սեբաստիայի, Խարբերդի, Տիարպէքիրի եւ Տրապիզոնի նահանգներու վանքերը, Վիեննա, 1962թ, էջ 229:

[12] Ըստ Մխիթարյանցի՝ քանդվում են զանգակատունն ու գլխավոր եկեղեցու տանիքը, որը հետագայում դառնում է փայտածածկ (***Ա. Մխիթարեանց,*** նշվ. աշխ., էջ 33-34, 117-118):

[13] ***J. Bordier,*** Relation d'un voyage en Orient, “Archeion Pontou”, N 6, 1935, էջ 127:

թունը, նորոգել է վանքի պարիսպը, պարոն Խոճիքը՝ գավթի տանիքը, Խոջա Բաղդասարը՝ զանգակատունը[14], իսկ Հայոց 1138 թ. (= 1689 թ., Բրայերը սխալմամբ գրում է 1688 թ.) կառուցվում է հարավարևելյան մասնաշենքը[15]:

XIX դարասկզբից վանքի երբեմնի ստվար միաբանությունն աստիճանաբար սկսում է քանակապես նվազել, ապա՝ ցրվել[16]: 1831 թ., երբ նոր էր սկսվել թուրք-եգիպտական առաջին պատերազմը, քաղաքները կողոպտող ելուզակներին դիմագրավելու նպատակով Սալեհյան Ալի աղան վանքը վերածում է զորամասի. շինությունները դառնում են ննջարաններ, մեծ վնաս է հասցվում հատկապես որմնանկարներին[17]:

Ֆրանսիացի նկարիչ Թեոֆիլ Դեյրոլի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ իր այցելության ժամանակ (1869 թ.) վանքը դեռևս գործել էր[18], իսկ 1880-ական թթ. սկզբին այն արդեն բարձիթողի վիճակում էր, չուներ միաբանություն[19]: XIX դարավերջին սրբավայրը կառավարվում էր «հատուկ հոգաբարձության» միջոցով[20]: Դատելով հին լուսանկարներից՝ կարելի է ասել, որ, այնուամենայնիվ, XIX դարավերջին համալիրի բոլոր հիմնական շինությունները դեռ կանգուն են եղել:

Ս. Ամենափրկիչ վանքը թալանվում է 1895-1896 թթ. Համիդյան ջարդերի, այնուհետ՝ Մեծ եղեռնի տարիներին: 1916 թ. ռուսական զորքերի կողմից Տրապիզոնի գրավումից հետո փոքրաթիվ հայեր վերադառնում են քաղաք, սակայն 1918 թ. ապրիլին, երբ ռուսական զորքերը թողնում են Տրապիզոնը, նրանց հետ հեռանում են նաև վերջին հայերը՝ թողնելով նաև վանքը:

---

[14] ***Մինաս վրդ. Բժշկեանց,*** նշվ. աշխ., էջ 84:

[15] ***A. Bryer, D. Winfield,*** The Byzantine Monuments and Topography of the Pontos, vol. I, Washington, 1985, էջ 208, ***Α. Μήλλας,*** Τραπεζούς: στα ίχνη των Μεγάλων Κομνηνών, τ. Β΄, Αθήνα, 2008, էջ 107: Մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում աստվածաբան Գևորգ Ղազարյանին՝ վերջին աշխատության՝ Ս. Ամենափրկիչ վանքին վերաբերող հատվածները հունարենից թարգմանելու համար:

[16] Կարելի է ենթադրել, որ վանքի գործունեության թուլացումը սկսվել է 1765-1772 թթ. «Տերեպեկների պատերազմի» շրջանից, երբ ըստ Մխիթարյանցի՝ Տրապիզոնի գրեթե բոլոր քրիստոնյաները լքում են քաղաքը: Եվ չնայած որ Ամենափրկիչ վանքի մասին առանձին չի հիշատակվում (Մխիթարյանցը նշում է Ս. Օգսենտ, Չարխափան և Ս. Հովհաննես եկեղեցիների լքման մասին միայն), աներկբա է, որ այն չէր կարող անմասն մնալ նման արհավիրքից (***Ա. Մխիթարեանց,*** նշվ. աշխ., էջ 45-46):

[17] ***Կ. Հէքիմեան,*** նշվ. աշխ., էջ 277:

[18] ***T. Deyrolle,*** Voyage ..., էջ 24:

[19] ***Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան,*** նշվ աշխ., էջ 108:

[20] ***Տրդատ եպս. Պալեան,*** Հայ վանօրայք ի Թուրքիա, Իզմիր, 1914, էջ 176: Տե՛ս նաև «Բիւզանդիոն», 1901, ապրիլ 23 - 6 մայիս, թ. 1386, էջ 1:

1929 թ., երբ Մեսսելյան գիտարշավի շրջանակներում Տրապիզոն է այցելում բրիտանացի բյուզանդագետ Դևիդ Թալբոթ Ռայսը, վանքն արդեն գտնվում էր տեղի բնակիչների տիրապետության ներքո (նկ. 2): Հրդեհի բաժին էին դարձել արևմտյան շինությունները, քանդվել էին գլխավոր եկեղեցու և գավթի տանիքները[21]:

Նկ. 2. Ս. Ամենափրկիչ վանքը 1929 թ. դրությամբ, (լսնկ.՝ Դևիդ Թալբոթ Ռայսի)

Հետագայում Տրապիզոնի սահմանների ընդլայնման հետևանքով Ս. Ամենափրկիչ վանքը հայտնվում է քաղաքի Չուկուրչայըր (թուրք. Çukurçayır) արվարձանային թաղամասում: Բնակիչները գլխավոր եկեղեցին պահեստի վերածելու նպատակով 1961 թ. վերականգնում են փայտե ծածկը[22], իսկ 2000-ական թթ. սկզբին այն փոխարինում են մետաղյա ծածկով: Ներկայումս համալիրից մնացել են միայն գլխավոր եկեղեցին, Ս. Հովհաննես մատուռը, զանգակատան առաջին հարկը և վանքի հարավային թևում գտնվող շինությունների մի մասը. բոլորն էլ մինչև 2013 թ. օգտագործվել են որպես պահեստներ: 2015 թ. արված լուսանկարներում նկատելի է որոշակի փոփոխություն. գլխավոր եկեղեցու

[21] ***D. Talbot Rice,*** Notice on Some Religious Buildings in the City and Vilayet of Trebizond, «Byzantion», vol. 5, N 1 (1929-1930), էջ 63:
[22] ***A. Bryer, D. Winfield,*** The Byzantine Monuments..., էջ 209:

ներսը համեմատաբար բարվոք վիճակում է, տեղադրված են մետաղյա դռներ, բացատրական երկլեզու (անգլերեն և թուրքերեն) ցուցանակներ և այլն, ինչը հույս է ներշնչում, որ պետական մարմինները մտադրություն ունեն պահպանելու այս հուշարձանը:

Հուշարձանախմբի ճարտարապետությունը

Ս. Ամենափրկիչ վանքի կազմում հետևյալ կառույցներն են.

գլխավոր եկեղեցի - կառուցված 1424 թ. խոջա Ստեփանոսի նախաձեռնությամբ.

գավիթ - կից է գլխավոր եկեղեցուն արևմուտքից, կառուցվել է խոջա Ղարայի մեկենասությամբ հավանաբար XVI դարում[23]: Հիշատակարանում նշվում է պարոն Խոճիքի մասին, որը ծածկը փոխել է կղմինդրով[24]: Հետագայում գավթի արևմտյան պատին կից կառուցվել է նաև փոքր նախասրահ.

Ս. Հովհաննես մատուռ - կառուցվել է 1422 թ. խոջա Ստեփանոսի կողմից.

Ս. Աստվածածին մատուռ.

Ս. Երրորդություն մատուռ (զանգակատան երկրորդ հարկում էր).

եռահարկ զանգակատուն - կառուցողն ու կառուցման թվականն անհայտ են, ըստ հին հիշատակարանի՝ նորոգել է խոջա Բաղդասարը, «ներգևի խուցը»՝ Աստվածատուր աբեղան[25].

պարիսպներ - կառուցողն ու կառուցման թվականն անհայտ են, ըստ հին հիշատակարանի՝ նորոգել է խոջա Ղարայի դուստր Սուրաթ խաթունը[26].

վանական և տնտեսական շինություններ.

կաթնաղբյուր:

Գլխավոր եկեղեցին, որը երկու զույգ որմնամույթերով միանավ բազիլիկ է, գտնվում է համալիրի կենտրոնում: Այն արևելյան կողմում արտաքուստ շեշտված հնգանիստ խորանով և չորս մուտքերով (մեկը՝ հարավային կողմից, երեքը՝ արևմտյան) կառույց է, որի արտաքին խորանն ու արևմտյան երկու փոքր մուտքերը առավել հարիր են տվյալ դարաշրջանի հունական եկեղեցիներին: Ըստ հույն պատմաբան Ակիլաս Միլ-

[23] ***Մինաս վրդ. Բժշկեանց,*** նշվ. աշխ., էջ 84:
[24] Նույն տեղում:
[25] Նույն տեղում, էջ 82:
[26] Նույն տեղում, էջ 84:

լասի՝ գլխավոր եկեղեցին բնորոշ է Կոմնենոսյան շրջանի ճարտարապետությանը և հիշեցնում է Կուլե Բոյու բնակավայրի Ս. Ակինդինոս եկեղեցին: Հույն պատմագրի կարծիքով՝ խոջա Ստեփանոսի նախաձեռնած շինարարությունը սահմանափակվել է միայն գլխավոր եկեղեցու խորանով և գավթով, իսկ մյուս հատվածները գոյություն են ունեցել մինչև 1424 թ.[27]: Իրականում, ինչպես նշել ենք, գավիթը կառուցվել է խոջա Ստեփանոսից հետո խոջա Ղարայի մեկենասությամբ: Այդուհանդերձ, չենք կարող հերքել, որ գլխավոր եկեղեցին կարող է կառուցված լինել հունական տաճարի տեղում կամ նրա վերակառուցմամբ[28]:

Ըստ հին լուսանկարների՝ գավիթը գլխավոր եկեղեցու լայնության, մոտավորապես քառակուսի հատակագծով շինություն էր՝ դարձյալ հարավից մեկ, իսկ արևմուտքից երեք մուտքերով:

Ս. Հովհաննես մատուռը փոքր թաղածածկ շինություն է՝ կառուցված գլխավոր եկեղեցու հարավարևելյան կողմում:

Ս. Աստվածածինը մատուռներից ամենամեծն էր, կառուցվել է զանգակատան արևմտյան պատին կից, իսկ Ս. Երրորդություն մատուռը զբաղեցնում էր զանգակատան երկրորդ հարկը:



Նկ. 3. Ս. Ամենափրկիչ վանքի գլխավոր եկեղեցին արևմուտքից, հետնամասում՝ Ս. Հովհաննես մատուռը, 1990-ական թթ. (լսնկ.՝ անհայտ)

[27] ***Մինաս վրդ. Բժշկեանց,*** նշվ. աշխ, էջ 103:

[28] Ըստ Միլլասի՝ վանքի աշտարակը հաստատապես (որևէ աղբյուր չի նշում) գոյություն է ունեցել մինչև 1420 թ. (տե՛ս նույն տեղում, էջ 103):

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄԱՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐՈՒՄ

Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների ստվար մասը պահպանվել է XIX դարավերջի և XX դարասկզբի լուսանկարներում: Դրանք տեղ են գտել ժամանակի հոգևոր-մշակութային գործիչների, տեղագիրների և, առհասարակ, հնություններով հետաքրքրված անձանց աշխատություններում: Ստորև ներկայացնում ենք նրանցից մի քանիսին առնչվող կենսագրական դրվագներ և իրենց աշխատություններում ընդգրկված լուսանկարների ցանկեր:

ԿԵՍՏՆԵՐ

Գերմանացի գծանկարիչ է, որը, ըստ երևույթին, աշխատել է Պետերբուրգի գիտությունների ակադեմիայում: Ըստ Լեոյի՝ ռուս գիտնական «Խանիկովի հետազոտությունն էլ նախորդ ճանապարհորդների վկայությունները հաստատելով՝ հասկացնել էր տալիս, որ Անին հետաքրքրական նյութերի մի մեծ գանձարան է: Կովկասյան այն ժամանակվա փոխարքան՝ իշխան Վորոնցովը, չէր կարող առանց ուշադրության թողնել այդ հանգամանքը: Բրոսսեի հաղորդմամբ՝ իշխանը տեսնելով Անիի պատմական մեծ հարստությունը և համոզվելով, որ օգտակար կլինի շարունակել նրա հետազոտությունը, 1849 թ. Անի է ուղարկում ճարտար գծագրիչ Կեստներին: Վերջինս վեց շաբաթ ապրեց Անիի ավերակների մեջ ու մի հարուստ ալբոմ կազմեց, որը բաղկացած էր թե՛ շինությունների պատկերներից և թե՛ արձանագրությունների ընդօրինակություններից: Թերևս ոչ ոք մինչ այդ չէր հեղինակել նման հարուստ մի ժողովածու: Վեց շաբաթը բավական մեծ ժամանակ էր ամեն ինչ լավ ուսումնասիրելու և տեղում թղթին հանձնելու համար: Կեստները վերադառնում է Թիֆլիս՝ իր հետ բերելով 65 նկար և 42 արձանագրություն:

Արձանագրություններն իշխան Վորոնցովի հրամանով հանձնվեցին Բրոսսեին, որն այդ առիթով մի ուսումնասիրություն տպագրեց «Кавказ» լրագրում (1852 թ., թ. 18-21): Սակայն դրանով չսպառվեց հանգուցյալ

հայագետի գործը: Իր այլ հնագիտական աշխատությունների մեջ էլ նա (Մ. Բրոսսեն – Ա. Հ.) խոսել է Անիի մասին, իսկ 1860 թ. Պետերբուրգում հրատարակել է ֆրանսերեն երկհատոր հետազոտություն՝ «Les ruines d'Ani, Capitale de l'Arménie sous les rois Bagratides» վերնագրով: Գրքում զետեղված է երկու ատլաս, ուր կա 45 թերթ պատկեր՝ արված Կեստների կողմից: Բրոսսեի այդ աշխատությունն այնքան լիակատար է, որ հայ հետազոտողների համար ևս մեծ արժեք ունեցավ»[1]:

ՊԵՐՃ ՊՈՌՇՅԱՆ

Հայ լուսանկարչական արվեստի ուրույն ճյուղերից է պատմական հուշարձանների լուսագրումը, որն ունի մոտ մեկուկեսդարյա պատմություն և իր սկզբնավորմամբ թերևս պարտական է Պերճ Պռոշյանին:

Այսօր քչերը գիտեն, որ նշանավոր արձակագիր Պերճ Պռոշյանը (1837-1907 թթ.) եղել է Արևելյան Հայաստանի առաջին լուսանկարիչներից մեկը 1860-ականներին: Կարծիք կա, որ լուսանկարչական գործի հիմունքները նրան սովորեցրել է թիֆլիսեցի մի հոգևորական այն մտադրությամբ, որ կհաջողվի երիտասարդ գրողի հետ մեկտեղ լուսանկարել հայկական պատմական հուշարձաններն ու արձանագրությունները: Ու թեև նրանց մեծ ծրագիրը ձախողվում է, սակայն Պռոշյանը շարունակում է հմտանալ այդ ոլորտում՝ մտադրվելով այն գործածել «կոմերցիոն» նպատակներով: Նա նույնիսկ լուսանկարչական սալոն է բացում՝ իր գործերի վրա հպարտորեն դրոշմելով «Պերճ Աշտարակեցի» ապրանքանշանը:

1907 թ. Հովհաննես Թումանյանը Պերճ Պռոշյանի մահվան առիթով գրած «Վիրավորական հարգանք» խորագրով հոդվածում նշում է, որ վիպասանը «եղել է թեմական տեսուչ, ուսուցիչ, լուսանկարիչ, վերջապես ամենասոսկալին. մի քանի օրով, ի միջի այլոց, ածուխի առուտուր է սկսել և տեսել է օգուտ չի անում, թողել է...»[2]: Իսկ Շիրվանզադեն «Կյանքի բովից» հուշագրության էջերում Պռոշյան լուսանկարչի մասին հետևյալ դրվագն է պատմում. «Մի ժամանակ Պռոշյանը Երևանում ածխավաճառ էր եղել, հետո լուսանկարիչ, հետո էլ՝ չգիտեմ ինչ: Նրա

[1] ***Լեո,*** Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, Երևան, 1963, էջ 39-40 (խմբագրված – Ա. Հ.):

[2] ***Հովհ. Թումանյան,*** Երկերի ժողովածու, հ. չորրորդ, Քննադատություն և հրապարակախոսություն, Երևան, 1969, էջ 58:

լուսանկարչական կյանքից պատմում էին հետևյալը: Ռուս-թյուրքական պատերազմին 1876 թ. մի օր Պռոշյանի արհեստանոցն են մտնում լուսանկարվելու 10-12 շարքային զինվորներ:

– Խմբովի՞ն եք ուզում նկարվել, թե՞ առանձին-առանձին,- հարցնում է Պռոշյանը:

– Առանձին-առանձին:

Պռոշյանը, տեսնելով որ այդքան մարդկանց լուսանկարները զատ-զատ նկարելը շատ ժամանակ պիտի խլի, դիմում է խորամանկության: Նա լուսանկարում է զինվորներից միայն մեկին և ասում է.

– Առաջիկա կիրակի եկեք, բոլորիդ լուսանկարները պատրաստ կլինեն:

Հաջորդ կիրակի զինվորները գալիս են, և Պռոշյանը, յուրաքանչյուրին տալով վեցական օրինակ մի հոգի զինվորի լուսանկարից, հարցնում է.

– Հավանո՞ւմ ես, տես ինչքան նման է քեզ:

– Շատ նման է ինձ, շատ նման,- պատասխանում է ամեն մեկը:

Զինվորները հեռանում են գոհ սրտով:

Այս անեկդոտի եղելությունը Պռոշյանը չէր հերքում»[3]:

Պռոշյանից ժառանգված ոչ մեծ թվով լուսանկարներ (հիմնականում դիմանկարներ) պահվում են Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում, Աշտարակի Պերճ Պռոշյանի տուն-թանգարանում և Մաշտոցյան Մատենադարանում:

Մատենադարանում պահվող մեծարժեք լուսանկարը Հառիճավանքինն է՝ մակագրված «Մէնաստան Հառիճոյ»[4] (նկ. 1): Լուսանկարի ստորին ձախ կողմում կա գրություն՝ «Լուս. Պերճ Պռօշեանց», աջ կողմում թվականն է՝ «1972»: Սա մինչ այժմ մեզ հայտնի հնագույն լուսանկարն է, որ պատկերում է հայկական պատմաճարտարապետական որևէ հուշարձան: Լուսանկարի դարձերեսին ևս կա մակագրություն.

«Նորին վեհափառու[թեան] սրբազնակատար կաթուղիկոսի

Ամ[ենայն] Հայոց Տեառն Տեառն Գէորգայ Դ-ի

նուիրում է ամենախոնարհ որդի նորա Պերճ Պռօշեանց….»:

Ըստ որոշ տեղեկությունների՝ Պռոշյանը 1870-ականների վերջերին մի կողմ է դնում իր թանկարժեք սարքը՝ լիովին նվիրվելով գրականությանը:

---

[3] ***Շիրվանզադե,*** Կյանքի բովից, Երկերի լիակատար ժողովածու, հ. ութերորդ, Երևան, 1951, էջ 183-184:

[4] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հ^{մր} 516:

Նկ. 1. Հառիճավանք (լսնկ.՝ Պերճ Պռոշյանի, 1872 թ.)

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՔՅՈՒՐՔՉՅԱՆ

1870-ական թվականներից երևան է գալիս մեկ այլ լուսանկարիչ՝ մասնագիտական միանգամայն այլ որակներով օժտված Հովհաննես Քյուրքչյանը:

Քյուրքչյանի կյանքի և գործունեության մասին կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Ըստ Արտաշես Շահնազարյանի՝ նա, 1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ ծառայելով ռուսական բանակում, եղավ միջնադարյան Հայաստանի մայրաքաղաք Անիում և ըստ արժանվույն գնահատելով նրա հրաշակերտ ճարտարապետական կոթողները՝ որոշեց պատեհ ժամանակ լուսանկարել դրանք: 1880-ական թթ. հենց սկզբներին նա կրկին այցելեց ռուսական տիրապետության տակ անցած Անի, այնտեղ կատարեց բազմաթիվ լուսագրում-

ներ և ապա դրանց մի մասը հրատարակեց: Մեկ տարի անց՝ 1881 թ., Քյուրքչյանին աշակերտելու եկավ Արամ Վրույրը (1863-1924 թթ.), ի դեմս որի՝ Քյուրքչյանն ունեցավ իր գործի արժանի շարունակողին[5]:

Լեոյի հաղորդած տեղեկությունները փոքր-ինչ ծավալուն են. «1879 թվականի ամառը Անի գնացողները տեսնում էին մի հայի, որ լուսանկարչական գործիքներով աշխատում էր ավերակների մեջ: Դա Հ. Քյուրքչյանն էր, որ անցյալ տարի վախճանվեց Ճավա կղզում[6]: Քյուրքչյանը, որ լուսանկարչական արվեստը սովորել էր արտասահմանում, դեռ պատերազմի ժամանակ գտնվում էր ռուսաց բանակում, իբրև լուսանկարիչ: Այդ ժամանակ նա տեսավ Անին և միանգամից հասկացավ, թե հմուտ լուսանկարիչը որքա՜ն գործեր ունի ավերակների մեջ: Նա մի քանի տեսարաններ վերցրեց, բայց չբավականացավ դրանցով: 1879-ին ամբողջ հինգ ամիս բնակվեց Անիի մեջ, ահագին ծախսեր արավ, ահագին չարչարանքներ կրեց և գլուխ բերեց մի գործ, որ հռչակեց նրա անունը:

Անիի մեջ ապրելու դեռ ոչ մի հարմարություն չկար, առաջվա պես միայն Մայր եկեղեցու մեջ կարող էր պատսպարվել այցելուն: Այդ դեռ ոչինչ. Քյուրքչյանին և նրա ծառաներին ավելի նեղում էր պաշարի պակասությունը: Շրջակա գյուղերում դժվար էր մի բան գտնել: 1879-ի ամառը չոր ու անպտուղ էր և սկիզբ դրեց հանրածանոթ սովին: Այս բոլոր նեղությունները տարավ Քյուրքչյանը և նրա չարքաշության, համբերատարության, արվեստի մեջ ձեռք բերած հմտությունները բազմաթիվ լուսանկարներն էին, որոնք պատկերացնում էին Անիի մասերը մի ճշտությամբ և զարմանալի նրբությամբ, որ լուսանկարչական գործիքից կարելի է սպասել: Լուսանկարները փոքրիկ էին, ստերեոսկոպի հարմարեցրած, բայց չափազանց պարզ էին արտահայտում յուրաքանչյուր գիծ, յուրաքանչյուր դիրք: Նրանք ցույց տվին, թե որքան հեռու էին իսկականից Տեքսիեի և Կեստների գործերը:

Քյուրքչյանը կենդանացրեց Անին, ժամանակի խորտակող ժանիքներից ազատեց հռչակավոր ավերակները: Իր ժողովածուի միայն առաջին հատորը նա կարողացավ հրատարակել, որ բաղկացած էր 40 նկարներից:

---

[5] ***Ա. Շահնազարյան,*** Արտաշես Վրույրի արխիվը, «Լրաբեր» հաս. գիտ., 1980, թ. 5, էջ 112: Ա. Շահնազարյանի հոդվածում Քյուրքչյանի անունը նշվում է «Հարություն», ինչը սխալ է: Ղևոնդ Ալիշանի «Այրարատ» աշխատության 585-րդ էջում նշված է «Յովհաննէս Քիւրքճեան», իսկ «Աւերք Հայաստանի» Ա հատորի կազմի վրա՝ ֆրանսերենով «O. Kurkdjian», ինչը, անխոս, “Ohannes”-ի սկզբնատառն է:

[6] Լեոն իր աշխատությունն ավարտել է 1904 թ., հետևապես Քյուրքչյանը պիտի մահացած լինի 1903 թ.:

Չնայած իր թանկությանը՝ ժողովածուն տարածվեց, արժանի գնահատություն գտավ և այնուհետև Անիի ավերակները հայ հարուստ ընտանիքների մեջ էին հիացմունք տարածում: Մինչև այդ Քյուրքչյանի պես ոչ ոք չէր կարողացել ժողովրդականացնել մեռած քաղաքը: Միևնույն ժամանակ Քյուրքչյանի ժողովածուն ուներ և գիտական նշանակություն: Հանգուցյալ պրոֆեսոր Պատկանյանը մի փոքրիկ բրոշյուրով ծանոթացրեց ռուս հասարակությանը այդ ժողովածուի հնագիտական արժեքի հետ»[7]:

Նկ. 2. Հովհաննես Քյուրքչյանը, Ջորջ Լյուիսը և Սուրաբայայի լուսանկարչատան աշխատակազմը

1897 թ. Քյուրքչյանը տեղափոխվել է Սինգապուր, որտեղ մնացել է մի քանի ամիս: Այնուհետև մեկնել է Ինդոնեզիա՝ Սուրաբայա, և հիմնել լուսանկարչատուն, որտեղ նրա գործընկերն է դարձել բրիտանացի լուսանկարիչ Ջորջ Լյուիսը: Քյուրքչյանը հենց Սուրաբայայում է հաջողու-

[7] ***Լեո,*** Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, էջ 51-52: Գրքում Լեոն խոսում է նաև Արամ Վրույրի վաստակի մասին, Քյուրքչյանի լուսանկարների թիվը հիշատակում է ոչ թե 40, այլ «հիսունից ոչ ավելի» (նշվ. աշխ., էջ 66): Իրականում, ինչպես կտեսնենք ստորև, Քյուրքչյանի՝ Մատենադարանում պահվող երեք ժողովածուներում առկա է 45 լուսանկար (չհաշված կրկնվողները):

թյամբ ծավալել իր հետագա լուսանկարչական գործունեությունը մինչև իր կյանքի վերջը՝ 1903 թ. (նկ. 2): Հայաստանում Հովհաննես Քյուրքչյանի սկսած գործը շարունակել է նրա արժանի աշակերտը՝ անվանի լուսանկարիչ ու դերասան Արամ Վրույրը:

Նկ. 3. Հովհաննես Քյուրքչյան

Երևանի Մաշտոցյան Մատենադարանում է պահվում Հովհաննես Քյուրքչյանի լուսանկարների երեք ժողովածու: Եվս երկու լուսանկար, որոնք Քյուրքչյանի գործերից մեզ հասած հնագույններն են (1874 թ.), պահվում են տարբեր լուսանկարիչների գործեր պարունակող պատկերագրքում[8] (նկ. 4, 5): Երկու լուսանկարներն էլ Կեչառիսից են: Դրանցից մեկը Կեչառիսի վանքի գլխավոր Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հարավային պատի երեք լուսամուտներն ու արձանագրությունն են: Դարձերեսին կա մակագրություն. *«Նուէր Ս. Էջմիածնի ճեմարանի գրադարանին Ն. Մելիք-Թանգեանից»*[9]: Մեկ այլ մակագրություն թերևս արդեն իր՝

[8] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Ձ^{մր} 516:

[9] Անվանի լեզվաբան, հայ ազգային-ազատագրական շարժման գործիչ, հետագայում արքեպիսկոպոս Ներսես Մելիք-Թանգյանն է (1866-1948 թթ.):

Քյուրքչյանի ձեռքով. «*Армения*; *надпись развалины Кечарскаго* (*Дарачичагского*) *монастыря. Фот. О. Куркчянца. 1874 г.*»: Մյուս լուսանկարը նույն եկեղեցու հարավային շքամուտքի մոտ դրված ճանկող արծվի բարձրաքանդակն է: Դարձերեսին Ներսես Մելիք-Թանգյանի նույն մակագրությունն է. *«Նուէր Ս. Էջմիածնի ճեմարանի գրադարանին Ն. Մելիք-Թանգեանից»*, իսկ քիչ ներքև՝ «*Герб Армении, вырезанный на камне, найден в развалинах Кечарских* (*Дарачичагских*) *монастырей. Фот. О. Куркчянца. 1874 г.»:*

Վերոհիշյալ երեք ժողովածուներն ունեն զույգ լուսանկարներ կրող փոքրածավալ տախտակներ: Ժողովածուներից երկուսը կրում են «Աւերք Հայաստանի, Անի, մայրաքաղաք Բագրատունեաց, հատոր Ա» վերնագիրը, ինչը փաստում է Լեոյի հաղորդած տեղեկությունը, ըստ որի՝ Քյուրքչյանն իրոք ծրագրած է եղել մատենաշար հրատարակել: Երրորդ ժողովածուն անվերնագիր է և Մատենադարանի գույքամատյանում նշված է այսպես. «Ծավալադիտական ժողովածու. Անի»:

Ինչ վերաբերում է նշված երեք ժողովածուների լուսանկարների ստեղծման ժամանակին, ապա այստեղ որոշակի անորոշություն կա: Լեոն, ինչպես տեսանք, նշում է 1879 թվականը, Արտաշես Շահնազարյանը խոսում է «1880-ականների սկզբի» մասին, իսկ Արտաշես Վրույրի «Անիում» հուշագրության վերջում Արտաշեսի և նրա հոր՝ Արամ Վրույրի լուսանկարների հետ զետեղված են նաև Քյուրքչյանի երկու լուսանկարները՝ «Անի. Պարոնի պալատը» և «Անի. Իգաձորի ձախ շուրթին ավերակ եկեղեցու հյուսիսային պատը». երկուսի դեպքում էլ նշված է 1880 թ.: Կարծում ենք՝ տեղին է Քյուրքչյանի լուսանկարները թվագրել 1879-1880 թվականներով:

Սկսենք ամենածավալունից. դա, ինչպես նշվեց, «Աւերք Հայաստանի, Անի, մայրաքաղաք Բագրատունեաց, հատոր Ա» խորագրով լուսանկարների ժողովածուն է (այսուհետ պայմանական կանվանենք «Քյուրքչյան-1»)[10], որը պարունակում է զույգ լուսանկարներ կրող թվով 40 փոքրածավալ տախտակ՝ «Աւերք Հայաստանի, Անի, մայրաքաղաք Բագրատունեաց, ժողովածու, գործ Յ. Քիւրքճեան, Յերեւան» վերտառությամբ (նույնը՝ դարձերեսին, նաև ֆրանսերեն):

[10] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հ^{մր} 485:



Նկ. 4, 5. Լուսանկարներ Կեչառիսի վանքից, 1874 թ.
(լսնկ.՝ Հովհաննես Քյուրքչյան)

«Քյուրքչյան-1» ժողովածուի տախտակներին հետևյալ լուսանկարներն են[11].

1. Անիի Մայր տաճարը հարավ-արևմուտքից,

2. Անիի Մայր տաճարը հարավ-արևելքից,

3. Անիի Մայր տաճարը հյուսիս-արևմուտքից,

4. Անիի Մայր տաճարի ավագ խորանը,

5. Անիի Մայր տաճարի ներքին հատվածը,

6. Անիի Մայր տաճարի հյուսիսային շքամուտքը,

7. Անիի Մայր տաճարի արևելյան որմնախորշերից,

8. Անիի Մայր տաճարի հարավային լուսամուտներն ու արձանագրությունը,

9. Անիի Մայր տաճարի արևմտյան լուսամուտներից,

10. Փրկչի եկեղեցին,

11. Փրկչի եկեղեցու շքամուտքը,

12. Աբուղամրենց եկեղեցին,

13. Տիգրան Հոնենցի եկեղեցին,

14. Տիգրան Հոնենցի եկեղեցու գմբեթը,

15. Անիի միջնաբերդի եկեղեցու շքամուտքը,

16. անհայտ եկեղեցու շքամուտքը,

17. անհայտ եկեղեցու գավիթ,

18. անհայտ եկեղեցու գավթի սյուները,

19. անհայտ եկեղեցու գավթի երդիկ,

20. Առաքելոց վանքի գավիթը,

21. Ախուրյան գետն ու Կուսանաց անապատը,

22. Կուսանաց անապատը,

23. Մանուչեի մզկիթը,

24. Մանուչեի մզկիթը,

25. Պարոնի պալատը,

26. Պարոնի պալատի շքամուտքը,

27. Պարոնի պալատի հետնամասը,

28. Անիի ընդհանուր տեսքը,

29. հատված պարիսպներից,

30. հատված պարիսպներից. սվաստիկայով աշտարակը,

[11] Բոլոր լուսանկարներն անանուն են, այստեղ բերված է մեր նկարագրությունը (Ա. Ա.):

31. հատված պարիսպներից,

32. հատված պարիսպներից. կամարակապ մուտքը,

33. հատված պարիսպներից,

34. հատված պարիսպներից,

35. Անիի զինանշանը,

36. քարաժայռ,

37. Ախուրյան գետը,

38. Ախուրյան գետը,

39. Ախուրյան գետը,

40. Ախուրյան գետն ու կամրջի ավերակները:

Քյուրքչյանի երկրորդ ժողովածուն («Քյուրքչյան-2») դարձյալ կրում է «Աւերք Հայաստանի, Անի, մայրաքաղաք Բագրատունեաց, հատոր Ա» խորագիրը[12]: Ունի զույգ լուսանկարներ կրող թվով 44 փոքրածավալ տախտակ՝ «Աւերք Հայաստանի. Անի. մայրաքաղաք Բագրատունեաց, ժողովածու, գործ Յ. Քիւրքճեան, Յերեւան» վերտառությամբ (նույնը հակադիր կողմում՝ նաև ֆրանսերեն): Կազմի դարձերեսին ունի մակագրություն. *«Գէրապատիւ տէր Գրիգորիս Աղուանեանին (՞) յիշատակ որդիական անձնուէր սիրոյ ու զգացմանց նուիրէ ամենախոնարհաբար Յ. Քիւրքճեան, 1884 յունիս 10, Տփխիս»*:

«Քյուրքչյան-2» ժողովածուի տախտակներին հետևյալ լուսանկարներն են[13].

1. Անիի Մայր տաճարը հարավ-արևմուտքից,

2. Անիի Մայր տաճարը հարավ-արևելքից,

3, 4. Անիի Մայր տաճարը հյուսիս-արևմուտքից,

5. Անիի Մայր տաճարի ավագ խորանը,

6, 7. Անիի Մայր տաճարի ներքին հատվածը,

8. Անիի Մայր տաճարի հյուսիսային շքամուտքը,

9. Անիի Մայր տաճարի հարավային լուսամուտներն ու արձանագրությունը,

10, 11. Անիի Մայր տաճարի արևմտյան լուսամուտներից,

12. Փրկչի եկեղեցին,

[12] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 430:

[13] Բոլոր լուսանկարները դարձյալ անանուն են. բերված է մեր նկարագրությունը (Ա. Ա.), մի քանիսը հանդիպում են նաև «Քյուրքչյան-1»-ում:

13. Փրկչի եկեղեցու շքամուտքը,
14-15. Աբուղամրենց եկեղեցին,
16. Անիի միջնաբերդի եկեղեցու շքամուտքը,
17, 18. անհայտ եկեղեցու շքամուտքը,
19-21. անհայտ եկեղեցու գավիթ,
22. անհայտ եկեղեցու գավթի երդիկ,
23. Մանուչեի մզկիթը,
24. Պարոնի պալատը,
25. Պարոնի պալատի հետնամասը,
26. Պարոնի պալատի սենյակները,
27. Աշտարակ բլրի վրա,
28-29. Անիի ընդհանուր տեսքը,
30-31. հատված պարիսպներից,
32. հատված պարիսպներից. սվաստիկայով աշտարակը,
33. հատված պարիսպներից,
34. հատված պարիսպներից. կամարով մուտքը,
35. Բագրատունյաց զինանշանը,
36. քարաժայռ,
37-38. քարաժայռ,
39. Ախուրյան գետը,
40-41. Ախուրյան գետը,
42. Ախուրյան գետը,
43, 44. Ախուրյան գետն ու կամրջի ավերակները:

Քյուրքչյանի երրորդ ժողովածուն («Քյուրքչյան-3»), ինչպես նշեցինք, անվերնագիր է և գույքամատյանում ցուցակագրված է որպես «Ծավալադիտական ժողովածու. Անի»[14]: Ունի զույգ լուսանկարներ կրող թվով 18 փոքրածավալ տախտակ՝ «Հայաստան. ժողովածոյ աւերակք Անւոյ (մայրաքաղաք Բագրատունեաց), Յ. Քիւրքճեան, Երեւան» վերտառությամբ (նույնը՝ դարձերեսին, նաև ֆրանսերեն)[15]:

[14] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 419:
[15] 12 և 13 լուսանկարներում նշված չէ Քյուրքչյանի անունը, ուստի ենթադրում ենք, որ դրանք այլ հեղինակների գործեր են և սխալմամբ են հայտնվել այս ժողովածուում:

«Քյուրքչյան-3» ժողովածուի տախտակներին հետևյալ լուսանկարներն են[16].

1. Անիի Մայր տաճարը հարավ-արևմուտքից,

2. Անիի Մայր տաճարը հարավ-արևելքից,

3. Անիի Մայր տաճարն է հյուսիս-արևմուտքից,

4. Անիի Մայր տաճարի ավագ խորանը,

5. Անիի Մայր տաճարի հարավային լուսամուտներն ու վիմագիրը,

6. Փրկչի եկեղեցու շքամուտքը,

7. միջնաբերդի եկեղեցու շքամուտքը,

8. անհայտ եկեղեցու շքամուտքը,

9. անհայտ եկեղեցու գավթի սյունները, դարձերեսին ունի մակագրություն. «Նուիրէ … ի 2 Սեպտ. 18-3»,

10. անհայտ եկեղեցու գավթի երդիկը,

11. Պարոնի պալատի շքամուտքը,

12. Հաղբատի գավթի ներսը, թագավորների և իշխանների գերեզմանները,

13. Սանահինի գավթի ներքին տեսքը,

14. Ախուրյան գետն ու Կուսանաց անապատը,

15. Կուսանաց անապատը,

16. քարաժայռ,

17. Անիի պարիսպներից մի հատված, դարձերեսին կա մակագրություն. «Նուէր … ճեմարանիս ի … ի 2 Սեպտ. 18-3»,

18. հատված պարիսպներից:

ՄԵՍՐՈՊ ՍՄԲԱՏՅԱՆՑ (ՍՈՒՄԲԱՏՅԱՆՑ)

Հայկական պատմաճարտարապետական հուշարձանների՝ մեզ հասած հնագույն լուսանկարներին նաև այս լուսանկարչի անունն է: Մեսրոպ Սմբատյանցի մասին տեղեկությունները խիստ կցկտուր են. հայտնի է միայն, որ նրա լուսանկարչատունը ստեղծվել է Թիֆլիսում 1880 թ. և տեղակայված է եղել Կախեթյան փողոցի թիվ 22 տանը:

Մ. Սմբատյանցի լուսանկարների պատկերագրքերից առնվազն երկուսը պահվում են Հայաստանում. մեկը՝ Ազգային գրադարանի արվեստի բաժնում, մյուսը՝ Մատենադարանում:

[16] Մի շարք լուսանկարներ հանդիպում են նաև «Քյուրքչյան-1»-ում:

Հայաստանի ազգային գրադարանում պահվող պատկերագրքի լուսանկարներից երկուսի (Ս. Էջմիածնի Մայր տաճարի և Մարմաշենի վանքի լուսանկարները) ստորին աջ անկյունում կա «*Сумбатянц*» մակագրությունը: Եվս երկուսի վրա (Հաղարծին և Գոշավանք) կարդում ենք «օգոստ. 10, 1883, Մ. Ս.» գրությունը: Առավել քան հավանական ենք համարում, որ մյուս լուսանկարները ևս Սմբատյանցն է արել և, ամենայն հավանականությամբ, հիմնականում նույն շրջագայության ժամանակ՝ 1883 թ.[17]:

Պատկերագիրքը[18] ներառում է հետևյալ հուշարձանների լուսանկարները.

1. Ս. Էջմիածնի Մայր տաճարը հարաւ-արևմուտքից,
2. Էջմիածին, Գէորգեան ճեմարան,
3. Հռիփսիմէ,
4. Գայիանէ,
5. Շողակաթ,
6. Մողնոյ Ս. Գէորգ,
7. Յովհաննու վանք,
8. Խոր-վիրապ,
9. Անիի Մայր եկեղեցի,
10. Հոռոմոսի վանքը,
11. Կարմիր վանք Շիրակայ,
12. Արգինա,
13. Մարմաշէն,
14. Հառիճոյ վանք,
15. Ալէքսանդրոպօլու եկեղեցի,
16. Սանահին,
17. Սանահնայ զանգակատուն (իրականում՝ Հաղպատի – Ա. Ա.),
18. Հաղպատ,
19. Ս. Գրիգոր Դսեղի, արևելքից,
20. Ս. Գրիգոր Դսեղի, հարավից,
21. Օձունի եկեղեցի,

[17] Այս համոզման հիմքում դրանից մի քանի տարի անց՝ 1889 թ., Մատթեոս Փափազյանցի լուսանկարներում միևնույն հուշարձանների վիճակի համեմատությունն է, մասնավորապես՝ Հաղարծինի և Ամաղուի Նորավանքի օրինակներով:

[18] *Ալբոմի* փոխարեն նախընտրել ենք գործածել *պատկերագիրք* բառը:

22. Յովհան Օձնեցու գերեզման (Սրբանեսի վանքն է – Ա. Ա.),
23. Օձունի Ս. Նշան (Հոռոմայրի Ս. Նշան վանքն է – Ա. Ա.),
24. Հաղարծին,
25. Ղօշա-վանք,
26. Ս. Կարապետ Երնջակու,
27. Գուքիի Հազարափրկիչ,
28. Ամաղու վանք (Բուրթելաշեն եկեղեցին է հյուսիս-արևմուտքից – Ա. Ա.),
29. Ամաղու վանք (Բուրթելաշեն եկեղեցին է հյուսիս-արևելքից – Ա. Ա.),
30. Թանահատի վանք,
31. Կարմիր վանք Աստապատայ,
32. Ս. Վարդան Աստապատայ,
33. Թովմա Առաքելոյ վանքը,
34. Ս. Աստուածածնայ անապատ,
35. Քաղաքիկի Ս. Նշան,
36. Մեղրիի Անապաստանաց վանքը (մակագրությունը հայտնի չէ – Ա. Ա.),
37. Նախիջևանայ եկեղեցի,
38. Տաթև,
39. Գանձասար,
40. Խոթա-վանք (Դադիվանքն է – Ա. Ա.),
41. Ս. Յակոբ Հայրապետ,
42. Ամարաս,
43. Փարիսոսի վանք,
44. Շուշիի Ղազանչեցւոց եկեղեցի,
45. Թարգմանչաց վանք,
46. Չարեքայ անապատ,
47. Նասոմխարի Ս. Աստուածածին,
48. Ս. Կարապետ Թիֆլիզու,
49. Ցղնայի եկեղեցի,
50. Ջալալօղլիի եկեղեցի:

Մատենադարանում պահվող պատկերագիրքը[19] ևս հիմնականում նվիրված է մեր պատմաճարտարապետական հուշարձաններին: Այստեղ դարձյալ պահպանվել են Սմբատյանցի թողած մակագրությունները:

[19] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 473:

Հենց առաջին նկարում՝ «Աւերակք հնոյն Հայաստանի», կարդում ենք «Մ. Ս. 1883» գրությունը: Ներսես Ե Աշտարակեցի կաթողիկոսի գծանկարային լուսանկարում, նաև հանգուցյալ Գևորգ Դ Կոստանդնուպոլսեցի կաթողիկոսի լուսանկարում տեսնում ենք առանց թվականի «Մ. Ս.» գրությունը[20], իսկ Գևորգյան հոգևոր ճեմարանը պատկերող լուսանկարում արդեն առկա է ամբողջական ազգանունը՝ «Մ. Սմբատեանց. 1883»:

Ստորև ներկայացնում ենք երկրորդ պատկերագրքի լուսանկարների ցանկը[21].

1. Աւերակք հնոյն Հայաստանի (գծանկարից արված),

2. Հայկ Նահապետ (կտավից արված),

3. Վարդան Զօրավար (կտավից արված),

4. Ներսէս Ե. Верховный патриарх Нерсес (գծանկարից արված),

5. Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Հայաստանեայց. Эчмиадзинский монастырь,

6. Զանգակատուն Ս. Էջմիածնի. Эчмиадзинская колоколня,

7. Ճեմարան Ս. Էջմիածնի. Эчмиадзинская духовная академия,

8. Ս. Հռիփսիմէի վանք. Монастырь св. Рипсимэ,

9. Ս. Գայիանէի վանք. Монастырь св. Гаяанэ,

10. Ս. Շօղակաթի վանք. Монастырь св. Шогакат,

11. Ս. Գէորգ Մողնւոյ. Монастырь св. Георги,

12. Յովհաննու վանք. Монастырь св. Иоанны,

13. Խոր Վիրապի վանք,

14. Հաղարծինու վանք Ղազախու,

15. Գոշ-Մխիթարայ վանք Ղազախու, արևմտեան կողմ,

16. Գոշ-Մխիթարայ վանք Ղազախու, արևելեան կողմ,

17. Ս. Թովմայ Առաքելոյ վանք Ագուլեաց. Акулисский монастырь,

18. Մայր եկեղեցի Անւոյ,

19. Ս. Կարապետի վանք Երնջակայ, Монастырь св. Иоанна Крестителя,

20. Կարմիր վանք. Монастырь св. Степана первомученника,

21. Ս. Վարդանի վանք Աստապատայ, Монастырь св. Вардана,

[20] Գևորգ Դ կաթողիկոսը մահացել է 1882 թ. դեկտեմբերի 6 (18)-ին:

[21] Անվանումները տրված են այնպես, ինչպես գրված է լուսանկարների ստորին մասում (հայտնի չէ՝ դրանք հեղինակինն են, թե ոչ):

22. Ս. Խաչի վանք Վայոց-ձորոյ (Դարալակեազու),

23. Լագոդախի ռուսաց եկեղեցի. Лагодахская русская церковь,

24. Սղնախ քաղաքի մի մասը. Часть города Сигнаха,

25. Верховный патриарх Армянский Нерсес,

26. Գէորգ Դ. Կաթողիկոս. покойный Католикос Кеворг IV,

27. Գէորգ Դ. Կաթողիկոս Ամենայն Հայոց[22]*,*

28. Շուրջառ կաթողիկոսական Հնդկաստանից բերած,

29. Ս. Գէորգ եկեղեցի Հին-Նախիջևանայ. Нахичевань, церковь,

30. Ամաղու վանք Վայոց-ձորոյ, արևելեան կողմ,

31. Ամաղու վանք Վայոց-ձորոյ, արևմտեան կողմ,

32. Ամաղու վանք, գերեզմանատուն իշխանացն Սիւնեաց[23]*,*

33. Լևոն Գ (ձեռագրի լուսանկար է – Ա. Ա.),

34. Նախիջևան քաղաք. Вид гор. Нахичевани,

35. Երասխ գետ Հին Ջուղայի մոտ. Река Аракс близ Джульфы,

36. Մաքսատուն Ջուղայու. Джульфинская таможенная застава,

37. Փոստային կայարան Ջուղայու. Джульфинская почтово-телеграф. станция,

38. Վերին Ագուլիս. Селение Верхние Акулисы,

39. Ներքին Ագուլիս (Դաշտ). Селение Низкие Акулисы,

40. Գիւղաքաղաքն Գօրիս. Селение Герюсы,

41. Հնութիւն Թաւրիզոյ (Արք). Башня в Тавризе,

42. Թիֆլիզ քաղաքի մի մասը. часть гор. Тифлиса,

43. Գոշա վանք (թերևս Ղոշավանք, որը Հոռոմոսն է – Ա. Հ.) Շիրակայ,

44. Պահլաւունեաց պալատ Անւոյ (իրականում Առաքելոց վանքի գավիթն է – Ա. Ա.),

45. Թամարայ թագուհու բերդ, крепость царицы Тамары,

46. Ջբուսարան, Ратонд в царских колодцах,

47. Թագաժառանգ Պարսկաստանի. Персидский наследник,

---

[22] Կենտրոնում Գևորգ կաթողիկոսի լուսանկարն է, ձախ կողմում՝ հայ արդի ձայնագրության ձայնանիշերը, աջից՝ Էջմիածնի թանգարանի լուսանկարը (Մայր տաճարի արևելյան կողմում), ստորին հատվածում Սմբատյանցի ուղերձն է կաթողիկոսին և Գևորգյան հոգևոր ճեմարանի լուսանկարը (մակագրված է «լուս. Սմբատյանց Մ.»):

[23] Այս լուսանկարը տեղ է գտել նաև Մատենադարանում պահվող «Զանազան վանքերի և եկեղեցիների նկարների ալբոմ»-ում (Հմր 422), որտեղ մակագրված է. «Մ. Ս. Դամբարան իշխանացն Օրբելեան տոհմի. 1885 թ.»: Կարելի է եզրակացնել, որ Բուրթելաշեն եկեղեցու մյուս երկու լուսանկարներն էլ արված պետք է լինեն 1885 թ.:

48. Մինարայ, Канские ворота в гор. Нахичевани,
49. Կարմիր վանք Շիրակայ,
50. Բագրատունեաց պալատ Անւոյ,
51. Աւագ դուռն Անւոյ:

ԿԱՐԱՊԵՏ ՀՈՎՀԱՆՋԱՆՅԱՆՑ

Լուսանկարիչ Կարապետ Հովհանջանյանցի (Կարապետ Յովհանջանեանց, գրական կեղծանունը՝ Կրպէ) մասին միայն կցկտուր տեղեկություններ են պահպանվել: Հայտնի է, որ նա եղել է Ալեքսանդրապոլից, զբաղվել է գրական գործունեությամբ և լուսանկարչությամբ: Պահպանվել են նրա՝ Անի կատարած երկու շրջագայություններից (1884 և 1887 թթ.) մնացած որոշ լուսանկարներ:



Նկ. 6. Կարապետ Հովհանջանյանցի ստորագրությունը

Մաշտոցյան Մատենադարանում է պահվում Հովհանջանյանցի լուսանկարների երկու պատկերագիրք. երկուսի կազմին էլ առկա է «*Յ. Կ-Մ.*» գրությունը. մեր կարծիքով դրանք Գևորգյան հոգևոր ճեմարանի ուսուցիչ Հուսիկ վարդապետ (հետագայում՝ արքեպիսկոպոս – Ա. Հ.) Տեր-Մովսիսյանի սեփականությունն են եղել: Առաջին պատկերագիրքը (պայմանական անունը՝ «Հովհանջանյանց-1») Մատենադարանի գույքամատյանում գրանցված է որպես «Անիի եկեղեցիների լուսանկարներ»[24]: Առաջին էջին մակագրված է «*Յուսիկ Էջմիածնի …*», պարունակում է 29 լուսանկար:

Երկրորդ պատկերագիրքը («Հովհանջանյանց-2») գույքամատյանում գրանցված է որպես «Հայկական վանքերի լուսանկարներ» և պարունա-

[24] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 425:

կում է 22 լուսանկար[25]: Առաջին էջին կան. «*Էջմիածնի …*», հաջորդ էջին՝ *«/ստորագր./ Առ … տէր Մեսրոպ վարդապետ Տէր-Մովսիսեան ի Յուսիկ եպս.է նուէր յարգան… ի 11 դեկտմ., 1904 ամի, Ս. Էջմիածին*» մակագրությունները: Ի տարբերություն առաջին պատկերագրքի՝ լուսանկարներն այստեղ ավելի բարձրորակ են:

Բացի այս երկուսից՝ Հովհանջանյանցի լուսանկարներից մի քանիսն էլ տեղ են գտել Մատենադարանի Հմր 516 պատկերագրքում:

«Հովհանջանյանց-1» պատկերագրքի լուսանկարների ցանկը հետևյալն է.

1. Ս. Լուսաւորիչ Անւոյ (Տիգրան Հոնենցի եկեղեցին է – Ա. Ա.)[26],

2. Ս. Առաքելոց եկեղեցի յ'Անի,

3. Ս. Գրիգոր Ապուղամրենց յ'Անի,

4. Բրգաձև (՞) պարսպանոցն Անւոյ,

5. Միջնաբերդն Անւոյ,

6. Ս. Փրկիչ եկեղեցի յԱնի,

7. Միջնաշտարակն Անւոյ,

8. Կաթողիկեն Անւոյ[27],

9. Կամար Կաթողիկէին Անւոյ,

10. Մզկիթ Անւոյ,

11. Առաքելոց եկեղեցի Անւոյ,

12. Ապարանք կամ արքունիկ Անւոյ,

13. Ս. Կարապետ, Ս. Աստուածածին, Ս. Ստէփաննոս, Ս. Սարգիս ի Խծկոնք,

14. Սուրբ Սարգիս եկեղեցի Խծկոնից[28],

15. Ս. Կարապետ եկեղեցի Խծկոնից,

16. Ս. Գրիգոր Լուսաւորիչ Խծկոնից,

17. Ս. Կարապետ և Ս. Ստէփաննոս Խծկոնից,

18. Ս. Ստէփաննոս 'ի Խծկոնս,

19. Ս. Ստէփաննոս եկեղեցի 'ի Խծկոնս,

---

[25] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 423:

[26] Լուսանկարի վերին աջ անկյունում հետևյալ մակագրությունն է. «Առ … Մեսրոպ վրդ. Տէր-Մովսիսեան ի Յուսիկ եպս.է նուէր յարգան… 11 դեկ. 1904 Ս. Էջմիածին»:

[27] Լուսանկարի դարձերեսին. «Հազուադէպ լուսատիպն այս յոյժ կարևոր է առ այն՝ զի … ցուցանէ մասն … ի մասանց խորանէն (՞) սրբակոյս Հռիփսիմեայ … եթէ իսպառ փլատակեալ … 8/II 28 /ստորագրություն/»:

[28] Լուսանկարի դարձերեսին. «Լուսանկար Կ. Յովհանջանեանց, 1884 ամի»:

20. Անվերնագիր (վիմական արձանագրություն է – Ա. Ա.),
21. Խաչարձան և եկեղեցին Ս. Սարգիս Խծկօնից,
22. Արձանագիր յորմն ս. Սարգիս եկեղեցւոյ Խծկօնից,
23. Ս. Ստէփաննոս եկեղեցի Ագրեկու,
24. Կաթողիկէն Մրէնոյ,
25. Կաթողիկէն Մրէնոյ, հիւսիսային կողքն,
26. Քանդակք արևմտեան դրան Կաթողիկէին Մրէնոյ,
27. Խաչքանդակք յորմն Կաթողիկէին Մրէնոյ,
28. Խաչքանդակք յապարանս Մրէնոյ,
29. Դուռն ապարանից Մրէնոյ:

«Հովհանջանյանց-2» պատկերագրքի լուսանկարների ցանկը հետևյալն է.

1. Գմբեթարդ կամար առ ճանապարհս Անւոյ ի Հոռոմոս,
2. Ս. Լուսաւորիչ կամ Նախշըլի եկեղեցի Անւոյ[29],
3. Ս. Գէորգ եկեղեցի Անւոյ[30],
4. Ճակատ արքունի ապարանից Անւոյ,
5. Ս. Գրիգոր եկեղեցի Աբուղամրենց յԱնի,
6. Գաւիթ եկեղեցւոյ փոխեկելոյ (°) 'ի մզկիթ և մինարէթ,
7. Գաւիթ Ս. Առաքելոց եկեղեցւոյն Անւոյ,
8. Շարունակութիւն Ս. Առաքելոց եկեղեցւոյն Անւոյ,
9. Ս. Փրկիչ եկեղեցի Անւոյ,
10. Կաթուղիկէ Մայր եկեղեցի Անւոյ,
11. Կամարք ներքնայարկի արքունի ապարանից Անւոյ,
12. Պարիսպ Անւոյ,
13. Պարիսպ Անւոյ,
14. Խաչքար առ Ս. Սարգիս եկեղեցի Բէշքիլիսայի,
15. Ս. Սարգիս վանք Բէշքիլիսայի,
16. Ս. Ստեփաննոս եկեղեցի Ագարակու,
17. Ս. Երրորդութիւն եկեղեցի Տեկորոյ,
18. Կաթուղիկէ Մրենոյ,

[29] Տիգրան Հոնենցի մեկենասությամբ 1215 թ. կառուցված Անիի Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին թերևս իր որմնանկարների համար հաճախ կոչվել է նաև Նախշլի եկեղեցի: Լուսանկարի դարձերեսին. «Ս. Գէորգ անուանակոչութիւնը ճիշտ չէ (Ալիշանի սխալանքի հետևանքով, որը շփոթել է նմանաձևութեան պատճառով Ղոշավանքի Ս. Գէորգի հետ) այլ … Ախուրեանի ափի մոտ … կառուցված Կուսանաց վանքն է /ստորագր./»:
[30] Իրականում Կուսանաց անապատն է, հեռվում՝ Մանուչեի մզկիթը:

19. Խաչքարինք Մրենոյ,

20. Ս. Շուշան եկեղեցի 'ի Բագարան, ի յաջմէ Ախուրեան Անւոյ (՞),

21. Աւերակ եկեղեցի յայգեստանեայս Բագարանայ,

22. Ս. Գէորգ եկեղեցի Բագարանայ:

Հմր 516 պատկերագրքում տեղ գտած լուսանկարները հետևյալն են.

1. Մրենի խաչարձանները («Հովհանջանյանց-2» պատկերագրքի թ. 19 լուսանկարի անորակ պատճենն է – Ա. Ա.),

2. Սուրբ Փրկիչ եկեղեցի Հայոց Ալէքսանդրապոլ քաղաքի,

3. Եկեղեցի Յունաց Ալէքսանդրապոլու,

4. Ս. Գէորգ՝ վանք Բագարանի («Հովհանջանյանց-2» պատկերագրքի թ. 22 լուսանկարն է – Ա. Ա.),

5. Բասենի գաւառում աւերակ եկեղեցի[31],

6. Բասենի գաւառում եկեղեցու աւերակ:

ՄԱՏԹԵՈՍ ՓԱՓԱԶՅԱՆՑ

Մեզ համար բացառիկ մեծ նշանակություն ունի լուսանկարիչ Մատթեոս Փափազյանցի «Հնութիւնք վանօրէից» խորագրով լուսանկարների շարքը՝ կազմված վեց մասից: Յուրաքանչյուր հատոր նվիրված է մի առանձին շրջանի, որտեղ, լուսանկարներին զուգահեռ, հեղինակը ներկայացնում է նաև հուշարձանների համառոտ պատմությունը:

Փափազյանցն իր շրջագայությունը սկսել է ամենայն հավանականությամբ 1888 կամ 1889 թվականին: Մատենաշարի առաջին գրքի առաջաբանում նա նշում է, որ ավարտել է լուսանկարահանման գործի մեծ մասը, իսկ երրորդ գրքի առաջաբանում (1890 թ.) հայտնում է, որ գործն ամբողջությամբ ավարտված է, և մնում է ընդամենը հրատարակել այն:

«Հնութիւնք վանօրէից» շարքը լույս է տեսել Վաղարշապատում՝ Մայր Աթոռի տպարանում, 1889-1892 թթ.: Շարքում ընդգրկված գրքերն ունեն հետևյալ խորագրերը.

Ա. Հնութիւնք վանօրէից. առաջին գիրք. անվերնագիր (Ղազախ եւ Շամշադին գաւառներ), Վաղարշապատ, 1889 թ.,

Բ. Հնութիւնք վանօրէից. երկրորդ գիրք. Գեղարքունիք, Վաղարշապատ, 1890 թ.,

[31] Դարձերեսին. «Հայոց հին եկեղեցի Ղօշա-Քիլիսայ գիւղի մոտ … Սբ Խաչ … Արձանագրութիւնը եղծուած է»: Հովհանջանյանցի մակագրությունը թեև բացակայում է, սակայն, մեր կարծիքով, այս լուսանկարը ևս նրանն է:

Գ. Հնութիւնք վանօրէից. երրորդ գիրք. Վայոց Ձոր, Վաղարշապատ, 1890 թ.,

Դ. Հնութիւնք վանօրէից. չորրորդ գիրք. Գողթան գաւառ, Վաղարշապատ, 1891 թ.,

Ե. Հնութիւնք վանօրէից. հինգերորդ գիրք. Սիւնեաց աշխարհ, Վաղարշապատ, 1892 թ.,

Զ. Հնութիւնք վանօրէից. վեցերորդ գիրք. Էջմիածին եւ իւր շրջակայք (Արարատեան գաւառ), Վաղարշապատ, 1892 թ.:

Ինչպես երևում է երրորդ գրքի «Երկու խօսք»-ից, Փափազյանցը նախատեսել էր ամբողջական շարքը լույս ընծայել ինը գրքով: Փաստորեն լույս է տեսնում միայն վեցը: Պատճառը հավանաբար եղել է Փափազյանցի ֆինանսական ծանր դրությունը: Բոլոր վեց գրքերն էլ վաճառվել են 10 ռուբլիով: Առաջին գիրքը տպագրվել է 100 օրինակով, մյուս գրքերի տպաքանակի մասին տեղեկություններ չունենք:

Առաջին երկու գրքերը տպագրվել են Փափազյանի սեփական միջոցներով, ինչը չափազանց մեծ բեռ է եղել նրա համար: Երրորդ գիրքը տպագրվել է ագուլիսցի մեծահարուստ Ալեքսանդր Տեր-Մկրտչյանի մեկենասությամբ և նվիրվել իր հոր՝ աղա Ավետիս Գալստյան Տեր-Մկրտչյանի հիշատակին: Չորրորդը նվիրված է Կարապետ Հարությունյան Եզյանցի հիշատակին և ենթադրաբար տպագրվել է նրա ընտանիքի օժանդակությամբ[32]: Հինգերորդ գիրքը տպագրվել է Աղվանից Գրիգոր եպիսկոպոսի (250 ռուբլի) և բաքվեցի Առաքել Ծատուրյանի (200 ռուբլի) օժանդակությամբ:

Գրքաշարի բովանդակությունը հետևյալն է[33].

Առաջին գիրք. *Ղազախ եւ Շամշադին գաւառներ*

1. Ս. Մակարայ վանք,

2. Արձանագրութիւն Ս. Մակարայ վանքի արեւմտեան դրան ճակատի,

3. Ս. Աստուածածնայ վանք Սրուեղ անուանեալ[34],

[32] Երրորդ գրքում բացակայում է «Երկու խօսք»-ը, սակայն հինգերորդ գրքի առաջաբանում հեղինակը հայտնում է, որ չորրորդ գիրքը ևս տպագրվել է մեկենասների օժանդակությամբ:

[33] Լուսանկարների անունները բնագրային են:

[34] Պատկերագրքի մեկ այլ տարբերակում (դարձյալ ՀԱԳ-ում պահվող) նույն էջի վրա, Սրվեղի վանքի լուսանկարին կից, առկա է նաև մեկ այլ լուսանկար՝ վրանի առջև խմբված երեխաների ու կանանց:

4. Վարագայ Ս. Նշան վանք,
5. Վանք Ս. Առաքելոց,
6. Կիրանցայ վանք,
7. Հաղարծնոյ վանք արեւմտեան կողմանէ,
8. Հաղարծնոյ վանք հիւսիս-արեւմտեան կողմանէ,
9. Վանք Գօշ Մխիթարայ,
10. Գօշ Մխիթարայ վանք արեւմտեան կողմանէ,
11. Գօշ Մխիթարայ վանք արեւելեան կողմանէ[35]*,*
12, 13. Խաչքարեր Գօշ Մխիթարայ[36]*,*
14. Ձուխտակ վանքեր,
15. Սեւանայ վանք,
16. Սեւանայ Առաքելոց վանքը[37]*,*
17. Սեւանայ Առաքելոց վանքի դուռը[38]*:*

Առաջաբանում Փափազյանցը նշում է, որ առաջին գրքում զետեղել է 14 լուսանկար: Երրորդ գրքի «Երկու խօսք»-ում էլ նշում է, որ առաջին գրքում զետեղված է 15 լուսանկար (չհաշված 8-րդ էջի երեխաների և կանանց լուսանկարը): Ենթադրաբար, Սևանավանքը պատկերող վերջին 2 լուսանկարները պետք է կարվեին 2-րդ գրքում, սակայն ինչ-ինչ պատճառներով հայտնվել են 1-ին գրքում:

Երկրորդ գիրք. *Գեղարքունիք*

1. Սեւանայ ծով եւ կղզի,
2. Կղզի,
3. Սեւանայ վանք,
4. Հայր Յօհանայ վանք կամ Այրի վանք (Գեղարքունիքում),
5. Թանգարան Նոր-Բայազիտու,
6. Փաշաքենտու Ս. Գրիգոր վանք (Գեղարքունիքում),
7. Նորադուզի Ս. Աստուածածնայ վանք (Գեղարքունիքում),
8. Նորադուզի հանգստարանը (Գեղարքունիքում),
9. Նորադուզի Ս. Լուսաւորչայ վանք (Գեղարքունիքում),

[35] Լուսանկարը պահվում է Մատենադարանի Հմր 374 պատկերագրքում:
[36] Ձախակողմյան լուսանկարը վարպետ Պողոսի 1291 թ. խաչքարն է, աջակողմյանը՝ նույն վարպետ Պողոսի անթվակիր խաչքարն է (այժմ՝ ՀՊԹ-ում):
[37] Լուսանկարը պահվում է Մատենադարանի Հմր 374 պատկերագրքում:
[38] Մատենադարանի Հմր 374 պատկերագրքում է նաև նույն դռան մեկ այլ լուսանկար:

10. Նորադուզի կամուրջը,

11. Ս. Պետրոսի մենաստան Վալի-Աղալու գիւղում (Գեղարքունիքում),

12. Պօղոս առաքելոյ վանք Ծակ-քար գիւղում (Գեղարքունիքում)[39],

13. Ծակ-քարի բնական կամուրջը (Գեղարքունիքում),

14. Կոթա վանք Ատիեաման գիւղում (Գեղարքունիքում),

15. Գերեզմանաքարեր Վերին Ղարանլուղ գիւղում (Գեղարքունիքում),

16, 17. Խաչաքար (Գեղարքունիքում) և գերեզմանաքար Սուբան Գրիգոր իշխանի,

18. Վրանաբնակներ կամ Օբա Այրիճայում (Գեղարքունիքում):

Երրորդ գիրք. *Վայոց ձոր*

1. Սելիմի քարվանսարայ Վայոց ձորում,

2. Ս. Աստուածածնայ վանք Գիլ վանք անուանեալ,

3. Արփայ գիւղի Ս. Աստուածածնայ վանք,

4. Ամաղու Նորավանքերը,

5. Սմբադ իշխանի դամբարանը,

6. Բուրդել իշխանի կառուցած երկհարկանի եկեղեցին,

7-9. Խաչքար, քանդակ Ամաղուի վանքերից և Բուրդել իշխանի ծածկագիրը,

10. Արգեազու Ս. Խաչ վանքը,

11. Թանահատի Ս. Ստեփաննոսի վանք,

12. Ս. Սիօն Հերհեր գիւղում,

13. Կիրճ Վայոց ձորում Գնթավազ վանքի,

14. Գնթավանգ,

15. Արիտեսի վանքերի աւերակները,

16. Գիւնէի վանք,

17. Ղօշա վանքերը Ալագազ ձորի[40],

18. Ցախաց-քարի աւերակները,

19. Սմբատայ բերդ,

20. Խաչաքարեր Վայոց ձորում,

21. Ս. Աստուածածնայ արձան:

[39] Ներկայիս Ձորագյուղ գյուղի Մասրուց անապատն է:

[40] Ցաղաց քարի վանական համալիրն է:

Չորրորդ գիրք. *Գողթան գաւառ*

1. Ս. Վարդան եկեղեցու արեւմտեան դուռը,

2. Կարմիր վանք Աստապատում,

3. Նախավկայի վանքը Պարսկաստանում,

4, 5. Նախավկայ վանքի արեւմտեան ճակատի մի մասը և Նախավկայ վանքի դուռը,

6, 7. Քարեայ խոյ Հին Ջուղայից և Նախավկայ վանքի արեւելեան կողմի վերին մասը,

8, 9. խաչաքարեր Հին Ջուղայից,

10. Երասխ գետի վրայի հաղորդակցութիւնը,

11. Երնջակու Ս. Կարապետի վանքը,

12. Շուրութի Ս. Յակոբ եկեղեցին,

13. Պիստու Ս. Ստեփաննոսի վանքը,

14. Ցղնայու Ս. Աստուածածին,

15. Ագուլիսի տեսարանից մի մաս,

16. Թովմայ առաքելոյ վանքի ընդհանուր տեսարան,

17. Ս. Թովմայ առաքելոյ վանքը Ագուլիսում,

18. Թանգարան Թովմայ առաքելոյ վանքի,

19, 20. Ագուլեաց վանքի ներքին առաստաղի զարդերից և Ագուլեաց վանքի դրան վրայի քանդակը,

21. Խորվիրապի արտաքին տեսարանը,

22. Խոր վիրապ:

Հինգերորդ գիրք. *Սիւնեաց աշխարհ*

1, 2. Աւերակ Աղիտու գիւղում և Իլան դաղի[41]*,*

3. Որոտնավանքի աւերակ գաւիթները,

4. Որոտնայ վանքը,

5. Որոտնայ բերդը,

6, 7. Սպիտակ խաչ անուանեալ Լոր գիւղում և Լոր գիւղի եկեղեցու արեւմտեան դուռը,

8-10. Հայուհիներ Սիւնիքի և երկու ձեռագիր մատյաններ,

11. Տաթեւի վանքը,

12. Տաթեւ վանքի ընդ. տեսարանը,

13-15. Երկու քանդակ Տաթեւից և Տաթեւի շարժական սիւնի վերին մասը,

[41] Երկրորդը Երնջակի Օձասար լեռն է (Ա. Ա.):

16, 17. Ս. Աստուածածնայ մատուռ Տաթեւում և Տաթեւի շարժական սիւնը,

18. Թանգարանի մի մաս Սիւնիքից,

19, 20. Գրիգոր Տաթեւացւոյ շիրիմը Տաթեւում և Դաւիթ Բէգի բերդի ընդհանուր տեսքը,

21, 22. Տաթեւի վանքի դուռը և Տաթեւ վանքի ներքին տեսքը,

23. Սատանի կամուրջը Տաթեւի մօտ,

24. Հալիձորի կիրճը,

25. Պղնձահանք Ղադարի ընկ. Հալիձորում,

26. Դաւիթ Բէգի բերդը Հալիձորում,

27. Քարացած մարմիններ,

28. Ձրվէժ Սիւնիքից:

Վեցերորդ գիրք. ***Էջմիածին եւ իւր շրջակայք (Արարատեան գաւառ)***

1. Էջմիածնայ վանքի ընդհանուր տեսարանը,

2. Ձանգակատուն Էջմիածնայ տաճարի,

3. Իջման ս. Սեղանը Էջմիածնայ տաճարում,

4, 5. Փղոսկրեայ կողքեր Աւետարանի Էջմիածնում,

6. Հնդկաստանից բերուած ասեղնագործ մի շուրջառ,

7. Ս. Էջմիածնայ տաճար,

8. Էջմիածնայ միաբանութեան սենեակները (խուցեր),

9. Էջմիածնայ լիճը եւ անտառը,

10. Ս. Էջմիածնայ տպարան,

11. Ս. Էջմիածնայ ճեմարան,

12. Վանք կոյս Հռիփսիմէի,

13, 14. Գայիանէ վանքի արեւմտեան կողմը և Էջմիածնայ լճի մի մասը,

15. Շողակաթի վանք Էջմիածնում,

16. Օշական գիւղի կամուրջը,

17. Օշականի Ս. Մեսրովբ թարգմանչի եկեղեցին,

18. Աշտարակ գիւղի կամուրջը,

19. Ներսէս Ե պապերի գերեզմանաքարերը Աշտարակում,

20. Մօղնու Ս. Գէորգ եկեղեցին,

21, 22. Յոհանայ վանքի քանդակներ և խաչաքարեր,

23. Հայր Յոհանավանք,

24. Սաղմոսավանք, հարաւարեւմտեան կողմ,

25. Տեղերու վանքը:

ՀԵՆՐԻ ԼԻՆՉ

Հայկական արմատներով իռլանդացի անվանի հայագետ, աշխարհագրագետ, ճանապարհորդ և հասարակական-քաղաքական գործիչ Հենրի Լինչը ծնվել է 1862 թ. ապրիլի 18-ին Լոնդոնում: Ընտանիքի միակ զավակն էր: Հայրը Միջագետքի հետազոտող Թոմաս Կեր Լինչն էր, մայրը՝ Հարիեթ Թեյլորը[42]: Հենրին իր կրթությունը ստանում է Էթոնի քոլեջում, Հայդելբերգի համալսարանում և Քեմբրիջի Թրինիթի համալսարանում: Ընտանեկան առևտրային գործունեությանը զուգահեռ[43] նա հմտանում է նաև իրավագիտության մեջ:

1890-ական թթ. Լինչը ճանապարհորդում է մի քանի երկրներում, որոնցից առավել ուշագրավը Հայաստան կատարած նրա երկու այցելություններն են՝ 1893-1894 և 1898 թվականներին: Դրանց արգասիքն է «Հայաստան. ուղևորություններ և ուսումնասիրություններ» երկհատոր աշխատությունը:

1906 թ. Լինչը ընտրվում է Բրիտանիայի խորհրդարանի անդամ, սակայն չորս տարի անց՝ 1910 թ., պարտվում է նույն ընտրություններում: Մահացել է 1913 թ. ֆրանսիական Կալե քաղաքում[44]:

Լինչը պատմական Հայաստան կատարած իր երկու այցելությունների ընթացքում հավաքած նյութերի հիման վրա 1901 թ. Լոնդոնում հրատարակել է լայն ճանաչում ստացած «Հայաստան. ուղևորություններ և ուսումնասիրություններ» աշխատությունը՝ բաղկացած երկու հատորից՝ «Ռուսահայաստան» և «Տաճկահայաստան»: Ռուսերեն թարգմանությամբ աշխատությունը լույս է տեսել 1910 թ. Թիֆլիսում, հայերեն թարգմանությամբ՝ 1913-1914 թթ. Կ. Պոլսում: Աշխատությունն արժեքավոր տեղեկություններ է բովանդակում Հայաստանի պատմության, աշխարհագրության, ժողովրդագրության, բանահյուսության վերաբերյալ, գրքում առկա են նաև բազմաթիվ հազվագյուտ լուսանկարներ և քարտեզներ:

---

[42] Հարեթի հայրը Բաղդադում Բրիտանիայի պատվիրակ գնդապետ Ռոբերտ Թեյլորն էր, մայրը՝ Սեբաստիայից սերած հայուհի:

[43] 1841 թվականից Բաղդադում գործում էր «Lynch Brothers» առևտրային կազմակերպությունը, որը զբաղվում էր Բրիտանիայից Միջագետք ապրանքների ներմուծմամբ: 1896 թ. Լինչը դառնում է այդ կազմակերպության նախագահը:

[44] Ըստ որոշ տեղեկությունների՝ մահվան պատճառը եղել է Կ.Պոլսում նրա հիվանդանալը:

Հենրի Լինչն իր երկիատորյակում ակնհայտ ցույց է տալիս, որ և՛ ցարական, և՛ սուլթանական կառավարությունները հայերի նկատմամբ նույն հետադիմական քաղաքականությունն էին վարում, իսկ Ախալցխա կատարած իր այցելությունը պատմելիս՝ մանրամասն նկարագրում է նաև ռուս չինովնիկի իրական ու հավաքական կերպարը. «Ռուսաստանի այս հայկական նահանգներուն մէջ վարչական մեքենան կը կառավարուի ձեռամբ մատի վրայ համրուող ռուս պաշտօնատարներու, բայց շնորհիւ Հայերու, որոնք նոյն իսկ բարձրաստիճան պաշտօններու կը գործածուին: Հայը վաղնջական մշակոյթ և բնական բարձր կարողութիւններ ունի. ո՛չ բնազդով և ո՛չ ալ յատկութեամբ իր ռուս մեծաւորը գերազանց է, որովհետև այս վերջինը, աւելի կառավարական սիսթէմի մը գործիքն է, քան թէ ի ծնէ կառավարող, և իրեն առ հասարակ կը պակսին ճկունութեան և անձնական նախաձեռնութեան յատկութիւնները, զորս քանդելու կը ձգտին խստադէմ պիւրօքրաթները: Բաց աստի, ռուս պաշտօնատարը տպաւորութիւնը կը թողու իր կատարած գործէն ճնշուած ըլլալու, ինչպէս տղայ մը, որուն դասերը նոր են, և երբ կը տեսնես զայն, որ կը գործէ Հայոց նման ազգի մը մէջ, ինքզինքիդ կը հարցնես, թէ ինչպէ՞ս կ՛ըլլայ, որ բոլոր յատկութիւններով օժտուած ցեղ մը կը կառավարուի այսպիսի փայտէ մարդերով: Անտարակոյս կան յարգելի բացառութիւններ այս ընդհանուր վիճակին մէջ, և այս բացառութիւնները պէտք է աւելի փնտռել բարձրաստիճան պաշտօնէութեան մէջ»[45]:

Ստորև՝ Լինչի աշխատության առաջին հատորում ընդգրկված լուսանկարների ցանկը[46].

1. Բոսֆորով մուտքը դեպի Սև ծով,

2. Տրապիզոնի ամրոցը,

3. Տրապիզոն. Ս. Սոֆիա,

4. Տրապիզոն. Ս. Սոֆիայի ճակատը հարավից,

5. Ս. Սոֆիայի ներսը,

6. Ռիոն գետի ափերը Քութայիսի մոտ,

7. Ռիոնի հարթավայրը Կովկասի հարավային լանջերից. առաջին պլանում՝ Քութայիսը,

---

[45] ***Հ. Ֆ. Պ. Լինչ,*** Հայաստան. ուղեւորութիւններ եւ ուսումնասիրութիւններ, թարգմ.՝ ***L. Լարենց,*** հ. Ա. Ռուսական Հայաստան, Կ. Պոլիս, 1913, էջ 26:

[46] Հեղինակը նկարացանկերը կազմել է աշխատության 1901 թ. անդրանիկ հրատարակության հիմամբ (տե՛ս Armenia. Travels and Studies, by ***H. F. B. Lynch,*** vol. I, The Russian Provinces, London, 1901, vol. II, The Turkish Provinces, London, 1901) – Ա. Հ.:

8. Ճանապարհ անտառում,

9. Անվերնագիր (երկու վրացիներ ազգային հագուստով – Ա. Ա.),

10. Իվանի դիմանկարը,

11. Սաֆար. Ս. Սաբան արևմուտքից,

12. Սաֆար. Ս. Սաբայի սյունասրահը,

13. Ախալցխան Ախալքալաքի ճանապարհից,

14. Խերտվիսի ամրոցը,

15. Խերտվիսի մի խումբ գյուղացիներ,

16. Վարձիա. քարանձավային քաղաքը,

17. Վարդապետն ու սարկավագը Վարձիայում,

18. Աբուլ լեռը Ախալքալաքից,

19. Ամառային պավիլիոնը Գորելովկայում,

20. Արփաչայի ակունքները,

21. Ալագյազը Ալեքսանդրապոլի հարթավայրից,

22. Ալեքսանդրապոլը հայկական գերեզմանատնից,

23. Բյուզանդական պատկերը հունական եկեղեցում,

24. Հարսանիք Ալեքսանդրապոլում,

25. Մարմաշենի եկեղեցին հարավ-արևմուտքից,

26. Ալագյազը Ապարանի ակունքներից,

27. Արարատը Արամզալուի մոտից,

28. Արարատ. առաջին պլանում՝ Արալիկը,

29. Մեր հեծելախումբը Արարատի վրա,

30. Մեր ճամբարը Սարդար Բուլաղում,

31. Փոքր Արարատը Սարդար-Բուլախի մոտից,

32. Մեծ Արարատը Սարդար-Բուլախի վերևից,

33. Մեր քուրդ ուղեկցորդները Արարատի վրա,

34. Ախուռի. մեծ վիհը Արալիկից,

35. Արարատի գագաթը հարավ-արևելքից՝ վերցված մոտավորապես 13.000 քայլ բարձրությունից,

36. Անվերնագիր (ապառաժներ – Ա. Ա.),

37. Ախուռի. մեծ վիհի մեջ,

38. Արարատը երևանյան տներից մեկի տանիքից,

39. Ալագյազը երևանյան տներից մեկի տանիքից,

40. Երևանն ու Արարատը հյուսիսից,

41. Երևան. Գյոկ Ժամիի մուտքը,

42. Երևան. Գյոկ Ժամիի բակը ջրավազանով,

43. Գյոկ Ժամիի տաճարը,

44. Երևան. Սարդարի պալատի ներսը,

45. Էջմիածին. ուխտավորների բակը,

46. Կաթողիկոս Մկրտիչ Խրիմյանը,

47. Էջմիածին. մեծ բակն ու տաճարը,

48. Էջմիածնի լիճը,

49. Արարատը Էջմիածնի լճից,

50. Հայ միանձնուհի,

51. Էջմիածին. կաթողիկոսի ընծայման արարողությունը՝ ոսկե աղավնու կտցի միջից յուղով օծումը[47]*,*

52. Մայր տաճարի շքամուտքի ներսը,

53. Մայր տաճարի ներսը,

54. Էջմիածին. Ս. Հռիփսիմեի արտաքին տեսքը,

55. Էջմիածին. Ս. Գայանեի արտաքին տեսքը,

56. Էջմիածին. Շողակաթի արտաքին տեսքը,

57. Քանդակազարդ քար (խաչքար է – Ա. Ա.),

58. Թալին գյուղն ու Բուգատու (՞) լեռը,

59. Թալին. ավերված եկեղեցու հարավային կողմի քանդակազարդերը,

60. Թալինի ավերված եկեղեցու հյուսիսային կողմի քանդակազարդերը,

61. Թալինի թաթար խանը,

62. Թալինի պրիստավը,

63. Թալինի հոգևորականը,

64. Թաթար Աղջա-կալայից,

65. Ալագյազը արևմտյան հարթավայրերից,

66. Հույն աղջիկը Սուբոտանից,

67. Անի քաղաքի պարիսպներն ու դարպասները դրսից, դեպի արևելք,

68. Անի. բարձրաքանդակ դարպասի ներքին պատի վրա,

69. Անի. Մայր տաճարը հարավ-արևելքից,

70. Անի. Մայր տաճարի արևելյան պատի որմնախորշը,

71. Անի. Մայր տաճարի խորանը,

72. Անի. Ս. Գրիգոր եկեղեցին (Տիգրան Հոնենցի – Ա. Ա.) արևմուտքից,

[47] Խրիմյան Հայրիկն օծվել է 1893 թ. սեպտեմբերի 26-ին (ընտրվել էր դեռևս 1892 թ. մայիսին):

73. Անի. քանդակազարդ քար,

74. Անի. Ս. Գրիգոր եկեղեցու հյուսիսային պատը,

75. Անի. Ս. Գրիգոր եկեղեցու սյունասրահից մի հատված,

76. Անի. պարիսպն ու մատուռը (Կուսանաց անապատն է – Ա. Ա.),

77. Անի. մզկիթ և մինարեթ (Մանուչեի մզկիթն է – Ա. Ա.),

78. Անի. շինություն միջնաբերդում,

79. Անի. միջնաբերդի շինության որմնամույթը,

80. Անի. միջնաբերդի մատուռի մուտքի հատվածը,

81. Անի. բնապատկեր հարավային ծայրամասից,

82. Անի. Ս. Գրիգոր մատուռի (Աբուղամրենց եկեղեցի – Ա. Ա.) արևելյան կողմը,

83. Անի. Ս. Գրիգոր մատուռի մուտքը,

84. Անի. Ս. Գրիգոր մատուռի ներսը,

85. Անի. Փրկչի մատուռը,

86. Անի. պալատը,

87. Անի. պալատի մուտքը,

88. Անի. Առաքելոց եկեղեցու շքամուտքը արևմուտքից,

89. Անի. Առաքելոց եկեղեցու արևելյան ճակատը,

90. Ղոշավանք (Հոռոմոսի վանքն է – Ա. Ա.). արևելյան կողմ,

91. Ղոշավանք. մատուռները Արփաչայի հարթավայրում,

92. Ղոշավանք. նախամուտք,

93. Ղոշավանք. նախամուտքի արտաքին տեսքն ու եկեղեցին հարավ-արևմուտքից,

94. Ղոշավանք. սինոդի դահլիճը,

95. Կարսի միջնաբերդը,

96. Տարեց մոլոկան Վլադիկարսից,

97. Տուն Նովո-Միխայլովկայում,

98. Աղրիդաղը Արաքսի կիրճից,

99. Արաքսի կիրճի հյուսիսային պատը կազմող ժայռերը,

100. Արաքսը Կագիզմանի (՞) մոտ,

101. Նայելով ցած՝ Կագիզման գյուղին,

102. Կարավանքը Աղրիդաղում,

103. Աղրիդաղի հենարանի եզրը,

104. Կիրճ Աղրիդաղում:

Աշխատության երկրորդ հատորում ընդգրկված լուսանկարների ցանկը.

1. Ալաշկերտի հովիտը Աղրիդաղի լանջերից,
2. Քուրդ համիդիեների հեծելազոր խումբը,
3. Քարափափախ համիդիեների հեծելազոր խումբը,
4. Քարավանքը Սև ծովում. Թավրիզի առևտրային երթուղին,
5. Կուսեդաղը Ալաշկերտի հովտից,
6. Ղարաքիլիսան հարավ-արևմուտքից,
7. Յուսուֆ բեյը Քոշկից,
8. Քոշկի քուրդը տոնական զգեստով,
9. Սիփանը Պատնոցի հարթավայրից,
10. Ականց,
11. Արճիշի ավերակները հյուսիսից,
12. Արճիշի ավերակները հարավից,
13. Մեր նավակը Վանա լճում,
14. Տեսարան Կտուց կղզում,
15. Կտուցի եկեղեցու շքամուտքը,
16. Վանը Վարագ լեռան լանջերից,
17. Բրոնզե վահան Թոփրակ-կալեից (Բրիտանական թանգարան),
18. Բրոնզե դրվագ Թոփրակ-կալեից (Բրիտանական թանգարան),
19. Ձարդաքանդակ Թոփրակ-կալեից (Բրիտանական թանգարան),
20. Վանի հայ վաճառականի տունը,
21. Հայկավանքի ներսը արևելքից,
22. Վան քաղաքի ժայռն ու պարիսպները,
23. Քաղաքի փողոցներից,
24. Վան. Ուլու Ժամի մզկիթի ներսը,
25. Վան. ֆրիզ Ուլու Ժամիում,
26. Վան. Ակ Քոփրիի ապառաժը,
27. Վան. Միերի սեպաձև արձանագրությունը կամ Չոբան Կապուսին,
28. Վան. Վարագ լեռը Թոփրակ-կալեի բարձունքներից,
29. Յեդիքիլիսա վանքը (Վարագ),
30. Յեդիքիլիսայի եկեղեցու ներսը,
31. Վանը Բիթլիսի ճանապարհից,
32. Լեռնաշղթա Վանա լճի հարավային ափի մոտ,
33. Աղթամար կղզին,

34. Աղթամար. եկեղեցին հարավ-արևելքից,

35. Աղթամար. եկեղեցին հյուսիս-արևմուտքից,

36. Աղթամարի եկեղեցի. հյուսիսային պատի քանդակները,

37. Սրբի հրվանդանը,

38. Նեմրութի խառնարանը Գարզիկից Բիթլիս գնացող ճանապարհից,

39. Բիթլիսը Ավել Մայդանից,

40. Բիթլիս. ամրացված վանքը,

41. Շամիրամի թունելը,

42. Ներքևում Բիթլիսչայի գյուղն է,

43. Կիրկուկդաղը հարավից. հետևում Նեմրութի խառնարանն է,

44. Նեմրութի խառնարանը հրաբխային սարահարթից,

45. Երիտասարդ քուրդ կինը Գոթնիից, Մշո դաշտ,

46. Հայկական Խասկուի գյուղը, Մշո դաշտ,

47. Խասկուիի ունևոր բնակիչ, Մշո դաշտ,

48. Ս. Կարապետ վանքը հարավից,

49. Ս. Կարապետ եկեղեցին հարավ-արևմուտքից,

50. Ս. Կարապետի սանդղավանդից հարավ ընկած տեսարանը,

51. Ս. Կարապետի երկու եկեղեցիները,

52. Աղդաղն ու Խինիսի հարթավայրը հարավից,

53. Ձեռակերտ ամրաշինության նմանվող Լավայի սանդղավանդը,

54. Կենտրոնական սարահարթը, հեռվում՝ Բինգյոլը, մոտակա Կուլլիից,

55. Նայելով ներքևի գյուղին՝ Վերին Արաքսից Ներքին Մեջիթլիից,

56. Կարգաբազարը, Պասինի հարթավայրի մեջ, Կենտրոնական սարահարթի հարավային եզրից,

57. Էրզրումն ու դաշտը հարավից,

58. Էրզրումը բրիտանական հյուպատոսարանի տանիքից, միջին պլանում միջնաբերդն է, հետին պլանում՝ Էյրլիդաղը,

59. Էրզրում. գլխավոր մինարեթը,

60. Հայ երիտասարդներ,

61. Հայ օրիորդներ,

62. Հայ ընտանիքի հինգ սերունդ,

63. Անվերնագիր (Բինգյոլի հարթավայրն է – Ա. Ա.),

64. Նայելով դեպի արևելք-հարավ-արևելք մոտակա Կոպ լեռնանցքից,

65. Ճորոխի ափերը Բայբուրդի վրա,

66. Վարզահանի հայկական գերեզմանատունը,

67. Կալաճիկի ամրոցը, վերևում Խարշուտն է,

68. Սումելայի վանքը,

69. Թեկմանն ու Բինգյոլդաղը մոտակա Խեդոնունից,

70. Խամուրը Ալի Մուրի և Խինիսի միջակա լեռնանցքից,

71. Քուրդ պարող տղան գոպալից,

72. Մելազկերտը հյուսիսից, հետևում՝ Սիփանը,

73. Ախլաթ. Իկի Կուբ (հետին պլանում՝ Կալան կամ Օսմանյան քաղաքը),

74. Սելջուկյան խեցեղենի դրվագ Ախլաթից,

75. Ախլաթ. առանձնացված մահարձան,

76. Անվերնագիր (զարդաքանդակ է – Ա. Ա.),

77. Ախլաթ. Խարաբ-Շեր կամ Հին քաղաքի տեղը,

78. Նեմրութի խառնարանը Կիզվագի հրվանդանից,

79. Լիճ Նեմրութի խառնարանում,

80. Ուրան Գազի գյուղն ու Սիփանը,

81. Սիփան. տեսքը արևմտյան գագաթից,

82. Խամուրի գագաթի քարանձավը,

83. Գումգումի համիդեական հեծելազորը,

84. Գունդեմիրի հայկական գյուղը. հետին պլանում՝ Բինգյոլի ժայռերը,

85. Բինգյոլի ժայռերն ու Բինգյոլ Սուի ակունքները Չաղելիկ գյուղից,

86. «Բինգյոլի խառնարանը» Մորաինի մոտավորապես կենտրոնից, Կարա Կալա:

ԱՐԱՄ ՎՐՈՒՅՐ

Արամ Վրույրն ականավոր դերասան ու բեմադրիչ է, Թիֆլիսի, Բաքվի և Ռուսաստանի մի շարք հայաշատ քաղաքների թատրոններում բազմաթիվ դրամատիկական և բնութագրական կերպարներ ստեղծած տաղանդավոր կատակերգակ: Սակայն մեզ ամենից առաջ հետաքրքրում է նրա լուսանկարչական գործունեությունը:

Արամ Վրույրը (Արամ Մաքաշչյան) ծնվել է 1863 թ. մարտի 13-ին Կ. Պոլսում: Բեմական գործունեությունն սկսել է 1882 թ. Թիֆլիսում: Աշխատել է Թիֆլիսի, Բաքվի և այլ քաղաքների թատերախմբերում: 1890 թ. Կ. Պոլսում տեղի ռամկական բարբառի է փոխադրել և բեմադրել Գաբրիել Սունդուկյանի «Պեպո»-ն՝ մարմնավորելով գլխավոր հերոսին: 1895 թ. Թիֆլիսում առաջին անգամ բեմադրել է Հակոբ Պարոնյանի «Պաղտասար աղբար»-ը, «Մեծապատիվ մուրացկաններ»-ը՝ մարմնավորելով գլխավոր

հերոսներին: Արևելահայ թատրոնում նրա թարգմանությամբ բեմադրվել են Մոլիերի «Տարտյուֆ», «Ագահը», «Ժորժ Դանդեն», «Դոն Ժուան» պիեսները: Խաղացել է մոլիերյան մի շարք դերեր՝ Օրգոն («Տարտյուֆ»), Հարպագոն («Ագահը»), Սգանարել («Դոն Ժուան»), Արգան («Երևակայական հիվանդը») և այլն: Հեղինակել է մի շարք այլ բեմականացումներ, թարգմանություններ, պիեսներ՝ «Մտերմական ծեծ», «Վարժապետը», «Տերտերը շկափում» և այլն: 1891 թ. Թիֆլիսում հրատարակվել են Պետրոս Ադամյանին և Դավիթ Թրյանցին նվիրված նրա ուսումնասիրությունները, 1916 թ.՝ Ուզեիր Հաջիբեկովի «Արշին մալալան»-ը: 1891-1900 թթ. աշխատակցել է «Մուրճ» ամսագրին, եղել «Կայծեր» թերթի (1910-1911 թթ.), «Կարմիր աքլոր» երգիծական շաբաթաթերթի (1921 թ.) պատասխանատու քարտուղարը:

1907-1913 թթ. խմբագրել և հրատարակել է «Հուշարար» հանդեսը:

1912 թ. ընտրվել է Հայ գրողների Կովկասյան ընկերության անդամ:

Բեմական ու գրական գործունեությանը զուգընթաց շուրջ երեք տասնամյակ Վրույրը զբաղվել է հնագիտական լուսանկարչությամբ: 1904-1917 թթ. մասնակցել է Նիկողայոս Մառի գլխավորած գիտարշավներին (Անի, Գառնի, Վան և այլն): Ունի մի շարք հնագիտական ուսումնասիրություններ (ինչպես օրինակ՝ «Ջուղա», ՊԲՀ, 1967, թ. 4, էջ 169-180): Նրա անմիջական մասնակցությամբ հայտնաբերվել են Անիի Գագկաշեն տաճարի ավերակները (1905 թ.):

Արամ Վրույրը մահացել է 1924 թ. մարտի 5-ին Թիֆլիսում: Թաղված է Խոջիվանքի պանթեոնում[48]:

Լուսանկարիչներ դարձան նաև Արամ Վրույրի երկու որդիները՝ Արա Վրույրը (1896-1943 թթ.) և Արտաշես Վրույրը (1897-1987 թթ.):

Արամ Վրույրի մասին Լեոն գրում է. *«Լուսանկարչական գործիքը այժմ համարյա յուրաքանչյուր ճանապարհորդի հետ մտնում է Անիի մեջ, վերցնում է ավերակների տեսարանները: Բայց հանգուցյալ Քյուրքչյանից հետո ոչ ոք այնքան շատ բան չէ արել Անին լուսանկարելու կողմից, որքան արել է դերասան Ա. Վրույրը: Նա սիրող լուսանկարիչ է և առանձնապես սիրում է հնությունները, իսկ ամենից շատ, իհարկե, Անին: Մի քանի ամառ Վրույրը ապրել է Անիում, ծանոթացել է նրա յուրաքանչյուր քարի, նրա դիրքերի բոլոր մանրամասնությունների հետ և ցույց է տվել մի մեծ,*

[48] Աղբյուրը՝ https://avproduction.am/?ln=am&page=person&id=2719 (մուտք՝ 11.07.2021):

տոկուն աշխատասիրություն: Քյուրքչյանը հրատարակեց հիսունից ոչ ավելի լուսանկարներ, իսկ Վրույրը մենակ, առանց օգնականների և մանավանդ առանց նյութական աջակցության, որ գործի ամենակարևոր կողմն է, հանել է երկու հարյուր տեսարան, որոնցից հարյուրը արդեն հրատարակել է: Հայ բեմի այդ համեստ և ինչ ասել կուզի չքավոր գործիչը կարելի է ասել Անիի մեջ և Անիի շուրջը ոչինչ անծանոթ բան չէ թողել այնպես, որ նրա ժողովածուն ավերակների մայրաքաղաքի լիակատար ամենամանրամասն տեսարանացույցը պիտի դառնա»[49]:

Մաշտոցյան Մատենադարանում են պահվում Արամ Վրույրի լուսանկարների զույգ ժողովածուները: Եվս երկու լուսանկար հաջողվել է հայտնաբերել մեկ այլ ծրարից: Որոշ լուսանկարներ էլ պահպանվել են որդու՝ Արտաշես Վրույրի հեղինակած «Անիում» գրքում (Երևան, 1979 թ.), որոնց դեռ կանդրադառնանք:

Առաջին ժողովածուն («Վրույր-1») Մատենադարանի գույքամատյանում գրանցված է որպես «Անիի եկեղեցիների լուսանկարներ»[50] և պարունակում է 123 լուսանկար: Դրանց մեծ մասը (100 համարակալված լուսանկար, որոնցից մի քանիսը բացակայում են) Անիի նկարներն են, մնացյալ մասը՝ (23 լուսանկար) Էջմիածնինը: Առավել քան համոզված ենք, որ Անիի այդ 100 լուսանկարները Լեոյի նշած այն 100 (200-ից) լուսանկարներն են, որոնք Վրույրը հրատարակել է: Ինչպես Քյուրքչյանի ժողովածուների դեպքում, այստեղ ևս առկա են զույգ լուսանկարներ կրող փոքրածավալ տախտակներ՝ այս անգամ «Անի, Բագրատունեաց մայրաքաղաքը, ստերէօսկոպ. ժողովածու, լուսագրիչ Ա. Վրոյր» վերտառությամբ (նույնը՝ դարձերեսին, նաև ռուսերեն): Նկարագրությունը տրված է տախտակների դարձերեսին (որոշ լուսանկարներում հայերենի հետ նաև ռուսերեն մեկնաբանությունն է):

Լուսանկարների տարեթիվը բավական դժվար է պարզել: Շնորհիվ Արտաշես Վրույրի «Անի» հուշագրության վերջում զետեղված լուսանկարների մեկնաբանությունների՝ մի քանիսի թվականները հստակեցվել են, սակայն մեծ մասինը դեռևս անորոշ են:

[49] ***Լեո,*** Անի. տպավորություններ, հիշատակներ, անցածն ու մնացածը, էջ 65-66:
[50] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 659:

«Վրույր-1» ժողովածուի լուսանկարները հետևյալն են.

Անիի լուսանկարներ.

1. Աւագ դուռը եւ բուրգեր դէպի արեւմուտք,
2. Բուրգերի շարքը աւագ դրան մօտից,
3. Եռայարկ բուրգ աւագ դրան մօտ, 1896 թ.,
4. Աւագ դուռը արտաքին պարսպի վերայ,
5. Աւագ դրան մօտ քանդակւած առիւծը,
6. Աւագ դուռը (ներքին պարիսպներ), մզկիթ, միջնաբերդ,
7. Աւագ դուռը եւ եռայարկ բուրգը (ներսից),
8. Կործանւած մինարէ եւ Ս. Գրիգոր,
9. Մայր եկեղեցին (Կաթուղիկէ) արեւելահարաւից,
10. Կաթուղիկէն, հիւսիս-արեւմուտքից,
11. Կաթուղիկէի ներքին տեսարանը (հարաւ-արեւելք),
12. Մզկիթ, արևմուտքից,
13. Մզկիթ, Կաթուղիկէ, Ս. Փրկիչ, 1915 թ.,
14. Մզկիթ, ներքին տեսարան,
15. Ախուրեան գետ եւ կամուրջ (միջնաբերդից),
16. Միջնաբերդի թ. 1 եկեղեցին (հարաւ-արեւելք),
17. Միջնաբերդի թ. 1 եկեղեցու դուռը (հարաւից),
18. Ախուրեան. հին Անի ամրոցը,
19. Ախուրեան. Անի ամրոցը թ. 2 եկեղեցու մօտից,
20. Կաթուղիկէ, հիւրատուն, Ս. Փրկիչ (միջնաբերդից),
21. Առաքելոց եկեղեցու գաւիթը, 1900 թ.,
22. Ապուղամրենց Ս. Գրիգոր հիւսիսից եւ միջնաբերդ, 1903 թ.,
23. Ապուղամրենց Ս. Գրիգոր հարաւից,
24. Արքունիք. ընդհ. տեսարան հարաւից,
25. Արքունիք. սենեակներ հարաւից,
26. Արքունիք. գլխաւոր մուտք,
27. Ծաղկաձոր. պալատի սենեակներից,
28. Արքունիք. աղբիւր (ներքին տեսարան),
29. Ծաղկ. եւ քարայրեր պալատի լուսամ. Ալաճա լեռը,
30. Հյուսիսային ամրութիւնների ներքին ընդհանուր տեսարան,
31. Երեք մեծ բուրգեր (ներքին տեսարան),
32. Ամրութիւնների հիւսիսարեւմտեան անկիւնը (դրսից),
33. Ամրութիւնների հիւսիսարեւմտեան անկիւնը (ներսից),

34. Արևմտեան ամրութիւնների բեկորներ,

35. Արքունիք՝ Ծաղկաձորից եւ քարայրեր թ. 1,

36. Արքունիք՝ Ծաղկաձորից եւ քարայրեր թ. 3,

37. Հիւսիսային ամրութիւնների զոյգ բուրգերը եւ Կարսի դուռը, 1912 թ.,

38. Զոյգ մեծ բուրգերի ներքին տեսարանը,

39. Ս. Փրկիչ Ապլղարիպ իշխանի. հարաւից,

40. Ս. Փրկիչ Ապլղարիպ իշխանի. արեւմուտքից,

41. Ս. Փրկչի արեւմտեան քանդուած մասը,

42. Ս. Փրկչի դուռը,

43. Բուրգ Դւնոյ դրան մօտ (ներսից),

44. Բուրգ Դւնոյ դրան մօտ (ներսից),

45. Ս. Լուսաւորիչ Տիգրան իշխանի (արեւելահարաւ),

46. Բեխենց վանք (՞), Ախուրեան Գ.,

47. Բեխենց վանք (՞), Ախուրեան, կամուրջ, միջնաբերդ,

48. Միջնաբերդի թ. 1 եկեղեցին հարաւ-արեւմուտքից,

49. Իգաձորի դուռը և քարայրեր,

50. Դէպի արեւմուտք ձգւող ամրութիւններ,

51. Ծաղկաձորի տեսարանը մի եկեղեցու մնացորդի մօտից,

52. Երեք եկեղեցիներ Ախուրեանի ձորում և Աշոտ Ողորմածի գերեզ-մանը,

53. Ս. Գևորգ եկեղեցի և Աշոտ Ողորմածի գերեզմանը,

54. Աշոտ Ողորմածի գերեզմանը,

55. Ամրութիւնների շարքը Դւնոյ դրան մօտից մինչև աւագ դուռը,

56. Մայր եկեղեցու արևելեան պատի ձախակողմեան խորշը,

57. Ամրութիւնների բարձր բուրգերի ընդհ. տեսարանը ներսից,

58. Առաքելոց եկեղեցու ընդհանուր տեսարանը,

59. Մայր եկեղեցու արևմտեան աջակողմի լուսամուտը,

60. Միջնաբերդի ստորոտում ամրութիւնների վերջին բուրգը,

61. Մայր եկեղեցւոյ արևելեան պատը,

62. Պարսպի դրսից տեսարանը դէպի քաղաքի կեդրոնը, 1914 թ. (՞),

63. Հիւսիսային ամրութիւնների վերջին բարձր բուրգը ներսից,

64. Անւոյ բնական ամրութիւնները Ախուրեանի ձորից մատուռ և մզկիթ,

65. Ծաղկաձորի ընդհանուր տեսարանը քաղաքից,

66. Քանդակազարդ քարերի հաւաքածոյ թ. 1, պրոֆ. Մառի պեղում-ներից,

67. Դէպի Գլիձոր (՞) ամրութիւնների վրայից Դւնոյ դուռը (ներքին տեսարան),

68. Ախուրեանի վրայ կամուրջ հիւսիսից,

69. Առաքելոց եկեղեցու գաւթի դուռը,

70. Մայր եկեղեցու քանդուած անկիւնից մզկիթ եւ Ալաճայ լեռը,

71. Բեխենց վանքը արևմուտքից,

72. Քարայրերի միջից տեսարան Իգաձորի քարայրերի,

73. Ախուրեանի օձապտոյտ ընթացքը Մայր եկ. հարաւակողմից,

74. Արևմտեան ամրութիւններ Իգաձորի շուրջը,

75. Ս. Լուսաւորչի արևմտեան պատը և գաւիթը,

76. Ս. Լուսաւորչի հարաւարևելեան տեսարանը,

77. Միջնաբերդի և պրոֆ. Մառի պեղումները,

78. Յաղթական կամար Հոռոմոսի վանքի մօտ,

79. Արևի ժամացոյց Հոռոմոսի վանքի վրայ,

80. Մայր եկեղեցին հարաւ-արևմուտքից,

81. Անւոյ բնական ամրութիւններ հարաւից և Ախուրեան,

82. Քանդակազարդ քարերի հաւաքածոյ, թ. 2,

83. Քարափոր տաճարների և դամբարանների մնացորդները Ծաղկաձորում,

84. Գագիկ արքայի շինած Ս. Լուսաւորչի մնացորդը,

85. Հիւսիսային (՞) ամրութիւններից մէկը վիշապի և եզան գլխի քանդակով,

86. Անի գիւղը արևելքից,

87. Մայր եկեղեցու հարաւձախակողմեան լուսամուտները,

88. Միջնաբերդի բարձունքից դէպի Ծաղկաձոր,

89. Ս. Լուսաւորչի հիւսիսային պատը,

90. Առաքելոց եկեղեցու գաւթի ներքին տեսարան,

91. Ձիթհանքի մնացորդ Ս. Լուսաւորչի,

92. Մայր եկեղեցու հարաւային դուռը,

93. Բուրգ աւագ դռան մօտ արեւելքից,

94. Ս. Լուսաւորչի հարաւային պատին մասը,

95. Ամրութիւնների դէպի արևմուտք դարձած մասը,

96. Կամուրջ Ախուրեանի վրայ հարաւից:

«Վրույր-1» ժողովածուի էջմիածնի լուսանկարները (չհամարակալված).

1. Ս. Էջմիածին. արևմուտքից (իրականում Մայր տաճարը պատկերված է հարավ-արևելքից – Ա. Ա.),

2. Էջմիածնի ճեմարանը հարաւից,

3. Գամառ Քաթիպայի արձանը ճեմարանի բակում,

4. Էջմիածնի ճեմարանի նախասենեակը,

5. Էջմիածնի ճեմարանի ննջարանը,

6. Էջմիածնի միաբանութեան հին խուցերը,

7. Էջմիածնի միաբանութեան նոր խուցերը արևելքից,

8. Էջմիածնի միաբանութեան նոր խուցերը արևմուտքից,

9. Էջմիածնի միաբանութեան սեղանատունը,

10. Թանգարան և վեհափառ Հայրիկ ծիաւոր,

11. Էջմիածնի հին հիւրատուն (այժմ քանդուած),

12. Էջմիածնի Ներսեսեան անտառ,

13. Ս. Հռիփսիմէի վանքը,

14. Ս. Գայիանէի վանքը,

15. Ս. Շողակաթի վանքը,

16. Զուարթնոցի եկեղեցու սենեակների մնացորդները,

17. Զուարթնոցի եկեղեցու հարաւարևմտեան սիւնը,

18. Զուարթնոցի եկեղեցու Սեղանը հարաւից,

19. Զուարթնոցի եկեղեցու Սեղանը արևմուտքից,

20. Անվերնագիր (Զվարթնոցի տաճարի երկու խոյակները – Ա. Ա.),

21. Զուարթնոցի տաճարի խոյակներ, թ. 2,

22. Զուարթնոցի տաճարի խոյակներ, թ. 3,

23. Զուարթնոցի եկեղեցու 3000-ամեայ սեպաձև արձանագիր:

Երկրորդ ժողովածուն («Վրույր-2»), բացառությամբ մեկ լուսանկարի, «Վրույր-1» ժողովածուի հետ նույնական է: Մատենադարանի գույքամատյանում գրանցված է որպես «Ծավալադիտական (ստերեոտիպ) նկարների ժողովածու. Էջմիածին և շրջակայք»[51]: «Վրույր-1»-ի նման այստեղ ևս առկա են նույնատիպ տախտակներ՝ նույնպիսի գրությամբ. «Անի, Բագրատունեաց մայրաքաղաքը, ստերէօսկոպ. ժողովածու, լուսագրիչ Ա. Վրոյր» (ռուսերեն): Նկարագրությունը դարձյալ տրված է տախտակների դարձերեսին (երբեմն՝ նաև ռուսերեն):

[51] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հմր 417:

«Վրույր-2» ժողովածուն պարունակում է նախորդի հետևյալ լուսանկարները.

Անիի լուսանկարներ.

1. Ախուրեան գետ եւ կամուրջ (միջնաբերդից),

2. Ախուրեան. Անի ամրոցը թ. 2 եկեղեցու մօտից,

3. Առաքելոց եկեղեցու գաւիթը,

4. Հիւսիսային ամրութիւնների ներքին ընդհանուր տեսարան,

5. Ամրութիւնների հիւսիսարեւմտեան անկիւնը (դրսից),

6. Ս. Փրկչի դուռը,

7. Բեխենց վանք (՞), Ախուրեան, կամուրջ, միջնաբերդ,

8. Միջնաբերդի ստորոտում ամրութիւնների վերջին բուրգը:

Էջմիածնի լուսանկարներ.

1. Ս. Էջմիածին. արևմուտքից (իրականում Մայր տաճարը պատկերված է հարավ-արևելքից – Ա. Ա.),

2. Էջմիածնի ճեմարանը հարաւից,

3. Գամառ Քաթիպայի արձանը ճեմարանի բակում,

4. Էջմիածնի ճեմարանի նախասենեակը,

5. Լիճ և Էջմիածին (սա միակ լուսանկարն է, որ չի հանդիպում «Վրույր-1» ժողովածուում),

6. Ս. Հռիփսիմէի վանքը,

7. Ս. Գայիանէի վանքը,

8. Ս. Շողակաթի վանքը,

9. Զուարթնոցի եկեղեցու սենեակների մնացորդները,

10. Զուարթնոցի եկեղեցու հարաւարևմտեան սիւնը,

11. Զուարթնոցի եկեղեցու Սեղանը հարաւից,

12. Զուարթնոցի եկեղեցու Սեղանը արևմուտքից,

13. Անվերնագիր (Զվարթնոցի տաճարի երկու խոյակները – Ա. Ա.),

14. Զուարթնոցի տաճարի խոյակներ թ. 2,

15. Զուարթնոցի տաճարի խոյակներ թ. 3,

16. Զուարթնոցի եկեղեցու 3000-ամեայ սեպաձև արձանագիր:

Արամ Վրույրի ևս երկու լուսանկար (թիֆլիսյան մի հրապարակում հավաքված ժողովուրդ և Թիֆլիսի Հայոց վանքը) պահպանվել է Մատենադարանի Հմր 1083 պատկերագրքում: Երկու լուսանկարին էլ նույն մակագրությունն է. *«Գերապատիւ Արիստակէս եպ. Սեդրակեանին յարգանօք՝ լուսանկարչից»*:

Ինչպես նշեցինք, Վրույրի որոշ լուսանկարներ էլ հրատարակվել են նրա որդու՝ Արտաշես Վրույրի հեղինակած «Անիում» գրքում: Բերենք այն լուսանկարների անունները, որոնք չեն հանդիպում «Վրույր-1» և «Վրույր-2» ժողովածուներում[52].

1. Անի. կամուրջի մնացորդները, հեռվում՝ Կուսանաց վանքը, 1890 թ.,

2. Անի. հյուսիսային ամրությունները, 1896 թ.,

3. Անի. Առաքելոց եկեղեցու գավթի քանդակազարդ ճակատը, 1900 թ.,

4. Անի. մեծ մինարեի մնացորդները, 1900 թ.,

5. Անի. հյուսիսային ամրությունները ավագ դռան մոտ, 1900 թ.,

6. Անի. Ախուրյան գետը, Կուսանաց վանքը, կամուրջի ավերակները, Մանուչե, Միջնաբերդ, 1900 թ.,

7. Անի. Տիգրան Հոնենցի եկեղեցու մուտքը և գավթի ավերակները, 1902 թ.,

8. Անի. հյուսիսային ամրություններ. ավագ դուռը քաղաքի կողմից, 1903 թ.,

9. Անի. Ապուղամրենց Ս. Գրիգոր, 1903 թ.,

10. Անի. Տ. Սիրանույշը Առաքելոց եկեղեցու գավթի առջև, 1904 թ.,

11. Անի. Գագիկ Ա Բագրատունի թագավորի տուֆակերտ արձանը, 1907 թ.,

12. Անի. Ն. Մառ. Միջնաբերդում. հեռվում՝ Մանուչե, Մայր տաճար, 1908 թ.,

13. Անի. Փրկիչ եկեղեցին, 1912 թ.,

14. Անի. Դվնո դուռը քաղաքի կողմից, 1912 թ.,

15. Անի. Գլաձորի ամրությունները վիշապակիր բուրգով, 1912 թ.,

16. Անի. ամրություններ Տիգրան Հոնենցի եկեղեցու մոտ, 1914 թ.,

17. Անի. երկու բուրգ և Փրկիչ եկեղեցին, 1914 թ.,

18. Անի. Քարեդարան, 1915 թ.,

19. Անի. Մանուչե, Մայր տաճար, Փրկիչ, 1915 թ.,

20. Անի. թանգարան-անկյուն, 1915 թ.,

21. Անի. Ծաղկոցաձոր. ժայռափոր բնակարաններ Անի գյուղի մոտ, 1915 թ.,

22. Անի. Բախտաղեկի եկեղեցու քանդակազարդ բեկորներ, 1916 թ.,

23. Անի. Միջնաբերդի ամրությունները Ծաղկոցաձորի կողմից, Միջնաբերդի փոքր եկեղեցին, Մայր տաճարը, հեռվում՝ Փրկիչ, ա. թ.,

24. Անի. Կույսի ամրոցը, Ախուրյան գետը և Պերճ Պռոշյան, ա. թ.[53]*:*

---

[52] Վերնագրերը ներկայացնում ենք այնպես, ինչպես տրված է Արտաշես Վրույրի գրքում: Թվականները և հեղինակները միշտ չէ, որ ճիշտ են:

[53] Հեղինակը նշված չէ. ենթադրաբար Արամ Վրույրն է:

ԳՆՈՒՆԻ-ՄԱՐԻՄ

Մեզ հետաքրքրող լուսանկարների հաջորդ հավաքածուն ստեղծել է Գնունի-Մարիմը ֆոտոտիպիայի[54] միջոցով, 1903 թ. (գործել է Թիֆլիսում, Պուշկինյան պասաժ): Օրինակներից մեկը պահվում է Մաշտոցյան Մատենադարանում[55]: Առաջին էջում նշված է. *«Ալբոմ գեղարուեստական, ՊՄ, պրակ Ա, Թիֆլիս, 1903»*: Պարունակում է հայկական պատմաճարտարապետական հուշարձանների տասը (օրինակում առկա է ինը) լուսանկար՝ վերնագրված հայերեն, ռուսերեն և ֆրանսերեն:

Պատկերագրքի վերջում զետեղված հայտարարության մեջ ասվում է, որ ներկա՝ Ա պրակով սկիզբ է դրվում նմանօրինակ գեղարվեստական շարքի: Սակայն շարունակություն ունեցե՞լ է արդյոք այս պրակը, թե՞ ոչ, առայժմ հայտնի չէ:

Լուսանկարների ցանկը հետևյալն է.

1. Ապարանք Բագրատունեաց (Անի)[56],

2. Ս. Ստեփաննոս (Խծկօնք, Շիրակ),

3. Ս. Փրկիչ (Անի),

4. Հինգ Սուրբք (Խծկօնք, Շիրակ),

5. Վերնագրի թուղթը բացակայում է (Խծկոնքի Ս. Սարգիս եկեղեցին է – Ա. Ա.),

6. Ս. Գէորգ և Ս. Մինաս (Շիրակ),

7. Հոռոմոսի վանք (Խոշավանք, Շիրակ),

8. Հինգ Սուրբք (Խծկօնք, Շիրակ),

9. Կաթողիկոսարան (Անի) (լուսանկարը բացակայում է – Ա. Ա.),

10. Ս. Աստուածածին (Ղարա-Քիլիսէ):

Որոշ լուսանկարներ հրատարակվել են ֆրանսիական «Աշխարհի շուրջ» ամսագրից, որը լույս է տեսել 1860-1913 թթ.:

---

[54] Ֆոտոտիպիա և լուսատիպիա (հին հուն. φῶς, φωτός – լույս և τύπος – դրոշմ, ձև). լուսամեխանիկական գործընթաց, որը նախատեսված է հարթ տպագրության միջոցով տպագրական կլիշե ստանալու և բարձրորակ կիսատոնային պատկերներ տիրաժավորելու համար: Լուսանկարների պոլիգրաֆիական վերարտադրության բոլոր միջոցներից լուսատիպիան համարվում է առավել բարձրորակը և զիջում է միայն հելիոգրավյուրին: «Ֆոտոտիպիա» տերմինը կիրառվում է ինչպես բուն գործընթացի, այնպես էլ դրա միջոցով ստացված դրոշմների բնորոշման համար:

[55] Մատենադարանի գույքամատյանում՝ պատկերագիրք Հ^{մր} 367:

[56] Պարոնի պալատն է – Ա. Ա.:

ԱՎԵՏԻՍ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿԱԾ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ա. Ուսումնական ձեռնարկներ

1. «ՀՀՆ-9Մ հակատանկային նռնականետի ուսումնական ձեռնարկ», ***պատասխանատու խմբ.՝ փոխգնդապետ Մ. Մարտիրոսյան, մշակող և թարգմանիչ՝ Ա. Ավետիսյան, նկարների մշակումը՝ ենթասպա Ա. Խաչատրյանի, Երևան, 2013, 163 էջ:***

Այս աշխատությունը Ա. Ավետիսյանը ռուսերենից թարգմանել և լրամշակել է, որից հետո այն հաստատվել և հրատարակվել է պաշտպանության նախարարի հրամանով (Հ^{մր} 1291): Բովանդակում է հակատանկային միջոցների, ի մասնավորի՝ նռնականետի կառուցվածքի ընդհանուր, կիրառման և պահպանման բնութագիրը:

2. «Լեռնային պատրաստության հրահանգ - ուսումնական ձեռնարկ», ***պատասխանատու խմբ.՝ փոխգնդապետ Մ. Մարտիրոսյան, մշակող և թարգմանիչ՝ Ա. Ավետիսյան, նկարների մշակումը՝ ենթասպա Ա. Խաչատրյանի, Երևան, 2014, 195 էջ:***

Աշխատությունն իր ծրագրային և բովանդակային հենքով նախորդի տրամաբանական շարունակությունն է, հրատարակվել է պաշտպանության նախարարի Հ^{մր} 797 հրամանով: Ձեռնարկում ներկայացվում են լեռնային պատրաստության գործընթացում ստորաբաժանումների կազմակերպման առաջնային դրույթները, տեղաշարժվելու տեխնիկայի հիմունքները, զինծառայողներին փրկելու միջոցները, հրահանգիչների պատրաստությունն ու գնահատման չափանիշները:

Բ. Գիտական հոդվածներ

1. «Գնդեվազի Ս. Աստվածածին եկեղեցին», ***«Լրաբեր» հաս. գիտ., 2018, Հ^{մր} 3, էջ 259-277:***

Հոդվածում հեղինակն անդրադառնում է ՀՀ Վայոց ձորի մարզի Գնդեվազ գյուղի տեղագրությանը, Ս. Աստվածածին եկեղեցու պատմաճարտարապետական նկարագրին, վիմագրությանը, որմնանկարներին,

կառույցի մասին մինչխորհրդային շրջանը հայտնի հիշատակումներին: Հատկանշելի է որմնանկարներին նվիրված քննությունը, որտեղ առաջին անգամ ներկայացվում են հուշարձանի վաղ (XVIII-XIX դդ.) և ուշ (1906 թ.) շրջաններով թվագրվող որմնանկարչության յուրօրինակ դրսևորումները: Հոդվածի վերջում հեղինակն արձանագրում է, որ որմնանկարները պատկերագրական և ոճական առումով կարիք ունեն առավել մանրակրկիտ և համակողմանի ուսումնասիրության, որը հնարավոր կլինի իրականացնել եկեղեցու վերականգնման աշխատանքներից հետո, երբ կհեռացվի ավագ խորանի ծեփաշերտը:

2. «Աստվածատուր Աստապատցի. նոր անուն XVIII դարի հայ որմնանկարչության ասպարեզում», ***«Պատմաբանասիրական հանդես», 2019, Հմր 2, էջ 78-92:***

Աշխատությունը նվիրված է XVII-XIX դդ. սակավ ուսումնասիրված հայ կերպարվեստի պատմության երևելի ներկայացուցիչներից մեկի՝ Աստվածատուր քահանա Աստապատցու որմնանկարչական արվեստի քննությանն ու վերհանմանը: Հայտնի չորս եկեղեցիներում (Կարճևանի Ս. Աստվածածին, Մեղրիի Անապաստանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ, Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ, Մեծ թաղի Ս. Աստվածածին) պահպանված որմնանկարների հիմամբ հեղինակը փորձել է ներկայացնել արվեստագետի ստեղծած որմնանկարների ոճական առանձնահատկությունները, թեմատիկան, ինչպես նաև՝ ներկագիր արձանագրությունները:

3. «Մեղրիի Անապաստանաց վանքի որմնանկարները», ***«Լրաբեր» հաս. գիտ., 2019, Հմր 3, էջ 219-230:***

Հոդվածի խնդրո առարկան Սյունյաց XVII դ. ճարտարապետական դպրոցի ինքնատիպ կառույցներից մեկի՝ Մեղրիի Անապաստանաց վանքի Ս. Հովհաննես Մկրտիչ գմբեթավոր եկեղեցու որմնանկարների արվեստաբանական քննությունն է: Հեղինակի հավաստմամբ՝ եկեղեցու ներսույթը երկիցս նկարազարդվել է XVIII դարում, մասնավորապես՝ 1745 և 1793 թթ.: Դրանց մասնագիտական ուսումնասիրությունը նոր էջ է բացում XVIII դարի հայ որմնանկարչական արվեստի լուսաբանման գործում: Իր եզրակացություններն ու դիտարկումները հեղինակը վավերացրել է անթերի, երբեմն էլ կիսաեղծ պահպանված ներկագիր արձանագրությունների միջոցով:

4. «Տրապիզոնի հայոց Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարները», ***«Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ Կ. Մաթևոսյան, Երևան, «Տիգրան Մեծ», 2019, էջ 125-151 (նկարները՝ էջ 361-365):***

Հոդվածը նվիրված է Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքի որմնանկարների՝ XVI դ. երկրորդ կեսի և XVII դ. առաջին կեսի հայ որմնանկարչության եզակի նմուշներին: Վանքում որմնանկարազարդման աշխատանքներ են իրականացվել 1593 և 1622 թթ.: Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է բրիտանացի բյուզանդագետ Դևիդ Թալբոթ Ռայսի (նաև՝ հետագա ուսումնասիրողների)՝ վանքի որմնանկարներին նվիրված նկարագրություններին ու դիտարկումներին: Մեծարժեք այս աշխատությունը կարևորվում է Ս. Ամենափրկիչ վանքի մասին ընդհանուր պատկերացում կազմելու և, այսպես կոչված, բյուզանդամետ որմնանկարները նորովի վերլուծելու տեսանկյունից:

5. «Ցուցակ հայ որմնանկարչության հուշարձանների (XVII դ. - XX դ. սկիզբ)», ***«Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 259-278 (նկարները՝ էջ 381-387):***

Ժամանակագրական այս ցուցակն ընդգրկում է XVII դարից մինչև XX դ. սկզբի որմնանկարչական հուշարձանները (110 միավոր): Հեղինակը հստակեցնում է յուրաքանչյուրի գտնվելու վայրը, ժամանակը (երբեմն՝ մոտավոր), թեմատիկ բովանդակությունը, վիճակը, հաճախ նաև՝ որմնանկարի հետ կապված այլ մանրամասներ: Տողատակում նշված է նաև տվյալ որմնանկարի վերաբերյալ նախորդ հրատարակությունների մատենագիտությունը:

6. «Նորահայտ ներկագիր արձանագրություններ Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում», ***«Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, էջ 289-291:***

Տեղեկատվական բնույթի այս հոդվածում ներկայացվում են Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու ներկագիր արձանագրությունների վերծանությունները (9 միավոր), որոնք ի հայտ են եկել 2018 թ. եկեղեցու որմնանկարների համալիր վերականգնման աշխատանքների արդյունքում: Արձանագրությունները հիմնականում որմնանկարների անվանական հիշատակումներն են, իսկ մեկը՝ կից «Հարության» որմնանկարին, չափածո է՝ նվիրված Տիրոջ գերեզմանը հսկող զինվորներին, յուղաբեր կանանց և «մի բնության» դավանությանը:

7. «Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների 2017-2019 թթ. ուսումնասիրման և վերականգնման աշխատանքները», ***«Հուշարձան» տարեգիրք, հ. ԺԵ, Երևան, 2020, էջ 9-29:***

Հոդվածում ներկայացված են Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների՝ 2017 թ. իրականացված ուսումնասիրության և 2018-2019 թթ. վերականգնման աշխատանքները: Աղոթասրահի գրեթե ողջ ներսույթը նկարազարդ է եղել, որոնք պահպանվել են հիմնական երեք շերտերում՝ 1700, 1793 և 1866 թթ.: Եկեղեցու որմնանկարների վերականգնման աշխատանքներ են իրականացվել դեռևս 1984-1986 թթ., սակայն տարբեր պատճառներով այն տևական բնույթ է կրել: Ա. Ավետիսյանի այս հրապարակումն ամբողջացնում է կատարված աշխատանքների ժամանակագրությունը մինչև ավարտը՝ 2019 թ. հուլիսի 30:

8. «Նորահայտ վիմական արձանագրություններ և վիմագրական ճշգրտումներ Էջմիածնի Մայր տաճարում», ***«Հայագիտության հարցեր», 2020, Հմր 1, էջ 113-128:***

Հոդվածում ներկայացվում են Ս. Էջմիածնի Մայր տաճարի որմնանկարների վերականգնման աշխատանքների ընթացքում հեղինակի փաստագրած 7 արձանագրություններ, որոնցից մեկը՝ ոչ վիմագիր: Արձանագրություններից երկուսը շինարարական բնույթի են, իսկ մյուսները՝ XVIII-XIX դդ. հիշատակագրություններ, մեկն էլ թվագիր է՝ ՌՃԼԵ. (1686): Հատկապես ուշագրավ է գմբեթի խաչաթոռի 1690 թ. արձանագրությունը, ըստ որի՝ այն նորոգվել է հիշյալ թվականին, քանզի վնասվել-խախտվել էր երկրաշարժից ու կայծակից: Ա. Ավետիսյանին հաջողվել է հստակեցնել նաև Մայր տաճարի զանգակատան կառուցման թվականը՝ ՌՃԴ-1655 թ., որին այլ առիթով ևս անդրադարձել է (տե՛ս Հմր 11):

9. «Ագուլիսի Ս. Թովմա տաճարը. ճարտարապետությունը, հարթաքանդակները և որմնանկարները», ***«Պատմաբանասիրական հանդես», 2020, Հմր 3, էջ 162-195:***

Նախիջևանի պատմական Գողթն գավառի Ագուլիս քաղաքի հռչակավոր Ս. Թովմա առաքյալի վանքն առաջին անգամ ներկայացվում է արվեստաբանական համալիր քննությամբ, որտեղ հատուկ ուշադրություն է դարձվում Ս. Թովմա տաճարի ճարտարապետությանը, հարթաքանդակներին ու որմնանկարչությանը: Նոր շրջանի հայ արվեստի լուսաբանման տեսանկյունից հատկանշելի են «Թովմայի անհավատությունը» հարթաքանդակն ու անկյունային հատվածների օձաքանդակները, ինչպես նաև պարսկական արվեստի ազդեցությամբ աչքի ընկնող որմնա-

նկարները: Հեղինակն այս ամենը մեկնաբանում է իբրև միջմշակութային փոխազդեցության հետաքրքիր օրինակ:

10. «Մեղրու Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների շերտերը, ժամանակաշրջանն ու հեղինակների խնդիրը», *«Էջմիածին», 2020, Թ, էջ 68-77 + 6 էջ ներդիր:*

Հոդվածում պարզաբանվում են դարձյալ Մեղրիի Փոքր թաղի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցու որմնանկարների ուսումնասիրության հետ կապված որոշ մանրամասներ, մասնավորապես՝ պարզ է դառնում, որ ավագ խորանի միջնամասի և գմբեթարդի որմնանկարներից բացի՝ 1866 թ. իրականացվել է 1700 թ. քայքայված որմնանկարների վերանկարում, որի ընթացքում թարմացվել են նախորդի խամրած գույները: Բացառված չէ, որ այս աշխատանքների ընթացքում վերջին նկարազարդողը բնօրինակում որոշ նորամուծություններ արած լինի:

11. «Էջմիածնի Մայր տաճարի Մեծ զանգակատան շինարարական արձանագրությունն ու հիմնարկեքի թվականի խնդիրը», *«Բանբեր հայագիտության», 2020, Հ^մր^ 3, էջ 100-111:*

Վիմագրական և մատենագրական սկզբնաղբյուրների հիմամբ լուսաբանվում է Ս. Էջմիածնի Մայր տաճարի մեծ զանգակատան կառուցման ժամանակաշրջանը, ի մասնավորի՝ վիմագրում վկայված առաջին թվականը, որը նախկինում ՌՃԳ-1654 են կարդացել, մինչդեռ վիմագրի նոր լուսանկարի հիմամբ ընթեռնելի է ՌՃԴ-1655: Քննությունը պարզում է, որ իրականում Մայր տաճարի հիմնարկեքը տեղի է ունեցել 1654 թ., իսկ վիմագրում նշված ՌՃԴ-ն (1655) ճարտարապետ Սահակ Հիզանցու և մյուս վարպետների աշխատանքի մեկնարկի տարեթիվն է:

Գ. Գրախոսություն

1. «Հայաստանի վաղմիջնադարյան մոնումենտալ գեղանկարչությանը նվիրված ուսումնասիրություն – Николай Котанджян, Монументальная живопись раннесредневековой Армении, Ереван, 2017, 264 стр.», *«Հայկական որմնանկարչություն» գիտական հոդվածների և նյութերի ժողովածու, կազմող և խմբագիր՝ Կ. Մաթևոսյան, Երևան, «Տիգրան Մեծ», 2019, էջ 297-299:*

Ըստ գլուխների մանրամասն ներկայացվում և արժևորվում է նշանավոր գեղանկարիչ, արվեստաբան Նիկոլայ Քոթանջյանի (1928-2013 թթ.)՝ ռուսերենով հրատարակված աշխատությունը: Այն կարևոր նշանակություն ունի հատկապես հայկական վաղմիջնադարյան արվեստում որմնանկարչության զբաղեցրած տեղն ու դերն արժևորելու տեսանկյունից:

THE SCIENTIFIC HERITAGE OF ART HISTORIAN AVETIS AVETISYAN

Summary

The collection of scientific articles and materials titled "*Pages of the History of Armenian Art*" completes the full description of professional pursuits and investigations of art historian Avetis Avetisyan, who heroically died during the 44-day war in Artsakh. This volume comprises the main part of the young scholar's unpublished papers, stored in his digital repository. There are articles and materials dedicated to different questions of art studies (16 units). We have conventionally grouped them into two main sections: "Frescoes" and "Historical-Cultural Heritage". In fact, the frescoes are also an inseparable part of the historical-cultural heritage, but here we have separated it due to the author's general professional direction and the quantitative advantage of similar articles.

The articles and materials included in the first section represent the general description and featured list of Armenian frescoes from the Kingdom of Van to nowadays. Besides the articles, which includes a vast time period, the author also referred to the issues of research, conservation, and restoration of some frescoes. Avetis Avetisyan's following researches dedicated to the decoration and restoration methods of the frescoes of Holy Etchmiadzin Cathedral, the churches of St. Mariane of Ashtarak, St. Astvatsatsin (Holy Mother of God) of Haykavan, as well as the paintings of altar's iconostasis of St. Arakelots (Apostoles) church of Sevanavank Monastery are worth mentioning.

Indeed, in Armenian reality, especially the late medieval frescoes have never received special professional attention. Only the art historians Garegin Levonyan, later Yeghishe Martikyan, and Manya Ghazaryan referred to the frescoes and paintings of some artists in more detail. They have suggested hypotheses and new approaches, which

must be brought to life by future investigators. It would be fair to say that Avetis Avetisyan became a leading specialist in this field during his creative short life. This is testified not only by the materials included in this collection of articles, but also more than a dozen publications of scientific articles, the full bibliography of which, with short content explanations, can be found at the end of this book (see the following section: “Bibliography of published works of Avetis Avetisyan”).

As for the content of materials included in the second section, the basis here is more diverse. The author made the subject of his studies the problems connected with history, architecture, sculpture, manuscript and photographic art. The result of the above-mentioned studies are investigations dedicated to the chronology of constructions of Holy Etchmiadzin Cathedral, photo archive, the inscribed bells of the bell tower, the manuscripts of St. Tovma the Apostole Monastery, the historical-architectural description of St. Amenaprkich (Holy All Savior) Monastery of Trabzon, the monuments preserved in the old photographic art and, in general, to the Armenian history and culture.

It is noteworthy that the voluminous studies of Avetis Avetisyan were written with the following approach: from personal questions to global ones, chronological classification, and typological-content analysis. In this way, the author compiled his thesis about typology and history of Armenian frescoes, Hovnatanyan’s generations, as well as the historical-cultural inheritance of the Kingdom of Van.

As for the compilation of this collection of articles, it should be noted, that we first planned to complete and publish in one volume only the published papers of Avetis Avetisyan (2018-2020), but during the work, we discovered that there were unfinished and incomplete extensive materials kept in the digital repository of the author. So we decided to select only the unpublished articles and materials, which we had to annotate and edit. We gladly undertook this work as a result of which, we have this scientific and unique collection of articles.

Consequently, we provide the reader with the best selection of unpublished papers of art historian Avetis Avetisyan, one of the immortal Armenians of the 44-day war in Artsakh, in tribute to the memory of the great specialist of Armenian art.

ԱՎԵՏԻՍ ԱՐԱՄԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՅ ԱՐՎԵՍՏԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԷՋԵՐ

ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Կազմեց և հրատարակության պատրաստեց՝
Արսեն Էդուարդի Հարությունյան
Խմբագիր՝ Կարեն Արտաշեսի Մաթևոսյան

Սրբագրիչներ՝ Հասմիկ Իրիցյան, Աշխեն Ենոքյան, Անի Առաքելյան
Էջադրումը, գրքի և շապիկի ձևավորումը՝ Հասմիկ Մխիթարյանի
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Կազմի Ա. երեսին՝ Ս. Էջմիածնի Մայր տաճարը
և մեծ զանգակատունը «Տրդատի դռնից»
(լսնկ.՝ Հրայր Բազէ Խաչերեանի, 2007 թ.)

Բ. երեսին՝ Ավետիս Ավետիսյանը Գարեգին Նժդեհի գերեզմանի մոտ,
Սպիտակավոր Ս. Աստվածածին վանք, Վայոց ձոր, 2012 թ.

ISBN 978-9939-897-11-0

9 789939 897110

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի
հրատարակչական բաժին
ՀՀ, Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (+374) 10 513033
publishing.matenadaran@gmail.com

Տպագրվել է «CopyPrint» տպագրատանը։
ՀՀ, Երևան, Ներսիսյան 1,125
Չափը՝ 70x100 1/16։ Ծավալը՝ 23 1/8 տպ. մամուլ։
Տպաքանակը՝ 200 օրինակ։

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ